# 1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ


ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63
(091) 45 90 47
(077) 06 28 02

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 25 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 2000, գինը՝ 1000 դրամ:
Ստորագրված է տպագրության 13.12.2012թ.:


Շնո՛րհ ձեզ եւ խաղաղութի՛ւն մեր Հայր Աստծուց եւ Տէր Յիսուս Քրիստոսից:
ՊՈՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ

# Սյունյաց երկիր

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ


www.syuniacyerkir.am

ՇԱԲԱԹ
15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2012Թ
№ 30 (271)

Վահանավանքի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու մանակարիքը 911 թվականին: Գեղանկարը՝ Ռոբերտ Կանոյանի: Կտավ, յուղաներկ, 200 x 140, 2011թ.:

# ՎԱՀԱՆԱՎԱՆՔ

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Փառք եւ գոհություն բարձրյալն Աստծուն, որ կարողանում ենք «Սյունյաց երկրի» առանձին համարով մեր հաճոյական խունկը մատուցել առ Վահանավանք, որ Սյունյաց աշխարհի 48 վանքերի մեջ գլխավորներից է: Ավելի վաղ՝ 2006թ. մարտի 30-ին, թերթի հատուկ համար նվիրեցինք «Սիսական տան բոլոր վանքերի գլուխ» Տաթեւի վանքին՝ Մեծ կաթողիկե եկեղեցու շինության 1100-ամյակի կապակցությամբ: 2010-ին թերթի մի համար էլ ձոնեցինք (25 սեպտեմբերի) «երկրորդ լուսավորիչ հայկազեան ազգի» Գրիգոր Տաթեւացուն, ինչը մի նոր եւ բացառիկ առիթ էր մեր հոգեւոր արմատների մեջ խորանալու համար: Վահանավանքին անդրադառնալը նոր եւ ցանկալի պատեհություն է այդ առիթով: Բայց՝ աստվածային տնօրինությամբ 1100 տարի առաջ կառուցված Վահանավանքի հանդեպ հետաքրքրությունը ոչ միայն մեր հավատքի արտահայտությունն է, այլեւ նվիրական վերաբերմունքը մեր պատմության, մեր անցյալի հանդեպ:

Ավելի քան մեկ դար Հայ առաքելական եկեղեցու, Սյունիքի եպիսկոպոսության եւ երկրամասի պատմության մեջ նշանակալի դեր խաղացած Վահանավանքի առաքելությունն ամբողջապես հասկանալու, այդ դարաշրջանի քաղաքական ու դավանաբանական առանձնահատկությունները լիովին ընկալելու համար, բուն թեմային առնչվող բազմապիսի նյութեր ներկայացնելուց զատ, անհրաժեշտ ենք համարում սույն հրապարակման մեջ անդրադառնալ եւս մի քանի հարցի:


Շարունակությունը՝ էջ 7



«Սյունյաց երկրի» սույն համարը տպագրվում է «Վահանավանք» պատմամշակութային հասարակական կազմակերպության (նախագահ՝ Սասուն Մանուկյան) հովանավորությամբ, որին մեր երախտագիտությունն ենք հայտնում:

1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ ՀԻՄՆԱԴՐՎԵՑ
ԱՍՏԾՈ ՓԱՌՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ՎԱՀԱՆԱՎԱՆՔԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

# ՄԱՅՐ ՏԱՃԱՐԸ՝
# Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին



1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ՎԱՀԱՆԱՎԱՆՔԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

# Սուրբ Աստվածածին կրկնահարկ եկեղեցին



1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

# Վահանավանքի կառուցումը Զագիկի որդի Վահանի կողմից

Ստեփանոս Օրբելյան, «Սյունիքի պատմություն» (էջ 217-218)

...Ինչպես վերն ասացինք, ոմն Վահան՝ Զագիկ իշխանի որդին եւ Զեվանշերի եղբայրը, դիվահար մոլեգնության պատճառով կրոնավոր դարձավ եւ կամեցավ վանք շինել ու [այնտեղ] հաստատել մշտապաշտոն քահանաների կրոնավորական դասեր: Եվ շատ ու խիստ ճգնություններից հետո գալով այն բարձր լեռան ստորոտը, որի վրա է Բաղաբերդի անառիկ ամրոցը, Աճանանի դիմաց գտնում է մի հարթ տեղ, շատ հարմար. նախ՝ աղոթքներով տիրոջից խնդրում է հաջողեցնել իր ձեռնադրումը, ապա՝ նույն գործին է հրավիրում իր կրոնակից վանականներին. սկսում է եկեղեցու շինարարությունն ու կանգնեցնում Աստծու փառքի տուն՝ հույժ գեղեցիկ կառուցվածքով, գմբեթահարկ, եռախորան, ամուր միացված տաշածո վեմերով, եւ դարձնում կրոնավորների տուն: Արժեքավոր ու թագավորական սպասքով զարդարում է այն, հավաքում է ավելի քան հարյուր մաքրակրոն վանականների: Եվ Սուրբ Գրիգոր Լուսավորչի անունը կրող այդ եկեղեցուն հատկացնում է կալվածքի բաժին՝ ձորը գետով, եւ այս ու այն կողմի հանդերն ու վանքի այգիները, լեռնակողմը՝ դեպի վեր, մինչեւ բարձրավանդակի ծայրը, որտեղ մակաղում էին մանր եղջերավոր անասունների հոտերը, իսկ քաղաքի կողմից՝ մինչեւ պարսպի արտաքին պատը, որը սկսվում է լեռնից, Տանձափարախի կողմից՝ մեծ բնածորը, որ սկիզբ է առնում լեռնից ու իջնում մինչեւ գետը, եւ վանքի դիմացի գյուղերը՝ Աչաղուն, Աչաղվա գետը, Արավայրը, Շեկքը, ինչպես եւ եկեղեցու ուրիշ շատ նվիրատվություններ ու տիրույթներ՝ հաստատելով անխախտ որոշմամբ: Վահանն իր անունով վանքը կոչում է Վահանավանք, որն այնուհետեւ օրըստօրե ճոխանում է որպես բազմամարդ քաղաք: Նույն Վահանը շատ ճգնություն ու ջանադիր աշխատանք կատարելուց հետո վախճանվում եւ թաղվում է սուրբ տաճարի դռանը:

Սուրբ վանքի կառուցումը կատարվել է հայոց երեք հարյուր վաթսուն թվականին, Սմբատ Բագրատունու թագավորության, Աշոտի որդի, Սյունյաց գահերեց իշխան Սմբատի, Բաղքի Զեվանշերի իշխանության, Տերհովհաննեսի՝ Սյունիքի եպիսկոպոսության ժամանակ:

Իսկ հետո մյուս Վահանը՝ նախորդի եղբորորդին, այսինքն՝ Զեվանշերի որդին, այս վանքում մանկությունից դաստիարակվելով ու սովորելով, վարժվելով աստվածային գիտություններին, քահանայացավ ու դարձավ սուրբ միաբանության առաջնորդ: Նա ավելացրեց բազմաթիվ շինություններ ու վանքը զարդարեց երեւելի բարեկարգումներով: Եկեղեցու բակում կառուցեց մեծ աղոթատունը՝ վիմակերտ մահարձաններով, որտեղ թաղված են Աղվանքի եւ Բաղքի շատ թագավորներ ու թագուհիներ, Սիսական աշխարհի բազմաթիվ փառավոր իշխաններ: Գեղեցիկ հորինվածքով շինեց եկեղեցու գավիթը՝ մեծամեծ հղկած վեմերով, երեսուն կանգուն բարձրությամբ: Վանքի դռանը կամար կանգնեցրեց՝ վրան երկու խորան, Պողոս եւ Պետրոս սուրբ առաքյալների անվամբ: Կրաշաղախով միացված քարերով կառուցեց եւ մի մեծ սեղանատուն ու խողովակով ջուր բերեց նրա դուռը: Եվ այսպես զանազան կառույցներով գեղեցկացրեց վանքը: Ապա ինքը հրավիրվեց Սյունյաց եպիսկոպոսության պաշտոնին՝ Տեր Հակոբից հետո, իսկ այնտեղից էլ [հասավ] ծայրագույն փառքի՝ հայոց կաթողիկոսության, որ եղավ Տեր Անանիա Մոկացուց հետո: Կաթողիկոսության աթոռին մնալով հինգ տարի՝ վախճանվեց Վասպուրական աշխարհի Տոսպ գավառի Բերկրիի մոտի Զորավանքում ու թաղվեց տաճարի բակում:

Երկար ժամանակ անց Բաղքի Գրիգոր թագավորի օրոք, ինչպես եւ Շահանդուխտ թագուհու, Կատայի, Սենեքերիմ թագավորի կողմից բազմաթիվ ու գեղեցիկ կառուցումներով առավել գեղեցկացվեց Վահանավանքը: Կանգնեցրին մեծամեծ կամարներ՝ վրաները եկեղեցիներ, բազմասյուն ու բարձրահարկ սրահներ, իշխանական հովանոցներ ու խրախճարաններ: Այդ ժամանակներում եկավ Աղվանքի երջանիկ կաթողիկոս Տեր Ստեփանոսը եւ, որոշ օրեր այնտեղ ապրելով, վախճանվեց ու թաղվեց նույն սրբարանում:

Շարունակությունը՝ էջ 36

## ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԱՎԻԹԸ (ՁԱԽԻՑ)

## ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՍՅՈՒՆԱՍՐԱՀԸ



**1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ**

## ԽՈՍՔ ԱՍՏՈՒՇՈ ՀԵՏ

# Սուրբ Մարիամ Աստվածածինը, ում անունն է կրում Վահանավանքի երկրորդ եկեղեցին

Մարիամ Աստվածածին, Աստվածամայր, Տիրամայր, Կույս Մարիամ, ըստ ավանդության՝ Հիսուս Քրիստոսի մայրը: Ավետարանիչները Մարիամին անվանում են Հովակիմի եւ Աննայի դուստրը, Հովսեփի կինը, որից ծնվել են նաեւ այլ զավակներ: Մարիամի պաշտամունքը ձեւավորվել է բնության զարթոնքն ու պտղաբերությունը խորհրդանշող նախաքրիստոնեական դիցամայրերի (Իզիդա, Իշտար, Մա, Կիբելա եւ ուրիշներ) պաշտամունքների ազդեցությամբ: Քրիստոնեական աստվածաբանները IV դ. Մարիամին հռչակեցին «անարատ կույս»: Եփեսոսի Տիեզերական երրորդ ժողովը (431) Մարիամին պաշտոնապես ճանաչեց աստվածամայր, որի երկրպագությունն այնուհետեւ տարածվեց ամբողջ աշխարհում: Մարիամին նվիրվեցին բազմաթիվ տաճարներ, սրբապատկերներ եւ նրա պատվին սահմանվեցին տոներ եւ այլն: 1854-ին կաթոլիկ եկեղեցին ընդունեց Մարիամի «անարատ հղիության», 1950-ին՝ «երկինք համբարձվելու» մասին դրույթները, իսկ 1964-ին Պողոս VI պապը նրան հռչակեց «եկեղեցու մայր»:

Միջնադարյան արվեստում տարածված էր Մարիամի կերպավորումն իր մանկան հետ: Վերածնության դարաշրջանում ստեղծվել են Ս.Բոտիչելլիի, Լեոնարդո դա Վինչիի, Ռաֆայելի եւ այլոց մեծ կտավները՝ նվիրված Մարիամի կերպարին:

Սուրբ Մարիամ Աստվածածին, նկարը՝ Վարդգես Սուրենյանցի

# Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, ում անունն է կրում Վահանավանքի գլխավոր եկեղեցին

Ծնվել է 240 թվին, Վաղարշապատում, երբ նրա հայրը՝ Անակը հյուրընկալվել էր Խոսրով թագավորի մոտ: Բայց երբ նա ուխտադրժորեն սպանում է հայոց թագավորին, Անակի ողջ գերդաստանը սրի է քաշվում, բացի մանուկ Գրիգորից, ով Սոֆիա անունով դայակի օգնությամբ փրկվում եւ տարվում է Կեսարիա: Այնտեղ նա դաստիարակվելով քրիստոնեական միջավայրում եւ ստանալով հուսական բարձր կրթություն, շուտով ամուսնանում է մի բարեպաշտ օրիորդի՝ Մարիամի հետ եւ ունենում է երկու որդի՝ Վրթանեսին եւ Արիստակեսին:

Այնուհետեւ նա կնոջ հետ փոխադարձ համաձայնությամբ բաժանվում է, իսկ վերջինս մտնում է կուսանոց: Գրիգորը զավակներին հանձնելով վստահելի անձանց խնամքին, մտնում է Խոսրովի որդի Տրդատի մոտ ծառայության, որը Կեսարիայով անցնում էր Հայաստան՝ հռովմեական բանակի միջոցով իր հոր գահին վերահաստատվելու:

Գրիգորի բարձր ընդունակությունների համար Տրդատը շուտով նրան նշանակում է արքունական դիվանապետի պաշտոնում:

Եվ պարսից զորքերի դեմ հաղթանակելուց, եւ հայոց թագավորությունը վերականգնելուց հետո բոլորը գնում են հայոց կռապաշտական կենտրոններից մեկը՝ Երիզա ավանը, Անահիտ կուռքի ոսկե արձանին երկրպագելու եւ զոհաբերություններ մատուցելու: Թագավորը հրամայում է Գրիգորին նույնպես դալար ծյուղերի պսակ դնել արձանի առջեւ: Երբ մերժվում է այդ հրամանը, բոլորը հասկանում են, որ Գրիգորը քրիստոնյա է, որի պատճառով նա դատապարտվում է 12 տեսակի անմարդկային կտտանքների: Քրիստոսի զորությամբ այդ բոլորին դիմանալով, նա Տրդատի հրամանով նետվում է մահվան գուբը՝ Խոր Վիրապը, որը գտնվում էր Արտաշատում:

Այնտեղ նա Աստծո նախախնամությամբ կենդանի է մնում շուրջ 13 տարի, քրիստոնյա մի կնոջ օգնությամբ, որն օրական մի նկանակ /հաց/ էր նետում այդ գուբը:

Իսկ Տրդատը, մինչ այդ Հռիփսիմյանց կույսերին հալածելուց ու սպանելուց հետո, դիվահարվելով, խոզի կերպարանք ստանալով, եղեգնուտներում էր բնակվում:

Աստծո հրամանով, Խոր Վիրապից դուրս գալուց հետո, Գրիգորն առաջին հերթին թաղում է երանելի սրբուհիների անթաղ մարմինները, որից հետո հնգօրյա ծոմապահություն է սահմանում եւ աղոթքով բժշկում բոլոր հիվանդներին ու դիվահարներին, այդ թվում եւ Տրդատ թագավորին:

Այդ հանդիսացավ մեր ժողովրդի պատմության համար շրջադարձային կետ, քանզի դրանից հետո, հայոց ազգը դարձի գալով դեպի ճշմարիտ ու միակ Աստծուն, Տրդատ թագավորի հրամանով, Գրիգոր Լուսավորչի օգնությամբ, 301 թվականին, աշխարհի բոլոր ազգերից առաջինն ընդունեց քրիստոնեությունը որպես հոգու հավատքի դավանանք:

Այնուհետեւ Կեսարիայում ձեռնադրվելով, Գրիգոր հայրապետը, Եփրատ գետում մկրտում է նախ Տրդատ թագավորին, Աշխեն թագուհուն, Խոսրովիդուխտ օրիորդին, ու նրանց հետ մեկտեղ բյուրավոր հայորդիների: Այդ մկրտության ընթացքում երկնքում մի լուսեղեն Խաչ է երեւում եւ կանգնում մկրտվողների գլխավերեւում այնքան ժամանակ, մինչեւ ավարտվում է սուրբ արարողությունը:

Գրիգոր Լուսավորիչը, մի սքանչելի տեսիլքից հետո, երբ տեսնում է Աստծո Միածնի իջնելը Վաղարշապատում, որը ոսկե մուրճով հարվածում է գետնին եւ հրամայում այդ տեղում կառուցել Մայր տաճարը: 304 թվին Տրդատ թագավորի աջակցությամբ սկսում է տաճարի կառուցումն ու նահատակ կույսերի վկայարանները, որոնք հետո դառնում են ապագա եկեղեցիների հիմքերը:



Ամեն բան կարգի բերելուց հետո Գրիգոր Լուսավորիչը որոշում է առանձնանալ լեռներում՝ Մանյաց այր կոչվող վայրում: Ու այդպես էլ ոչ ոք լուր չունեցավ նրա մահվան մասին, մինչեւ որ 326 թվին հովիվները գտնում են նրա մարմինը եւ տեղափոխում Թորդան ավանը:

Գրիգոր Լուսավորչի խնկելի հիշատակը մեր եկեղեցին տոնում է տարեկան երեք անգամ, առաջինը «Զարչարանաց մուտն ի Վիրապ», Մեծ Պահոցի Զ կիրակիի նախընթաց շաբաթը, երկրորդը՝ «Ելն ի վիրապեն», Ս. Էջմիածնի տոնակատարության նախորդ շաբաթը, եւ երրորդը՝ «Գյուտ նշխարաց» տոնին, Հոգեգալստյան Դ կիրակիի նախորդ շաբաթ օրը:

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

## ՄԱՏՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ

Բան Ղե

### Սրտի խորքերից խոսք Աստուծո հետ

**Ա**

*Արեգակ արդար, օրհնյալ ճառագայթ,*
*պատկեր լուսեղեն,*
*Փափագ անձկալի, անքնին բարձրյալ,*
*անպատում զորեղ,*
*Բարու բերկրություն, հուսատու փեսիլ,*
*գովյալ երկնավոր,*
*Թագավոր փառաց, Քրիստոս արարիչ,*
*խոստովանյալ կյանք,*
*Եղկելուս բազմավրեպ եւ սխալներով լի*
*այս շարադրանքի*
*Դպակասները դո՛ւ լրացրու խոսքով քո*
*ամենազոր*
*Եվ այն մատուցիր որպես հաճելի*
*աղերս բարձրյալ Հոդ:*
*Դու ինձ համար անեծքների փորձության*
*ենթարկվեցիր՝*
*Կերպարանքովդ նմանվելով ինձ,*
*կենա՛ց օրհնություն,*
*Բարեխնամ փեսուչ երկնայինների*
*եւ ողջ երկրայնոց:*
*Չի թե հանձն առար մեռնել ինձ համար,*
*Ասպվածածին,*
*Ո՛րքան ավելի պիտի ուզենաս կարեկցել*
*եւ այժմ ինձ, փառասպլից*
*փագնապահարիս,*
*Ազգակցիդ մեզ՝ մեզնից մարմնացյալ,*
*Մեղապարտիս հետ միշտ աղոթելով*
*Հոդդ համապատիվ:*

**Բ**

*Եվ պատվական արյանդ*
*միջնորդությամբ,*
*Որ մատուցվում է միշտ առաքչիդ*
*կամքին ի հաճություն՝*
*Թող վերացվեն վտանգները մեղավոր*
*դատապարտյալիս,*
*Պարտքերը զիջվեն, ամոթը փարատվի,*
*Մոռացվեն խայտառակություններն*
*ու դատավճիռն ի բարին փոխվի,*
*Մատակեն որդերն, ու լացը վերանա,*
*Դաղարի կրճտումն ատամների թող,*
*Ողբերն սպառվեն,*
*Արտասուքները ցամաքեն թող որ,*
*սուգը հեռանա,*
*Խավարն հալածվի, ու հուրը սատփիկ*
*մարի,*
*մոխրանա,*
*Եվ բազմապիսի փանջարաներն ի բաց*
*մերժվեն:*

**Գ**

*Եվ թող բոլորին կյանք կամեցողիդ*
*ու պարգեւողիդ գթությունը գա,*
*Թող լույսդ ծագի, փրկությունդ փութա,*
*օգնությունդ հասնի,*
*Այցելությունդ ժամանի,*
*եւ ողորմությանդ ցողը կանխահաս*
*Թող որ շփապի՝ հույժ թշվառությամբ*
*մահվան վիհն ընկած*
*Իմ ոսկորների պապակ անդաստանը*
*ոռոգելու:*
*Կենարար արյանդ բաժակն երկնավոր,*
*որ պատրաստվում է միշտ, անսպառ*
*Հանուն ենչեցյալների հոգու փրկության*
*եւ կենաց,*
*Թող ծաղկեցնի եւ պտղաբերի լուսավոր*
*օրվանդ*
*համար մշակված դաշտն իմ մարմնեղեն,*
*Որպեսզի նրա մեղքով իսպառ մահացած*
*հոգիս,*
*Քո շնորհիվ, գթած, քո մեջ գորացած,*
*Եվ մեղքերից ազատ, անմահ*
*կենդանությամբ*
*Նորոգվեմ արդարների հարության օրը՝*
*Հորիցդ օրհնված,*
*Որի հետ փառք քեզ եւ քո սուրբ Հոգուն*
*Եվ բարեբանություն վայելչական*
*գոհությամբ,*

***Այժմ եւ միշտ եւ հավերյանս***
***հավերենից, ամեն:***

1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ՄԻՆՉԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

# Վահանավանքը՝ փլատակված

## Վահանավանքը 1960-ին

Ըստ Սեդրակ Բարխուդարյանի

Գտնվում է Ղափանի շրջանի մեջ՝ Շհարջիկ գյուղի դիմաց՝ գետի հանդիպակաց աջ ափին: Հնում մտնում էր Ձորք գավառի մեջ:

Ստ.Օրբելյանն իր պատմության մեջ այս վանքի շինությանն ու կարգավորմանը նվիրել է մի հատուկ գլուխ (ԽԵ), համաձայն որի Սյունյաց իշխաններից Ձագիկի կրտսեր որդի Վահանը, դառնալով կրոնական, շինում է այս վանքը եւ իր անունով կոչում Վահանավանք, 911թ.. «Յոյժ գեղեցիկ յօրինուածովք, գմբեթայարկ եւ եռախորան, հաստահեղոյս եւ տաշածոյ վիմօք», այստեղ են հավաքվում հարյուր վանականներ, իսկ իշխանները նվիրում են վանքին չորս գյուղ եւ այլ կալվածներ:

Վանքի հիմնադիր Վահանին հաջորդում է իր եղբորորդին՝ նույնպես Վահան անունով (հետագայում՝ Սյունյաց եպիսկոպոս). սա եւս կառուցում է մի շարք նոր շենքեր «Աղոթարան ի դրան եկեղեցւոյն վիմարդյան մահարձանօք, յօրում հանգուցեալ կան ի շիրմի բազում թագաւորք եւ թագուհիք Աղվանից եւ Բաղաց, եւ բազում իշխանք փառաւորք շիրիմի բազում թագաւորք եւ թագուհիք Աղվանից եւ Բաղաց, եւ բազում իշխանք փառաւորք Սիսական աշխարհիս», շինում է նաեւ տրապէզ (սեղանատուն ), մեծ գավիթ եւ փողրակներով ջուր բերում մինչեւ վանքը:

Ավելի ուշ՝ Բաղաց Գրիգոր թագավորի օրոք, թագուհի Շահանդուխտն իր քույր Կատայի եւ Սենեքերիմ թագավորի հետ շինում է եկեղեցի մեծամեծ կամարների վրա, բազմասյուն սրահներ եւ այլն:

Հիշատակված այս բոլոր շինություններից այժմ կիսափուլ վիճակում մնում են մի եկեղեցի ու գավիթ, որոնց կտուրներն ամբողջովին եւ հարավային պատերի մեծ մասն էլ փլել են. գավթի առաստաղից մնացել են բաց տարածության մեջ մեծամեծ քարերով շարված երկու հիանալի կամարներ: Սրանցից արեւմուտք՝ մի հարյուր մետր հեռու, նույնպես կիսափուլ վիճակում մնացել են Շահանդուխտի շինած եկեղեցին, ժայռին կից, կամարների վրա, որպես երկրորդ հարկ, սրա էլ կտուրն ամբողջովին եւ արեւելյան պատը կիսովին փլել են: Շրջապատի փլատակները ծածկված են խիտ անտառով:

Շենքերը զինված են բազալտի սրբատաշ եւ մեծամեծ քարերով, որոնց հանքատեղը գտնվում է հուշարձաններից հյուսիս՝ մոտ 200 մետր հեռու՝ սարալանջին:

**Դիվան հայ վիմագրության, հատոր II**



**1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ**

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ**

# ՎԱՀԱՆԱՎԱՆ-Ք

**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

**Սկիզբը՝ էջ 1**

## Գահանիստ Կապանի հոգեւոր կենտրոնը

Վահանավանքի մասին խոսելիս պետք է նկատի ունենալ, որ այն Սյունիքի գահերեց եւ գահակալ իշխանների (նախ՝ Չագիկյանների իշխանական տան) նստավայր, գահանիստ, արքունանիստ, ապա՝ Սյունիքի թագավորության մայրաքաղաք Կապանի գլխավոր տաճարն էր: Հարկ է նկատի առնել նաեւ, որ Վահանավանքի ծնունդը, որքան էլ Վահան Նախաշինողը պատճառներ ունենար կառուցելու համար, պայմանավորված էր քաղաքական իրավիճակով ու դրդապատճառներով: 9-րդ եւ 10-րդ դարերի սահմանագծում սյունիքյան իշխանության քաղաքական կենտրոնը տեղափոխվում էր Բաղք, որի գլխավոր ոստանը Կապանն էր: Ուրեմնեւ՝ Կապան քաղաքում կամ Կապան քաղաքի անմիջական մերձակայքում, ժամանակի ավանդակարգին համապատասխան, պետք է լիներ նաեւ Աստծո տաճար, մանավանդ որ մերձակայքում այդժամ նշանավոր՝ գահանիստ քաղաքին պատշաճող, տաճար չկար (Երիցավանքի փառքը մնացել էր անցյալում, իսկ Տանձափարախը նման առաքելություն չէր կարող ստանձնել): Այդպես էլ ծնվեց Վահանավանքը, որի «կալվածքի սահմանը հասնում էր մինչեւ քաղաքի պարսպի արտաքին պատը» (Թ.Հակոբյան, Սյունիքի թագավորությունը, Երեւան -1966, էջ 121):

Որքան էլ բազմազան են ու հակասական Կապանի (ինչպես եւ Բաղաբերդի) վերաբերյալ (նաեւ տեղորոշման ու ավերման հանգամանքների մասին) մեր պատմիչների հաղորդած տեղեկությունները, այնուամենայնիվ, անհրաժեշտ ենք համարում համառոտ անդրադարձ կատարել Կապանի մատենագիտությանը:

Կապանի պատմության համար գլխավոր սկզբնաղբյուրը եղել եւ մնում է Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմությունը» կոթողային գործը: Այսպես՝ **«Եվ Կապանից այստեղ եկավ հայր Հովհաննեսը, վանականներին վերցնելով գնաց գետի ափը, տիրոջից խնդրեց վանականների կարիքների համար ծուկ շնորհել»** (նշված աշխ. էջ 118): Այդ գրքի մի ամբողջ հատված էլ (գլուխ ԿԱ) նվիրված է Կապանի ավերման թեմային:

Կապան քաղաքի ավերման մասին տեղեկություններ է հաղորդում նաեւ Վարդան Վարդապետը (Հաւաքումն պատմութեան, էջ 146-147). **«Հինգ հարյուր քսաներեք թվին (1094թ.) Գանձակի Փատլուն ամիրան Գրիգոր Մագիստրոսի որդի Վասակ Պահլավին Առանի ամբողջ զորքով ուղարկեց Բաղքի ու Կապանի (կիրճի) անառիկ ամրոցները: Նրանք խաբեությամբ մուտք գործեցին այնտեղ եւ սպանեցին հայկազուն Սենեքերիմ արքային, որովհետեւ այնտեղի թագավորները հայեր էին: Բայց (թագավորությունը) չվերացվեց միայն երկու անզավակ եղբայրների՝ Սմբատի ու Գրիգորի վերջին օրերի դեպքերը»:** Վարդան Վարդապետի եւ Ստ.Օրբելյանի վկայությունների միջեւ, ինչպես տեսնում եք, կան տարբերություններ: Վարդանի վկայությամբ Կապանն ավերվել է Գանձակի Փատլուն ամիրայի հրամանով՝ Գրիգոր Մագիստրոսի որդի Վասակ Պահլավի կողմից, 1094թ.:

Կապան քաղաքի թեման հետաքրքրել է ճանաչված պատմաբան Բաբկեն Առաքելյանին: «Քաղաքները եւ արհեստները Հայաստանում IX-XIII դարերում» (Երեւան, 1958թ.) աշխատության մեջ նշում է. **«Հնում Կապանը, ինչպես երեւում է, եղել է բերդ, որը Ստեփանոս Օրբելյանը նույնացնում է Բաղաբերդի հետ, թեեւ նույն հեղինակի մոտ, այլ էջերում, Բաղաբերդը եւ Կապանը նշվում են իբրեւ տարբեր բնակավայրեր: ...Հենց այդ ժամանակներում էլ՝ 9-րդ դարավերջին եւ 10-րդ դարասկզբին, Կապանն աճում, քաղաք է դառնում: Այստեղ նկատելի շինարարություն է կատարվում: Կապանը դարձավ Սյունյաց թագավորության մայրաքաղաք, որի անունով Սյունյաց թագավորությունը կոչվում էր նաեւ Կապանի թագավորություն»** (նշված աշխ. էջ 90-91): Բաբկեն Առաքելյանը նշում է նաեւ՝ «Հայաստանի միջնադարյան քաղաքների մեծագույն մասն առաջացել է բերդ ունեցող ավաններից՝ բերդավաններից, բերդի առջեւ փռված ավանների աճի ու արհեստագործության եւ առեւտրի կենտրոն դառնալու շնորհիվ: Ավելի արագ աճում ու քաղաք էին դառնում մանավանդ այն բերդավանները, որոնք գտնվում էին առեւտրական ճանապարհների վրա եւ հանդիսանում էին (կամ ժամանակի ընթացքում դառնում էին) ֆեոդալական մանր ու մեծ իշխանությունների կենտրոններ: ...Նման ձեւով է քաղաք դարձել նաեւ Կապանը» ( նշված աշխ. էջ 121-122): Հեղինակը Կապանը դասել է 10-11-րդ դարերի Հայաստանի միջին մեծության քաղաքների թվին, որի բնակչությունը 7-8 հազարից մինչեւ 10-12 հազար է թվում:

Տեղին է նշել, որ Կապանի՝ իբրեւ քաղաքի առաջացումն իրականություն է դարձել նախեւառաջ Չագիկյան իշխանական տան ջանքով ու ձեռներեցությամբ:

Կապան քաղաքին անդրադարձել է Ղեւոնդ Ալիշանը «Սիսական» տեղագրության մեջ. **«Աներկբայելի է, որ այս աշխարհի շինության եւ բնակության սկզբում Բաղակ նահապետը, որից է Բաղաց գավառի անունը, այստեղ հաստատեց կամ կառուցեց իր բույնը՝ Բաղակի քարի վրա, որ հետո Բաղաբերդ կոչվեց, եւ դարձավ վերջին ապաստանը Սյունյաց իշխանների: ...Եվ նրանց ամուր քաղաքի պատճառով ամբողջ գավառը Կապան անվանվեց 11-12-րդ դարերում եւ մինչեւ այժմ էլ նույնպես է անվանվում՝ միայն թե աղավաղ Ղափան ձեւով»:** Ալիշանը նույնպես հաստատում է, որ **«Այն ժամանակ Կապան քաղաքը լոկ Բաղաց իշխանի նստավայրն էր եւ դրանից հետո Սյունյաց նահապետների ոստանը դարձավ»: «Մտածում էին այն դարձնել խաղաղ մի վայր, եւ, հիրավի, սրանից ավելի ապահով վայր չկար, որովհետեւ ոչ միայն զորավոր էր Բաղաց բերդը, այլեւ, ինքնըստինքյան, ամուր էր Կապանն ի բնե եւ արվեստաշեն»:** Ալիշանը, հիմք ընդունելով Ստեփանոս Օրբելյանի երկը, անդրադառնում է Կապանի ավերմանը՝ **«...Չորթմանն իր վրեժը (լուծելու) համար անսպասելիորեն հարձակվեց քաղաքի վրա: Նախ բազմաթիվ հետեւակ ծերպամուտ ու քարագնաց զորականներ բարձրացան ապառաժոտ լեռան գլուխը եւ հեղեղատի մեծ հունով իջան քաղաք, քանի որ այդ տեղը պարսպապատված չէր՝ մարդկանց մուտքի համար անհնարին լինելու պատճառով: Սկսեցին կոտորել Ջհտաթաղի կողմից, ապա բացեցին քաղաքի դարպասը... Բոլոր զորքերը մտան ու ջարդեցին, կոտորեցին ամբողջ բնակչությանն առհասարակ: ...Այստեղ մարեց ճրագը....»:**

Կապանին անդրադարձել է նաեւ անանուն տաջիկ աշխարհագիրը (նկարագրությունը վերաբերվում է 982-93թթ.): Այդ մասին իմանում ենք Վ.Բարտոլդի «Հուդուդ ալ-Ալամի», Թումանսկու ձեռագիրը, Լենինգրադ-1930, գործից (Վ.Փափազյան, Անանուն տաջիկ աշխարհագիրը Հայաստանի, Ադրբեջանի եւ Արեւելյան Վրաստանի աշխարհագրության եւ տնտեսական հարաբերությունների մասին (10-րդ դար), ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների տեղեկագիր, №5, 1952, հաղորդում, էջ 79): Քաղաքների մասին խոսելիս «Հուդուդ ալ-Ալամին» նշում է Կաբան քաղաքի մասին, որ «կանաչազարդ քաղաք է, որտեղ մեծ քանակությամբ ընտիր բամբակ է արտադրվում»: Այդ վկայությունը, իհարկե, միանշանակ չի ընդունվել, բայց մասնագետների հիմնական մասը Կաբանը նույնացնում է Կապանի հետ:

Կապան քաղաքը վկայակոչել է նաեւ արաբ աշխարհագիր Յակուտ ալ Համավին՝ կատարելով նկարագրություններ, չօգտագործելով Կապան անվանումը: Ավելի ուշ ռուս ազգագրագետ, ճանապարհորդ Նիկոլայ Միկլուխո-Մակլայը (1846-88) նկարագրությունից ենթադրել է, որ խոսքը Կապանի մասին է: Իսկ արաբ աշխարհագրի նկարագրություններին կարելի է ծանոթանալ նրա «Աջաիբ ադ-Դունյա» (Աշխարհի հրաշալիքները), «Наука», Москва-1993, գործի ծանոթագրություններում, էջ 207, ծանոթագրություն 490:

Կապան քաղաքի տեղադրության վերաբերյալ դիտարկումներ է արել Աշոտ Աբրահամյանը՝ Ստ.Օրբելյանի «Սյունիքի պատմություն» աշխատության թարգմանության, ներածության, ծանոթագրությունների հեղինակը: Խոսելով Չորք գավառի մասին՝ նա մասնավորապես նշել է՝ **«...Կենտրոնական քաղաքն էր Կապանը, որից այժմ միայն ավերակների հետքեր են մնացել՝ այժմյան Ղափան քաղաքից դեպի հյուսիս-արեւմուտք: Կապան անունը ծագում է կապան հասարակ անունից, որ նշանակում է «կիրճ, նեղ անցք երկու լեռների միջեւ», այլեւ՝ «կիրճի նեղ մասում եղած ամուր դուռ»: Այդ իմաստը հենց պատշաճում է գավառի տեղանքին: Այդ անունն արտացոլում ունի Ղափան անվան մեջ, իսկ վերջինս արդյունք է հետագայի ժողովրդական ստուգաբանության՝ Կապան-Ղափան: Աղավաղումով կապվել է թուրքական գափան բառի հետ՝ «մեծ կշեռք» նշանակությամբ» (ծանոթագրություն 26):** Մեկ այլ ծանոթագրության մեջ (228) Աշոտ Աբրահամյանը նշում է. **«Կապան բնակավայրը (քաղաքը) գտնվում էր այժմյան Ղափան քաղաքից վերեւ, Ղափան-Քաջարան ճանապարհի միջին հատվածում, Ողջի գետի բարձրադիր աջ ափին, այն տեղում, որ տեղացիներն անվանում են «Տանձու լեռնջ»: Հիշատակվում է 5-րդ դարից: 10-րդ դարում արդեն քաղաք էր եւ դարավերջին դարձավ Սյունիքի թագավորության կենտրոնը»:**

Հիմք ընդունելով «Հուդուդ ալ-Ալամիի» հիշատակությունը՝ Հայկարամ Ուլուբաբյանը նշում է, որ Դվին-Պարտավ ճանապարհով **«Սյունիք էին բերվում ոչ միայն Անիից, Դվինից, ինչպես եւ հեռավոր երկրներից բերված պերճանքի իրեր, արհեստագործության զանազան արտադրանքներ, այլեւ հենց այդ ճանապարհով, պետք է ենթադրել, Սյունիքից արտահանվում էր տեղական հումքի, հատկապես գյուղատնտեսական արտադրանքի ավելցուկը»** (Սյունիքը IX-X դարերում, էջ 247):

Բաղք եւ Կապան տեղանունների ստուգաբանության փորձ է արել Սերգեյ Ումառյանը «Սյունիքը դիցարան» դիտարժան գրքում:

- **Բաղք եւ Կապան անունները նույն իմաստն են արտահայտել,** - գրում է հեղինակը (նշված աշխ. էջ 73): **- Գավառանվան հիմքը բալ է, որ լ-ղ հնչյունափոխությամբ դարձել է բաղ: Այս հիմքը հնդեվրոպական ծագում ունի, որը նշանակում է «բարձր», «կապ», «գագաթ»: ...Այդ անունն էլ հետագայում փոխարինվել է հնդիրանական ծագումով մեկ ուրիշ, բայց նույնիմաստ հիմքով՝ «կապ», որից էլ կապան անունը:**

Պրոֆեսոր Թադեւոս Հակոբյանը նույնպես ծավալուն անդրադարձ է կատարել Կապան մայրաքաղաքին, թեեւ որոշ եզրակացություններ վիճելի են: «Սյունիքի թագավորությունը պատմա-աշխարհագրական առումով» աշխատության մեջ մասնավորապես նշում է. **«Կապանի ավերումից հետո (1103թ.) թագավորության մայրաքաղաքը դառնում է Բաղաբերդը: Այդ երեւում է նրանից, որ Սյունյաց տան պատմիչը Բաղաբերդի գրավումը հաշվում է թագավորության վերջը»** (նշված աշխ. էջ 114):

Կապան քաղաքի պատմության աղբյուրների մասին հիշատակումները կարելի է շարունակել, բայց բավարարվենք ասվածով:

...Ահա այդ Կապանի հոգեւոր կենտրոնը պետք է լիներ եւ եղավ Վահանավանքը:

## Ոչ միայն Վահանավանք (Վահանի վանք), այլեւ՝ Հովհաննավանք (Հովհաննու վանք)

Ստեփանոս Օրբելյանը Վահանավանքը (Վահանի վանքը) կոչում է նաեւ Հովհաննավանք կամ Հովհաննու վանք: Երկրորդ անունն օգտագործում են նաեւ Վարդան Արեւելցին, Ղեւոնդ Ալիշանը եւ ուրիշները: Թե ինչու է Վահանավանք կամ Վահանի վանք կոչվում, հասկանալի է՝ **«Վահանն իր անունով վանքը կոչում է Վահանավանք»** (Ստ. Օրբելյան, նշված աշխ. էջ 217): Խոսքը, իհարկե, Վահան Նախաշինողի մասին է: Իսկ թե ինչու Հովհաննավանք կամ Հովհաննու վանք, առայժմ քննության առարկա չի դարձել: Ստ. Օրբելյանի նշված աշխատության ծանոթագրությունների հեղինակ Աշոտ Աբրահամյանը նույնպես չի անդրադարձել այդ հարցին: Որքան էլ զարմանալի է, հարցը չի քննարկել նաեւ Վահանավանքի պատմության անզուգական գիտակ, պրոֆեսոր Գրիգոր Գրիգորյանը: Եվ ինչպես նշում է Ռոբերտ Գրիգորյանը (էջանանցին) իր «Վահանավանքը եւ կապանյան տեղորոշումների թեականությունը» հոդվածում (տպագրվում է թերթի սույն համարում)՝ **«Այս երկվությունը տակավին սպառիչ պատասխան չունի»:**

Սույն հրապարակման մեջ չենք հավակնում պատասխանել այդ հարցին, բայց եւ չենք կարող մի քանի նկատառում չհայտնել:

**Եվ այսպես՝ ինչո՞ւ Հովհաննավանք կամ Հովհաննու վանք:**

Նման ձեւով վանքն անվանակոչելու համար, անտարակույս, հիմք է հանդիսացել ոմն Հովհաննեսի անունը: Սա, կարծում ենք, անքննելի ճշմարտություն է: Դրանից բխում է հաջորդ հարցը՝ ո՞վ կարող էր լինել Հովհաննեսը, ում անվամբ (Նախաշինող Վահանից զատ) կարող էր կոչվել վանական համալիրը:

Հատկապես հոգեւոր գործիչների մեջ (իսկ մեր կողմից փնտրվող Հովհաննեսն ամենայն հավանականությամբ հոգեւոր գործիչ է եղել) մինչեւ Վահանավանքի կառուցման օրերը շատ Հովհաննես ենք ունեցել, ինչը եւ արժանացել է Հրաչյա Աճառյանի ուշադրությանը (Հայոց անձնանունների բառարան, հ.3): Նրանցից մի քանիսին պարտավոր ենք հիշել, քանի որ վանքը կառուցողները կարող էին նրանց նկատի ունենալ: Այսպես՝ Հովհաննես Առաքյալ, ով գրել է մի Ավետարան, երեք կաթողիկե թուղթ եւ Հայտնության գիրք: Հովհաննես Մկրտիչ (Հովհաննես Կարապետ)՝ ըստ ավետարանական ավանդության՝ Քրիստոսի գալուստը կանխագուշակող եւ Հորդանան գետում հրեաներին եւ Հիսուսին մկրտող մարգարեն է: Հովհաննես Դրասխանակերտցի՝ Վահանավանքի կառուցման ժամանակ Ամենայն հայոց կաթողիկոսն էր՝ (Հովհաննես Ե (898-929թթ.), պատմաբան):

Վանքը կառուցողները կարող էին նկատի ունենալ նաեւ Սյունիքի՝ Հովհաննես անունով եպիսկոպոսներին (մինչեւ Վահանավանքի կառուցման ժամանակները եղած), որոնք հինգն էին: Խիստ անհավանական համարելով Հովհաննես անունով նախորդ չորս եպիսկոպոսի, ինչպես եւ Հովհաննես Առաքյալի, Հովհաննես Մկրտչի, Հովհաննես Ե կաթողիկոսի անվամբ Վահանավանքը կոչելու վարկածը (պատճառները բազմաթիվ են), ենթադրում ենք, որ նորակառույց վանական համալիրը կոչել են ոչ միայն Նախաշինող Վահանի, այլեւ Սյունյաց թեմի այդ օրերի գահակալ Հովհաննես Ե-ի անվամբ: Ինչո՞ւ: Նախ՝ գրեթե անհնարին ենք համարում տարբերակը, որ առանց Սյունյաց աթոռի առաջնորդի Վահան Նախաշինողը (որքան էլ Բաղքի գահակալ իշխանի գերդաստանի ներկայացուցիչն էր) կկառուցեր վանական մի հսկա համալիր, որը նաեւ քաղաքային բնակավայր էր կարծեք: Այնպես որ՝ Վահան Նախաշինողը, ինչպես եւ Բաղքի իշխանները պետք է ուներային Տաթեւի հայրապետանոցի թույլտվությունն ու աջակցությունը, մանավանդ որ Ամենայն հայոց կաթողիկոսի՝ Հովհաննես Դրասխանակերտցու վիճակն այդ ժամանակ աննախանձելի էր (բանտարկություն, թափառական կյանք) եւ չէր կարող իրական ազդեցություն ունենալ Սյունիքի հոգեւոր կյանքի եւ հատկապես եկեղեցաշինության վրա: Եվ վանքին (եւ ոչ թե կառուցված առաջին եկեղեցուն), Նախաշինողի հետ մեկտեղ, շնորհվել է թեմի գահակալի անունը, ինչը եղել է երախտագիտության եւ

**Շարունակությունը՝ էջ 8**

# ՎԱՀԱՆԱՎԱՆՔ

Սկիզբը՝ էջ 7

գնահատանքի յուրօրինակ դրսեւորում: Ամենայն հավանականությամբ հենց նա էլ օծել է Վահանավանքը՝ 911թ. տեղի ունեցած նավակատիքի ժամանակ:

Մեր ենթադրությունը, անշուշտ, քննարկվող հարցին սպառիչ պատասխան չի տալիս, բայց եւ համարում ենք ճշմարտամոտ վարկած: Ուստիեւ՝ երկու խոսք այն մասին, թե ով էր Սյունյաց թեմի առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսը: Ըստ Հրաչյա Աճառյանի՝ «Յովհաննէս Ե եպիսկոպոս Սիւնեաց. հաջորդեց Սողոմոն Բ-ին. նախապես Տաթեւի վանքի փակակալն էր. իր օծումն ստացավ Գէորգ Բ ( «877-897») կաթողիկոսից եւ նրա հետ միասին օծեցին Աշոտ Ա թագավորին («895թ.»): Վերաշինեց Տաթեւի վանքը տասնմեկ տարվա ընթացքում եւ վերականգնեց նրա շարժական սյունը: … Գահակալության թվականը շփոթ է. եթե հետեւենք Օրբելյանի … ժամանակագրության … Յովհաննէս Ե-ն նստել է 38 տարի, ուստի իր թվականն է 888-926: Սակայն այս թիվը ճիշտ չէ. որովհետեւ ըստ Օրբելյանի Յովհաննէս Ե-ն օծում է Աշոտին 885թ.: Ազգապատումը դնում է նրա թվականը «885-918», իսկ Տաթեւի շինությունը «895-906թթ.»: Այստեղ հարմար է 885 թիվը իբրեւ Աշոտ Ա-ի օծման թվական, բայց Յովհաննէս Ե-ի գահակալության տարին, ըստ Օրբելյանի…, այստեղ իջեցրած է 33-ի» (Հայոց անձնանունների բառարան, հ.3, էջ 557-558):

Հովհաննես 5-րդի կյանքին ու գործունեությանը շատերն են անդրադարձել: Եվ բոլոր այդ տեղեկությունները վկայում են, որ Հովհաննես 5-րդ եպիսկոպոսը 9-րդ դարավերջի եւ 10-րդ դարասկզբի ամենահեղինակավոր հոգեւորականներից մեկն է եղել ամբողջ Հայաստանում: Փաստը, որ նրան է վստահվել Բագրատունի առաջին թագավորի՝ Աշոտ 1-ին արքայի օծումը (Գէորգ Բ կաթողիկոսի հետ մեկտեղ)՝ այդ է վկայում: Ոչ պակաս կարեւոր է փաստը, որ հենց նրա նախաձեռնությամբ կառուցվեց Տաթեւի վանքի Մեծ կաթողիկե եկեղեցին: Հովհաննես 5-րդն էր, ով իր օրերում քաջալերում էր եկեղեցաշինությունը, պայքարում վանական տնտեսության հզորացման համար, ինչի արդյունքում եւ տարիներ շարունակ թիրախ էր դարձել Ցուրի, Ավելադաշտի, Տամալեկքի եւ այլ գյուղերի բնակիչների հակաեկեղեցական շարժման ընթացքում:

## Վահանավանքի եկեղեցիները

Քանի՞ եկեղեցի է ունեցել Վահանավանքը:

Նախ կառուցվեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին՝ Վահան Նախաշինողի կողմից, որի նավակատիքը տեղի ունեցավ 911թ.: Այդ փաստն արձանագրում է Ստեփանոս պատմիչը: 1046թ. եկեղեցին նորոգվել ու ընդարձակվել է, ինչը հավաստում է պահպանված վիմագիր արձանագրությունը՝ հայտնաբերված 1970թ.: Ահավասիկ՝ **«ԹՎ(ԱԿԱՆԻՆ): ՆՂԵ: (1046). ՈՂՈՐՄԵԱ Ք(ՐԻՍՏՈ) Ս Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՍՄՊԱՏԱ ԹԱԳԱՒՈՐԻ ԵՒ ԻՒՐ ԵՂԲԱՒՐՆ ԳՐԻԳՈՐՈ՝ ՇԻՆՈՂԻ ՍՐԲՈ ԵԿԵՂԵՑՈՅՍ, ՍՐԱՀԻՍ ԵՒ ԺԱՄԱՏԱՆՆ. ՈՐՔ ՄՏԻ ԱՆԷՔ ՅԱՐԿՍ ՍՐԲՈՒԹԵԱՆ ՁՍՈՑԱ ՅԱՂԱՒԹՍ ՅԻՇԵՑԷՔ»:** Այս արձանագրությունը, սակայն, տարակարծությունների տեղիք է տվել: Ահա թե ինչ է գրում Գրիգոր Գրիգորյանը. **«Արձանագրության բովանդակությունից կարելի է եզրակացնել, որ Վահանավանքը կառուցվել է 1046թ. Սյունյաց իշխանազուն եղբայրների ջանքերով: Սակայն մենք գիտենք, որ առաջին կառուցողն ու վանական միաբանության հիմնադիրը եղել է Վահան Նախաշինող Չագիկյանը… Ուրեմն՝ 1046թ. հիմնովին վերանորոգվել է Վահանավանքի ողջ համալիրը, եւ շինել բառը պետք է հասկանալ վերակառուցել, նորոգել, շենացնել իմաստով»** (Վահանավանք, էջ 48-49):

«Շինող» բառի գրիգորյանական ստուգաբանության հարցում, մինչդեռ, վերապահում ունենք: Ոչ մի բառարանում այդ բառի նման մեկնաբանություն չգտանք: Հրաչյա Աճառյանը, օրինակ, այսպես է ստուգաբանում բառը՝ **«կանգնեցնել, շինել, հաստատել, տնկել, կառուցել»** (Հայերեն արմատական բառարան, Բ հատոր էջ 527-528):

Բանն այն է, որ Վարդան Արեւելցին այլ վարկած է առաջադրում Վահանավանքի կառուցման մասին: Ահա՝ **«Նա շինեց Յովհաննի ամենապայծառ վանքը Բաղաց դղյակի անմատույց ստորոտում…»:** Պատմիչը նկատի ունի Զվանշիր իշխանի որդի Տեր Վահանին, ում Անանիա Մոկացին ապստամբ Հակոբից հետո եպիսկոպոս ձեռնադրեց, ով հետագայում դարձավ Ամենայն հայոց կաթողիկոս:

Այսպիսով՝ Վարդան Արեւելցու վկայությունը եւ վերոբերյալ վիմական արձանագրությունը հակասության մեջ են Ստեփանոս Օրբելյանի վկայության հետ: **Եվ, այդուհանդերձ, կարելի է եզրակացնել, որ 911թ. կառուցված վանքը տարիներ հետո վերակառուցվել է Վահան 2-րդի, ապա՝ 1046թ.՝ Սմբատ թագավորի եւ իր եղբայր Գրիգորի կողմից:**

1086թ. շինվեց Սբ Աստվածածին կրկնահարկ եկեղեցին, որ գտնվում է մեծ տաճարից (Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուց) մոտ 70մ հեռավորության վրա: Այս եկեղեցու կառուցման մասին եւս պահպանվել է վիմագիր արձանագրություն, այն կառուցել է Սյունյաց Շահանդուխտ Բ թագուհին իր քույր Կատայի հետ: Ահա արձանագրությունը՝ **«: ՇԼԵ: (1086) ԹՎԱԿԱՆԻՍ. ԵՍ ՇԱՀԱՆԴՈՒԽՏ ԴՈՒՍՏՐ ՍԵԻԱԴԻԱՒ ԱՂՎԱՆԻՑ ԹԱԳԱՒՈՐԻ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԳՐԻԳՈՐ ԹԱԳԱՒՈՐԻ ՈՐԴԻ ԱՇՈՏԿԱ ՎԱՍՆ ՈՉ ԳՈԼՈ ՄԵՐ Ի ՄԻԱՍԻՆ ԺԱՌԱՆԳ (Ը)ՍՏ ՄԱՐՄՆՈ, ԵՍ ԵՒ ՔՈՅՐՍ ԻՄ ԿԱՏԱՅՍ ՇԻՆԵՑԱՔ ԶՍ(ՈՒՐ)ԲԻ Ա(ՍՏՈՒԱ)ԾԱԾԻՆՆ ՓՈԽԱՐԷՆ ԳԹՈՑ ՆՈՐԱ. ՈՐՉԱՓ ԿԵՆԴԱՆԻ ԵՄՔԻ ՆՄԱ ԿԱՏԱՐԷՆ ԶՍ(ՈՒՐ)Բ ԽՈՐՀՈՒՐԴՆ ԵՒ ՅԵՏ ԱՅՆՈՐԻԿ ԶՄԵԶԻ ԿՑՈՐԴ ԱՐԱՍՑԵՆ ԱՆՄԱՀ ՁԵՆՄԱՆՆ Ք(ՐԻՍՏՈ)ՍԻ»** (Գ.Գրիգորյան, Վահանավանք, էջ 71):

Սակայն, բոլոր հիմքերը կան պնդելու, որ Վահանավանքում եղել է եւս երեք եկեղեցի (ընդհանուր թվով՝ հինգ եկեղեցի): Սբ Գրիգոր Լուսավորիչ եւ Սբ Աստվածածին եկեղեցիների մասին գիտենք, կան, վերաշինված են: Բայց … Շահանդուխտ Բ թագուհին իր քույր Կատայի հետ միասին կառուցել է ոչ թե մեկ, այլ չորս եկեղեցի՝ Սբ Հարություն, Սբ Սիոն, Սբ Աստվածածին, Սբ Նախավկա: Ահա արձանագրությունը, որի ստույգ թվականը հայտնի չէ, որ հայտնաբերվել է ենթադրյալ սեղանատանը՝ **«…ԵՍ ՇԱՀԱՆԴՈՒԽՏ ԴՈՒՍՏՐ ՍԵԻԱԴԻ ԱՂՎԱՆԻՑ ԱՐՔԱԻ ԼԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԳՐԻԳՈՐՈՅ՝ ՈՐԴՈՅ ԱՇՈՏԿԱՅ Ի ՆԵՂՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻՍ ՄԵՐՈՒՄ ԲԱԶՈՒՄ ԵՒ ԾԱՆՐ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ԵՍ ԵՒ ՍԻՐԵԼԻ ՔՈՅՐ ԻՄ (ԿԱՏԱ) ՇԻՆԵՑԱՔ ՁԵԿԵՂԵՑԻՔՍ ԼԶՍՈՒՐԲԲ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ Ս(ՈՒՐ)Բ ՍԻՈՆ Ի (ՓՐԿ) ՈՒԹԻՒՆ ՄԵՋ ԵՒ ՅԻՇԱՏԱԿ ՅԱՒԻՏԵՆԻՑ ԳՐԻԳՈՐՈՅ ԵՒ Ս(ՈՒՐ)Բ (ԱՍՏՈՒ)ԱԾԱԾԻՆՆ ԵՒ ՁՆԱԽԱՎԿԱՅՆ Ի ՔԱՒՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆ ԼԵՂԲԱՒՐ ՄԵՐՈՆ ՍԵՆԵՔԱՐԵՄԱՅ ԵՒ ԻՒՐ ՈՐԴՈՅՆ Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ ՅԵՐԿԱՐԿԵՆԴԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՀԱՊԱՆ ՆԵՐԿԱՅԻՄՄ ԵՒ ԲԱՐԵԽԱՒՍ ՅԱՊԱԳԱՅՄՆ»** (Գ.Գրիգորյան, Վահանավանք, էջ 63):



Աղվանքի Ստեփանոս կաթողիկոսի հիշատակագրությունը Սբ Աստվածածին կրկնահարկ եկեղեցու գավթում (XI դար)

Գրիգոր Գրիգորյանը, սակայն, որոշակիորեն չի ասում, թե կոնկրետ որտեղ են եղել, գտնվել թվարկված եկեղեցիները (բնականաբար, բացի Սբ Աստվածածնից)՝ հարցի պատասխանը թողնելով մշուշապատ: Այդ կապակցությամբ նա նկատառում է արտահայտել դեռեւս 1974թ. օգոստոսի 8-ին «Պղնձի համար» թերթին տված հարցազրույցում (հեղինակը հայտնի չէ): Նա նշում է, որ Սբ Նախավկայի տեղադրությունն առայժմ պարզված չէ, բայց հավաստում է Սբ Նախավկա տաճարի գոյությունը, որը **«պետք է գտնենք», ինչը հնարավորություն կտա «թեկուզ մտովի կամաց-կամաց վերականգնել Վահանավանքի ամբողջականությունը»:**

Պատմական գիտությունների թեկնածու Աշոտ Մանուչարյանի կարծիքով (ով 2011թ. դեկտեմբերի 8-9-ին զեկուցումով հանդես է եկել Վահանավանքի 1100-ամյակին նվիրված երեւանյան գիտաժողովում)՝ **«Աղբյուրներում տեղեկությունների բացակայության պատճառով դժվար է որոշել այդ եկեղեցիների տեղադրության հարցը, բայց պետք է ենթադրել, որ դրանք եղել են ե՛ւ Վահանավանքի տարածքում, ե՛ւ նրանից դուրս»** (Աշոտ Մանուչարյանի զեկուցման տեքստը հրապարակվում է թերթի սույն համարում):

Չենք բացառում, այնուամենայնիվ, որ Վահանավանքում հայտնաբերված (վերոբերյալ) արձանագրության մեջ նշված բոլոր եկեղեցիները գտնվել են Վահանավանքի տարածքում: Կարելի է նաեւ այսպես ձեւակերպել՝ այդ արձանագրությունը վկայություն է Շահանդուխտ Բ-ի՝ Վահանավանքում կա-

## 1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

# ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ռուցած եկեղեցիների մասին: Ինչո՞ւ: Եթե այդ արձանագրությունը նպատակ ունենար վավերագրել Շահանդուխտ Բ-ի նախաձեռնությամբ կամ մասնակցությամբ կառուցված բոլոր եկեղեցիների անունները, ապա կնշեր նաեւ, ասենք, Տաթեւի վանքի արեւելյան դարպասի վրա կառուցված Սբ Աստվածածին եկեղեցին (կառուցել են Շահանդուխտ Բ-ն եւ նրա եղբայր Սենեքերիմը՝ Սյունյաց մետրոպոլիտ Գրիգորի հետ՝ 1087թ.): Մյուս կողմից՝ այդ եկեղեցու կառուցման մասին (նշված թվականը՝ ըստ Սեդրակ Բարխուդարյանի, վիճելի է) Տաթեւի վանքի Սբ Աստվածածին եկեղեցու հարավային պատի արեւելյան անկյան մոտ (արտաքուստ) պահպանված արձանագրության մեջ, սակայն, հիշատակված չէ Շահանդուխտ Բ-ի անունը, այլ միայն Սյունյաց եպիսկոպոսի անունը: Ահա՝ **«Ի ՇՐՋԱԳԱՅՈՒԹԵԱՆ ՏՈՄԱՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ: Ժ: Ի3 ՅՈԲԵԼԻՆԱՅ ԵՒ: Լ: ԵՒ: Զ ԹՎՈՅ. ԵՍ ԳՐԻԳՈՐ ԱՄԵՆԱՆՎԱՍ ՇԱՌԱ Քի ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ՆՈՐԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՒՆԵԱՅ ԿԱՆԳՆԵՑԻ ԿԱՄԱՐՔՍԻ ԵՒ Ի ՎԵՐԱ ՁԵԿԵՌԵՑԻՍ ԵՒ ՁՈՐ ԱՅԼ ՇԻՆՈՒԹԻՒՆՍ Է ԵՒ ՈՐ ԱՅԼ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԷ ԻՄ ՏԱՆՍ ԵՒ ԱՐԴԻՒՆՔ ՎԿԱ ԵՆ ԵԿԵՌԵՑԻՔՍ ԵՒ ՅՈՐԺԱՄ ՅԱՒԱՐՏՈՒՄՆԻ ԵԿՆ ԱՄԵՆԱՅՆՍ ԿԱՄԵՑԱՆ ԼԵՌԲԱՐՔ ԵՒ ԿԱՐԳԱՒՈՐՔ ՏԱՆՍ ԽԱՐՋԱՀԱՏՈՅՑ ԼԻՆԵԼ ԻՆՁ ԵՒ ԽՆԴՐԱՒՔ ԻՄԱՒՔ ԿԱՐԳԵՑԻՆ ՔԱՌԱՍՈՒՆՔԻ ՄԻՆ ՈՐ ՅԱՄԵՆԱՅՆ ՏԱՐՈՋ ԿԱՏԱՐԵՆ ՎԱԱՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՏԱՌԱՊԵԱԼ ՀՈԳՈՅՍ ԻՄՈ ՈՐՉԱՓ ՍԲ ԵԿԵՌԵՑԻՔՂ Ի ՀԱՍՏԱՏՈՒԹԻԵԱՆ ԵՆ ԱՐԴ ՈՐ ՁԿՆԻ ՄԵՐ ՅԱՁՈՐԴԻՔ Ի ՍԲ ԼԱԹՈՒՈՂ ՀԱՅՐԱՊԵՏՔ ԵՒ ԿԱՐԳԱՒՈՐ ՏԱՆՍ ՊԱՍՏԱԿԱՆ ԵՆ ԱՅՆ ՔԱՌԱՍՆՈՅՑ ՈՐ ԱՆԽԱՓԱՆ ԿԱՏԱՐԵՆ ՅԱՄԵՆԱՅՆ ՏԱՐՈՋ ՈՐ ԼԽԱՓԱՆԻՄԱՆ ՊԱՏՃԱՌՔ ԼԻՆԻ ԵՂԵԱԼ ԺԱՄՈՅՑ ԻՆՁ ԵՒ Ի3Ե ՊԱՏՃԱՌԱՆԱՒՔ ԵՒ ՈՉ ԿԱՏԱՐԻԼ ԵՒ ՁՐԿԷ ՁՀՈԳԻՍ ԻՄ ԵԹԷ Ի ՀԱՅՐԱՊԵՏԱՅ ԵԹԷ Ի ԿԱՐԳԱՒՈՐԱՅ ՁՐԿԵԱԼ ԵՒ ՈՐՈՇԵԱԼ ԼԻՆԻ Ի ՓԱՌԱՅ ՈՐՊՆՅՆ ԱՅԺՄ ԵՒ ՀԱՆԴԵՐՁ ԼԵԼՈՒՄՆ ԵՒ ԱՆԷԾՍ ԿՐԵՑԷ Ի ՍԲ ԵՐՐՈՐԴՈՒ ԹԵՆԵՆ ԵՒ ՄԻ ԳՏՑԷ ԹՈՂՈՒԹԻՒՆ Ի ՔԷ ԱՅԻ ԻՍԿ ՀԱՍՏԱՏԻՉՔ ԳՐՈՅՍ ԱԻՐՀՆԵԱԼ ԵՆ ՅԱՅ»** (Դիվան հայ վիմագրության, հ.2, էջ 28):

Այդուհանդերձ Վահանավանքի եկեղեցիների հարցը վերջնական ճշտման կարիք ունի:

### Վահանավանքի ժամանակը

1100-ամյա Վահանավանքն իրոք անցյալ չէ, հուշարձանախումբ չէ, ինչպես ընդունված է ասել: Այն եղել եւ մնում է կենդանի Աստծո կենդանի վեմը: Այդ ամենով հանդերձ՝ հետաքրքիր է իմանալ, թե հիմնադրումից հետո որքան ժամանակ է այն գործել: Գրիգոր Գրիգորյանը «Սյունյաց երկրին» տված հարցազրույցում (տպագրվում է թերթի սույն համարում) այսպես է պատասխանել հարցին՝ **«Վահանավանքը ձեռագիր մատյաններում վերջին անգամ հիշատակվում է 1406 թվականին՝ ... կապված լենկթեմուրյան արշավանքի հետ: Թե մինչեւ երբ է գործել Վահանավանքի միաբանությունը, առայժմ ոչինչ չենք կարող ասել: Այդ առեղծվածն ամենայն հավանականությամբ կլուծվի ամբողջ հուշարձանախումբը պեղելուց հետո»:** Պրոֆեսորը, սակայն, չի նշել, թե 1406-ի վերաբերյալ նշումը կոնկրետ որ արձանագրության մեջ է պահպանվել: Ավելի վաղ նա այդ հարցին այլ պատասխան էր տվել՝ մի տապանաքարի վերծանման առիթով: Ահա՝ **«Տապանաքար. (1.94մx0.55մ)՝ գավթի արեւելյան որմնասյան մոտ, փոքր-ինչ աջ թեքված, վրա՝ 8 տող. ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՅՈՒՎԱՆԻՍԻ, ՈՐՔ ԿԱՐԴԱՑԱՔ ՅԻՇԵՑԷՔ Ի Ք(ՐԻՍՏՈ)Ս. ԹՈՒԱԿԱՆԻՍՍ: ՉԿԶ: (1317). Ծանոթագրություն: Վահանավանքի բոլոր արձանագրությունների մեջ միակն է, որ թվագրված է XIV դարի առաջին տասնամյակներով: Զարմանալիորեն XIII դարից ոչ մի արձանագրություն չի հայտնաբերվել, բացի այս Հովհաննեսի հիշատակագրությունից, մնացածները թվագրվում են X-XI դարերով»** (Վահանավանք, Երեւան 2007, էջ 41):

Վահանավանքի ակտիվ գործունեության շրջանի վերաբերյալ պատկերացում կազմելու համար տեղին է հիշել, թե ովքեր եւ երբ են եղել սուրբ ուխտի վանահայրերը: **Ահա՝ Տեր Վահան Նախաշինող՝ 911-930-ական թթ., Վահան Սյունի՝ 930-ական թթ. – 958թ., Հայր Խիկար՝ 959-970թթ., Հայր Յովհաննէս՝ 970-997թթ., Ստեփանոս Եկեղեցապան՝ 1000-ական թթ. – 1033թ., Հայր Ստեփանո՞ս՝ 1040-ական թթ. – 1060-ակա՞ն թթ., Գէորգ Եկեղեցապան՝ 1060-ական թթ. – 1091թ., Հայր Եղուտ՝ 1091-1094թթ., Հայր Գրիգոր Երիցվանացի՝ 1094-1102թթ.:** Սույն անվանացանկը եւ ժամանակագրությունը եւս մեկ անգամ հաստատեց պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող Աշոտ Մանուչարյանը՝ Վահանավանքի 1100-ամյակին նվիրված գիտաժողովում: Պատմագիտությանն առայժմ հայտնի չեն 1102թ. հետո վանքի վանահայրերի անուններ:

Վերջին վանահոր՝ Հայր Գրիգոր Երիցվանացու պաշտոնավարման ավարտը՝ 1102թ., համընկնում է Կապանի ավերման սկզբին (1103թ.): Ահա թե ինչ է գրում Ստեփանոս պատմիչը ողբերգական այդ ժամանակի մասին՝ **«Այդ տարում, երբ հայոց 552 թվականն էր, եղավ Կապան գավառի եւ Բաղաց ամուր աշխարհի ավերման ու նրանց թագավորների եւ իշխանների տիրապետության վերացման սկիզբը»** (Ստ.Օրբելյան, նշված աշխ. էջ 277): Չորթանի այդ ավերումներից 23 տարի անց՝ 1126թ. Վահանավանքը բախվեց մեկ այլ արհավիրքի: **«575 թվականին եկավ ամիր Հարոնը եւ բնաջնջեց Կապանի տունն ու Արեւիք գավառը...»** (Ստ.Օրբելյան, նշված աշխ. էջ 279): Սյունյաց տան պատմիչն այլ անդրադարձներ էլ է ունենում՝ «... **Խափանվելով լռեցին բոլոր գործող վանքերը 554 թվականին (ընդհանուր՝ 1105թ., - Ս.Ալ.)»** (Ստ.Օրբելյան, նշված աշխ. էջ 287): Մեկ այլ անդրադարձ եւս՝ 553թ. (ընդհանուր 1104թ.) առնչվող. **«Վանքերի բոլոր միաբանությունները լռեցին պաշտամունքային արարողություններից»** (Ստ.Օրբելյան, նշված աշխ. էջ 279):

Վերոգրյալ վկայությունները թույլ են տալիս ասել, որ Վահանավանքի ակտիվ գործունեության շրջանն ավարտվեց Կապան մայրաքաղաքի կործանմամբ: Անշուշտ, համաձայն ենք Գրիգոր Գրիգորյանի կարծիքին, որ վանքի ամբողջ տարածքը պեղելուց հետո միգուցեեւ նոր տեղեկություններ ստանանք խնդրո առարկայի վերաբերյալ:

### Վահան կաթողիկոսը՝ մատենագիրների դպրասպանի առջեւ

Մեր սկզբնաղբյուրները, կարելի է ասել, անհասկանալի լռություն են պահպանում Վահանավանքի հարցում, եթե, իհարկե, նկատի չունենանք Ստեփանոս Օրբելյանին: Այդ ժամանակներում Ամենայն հայոց կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին անգամ իր «Հայոց պատմության» մեջ (Երեւան, 1996թ.) բառ անգամ չի ասում իր գահակալության օրերում կառուցված Վահանավանքի մասին: Հակառակ դրան, գրեթե բոլոր պատմագիրներն անդրադառնում են Վահանավանքի միաբանության երբեմնի առաջնորդ, Ամենայն հայոց կաթողիկոս Վահան Ա Սյունու (Սյունեցու) կյանքին ու գործունեությանը՝ նրան տալով հակասական, երբեմն իրարամերժ, ավելի հաճախ՝ բացասական գնահատականներ: Ի դեպ, Վահանավանքի (Հովհաննավանքի) հիմնադրման 1100-ամյակին նվիրված թերթային սույն համարի նախապատրաստության ընթացքում եկանք եզրակացության, որ հայոց պաշտոնական պատմագիտությունն ակնհայտ միակողմանի է գնահատում բոլոր ժամանակների ամենամեծ կապանցիներից, սյունեցիներից մեկի՝ Վահան Ա կաթողիկոսի գործունեությունը, նրան ներկայացնում առայսօր չապացուցված մեղադրանքներ: Եվ մեր պարտքը համարեցինք հնարավորինս լույս սփռել Հայ առաքելական եկեղեցու այդ նշանավոր դեմքի կյանքին ու գործունեությանը: Եվ սույն համարում գետեղում ենք որոշ նյութեր՝ հատվածներ Ստեփանոս Օրբելյանի մատյանից, Մաղաքիա Օրմանյանի «Ազգապատումից», Մ.Չամչյանի «Հայոց պատմությունից»: Ներկայացնում ենք նաեւ Վահանի հնազանդության խոստումնագիրը՝ Անանիա Մոկացի կաթողիկոսին 958թ. տված, երբ քննարկվում էին Հակոբի ապստամբության հետեւանքները եւ նրան Սյունյաց թեմի առաջնորդ ընտրելու հարցը: Հակառակ իշխող կարծիքի՝ Մաղաքիա Օրմանյանը նշում է. **«Մենք աւելի պիտի միտինք կրօնական երեւոյթին ներքեւ քաղաքական խնդիր մը քօղարկուած տեսնել, եւ Աշոտ թագաւորի ու Վահան կաթողիկոսի մեջ հակառակութիւն մը տեղի ունեցած ըսել, որուն երեսէն Վահան ինքզինքը ապահով չի զգար, եւ փախուստով վտանգէն ազատելու միջոցին կը դիմէ»** (Մ.Օրմանյան, Ազգապատում, Ա հատոր, էջ 1302):

Մեր մատյաններում հանդիպում ենք կարծիքի, թե Ստեփանոս Օրբելյանը, իբրեւ սյունեցի, կողմնակալ է գտնվել Վահան Ա կաթողիկոսի գահակալության շրջանը բնութագրելու հարցում: Սյունյաց պատմիչի գործն ուշադիր քննելուց եզրակացնում ենք, որ այնքան էլ այդպես չէ: Փոխարենը նա բարձր է գնահատում Վահան Ա-ի մինչկաթողիկոսական շրջանի գործունեությունը: Անդրադառնալով Շիրակավանի ժողովին, որ Տեր Անանիայի մահից հետո պետք է ընտրեր Ամենայն հայոց կաթողիկոս, Ստեփանոս Օրբելյանը գրում է. **«....Ամբողջ ժողովն ընտրում է Վահանին՝ առավել սուրբ ու իմաստուն լինելու պատճառով»** (Սյունիքի պատմություն, էջ 249):

Հայ միջնադարյան պատմագրության փայլուն դեմքերից մեկը՝ Մատթեոս Ուռհայեցին (ծնվել է 11-րդ դարի երկրորդ կեսին, վախճանվել 1138-1144թթ. միջեւ), իր «Ժամանակագրության» մեջ մի քանի անգամ անդրադարձել է Վահան կաթողիկոսի խնդրին: Թեեւ նա վիճահարույց տեղեկություն է տալիս Վահանի գահակալության տարիների մասին (իբր գահակալել է հինգ տարի), բայց Վահանին անվանում է **«Հայոց սուրբ հայրապետ»:**

Առհասարակ լուրջ կասկածների տեղիք են տվել ու տալիս Վահան Ա-ի՝ Հայ եկեղեցին Հույն եւ Վրաց եկեղեցիների հետ միավորելու բովանդակությամբ Մելիտինե քաղաքի Թեոդորոս մետրոպոլիտին, Բյուզանդիայի կայսր Հովհաննես Չմշկիկին հղած նամակները: Մ.Ուռհայեցին ահա թե ինչ է գրում այդ կապակցությամբ. **«Հայոց իշխաններն ու վարդապետները եկան հոռոմոց կայսեր մոտ եւ նրան հանձնեցին Հայոց Վահան կաթողիկոսի նամակը: Կայսրն ընդունեց նամակը, գովեց այն եւ պատվեց նամակաբերին»** (նշված աշխ. էջ 125): Ցավոք, այդ նամակի տեքստը պատմագիրներից ոչ մեկը (որքանով տեղյակ ենք) չի բերում, եւ միայն ենթադրություններ են արվում: Դեռեւս չի քննարկվել հարցը, թե առավել շատ քաղաքական նպատակ հետապնդող նամակն արդյո՞ք առանց Աշոտ թագավորի գիտության է ուղարկվել Բյուզանդիայի կայսրին, թե՞...

13-րդ դարի հայ պատմիչ Կիրակոս Գանձակեցին «Հայոց պատմություն» աշխատության մեջ (Երեւան, 1982թ.) նշում է՝ **«Տեր Անանիայի մահից հետո նրա աթոռը մի տարի նստեց Տեր Վահանը՝ Բաղաց աշխարհից: Սա Վրաստանի հետ միասնական հավատի դաշինք կնքեց: Այդ պատճառով Աբասի որդի Աշոտի թագավորության ժամանակ Անի ամրոցում հավաքվեցին շատ եպիսկոպոսներ ու խստակրոն վանականներ, ովքեր հավատի կերպով ճանաչել էին նրա մտքի կորստաբեր հերձվածը, որովհետեւ նա պատկերներ բերել տվեց Քաղկեդոնի աղանդի վերականգնման համար: Եվ նրան հեռացնելով հալածական դարձրին»** (նշված աշխ. էջ 72): Պատմիչը, ըստ երեւույթին, տուրք է տվել ժամանակին իշխող պաշտոնական վարկածին: Այդ կերպ մտածելու սնանկությունն ընդգծելու համար բավական է նշել, որ նրա հետեւյալ նախադասության միտքը՝ **«Սա Վրաստանի հետ միասնական հավատի դաշինք կնքեց»,** առայսօր չի հաստատվում կոնկրետ փաստերով:

Վահան Ա Սյունեցի Ամենայն հայոց կաթողիկոսին մեծարանքով է ներկայացրել հայ մատենագիր, գիտնական, փիլիսոփա, պետական եւ եկեղեցական գործիչ, հրապարակախոս, բանաստեղծ, երաժիշտ, թարգմանիչ Ներսես Լամբրոնացին (1153-1198թթ.): Հռոմկլայի համագումար-ժողովին (1179թ.) արտասանած «Ատենաբանութիւն» ճառում (հրապարակվել է 1749-ին, 1834-ին թարգմանվել է գերմաներեն, 1865-ին՝ ռուսերեն), որ համարվում է հրապարախոսության լավագույն նմուշ, անդրադարձել է նաեւ Վահանի խնդրին:

Հայ առաքելական եկեղեցու իշխող պաշտոնական կարծիքն է արտահայտել Հրաչյա Աճառյանը. **«Վահան Սիւնեցի, կաթողիկոս Հայոց՝ «968-969թթ.». Բաղաց գավառից էր եւ նույն գավառի Զեւանշիր իշխանի որդին. կրթությունը ստացավ Վահանու վանքում, ուր հետո առաջնորդ դառնալով՝ նորոգեց, ընտրվեց եպիսկոպոս Սիւնեաց՝ իբրեւ հաջորդ հակաթոռ, ապստամբ Յակոբի («959թ.») եւ ձեռնադրվեց Անանիա Մոկացի կաթողիկոսի ձեռքով «961/2թթ.»: Այս առիթով Վահանը տվել է հնազանդության խոստումնագիր: ...Վեց տարի եղավ Կաթողիկոս Հայոց. «968թ.», իբր հաջորդ Անանիայի: Հարեց քաղկեդոնության, ուստի վտարվեց կաթողիկոսական աթոռից «969թ.»: Փախավ Վան եւ նստավ Չորոի վանքն ուր եւ մեռավ «972թ.»»:**

Թեմային անդրադարձել է Վարդան Արեւելցին (մոտ 1198-1271թթ.), ով պատմագիտության մեջ հայտնի է նաեւ Վարդան Գանձակեցի, Աղվանից Վարդան, Վարդան Կիլիկեցի, Վարդան Մեծ, Վարդան պատմիչ, Վարդան Վարդապետ: Հայ պատմագիր, աշխարհագրագետ, մեկնիչ, փիլիսոփա, թարգմանիչ, մանկավարժ, հասարակական եւ եկեղեցական գործիչ Վարդան Արեւելցին իր «Հաւաքումն պատմութեան» երկասիրության մեջ նշում է՝ **«...Անանիա Մոկացին ...ապստամբ Հակոբից հետո արքեպիսկոպոս ձեռնադրեց Զվանշիր իշխանի որդի Տեր Վահանին, ով Բաղքից էր: Նա շինեց Հովհաննի ամենապայծառ վանքը Բաղաց դղյակի անմատույց ստորոտում, ինչպես նաեւ աղվաններին համոզեց, որպեսզի նրանք իրանց համար կաթողիկոս չձեռնադրեն առանց սուրբ Գրիգորի աթոռի: Նրանից հետո աթոռին մեկ տարի նստում է Վահանը, որ Բաղքից էր: Հետագայում հայտնի դարձավ, որ նա վրացիների դաշնակիցն է եւ այնտեղից արձաններ է բերել տալիս: Այդ պատճառով նրան փոխում են...»** (նշված աշխ. էջ 130): Վարդան Արեւելցու շարադրանքից դժվար չէ նկատել, որ Տեր Վահանը մինչեւ կաթողիկոս դառնալն ինչպիսի դեր է խաղացել Մայր աթոռի եւ աղվանների միջեւ հարաբերությունների կարգավորման հարցում:

X դարի երկրորդ եւ XI դարի առաջին կեսերի պատմագիր Ստեփանոս Տարոնեցին (Ստեփանոս Ասողիկը) «Պատմութիւն տիեզերական» խորագրով երկում նույնպես անդրադարձել է Վահան Ա կաթողիկոսին եւ մասնավորապես նշել՝ **«եւ ապա եկաց կաթողիկոս Վահանիկն ի Բաղաց գաւառէ, որդի Զուանշիրի իշխանի Բաղաց: Սա ընդ քաղկեդոնականս սիրելութիւն եւ հաճութիւն կամեցաւ առնել թղթովք: Յորոյ վերայ ժողովեցան կրօնաւորքն Հայոց ի քաղաքն Անւոյ, - Տէր Խաչիկ Արշարունեաց եպիսկոպոս եւ հայր Պողիկարպոս առաջնորդ Կամրջաձորոյ, եւ հայրն Սարգիս Հոռոմոսի վանաց վանական եւ հայր Ստեփանոս Սեւանայ վանաց վանական, եւ այլ եպիսկոպոսունք եւ հարք բազումք: Իսկ Վահանիկն փախստեայ անկանի ի Վասպուրական, առ Ապուսահլ թագաւոր Վասպուրականի...»** (էջ 181-182):

Վահան Ա Սյունի Ամենայն հայոց կաթողիկոսին անդրադարձել է Սամվել Անեցին (Սամուել Անեցի, Սամուել Երեց): Հայ-պատմիչ-ժամանակագրի (մոտ 1100/05-1185/90թթ.) պահպանված միակ «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց» ժամանակագրական բնույթի պատմական երկում կատարված անդրադարձը նույնպես արտացոլում է ժամանակին իշխող պաշտոնական կարծիքը:

Վահան կաթողիկոսի թեման գրավել է նաեւ 13-րդ դարի հայ մատենագիր, պատմիչ, եկեղեցական գործիչ Մխիթար Այրիվանեցու (Մխիթար Երեւանցու) ուշադրությունը՝ «Նոր պատմություն» խորագրով երկասիրության մեջ, որ պայմանականորեն կոչվում է նաեւ «Պատմություն հայոց» եւ «Պատմություն ժամանակագրական»:

Վահան Ա Սյունեցու մասին գրել է Մխիթար Անեցի (Երեց) պատմիչը (12-րդ դարի երկրորդ կես) «Պատմութիւն» գործի մեջ:

Մեզ հետաքրքրող թեմային ուշագրավ անդրադարձ է կատարել 19-րդ դարի հայ բանասեր, պատմաբան, եկեղեցական գործիչ Արիստակես Սեդրակյանը (Մելիք-Առաքելյան): Ի դեպ, նա եղել է նաեւ Տաթեւի, Արցախի հայոց թեմերի առաջնորդ 1867-1906թթ.: Նկատի ունենք նրա «Հայաստանյայց եկեղեցու պատկերահարգությունը» (մաս I, 1904, շարունակությունը լույս չի տեսել):

Վահան Ա-ի մասին միակողմանի տեսակետ է մատուցում հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի համար նախատեսված «Հայոց եկեղեցու պատմություն» դասագիրքը: Ահա՝ **«Անանիա Մոկացուց հետո կաթողիկոս է ընտրվում Վահան Ա Սյունեցին: Սակայն նրա աթոռակալությունը շատ կարճ է տեւում, քանի որ քաղկեդոնականների, մասնավորապես վրացիների հետ մերձեցման**

Շարունակությունը՝ էջ 10

1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

# ՎԱՀԱՆԱՎԱՆՔ

Սկիզբը՝ էջ 9

**փորձեր կատարելու պատճառով հայ ավանդապահ հոգեւորականությունը բուռն կերպով ընդդիմանում է: Վահանի գործերը քննելու եւ նրան պարսավելու համար 969թ. նորահաստատ Անի մայրաքաղաքում գումարվում է եկեղեցական ժողով: ...Ժողովականներն Աշոտ Ողորմած թագավորի համաձայնությամբ նոր կաթողիկոս են հռչակում Ստեփանոս Գ Սեւանցուն»:**

Մեծն Միքայել Չամչյանը նախ իր վերաբերմունքն է արտահայտում Ասողիկի, Սամվելի, Կիրակոսի, Վարդանի եւ Հայսմավուրքի մտքերին՝ Վահան կաթողիկոսի հայրապետության ժամանակաշրջանի վերաբերյալ: Իմիջիայլոց, այդ հարցը նույնպես մատենագիրները ներկայացրել են իրարամերժ հաշվարկներով: Այնուհետեւ Մ.Չամչյանը գրում է. **«Բայց այս Վահան կաթողիկոսի վերաբերյալ դարձյալ իմանալու է, որ թեպետ տգետներից ոմանք նրան զրպարտել են իբրեւ հավատի մեջ թերացող մեկը, նաեւ իբր թե այդ պատճառով հալածված է եղել ոմանց կողմից, սակայն նրա ուղղափառությունը հայտնի է ոչ միայն նրա վարքի պատմությունից, այլեւ հայոց գրվածքներում, նաեւ որովհետեւ Կ. Պոլսում 1700թ. տպված «Նարեկում» ուղղափառ է կոչվում. այնտեղ ասվում է, թե Նարեկացին ապրում էր «Վահան ուղղափառ կաթողիկոսի հայրապետության ժամանակ», թեպետ ոմանց կողմից հետագայում այդ բառը հանվել է: Եվ Ուռհայեցին նրան երանելի եւ բոլորից լավ է անվանում՝ ասելով, թե՝ «ձեռնադրեցին բոլորից լավ եւ երանելի Վահանին»: Նաեւ Լամբրոնացին Ատենաբանության մեջ հիշատակում է իբրեւ սուրբ հայրապետ եւ գովաբանում միաբանության [միտված] նրա ջանքը, որ նա կամենում էր գործադրել** (Հայոց պատմություն, Բ հատոր, Երեւան 1984թ., էջ 1016-1017):

Մենք չկարողացաք ծանոթանալ Վահան Ա Սյունեցի կաթողիկոսի եւ նրան հաջորդած Ստեփանոս Սեւանցու՝ միմյանց հղած նամակներին, որոնք, անշուշտ, դավանաբանական բնույթի էին:

Մենք, ինչպես նշեցինք վերեւում, չկարողացանք գտնել Վահան կաթողիկոսի՝ Հոռոմաց կայսերը հղած նամակը:

Բոլոր այդ թղթերի ուսումնասիրությունը հնարավորություն կտար առավել ամբողջական եւ վերջնական պատկերացում կազմել Վահան կաթողիկոսի մասին:

973թ. մահացավ Վահանը: Նա թաղվեց Ջորովանքում՝ Գեւորգ Գառնեցի եւ Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսների մոտ: Թաղման արարողության ընթացքում նա արժանացավ օրինավոր կաթողիկոսների պատվին: Եվ այդ ամենը՝ Վասպուրականի Աբուսահլ թագավորի սահմանած կարգի շնորհիվ, ում մոտ ապաստանել էր Վահան Սյունի գահընկեց կաթողիկոսը: Աբուսահլն ուղղակի ստանձնեց Վահանի պաշտպանությունը՝ մինչեւ վերջ նրան ճանաչելով օրինավոր կաթողիկոս, չընդունելով Ստեփանոս Սեւանցու ընտրությունը: Թագավորը մինչեւ վերջ քաջալերեց Վահանին՝ իր հայրապետական իրավունքները կիրառելու մեջ:

Վասպուրականի թագավոր Աբուսահլ-Համազասպ Արծրունու (իշխել է 959-972թթ.) այս պահվածքը պատմագիտության մեջ ոչ միանշանակ է ընդունվել: Վահան կաթողիկոսի եւ Աբուսահլի հակառակորդները վերջինիս մեղադրեցին այն բանում, թե իբր նա բյուզանդական արքունիքի բարեկամությունն ու աջակցությունը շահելու ակնկալությամբ է ապաստան տվել եւ հովանավորել քաղկեդոնական դավանանքի համակիր, 969-ին կաթողիկոսական աթոռից զրկված Վահան Ա Սյունեցուն:

Ուշագրավ է նաեւ փաստը, որ փախուստի մատնված, Բագրատունի թագավորի կողմից հալածվող Վահանը չվերադարձավ իր հայրենի Կապան, որի գահակալ իշխանն իր հարազատն էր: Թե ինչու նա չեկավ իր հայրենի Բաղք, կարելի է ենթադրություններ անել դեռեւս 958թ. գրված հնազանդության խոստումնագրից, որ առաջին անգամ (արդի հայերենով) հրապարակում ենք սույն համարում:

Վահանն ապաստան չգտավ նաեւ Վրաստանում ու Աղվանքում, որոնց քաղկեդոն եկեղեցիների հետ իբր դաշնության մեջ էր: Նա նախընտրեց Վասպուրականը...

Շատ տարօրինակ է նաեւ, որ եւ՛ Վահանավանքում, որտեղ բազմաթիվ կառուցումների հեղինակ է, եւ՛ Տաթեւի վանքում, որ 958-ից հետո վերականգնեց ինքը, ոչ մի վիմագիր չի պահպանվել: Այդպիսի պատահականություններ չեն լինում: Արդյո՞ք դրանք էլ են սրբագրվել, ինչպես Չամչյանի վկայակոչած «Հայսմավուրքը»:

Գտնում ենք, վերը շարադրվածով հանդերձ, որ Վահան կաթողիկոսի հարցը մանրամասն, անկողմնակալ, փաստարկված քննության կարիք ունի դեռեւս: Իսկ մինչ այդ ունենք զրպարտված, ոչ կոնկրետ փաստերով, ընդհանուր ձեւակերպումներով, քաղաքական եւ ոչ դավանաբանական դրդապատճառներով Բագրատունի Աշոտ Ողորմած թագավորի կողմից հալածված ու մեղադրված Վահան Ա Սյունի (Սյունեցի) կաթողիկոսի կերպարը:

## Վահանավանքը՝ Սյունիք-Աղվանք հարաբերությունների առանցքում

Հայաստան-Աղվանք՝ դարերի խորքից եկող դաշնակցային հարաբերություններում միշտ էլ առանձնահատուկ դեր է խաղացել Սյունիք-Աղվանք, Սյունիք-Արցախ համագործակցությունը: Դրա ամենաուշագրավ դրվագներից է Սյունիք-Արցախ վարչական միավորի՝ մոտ 100-ամյա գոյությունը: 551(557)-ին Վահան Սյունու գլխավորությամբ ստեղծվեց Սյունիք-Արցախյան շահը՝ Վարանդա (Սիսական-Ոստան) կենտրոնով, որ գոյատեւեց մինչեւ 642թ.:

IX-XII դարերում այդ համագործակցությունը նորանոր դրսեւորումներ ունեցավ: Ամենաուշագրավն այն էր, որ Սյունիքի թագավոր Գրիգոր Ա Աշոտյանից (1051-1072թթ.) հետո Սյունիքի թագավորական գահին հայտնվեց նոր հարստության ներկայացուցիչ: Սյունիքի թագավորության առաջին երկու թագավորին, որ Սահակյաններ էին (Սմբատ Ա՝ 987-998, նրա որդի Վասակ Ա՝ 998-1040), հաջորդեցին Ծղուկի տեր Աշոտ Աշոտյանի որդիները՝ Սմբատ Բ-ն՝ 1043-1051թթ., ապա նույն այդ Սմբատի եղբայր Գրիգոր Ա Աշոտյանը՝ 1051-1072թթ.: Ըստ էության եւ՛ Սահակյանները, եւ՛ Աշոտյանները Սյունիների (Սիսակյանների) տոհմից էին սերում, եւ կարելի է ստույգ արձանագրել, որ նրանք (չորս թագավորը) միեւնույն հարստության (դինաստիայի) ներկայացուցիչներ էին: Եվ ահա Գրիգոր Ա-ի մահից հետո Սյունիքի թագավորության գահին հայտնվեց Առանշահիկների (Եռանշահիկների) ներկայացուցիչը (Առանշահիկ նշանակում է Առանի տիրակալ): Առանշահիկները Կուր եւ Երասխ գետերի միջեւ տարածված Աղվանքի ժառանգական կառավարիչներն էին: Նրանք Խաչենի իշխաններն էին, ովքեր 9-րդ դարում Աղվանքի տեր հռչակվեցին եւ կրում էին «Թագավոր Աղվանից» տիտղոսը: Իհարկե, Առանը, ըստ Մովսես Խորենացու, Սյունյաց նախահայր Սիսակի սերնդից էր, հայկազուն էր, բայց Առանի սերունդը 6-րդ դարում իջել էր պատմական թատերաբեմից: Ուրեմն եւ՝ խաչենցի Առանշահիկները Սիսակյան Առանից չէին սերում: Նրանց ծագումնաբանության հարցը խոսակցության այլ թեմա է: Ինչեւէ, Սյունիքի թագավորության մեջ Գրիգոր Ա Աշոտյանի մահվանից հետո տեղի ունեցավ դինաստիական փոփոխություն: Գրիգոր Ա-ն եւ Շահանդուխտ Բ-ն (վերջինս էլ Առանշահիկների գերդաստանից էր) արու զավակ չունեին: Տեսականորեն թագավորական գահը կարող էր ամուսնու մահից հետո զբաղեցնել Շահանդուխտը (ինչպես եւ զբաղեցրեց 12 տարի շարունակ): Բայց... **«Ապա իշխանների հետ խորհուրդ անելով»** (Ստ.Օրբելյան, նշված աշխ. էջ 268) թագաժառանգ է հրավիրվում Շահանդուխտի եղբայր մանուկ Սենեքերիմը (Սենեքերիմ Սեւադյանը), ով թագավորեց 1072-1094թթ.: Բագրատ Ուլուբաբյանը «Խաչենի իշխանությունը X-XVI դարերում» մենագրության մեջ (ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1975) այլ տեսակետից է հարցին նայում, ինչի հետ դժվար է համաձայնել. **«...Սյունիքի թագավորությունը դինաստիական չի եղել (այնտեղ իշխել են ինչպես տեղացիները՝ տոհմական տարբեր պատկանելություններով, այնպես էլ խաչենցիները, որոնք հրավիրվում էին տեղացիների կողմից, հենց որ սրանք կարիք էին ունենում մի ուժեղ ձեռքի): ...Այս թագավորությունն ամեն անգամ Խաչենի իշխանական տոհմից էր արժանավոր իշխանազուն տանում թափուր մնացած գահի համար»** (նշված աշխ. էջ 54): Բագրատ Ուլուբաբյանը, մեղմ ասած, աղավաղում է... Ինչեւէ, Սենեքերիմի եղերական մահից հետո թագավորական գահն անցնում է նրա որդի Գրիգորին (Գրիգոր Բ), ով իշխել է 1094-1116թթ. (որոշ տեղեկություններով՝ 1103-1166թթ.): Եվ Գրիգորը **«...բերել տվեց Խաչենի իշխաններից, գեռաքարեցի մի կտրիճի՝ Հասան անունով, իր դուստր Կատային նրան կնության տվեց ու դարձրեց իր թագավորության ժառանգ: ...Իսկ երբ սելջուկներն ուզեցին բերդը գրավել, Հասանը բերդապահներ նշանակեց, ինքն էլ վերցրեց կնոջն ու ընտանիքի մյուս անդամներին, գիշերը բերդից դուրս եկավ եւ անցավ գնաց Խաչեն՝ իր գավառն ու տունը»** (Ստ. Օրբելյան, նշված աշխ. էջ 280): Թե ինչու է Գրիգոր Սեւադյանն (Առանշահիկներից) իրենից հետո Սյունիքի թագաժառանգ հռչակել Սակոյան տոհմից իր փեսային (դարձյալ Խաչենից), քննարկելու հարց է, մանավանդ որ Բաղքում կային բնիկ իշխանական տներ: Զարմանալի է նաեւ, որ Ստեփանոս պատմիչն այդ Հասանին ներկայացնում է «կտրիճ» հորջորջումով: Առավել տարօրինակ է, որ Սյունիքի թագավոր կոչված այդ «կտրիճը», երկրի համար ամենաօրհասական պահին, փախչում է... Այս Հասանին էր, ըստ երեւույթին, Բագրատ Ուլուբաբյանը սնապարծորեն անվանում «ուժեղ ձեռք»: Ահա այսպիսի վերջաբան ունեցավ Առանշահիկների իշխանությունը Սյունիքում. յոթ թագավորից երեքն այդ հարստությունից էր:

Սյունիք-Աղվանք հարաբերություններում ոչ երկրորդական նշանակություն ունեին խնամիական կապերը հատկապես Սիսակյանների ու Առանշահիկների գերդաստանների միջեւ, որոնք բացառապես քաղաքական ենթատեքստ ունեին: Նիկողայոս Ադոնցը «Բագրատունիների փառքը» ուսումնասիրության մեջ (Երկեր 5 հատորով, Ա հատոր, Երեւան-2006, էջ 456) հաստատում է, որ **«Հին աշխարհին եւս հայտնի են քաղաքական ամուսնությունները»:** Պատմությանը հայտնի է մի քանի դեպք, երբ Սյունիքի գահերեց իշխաններն ամուսնանում են Առանշահիկների աղջիկների հետ: Մեզ հայտնի դեպքերից մեկը՝ ավանդազրույցի տեսքով, Աղվանքի գահերեց իշխան Վարազ Տրդատի Շահանդուխտ դստեր հետ է կապված, ում հարս էին խնդրել Թորգոմյան տնից, որի վրա հարձակվեցին Բաղքում՝ Որոտանի անդնդախոր կիրճի եզրին: Սյունիքի Սմբատ առաջին հիմնադիր թագավորի կինն էլ՝ Շահանդուխտ Ա-ն, Սյունիքի թագավորության առաջին թագուհին, Խաչենի եւ Ուտիքի իշխան Սահակ Սեւադայի դուստրն էր (վերջինիս մյուս դուստրն էլ Աշոտ Երկաթի կինն էր): Սյունիքի թագավորության չորրորդ գահակալ Գրիգոր Ա-ն էլ կնության էր առել Սահակ Սեւադա Ա-ի թոռ՝ Սեւադա իշխանի դուստր Շահանդուխտին (Բ): Հետագայում նրա հետ Սյունիքում եւ մասնավորապես Վահանավանքում ակտիվ դերակատարության մեջ ենք տեսնում իր քույր Կատային: Քիչ չեն օրինակները, երբ Սյունյաց իշխանական տան աղջիկներին էին կնության տանում Արցախի իշխանները: Մեկ օրինակ. Արցախի պատմության մեջ հայտնի Հասան-Ջալալի կին Մամքանը Սյունիքից էր:

Սյունիք-Աղվանք հարաբերություններում Սյունիքը, մասնավորապես Վահանավանքը, ապաստարան էր եւ հանգստարան Աղվանքի հոգեւոր եւ աշխարհիկ իշխանների համար: Հատկապես այն բանից հետո, երբ Փադլունյան տոհմն ամրապնդվեց Գանձակում, երբ Առանշահիկ հարստության՝ քաղաքական ասպարեզից դուրս մղումը համարվեց գլխավոր խնդիր, Առանշահիկները հաճախ ստիպված էին լինում հեռանալ իրենց տիրույթներից, ապավինել նաեւ Սյունիքին: Հենց այդ նկատառումներով է Վահանավանքում 1084-ին թաղվել Մարեջրեցի Սողոմոնը. **«ՁՍՈՂՈՄՈՆ ՄԱՐԻԷՋՐԵՑԻ ՅԱՂԱԻԹԱՍ ՅԻՇԵՑԷՔ ԹՎ.: ՇԼԳ:»** (Դիվան հայ վիմագրության, Բ, էջ 139): Մեկ ուրիշ Մարեջրեցու (Քուրդիկ) տապանագիրն էլ, դարձյալ Վահանավանքում հայտնաբերված, հրապարակել է Գրիգոր Գրիգորյանը «Վահանավանքի պեղումների նախնական արդյունքները» («Լրաբեր», 1970, №10, էջ 89) ուսումնասիրության մեջ: Ահա տապանագիրը՝ **«Հայոց թ. ՇԻԵ (1076) զՔուրդիկ Մարեջրեցի յաղաթս յիշեցէք աղաչեմք»:** Մոտավորապես նույն շրջանին է վերաբերում նաեւ Աղվանից կաթողիկոսի հիշատակագիրը՝ Վահանավանքում պահպանվող՝ **«ԵՍ ՏՐ ՍՏԵՓԱՆՈՍ, ԱՂՎԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆԵՂԵԱԼ Ի ՏԱՃԻԿԱՑ ԵԿԱ ԵՒ ՀԱՆԳԵԱՅ Ի ԱԾԱՍԵՐ ԹԱԳՈՒՀԵԱՅ ՇԱՀԱՆԴԽՏԻՆ ԵՒ ԿԱՒՏԱԻՆ ՇԻՆԱԾ ԵԿԵՂԵՑՒՈՅՍ ԳԱՒԹԻՍ, ՈՐ ԱԾ..... ՎԵՐՆԱՅԱՐԿ Ի .....»** (Դիվան հայ վիմագրության, Բ, էջ 139):

Վահանավանքի սյունասրահում է թաղված Սենեքերեմի (Սյունյաց Առանշահիկ թագավոր) մայրը՝ Սոփին. մահվան տարեթիվը՝ 1081. **«ՍՈՓԻ ԱՂՎԱՆԻՑ ԹԱԳՈՒՀԻ, ԶՈՔԱՆՉ ԳՐԻԳՈՐԻ ԹԱԳԱՒՈՐԻ՝ ՈՐԴՈ ԱՒՇՈՏԿԱ, ՄԱՅՐ ՇԱՀԻՀԱՆԴԽՏՈՒ.ԹՎ (ԱԿԱՆԻՆ): ՇԼ: (1081): »** (Գ.Գրիգորյան, Վահանավանք, էջ 59):

Ասվածը հաստատում է մեկ այլ տապանագիր եւս՝ **«ԹՎ(ԱԿԱՆՈՒԹԵԱՆՆ ՀԱՅՈՑ): ՇԺ: (1061)Ի. ԽԱՂԲԱԿԻ ՈՐՈՁՎԱՑ: »:** Գ.Գրիգորյանի կարծիքով՝ «...Խաղբակը կարող էր լինել Արցախական աշխարհի Խաղբակյան նշանավոր տոհմի նախնիներից մեկը եւ պատիվ է ունեցել հանգիստը գտնել Սյունիքի արքունական դամբարանում» (Վահանավանք, էջ 53-54):

Վահանավանքի տարածքի ու մերձակայքի հետագա պեղումները կարող են ավելացնել այդտեղ իրենց հանգիստը գտած արցախցիների թիվը:

Սյունիք-Արցախ եւ Աղվանք հարաբերությունների նման դրսեւորումների հիմքը, անշուշտ, ռազմաքաղաքական համագործակցությունն էր: Սահակ Սեւադայի եւ Սյունիքի իշխանությունների համագործակցությունը դրա վառ վկայությունն է: Նա իր դստերը (Շահանդուխտ Ա), ինչպես նշեցինք, կնության էր տվել Սյունիքի գահերեց իշխան Սմբատին, ով շուտով պիտի հիմներ Սյունիքի թագավորությունը: Չպետք է մոռանալ, որ Սահակ Սեւադան, մեր որոշ պատմիչների վկայությամբ, հայկական միասնական թագավորության ստեղծման կողմնակիցներից չէր, եւ, ըստ էության, քիչ դեր չխաղաց Սյունիքի թագավորության ստեղծման գործում: Բագրատ Ուլուբաբյանն էլ իր հերթին է նշում, որ Սահակ Սեւադան **«...անձամբ մասնակցում էր Սյունյաց իշխանության ներսում կատարվող գործերին»:** Սահակ Սեւադայի եւ իր մյուս փեսա Աշոտ Երկաթի միջեւ տեղի ունեցած հայտնի դեպքերի խորքում էլ, ըստ էության, Սահակ Սեւադայի ու Սյունիքի իշխանական տան միջեւ հաստատված ռազմաքաղաքական դաշինքն էր: Սմբատ Իշխանի եղբայրը՝ Վասակը (ով Գեղարքունիքի տիրակալն էր) կալանավորվել էր Աշոտ Երկաթի կողմից: Վերջինս չլսեց անգամ կաթողիկոսի հորդորը եւ Վասակին չազատեց: Այնժամ ինքը՝ Սահակ Սեւադան, ազատեց իր փեսայի եղբորը, ինչը, վերջին հաշվով, նշանակում էր ապստամբություն Հայոց թագավոր Աշոտ Երկաթի (իր մյուս փեսայի) դեմ: Տեղի ունեցած ահեղ ճակատամարտում Սահակն ու նրա որդի Գրիգորը կալանավորվեցին ու կուրացվեցին:

Առհասարակ Սյունիքի թագավորության ստեղծումն ու այդ թագավորության եւ կենտրոնական հայոց պետության հարաբերությունները հատուկ քննության կարոտ են: Իհարկե, Սյունյաց տան պատմիչը ջանում է հիմնավորել, արդարացնել Սյունիքի թագավորության ստեղծումը. **«Այն ժամանակ Բագրատունիներն իշխում էին միայն Շիրակին ու Այրարատին՝ մինչեւ Գեղարքունիք, Ուտիք, Կարին, Վասպուրականի սահմանը, Չորագետ ու Գարդման, իսկ Սյունիքը կտրված էր նրանցից: Այդ պատճառով էլ Սմբատը քրեական մեղք չհամարեց: Եթե Բագրատունիները, որ**

## 1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

# ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

**գերեվարությամբ բերված էին Հրաչեից, արժանի գտնվեցին դրան, ապա որքա՜ն առավել արժանի էին սրանք, որ Հայկից ակնհայտ հարազատությամբ որդիները հայրերին փոխարինելով բնիկ իշխանությամբ եկել-հասել էին մինչեւ այժմյան ժամանակները»** (Սյունիքի պատմություն, էջ 257): Բայց Սյունյաց պատմիչը, կարելի է ասել, սպառիչ պատասխան չի տալիս խնդրո առարկա հարցին: Սմբատ 1-ինը Բագրատունիների կենտրոնացված թագավորության պարագայում թագավորական ծիրանին ստացավ Խորասանի մեծ սուլթանից, որին այդպիսի առաջարկություն էին ներկայացրել Թավրիզի մեծ սուլթանը, Դերբենդի կիրճին տիրող Ռան ամիրան, ինչպես եւ Աղվանքի իշխանները: Նաեւ այդ իրողությունն էր հաշվի առել Նիկողայոս Ադոնցը, երբ գրել էր. **«Բյուզանդ եւ արաբ հոշոտիչ քաղաքականությունը բորբոքեց կրքերը, խրախուսեց ինքնիշխանության անջատիչ տենչերը եւ ցրեց դարավոր ճիգերի արդյունքը, խափանելով գլուխ բերել քաղաքական մեծ շենքը: Այդ թագերը եւ կամ կիսաթագերը, որ ամիրապետերը բաշխում էին Բագրատունի, թե այլ իշխաններին եւ կայսրերը ողջունում էին, իրապես այլ խորհուրդ չունեին, քան արգելել, խանգարել, իսկական թագերի երեւումը: Թագերը դարձան անջատ ուղիների գլխաքարեր»** (Ն.Ադոնց, նշված աշխ. էջ 534):

Անշուշտ, նորովի ուսումնասիրության կարիք ունեն Սյունյաց իշխանական տան եւ Բագրատունիների հարաբերություններն այդ շրջանում: Մի բան, սակայն, կարելի է ասել հիմա: Հայոց պետությունը վերականգնելու դրոշակակիրը (ճակատագրի կամոք) պատմական այդ դարաշրջանում Բագրատունիներն էին: Բայց նրանք, վերջին հաշվով, դեմ առան Վասպուրականի, Սյունիքի, Աղվանքի իշխանական տների դիմադրությանը: Սյունյաց իշխանական տունը՝ եւս վերածնված, հակված չէր ասպարեզը թողնել Շիրակի իշխաններին, թեեւ Բագրատունիների եւ Սյունեցիների միջեւ կային համագործակցության բազմաթիվ օրինակներ: Դրա լավագույն դրսեւորումն է փաստը, որ Բագրատունիների թագավորության առաջին թագավոր՝ Հայոց թագավոր Աշոտին հոգեւոր օրհնությամբ (885-886թթ.) պսակեցին Գեւորգ կաթողիկոսը եւ Տաթեւի եպիսկոպոս Հովհաննես 5-րդը, ինչի մասին արդեն նշել ենք:

Սյունյաց իշխանական տան եւ Բագրատունիների պառակտման լուրջ առիթ եղավ Նախճավանի հարցը, երբ Սմբատ Ա Բագրատունի թագավորը 902թ. այդ քաղաքն իր շրջակայքով հանդերձ հանձնեց Վասպուրականի իշխանին, ինչի արդյունքում Սյունիքը զրկվեց շատ կարեւոր տիրույթից: Եվ մեկ տարի անց Սյունյաց իշխանը գժտվեց թագավորի հետ (Հայ ժողովրդի պատմություն, բազմահատորյակ, հ.3, էջ 115):

Սյունիքի իշխանական տան եւ Բագրատունիների միջեւ գոյություն ունեցող ոչ դրական հարաբերությունների համապատկերի վրա պետք է դիտարկել Վահան Ա կաթողիկոսի հետ կատարվածը, ինչպես եւ Սյունյաց թագավոր Սենեքերիմի սպանությունը: Չպետք է մոռանալ, որ Սյունիքի թագավորին սպանելու՝ Գանձակի իշխանությունների ծրագիրն իրագործեց Շիրակի իշխան Գրիգորը՝ Ապիրատի որդին (այս փաստը՝ ըստ Ստ.Օրբելյանի նշված աշխ., էջ 269-270): Վկայակոչելով Վարդան Վարդապետին՝ Բագրատ Ուլուբաբյանն իր՝ հիշատակված աշխատության մեջ նոր անուն է հայտնում՝ ամոթալի այդ դավադրությանը մասնակցած. **«Աղբյուրները վկայում են՝ որ Փադլունյաններին օժանդակում էին հայ իշխաններ, ինչպես «Վասակ Պահլավ՝ որդի Գրիգոր Մագիստրոսի», որի առաջնորդությամբ Գանձակի ամիրա Փադլունը պաշարում է Բաղաց Կապանը, դավով սպանում Սենեքերիմ թագավորին...»** (Բ.Ուլուբաբյան, նշված աշխ. էջ 111):

Իհարկե, Բագրատունիների թագավորությունն այդ ժամ արդեն չկար, բայց փաստ է, որ ե՛ւ Պահլավունիները, ե՛ւ Ապիրատը սերտ կապերի մեջ էին Բագրատունիների հետ: Բոլոր դեպքերում շատ ցավալի է ու սոսկալի, որ Սյունիքի թագավորի ու թագավորության մայրաքաղաք Կապանի վրա ձեռք էր բարձրացրել X-XI դարերի հայ գիտնական, փիլիսոփա, մանկավարժ Գրիգոր Մագիստրոսի որդին:

Պատմությունը, այդ ամենով հանդերձ, արդարացի է համարում Բագրատունիների բռնած ուղին եւ դատապարտում նրանց պատմական առաքելության իրագործման ճանապարհին խոչընդոտ եղած իշխանական տներին: Ահա թե ինչ է գրում Նիկողայոս Ադոնցը. **«Բագրատունիների փորձը՝ ընդգրկել համայն Կովկասը, ինչպես մի մեծ ընտանիք, մի քաղաքական կենակցության շաղկապի մեջ, ներկայանում է որպես մի խիզախում՝ գաղափարական լայնությամբ անօրինակ միջնադարյան նեղսիրտ մթնոլորտում եւ կազմում է այս նշանավոր տոհմի պատմական փառքը»** (Ն.Ադոնց, նշված աշխ. էջ 534):

## Հերթական խռովությունը Սյունյաց եպիսկոպոսության եւ Մայր աթոռի միջեւ, Վահանավանքն այդ հարաբերությունների ծիրում

Սյունյաց թեմի եւ Մայր աթոռի միջեւ ծագած անհամաձայնության մի դեպքի անդրադառնալու առիթ ունեցել ենք ավելի վաղ, երբ քննարկում էինք Նիկողայոս Ադոնցի՝ սյունիքյան արծարծումները եւ մասնավորապես «Քննություն Մովսես Կաղանկատվացու» հետազոտությունը («Սյունյաց երկիր», 18 հոկտեմբերի 2011թ., №17): Այո, Սյունիքում երբեմն-երբեմն իշխել են անջատողական տրամադրություններ, ինչն արտացոլվել է նաեւ հոգեւոր իշխանության մեջ: Այդ տրամադրությունների կոնկրետ դրսեւորումներից մեկի մասին ահա թե ինչ է գրում Նիկողայոս Ադոնցը. **«Հայոց եղիա կաթողիկոս Աղվանք գնալիս (704թ.) թույլ է տվել իրեն երիցո վանքում «խակագործություն», որով եւ ընդունված հարաբերությունները կաթողիկոսարանի եւ Սյունյաց թեմի միջեւ խանգարվել են»** (Ն.Ադոնց, նշված աշխ. էջ 360):

Սյունյաց աթոռի եւ Հայոց կաթողիկոսարանի միջեւ աննախադեպ մի խռովություն էլ արձանագրվեց 10-րդ դարում, որի մեջ որոշակի դեր է պատկանում Վահանավանքին: Խոսքը, անշուշտ, Սյունյաց եպիսկոպոս Հակոբ առաջինի ապստամբության մասին է: Հայոց կաթողիկոսության դեմ այդ խռովությունը մեր պատմագիտության մեջ բավականին հանգամանալից է քննարկվել, բայց առավել ուշագրավ է Ստեփանոս Օրբելյանի արձանագրումը (Սյունիքի պատմություն, ԾԲ գլուխ, էջ 240-248), ինչն ամբողջապես այս համարում ներկայացնում ենք ընթերցողին: Մի քանի խոսքով, այդուհանդերձ, անդրադառնանք այդ խռովությանը:

...Երբ 918թ. մահացավ «Երանելի, աստվածակիր» Տեր Հովհաննես մեծ հայրապետը (թաղված է Տաթեւի

**Գրիգոր Նարեկացի, Երեւան, ձեռ. 1568, 7 բ, Մատյան Ողբերգության, 1173թ., Սկեւռա: Ծաղկող՝ Գրիգոր Մլիճեցի:**

վանքում), Տեր Հովհաննես Դրասխանակերտցի Ամենայն հայոց կաթողիկոսը Սյունիքի եպիսկոպոս է ձեռնադրում իր եղբորորդուն՝ Հակոբին (Հակոբ I), **«որը եկավ եւ բազմաթիվ ու երեւելի կայքերով պայծառացրեց սուրբ եկեղեցին, չափազանց հարստացրեց եւ խիստ վարդապետությամբ միշտ քարոզում էր հավատացյալներին ու հոգ տանում իր (հոգեւոր) հոտի նկատմամբ»** (Ստ. Օրբելյան, նշված աշխ., էջ 226 ): Հակոբ I-ը մեծ գործեր կատարեց նաեւ եկեղեցաշինության ոլորտում: Սակայն... Տեր Հակոբը հոգեւոր սիրով կապված էր Աղվանքի կաթողիկոսների հետ, իսկ Աղվանքի կաթողիկոսարանի եւ Հայոց եկեղեցու հարաբերություններն այնքան էլ խաղաղ չէին նաեւ դրանից առաջ, ինչին նպաստել էր երկու-երեք այլ հանգամանք եւս: Նախ՝ Հայոց կաթողիկոսներն այդ ժամանակ, քաղաքական իրավիճակից դրդված, հեռացել էին իրենց մշտական նստավայրից ու շրջում էին այստեղ ու այնտեղ: Երկրորդ՝ այդ ժամանակ արդեն չկար Հովհաննես Դրասխանակերտցին, եւ Ամենայն հայոց կաթողիկոս էր դարձել Անանիա Մոկացին (941թ., որոշ աղբյուրների համաձայն՝ 946, եւ գահակալել է մինչեւ 968թ.): Եվ, հեռավորության պատճառով, Հակոբ եպիսկոպոսը չէր կարողանում ամեն տարի Սյունիքից գնալ Հայոց կաթողիկոսի մոտ՝ մեռոն վերցնելու: Եվ մեռոնը խնդրում էր Աղվանքի կաթողիկոսից, ինչը մեծ մոլորություն գնահատվեց: Անանիան իր մոտ հրավիրեց Հակոբին եւ Աղվանքի կաթողիկոս Սահակին, բայց նրանք չգնացին: Անանիա Մոկացին ինքը ստիպված եկավ Տաթեւի եպիսկոպոսարան: Հակոբը խոստովանեց իր մեղքը՝ **«Մեղք գործեցինք երկնքի ու քո հանդեպ, բայց դու ների՛ր մեզ ու մեր հանցանքները»** (Ստ. Օրբելյան, նշված աշխ. էջ 241): Կաթողիկոսը ներեց Հակոբին, բայց եւ չգնաց Աղվանք՝ հայոց թագուհին էր մահացել: Հետո, սակայն, Հակոբի դեմ նոր դավադրություն հրահրվեց, թե իբր նա քողարկումով ընդունում է քաղկեդոնությունը, թե իբր թույլ չի տալիս Աղվանքի կաթողիկոսին՝ ենթարկվելու Հայոց կաթողիկոսին, իբր Անձեւացյաց Խոսրով եպիսկոպոսին (թղթով) շեղել է Մայր աթոռից (Խոսրովն ապստամբել էր Անանիա Մոկացու դեմ եւ նզովվել նրա կողմից): Աղվանքի կաթողիկոսության հետ ծագած խնդիրները հարթելու համար Անանիան եկավ Խաչեն, այնտեղից՝ Սյունիք՝ Տաթեւի հայրապետանոց: Հակոբ 1-ինը, սակայն, ոչ թե ընդառաջ գնաց Ամենայն հայոց կաթողիկոսին, այլ գնաց Բաղաց ամրոց: Բազմաթիվ գրություններից հետո անգամ Հակոբ եպիսկոպոսը դուրս չեկավ Բաղքի Ձեւանշեր իշխանի հովանավորությունից: Անանիան վերադարձավ իր աթոռ, մինչ այդ, սակայն, գրեթե ավերեց Տաթեւի եպիսկոպոսարանը: Ահա թե ինչ է գրում Մաղաքիա Օրմանյանը. **«...աւերեաց զտեղին եւ քանդեաց, որ է Տաթեւի եպիսկոպոսարանը, եւ չարաչար նզովիւք կապեալ կաշկանդեալ խառնեաց ի տոռունս կապանաց զիշխանն եւ զեպիսկոպոսն»** (Մ.Օրմանյան, նշված աշխ. էջ 1275): 949թ. վախճանվեց Սյունյաց մետրոպոլիտ եւ հայոց բոլոր եպիսկոպոսների գլուխ Հակոբը: Անանիա Մոկացին երրորդ անգամ եկավ Սյունիք, որտեղ Տաթեւի եպիսկոպոսարանն արդեն անբնակ էր դարձել (այն վերականգնելու հրաման տվեց ինքը): Եվ գնաց Կապան: **«Նրան տարան, իջեցրին Կապան քաղաքի արքունական գահույքի վրա»** (Ստ.Օրբելյան, նշված աշխ. էջ 246): Բոլորն իրենց հանցանքների համար Անանիայից ներում ստացան: Նա Սյունյաց եպիսկոպոս ընտրեց Ձեւանշերի (ով մինչ այդ հովանավորում էր ապստամբ Հակոբին) որդի Վահանին (ապագայում՝ Ամենայն հայոց կաթողիկոս), ով Վահանավանքի մեծ միաբանության առաջնորդն էր: Մինչեւ ձեռնադրումը մեծապայման խոստումնագիր գրեցին ե՛ւ Վահանը, ե՛ւ Սյունյաց իշխանաց իշխան Վասակը, ե՛ւ Բաղքի Ձեւանշիր իշխանը (այդ խոստումնագրերը՝ փոխադրված գրական հայերենի, ներկայացնում ենք ընթերցողին): Այդ բոլորով հանդերձ Անանիա կաթողիկոսը պատժեց Սյունիքի աթոռին՝ նրանից վերցնելով պատիվը..., որը վերականգնվեց միայն Սյունյաց եպիսկոպոս Տեր Հովհաննեսի (Հովհաննես 7-րդ) եւ Սարգիս 1-ին Սեւանցի Ամենայն հայոց կաթողիկոսի (գահակալել է 992-1014թթ.) կողմից 1006թ.: Սարգիս կաթողիկոսն այդ քայլն արեց, ինչպես վկայում են աղբյուրները, Կատրամիդե թագուհու խնդրանքով: Դրանով, փաստորեն, Սյունիքի եպիսկոպոսական աթոռին վերադարձվեցին նախկին արտոնությունները, որից հետո նոր վերելք ապրեց Տաթեւի եպիսկոպոսարանը: Ահա թե ինչ է գրում այդ առիթով Սյունյաց տան պատմիչը. **«...Գագիկ թագավորն ու Կատրամիդե թագուհին թախանձելով կաթողիկոսին՝ Տեր Հովհաննեսին մեծահանդես շքեղությամբ ձեռնադրել են տալիս Սյունյաց մետրոպոլիտ: Կաթողիկոսը նրան է հանձնում Սյունյաց սեփական խաչը, ոսկերիզ խաչվառը, թանկարժեք գավազանը եւ պատվական գահավորակը, որոնք պահվել էին հայրապետանոցի սրբարանի սենյակում»** (Ստ.Օրբելյան, նշված աշխ. էջ 259): Հաշվի առնելով Սարգիս կաթողիկոսի շրջաբերական գրության պատմական նշանակությունը, դրա ամբողջ տեքստը սույն համարում ներկայացնում ենք ընթերցողին:

Ստ.Օրբելյանը Հակոբին ներկայացված ոչ բոլոր մեղադրանքներին է համաձայն: Մինչդեռ պատմության մեջ այն կարծիքն է իշխում, որ Աղվանքի Սահակ եւ Գագիկ կաթողիկոսները Սյունիքի Հակոբ եպիսկոպոսի հետ փորձում էին դուրս գալ Հայոց եկեղեցու ենթակայությունից:

Հակոբի ապստամբությունը տեղի չէր ունենա, եթե չլիներ Բաղաց Ձեւանշիրի պաշտպանությունն ու հովանավորությունը:

Սյունյաց Հակոբին՝ իր դիրքերից չհրաժարվելու գործում քաջալերեց Աղվանքի Գագիկ կաթողիկոսը, եւ երկու աթոռի դաշնակցությամբ ապստամբությունը տեւեց 8-9 տարի: Այդ ընթացքում Հակոբը մնաց Բաղաց ամրոցում, որտեղից էլ նա ծածանում էր ապստամբության դրոշը, բայց շարունակում էր մնալ Սյունյաց թեմի առաջնորդ, Հայոց եպիսկոպոսների գլուխ: Հակոբն ու Գագիկը մահացան 958-ին:

Ավելացնենք միայն, որ Անանիա Մոկացին առաջին անգամ Սյունիք այցելեց 949թ., երկրորդ անգամ՝ 952թ. ձմռանը, երրորդ անգամ՝ 958թ.:

958թ. Սյունյաց թեմի առաջնորդ ընտրված Վահանը, թեեւ այդ նույն ժամանակ հնազանդության խոստումնագիր էր տվել, Ամենայն հայոց կաթողիկոսի կողմից Սյունյաց թեմի գահակալ ձեռնադրվեց 961/62թթ.:

## Անձեւացիները եւ Սյունիքի ու Աղվանքի խնդիրը

Սյունիքի եւ Աղվանքի միջեւ եղած հարաբերություններում, մշակութային, ռազմաքաղաքական ու եկեղեցական կապերից զատ, առկա էր նաեւ դավանաբանական հենքը, մանավանդ՝ երկու աթոռի (Սյունիքի դեպքում՝ հաճախ կարծեցյալ) առնչությունը քաղկեդոնությանը:

551թ. Դվինի նոր ժողովից հետո, ի տարբերություն Հայոց եւ Աղվանից եկեղեցիների (վերջինս՝ թեմի իրավունքով, մտնում էր Հայոց եկեղեցու մեջ), վրացական եկեղեցին մերժեց միաբնակ եկեղեցու վարդապետությունը եւ հարեց բյուզանդականին: **«...Կիւրիոն Վրաց կաթողիկոս վասն փառամոլ ախտին՝ Հայէրեն զատուեցաւ եւ քաղկեդոնիկ եղեւ»,** - նշում է Մաղաքիա Օրմանյանը (Ազգապատում, էջ 1273): Բայց եւ, Աղվանից եկեղեցին ավելի հաճախ էր ընկնում

Շարունակությունը՝ էջ 12

Շնո՛րհ ձեզ եւ խաղաղութի՛ւն մեր Հայր Աստծուց եւ Տէր Յիսուս Քրիստոսից: ● ՊՈՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ
www.syuniacyerkir.am
1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ԲԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

# ՎԱՀԱՆԱՎԱՆՔ

Սկիզբը՝ էջ 11

Վրաց եկեղեցու ազդեցության տակ ու կաթողիկոսների ընտրության ժամանակ (551-ին Աղվանից եկեղեցու ղեկավարը կրում էր «կաթողիկոս» տիտղոսը) շրջանցում Հայոց եկեղեցու գերիշխանությունը: Այդ կապակցությամբ Մ.Օրմանյանը նշված գրքում ասվածին հավելում է՝ **«Ասոր վրայ Աղուանից կաթողիկոսն ալ պատճառելով պատճառս ինչ, ինքն ալ բաժանեալ ի բաց եկաց»** (էջ1273): Աղվանից եկեղեցու հետ հարաբերությունների հարցը դարեր շարունակ Հայոց եկեղեցու առջեւ ծառացած խնդիրներից էր: Մյուս կողմից՝ ջերմ հարաբերություններ էին տիրում Սյունիքի աթոռի եւ Աղվանից կաթողիկոսության միջեւ: Բանը հասել էր այնտեղ, որ, ինչպես նշեցինք վերեւում, Հակոբ 1-ին Սյունյաց եպիսկոպոսի գահակալության ժամանակ Տաթեւի եպիսկոպոսարանը մեռոնը բերում էր Աղվանից եկեղեցուց, ինչն ուղղակի ապստամբություն էր Հայոց եկեղեցու դեմ (թերթի սույն համարում համառոտ տեղեկություն կներկայացնենք քաղկեդոնության մասին, որպեսզի հասկանալի լինի այս կռվի դավանաբանական էությունը):

Սյունյաց եւ Աղվանից խնդրին, սակայն, կար եւս մեկ հարակից խնդիր, որին խառնված է Խոսրով եպիսկոպոսի անունը, ով Անձեւացյաց եպիսկոպոսն էր ու մատենագիր (Գրիգոր Նարեկացու հայրը): Խոսրովի անունը Սյունյաց խնդրին հարակցողը Ստ.Օրբելյանն է, երբ Անանիա կաթողիկոսի՝ երկրորդ անգամ Սյունիքի գալու եւ Հակոբ Ի-ին ներկայացված ամբաստանությունների առիթով գրում է. **«...Սկսեցին կաթողիկոսի մոտ վերստին չարախոսել Հակոբի մասին, թե կրկին ապստամբվեց ձեր դեմ ու նա թույլ չի տալիս Աղվանքին քեզ ենթարկվելու, Անձեւացյաց Խոսրով եպիսկոպոսին էլ թղթով շեղեց ձեզանից»** (Ստ.Օրբելյան, նշված աշխ. էջ 242): Եվ Խոսրով Անձեւացին, իբր, համերաշխություն է հայտնել հյուսիսային կողմերում՝ ընդդեմ Անանիա կաթողիկոսի սկսած շարժումին: Բայց նույն ինքը՝ Ստ.Օրբելյանը (նշված աշխ. էջ 242) վերապահում է արել այդ մեղադրանքի առիթով. **«...ես ինքս այսպիսի բաները զրպարտություն եմ համարում եւ ոչ ճշմարտություն՝ իզուր դատապարտվող Հակոբ եպիսկոպոսի նկատմամբ... Սակայն դա թողնենք քննելու արդարադատ Աստծուն»:**

Խնդրո առարկային անդրադարձել է նաեւ Կիրակոս Գանձակեցին(Հայոց պատմություն, Երեւան-1982թ, էջ 71). **«Այս օրերում Սյունիքի կողմերից Հակոբ անունով մի եպիսկոպոս կար, որ սկսեց լեզվի ու կարգուկանոնի նորածեւություն ստեղծել. կար Խոսրով անունով մի այլ եպսիկոպոս եւս, որ ասում էր. «Չպետք է տերունական օրը կյուրակե կոչել, այլ կյուռիակե, որովհետեւ հունարեն է»: Խոսում է նաեւ հասակների մասին. ասում էր նույնպես, թե երեխաների մազերը պետք է թողնել ու չկտրել, մինչեւ երկարի եւ պատ տա, որովհետեւ այդ պատճառով է կտրիճ կոչվում: Նաեւ ասում էր. «Չպետք է եպիսկոպոսը եպիսկոպոսապետին՝ այսինքն՝ կաթողիկոսին ընծա մատուցի, որովհետեւ ավելի օրհնություն չունի, բացի միայն անվանակոչությամբը»: Եվ ուրիշ այսպիսի անմիտ խոսքերով երկիրը լցրեց ու ամենուրեք խռովություն գցեց նորածեւության համար»:** Մաղաքիա Օրմանյանը ենթադրում է, որ այս Խոսրովը նույն Անձեւացյաց Խոսրովն է. **«Կիրակոս ալ կը յիշէ Խոսրով եպիսկոպոս մը Յակոբի համամիտ, եւ թեպէտ Անձեւացեաց անունը չի տար, բայց մենք ալ հարկ չենք տեսներ, երրորդ անձ մը ստեղծել, որչափ ալ անիմաստ բաներ վերագրէ սոյն Խոսրովի, զորս անհնար է Անձեւացեաց գիտական եպիսկոպոսին պատշաճեցնել»** (Ազգապատում, էջ 1280):

Իմիջիայլոց, Մխիթարյան գրիչները նույնպես անդրադարձել են այդ հարցին եւ Խոսրովին համարել են ոչ թե հունադավան քաղկեդոնիկ, այլ հռոմեադավան կաթոլիկ, ինչի համար եւ Անանիայի կողմից հալածվում էր: Բայց Հակոբին նրանք քաղկեդոնիկ էին համարում, քանի որ նա Աղվանքի կողմն էր, որը շարունակաբար հետեւում էր Վրաց եկեղեցուն: Վրացիներն էլ Կոստանդնուպոլսի Հունական եկեղեցուն էին հարում, իսկ Հունական եկեղեցին 10-րդ դարում արդեն բաժանված էր Հռոմից: Այնպես որ՝ ո՛չ Սյունյաց, ո՛չ Անձեւացյաց պահվածքի մեջ չպետք է հռոմեադավանություն փնտրել:

Ինչեւէ, որքանո՞վ էր Խոսրովը կապված Սյունյաց խնդիրների հետ:

Պատմագիտության մեջ ոմանք կարծում են, որ Հայոց եկեղեցու աթոռն Աղթամարից 10-րդ դարակեսին Արգինա տեղափոխելու համար Վասպուրականում Անանիայի հանդեպ ընդդիմադիր շարժում առաջացավ, որին կողմնակից էր նաեւ Խոսրով Անձեւացին: Եվ Հակոբ 1-ին եպիսկոպոսը, իբր, օգտվելով առիթից, նրան դաշնակցություն առաջարկեց: Սակայն, բացի Գանձակեցու՝ վերը բերված փաստից (որն այնքան էլ լուրջ չէ), պատմությունն այլ փաստեր չունի՝ Խոսրովի ընդդիմադիր գործունեության վերաբերյալ: Ավելի ուշ Անանիան եղավ Վասպուրականում եւ Խոսրովի ու վասպուրականցիների հետ համաձայնության եկավ: Պատահական չէ, որ Գրիգոր Նարեկացին իր հորն այսպիսի նկարագիր է տվել՝ **«յոյժ հետեւողի պատուիրանացն Աստուծոյ»:** Ասվածի օգտին է խոսում փաստը, որ Խոսրովը մահացավ 972-ին՝ իր եպիսկոպոսական աթոռին, որովհետեւ իր դեմ որեւէ վճիռ արձակված չէր:

Իբրեւ Հակոբ Սյունեցու կողմնակից եւ համամիտ՝ ամբաստանվել է նաեւ Անանիա Նարեկացին (առհասարակ Անձեւացիների հանդեպ կասկածանք կար՝ մեկ՝ թոնդրակեցիներին, մեկ՝ քաղկեդոնությանը հարելու համար): Իր հավատարմությունը Հայոց եկեղեցուն ապացուցելու համար Նարեկավանքի դպրոցի հիմնադիրն Անանիա Մոկացի կաթողիկոսի պահանջով գրել է «Գիր խոստովանության»:

Քննության կարոտ հարց է նաեւ նշանավոր մեկ այլ Անձեւացու՝ Սուրբ Գրիգոր Նարեկացու առնչությունն այդ հարցերին, հատկապես՝ առնչությունը Վահան Ա Սյունեցի կաթողիկոսի անվան հետ: Ինչպես նշվում է «Յայսմաւուրքում» (մայիսի 27), ինչպես նաեւ՝ Բառգիրք Հայկազեան լեզուի, բառարան հատուկ անուանց, որք գտանեն յայլեւայլ գիրս արտաքոյ աստուածաշունչ գրոց, Վենետիկ, 1769, էջ 352)՝ **«Վահան էր ուղղափառ եւ իմաստուն հայրապետ Հայոց ի Բաղաց գաւառէ, զոր փախստական արարին վասն կարծեաց դաւանութեան ժողովոյն Քաղկեդոնի եւ վասն պատկերս մուծելոյ յեկեղեցիս եւ զսեղանն ս (ուր) բ: Իսկ նորա երթեալ տիրեաց ի կողմանս Վասպուրականին եւ յայն սակս կաթողիկոսութիւն Հայոց բաժանեցաւ յերկուս: Եւ էր յայն ժամ Վահանայ համախոհ հրեշտակն ի մարմնի սուրբն Գրիգոր Նարեկացին»:** Հայսմավուրքի այս վկայությունը հիշել է նաեւ պրոֆեսոր Գրիգոր Գրիգորյանը (Վահանավանք, էջ 12) եւ հեռուն գնացող ենթադրություններ արել՝ առանց պատմական փաստերի: Վահանի եւ Սուրբ Գրիգոր Նարեկացու առնչությունների մասին նշել է նաեւ Ներսես Լամբրոնացին, որի գրական ժառանգությանը, սակայն, չկարողացանք ամբողջապես ծանոթանալ: Պատմագիրների մի մասի կարծիքով էլ Նարեկացու մոտ հունասեր բարեկամության միտում կարելի էր նկատել, բայց որեւէ նշան չկա, որ նա հարած լինի Հունաց եկեղեցուն: Առավել անհավանական է նրան հռոմեադավան համարելը: Ինչ վերաբերում է Վահան Ա Սյունեցի կաթողիկոսի հետ ունեցած հարաբերություններին, ապա դա եւս լուրջ հիմնավորման կարիք ունի:

Ուշագրավ մի դիտարկում է արել այդ առումով Միքայել Լեքեն Գաղղիացին (ֆրանսիացին)՝ **«Կոստանդնուպոլսի կայսր եղբայրներ Վասիլի եւ Կոստանդիոսի ժամանակներում եւ Վահան կաթողիկոս Վասպուրականցու օրերին ծաղկել է հայոց մեծ վարդապետ Գրիգոր եպիսկոպոս Նարեկացին... ըստ Գալանոսի գրվածքի. հտ. Ա, էջ 210 եւ 211»** (Իսկ այն, որ Գալանոսից վերցնելով գրում է, թե Վահանը վասպուրականցի էր, պարզորոշ է, որ վրիպակ է: Դա նկատել է նաեւ Միքայել Չամչյանը):

Կապանում քանիցս փորձել են մեզ համոզել նաեւ, որ Սուրբ Գրիգոր Նարեկացին առնչություն է ունեցել Վահանավանքի հետ: Իրականում դա ակնհայտ մտացածին եւ անհիմն խոսակցություն է: Միանգամայն այլ բան է, երբ խոսում ենք Գրիգոր Նարեկացու եւ Վահան Ա Սյունեցու կամ Խոսրով ու Անանիա Անձեւացիների ու Հակոբ Սյունեցու առնչությունների մասին, ինչը, կրկնում ենք, հավելյալ հետազոտության կարիք ունի:

## Վահանավանքի վերջին եպիսկոպոսը՝ փառաբանված Հովհաննես Կապանեցին

11-րդ դարավերջից Բաղքում սկսում են իշխել Համտունյաց իշխանները: Իշխանական այս տոհմը, ըստ էության, փոխարինելու էր գալիս Զագիկյաններին (Զեւանշիրյաններին), եւ գոյատեւում է մինչեւ 13-րդ դարասկիզբ: Այդ տոհմի ծագման մասին հայտնի է այն, ինչ գրել են Ստ.Օրբելյանը, Ղեւոնդ Ալիշանը, նաեւ Սուքիաս Էփրիկյանը (Բնաշխարհիկ բառարան, Ի հատոր): Իսկ այդ գրվածքները սակավ եւ ոչ ամբողջական տեղեկություններ են պարունակում Համտունյանների մասին: Դրանցից իմանում ենք, որ այդ տոհմի առաջինը Մեծ Համտունն է: Սրան հաջորդել է Հասանը, ով ունեցել է երկու որդի՝ Համտուն Բ-ն եւ մյուսը՝ Հովհաննեսը: Հենց այդ Հովհաննեսն է առիթը, որ սույն խոսքում հիշում ենք Համտունյաններին: Այդ Հովհաննեսն էր Վահանավանքի՝ մեզ հայտնի վերջին հոգեւորականը, ով գնաց ու շինեց հռչակավոր Նորավանքը: Հովհաննես Կապանեցու մասին Ստեփանոս պատմիչի գրածը, որ առնչվում է Ամաղու Նորավանքին, կներկայացնենք սույն համարում: Բայց մեր խոսքում ավելորդ չենք համարում ներկայացնել մի հատված դրանից՝ **«Ապա երբ եկավ նեղ ժամանակը, երբ ամբողջ երկրիս ավեր հասավ, վերացավ թագավորությունը, սպանվեց Սենեքերիմ թագավորը, բնաջնջվեց Բաղքի իշխանությունը, խափանվելով լռեցին բոլոր գործող վանքերը հինգ հարյուր հիսունչորս թվականին (1105-Ա.Ալ.): Հովհաննու վանքում Հովհաննես անունով մի եպիսկոպոս կար՝ լցված ամեն տեսակի առաքինություններով, ամբողջովին տոգորված Քրիստոսով, ազնվական տոհմից, որդին Բաղաց մեծափառ իշխան Հասանի, որն իր ձեռքի տակ ուներ այն թագավորության բոլոր ազատներին եւ մեծ Համտունի որդին էր: Այս Հովհաննեսն իր աշխարհի ավերումից հետո, այս ու այնտեղ շատ դեգերելով, գալիս է Վայոց ձոր գավառը եւ կամենում է հաստատվել Նորավանքի խորածոր անապատում, Հրասեկաբերդի անառիկ դղյակի մերձակայքում, սուրբ Կարապետի՝ հիանալի զորություն ունեցող եւ մեծասքանչ եկեղեցում»** (Ստ.Օրբելյան, նշված աշխ. էջ 287-288): Հետագայում, դարձյալ Ստեփանոս պատմիչի վկայությամբ (նշված աշխ. էջ 280-281) նրա մոտ է գնում նաեւ եղբայրը՝ Համտուն Բ-ն. **«Իսկ մյուս իշխանը՝ Համտունը, որ Բաղքի մեծ իշխան Հասանի որդին էր ու ավագ Համտունի թոռը, գնաց Վայոց ձոր՝ իր փառաբանված եղբայր Տեր Հովհաննեսի մոտ, որը բնակվում էր Նորավանք կոչված խորածոր անապատում, Հրաշկաբերդի մոտ. այնտեղ կրոնավորություն անելով՝ մեռավ 680թ.»** (այսինքն ընդհանուր 1231թ.: Ղ.Ալիշանը «Սիսականում» նախ նշում է Համտուն 2-րդի մահվան այս թվականը, ապա փոփոխում եւ դարձնում է 1157թ.): Համտուն 2-րդի մահվամբ, ըստ էության, վերացավ Բաղքի իշխանական տոհմը: Դատելով Ստեփանոս Օրբելյանի խոսքից՝ Համտունյանները նույնպես սերում են Սիսակի տոհմից. **«Ահա այսպես վերացավ Սյունիքի եւ Բաղքի իշխանությունը, եղավ Սիսակի տոհմի ու Սյունյաց նախարարության վախճանը, քանի որ բոլորը, որ կային շատ առաջ, Սմբատի եւ Սահակի ժամանակներում, ոմանք անզավակ մնացին, ոմանք անժամանակ մեռան, ոմանք էլ սպանվեցին ու գերեւարվեցին...»** (Ստ.Օրբելյան, նշված աշխ. էջ 281): Իսկ ե՞րբ վախճանվեց Տեր Հովհաննես եպիսկոպոս Կապանեցին՝ Վահանավանքի՝ մեզ հայտնի վերջին հոգեւորականը: Հովհաննեսի ժամանակաշրջանի մասին, ըստ Ստ.Օրբելյանի «Պատմության» ծանոթագրությունների հեղինակ Ա.Աբրահամյանի (ծանոթ. 1042 եւ 1099), հայագիտության մեջ տարակարծություններ կան: Նրա մահվան թվականը Ղ.Ալիշանն ընդունում է 1155-ը, ապա ավելի հավանական համարում 1164-ը: Հ.Աճառյանն ընդունում է 1214թ.՝ ըստ պատմիչի (Հայոց անձնանունների բառարան, հ. 3 էջ 580 ): Ստ.Օրբելյանի երկի տվյալ գլխում բերվող տեղեկություններից երեւում է, որ Հովհաննեսը պիտի մեռած լիներ 1168թ. առաջ: Ա.Աբրահամյանը 1214-ի առիթով գրում է. **«Բայց այստեղ թյուրիմացություն կա: Սա չէր կարող Հովհաննես Կապանեցի եպիսկոպոսի մահվան թվականը լինել, նա չէր կարող այսքան երկար ապրած ու պաշտոնավարած լինել»** (Ստ.օրբելյան, նշված աշխ. էջ 498):

Ավելորդ չենք համարում մեջբերել Ղ.Ալիշանի խոսքը Համտունյանների եւ Հովհաննես եպիսկոպոսի մասին. **«11-րդ դարի վերջից 12-րդ դարի կեսերը Սյունյաց թագավորության նվազման ժամանակ իշխանական փայլով աչքի է ընկնում Բաղքի Համտունյանների տոհմը, որի մեջ առաջինը Մեծ Համտուն հորջորջվածն է, իսկ նրա որդի Հասանը 13-րդ դարի սկզբում կոչվում է «Բաղաց մեծափառ իշխան, որի ձեռքերի մեջ էին այն թագավորության բոլոր ազատները»: Սրա որդին եւ ժառանգորդը Համտուն Բ-ն է եւ մյուս որդին՝ Հովհաննավանքի Հովհաննես եպիսկոպոսը, ով եւ աշխարհի ավերման պատճառով գնաց Վայոց ձոր եւ կառուցեց հռչակավոր Նորավանքը, ուր եւ առանձնացավ նաեւ իր եղբայրը՝ Համտունը, հրաժարվելով աշխարհից, եւ այնտեղ կրոնավորելով նույն վայրում վախճանվում է ՌՁ (1231) թ.»:**

Կարեւոր ենք համարում նաեւ Սուքիաս Էփրիկյանի հիշատակության վերհիշումը (Բնաշխարհիկ բառարան, Ի հ., էջ 368): Ահավասիկ. **«ԺԱ դարու վերջերը եւ մինչեւ ԺԲ-ի կէսը Սիւնեաց թագաւորութեան վերջանալէն յետոյ Բաղաց մէջ նշանաւոր կը հանդիսանայ Համտունեանց տոհմը, որոնց նախահայրն կը կոչուի Մեծ Համտուն, իսկ իւր որդին Հասան՝ ԺԳ դարու սկիզբը կը կոչուի «մեծափառ իշխան Բաղաց, որ ունէր ընդ ձեռամբ զը ամենայն ազատս թագաւորութեանն այն». ասոր մէկ որդին եւ յաջորդն էր Համտուն Բ, եւ միւս որդին Յովհաննէս՝ եպիսկոպոս էր Յովհաննու վանաց, որ աշխարհին աւերման համար գնաց Վայոց ձոր գաւառը, ուր եւ շինելով հռչակաւոր Նորավանքը, հոն առանձնացաւ եւ մեռաւ»:**

Հովհաննես Կապանեցի եպիսկոպոսի դերը հայկական ճարտարապետության նշանավոր համալիր Նորավանքի սկզբնավորման, կառուցման գործում, սակայն, չի նշվել Հայկական սովետական հանրագիտարանում (հ. 8, էջ 378): Ավելին, համալիրի գլխավոր եկեղեցու՝ Սուրբ Կարապետի կառուցման նախապատմության մասին ոչ մի խոսք չկա, ինչն առնվազն գիտական չէ:

## Տաթեւի վանք-Վահանավանք առնչությունները

Աթոռանիստ Տաթեւի (հայրապետանոցի) եւ նահանգի նշանավոր վանքերից մեկի հարաբերությունը, անշուշտ, խիստ կանոնակարգված էր, եւ դրան անդրադառնում ենք ոչ թե գիտական նկատառումով, այլ՝ ստիպված՝ ինչ-ինչ մտացածին հանգամանքների թելադրությամբ: Բանն այն է, որ Վահանավանքի 1100-ամյակի առիթով Կապանում ոմանք փորձում էին անհարկի եւ արհեստական զուգահեռներ անցկացնել Տաթեւի վանքի ու Վահանավանքի միջեւ, ոմանք էլ կամեցան երբեւէ չեղած հակառակություն փնտրել Աստծո երկու այդ տաճարի միջեւ: Ասենք անմիջապես՝ այդ կարգի մտածումներն ու խոսակցությունները ոչ միայն անհեթեթ են ու ոչ գիտական, այլեւ քննարկվող նյութի չիմացության պարզագույն դրսեւորում: Վահանավանքը պատմական ասպարեզ իջավ Աստծո լույսը սփռելու վեհ առաքելությամբ, ինչը պատվով կատարեց եւ առայսօր (թեեւ ոչ ամբողջապես վերականգնված) կատարում է պատվով: Այնպես որ՝ Վահանավանքն ամենեւին էլ կարիք չունի իրեն վերագրելու այլ դերակատարություն, ինչը վիճակված չէր իրեն: Վահանավանքը կարիք ունի սեփական փառապանծ պատմության բարեխիղճ բացահայտման ու շարադրման, ինչի

## 1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

# ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Համար եւ «Սյունյաց երկիրը» սույն համարով իր խոսքն է ասում:

839 թվականից նահանգի հոգեւոր կենտրոն դարձած Տաթեւում 895թ. հիմնադրվում է (Տեր Հովհաննես 5-րդ եպիսկոպոսի նախաձեռնությամբ) Պողոս եւ Պետրոս առաքյալների անունը կրող գլխավոր տաճարը, որի կառուցումն ավարտվեց 906-ին, նավակատիքին մասնակցեցին Սմբատ Ա Բագրատունի հայոց թագավորը, Ամենայն հայոց կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին, Վասպուրականի իշխան Գագիկը (հետագայում՝ Վասպուրականի թագավոր), Աղվանքի կաթողիկոս Տեր Սիմոնը, նշանավոր այլ աշխարհականներ ու հոգեւորականներ: Ի սկզբանե վանքը համարվել է Սիսական տան բոլոր վանքերի գլուխ եւ շնորհաբաշխության աղբյուր: Սյունյաց պատմիչն ուրիշ պատկերավոր խոսքերով էլ է ներկայացրել Աստծո այդ տաճարը՝ **«...Վանքը լուսապայծառ լինելով, ինչպես արեգակն աստղերի մեջ, բոլոր վանքերից նշանավոր էր...»:** Տաթեւն, ուրեմն, ի սկզբանե եղել է նաեւ միջնադարյան Հայաստանի գիտա-մշակութային կենտրոններից մեկը: Եվ դարեր շարունակ եղել է Սյունյաց աշխարհի բոլոր 48 վանքերի գլուխը: Բայց Տաթեւի հայրապետանոցի պատմական ուղին այնքան էլ դյուրին չի եղել: Քանի-քանի անգամ խանգարվել է հայրապետանոցը: Որոշ դեպքերում պատճառը եղել է օտար զավթիչների արշավանքը, մի քանի դեպքում՝ ներհայաստանյան, ներեկեղեցական հարցերը: Կուզենայինք նշել նաեւ, որ Տաթեւի վանքի ու Վահանավանքի միջեւ սեփականության, սահմանների խնդիր երբեւէ չի եղել եւ չէր կարող լինել թեկուզեւ այն պատճառով, որ «Տաթեւի շրջակա սահմանների վավերագիրը», իբրեւ «հաստատուն եւ անխախտ որոշման պայմանագիր», 906թ. կազմողների ու ստորագրողների մեջ էին Բաղքի իշխան Ջագիկն ու նրա որդի Ջեւանշերը: Ստեփանոս պատմիչը հիշեցնում է եւս մի վավերագիր՝ գրված Վահանավանքում՝ Վահանին Սյունյաց թեմի առաջնորդ ընտրելիս: Ըստ այդ վճռագրի՝ Սյունիքի տեր իշխան Սմբատը որոշ գյուղեր վերադարձրեց «Աստվածապատիվ եւ հոգեւոր տեր Վահանին ու Տաթեւի աստվածաբնակ եւ լուսաճեմ եկեղեցիներին» (Ստ.Օրբելյան, նշված աշխ. էջ 249):

Բոլորովին այլ ընթացք ունեցան հետագայում Տաթեւի վանքի ու Ամաղու Նորավանքի հարաբերությունները: Դա խոսակցության այլ նյութ է:

Աշխարհաքաղաքական մի շարք գործոնների ազդեցությամբ Սյունյաց Սմբատ իշխանի կյանքի վերջին տարիներին նկատվում էր գահերեց իշխանության թուլացում եւ Բաղքի գահակալ իշխանների քաղաքական ու տնտեսական զորեղացում: Այդ երեւույթն առավել շատ զգացվեց 10-րդ դարի 70-80-ական թվականներին: Սմբատի մահից հետո, որ տեղի ունեցավ 942-949թթ. միջեւ ընկած շրջանում, այդ տենդենցն ավելի ուժեղացավ: Այդ ամենին զուգահեռ, բնականաբար, Վահանավանքի դերը մեծանում էր: Սակայն դա չանդրադարձավ ու չէր կարող անդրադառնալ Տաթեւի վրա: Պատահական չէ, ասենք, որ Կապանում թագավորող Սյունյաց առաջին երկու թագավորը՝ Սմբատ Ա-ն (987-998թթ.), Վասակ Ա-ն (998-1040թթ.) հուղարկավորվեցին Տաթեւի վանքում:

Արդեն ասացինք, որ դյուրին չի եղել Տաթեւի անցած ճանապարհը: Երկու իրողություն՝ ստորեւ:

Տաթեւի վանքի Կաթողիկե եկեղեցու նավակատիքից՝ 906թ. հետո, մոտ հարյուր տարի վանքի եւ վանքին նվիրաբերված 15 բնակավայրի միջեւ տեղի ունեցավ պայքար: Հատկապես ուժեղ էր Ցուրաբերդի, Ավելադաշտի (Բերդի), Տամալեկքի դիմադրությունը: Ապստամբ գյուղացիները 1003-ին նույնիսկ սպանեցին Տաթեւի Հակոբ եպիսկոպոսին: Իսկ 915թ. Ցուրաբերդի ապստամբությունն այնքան հուժկու էր, որ Հովհաննես 5-րդ եպիսկոպոսը տեւական ժամանակ չհամարձակվեց բնակվել Տաթեւում: Վանական հողատիրության դեմ գյուղացիության 100-ամյա այդ պայքարը, բնականաբար, չէր կարող չանդրադառնալ Տաթեւի վանքի գործունեությանը: Այդ ամենով հանդերձ՝ Տաթեւը շարունակում էր մնալ Սյունաց աշխարհի վանքերի գլուխը:

Տաթեւի համար ամենամեծ փորձությունը եղավ, սակայն, Սյունյաց թեմի գահակալ Հակոբի եւ Ամենայն հայոց կաթողիկոս Անանիա Մոկացու բախումը, ինչին անդրադարձանք վերեւում: Մայր աթոռի դեմ ապստամբած Հակոբ I-ին պատժելու համար (ով ապաստան էր գտել Բաղաց իշխանների մոտ եւ պատսպարվել Բաղաբերդում) Անանիա Մոկացին, որքան էլ զարմանալի է ու տարօրինակ, ավերեց եւ անմարդաբնակ դարձրեց Տաթեւի հայրապետանոցը: Ամենայն հայոց կաթողիկոսի կողմից բանադրված Հակոբ I-ը 8-9 տարի մնաց Բաղաբերդում, որտեղ էլ մահկանացուն կնքեց: Հակոբի մահից հետո երրորդ անգամ Սյունիք այցելած Անանիա Մոկացի կաթողիկոսը եկավ ոչ թե Տաթեւի հայրապետանոց (որ ավերվել ու անմարդաբնակ էր դարձել իր իսկ հրամանով), այլ՝ Կապան, որտեղ եւ Սյունյաց թեմի առաջնորդ ընտրվեց Վահանը (այդ մասին արդեն նշել ենք): Բայց Անանիա կաթողիկոսը **«նաեւ սահմանում էր, որ (եպիսկոպոսը) քիչ ժամանակ պիտի Տաթեւի մեծ եպիսկոպոսարանում նստեր, իսկ մյուս օրերին՝ իր սեփական տանը** (Վահանավանքում-Ս.Ալ.)» (Ստ.Օրբելյան, նշված աշխ. էջ 248-249): Եվ, ըստ Կիրակոս Գանձակեցու, Անանիան **«հրամայեց Սյունյաց եպիսկոպոսի առջեւից խաչ տանել, ուր էլ որ գնա նա»** (Հայոց պատմություն, էջ 72):

Ինչպես նկատեցիք, հատկապես 950-959թթ. դժվարին տարիներ էին Տաթեւի համար: Այդ պայմաններում անգամ Տաթեւից հեռացած եւ Կապանում ապաստանած Հակոբ 1-ին եպիսկոպոսը հանգրվանեց ոչ թե Վահանավանքում, այլ Բաղաբերդում:

### Արդյո՞ք Վահանավանքն առնչություններ է ունեցել պատկերապաշտությանը

Վահանավանքում կրթված ու դաստիարակված գործիչներից ամենավառ անհատականությունը, անշուշտ, Վահան Ա կաթողիկոսն է, որի մասին բավականին տեղեկություններ ենք տալիս այս համարում: Վահան կաթողիկոսին ներկայացրած մեղադրանքներից մեկը, ինչպես նշել ենք, պատկերապաշտությունն է, թեեւ պատմագիտության մեջ ստույգ եւ անհերքելի ապացույցներ չկան այդ տեսակետից: Այդուհանդերձ, առայսօր Վահանը պաշտոնապես համարվում է այն կաթողիկոսը, ով տուրք է տվել պատկերապաշտությանը, ինչի համար եւ գահընկեց է արվել ու հալածվել:

Պատկերապաշտության մասին պատկերացում կազմելու համար մենք ընթերցողին սույն համարում առաջարկում ենք համառոտ տեղեկանք-հատված Նիկողայոս Ադոնցի «Պատկերների խնդիրը» նորահայտ աշխատությունից եւ հատված Միքայել Չամչյանի «Հայոց պատմությունից»:

Կա եւս մեկ հարց, որ բխում է Վահանի՝ պատկերապաշտության իբր ունեցած առնչությունից: Արդյո՞ք Վահանին ներկայացվող այդ մեղադրանքն առնչություն ունի նրա՝ սյունիքյան, մասնավորապես վահանավանքյան գործունեության շրջանին, թե՞ ոչ:

Հարցին կարելի է միանշանակ պատասխանել՝ Վահանի՝ սյունիքյան եւ մասնավորապես վահանավանքյան գործունեության շրջանի հետ այդ մեղադրանքն առնչություն չունի: Դրա վկայությունը, նախ, Անանիա Մոկացու ջերմ վերաբերմունքն էր Վահանի հանդեպ, ում կտակի համաձայն էլ հետագայում նրան ընտրեցին Ամենայն հայոց կաթողիկոս: Իսկ Անանիա Մոկացին քաղկեդոնության, ինչպես եւ պատկերապաշտության դեմ անխոնջ պայքարողներից էր:

Երկրորդ, Սյունիքի եպիսկոպոսության առաջնորդ ընտրվելիս Վահանը Վահանավանքում գրում եւ Անանիա կաթողիկոսին է հանձնում հնազանդության խոստումնագիր, ինչի մասին արդեն խոսել ենք: Այդ գրի մեջ Վահանը խոստովանում է նաեւ իր մեղքերը՝ նախորդ տարիներին՝ Հակոբ I-ի ապստամբության օրերին թույլ տված: Բայց ոչ մի ակնարկ՝ պատկերների հանդեպ ունեցած վերաբերմունքի մասին:

Արիստակես Սեդրակյանը (Մելիք-Առաքելյան) «Հայաստանյայց եկեղեցու պատկերահարգությունը» աշխատության մեջ կոնկրետ օրինակներով քննարկում է Հայոց եկեղեցիների՝ պատկերապաշտությանն ունեցած առնչությունները: Վահանավանքի մասին այդ աշխատության մեջ խոսք չենք գտնում, թեեւ սյունիքյան որոշ վանքեր ու եկեղեցիներ (ըստ այդ ուսումնասիրության) իրենց նկարազարդումների մեջ տեղ են տվել պատկերապաշտությանը:

Այդ բոլորով հանդերձ Վահանավանքի՝ պատկերների հետ առնչություններն ավելի ստույգ կարող են արտացոլված լինել վանքի եկեղեցիների նկարագրությունների, պատկերաքանդակների, զարդաքանդակների ու որմնանկարների մեջ: Բայց վանքի վերականգնված երկու եկեղեցիները որեւէ նշան չեն պարունակում պատկերապաշտության օգտին: Միգուցե այդ առումով նոր կռվաններ ի հայտ գան վանքի տարածքի ամբողջական պեղումներից հետո:

Առայժմ ունենք մեկ փաստ, որ կարող է մտածելու տեղիք տալ: Դա Աղվանքի կաթողիկոս Ստեփանոսի հիշատակագրությունն է, դրա վերջում գրված լատինատառ «Ամեն» բառը (1091թ., թվականության վերաբերյալ կան տարակարծություններ):

Մենք չխորացանք «Ծիսարանի» եւ «Մաշտոցի» մեջ եւ բավարարվեցինք առայժմ միակ այդ փաստով, ինչից հեռուն գնացող եզրակացություններ պետք չէ անել:

Հայկական որոշ եկեղեցիներում, անգամ Անիում եւ Էջմիածնում (նաեւ Բղենո Նորավանքում), հունական տառեր են գրված (Անիում՝ նաեւ վրացական տառեր): Դրանք առայսօր տարբեր ու իրարամերժ ենթադրությունների տեղիք են տալիս:

### Համարին ու թեմային առնչվող եւս մի քանի հարց

Մատուցվող որոշ նյութերի մասին արդեն ծանուցեցինք: Դրանցից բացի կներկայացվեն Վահանավանքին առնչվող այլ՝ ամենաբազմազան նյութեր նույնպես: Սակայն, Վահանավանքը ներկայացնելուց զատ սույն համարը խնդիր ունի ընթերցողին ճանաչելի դարձնել նաեւ Կապանը, Կապանի անցյալը: Այդ իսկ նպատակով առաջին անգամ ընթերցողի սեղանին են դրվում Ղեւոնդ Ալիշանի «Սիսական» տեղագրության՝ Բաղքին, Կովսականին ու Ձորքին նվիրված գլուխները, որը մեր խնդրանքով գրական հայերենի փոխադրեց բանասիրական գիտությունների թեկնածու Հակոբ Քյոսեյանը, խմբագրեց Ռոբերտ Գրիգորյանը (էջանանցին): Գրական հայերենի փոխադրման հովանավորը Նարինե Մովսիսյանն է՝ Երեւանի գյուղատնտեսական համալսարանի Կապանի ուսումնական կենտրոնի տնօրենը: Նրանց՝ մեր անկեղծ շնորհակալությունը:

Ընթերցողին ենք ներկայացնում Երվանդ Լալայանի «Կապան կամ Ղափան. պատմական համառոտ տեսություն» հետազոտությունը, որը 1904թ. տպագրել է Թիֆլիսում լույս տեսնող «Ազգագրական պատկերազարդ հանդեսը» (9-րդ տարի, XII գիրք):

Առաջին անգամ պատրաստել եւ ընթերցողին ենք ներկայացնում «Վահանավանք. աղբյուրագիտական հենք» մատենագիտական հոդվածը՝ մեր կողմից հեղինակված: Ակնկալում ենք, որ թեմային տիրապետող մարդիկ իրենց լրացումներով ավելի կճշտեն ու կհարստացնեն Վահանավանքին առնչվող մատենագիտական շրջանակը, ինչը նպաստ կլինի թեման ուսումնասիրողներին:

Համարի նախապատրաստման ընթացքում ծնվեց Ռոբերտ Կամոյանի հերթական կտավը՝ «Վահանավանքի նավակատիքը 911թ.» թեմայով: Գեղանկարը զետեղված է համարի 1-ին էջում: Հեղինակին այս անգամ եւս հաջողվել է վերարտադրել պատմական իրողությունը՝ 11 դարի վաղեմությամբ: Ճիշտ են ընտրված նաեւ գործող անձինք՝ կենտրոնում Սյունյաց թեմի գահակալ Հովհաննես 5-րդ եպիսկոպոսն է, նրանից աջ՝ Սյունիքի գահերեց իշխան Սմբատը, Բաղքի գահակալ իշխան Ջեւանշիրը, նրանից ձախ՝ Վահան Նախաշինողը, որի կողքին՝ մանուկ Վահանը, ով ապագայում պիտի դառնա Ամենայն հայոց կաթողիկոս: Նավակատիքին հավաքվել են հոգեւոր դասի ներկայացուցիչներ, զինվորականներ, աշխարհականներ ու հավատացյալներ: Երեւում են նաեւ Աստծո հրեշտակները: Հեռվում Բաղաբերդն է, Բաղքի բարձրաբերձ լեռներն են: Այս գեղանկարի հովանավորը «Վահանավանք» պատմամշակութային հասարակական կազմակերպությունն է (նախագահ՝ Սասուն Մանուկյան): Ինչպես արդեն ներկայացրել ենք համարի 1-ին էջում, սույն համարի տպագրությունը նույնպես հովանավորել է «Վահանավանք» պատմամշակութային հասարակական կազմակերպությունը, որին կրկին մեր անկեղծ շնորհակալությունն ենք հայտնում եւ բարեմաղթանքները հղում:

Քիչ առաջ նշեցինք, որ համարի նախապատրաստման ընթացքում, սույն համարում տպագրելու համար, գրական հայերենի ենք փոխադրել Ղեւոնդ Ալիշանի «Սիսական» տեղագրության՝ Կապանին առնչվող գլուխները: Հակոբ Քյոսեյանի հեղինակությամբ առաջին անգամ գրաբարից գրական հայերենի ենք փոխադրել, ինչպես արդեն նշել ենք, Վահան Սյունեցու, Սյունիքի իշխանաց իշխան Վասակի, Բաղքի իշխան Ջեւանշիրի 958թ. գրված հնազանդության խոստումնագրերը՝ տրված Անանիա Մոկացի Ամենայն հայոց կաթողիկոսին: Նույն բանասերի միջոցով գրական հայերենի ենք փոխադրել եւ ընթերցողին ենք ներկայացնում Միքայել Չամչյանի «Հայոց պատմություն» աշխատության Բ հատորից՝ թեմային առնչվող հատված:

Սույն համարի թողարկումը եւս մեկ առիթ է մեր հարգանքի տուրքն ընծայելու Վահանավանքի եւ առհասարակ Սյունիքի պատմության գիտակ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գրիգոր Գրիգորյանին:

Վահանավանքի 1100-ամյակի առիթով մենք կրկին տագնապ ենք հնչեցնում առ այն, որ տարածքի մի շարք սրբավայրեր՝ նաեւ երկրամասի պատմության մեջ նշանավոր դեր խաղացած, կանգնած են վերջնական փլուզման շեմին: Նկատի ունենք հատկապես Երիցավանքի վանական համալիրը, որը միջնադարում, տեւական ժամանակ, կարեւոր դեր է խաղացել Սյունիքի եպսիկոպոսության կյանքում: Միաժամանակ, անթույլատրելի է այն ձեւականությունն ու աչքակապությունը, որոնք տեղ են գտել եւ Վահանավանքի, եւ Հալիձորի բերդի վերականգնման աշխատանքներում:

Վահանավանքի պատմության ուսումնասիրությունը թույլ տվեց պարզել, որ Սյունիքի անցյալի շատ-շատ դրվագներ առայսօր մնում են մշուշի մեջ, մնում՝ առեղծված: Եվ Սյունիքի պատմությունը շարադրել փորձողները, կարծեք, հանրահայտ դրվագներ ու անցքեր ներկայացնելուց այն կողմ չեն անցնում առայժմ:

Երկու-երեք տարի Կապանի պաշտպանությունը գլխավորած մարդկանց սրբացնում ենք, հիշատակ հավերժացնում (եւ ճիշտ ենք անում), բայց մինչեւ հիմա չի հավերժացվել Ջագիկյան իշխանական տոհմի հիշատակը, ում առաջնորդությամբ Կապանը պաշտպանվեց, վերելք ապրեց մոտ երկու դար, ում ջանքով Կապանը քաղաք դարձավ ու Սյունիքի թագավորության կենտրոն, ում ջանքով կառուցվեց Վահանավանքը: Գոնե ուշացումով իշխանական այդ տան անունով պետք է կոչել Կապանի հրապարակներից մեկը եւ Կապանից Վահանավանք ձգվող ավտոմայրուղին: Հավերժացված չէ նաեւ բոլոր ժամանակների ամենանշանավոր կապանցիներից մեկի՝ Ամենայն հայոց կաթողիկոս Վահանի հիշատակը, որին, ինչպես տեսանք, մեր պատմիչներից շատերը Հայոց սուրբ հայրապետ էին կոչում:

### Թող Վահանավանքը օգնական ու զորավիգ լինի մեզ

Թեեւ Կապանն ու Մայր աթոռը 2011-ին չնշեցին Բաղքի գլխավոր սրբավայրի՝ Վահանավանքի հիմնադրման 1100-ամյակը, բայց համոզված ենք, որ Աստծո այդ տաճարի համար վերահառնումի ժամանակներ են: Եվ վերահառնող Վահանավանքը հնարավորություն կտա, որ մեր հավատն ավելի շոշափելի դրսեւորումներ ունենա:

Հավատում ենք, որ Աստծո այդ տաճարը զորություն կբերի մեզ, մեր ընթացքին եւ օգնական ու զորավիգ կլինի վարանման ու տարակույսի մատնված հոգիներին:

Հույս ունենք նաեւ, որ Վահանավանքը կօժտվի հոգեւոր սպասավորներով ու կանոնավոր եւ գործնական մասնակցություն կունենա տարածաշրջանի հոգեւոր արթնությանը:

Եվ ամենակարեւորը՝ Վահանավանքի լույսով մաքրվելու ժամանակն է, որքան էլ անպատկերացնելի է դա մեր աղավաղ օրերում: Հակառակ դեպքում անկեղծ չեն կարող լինել Վահանավանքի մասին խոսելը, այնտեղ տոնակատարություններ կազմակերպելը, անգամ աղոթելն ու խնկարկելը, մկրտություն կազմակերպելը: Առավել եղծելի են (եւ կլինեն) բոլոր նրանք, ովքեր կփորձեն իրենց էությունը ծածկել Վահանավանք սրբասուրբ անվան շահարկմամբ:

■

1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ԲԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՍԿԻԶԲԸ

# ՆԱԽԱԳԾԵՐ, ՉԱՓԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԱՏԱԿԱԳԾԵՐ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ԱՇՈՏ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ՉԱՓԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ









1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՍԿԻԶԲԸ

# ՆԱԽԱԳԾԵՐ, ՉԱՓԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԱՏԱԿԱԳԾԵՐ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ԱՐԹՈՒՐ ՄԵՍՉՅԱՆԻ ՉԱՓԱԳՐՈՒ-ԹՅՈՒՆՆԵՐԸ











1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ՎԱՀԱՆԱՎԱՆՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԻՑ

# Սեդրակ Բարխուդարյան

**1966թ. գարնանը Վահանավանքի պեղումներն առաջին անգամ նախաձեռնեց ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի վիմագրության բաժնի վարիչ ՍԵԴՐԱԿ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԸ: Նշանավոր հնագետին ու Վահանավանքի վերականգնման երախտավորին ճանաչելու համար ներկայացնում ենք ակադեմիկոս Գագիկ Սարգսյանի հոդվածը՝ գրված նրա ծննդյան 110-ամյակի կապակցությամբ:**

**ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

Հայագիտության նվիրյալ. սա է Սեդրակ Բարխուդարյան մարդու, գիտնականի հակիրճ, կատարյալ բնութագրականը: Մասնագիտական լայն մտահորիզոնի եւ գիտելիքների տիրապետմամբ, պատմագիտական բազմաբովանդակ հետաքրքրությունների դրսեւորմամբ Ս.Բարխուդարյանը թողել է մնայուն հետք հայագիտության մեջ: Նրա աշխատություններն անհրաժեշտաբար ընդգրկված են հայոց պատմության ամենատարբեր դարաշրջանների ու բնագավառների ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետների առաջնահերթ օգտագործման գրականության ցանկերում: Ս.Բարխուդարյանի գիտական ստեղծագործությունը խարսխված էր Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում եւ Երեւանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետում ուսումնառության տարիներին ձեռք բերած հիմնավոր գիտելիքների վրա, իսկ հետազոտությունների հիմնական առարկան հայ ժողովրդի նյութական ու հոգեւոր մշակույթի պատմական ժառանգությունն է եղել: Գիտական գործունեության առաջին տասնամյակում նրա ուսումնասիրությունները սեւեռվում են Հայկական լեռնաշխարհի նախաուրարտական եւ ուրարտական դարաշրջանների պատմության հարցերին: Դեռեւս Նոր Բայազետի մանկավարժական տեխնիկումում դասավանդելու եւ հետագա տարիներին նա ուսումնասիրում է տարածքի վաղ շրջանի հնագիտական հուշարձանները, սեպագիր եւ արամեերեն արձանագրությունները, մի շարք վայրերում կատարում հնագիտական պեղումներ: Ս.Բարխուդարյանի պատմահնագիտական այս պրպտումների արգասիքն է դառնում նրա առաջին ծավալուն ուսումնասիրությունը՝ նվիրված Ծովինար գյուղի մերձակայքում հայտնաբերված ուրարտերեն սեպագրում հիշատակված Վելիքուխե երկրին՝ 1933թ. արժանացած Մելքոնյան մրցանակի: XX դարի 30-ական թվականներին գիտնականի աշխատանքային գործունեությունը մեծապես կապված է եղել Հայաստանում պատմամշակութային հուշարձանների պահպանության գործին: Ի պաշտոնե ընդգրկված լինելով այդ բնագավառի պետական մարմնի աշխատանքներում՝ նա հնագիտական պեղումներին զուգընթաց լայն մասնակցություն է ունեցել



ՍԵԴՐԱԿ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

հուշարձանների տեղային ուսումնասիրության, հաշվառման, քարտեզագրման, անձնագրավորման աշխատանքներին: Այս բնագավառի կարեւոր տեսական ձեռքբերում կարելի է դիտարկել խորհրդային տարիներին հրապարակված, իր տեսակի մեջ առաջին աշխատությունը՝ Սովետական Հայաստանի հնությունների տեսակներն ու նրանց պահպանության անհրաժեշտությունը (Երեւան, 1935թ.): Պատմագիտության բնագավառում Ս.Բարխուդարյանի ստեղծագործական ներդրումների մի զգալի հատված առնչվում է Արցախի եւ հարեւան անդրկուրյան տարածքների հայաբնակության պատմության մի շարք առանցքային խնդիրներին: Այդ թեմատիկային էին նվիրված Դերբենդի հայ-աղվանական թագավորությունը (ՊԲՀ, 1969, 3), Արցախի, Շաքիի եւ Փառիսոսի իշխանությունները IX-X դդ. (ՊԲՀ, 1971, 1) ծավալուն եւ արժեքավոր հոդվածները եւ Ակնարկներ հայ-աղվանական հարաբերությունների պատմությունից անտիպ մենագրությունը: Ս.Բարխուդարյանը, չնայած իր գիտական հետաքրքրությունների եւ ստեղծագործությունների բավական լայն ու բազմաբովանդակ ընդգրկման, հայագիտության մեջ առավել հայտնի է որպես խոշորագույն վիմագրագետ, այդ բնագավառի երեւելիներ Ն.Մառի եւ Հ.Օրբելու արժանավոր հետեւորդ: Քաջատեղյակ լինելով այդ նշանավոր ուսուցչապետերի վիմագրագիտական ժառանգությանը եւ վիմագրերի հավաքման, վերծանության, մեկնաբանման ու հրատարակման նրանց որդեգրած եւ զարգացրած սկզբունքներին ու մեթոդներին, Ս.Բարխուդարյանը մեծագույն ներդրում ունեցավ հայ վիմագրագիտության մեջ: ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի նախաձեռնությամբ կյանքի կոչվեց դեռեւս Հովսեփ Օրբելու մտահղացած Դիվան հայ վիմագրության վիմական արձանագրությունների մատենաշարի պատրաստումն ու հրատարակումը: Հայագիտության համար աղբյուրագիտական այս եզակի ու խիստ անհրաժեշտ ժողովածուների կազմման աշխատանքներն ի սկզբանե ղեկավարեց Սեդրակ Բարխուդարյանը: Վիմագրական բազմաթիվ արդյունավետ արշավախմբերի միջոցով

Շարունակությունը՝ էջ 25

# Ժամանակը, գործող անձինք

**Վահանի սուրբ վանքի կառուցումը կատարվեց Սմբատ Բագրատունու թագավորության, Սյունյաց գահերեց իշխան Սմբատի, Բաղքի Ձեվանշերի իշխանության, Ամենայն հայոց կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցու, Սյունիքի եպիսկոպոս Տեր-Հովհաննեսի ժամանակ... Իսկ հետո բազմաթիվ շինություններ ավելացրին եւ վանքը երեւելի բարեկարգումներով զարդարեցին մյուս Վահանը (հետագայում՝ Ամենայն հայոց կաթողիկոս), Բաղքի Գրիգոր թագավորը, Շահանդուխտ թագուհին, Կատան, Սենեքերիմ թագավորը...**

### Սմբատ Ա Բագրատունի, Հայոց թագավոր

Ծննդյան թիվը հայտնի չէ, թագավորել է մինչեւ 914թ.: 885-ից՝ Իշխանաց իշխան: Հոր՝ Աշոտ Ա-ի մահից հետո Շիրակավանում օծվել է Հայոց թագավոր: 892-ին Արաբական խալիֆայությունը, իսկ 893-ին՝ Բյուզանդական կայսրությունը ճանաչել են նրա թագավորությունը: Սմբատ Ա-ի գերիշխանությունը ճանաչել են նաեւ Սյունիքի իշխանները: Նա վարել է կենտրոնացված ուժեղ պետություն հաստատելու, հայ իշխանների անջատամետ նրկտումները ճնշելու քաղաքականություն:

### Հովհաննես Դրասխանակերտցի, Ամենայն հայոց կաթողիկոս

Ծնվել է 845-50-ի միջեւ Այրարատի Դրասխանակերտ գյուղում, մահացել է մոտ 925թ.: Պատմագիր Դրասխանակերտցին Ամենայն հայոց կաթողիկոս է դարձել 897թ.: Կրթությունը ստացել է Սեւանա կղզու վանքում՝ իր ազգական Մաշտոց կաթողիկոսի մոտ, որին եւ հաջորդեց հետագայում: 905թ. մասնակցել է Տաթեւի Պողոս-Պետրոս եկեղեցու նավակատիքին: 908-ին, Հայաստանի վրա Ատրպատականի ամիրա Յուսուփի արշավանքը կանխելու նպատակով, Սմբատ Ա-ի հրահանգով, մեկնել է Ատրպատական՝ նրա հետ բանակցելու, սակայն ձերբակալվել է եւ բանտ նետվել: Բանտից փախել է եւ հաստատվել Տարոնում: Կաթողիկոսանիստ Դվինը գրավվելուց հետո ընդունել է Վասպուրականի Գագիկ թագավորի հրավերը եւ 927-ին մեկնել Վասպուրական: Հովհաննես Դրասխանակերտցուց պահպանվել է երկու աշխատություն՝ «Շարք կաթողիկոսացն Հայոց» եւ «Պատմութիւն Հայոց»:

### Անանիա Ա Մոկացի, Ամենայն հայոց կաթողիկոս

Ծննդյան թիվն անհայտ է: Գահակալել է 946-ից: Ծնվել է Մոկք նահանգի Փաս գյուղում: Եղել է Վարագա վանքի վանահայր: Անանիա Մոկացու օրոք, 940-50-ական թվականներին, Աղվանից Սահակ ու Գագիկ կաթողիկոսները եւ Սյունիքի Հակոբ եպիսկոպոսը փորձեցին դուրս գալ Հայ եկեղեցու ենթակայությունից: Անանիա Մոկացին խափանեց նրանց ծրագիրը՝ պահպանելով Հայոց ազգային եկեղեցական միությունը: Նույն նկատառումով կաթողիկոսական աթոռն Աղթամարից փոխադրեց Արգինա: Անանիա Մոկացու մատենագրական ժառանգությունից մեզ է հասել 4 «Թուղթ»: Դրանք գրվել են վերոհիշյալ հուզումների կապակցությամբ եւ ունեն պատմական ու մատենագիտական որոշակի արժեք: Այդ «Թղթերում» հաղորդվում են Բագրատունիների, Արծրունիների, Աղվանքի եւ Սյունիքի վերաբերյալ կարեւոր տեղեկություններ, որոնք բացակայում են այլ աղբյուրներում: Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ, Անանիա Մոկացին կազմել է մի ժողովածու՝ «Հաւատոյ նամակ» խորագրով:

### Վահան Ա Սյունեցի, Ամենայն հայոց կաթողիկոս

Ձեվանշեր 1-ինի որդին է, Վահան Նախաշինողի եղբորորդին: Ծննդյան թիվն անհայտ է: Վախճանվել է 972թ. Վասպուրականի Ձորոփանքում: Ամենայն հայոց կաթողիկոս է եղել 968-969թթ.: Նախապես եղել է Սյունիքի թեմական առաջնորդ (963-68թթ.): 969թ. Անիում, Աշոտ 3-րդ Ողորմած թագավորի մասնակցությամբ, տեղի է ունեցել եկեղեցական ժողով, որը դատապարտել է նրա ուղեգիծը, գահընկեց արել:

Վահան Սյունեցու մասին առավել հանգամանալից՝ սույն համարում:

### Տեր-Հովհաննես, Սյունիքի եպիսկոպոս

Սյունյաց Հովհաննես 5-րդ եպիսկոպոսն է: Հաջորդել է Սողոմոն 2-րդին: Օծվել է Գեւորգ 2-րդ կաթողիկոսի կողմից: Մասնակցել է Աշոտ Ա Բագրատունի Հայոց թագավորի օծմանը: Վերակառուցել է Տաթեւի վանքը: Նրա եպիսկոպոսության պաշտոնավարման սկիզբը եւ ավարտը տարբեր տարեթվերով են ներկայացված: Աթոռակալության սկիզբը համարվում է 888 (նաեւ 885 կամ 882) թվականը, աթոռակալության ավարտը՝ 918թ., որը նրա մահվան տարին է:

### Սմբատ 1-ին, Սյունիքի գահերեց իշխան

Սյունիքի գահերեց իշխան Աշոտի որդին է: Գահերեց իշխան է եղել 909-940-ական թվականներին: 941թ. Սյունիք այցելած Անանիա Մոկացի կաթողիկոսին ինքն է դիմավորել: 909թ. հոր մահվան առիթով Սյունիքում գտնվող Բագրատունյաց թագավորն է նրան նշանակել «Մեծ իշխան Սիսական տոհմի», «Գահագլուխ իշխան Սյունյաց»:

### Վասակ 4-րդ, Սյունիքի գահերեց իշխան

Սմբատ 1-ին գահերեց իշխանի որդին եւ հաջորդն է: Դիմավորել է Անանիա կաթողիկոսին՝ վերջինիս երրորդ այցի ժամանակ (958թ.): Ունեցել է երկու որդի: Ծննդյան եւ մահվան տարեթվերի մասին տեղեկություններ չկան:

### Ձեվանշեր 1-ին, Բաղքի իշխան

Ամենայն հավանականությամբ Բաղքում իշխել է 906-920-ական թթ.: Ջագիկ 1-ինի որդին է, Վահան Նախաշինողի եղբայրը:

### Ջագիկ 2-րդ, Բաղքի իշխան

Ձեվանշեր 1-ինի որդին է: Նրա իշխանության սկիզբը պետք է փնտրել հոր իշխանության շրջանից հետո: Ծննդյան եւ մահվան տարեթվերը հայտնի չեն: Մի վկայությունից պարզ է միայն, որ 925թ. իշխան էր:

### Ձեվանշեր 2-րդ, Բաղքի իշխան

Ջագիկ 2-րդի որդին է: Ամենայն հավանակությամբ Բաղքի իշխան էր 940-60-ական թվականներին: Որոշակի դեր է խաղացել Անանիա կաթողիկոսի եւ Տաթեւի միջեւ առաջացած լարված հարաբերություններում:

### Գրիգոր Ա, Սյունիքի թագավոր

Թագավորել է 1051-1072թթ.: Հաջորդել է եղբորը՝ Սմբատ Բ Աշոտյանին: Ձինակցել է Լոռու թագավոր Դավիթ Անհողինի հետ եւ պարտության մատնել Լոռի արշավող Դվինի ամիրա Աբուլսվարին: Թաղվել է Վահանավանքում: Գրիգոր Ա թագավորի դեմքը վերականգնել է պրոֆեսոր Ճաղարյանը: Կիսանդրին պահվում է Կապանի երկրագիտական թանգարանում:

### Սենեքերիմ, Սյունիքի թագավոր

Թագավորել է 1084-1094թթ.: Սենեքերիմ Սեւադյանը սերում է Խաչենի Առանշահիկների տոհմից: Հաջորդել է իր քույր Շահանդուխտի ամուսին Գրիգոր Ա Աշոտյանին: Նրա օրոք՝ 1086թ., ավարտվել է թագուհի Շահանդուխտի եւ նրա քույր Կատայի կողմից Վահանավանքի Սբ Աստվածածին եկեղեցու կառուցումը: 1094թ. Գանձակի սելջուկները, հայկական ուժերի օգնությամբ նրան սպանել են: Թաղված է Վահանավանքում:

### Շահանդուխտ, Սյունիքի թագուհի

Բաղքի Գրիգոր Ա (Աշոտյան) թագավորի կինն էր՝ Սահակ Սեւադա Ա-ի թոռ Սեւադա իշխանի դուստրը, որին կոչել են նաեւ Շահանդուխտ Բ: Գրիգոր-Շահանդուխտ զույգը զավակ չունեցավ: Որպես թագավորության ժառագորդ՝ Աղվանքից բերեցին Շահանդուխտի եղբայր, թագավորազն, մանուկ Սենեքերիմին:

Շահանդուխտի մասին ավելի հանգամանալից՝ սույն համարում: ■



1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

# Հին հուշարձաններ Վահանավանքի տարածքում

ՎԱՐՇԱՄ ԱՎԵՏՅԱՆ

**Վերջին ժամանակներս, հատկապես անցյալ դարի կեսերից, պատմական Սյունիքի Զորք գավառից, առանձնապես նրա երբեմնի մայրաքաղաք Կապանի տարածքից ու հարակից վայրերից, որտեղ գտնվում է 10-րդ դարում հիմնադրված Վահանավանքը, շուրջ չորս տասնամյակ կատարված պեղումների ընթացքում, բացի միջնադարյան հարուստ նյութերից եւ վիմագիր արձանագրություններից, որոնք վկայում են վանքի հիմնադրման, գործունեության եւ երբեմնի փառքի ու նշանակության մասին, Վահանավանքի հինավուրց կառույցների պատերի տակ, բակում եւ հարակից տարածքներում հայտնաբերվել են նաեւ հնագույն ժամանակներին վերաբերող արժեքավոր, նույնիսկ կարելի է ասել՝ եզակի նյութեր, որոնք նոր լույս են սփռում հնագիտության մեջ եւ Սյունիքի հնագույն պատմության մութ էջերի վրա:**

Այդ նորույթների հայտնաբերման գործին զգալի նպաստ են բերել Երեւանի Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի /համալսարան/ պատմության ֆակուլտետի ուսանողները, ովքեր իրենց դասախոս Վ.Ավետյանի ղեկավարությամբ, տարիներ շարունակ, որպես պրակտիկանտներ, գործուն մասնակցություն են ունեցել Գրիգոր Գրիգորյանի ղեկավարությամբ գործող Վահանավանքի հնագիտական արշավախմբի աշխատանքներին եւ աչքի ընկել հիշատակման արժանի գործերով:

Նրանք դարավոր հողակույտի նստվածքների տակից ոչ միայն բացել են վանքի համալիրի մեջ գտնվող գողտրիկ կառույցները, հայտնաբերել վիմագիր արձանագրություններ եւ իրենց ղեկավարի օգնությամբ դրանք վերծանել, այլեւ ուսումնասիրել վանքի տարածքը՝ հայտնաբերելով հին հուշարձաններ: Ուսումնասիրություններով պարզվել է, որ Վահանավանքի տարածքում կան նաեւ հնագույն բնակատեղի եւ ընդարձակ դամբարանադաշտ, որը կարոտ է գիտական լուրջ ուսումնասիրության:

Նշված տարածքներում, հետախուզական աշխատանքներով, նաեւ պատահական դիպվածով հայտնաբերվել են շատ արժեքավոր նյութեր, որոնց մի մասը պահվում է Կապանի երկրագիտական թանգարանում, իսկ մի մասն էլ ի պահ է տրվել Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի հայրենագիտական թանգարանին:

1986թ. ամռանը Վահանավանքի սյունազարդ ու կամարածածկ մեծ տաճարի բակում դարերի ընթացքում գոյացած, երեք մետր բարձրությամբ հողաթումբը հեռացնելուց հետո բացվեցին միջնադարյան երկու թաղումներ, որոնցից մեկի տակ՝ բրոնզեդարյան քարարկղային դամբարան: Այն բացվեց միջնադարյան թաղումից ընդամենը 30սմ ցած: Ընդ որում, նկատելի էր, որ հին դամբարանի ծածկաքարերից մեկը նոր թաղում կատարելու համար՝ գերեզմանափոս փորելու ընթացքում նկատվել եւ տեղաշարժ էր արվել, այսինքն՝ տեսել էին հին դամբարանի պարունակությունը եւ թաղման ձեւը: Հարկ է եղել բացված ծածկաքարերի վրա հող լցնել եւ կատարել թաղումը: Դա երեւաց այն բանից, որ լցված հողի մեջ կային միջնադարյան կավամանների բեկորներ եւ այլ արտեֆակտներ:

Այս թաղումը չափազանց հետաքրքիր երեւույթ է, որն առաջին անգամ է հանդիպում: Իհարկե, առաջներում եղել է մեկ դամբարանում կրկնակի թաղման երեւույթ, որը կատարվել է տվյալ ժամանակների սահմաններում, սակայն նախորդ դամբարաններում հազարամյակներ հետո թաղում չի կատարվել: Բանն այն է, որ մեր հոգեւոր հայրերը գիտակցել են, որ նախկին թաղվածն իրենց ցեղակից կամ ազգակից մարդ է եղել, որի գերեզմանի վրա կատարել են նոր թաղում: Այլապես, այլազգի եւ այլադավան մարդու գերեզմանի վրա քրիստոնյա հայ մարդու թաղում չէին կատարի: Հին դամբարանի գերեզմանախցում, որը քարարկղային տիպի էր, թաղված էր մեկ մարդ՝ կծկված, ձախ կողքի պառկած, ձեռքերը դեմքի ուղղությանը հասցրած, դեմքով դեպի արեւելք, որի շուրջը որպես ուղեկցող նյութ դրված էր 12 կավաման, որոնք բաժակաձեւ, միջին մեծության, տափակ կանթերով անոթներ էին՝ նման Սյունիքի տարածաշրջաններից՝ Շիկահողից, Սրաշենից, Առաջաձորից,

Շարունակությունը՝ էջ 18



ԱՅՑԵԲԱՐՏ

ՎԱՐՇԱՄ ԱՎԵՏՅԱՆ

*Ծնվել է 1928թ. Լոռու մարզի Շնող գյուղում: Սովորել է նախկին Թումանյանի շրջանի Թեղուտ գյուղի դպրոցում, 1939-43թթ.՝ Շնողի, ավարտել Ալավերդի քաղաքի Միքայել Նալբանդյանի անվան միջնակարգ դպրոցը:*

*Հայրենական մեծ պատերազմի տարիներին՝ լինելով դպրոցական, թիկունքում, բարեխիղճ աշխատանք է կատարում, որի համար պարգեւատրվում է շնորհակալական շքանշանով: 1946-47թթ. ուսանել է Երեւանի էներգետիկ տեխնիկումում, 1947-48թթ. եղել է Ալավերդու շրջսովետի գործկոմի առեւտրի բաժնի ավագ տեսուչ: Ուսումնառությունը շարունակել է Երեւանի ֆինանսատնտեսագիտական տեխնիկումում (1948-50թթ.):*

*1950-53թթ. ծառայել է խորհրդային բանակի Թամանյան դիվիզիայի 400-րդ գնդում՝ որպես ավագ գրագիր եւ ծառայության պետ:*

*1953-58թթ. սովորել է Երեւանի Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական ֆակուլտետում: 1958թ. նշանակվել է Սեւանի շրջանի Լճաշեն գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն:*

*1964-68թթ. աշխատել է Սեւանի գյուղական արտադրության վարչության, Սեւանի շրջխորհրդի գործկոմի, ապա՝ քաղխորհրդի գործկոմի ժողկրթբաժվար, հետագայում՝ Սեւանի, Կամոյի եւ Հրազդանի միացյալ ժողկրթբաժվար: 1960-67թթ. ընտրվել է Սեւանի շրջսովետի, 1967-72թթ. քաղսովետի դեպուտատ:*

*Ավարտել է մանկավարժական մայր բուհի ասպիրանտուրան՝ աշակերտելով բազմավաստակ պատմաբան, հնագետ, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Մորուս Հասրաթյանին: 1970թ. պաշտպանել է թեկնածուական թեզ՝ «Սեւանի ավազանի ուշ բրոնզեդարյան տնտեսության հիմնական ճեւերը» թեմայով:*

*1968-72թթ. եղել է Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի նախապատրաստական դասընթացների վարիչ, աշխատել ԽՍՀՄ եւ Հայոց պատմության ամբիոններում՝ ավագ դասախոս, իսկ 1972-ից՝ դոցենտ՝ դասավանդելով «Հայոց պատմություն», «Հնագիտություն», «Հայրենագիտություն» եւ «Դրամագիտություն» առարկաները:*

*1972-83թթ. եղել է ինստիտուտի պատմության գծով գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի անդամ: 60 տարի իր ներդրումն է կատարել մանկավարժական բնագավառի կրթօջախում:*

*Երկար տարիներ դասավանդել է Գավառի պետական համալսարանում, ԳՊՀ պրոֆեսոր է:*

*1959-72թթ. Սեւանի ավազանի հնագիտական աշխատանքներին մասնակցել է որպես գիտաշխատող, ջոկի պետ եւ արշավախմբի պետի տեղակալ: Հայտնաբերել եւ ուսումնասիրել է Մեծեփի եւ «Սեւանա կղզու» կիկլոպյան ամրոցները, Ծովագյուղի, Յայջիի (Զովաբեր), Դդմաշենի, Թմբուկ Այրի (Նաղարա Խանա) դամբարանադաշտը, դաշտը շրջափակող պարիսպները, այլ հուշարձաններ, Վանաշենի հնավայրը (Արարատի մարզ), պեղումներ կատարել Լոռու մարզի Թեղուտ, Դուքանաձոր, Շնող, Լորուտ գյուղերի հնավայրերում: Հայտնաբերել եւ պեղումներ է կատարել Լճաշենի դամբարանադաշտի չորրորդ տեղամասում: 1975-86թթ. ղեկավարել է Լճաշենի հնագիտական արշավախումբը, պեղել մոտ 200 դամբարան, որոնց նյութերով ստեղծել Սեւանի երկրագիտական թանգարանը:*

*Ստեղծել է մի շարք հայրենագիտական թանգարաններ, որոնցից երկուսը 1980թ. ՀԽՍՀ կուլտուրայի մինիստրության կողմից արժանացել է «Ժողովրդական թանգարան» պատվավոր կոչմանը /Շնողի եւ Սեւանի/:*

*Հեղինակ է բազմաթիվ գիտական եւ գիտամանկավարժական ուսումնասիրությունների: 1947 թվականից առ այսօր զբաղվում է Խ.Աբովյանի անհետացման հարցով եւ տվել է դրա պարզաբանումը: Գիտական ողջ կյանքը նվիրել է Սեւանի ավազանի բրոնզեդարյան պատմության եւ մշակույթի ուսումնասիրմանը:*

*Հեղինակ է շուրջ 100 գիտական աշխատանքի եւ 12 մենագրության, 70-ից ավել հրապարակախոսական հոդվածի: Պատվավոր շնողցի էր, նաեւ 2010թ. «Լոռվա Զոր» հայրենակցական միության կողմից պարգեւատրվել է «Հովհան Օձնեցի իմաստասեր կաթողիկոսի հետնորդ» պատվավոր կոչմամբ:* ■

**Վարշամ Ավետյանի հավաքածուից, պահվում է Գավառի պետական համալսարանի պատմության թանգարանում (խեցեղեն իրեր): Թանգարանում պահվող վահանավանքյան մյուս ցուցանմուշները՝ էջ 20-ում:**

1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

# Վահանավանքի դրամները

**ԱՐՄԻՆԵ ՋՈՀՐԱԲՅԱՆ**

**Պատմական գիտությունների թեկնածու, դրամագետ, Հայաստանի պատմության թանգարանի էքսկուրսիոն բաժնի վարիչ**

Լուսանկարը՝ Ա. Ամիրյանի

Հայաստանի հարավային շրջան Սյունիքի մարզը հայտնի է իր դրամական գտածոների բազմաքանակությամբ եւ բազմազանությամբ: Այդ տարածաշրջանից հայտնաբերված դրամներն ընդգրկում են պատմական ամենատարբեր ժամանակաշրջաններ՝ անտիկ, միջնադար, նոր շրջան: Այս հանգամանքը ցույց է տալիս, որ առեւտրական կարեւորագույն ճանապարհներն անցնում էին Սյունիքով՝ հանդիսանալով կարեւորագույն օղակ՝ Արեւմուտք-Արեւելք տնտեսական հարաբերություններում: Հայաստանը, նման պայմաններում, հանդես էր գալիս որպես միջնորդ երկիր՝ ունենալով առավել հարմար դիրք եւ ավելի հանգիստ ուկայուն միջավայր՝ առեւտրականների գործունեության համար: Այս վերջին հանգամանքը երբեմն ավելի էր կարեւորվում առեւտրականների կողմից: Հաճախ իրենց ապրանքը վերջնական կետին հասցնելու համար նրանք ընտրում էին ավելի ապահով ճանապարհներ, որոնք չէին անցնում աշխույժ առեւտրական կենտրոններով եւ հատկապես այնպիսի տարածքներով, որտեղ նրանց ունեցվածքը վտանգված էր:

Հայտնի է, որ առեւտրական քարավանները հաճախ էին ենթարկվում թալանի առանձին ցեղերի կողմից, որոնց համար դա հիմնական զբաղմունք էր: Որպես կանոն, նրանք հաստատվում էին խոշոր առեւտրական կենտրոնների եւ աշխույժ ճանապարհների մոտ: Այդ առումով Հայաստանը, թերեւս, բացառություն էր միջին դարերում: Հայաստանում առեւտրական ճանապարհներն անցնում էին խոշոր ամրոցների, բերդերի մոտով, առեւտրականները կանգ էին առնում իջեւանատներում, որոնք մեծ մասամբ վերահսկվում էին հայ իշխանական տների կողմից: Ապաստան կարող էին գտնել նաեւ հայ հոգեւորականների մոտ: Առեւտրականն իրեն ավելի անվտանգ, ավելի ապահով էր զգում՝ ընտրելով Հայաստանով անցնող առեւտրական ճանապարհները:

Հայաստանը, հատկապես Սյունիքը, Իրանի անմիջական հարեւանն էր, որի հետ դարերի ընթացքում ձեւավորվել էին որոշակի պատմամշակութային առնչություններ: Իրանն ամբողջ միջնադարում, նաեւ ավելի ուշ շրջանում եղել է Հնդկաստանի եւ Չինաստանի հետ առեւտրում մեծ դերակատարություն ունեցող երկրներից մեկը: Հայաստանը միջնադարում պարսիկ առեւտրականների համար ինչ-որ տեղ ծանոթ եւ ամենակարեւորը՝ կանխատեսելի երկիր էր:

Հայ բնակչությունը երբեք իր համար չի ընտրել քարավանները թալանելու միջոցով ապրուստ հայթայթելու եղանակը: Հետաքրքիր է, որ արաբական աղբյուրները հատկապես քրդերին են համարում «մեծ գլխացավանք» առեւտրական քարավանների համար, որոնք ավազակությունը դարձրել էին հիմնական զբաղմունք:

Միջին դարերում Հայաստանում պահպանվել էր ազնվականական դասը, որը կառավարում էր երկիրն այդ դասին բնորոշ հատկանիշներով, որոնք ավելի շուտ զինվորական արժանապատվությամբ, ազնվությամբ էին ուղղորդվում, քան տնտեսական շահույթով: Ուստի առեւտրականները Հայաստանում ստիպված չէին անընդհատ մաքսեր, հարկեր վճարել այն ծավալով, ինչ ծավալով վճարում էին Միջագետքում կամ Լեւանտի երկրներում:

Վահանավանքից հայտնաբերված դրամները բնորոշ են միջնադարյան Հայաստանի դրամաշրջանառությանը: Դրամների առաջին խումբը արաբական խալիֆայության աբբասյան ժամանակաշրջանի կտրտած դիրհեմներ են, որոնք շրջանառվել են X-XI դդ.:

Աբբասյանների օրոք աննախադեպ զարգացում են ապրում առեւտրական հարաբերությունները, որի արդյունքում էապես աճում է դրամի պահանջը շուկայում: Դրամական հարաբերությունների աշխուժացումը հանգեցնում է նրան, որ Աբբասյան խալիֆայության դրամահատարանները չեն հասցնում դրամով ապահովել շուկայում դրանց նկատմամբ աճող պահանջարկը: Գիտակցելով դրամի փչացման վնասարար ազդեցությունը երկրի տնտեսության մեջ, խալիֆները ձեռնպահ էին մնում դրամի մեջ արծաթի տոկոսը պակասեցնելուց, որը կհանգեցներ արաբական դրամի նկատմամբ ավանդական վստահությունը կորցնելուն: Առեւտրական հարաբերությունների աշխուժացման արդյունքում մեծանում են արաբական արծաթե դրամի շրջանառության սահմանները՝ IX-X դարերում ընդգրկելով նաեւ հյուսիսային եւ արեւելյան Եվրոպայի երկրները:

Նման պայմաններում Արաբական խալիֆայությունն անընդհատ կարիք էր զգում արծաթե նոր դրամական էմիսիաների, սակայն դրամի նկատմամբ շուկայում աճող պահանջարկը չէր համապատասխանում տնտեսական եւ քաղաքական ճգնաժամ ապրող կայսրության դրամական թողարկման հնարավորություններին: Դրան գումարվում էր նաեւ այն, որ արաբական արծաթե դիրհեմի շարժը միջազգային շուկայում միակողմանի բնույթ էր կրում: Հյուսիսային եւ արեւելյան Եվրոպայի երկրները, որոնք սեփական դրամ չէին թողարկում, «կլանում էին» արաբական բարձրորակ դրամը: Վերջինս շրջանառության միջոց լինելուց աստիճանաբար վեր էր ածվում կուտակման միջոցի, որն էլ ի վերջո հանգեցրեց միջազգային շուկայում արաբական դրամի զանգվածի նվազմանը: Աբբասյաններն, ի վիճակի չլինելով վերահսկել կայսրության ներսում դրամական քաղաքականությունը, միաժամանակ ապահովելով շուկայում արծաթե դրամի աճող պահանջարկը, ստիպված էին թույլ տալ նաեւ սասանյան եւ իրենց նախորդ հարստության՝ օմայանների դրամների շրջանառությունը:

IX-X դարերի նման դրամական գանձերը՝ գտնված Հայաստանից եւ նրան հարակից տարածքներից, բացառիկ երեւույթ չեն: Այդպիսի դրամական գտածոներից է, օրինակ, Սիսիանի գանձը՝ բաղկացած շուրջ 2000 մետաղադրամից, որն ընդգրկում է սասանյան, արաբա-սասանյան, թաբարիստանյան, օմայան, աբբասյան թողարկումներ (ՀՊԹ 19512):

X դարի սկզբում արեւելքում շարունակում է նկատվել արծաթե դրամական թողարկումների նվազում, որի պատճառով բարձրանում է լիարժեք կշռով արծաթե դիրհեմի գինը: Դրա արդյունքում շրջանառության մեջ հայտնվեցին արծաթե դրամների կտրտված մանր միավորներ: Առաջին հայացքից կարող է թվալ, թե դրանք անկանոն կտրտված բեկորներ են, սակայն երբ կշռում ենք առանձին-առանձին, պարզ է դառնում, որ այդ մանր միավորները կազմում են լիարժեք դիրհեմի 1/2, 1/4 կամ 1/5 մասը եւ շրջանառության մեջ էին գտնվում որպես դիրհեմի կոտորակված մանր միավորներ: Վերոհիշյալ միավորներից ամենատարածվածը դիրհեմի կշռի 1/5 մասը կազմող դրամական միավորն էր, այսպես կոչված խումասի դիրհեմը, որն արաբերեն նշանակում է հինգերորդական դիրհեմ:

Հայաստանը միանգամից չընդգրկվեց աբբասյանների դրամական տնտեսության եւ շրջանառության ոլորտում: Դրա մասին է վկայում այն փաստը, որ Աբբասյան առաջին խալիֆ ալ-Աբբաս ալ-Սավվահի (749-754թթ.) օրոք չեն թողարկվել դրամներ Արմինիա նահանգի որեւէ դրամահատարանում: Հայաստանի տարածքից գտնված դրամական առանձին գյուտերի եւ գանձերի մեջ բացակայում են ալ-Աբբասի ժամանակաշրջանի դրամները:

Այդ առումով բացառիկ արժեք է ներկայացնում 1965 թվականին Սյունիքի մարզի Արծվանիկ գյուղից հայտնաբերված ալ-Աբբասի ոսկե դինարը, թողարկված հիջրայի 135 (752/53) թվականին, որը եւս մեկ անգամ ընգծում է Սյունիքի դերակատարությունը միջազգային առեւտրում:

Դրամների մյուս խումբը ներկայացնում է XIII դ. Հայաստանի դրամաշրջանառությանը բնորոշ դրամներ՝ Իկոնիայի /Ռումի/ սելջուկների եւ մոնղոլական՝ Հուլավույան արծաթե դիրհեմներ: Հայաստանի տարածքից հայտնաբերված բազմաթիվ գանձերը՝ նման դրամների պարունակությամբ, ցույց են տալիս, որ չնայած Իկոնիայի սուլթանները ճանաչեցին մոնղոլների գերիշխանությունը, սակայն նրանց դրամները դուրս չեկան շրջանառությունից: Նրանց դրամներն աչքի են ընկնում բացառիկ որակով՝ շնորհիվ դրամի մեջ արծաթի բարձր պարունակության: Վահանավանքից հայտնաբերված սելջուկյան դրամը հատվել է Իզ ադ-դին Քայ-Քաուս II, Ռուքն ադ-դին Կըլըջ-Արսլան IV, Ալա ադ-դին Քայ-Քոբադ II (համատեղ) օրոք (1249-1257թթ.) Սվասում հիջրայի 647 թվականին:

Մոնղոլական հուլավույան առաջին թողարկումները երկլեզվյան են՝ արաբերեն եւ ույղուրերեն: Նրանք մի կողմից մահմեդական աշխարհում նոր ասպարեզ իջած իշխանություն էին, սակայն մյուս կողմից մնում էին Չինգիզ խանի հիմնած կայսրության օրենքների հետեւորդ: Մինչեւ Ղազան Մահմուդ խանի 1296 թվականի դրամական բարեփոխումը բոլոր հուլավույան խաները դրամ էին հատում մեծ կաանի՝ բոլոր մոնղոլների առաջնորդի անունից: Վահանավանքից գտնված ամենավաղ հուլավույան դրամներն այսպես կոչված «անանուն» դիրհեմներն են, որոնց վրա որեւէ տիրակալի անուն չի արձանագրված, այլ միայն տիտղոսը՝ մեծ կաան:

Հուլավույան մյուս դրամները հատվել են Աբաղա խանի(1264-1284թթ), Արղուն խանի(1284-1291թթ) եւ Քեյխաթու խանի (1291-1295թթ) անվամբ, որոնց վրա խաչի պատկեր կա եւ արաբերեն գրություն՝ քրիստոնեական բովանդակությամբ. Հանուն հոր եւ որդու եւ սուրբ հոգու: Նման դրամները հատվում էին Վրաստանում եւ Հայաստանում՝ տեղի քրիստոնյա բնակչությանը սիրաշահելու համար: ■

**Հ.Գ.** Վահանավանքյան դրամների նմուշները՝ 21-րդ էջում:

# Հին հուշարձաններ Վահանավանքի տարածքում

**Սկիզբը՝ էջ 17**

Սյունիքի նախկին խորհրդտնտեսության եւ այլ վայրերից հայտնաբերվածներին: Դրանք բնորոշ են նշված տարածաշրջանի ուշ բրոնզեդարյան (մ.թ.ա. 13-12-րդ դդ.) խեցեղենին: Դրանց նախատիպերը մեզ հայտնի են Թասի լեռնանցքի վաղ բրոնզեդարյան եւ Տաթեւի Քրիանուց վայրի միջին բրոնզեդարյան հուշարձաններից, որոնք մտնում են միեւնույն մշակութային գոտու մեջ:

Առաջ անցնելով նշենք, որ Վահանավանքի հին դամբարանի նյութերը վկայում են հայ ժողովրդի տեղաբնակ լինելու անհերքելի փաստի մասին: Այդ առիթով կատարված հետախուզական ուսումնասիրություններով պարզվեց, որ վանքից հարավ-արեւելք ընկած տարածքում եւս կա բրոնզեդարյան ընդարձակ դամբարանադաշտ, որտեղից Վահանավանք տանող ճանապարհի լայնացման աշխատանքների ժամանակ պատահականորեն գտնվել է բրոնզե դուր պատրաստելու կավե կաղապար, որի մասին՝ ՀՀ ԳԱԱ «Լրաբեր» հանդեսում տպագրվել է հնագետ Գրիգոր Կարախանյանի հոդվածը:

Վահանավանքից հյուսիս՝ մոտ 300 մետր հեռավորության վրա՝ «էլեկտրոն» նախկին պիոներական ճամբարի բակում, անցյալ դարի 80-ական թվականներին՝ շինարարական աշխատանքներ կատարելու ժամանակ, բացվել են հին դամբարաններ եւ ավերվել: Հնագետ Հուսիկ Մելքոնյանի օգնությամբ մեզ հաջողվեց ձեռք բերել ավերված դամբարանի նյութերից եւ ստուգողական պեղումներով հայտնաբերել նաեւ նորերը:

Այստեղ դամբարանները հազարաշեն կամ ղուբաշեն ծածկածեւ ունեն, սակայն ծավալով փոքր են: Հայտնաբերված կավամանների մեջ կա 27 կավան, բրոնզե երեք դաշույնաձեւ շեղբ, թվով 9 հատ բարակ լարից պատրաստված օղակ, երկու մատանի, բեւեռաձեւ մեկ մեծ կոճակ, ոսկրե սանրատամ տեսքի առարկա, խխունջի խեցուց պատրաստված կախազարդ, ագաթից, դաշտային շաղախից եւ ոսկորից ուլունքներ:

Կավամանները հիմնականում նուրբ կառուցվածք ունեն, թեեւ պատրաստված են ձեռքով, դրանցում նկատելի են 5 տարբերակիչ գծեր: Կան լայն եւ տափակ կանթերով՝ նման Վահանավանքից հայտնաբերվածներին, տանձաձեւ բաժակներ, ելուստաձեւ կամ սեղանաձեւ կեղծ կանթերով գավաքներ, կլոր կանթերով կճուճներ, երկարավիզ, զույգ մեծ կանթերով վազաներ: Բացի մեկից՝ բոլորը գորշ գույնի են: Կավամաններից ուշադրության է արժանի կարմիր գույնի, տափակ ու մեծ կանթով, ուռուցիկ իրանով կճուճը, որը բացառիկ նմանություն ունի Արարատի մարզի Վանաշենի ուշ բրոնզեդարյան դամբարաններից մեր կողմից հայտնաբերված կճուճներին, որոնք կարծես նույն վարպետի ձեռքի գործ լինեն եւ կարող են այդ երկու մշակութային օջախների փոխկապերին հիմք ծառայել:

«էլեկտրոն» ճամբարից հայտնաբերված ամենաուշագրավ իրերը թերեւս բրոնզե դաշույնաձեւ շեղբերն են: Դրանք դաստակների փոխարեն ունեն շեղբին միաձույլ ելուստ-պոչուկներ: Շեղբերից մեկի ծայրը կլոր է, սակայն լավ սրված, մյուսինը՝ գոգավոր, կարծես երկփեղկ: Վերջինս ավելի փոքր է, պոչուկի հետ միասին ունի 6,5 սմ երկարություն, 2,3 մմ լայնություն, նման է նշտարի: Դրանց հետ հայտնաբերված բրոնզե օղերը բարակ են, պատրաստված են 1,5-2մմ հաստությամբ լարից եւ գործածվել են որպես կոտրվածքներ կապելու, ամրացնելու միջոցներ: Պարզվում է, որ վիրահատման մետաղե գործիքներ առաջին անգամ հայտնաբերվում են Վահանավանքի տարածքից: Այն հաստատել է անվանի ազգագրագետ, ճանաչված գիտնական, Միկլուխո Մակլայի անվան ազգագրական ինստիտուտի Արեւելքի երկրների բաժնի վարիչ, ակադեմիկոս Սերգեյ Հարությունովը:

Մյուս կողմից՝ պարզվում է, որ Վահանավանքի տարածքում եղել է մետաղամշակման հին օջախ: Եվ վերջապես, հայերի տեղաբնակ լինելու անհերքելի փաստ է Վահանավանքի կրկնակի թաղմամբ դամբարանը: ■

1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

# Վահանավանքի մետաղաձուլական հնոցները

Լուսանկարը՝ Ա. Նավասարդյանի

**ՀՈՒՍԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ**

**«Երիտասարդ գիտնականների կոնֆերանսի զեկուցումների թեզիսներ», Երեւան 1980**

1. Հայկական ՍՍՀ ԳԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի Կապանի հնագիտական արշավախմբի կողմից 1977-1978 թվականներին Վահանավանքի պեղման եւ բարեկարգման ընթացքում, Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու գավթի եւ սյունասրահի արեւմտյան հատվածում, հնագիտական երկրորդ շերտում, բացվեցին տնտեսական նշանակություն ունեցող կառույցի հետքեր: Կառույցը մետաղաձուլական արհեստանոցային համալիր է, որը ներառում է երկաթի հալման երկու հնոց, փոքր օջախ եւ թոնիր:
2. Հնոցներից առաջինը գտնվում է գավթի արեւմտյան մասում՝ շարվածքից 2.2 մետր հեռավորությամբ: Այն խիստ քայքայված է, պահպանվել են միայն հենապատերը: Երկրորդ հնոցը զետեղված է սյունասրահի արեւմտյան մասում՝ արտաքին պատից երկու մետր հեռավորությամբ: Շերտագրական առումով այն ավելի բարձր է տեղակայված, քան առաջինը, համեմատաբար լավ է պահպանված եւ հնարավորություն է ընձեռում ավելի ճիշտ պատկերացում կազմելու առաջին հնոցի մասին: Հարկ է նշել, որ եթե երկրորդը կիսաշրջան կտրվածք ունի, ապա առաջինն ավելի փակ է: Հնոցի ստորին մասը հիմք է տալիս ենթադրելու, որ այն ծառայել է մետաղ ձուլելու նպատակին: Դրա համար իբրեւ կռվան կարող է հանդիսանալ այն պարագան, որ նրա առաջին մասում թրծված աղյուսներով եւ կղմինդրի բեկորներով պատրաստված է 10 սմ խորությամբ մի ավազան:
3. Խարամը դուրս բերելու համար ստորին մասում բացվածքով եւ ավազանով միջնադարյան հնոցներ հայտնի են բազմաթիվ հնավայրերից:
4. Վահանավանքի տարածքում հայտնաբերված տնտեսական կառույցն ու հնոցները հույժ հետաքրքիր են: Հայտնի է, որ միջին դարերում մետաղների մշակումը կենտրոնացված էր արհեստագործության խոշոր կենտրոններ հանդիսացող քաղաքներում եւ խոշոր իշխանական ամրոցների արհեստանոց-գործատներում: Վահանավանքում բացված մետաղաձուլական արհեստանոցը գալիս է հաստատելու այն իրողությունը, որ միջնադարյան Հայաստանի վանական հաստատությունները, որպես ավատատիրական ինքնատիպ տնտեսություններ, ունեցել են գործատներ, որոնք իրենց արտադրանքով բավարարել են ոչ միայն տվյալ միաբանության, այլեւ շրջակա բնակավայրերի այս կամ այն տնտեսական պահանջները:

**Հ.Գ.** Սույն հոդվածը տպագրվել է 1980թ-ին, 2011թ. հոկտեմբերի 26-ին Աղավնի Նավասարդյանի հետ հանդիպման ժամանակ Հուսիկ Մելքոնյանն արել է հետեւյալ հավելումը.

*Ինչպես միջնադարյան յուրաքանչյուր վանական համալիր, այնպես էլ Վահանավանքը, ունի իր գործատները: Դրանք ուղղված են տարբեր խնդիրներ լուծելու եւ ունեն ամենատարբեր գործառույթներ: Այս դեպքում գործատուն են հանդիսանում Վահանավանքի տարածքում հայտնաբերված մետաղաձուլական վառարանները, որոնք նախատեսված են ոչ միայն երկաթ, այլեւ գեղարվեստական մետաղ ձուլելու համար: Վառարանները լինում են երկու տեսակ՝ առաջինը՝ մետաղ ձուլելու, իսկ երկրորդը՝ արդեն ձուլակտորից պատրաստի առարկաներ ստանալու համար: Վահանավանքում հայտնաբերվածները պատկանում են երկրորդ տիպին: Դրանք ծառայել են եկեղեցական ծիսակատարությունների համար անհրաժեշտ իրեր՝ խաչեր, զանգեր, բուրվառներ, կանթեղներ եւ այլ պարագաներ պատրաստելու նպատակով: Հայաստանի տարածքում այդպիսի վառարանների օրինակները շատ չեն, իսկ ամբողջական վիճակում դրանք չեն հանդիպում: Մետաղաձուլական վառարաններն ամբողջական լինում են միայն ձուլման գործընթացի ժամանակ, որից հետո հենապատերից մեկը քանդվում է՝ ձուլածո առարկաները դուրս բերելու նպատակով:*

*Իհարկե, ողջունելի է այսօր արդեն տեսնել Վահանավանքը վերականգնված, որոշ չափով նաեւ տարածքը բարեկարգված, բայց, ըստ էության, վերականգնողական աշխատանքների ժամանակ վերացվել է Հայաստանի 10-11-րդ դարերի արտադրողական համալիր՝ երկու մետաղաձուլական հնոց: Այս հարցում վերականգնողների կողմից թերացում է եղել:*

**ԱՂԱՎՆԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ**

# Древняя литейная форма из Сюника

**ГРИГОР КАРАХАНЯН**

**ОВАНЕС АЗИБЕКЯН**

**Изучение бронзовой металлургии представляет большой интерес для науки. При археологических раскопках на территории Армении обнаружено огромное количество бронзовых литейных изделий (топоры, кинжалы, мечи, копья, и др.), позволяющих проследить уровень развития древней культуры Армении. Еще больший интерес представляют находки древних литейных форм, помогающие постигнуть тайны древних металлургов, литейщиков.**

Լուսանկարը՝ Ա. Նավասարդյանի

В Армении и соседних странах выявлена значительная коллекция литейных форм эпохи бронзы. В связи с этим интересна литейная форма меча, недавно обнаруженная в историческом гаваре (области) Капан, современном Кафанском районе Армянской ССР, при проведении дороги Кафан-Каджаран. Найденная каменная форма представляет собой уникальный и пока первый образец литейной формы мечей. Она, к сожалению, сохранилась фрагментарно. Форма изготовлена из полукруглого в сечении базальта. Длина сохранившейся части - 12 см, наибольшая ширина - 6,5 см, толщина - 5,5 см. Рабочая полированная поверхность формы плоская, хорошо обработанная, с глубокими четкими углублениями для металла. Тыльная сторона также хорошо обработана. Рабочая поверхность имеет следы длительного употребления. На боковых кромках формы сделаны вертикальные, узкие прорези, штифтовые отверстия, указывающие на способ скрепления со второй створкой формы. На плоской поверхности формы прослеживаются две неглубокие, слабо выраженные прорези, канавки. Сохранившаяся часть формы позволяет предположить, что в ней изготовлялись мечи с длинным массивным суживающимся клинком, с рамочной рукоятью. О последнем свидетельствует оставшееся углубление, отходящее от -рукояти. Вместе с формой обнаружен элемент модели повозки- глиняное колесико с центральным отверстием диаметром около 4 см. Одна сторона его плоская, другая-слегка выпуклая. На выпуклой поверхности, на равном расстоянии друг от друга, изображены три свастики, являющиеся обычными символами солнца. Привлекает внимание точечная техника их нанесения, характерная для орнаментов керамики этого времени.

Исходя из сказанного, точка зрения, высказанная еще А. А. Иессеном, согласно которой мечи переднеазиатского типа, встреченные от Эгеи до восточных пределов Иранского плато, считались в Закавказье привозными, может быть теперь частично пересмотрена. Мечи -шестого типа (по классификации М. Н. Погребовой), обнаруженные в могильниках Кизил Банкал и в Артике, являются работой местных мастеров. Подобные мечи датируются второй половиной II тысячелетия до н. э. Форма и глиняное колесико со свастикой были найдены в помещении, представляющем собой, видимо, мастерскую литейщика. Точно определить площадь помещения оказалось невозможным, т. к., к сожалению, установленные здесь столбы электропередачи создают неблагоприятные для археологических обследований условия.

Новонайденная каменная форма мечей расширяет наши знания по древней металлургии Армении и указывает на необходимость дальнейших более обстоятельных археологических исследований на территории исторического Капана, одного из важных очагов бронзовой металлургии Армении.

**ԱՄՓՈՓՈՒՄ** ■ *Սյունիքի պատմական Կապան գավառում, Ղափանից Քաջարան տանող ճանապարհի շինարարության ժամանակ հայտնաբերվել է մ.թ.ա. II հազարամյակի երկրորդ կեսի առաջավորասիական տիպի սուր ձուլելու քարե կաղապարի վերին մաս: Գտածոն հնարավորություն է տալիս հանգելու հետեւության, որ սրերի առաջավորասիական տեսակներից մեկը, որը մինչ այժմ բերովի է համարվել, արտադրվել է Հայաստանում: Ձուլման կաղապարը գտնելու հանգամանքները թույլ են տալիս ենթադրելու, որ այստեղ եղել է սուր ձուլելու արհեստանոց, որ մետաղի հանքերով հարուստ պատմական Կապանը տակավին բրոնզե դարում հայտնի է եղել ձուլող, զինագործ վարպետներով:*

Լուսանկարը՝ Ա. Նավասարդյանի

**Սուր ձուլելու քարե կաղապարի վերին մասը, որ պահվում է «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի հնագիտության ֆոնդում:**



1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ
ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

# Առեղծված. 40 տարվա պեղումներից հետո այդպես էլ չի կազմվել եւ հանրությանը ներկայացվել վահանավանքյան գրածոների ցանկը

ՎԱՐՇԱՄ ԱՎԵՏՅԱՆԻ ՀԱՎԱՔԱԾՈՒԻՑ | Պահվում է Գավառի պետական համալսարանի պատմության թանգարանում (խեցեղեն իրեր)



ԱՇՈՏ ՀԱՅՐՈՒՄՅԱՆԻ ՀԱՎԱՔԱԾՈՒԻՑ | Վահանավանքյան մետաղադրամ
Ձնարակված սափոր
Ձանգակ՝ հայտնաբերված Վահանավանքի տարածքում

ՊԵՂԱԾՈՆԵՐԻ ՄԻ ՄԱՍԸ ՊԱՀՊԱՆՎՈՒՄ Է ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐՈՒՄ, ԿՐԹՕՋԱԽՆԵՐՈՒՄ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ ՄԱՐԴԿԱՆՑ ԱՆՁՆԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒ-ՆԵՐՈՒՄ:

ԿԱՊԱՆԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԱՎԱՔԱԾՈՒԻՑ | 1. Ձնարակված սափոր՝ քառականք - միջնադար, 2. Կարաս X - XI դարեր, 3. Պայտ, 4. Երկաթե գամեր, 5. Ձնարակված ափսե, 6. Տեգի երկաթյա ծայրակալներ



1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

# ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

**Վահանավանքյան դրամներ, որոնք գտնվել են Սուրբ Աստվածածին եկեղեցու երկրորդ հարկի տափարակից եւ պահվում են Հայաստանի պատմության պետական թանգարանում**

**Վահանավանքում հայտնաբերված կարասներ եւ կճուճներ**



**Գունազարդ խեցեղենի բեկորներ՝ հայտնաբերված Վահանավանքում**



**Հ.Գ.** Վահանավանքյան դրամների մասին Արմինե Զոհրաբյանի հոդվածը՝ սույն համարի 18-րդ էջում:

1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ՀԱՐՅԱԶՐՈՒՅՑ ՀԱՄԱՐԻՆ

# ՊԱՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ. «Պետք է հստակ խնդիր դրվի, որպեսզի Վահանավանքում վերսկսվեն հնագիտական պեղումներ»

Վահանավանքում կատարված եւ մոտ 40 տարվա պատմություն ունեցող պեղումների, հայտնաբերված գտածոների ու հետագա հնարավոր պեղումների մասին է Արմինե Հարությունյանի զրույցը ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի տնօրեն Պավել Ավետիսյանի հետ:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**– Մոտ 40 տարի Վահանավանքում հնագիտական աշխատանքներ են կատարվել: Նախ՝ ի՞նչ արդյունքներ ունեցաք 40 տարվա աշխատանքի արդյունքում: Երկրորդ՝ Ձեզ բավարարո՞ւմ են այդ արդյունքները:**

– Հայաստանում շատ քիչ հուշարձաններ կան, որ տասնյակ տարիների ուսումնասիրության պատմություն ունեն. Վահանավանքն այդ եզակի հուշարձաններից է: Ընդհանրապես եթե ուսումնասիրվող հուշարձանն ընդարձակ տարածք է զբաղեցնում, երկարատեւ աշխատանքներ պահանջում, ապա, բնականաբար, պետք է երկար պեղել: Հայաստանի տարածքում նման հուշարձաններից են Դվինը, Արտաշատը, Մեծամորը, որտեղ տասնյակ տարիների ընթացքում պեղումներ են կատարվել: Սակայն որոշակի աշխատանքներ կատարելուց հետո գալիս է պահը, երբ պետք է այդ աշխատանքների ամբողջական ամփոփում կատարել: Վահանավանքը բացառիկ է այն առումով, որ, ի վերջո, այդ վանական համալիրի պեղումների վերջնական արդյունքում բացվեց հուշարձանը եւ վերականգնվեց: Հայաստանի համար դա քիչ հայտնի լավագույն օրինակներից է: Արդյունքների մասին խոսելիս պետք է ասենք, որ այսպիսի մի խնդիր կա. երբ մենք պեղում ենք հատկապես միջնադարյան հուշարձաններ, ինչպես ասենք՝ միջնադարյան վանական համալիրներ, եկեղեցիներ, վանքեր, ապա մեր գերխնդիրն է լինում բացել այդ համալիրը, ճարտարապետական հուշարձանը: Բայց վերջին հաշվով Վահանավանքի պեղումներն ավելի շատ պատմական միջավայրի վերականգնման խնդիր էին հետապնդում:

**– Վահանավանքում հայտնաբերված գտածոների մի մասը հանգրվանել է Կապանի երկրագիտական թանգարանում, մյուս մասը՝ այլ թանգարաններում: Ասում են, թե որոշ գտածոներ տեղ են գտել Ձեր ինստիտուտում: Նախ՝ կա՞ հստակ հաշվառում, թե որտեղ են Վահանավանքի գտածոները: Երկրորդ՝ հասցրե՞լ եք գիտական մշակման, ուսումնասիրման ենթարկել դրանք:**

– Վահանավանքից, զուտ հնագիտական տեսակետից, պետք է որ շատ քիչ գտածոներ լինեն հայտնաբերված: Հիմնական մասը պետք է որ Կապանի երկրագիտական թանգարանում լինի, ես չեմ կարծում, որ այլ թանգարանների լինի հանձնված՝ բացի դրամների մի հավաքածուից, որ գտնվում է ՀՀ պատմության պետական թանգարանում: Ես պահանջեցի, որ պրոֆ. Գրիգոր Գրիգորյանն այդ դրամները հանձնի Պատմության պետական թանգարան, որովհետեւ այնտեղ են պահվում Հայաստանի մարզերից բերված տարբեր դրամական հավաքածուներ: Ընդհանրապես պեղումների ընթացքում հայտնաբերված նյութերը մեր ինստիտուտում ժամանակավոր են պահվում. ինստիտուտը չունի թանգարան: Այստեղ բերվում, վերամշակվում եւ հետազոտվում են, գուցե երկար տարիներ կմշակվեն, բայց մենք պարտավոր ենք դրանք հանձնել որեւէ թանգարան: Հետազոտելուց, վերամշակելուց, ուսումնասիրելուց հետո միայն, եթե դրանք թանգարանացման ենթակա նյութեր են, հանձնում ենք թանգարան: Պեղումների ընթացքում հսկայական քանակությամբ նյութեր ենք հանում, եւ ոչ բոլոր նյութերն են, որ պետք է հանձնենք թանգարան. դրանք հնագետների համար ուսումնասիրության նյութեր են, եւ հետազոտվելուց հետո այդ նյութերը նորից թաղվում են հնավայրի տարածքում, իսկ ինչ վերաբերում է Վահանավանքի գտածոների հստակ հաշվառմանը, ապա այդ մասին պետք է հարցնել թանգարանին: Գտածոների առումով ես չեմ կարծում, որ այդքան մեծ արժեքներ պետք է լինեն:

**– Արդյո՞ք պեղումների եւ հնագիտական աշխատանքների ընթացքում այլ արժեքներ, բացի հանրությանը ներկայացրած իրերից, չեն հայտնաբերվել:**

– Եթե այսօր Վահանավանքի տարածքում շարունակվեն պեղումները, բնականաբար, էլի ինչ-որ բաներ կհայտնաբերվեն, որովհետեւ համատարած չի պեղվել, պեղվել են ինչ-որ հատվածներ: Ըստ պեղող հնագետի՝ դեռ այնտեղ ինչ-որ շերտեր կան, որ ստուգողական աշխատանքների կարիք ունեն: 1990-ական թվականներից Վահանավանքի պեղումներ մեր ծրագրերում արդեն չկան, ժամանակին դրանք համարվել են ավարտված: Մեր ուսումնասիրող հնագետները, վիմագրագետ Գրիգոր Գրիգորյանը շարունակաբար այցելել են, որովհետեւ դա իրենց՝ այսպես ասած երկար տարիների քրտինքի արդյունք է, եւ առայժմ նրանք շարունակում են ուշադրության կենտրոնում պահել այդ համալիրը:

**– 1960-ական թվականներին Սյունիքի Գրիգոր I թագավորի եւ Դինար թագուհու գանգերը պրոֆ. Անդրանիկ Ճաղարյանի կողմից հանվել ու տեղափոխվել են Երեւան: Դեմքերը վերականգնելուց հետո գանգերի ճակատագիրը մնացել է անհայտ: Շրջանառվում է երկու վարկած՝ ա. իբր դրանք թաղված են Ձեր ինստիտուտի բակում, բ. իբր դրվել են վերականգնված բնօրինակների ներսում եւ պահպանվում են Սարդարապատի ազգագրության թանգարանում:**

– Ես չեմ կարծում, որ այն թաղված լինի մեր ինստիտուտի բակում, որովհետեւ այս շենքը նախ՝ 60-ական թվականներին այստեղ չէր, միգուցե Ճաղարյանն իր մո՞տ է պահել: Բայց ես հստակ պատասխան չեմ կարող տալ:

**– Որքանով տեղյակ ենք, պեղումների ընթացքում Վահանավանքում հայտնաբերվել են նախաքրիստոնեական մշակույթի նմուշներ: Կարելի՞ է ենթադրել, որ այդ տարածքում եղել են հեթանոսական շրջանին վերաբերող պաշտամունքային վայրեր:**

– Գրիգոր Գրիգորյանը պեղումների ժամանակ Վահանավանքի շրջակայքում հայտնաբերել է նաեւ ավելի վաղ շրջանի նյութեր, եթե չեմ սխալվում, այդ աշխատանքներին մասնակցել է պատմաբան Վարշամ Ավետյանը, կցկտուր հրատարակություններ կան, որոնցից ելնելով կարող ենք արձանագրել, որ այդ տարածքում կան ավելի վաղ շերտեր. ի՞նչ են այդ շերտերը, ի՞նչ կառույցներ են, ոչինչ արձանագրված չկա եւ ասել, թե դրանք պաշտամունքային վայրեր են եղել, չի կարելի, պետք է պեղվի, չափագրվի, որոշակի աշխատանքներ կատարվեն, որպեսզի նման եզրահանգում արվի: Ես կարծում եմ՝ դրանք դամբարաններ են, հնարավոր է, որ այնտեղ թաղումներ են արվել:

**– 40-ամյա հնագիտական աշխատանքները, որքանով հասկանում ենք, չեն կարող բոլոր առեղծվածների պատասխանները տալ: Եվ բազմաթիվ հարցեր մնացին չպարզաբանված: Օրինակ՝ վանական համալիր հասկացությունը ենթադրում է այլ՝ օժանդակ շինությունների առկայություն եւս: Մինչդեռ դրա վերաբերյալ մենք նոր տեղեկություններ չունենք:**

– Ես դժվարանում եմ այդ հարցի պատասխանը տալ, քանի որ ինքս այդ պեղումներին չեմ մասնակցել. այդ հարցի պատասխանը կարող է տալ այնտեղ պեղումներ կատարած մասնագետը, մենք այստեղ՝ ինստիտուտում, նման հարց չենք քննարկել:

**– Չե՞ք կարծում, որ Ձեր ինստիտուտի գիտական զեկույցը (կամ հաշվետվությունը)՝ անցած 40 տարում կատարած հնագիտական աշխատանքների մասին, պետք է մարդկանց ավելի մոտեցնել. ասենք՝ հրատարակել մեր թերթում, որը Սյունիքի մարզում ընթերցում են՝ նկատի ունենալով, որ Վահանավանքի պեղումները շատերին են հետաքրքրել: Կամ՝ չե՞ք կարծում, որ արժեր առանձին գրքույկով հրատարակել: Ծանոթ ենք հարգարժան պրոֆեսոր Գրիգոր Գրիգորյանի գրքին: Դա, կարծեք, մեր հարցերի ամբողջական պատասխանը չի տալիս:**

– Եթե հուշարձանը պեղում է որեւէ մասնագետ, ապա հուշարձանի գիտական մեկնաբանության, հուշարձանի պեղումների արդյունքները հրատարակելու մենաշնորհը, այսինքն՝ հեղինակային իրավունքը պատկանում է այդ մասնագետին: Նա է պարտավոր եւ իրավունք ունի պեղումների արդյունքները հրապարակել, իհարկե եթե դրանք այն չափի են կուտակված եւ ինչ-որ խնդիր են լուծում: Իմ պեղած նյութը ես պետք է ներկայացնեմ. եթե պեղմանը մասնակցած մասնագետը պեղումների մասին ասելիք ունի, ապա այդ դեպքում արշավախմբի ղեկավարի եւ հնագիտության ու ազգագրության ինստիտուտի հետ համատեղ կարող է որոշում ընդունել: Այսինքն՝ ինչ արել է ժամանակին պրոֆ. Գրիգորյանը, դա է արել, եւ եթե այլ բան չի գրել, ուրեմն հարմար չի գտել, ժամանակին, ըստ երեւույթին, զեկուցել են: Վահանավանքի պեղումները խորհրդային իշխանության քանդվելուց հետո այս ինստիտուտի ծրագրերի մեջ չեն մտնում:

**– Ի՞նչ ծրագրեր ունեք Վահանավանքի տարածքում հետագա հնագիտական աշխատանքների վերաբերյալ: Եվ, առհասարակ, հնագիտական առումով՝ Վահանավանքին առնչվող ո՞ր խնդիրներն են կարեւոր, առաջնային:**

– Հուշարձանները պատկանում են մշակույթի նախարարությանը: Եթե կա արդեն վերականգնված հուշարձան, եւ եթե այս կամ այն գիտական կազմակերպությունը կամ գիտնականը որեւէ հետաքրքրություն ունեն այդ հուշարձանի նկատմամբ, ապա պետք է հստակ ծրագիր կազմեն եւ հայտով դիմեն մշակույթի նախարարությանը, որ իրենց գիտական ծրագիրն իրականացնելու համար պեղումների խնդիր կա: Եթե մշակույթի նախարարությունը որոշի, որ պետք է ու հարմար է այնտեղ պեղումներ կատարել, թույլտվություն կտա, եւ հետո կսկսվեն պեղումները: Ես՝ որպես ինստիտուտի տնօրեն, ասում եմ, որ այն, ինչ արվել է Վահանավանքի վերականգնման համար, ըստ երեւույթին արդեն բավարար է, եւ քանի որ մշակույթի նախարարությունը հարմար է գտել, որ այն պետք է վերականգնվի, ապա այնտեղ որեւէ պեղումներ անելու նպատակն անհասկանալի կլինի: Եթե կան կառույցներ, որ հետագայում վերականգնելու խնդիր կունենան, ապա պետք է նախ՝ պեղումներ կատարել, ապա՝ մշակույթի նախարարությունը եւ մարզային ծառայությունները պետք է նման հարց բարձրացնեն, որպեսզի վերսկսվեն պեղման աշխատանքները: Իմ կարծիքով, Վահանավանքում նման գիտական խնդիր չկա, այսինքն՝ եթե հուշարձանը վերականգնվել է, ապա համարել են, որ բավարար են արդեն կատարված պեղումները: ■

ԱՅՑԵՔԱՐՏ

**Ծնվել է 1957թ. Թբիլիսիում, բայց վրացահայ չէ, այլ՝ տրոհմիկ մշեցու թոռ: Ապրել է Թալինի շրջանի գյուղ Ծաղկասարում, սովորել Թբիլիսիում, գյուղ Մաստարայում, 1975թ. ավարտել է Երեւանի Ռաֆֆու անվան դպրոցը եւ ընդունվել ԵՊՀ պատմության ֆակուլտետ, որն էլ ավարտել է 1980թ.: 1983թ. մինչեւ այսօր աշխատում է հնագիտության ոլորտում: 1983-1993թթ. աշխատել է Երեւանի պետական համալսարանում՝ հնագիտության եւ ազգագրության ամբիոնում, իսկ 1993 թվականից աշխատում է ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտում: 2006թ. նոյեմբերից առ այսօր աշխատում է այդ ինստիտուտի տնօրեն:**

1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՄԱՐԻՆ

# ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ. «Թե մինչեւ երբ է գործել Վահանավանքի միաբանությունը, հայկնի կդառնա ամբողջ հուշարձանախումբը պեղելուց հետո»

Հարցազրույց Կապանի հնագիտական արշավախմբի ղեկավար, ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի վիմագրության ամբիոնի վարիչ, դոկտոր, պրոֆեսոր Գրիգոր Գրիգորյանի հետ

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ



Լուսանկարը՝ Զ.Հանբարձումյանի

**– Պարո՛ն Գրիգորյան, մի առիթով ասել եք, որ Ձեր երազանքն էր Վահանավանքը տեսնել վերականգնված, ինչն այսօր իրականություն է դարձել: Այսօր կարո՞ղ ենք համարել, որ ավարտին են հասցվել Վահանավանքի վերականգնման աշխատանքները, եթե ոչ, ի՞նչն է պակասում:**

– Ամենեւին ո՛չ, որովհետեւ վանական համալիրի սյունասրահը, որտեղ ամփոփված են Սյունիքի ամենանշանավոր դեմքերի աճյունները, պիտի ծածկի տակ լինի: Սյունասրահը թերի է, սա համարում եմ վերականգնողական աշխատանքների ամենամեծ բացթողումը: Սյունասրահի արեւելյան հատվածը չի վերականգնվել: Եվ երկրորդ՝ եկեղեցու գավթի արեւմտյան հատվածում մետաղածուլական երկու վառարան կա, վերականգնման ժամանակ դրանք բարբարոսաբար վերացվել են: Իմ «Վահանավանք» (պատմահնագիտական ուսումնասիրություն) գրքում այդ վառարանների լուսանկարները կան: Կարծում եմ, որ վերականգնման ժամանակ պիտի գտնեին իրենց տեղը: Դրանք միակ ապացույցն էին այն բանի, որ վանական համալիրի կամարների ներքո ոչ միայն աղոթքներ են հնչել, այլեւ՝ սրեր ձուլվել: Մետաղամշակման արհեստանոց է հայտնաբերվել Կապան-Քաջարան հին մայրուղու՝ դեպի Վահանավանք գնացող ճանապարհի եզրին: Նույնիսկ սուր ձուլելու հատուկ կաղապար են գտել, այդ մասին հրապարակել է Գրիգոր Կարախանյանը: Վարդապետը ոչ միայն զբաղվել է գիտությամբ, այլեւ սուր է վերցրել՝ պաշտպանելու իր հայրենի եզերքը: Ա՛յ, այս մասին նաեւ կուզեմ, որ իմանա ընթերցողը: Ցավով պիտի ասեմ, որ չի տեղադրվել նաեւ արծվանիկցի վանահայր Գրիգորի տապանաքարը: Սեղանատունը երկհարկանի է եղել. այդ մասին արձանագրություններ կան:

**– Շահանդուխտ թագուհու կառուցած եկեղեցու վերաբերյալ էլ Դուք դիտողություններ ունեիք:**

– Ես ճարտարապետ Յուլի Թամանյանին բազմիցս ասել եմ, որ այդ եկեղեցու գավիթը սյուներ է ունեցել, եթե դրանք վերականգնեին, կդառնար փոքրիկ Գառնի:

**– Ձեր նշվածով ավարտվո՞ւմ են բացթողումները:**

– Վերականգնված եկեղեցին չունի վեմ քար, որի վրա պիտի դրվեն խաչը, Ավետարանը: Այստեղ շատ քարեր կան, մեկը կարելի է մշակել եւ տեղադրել:

**– Եվ ինչպես երեւում է, շրջակայքն էլ կարգին բարեկարգված չէ:**

– Ավելի լավ է՝ եղած բարեկարգումն էլ չանեին, բայց նշածս թերությունները վերացնեին:

**– Մենք խոսեցինք զուտ շինությունների մասին, բայց պետք չէ մասնագետ լինել՝ նկատելու, որ պեղումները վանական համալիրի տարածքում ավարտված չեն, այսինքն՝ մշակութային շերտը դեռ լրիվ բացված չէ: Մի առիթով Նիկողայոս Ադոնցն ասել է, որ մեր ժողովրդի պատմությունը հողի տակ է դեռեւս:**

– Պիտի ասեմ, որ Խորհրդային Միության փլուզումից հետո Վահանավանքն անուշադրության մատնվեց, ՀՀ գիտությունների ակադեմիան եւ մշակույթի նախարարությունը դադարեցրին ֆինանսավորումը, պատահել է՝ սենյակ ենք հայտնաբերել եւ ծածկել:

**– Ի՞նչ էր դա՝ գաղտնարա՞ն, պահե՞ստ, թե՞ մի այլ բան:**

– Մենք կարծում ենք, որ դա Սենեքերիմ թագավորի դամբարանն էր, ի դեպ, սյունյաց դիվանագետ թագավորներից մեկը, ով դավադրաբար սպանվեց Բաղաբերդում եւ թաղվեց Վահանավանքի արքունական դամբարանում, «ի շիրմի ընդ այլ թագավորսն»: Սենեքերիմի մայրը՝ Սոփիան, արձանագրություններում կոչված է «Աղվանից թագուհի»: Մեզ բախտ վիճակվեց հայտնաբերել նրա տապանաքարը՝ «Սոփի՝ աղվանից թագուհի, զոքանչ Գրիգոր թագավորի որդո Աշոտկա, մայր Շահանդխտո. թվ ՇԼ (1081)»:

Ի դեպ, զոքանչ բառն առաջին անգամ հիշատակվում է վիմագիր արձանագրությունների մեջ:

**– Մինչեւ պեղումներն ավարտին չհասցվեն, չենք կարող տալ Վահանավանքի լիարժեք պատմությունը, այդպես չէ՞:**

– Վանական համալիրի արեւելյան հատվածը պիտի պեղել, դա դեռ ամենը չէ, վերականգնողական աշխատանքների որակը եւս ինձ չի բավարարում: Տեղեր կան, որ արդեն թափվում են:

**– Ընդունված է ասել, որ մեր քրիստոնեական կառույցները շինվել են նախկին հեթանոսական պաշտամունքային տաճարների տեղում: Կարելի՞ է այս դեպքում էլ օգտագործել այդ տեսակետը:**

– Իհարկե, Վահանավանքում ծիսական անոթներ են գտնվել, բրոնզե ապարանջաններ, կնճռեներ, որոնք հեթանոսական ժամանակաշրջանին են պատկանում: Այս ամենը թույլ է տալիս ասել, որ Վահանավանքի վանական համալիրում եղել է հեթանոսական հնավայր:

**– Երբ նայում ես վերակառուցված եկեղեցուն, շինաքարի բազմազանություն է նկատվում, տարբեր շինաքար է օգտագործվել կառույցում: Ի՞նչն է բանը:**

– Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին կառուցվել է սպիտակ տրավերտինով կամ չեչաքարով, որ բերվել է վանքից ոչ հեռու գտնվող Գիրաքաղ կամ Գեղանուշ գյուղերի քարահանքերից: Իսկ 1046թ.՝ եկեղեցու նորոգման ժամանակ, օգտագործվել են մանրացված կրաքարի կարմրավուն սալաքարեր:

**– Վահանավանքի տեղն ու դերը հայ հոգեւոր կյանքում, ոմանք Վահանավանքը համարում են Սյունիքի հոգեւոր կենտրոն: Շահարկումներ կան այս հարցում: Նաեւ ինչո՞ւ Վահանավանքը չդարձավ հոգեւոր կենտրոն:**

– Վահանավանքը հոգեւոր կենտրոն ուզում էր դարձնել Վահան Սյունեցի Ձեւանշերյանը: Մասնատվածությունը թույլ չտվեց դառնալ հոգեւոր կենտրոն: 10-րդ դարի 40-ական թվականներին վանքի հիմնադիր Վահանի եղբորորդու՝ Վահան Ձեւանշերյանի (Ամենայն հայոց ապագա կաթողիկոսի (խմբ.) վանահայրության տարիներին ընդլայնվեցին Վահանավանքի վանական տիրույթները, ինչը նպատակ էր հետապնդում այն դարձնել Սյունիքի հոգեւոր կենտրոն: Բայց այդպիսին չդարձավ: Պիտի ասեմ, որ Վահան Ձեւանշերյանը եղել է ժամանակի զարգացած գործիչներից մեկը եւ նշանակալի դեր խաղացել Բաղքի գահակալության հզորացման եւ Սյունիքի ավատական թագավորության ստեղծման գործում: Ստեփանոս Օրբելյանի տեղեկությունների համաձայն՝ Ձեւանշեր իշխանի Վահան որդին է կառուցել վանքի սեղանատունը, ինչպես նաեւ կավե թրծած խողովակներով քաղցրահամ ջուր է բերել մերձակա Տիգրանասարի հյուսիսային լեռնալանջի ակունքներից:

**– Մի հարց էլ, որ կապանցիները շահարկում են. Ձեր կողմից Շահանդուխտի գերեզմանի փնտրտուքը որոշ մարդկանց մեջ այն մտայնությունն էր ստեղծել, թե Գրիգոր Գրիգորյանը գտել էր ոսկե թագեր, գանձեր եւ այլն, եւ այլն: Խնդրում եմ տվեք սպառիչ պատասխան եւ փակեք չարախոսների բերանը:**

– Ոչ մի արժեքավոր իր, բացի արծաթե 15 դրամներից, որոնք գտնվել են կրկնահարկ եկեղեցու հյուսիս-արեւելքում՝ տափարակի վերին շերտի շինարարական աղբի մեջ, չի հայտնաբերվել: Դրանք սելջուկյան եւ մոնղոլական դրամներ են: Գուցե այս սարերի վրա մաս գալով՝ գանձախույզները որեւէ բան գտնեն, բայց այստեղ ոչ մի բան չի հայտնաբերվել: Ոչինչ չի գտնվել: Չգիտեմ՝ ովքեր էին այդպիսի լուրեր տարածում: Ինչպե՞ս կարելի է: 1966 թվականից պարբերաբար ուսանողներ են եկել Վահանավանք՝ մասնակցելու պեղումներին: Ինչ որ հայտնաբերել են, հանձնել են: Հիմնականում եղել են խեցեղեն առարկաների կտորտանքներ:

**– Վահանավանքը նաեւ առեղծվածներ ունի, որոնք ցայսօր լուծված չեն: Սովորաբար միջնադարում, երբ կառուցվում էին կրկնահարկ եկեղեցիներ, պիտի կառուցողի մարմինն ամփոփվեր այնտեղ: Շահանդուխտի կառուցած կրկնահարկ եկեղեցում չեն գտնվել նրա աճյունը, տապանաքարը:**

– Պեղումների ժամանակ մենք էլ սպասումներ ունեինք, որ այդտեղ կգտնվեր Շահանդուխտի գերեզմանը: Ակադեմիկոս Բաբկեն Առաքելյանը (Կապանի հնագիտական արշավախմբի խորհրդատու, ծանոթ. խմբ.) անընդհատ ասում էր, որ շարունակենք պեղումները: Արդեն հասել էինք մայր հողին, բայց նա հորդորում էր՝ էլի քանդեք: Ճիշտն ասած՝ ես էլ այն կարծիքին էի, որ դա դամբարան-եկեղեցի է: Բայց որոնումները չպսակվեցին հաջողությամբ: Գուցե արեւելյան հատվածում որոնողական աշխատանքների շարունակումն արդյունք կտա: Առայժմ հայտնի չէ, թե որտեղ են ամփոփված Շահանդուխտի եւ նրա քույր Կատայի աճյունները:

**– Սովորաբար, ջնարակված անոթները բնորոշ չեն հեթանոսական շրջանին, ոչ վաղ միջնադարի Վահանավանքից հայտնաբերվել է ջնարակված անոթ, որը դուք հանձնել եք Կապանի երկրագիտական թանգարան: Փաստը չի՞ վկայում այն մասին, որ վաղ միջնադարում Վահանավանքի տարածքում եղել է բնակչություն:**

– Իհարկե եղել է: Վանական համալիրում կա հարյուրից ավելի սենյակ: Այստեղ եղել է կրթական կենտրոն, բնագիտական առարկաներ են դասավանդվել, այդ թվում՝ մաթեմատիկա: Վահանավանքում ուսանած վանահայրերից մեկը դարձավ Ամենայն հայոց կաթողիկոս:

**– Եվս մի կարեւոր հարց, արդյո՞ք վերծանված են Վահանավանքում հայտնաբերված վիմական արձանագրությունները:**

– Վահանավանքը որքան աղքատ է հնագիտական առարկաներով, այնքան հարուստ է վիմական արձանագրություններով: Սեդրակ Բարխուդարյանի հրատարակած «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի զանգեզուրյան պրակում զետեղված է ընդամենը հինգ, մասամբ թերընթեռնելի արձանագրություն: Իմ կողմից վերծանված է 70-ից ավելի արձանագրություն: Ցավոք, դրանց մի մասը մեզ է հասել բեկորների տեսքով: Բայց կան նաեւ այնպիսիք, որ պատմագիտական արժեք ունեն: Ահա դրանցից մեկը. *«Ողորմեա Քրիստոս Աստուած Սմպատա թագավորի եւ իւր եղբաւրն Գրիգորո շինողի սրբո եկեղեցոյս, սրահիս եւ ժամատանն, որք մտանէք յարկս սրբութեան զսոցա յաղաթս յիշեցեք»:* Ի դեպ, վիմական արձանագրություններում մի շարք անձնանուններ հանդես են գալիս իկ փաղաքշական մասնիկով: Սմպատիկ, Գրիգորիկ, Վահանիկ, Աշոտիկ եւ այլն: Ահավասիկ՝ … ԶԳրիգոր եւ զՍմպատիկ հիշեա Քրիստոս Աստուած:

**– Մի հարց եւս, որ չենք կարող շրջանցել. վարկած կա, թե իբր Դավիթ Բեկը թաղվել է Վահանավանքում: Սա, ի դեպ, եւս հիմք է տվել գանձախույզների կողմից ապօրինի պեղումների, որոնց վերջ են տվել տեղական իշխանությունները եւ իրավապահ մարմինները:**

– Դավիթ Բեկի՝ Վահանավանքում թաղվելու վարկածն առաջ է քաշել Սերո Խանզադյանը «Մխիթար սպարապետ» պատմավեպում, ինչը մինչեւ օրս չի հաստատվել ձեռք բերված հնագիտական նյութերով:

**– Եվ վերջում կուզենայինք իմանալ, թե մինչեւ երբ է գործել Վահանավանքի միաբանությունը, երբ են այդ տաճարները վերածվել ավերակների:**

– Իր գոյության ընթացքում Վահանավանքը քանիցս ենթարկվել է կողոպուտի եւ ավերի: 1387 թվականին Լենկթեմուրի զորքերը ասպատակում են Սյունիքը եւ Հայաստանի մյուս գավառները: Կարելի է ենթադրել, որ այս շրջանում Վահանավանքն ապրել է իր գոյության ամենածանր վիճակը: Լենկթեմուրյան դաժանությամբ սրատել են ոչ միայն խաղաղ բնակիչներին, այլեւ բազմաքանակ կրոնավորներին: Վահանավանքը ձեռագիր մատյաններում վերջին անգամ հիշատակվում է 1406 թվականին՝ դարձյալ կապված լենկթեմուրյան արշավանքի հետ: Թե մինչեւ երբ է գործել Վահանավանքի միաբանությունը, առայժմ, կռահումներից բացի, որոշակի ոչինչ չենք կարող ասել: Այդ առեղծվածն ամենայն հավանականությամբ կլուծվի ամբողջ հուշարձանախումբը պեղելուց հետո:

■



1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ
ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ
ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՄԱՐԻՆ

# ԱՇՈՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ. «Վահանավանքում վերականգնողական աշխատանքները դեռ ավարտված չեն»

Կատարված վերականգնողական աշխատանքների, այդ ընթացքում ծագած մի շարք խնդիրների ու հետագա անելիքների մասին է զրույցը վերականգնող ճարտարապետ Աշոտ Հովսեփյանի հետ

**-Ե՞րբ է առաջադրվել Վահանավանքի վերականգնման խնդիրը եւ ո՞ւմ կողմից:**

– Վահանավանքի վերականգնման հարցն առաջին անգամ բարձրացրել է «Հայկական հուշարձանների պահպանության ընկերությունը», որի նախագահն այն ժամանակ Վարազդատ Հարությունյանն էր: Խորհրդային իշխանության տարիներին ընդունված էր հանգանակություններ անել, եւ դրանց սուղ միջոցներով 1980-ական թթ. սկզբին սկսվեց վերակառուցումը: Իհարկե, վանական համալիրի վերականգնմանը նախորդել էին պեղման աշխատանքներ, որոնք գլխավորել էր Գր.Գրիգորյանը: Պեղումներից հետո մեր խումբն անմիջապես սկսեց չափագրական, ուսումնասիրական աշխատանքները:

**– Վահանավանքի վիճակը մինչեւ վերականգնողական աշխատանքների առաջին փուլը:**

– Վահանավանքը մինչեւ վերականգնողական աշխատանքները համարյա լրիվ թաղված է եղել հողի տակ, միայն երեւում էին գավթի կամարները, եկեղեցու խորանի մի հատվածը, մուտքի մի մասը: Համալիրը, կարելի է ասել, 100 տոկոսով փլուզված էր, միայն պատերի միջուկներն էին տեղ-տեղ 2-3մ բարձրությամբ պահպանվել, իսկ պեղումներից հետո հողի տակ ծածկված քարերը հանվել էին: Քանի որ պեղումներ կատարողները ճարտարապետներ չէին, անմիջապես չէր կատարվում գտնված բեկորի տեղուսուցում եւ չափագրում: Հարմարությունից ելնելով՝ պեղողներն այդ բեկորները տեղափոխել ու կուտակել էին, որը մեծ դժվարություններ առաջացրեց բեկորների ուսումնասիրության ընթացքում: Այդ բեկորների ընտրության համարակալմամբ տարանջատվել են հուշարձանի բեկորները՝ ըստ պատկանելության՝ եկեղեցունը, գավթինը, սյունասրահինն առանձին-առանձին: Ըստ այդ չափագրումների ու համարակալման էլ հետագայում կազմվել է Վահանավանքի վերականգնման նախագիծը:

**– Ի՞նչ խնդիրներ էին դրված վերականգնման ծրագրի նախնական փուլում:**

– Ընդհանրապես հուշարձանի վերականգնումը նախապես որոշում է ընդհանուր գծերով վերականգնում: Այն ի սկզբանե չի որոշում ամբողջացնել ինչ-որ մի կառույց ու դրա մի մասը, այսինքն՝ ամբողջական վերականգնում, թե մասնակի վերականգնում եւ կոնսերվացիա՝ որոշվում է արդեն ուսումնասիրություններից հետո՝ ընձեռված նյութի թույլտվության սահմաններում: Նյութ ասելով՝ նկատի ունեմ պահպանված հուշարձանապատկան բեկորները, տեղում տիրող իրավիճակը, պահպանված պատերի բարձրությունը, քիվերին բնորոշ տարրերի նիշերը, որոնք հնարավորություն են տալիս որոշելու թաղերի, քիվերի բարձրությունները, գմբեթի բարձրությունը: Վահանավանքում այդ առումով տեղում պահպանված ծավալից ոչինչ չէր մնացել: Բեկորների համարյա 90 տոկոսը պահպանվել էր տեղում. հիմնականում դրանք տեղական կարմիր մարմար քարից էին (մինչ օրս էլ այդ հանքերն օգտագործում են տարբեր նպատակներով): Մեզ համար լրիվ բավարար էին պահպանված քարերը: Քանի որ դրանք մեծ ծավալ ունեին եւ արդեն մշակված էին, մնացել էին տեղում, իսկ դրանից ներքեւ եղած ավելի հին ծագման երեսապատի քարերը (հին ծագում ասելով՝ նկատի ունեմ, որ Վահանավանքի եկեղեցին նախապես կառուցված է եղել սպիտակ ծակոտկեն կրաքարից) ծավալով փոքր լինելու պատճառով «ենթարկվել» էին տեղացիների անընդհատ թալանմանը: Շինարարական աշխատանքներ կատարելու համար սա դյուրակիր է եղել եւ ավելի պիտանի, քան եկեղեցու՝ իմ նշած կարմիր մարմարի մեծածավալ քարերը, որոնք արդեն մշակումներ ունեին եւ պատը շարելու համար պիտանի չէին՝ իրենց ձեւով ու ծավալով պայմանավորված:

**– Հետագայում ի՞նչ փոփոխությունների ենթարկվեց վերականգնողական աշխատանքների ծրագիրը, եւ վերջնական ի՞նչ խնդիրներ առաջադրվեցին:**

– Խորհրդային իշխանության տարիներին գոյություն ուներ «Հայ ռեստավրացիա» նախագծային ինստիտուտ, որը երկու փուլով անց էր կացնում նախագծերի քննարկում եւ հաստատում կամ մերժում էր այն: Առաջին փուլը տեղի էր ունենում անմիջականորեն նախագծային ինստիտուտում, որը կոչվում էր տեխնիկական խորհուրդ, եւ որի դրական եզրակացությունը ստանալուց հետո նախագիծը մուտք էր գործում մեծ գիտամեթոդական խորհուրդ՝ քննարկման, որն անմիջականորեն կատարում էր հուշարձանների պահպանության վարչությունը (այն ժամանակ այդպես էր կոչվում): Այն ժամանակ վարչության պետն էր Գրիգոր Հասրաթյանը, ում օրոք էլ քննարկվել է նախագիծը եւ հավանության արժանացել: Սկզբնական փուլում նախագիծը նկատի ուներ միայն եկեղեցու վերականգնումը. գավիթը եւ սյունասրահը հետագայում են նախագծվել ու վերակառուցվել: Ելնելով խնդրի բարդությունից՝ մաս-մաս է կատարվել վերականգնումը. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վերականգնողական աշխատանքները սկսվել են անմիջապես նախագծի հաստատումից հետո, սակայն մի քանի անգամ ընդհատվել են՝ պայմանավորված աշխղեկների փոփոխությամբ, սկսված պատերազմով: 2005թ. նախագիծը կրկին վերանայվել է, եւ վերսկսվել են վերականգնողական աշխատանքները, ավարտվել են եկեղեցու վերականգնումը, գավթի ամբողջական եւ սյունասրահի արեւմտյան թեւի վերականգնումը, թեեւ իմ նշած գիտական նյութը հնարավորություն էր տալիս ամբողջական վերականգնել սյունասրահը: Իմ կարծիքով՝ անձնական եւ գիտամեթոդական խորհրդի քննարկման առաջարկով որոշվեց բավարարվել միայն սյունասրահի արեւմտյան թեւի վերականգնմամբ, քանի որ վերականգնումից հետո եկեղեցու հարավային ճակատի ծածկվելը ցանկալի չէր: Թեեւ չի բացառվում, որ հետագայում, եթե վանքը տրվի Մայր աթոռի տնօրինությանը, այսինքն՝ օգտագործվի որպես եկեղեցի, խնդիրն այլ լուծում կպահանջի, եւ սյունասրահի ամբողջական վերականգնումն անհրաժեշտ կլինի: Վանքը դիտվում է որպես պատմական հուշարձան եւ ճարտարապետական կոթող, եւ առայժմ նախընտրելի է այդ տեսքով պահպանել, որն ավելի արտահայտիչ է դարձնում գոնե Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հարավային ճակատի ընկալումը:



**ԱՅՑԵՔԱՐՏ**

**Աշոտ Հովսեփյան. ծնվել է 1950թ. Երեւանում, սովորել է Երեւանի Խանջյանի անվան №53 դպրոցում, 1974թ. ավարտել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետական բաժինը եւ մինչ օրս աշխատում է հուշարձանների պահպանության բնագավառում: Մինչեւ 1991թ. եղել է այն ժամանակվա նախագծային ինստիտուտի «Զանգեզուր» արվեստանոցի տնօրեն, զբաղվել է հատկապես Սյունիքի տարածաշրջանի հուշարձանների ուսումնասիրություններով: Հենց այդ տարիներին էլ՝ 1980-ական թվականներից, սկսել է զբաղվել Վահանավանքի չափագրական ուսումնասիրություններով եւ նախագծային աշխատանքներով: Բազմաթիվ պատմաճարտարապետական հուշարձանների ուսումնասիրման, նախագծային, չափագրական աշխատանքներ է կատարել: Նրա նախագծով են վերակառուցվել Սիսիանի Որոտնավանքը, Սիսիանում տարբեր եկեղեցիներ, Մեղրիում Փոքր թաղի եկեղեցին եւ մի շարք այլ եկեղեցիներ ու վանական համալիրներ:**

**– Փաստորեն ավարտվել է վերականգնողական աշխատանքների գոնե այս փուլը: Որքանո՞վ իրականացվեցին ծրագրավորված աշխատանքները:**

– Այսօրվա դրությամբ ավարտված է եկեղեցի, գավիթ, սյունասրահ հատվածի վերականգնումը: Մի կառույց կա, որը հնագետ Գրիգոր Գրիգորյանի կարծիքով սեղանատուն է եղել, բայց ես կասկածում եմ, որովհետեւ չափերով չի համապատասխանում: Դրա ամրակայման, մասնակի վերականգնման նախագիծն էլ ունենք, բայց առայժմ ոչինչ արված չէ: Բացի դրանից՝ Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արեւելյան ճակատի դիմաց՝ ներկայիս բնահողի նիշից ցածր, որ հիմա ծածկված է հողով, շինություն կա՝ սրբատաշ քարերով, որը պեղումների ընթացքում բացվել էր, բայց քանի որ եկեղեցին վերականգնելու համար մեքենաների, ասենք՝ ավտոկռունկի, ծանր մեքենաների՝ դեպի հյուսիսային կողմ երթեւեկության անհրաժեշտություն կար, որոշվեց այդ շինությունը ժամանակավորապես ծածկել: Եկեղեցին վերականգնելուց հետո այդ շինության վերականգնմանն անդրադարձ չի եղել, անշուշտ, պայմանավորված նյութական միջոցներով:

**– Վերականգնողական աշխատանքներ անելուց առաջ հուշարձանի մերձակայքում կատարված պեղումների արդյունքում արդյո՞ք մշակութային շերտը լրիվ բացվել է:**

– Այդ հարցին առավել մանրամասն կարող է պատասխանել Գրիգոր Գրիգորյանը, բայց ես կարող եմ ասել, որ պեղումները դեռեւս ավարտված չեն, ավելին՝ պատմիչ Ստ.Օրբելյանի նշած շինություններից եթե ոչ մեծ մասը, ապա գոնե կեսը մենք չենք գտել: Եթե հաշվի առնենք, որ մոտ 1000 տարվա պատմություն ունի այս հուշարձանը, եւ երկրի կեղեւը մեծ փոփոխություններ է կրել այդ ընթացում, ապա հնարավոր է, որ այդ շինությունները մնացել են հողի տակ: Գավթի արեւմտյան կողմը, որտեղ մետաղածուլական վառարաններն էին, ու գավթի մի մասը ժամանակին բնահողերի սողքի պատճառով ծածկվել են հողով, այնտեղ պեղումներ կատարված չեն: Չնայած եկեղեցուց հարավ ընկած մասում պեղումներն արված են, բայց դրանից այն կողմ նույնիսկ հետախուզական աշխատանքներ, ինձ թվում է, չեն արվել: Այսինքն՝ տեղանքն ամբողջականորեն պեղված, ուսումնասիրված չէ:

**– Գավթի արեւմտյան հատվածում (շենքից դուրս) գոյություն ունեին մետաղածուլական փոքրիկ վառարաններ: Ի՞նչ ճակատագիր ունեցան դրանք:**

– Գավթի արեւմտյան կողմը համարյա կիսով չափ մնացել էր անտառի լանջի տակ: Մենք կտրել ենք այդ լանջը, որից հետո այնտեղ բացվել են մետաղածուլական վառարաններ, որոնք ավելի ուշ շրջանի արտադրական, տնտեսական կառույցներ են, որովհետեւ բուն եկեղեցու գավթի հատակից (դրանց հատակը բարձր էր եւ անմիջապես գավթից ընդամենը 1 մետրի չափով հեռու) բարձր էին: Եթե մենք գավիթը վերականգնելու համար բացում էինք պատը, ապա այդ վառարանները մնում էին օդում: Այդ է պատճառը, որ համապատասխան լուծում չի տրվել դրանց տեղափոխմանը, եւ դրանք քանդվել են ու մինչ օրս վերականգնված չեն: Բայց Գր.Գրիգորյանի նախաձեռնությամբ դրանց չափագրություններն ու լուսանկարները պահպանված են, եւ երբեւէ հնարավոր է վերականգնել: Այդ վառարանները հնագիտական առումով արժեք են ներկայացնում, բայց բուն հուշարձանի վերա-

## 1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

# ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՄԱՐԻՆ

կանգնմանը ոչ թե խանգարում էին, այլ հնարավոր չէր առանց դրանց հեռացման վերականգնել եկեղեցին ու գավիթը:

**– Սեղանատան մոտ (ըստ ականատեսների) թոնիր կար: Ի՞նչ ճակատագիր ունեցավ այդ թոնիրը:**

– Սեղանատուն կոչեցյալը փոքրիկ ինչ-որ բան է, որ չի կարելի անվանել սեղանատուն: Հայկական ճարտարապետության պատմական հուշարձանների տարածքում գրեթե ամենուր կարելի է տեսնել թոնիր: Թոնիրը սեղանատուն կոչեցյալի հետեւում է եղել, ինձ թվում է՝ այն բուն հուշարձանի (X դարի Վահանավանքի) հետ ոչ մի աղերս չունի, այն, ինչպես նաեւ մետաղաձուլական վառարանները հետագայում են ստեղծվել: Մարդը տարբեր ժամանակներում ապրել է այդ տարածքներում եւ, բնականաբար, թոնիր է կառուցել: Որպեսզի պարզենք, թե այդ թոնիրը որ դարաշրջանին է պատկանում, պետք է նայենք բուն հատակի նիշի մակարդակին: Բջնիում, Փարպիում կան տարբեր մակարդակների թոնիրներ: Մեր խնդիրը բուն հուշարձանի ռեստավրացիան էր, ու մենք հնագետների հետ համագործակցելով ենք անում այդ աշխատանքները: Բայց երբեմն ռեստավրացիայի նպատակներից ելնելով՝ մեր կողմից հնագիտական հարցերը հետին պլան են մղվում, իսկ հնագետների կողմից էլ՝ հակառակը:

**– Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արեւելյան պատի տակ հայտնաբերվել էր օժանդակ կառույց հիշեցնող մի շինություն: Ինչո՞ւ հողով ծածկվեց այդ կառույցը:**

– Ինչպես արդեն նշեցի, այդ շինությունը ծածկեցինք, որպեսզի մեխանիզմներն անարգել մուտք գործեն եկեղեցու հյուսիսային կողմ: Այնտեղ ճանապարհը նեղ էր, եւ հազիվ մեկ մեքենա կարող էր անցնել: Եթե այդ կառույցը մնար, ուրեմն Վահանավանքի վերականգնման համար անհրաժեշտ կլինեին ամբարձիչ կռունկներ, բայց մենք այն ժամանակ այդ հնարավորությունը չունեինք, հիմնականում աշխատում էինք ավտոկռունկով, աշխատանքների մեծ մասն էլ կատարվում էր ձեռքով, եւ այդ ճանապարհը մեզ անհրաժեշտ էր:

**– Շրջանառվում է վարկած առ այն, որ սյունասրահի ծածկի վերականգնման ընթացքում օգտագործվել են բազալտի սալիկներ, մինչդեռ նախկինում, ինչպես մասնագետներն են պնդում, ծածկը եղել է տեղական քարից: Արդյո՞ք դրանով չի խաթարվել հուշարձանը:**

– Սյունասրահի ծածկը, ինչպես նաեւ եկեղեցու եւ գավթի ծածկը կղմինդրից է, ինչպես եղել է իր նախնականը, ինչի համար հիմք են հանդիսացել տեղում կատարված ուսումնասիրությունները, պեղումներից մնացած կղմինդրի տարրերը: Վահանավանքի եկեղեցին, գավիթը, սյունասրահը ծածկված են եղել բացառապես կղմինդրով, ոչ մի քարե ծածկասալի հետք այնտեղ չի հայտնաբերվել, ու հիմա էլ այնտեղ ծածկասալերը կղմինդրից են: Բազալտի քար օգտագործվել է թաղերում (օգտագործված է Սիսիանի կարմիր երանգ ունեցող բազալտը), որովհետեւ տեղական մարմար քարը բացարձակապես ծակոտկենություն չունի եւ վատ է կապակցվում շաղախին: Դա է ճարտարապետական այդ կառույցի փլվելու հիմնական պատճառներից մեկը: Բացի դրանից՝ ռեստավրացիայի ժամանակ այդ քարն է օգտագործվել, որովհետեւ թեթեւ է նախկինից: Նյութի տարբերակումը ռեստավրացիոն տեսակետից աշխարհում ընդունված ձեւ է եւ դա պետք է շեշտվի, իհարկե ոչ արտառոց ձեւով:

**– Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու եւ գավթի վրա օգտագործված կղմինդրը ներկայումս ճաք է տալիս եւ թափվում: Բացի դրանից՝ որոշ մասնագետների կարծիքով, ճիշտ չի լուծված տանիքի ջրահեռացման հարցը: Ինչո՞ւ եք հենց այդ կղմինդրն ընտրել:**

– Ես անձամբ չեմ տեսել, որ ժխտեմ այդ փաստը, բայց եթե ասում են, ուրեմն նման բան կա: Կղմինդրը պատրաստվել է Արտաշատի գործարանում, ես եմ մոդելները պատրաստել Վահանավանքի կղմինդրի օրինակով, ինչպես նաեւ ուսումնասիրել ենք 7-13-րդ դարերի օրինակները: Պատրաստված մոդելներով կաղապարները ձուլվել են, թրծվել, ու մեզ հավաստիացրել են, որ ընտիր կղմինդր է: Կարելի է ասել, որ դա տեխնոլոգիական խնդիր է ու Արտաշատի գործարանի սխալը: Քանի որ սյունասրահը կիսատ է կառուցված, մենք նախատեսել եւ իրականացրել ենք ամբողջական չվերականգնված սյունասրահի արեւելյան մասի ջրահեռացման խնդիրը, ինչպես նաեւ եկեղեցուց թափվող ջրերի համար պատի վրա դրել ենք ջրահեռացման առվակներ ու ջրհորդաններ՝ արեւելքից եւ արեւմուտքից, որ այդ ջրերը հեռանան:

**– Շրջանառվում է վարկած առ այն, որ որոշ տապանաքարեր տեղաշարժվել են եւ հետագայում իրենց տեղը չեն դրվել: Որքանո՞վ են հավաստի այդ տեղեկությունները:**

– Տապանաքարերի, ընդհանրապես պեղումների հետ ճարտարապետներն առնչություն չունեն: Մենք ոչ մի տապանաքարի ձեռք չենք տվել, միայն նրանց պեղած տապանաքարերի շուրջը սալահատակ ենք արել:

**– Կապանյան հանրության մեջ նաեւ մի այսպիսի հարց է քննարկվում՝ ինչո՞ւ մետաղյա խաչ դրվեց Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու գմբեթի վրա: Մինչդեռ կարծիք կա, որ գմբեթի վրա ժամանակին քարե թեւավոր խաչ է եղել, որի մասունքները պահվում են Կապանի երկրագիտական թանգարանում:**

– Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու գմբեթին մետաղյա խաչ ենք դրել, որովհետեւ ոսկյա չունեինք: Ո՞վ է ասել, թե այդ մասունքները Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու գմբեթի խաչին են պատկանում: Հայկական ճարտարապետության մեջ քարե թեւավոր խաչ հիմնականում փոքր մատուռի վրա է դրվում:

**– Անկասկած, վանքի բակում ի սկզբանե խմելու ջուր է եղել՝ մերձակա աղբյուրներից բերված: Հնարավոր չէ՞ր վերականգնողական աշխատանքների ընթացքում վերականգնել ջրատարը:**

– Բնական է, որ վանքն ունեցել է իր ջուրը: Այնտեղ, որտեղ մարդն ապրել է, ջուր եղել է: Պահպանվել էին ջրատար կերամիկական խողովակներ, որոնցով, թերեւս, պրոֆ. Գրիգորյանի ասելով, որ մի քիչ երեւակայական է, սարերից կաթ է հոսել, բայց դա հնարավոր չէ: Ես ինքս այդ խողովակները չեմ տեսել, բայց բուն վանքի տարածք 1988-89թթ. խողովակներով ջուր է բերվել, բայց հետագայում՝ «անտերության» ու պատերազմական տարիներին, թալանել-տարել են: Ջրատարը կա, եւ հետագայում հնարավոր է այն վերականգնել:

**– Ի սկզբանե Սբ Աստվածածին տաճարի վերականգնման համար եղել է երկու նախագիծ՝ իրարից տարբերվող: Ինչո՞ւ է ընտրվել հենց այդ տարբերակը:**

– Սուրբ Աստվածածին եկեղեցին վերականգնվել է հանգուցյալ Յուլի Թամանյանի նախագծով, «Հայկական հուշարձանների պահպանության ընկերության» միջոցներով, նախքան Վահանավանքում մեր կողմից վերականգնողական աշխատանքների սկսելը: Ես միայն խորհրդատվական կարգով եմ մասնակցել եւ չեմ կարող ասել: Սակայն Սուրբ Աստվածածնի հետ կապված մեկ այլ հարց կա, որ անընդհատ շահարկվում է, այն է՝ իբր տաճարը քարե ծածկասալով է պատված եղել: Ասեմ, որ այն քարով ծածկված չի եղել, այդ քարե ծածկը նոր է արված: Վանքի տարածքում ընդհանրապես քարե ծածկասալի ոչ մի բեկոր չի գտնվել:

**– Ինչո՞վ է բացատրվում Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բեմի սեղանի բացակայությունը: Եթե անգամ չի եղել ի վերուստ, արդյո՞ք այն չպիտի լինի, որպեսզի ամբողջական դառնա եկեղեցին:**

– Համենայն դեպս պեղումներից առաջ եւ հետո սեղան չի եղել: Ընդհանրապես մեր եկեղեցիները սկզբնական շրջանում բարձր բեմ չեն ունեցել, բեմը ցածր է եղել: Եթե Գր.Լուսավորիչ եկեղեցու աջ ու ձախ պատերին նայեք, կտեսնեք, որ բեմի ցածր լինելը շեշտելու համար երկու կողմից պատերի վրա նշաններ ենք թողել, որոնք ցույց են տալիս, որ նախկին բեմը ներկայիս բեմից ցածր է եղել: Բեմի՝ որպես այդպիսի մաքուր գենետիկ կառուցվածքի մասին խոսելն իմաստ չունի, որովհետեւ այդ բեմը սկզբից չի եղել, եւ նրա պահպանված մասը հետագա հավելում է: Մենք էլ վերականգնել ենք իր պահպանվածի բարձրությամբ, բայց աշխատել ենք պահպանել նաեւ բուն կառույցի խորանի աջ ու ձախ թեւերի նախաստեղծ իր տեսքը, որ աչքի համար տեսանելի լինի եւ պարզ: Իսկ սուրբ սեղան ընդհանրապես թե չի ունեցել, թե չի պահպանվել, չեմ կարող ասել. բնական է, որ ունեցած կլինի, բայց երեւի թե որպես քար, շինանյութ տարել են: Մեր նպատակը որպես եկեղեցի՝ սուրբ սեղանով, իր ատրիբուտներով, վերականգնելը չէր: Վերականգնել ենք եկեղեցին՝ որպես պատմաճարտարապետական հուշարձան: Իհարկե, եթե եկեղեցին սեղան ունենում է, ապա մենք անպայման ուշադրություն ենք դարձնում, եթե նորը դնենք, ապա վերականգնում չի լինի, այլ վերստեղծում: Մենք սպասում ենք, որ վանքն անցնի հոգեւոր օգտագործման, այնտեղ ծիսակատարություններ արվեն, որից հետո սուրբ սեղան կառուցելը խնդիր չէ: Մենք ռեստավրատոր ենք եւ պիտի խուսափենք նոր բան ներմուծելուց:

**– Սյունասրահի վերականգնումը կիսատ է թողնվել: Ինչո՞ւ, Ձեր հիմնավորումը:**

– Սյունասրահի վերականգնումը կիսատ թողնելու հիմնական պատճառն այն է, որ չենք ուզում եկեղեցու՝ արդեն վերականգնված հարավային ճակատը ծածկվի: Չնայած այնտեղ էլի հարցեր կան. սյունասրահի թեւի արեւելյան կողմում զուտ ռեստավրացիոն տեսակետից բացվածքների խնդիր կա, թե այն ինչպիսին է եղել: Մենք կարող ենք այնտեղ լուսամուտներ դնել, բայց բուն ռեստավրացիոն մոտեցման համար այդ նյութը բավարար չէ: Եթե օգտագործենք որպես եկեղեցի, այն ժամանակ այդ անհրաժեշտությունից ելնելով կարելի է ինչ-որ տեղ զոհաբերել գիտական մոտեցումները:

**– Պողոս եւ Պետրոս առաքյալների անվամբ երկու խորան է կառուցել Վահան Սյունեցին՝ Ամենայն հայոց կաթողիկոսը: Որո՞նք են այդ խորանները:**

– Դրանցից փաստարկումներ չեն մնացել, միայն Ստ.Օրբելյանի հիշատակությունն է, որում նա նշում է, որ դա մուտքի մոտ է եղել: Մինչ օրս մենք դեռ չգիտենք, թե Վահանավանքի իսկական մուտքը որ կողմից է եղել:

**– Ինչպե՞ս եք պատկերացնում հետագա վերականգնողական աշխատանքների ընթացքը: Ո՞ր բաղադրիչներն եք վերականգնման համար առավել կարեւոր համարում:**

– Վերականգնողական աշխատանքների համար, ինչպես նշեցի, արեւելյան կողմի շինության բացումն է անհրաժեշտ, մանրակրկիտ ուսումնասիրությունը, որ անհրաժեշտությունից ելնելով ծածկել ենք: Դեռեւս ոչինչ արված չէ սեղանատուն կոչեցյալի համար, չնայած նախագծով կար կոնսերվացիա: Երբ դառնա գործող վանական համալիր, այնտեղ արդեն խնդիրներն այլ կլինեն: Պեղումներն ավարտված չենք կարող համարել, եւ հնարավոր է, որ հետագայում այլ կառույցներ հայտնաբերվեն, որոնք հետազոտության եւ վերականգնողական աշխատանքների կարիք կունենան:

**– Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակում ժամանակին կառուցվել է աղոթատուն՝ վիմագիր մահարձաններով: Արդյո՞ք տեղորոշվել է աղոթատունը:**

– Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արեւմտյան կողմի գավիթը, որ նաեւ ժամատուն է կոչվում, ու այս երկուսին կից սրահն է, որն էլ աղոթասրահն է: Աղոթասրահ՝ որպես այդպիսի առանձին կառույց, հայտնաբերված չէ:

**– Խաչքարը, որոշ վիմագրեր ցաքուցրիվ վիճակում են, ինչպես նաեւ վանքի ամբողջ տարածքում վանական համալիրի քարե մնացորդներ են: Ինչո՞ւ չորոշարկվեց դրանց տեղը, եւ չդրվեցին իրենց նախնական տեղում:**

– Այնտեղ շատ բեկորներ կան, որոնց պատկանելությունը հայտնի չէ, համենայն դեպս ո՛չ եկեղեցունն են, ո՛չ էլ գավթինը, այսինքն՝ սրահինը կարող են լինել կամ էլ մեկ այլ կառույցի: Ավելի պարզ լինելու համար ասեմ, որ բացի սրբատաշ քարերից՝ մնացած ձեւավոր քարերը մեր կողմից ուսումնասիրվել, չափագրվել, համարակալվել ու տեղակայվել են: Եղել են պակաս քարեր եւ դրանց փոխարեն դրվել են նորերը, բայց դրանք չնչին մաս են կազմում: Ինչպես ասացի, այնտեղ պեղման, վերականգնողական աշխատանքները դեռեւս չեն ավարտվել, եւ հնարավոր է, որ ինչ-որ քարեր իրենց տեղում դրված չլինեն: Վանքը միասնական չէ, եւ երբ վերականգնողական աշխատանքներն ավարտվեն, ապա բարեկարգման ընթացքում ուշադրություն կդարձնենք փոքր ճարտարապետական ձեւերի՝ խաչքարերի վրա: Դրանք իրենց պատշաճ տեղում կդրվեն, եթե անգամ իրենց տեղը չգտնեն էլ, ապա այնտեղ տեղափոխություններ կկատարվեն:

**– Վերականգնման աշխատանքներն ավարտված են հայտարարվում (համենայն դեպս այս փուլում), բայց մերձակայքի անբարեկարգ վիճակն այդ տպավորությունը չի թողնում:**

– Վերականգնման աշխատանքները հնարավոր չէ նման համալիրում ավարտված համարել, եւ հարց է ծագում՝ երբեւիցե կավարտվե՞ն, թե՞ ոչ: Ինչ էլ անենք, միեւնույնն է՝ մարդը միշտ էլ բողոքում է, բայց պետք է նայել եղած հնարավորություններին եւ կատարվածը գնահատել: Մենք ահռելի աշխատանք ենք կատարել, արել ենք այն, ինչ մեր խղճի ու հնարավորությունների սահմաններում էր:

**Հարցազրույցը՝**
**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ**

# Սեդրակ Բարխուդարյան

## ՎԱՀԱՆԱՎԱՆՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԻՑ

**Սկիզբը՝ էջ 16**

նա եւ իր ղեկավարած բաժնի աշխատակիցները հավաքեցին, վերծանեցին ու հրատարակության պատրաստեցին Հայաստանի եւ Արցախի տարբեր շրջանների պատմամշակութային հուշարձանների վրա եղած հազարավոր վիմագրեր: Այդ աշխատանքների շնորհիվ XX դարի 60-ական թվականներից սկսվեցին հրատարակվել «Դիվան»-ի հատորները: Առաջին պրակը նվիրված էր պատմական Անի մայրաքաղաքի արձանագրություններին: Գրքի կազմող-հեղինակ Հ. Օրբելին իր երախայրիքի խմբագրությունն ու հրատարակությունը պատգամել էր Սեդրակ Բարխուդարյանին: Վերջինիս ընդարձակ ու հմտալից առաջաբանով պրակը լույս տեսավ 1966 թվին (266 արձ.): Մատենաշարի հաջորդ չորս պրակների կազմողը Ս.Բարխուդարյանն էր: 1960թ. հրատարակվեց Սյունյաց աշխարհի Գորիսի, Սիսիանի եւ Ղափանի տարածաշրջանների վիմական արձանագրություններն ընդգրկող երկրորդ պրակը (421 արձ.): Երրորդում ամփոփված էին Վայոց ձորի հուշարձանների թվով 813, Մեր երախտավորները 289 վիմագիր (1967թ.): Չորրորդ, առայժմ ամենաընդարձակ (1547 արձ.) հատորում տեղ էին գտել Գեղարքունիքի, Վարդենիսի, Մարտունու եւ Կամոյի շրջանների արձանագրությունները (1973թ.): Արցախի պատմության ուսումնասիրման համար անգնահատելի արժեք է ներկայացնում հինգերորդ պրակը (1071 արձ., 1982թ.): Ս. Բարխուդարյանը, «Դիվան»-ի կազմման աշխատանքներին զուգընթաց, օգտագործելով վիմագրական հսկայածավալ ու բազմաբովանդակ նյութեր, առանձին բարձրարժեք ուսումնասիրություններ է նվիրել արձանագրությունների քննությանն ու դրանց պարունակած ուշագրավ փաստերի, իրադարձությունների, երեւույթների, բառեզրերի վերլուծությանն ու մեկնաբանությանը, դրանց աղբյուրագիտական արժեքի գնահատմանը: Հատկանշական են մի քանի դիտողություններ Երեւանի Կաթողիկե եկեղեցու արձանագրությունների վերաբերյալ (1947թ.), Էջմիածնի ավետարանի գրչության վայրը (1958թ.), Հայ կնոջ իրավական վիճակը միջին դարերում (1966թ.), Գեղարքունիքի մելիքներն ու տանուտերերը ըստ Տաթեւի վանքի մի փաստաթղթի (1967թ.), Սոցիալ-տնտեսական բովանդակության արձանագրություններ եւ դիտողություններ(1971թ.) եւ բազմաթիվ այլ հոդվածներ: Վիմագիր սկզբնաղբյուրների ընձեռած նյութի գիտական ու լիարժեք օգտագործման փայլուն օրինակ է Ս.Բարխուդարյանի բացառիկ հետազոտություններից մեկը, միջնադարյան Հայաստանի ճարտարապետական հուշարձանների եւ մանրաձեւ կոթողների՝ խաչքարեր ու տապանաքարեր արարողներին՝ այն է՝ միջնադարյան ճարտարապետներին ու ընդհանրապես քարգործ վարպետներին նվիրված հանրագիտարանային ուսումնասիրությունը՝ Միջնադարյան հայ ճարտարապետներ եւ քարգործ վարպետներ (1963թ.): Աշխատությունը կենսագրական ու գործառութային տեղեկություններ է պարունակում միջնադարյան 68 ճարտարապետների, խաչքարեր կերտող 139 կազմողների եւ վիմագրեր փորագրող 62 գրիչների վերաբերյալ: Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի արխիվում է պահվում Սեդրակ Բարխուդարյանի անտիպ ժառանգությունը, որի հրապարակումն ու գիտական շրջանառության մեջ դնելու պատվաբեր գործն իր հետնորդների, այդ մեծ գիտնականի եւ մարդու հիշատակը հարգող ու ավանդները շարունակողների սուրբ պարտականությունն է:

■

**1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ**

**ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

# Վահանավանքի հուշարձախումբը

## Հատված Գր.Գրիգորյանի «Վահանավանք» աշխատությունից

### ՍԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ

Կառուցումն ավարտվել է 911 թվականին(1): Շինաքարը սպիտակավուն տրավերտինն է կամ չեչաքարը, որը բերված է վանքից ոչ հեռու գտնվող Գիրաթաղ կամ Գեղանուշ գյուղերի քարհանքերից (2): Սբ Գրիգոր Լուսավորիչը հատակագծում խաչաձեւ հորինվածքով, կենտրոնագմբեթ կառույց է, որի ավագ խորանի երկու կողմերում՝ հյուսիսից եւ հարավից, կան մեկական ավանդատներ՝ պատուհաններով: Ավագ խորանի բեմը սկզբնապես եղել է զգալիորեն փոքր, իսկ 1046թ. նորոգման ժամանակ(3) ընդարձակվել է դեպի արեւմուտք՝ այս անգամ մարմարացված կրաքարի կարմրավուն սալաքարերով: Լավ պահպանվել են կենտրոնական խորանի սրբատաշ որմնակամարի կլոր սյունաքարերը եւ եկեղեցու սալահատակը: Սբ Գրիգոր Լուսավորիչն ունի երկու մուտք, որոնցից մեկը գնում է դեպի արեւմտյան գավիթ, իսկ մյուսը դուրս է գալիս հարավային սյունասրահ: Հարավային մուտքի ճակատակալ քարին փորագրված են 12 համաչափ գծախաչեր, որոնք խորհրդանշում են Քրիստոսի 12 աշակերտներին: Եկեղեցու ներսում թաղումներ չեն եղել, ինչը չի կարելի ասել գավթի կամ սյունասրահի մասին:

2006թ. վաղ գարնանից Կապանի հնագիտական արշավախմբի անդամ, ՀՀ վարչապետ, նորոգ հանգուցյալ Անդրանիկ Մարգարյանի նախաձեռնությամբ սկսվել են Վահանավանքի մեծ տաճարի եւ կամարակապ գավթի վերականգնման աշխատանքները:



Լուսանկարը՝ Ա. Նավասարդյանի

### ԳԱՎԻԹ (ԺԱՄԱՏՈՒՆ)

Հայ ճարտարապետության պատմության մասնագետների կարծիքով՝ «հայկական հնագույն գավիթները գտնվում են Սյունիքում»(4): Վահանավանքի մեծ տաճարի ինքնատիպ ժամատուն-գավիթը կառուցվել է վանքի հիմնադիր Վահանի եղբորորդու՝ Վահան Զեւանշերյանի (Հայաստանի ապագա կաթողիկոսի) վանահայրության տարիներին՝ X դարի 30-ական թվականներին:

Ուղղանկյուն հատակագիծ ունեցող եւ ավելի քան 100 քմ մակերեսով այս կառույցն աչքի է ընկնում իր ճարտարապետական բացառիկ հորինվածքով եւ կերտվածքով: Գավթի երկարությունը 11մ է, լայնությունը՝ 7,90մ, թաղակիր կամարներից արեւմտյանն ունի 12 քար, արեւելյանը՝ 11 (սեպաքարերի հետ միասին): Առաջինը հատակից բարձր է 6մ 60սմ, մյուսը՝ արեւելյանը՝ 6մ 50սմ: Կամարաքարերն ամրացնող կապակցող նյութը բացակայում է: Քիվերից նախշաքանդակ են 9-ը, որոնցից ոչ մեկն իրար նման չէ: Թաղածածկ տանիքը հեռված է եղել մեծամեծ ժայռաբեկորներից պատրաստված զանգվածեղ երեք կամարների վրա, որոնցից կենտրոնականը մեր ուսումնասիրության ժամանակ փլուզված էր, իսկ մյուս երկուսը պահպանված են նախնական դիրքով՝ նստած կիսագլանաձեւ որմնասյուների վրա: Առանձնապես աչքի են ընկնում քանդակազարդ քիվերի զարդագոտիները: Այդ քիվերը հիշեցնում են Զվարթնոցի հանրահռչակ զամբյուղաձեւ խոյակները, ինչպես նաեւ Անիի Գագկաշեն եկեղեցու, Ղոշավանքի եւ Մարմաշենի վանքի Կաթողիկե եկեղեցու բեմառաջքի զարդաքանդակները (5): Ըստ Սամուել Անեցու՝ Մարմաշենը կառուցված է 986-994թթ., Վահրամ Պահլավունու արձանագրության համաձայն՝ 968-1029թթ. (6): Վահանավանքի քիվերի զարդաքանդակների նմանությունն ենք տեսնում Թբիլիսիի Լուրջի Մոնաստերիի պատուհանների պսակների քանդակներում(7): Ուրեմն, Վահանավանքի կամարակապ գավթի քանդակազարդ քիվերը ժամանակագրորեն ավելի վաղ են կառուցվել, քան վերը հիշատակվածները:

Կամարակապ գավիթն ունի երկու մուտք՝ մեկը՝ արեւելյան կողմից, որը տանում է դեպի եկեղեցի, մյուսը՝ հարավից՝ դեպի սյունասրահ: Պահպանված կամարներից կարելի է ենթադրել, որ քննության առարկա շինությունը եղել է սագաշեն, իսկ ծածկը՝ պատված կարմիր կղմինդրով:

Վահանավանքի կամարակապ գավիթը հայոց միջնադարյան ճարտարապետության առավել նշանավոր կառույցներից մեկն է եւ ուրույն տեղ է զբաղեցնում մեր շինարվեստի պատմության մեջ:

### ՍՅՈՒՆԱՍՐԱՀ

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հարավային սյունասրահը, որը կառուցել է դարձյալ Վահան Զեւանշերյանն իր առաջնորդության վեց տարիների ընթացքում: Վահանավանքի սյունասրահի զուգահեռներն ենք տեսնում Տաթեւում, Ցաղաց քարում, Որոտնավանքում եւ այլուր: Մեզ հետաքրքրող այս կառույցն ունի շուրջ 140 քմ մակերես, (երկարությունը՝ 24մ, լայնությունը՝ 5մ 40սմ, միջնամասում՝ 5մ 75սմ): Քառանկյունի 7 որմնասյուների (պիլաստրների) վրա կանգնած են եղել դեպի հյուսիս, հարավ եւ արեւմուտքից արեւելք ձգվող կիսաշրջանաձեւ կամարները: Կամարների վրա տեղակայված են ծածկի միջնամասային կորամեջ սալաքարերը, որոնց վրա, ամենայն հավանականությամբ, ագուցվել են երկթեք տանիքի կղմինդրե աղյուսիկները: Հարավային կողմից ունի երկու մուտք, որոնցից մեկը հաղորդակցվում է այժմ փլուզված սեղանատան հետ, իսկ մյուսը դուրս է գալիս դեպի հարավային բակ:

Սյունասրահում պեղումներ կատարելիս հայտնաբերվել են տասնյակ խաչքարեր եւ կոթողային հուշարձանների բեկորներ, մեծաքանակ ջարդոտված խեցեղեն եւ հատկապես վիմական արձանագրություններ, որոնց մեջ առանձին կարեւորություն է ներկայացնում երկու մեծ սալաքարերի վրա փորագրված 1046 թվականի շինարարական արձանագրությունը:

Սյունասրահի շերտագրությունը պարզելու նպատակով հյուսիսարեւելյան հատվածում՝ որմին կից, փորվել է շուրֆ. քարերի շարվածքից հետո՝ 50սմ խորությունից ի հայտ են եկել հողազանգվածի հետեւյալ շերտերը՝ մուգ հող՝ 20սմ, սպիտակ հող՝ 10 սմ, շինաքարի մանրացված քարավազ՝ 0,5 սմ, մանուշակագույն քարավազ՝ 0,5 սմ:

### ԿՐԿՆԱՀԱՐԿ ԵԿԵՂԵՑԻ (ՍԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ)

Ստեփանոս Օրբելյանն, իր «Պատմութեան» ԽԴ գլխում ներկայացնելով Վահանավանքի բուռն ծաղկման շրջանը, հատուկ նշում է, որ «...յետ բազում ժամանակաց յաւուրս Գրիգորի՝ թագաւորի Բաղաց ի Շահանդխտոյ թագուհւոյն եւ ի Կայտայէ եւ ի Սենեքերիմայ թագաւորէ բազում եւ գեղեցիկ շինուածովք առաւել գեղեցկացուցին զվանսն Վահանու՝ կանգնեալ կամարս մեծամեծս եւ ի վերայ՝ եկեղեցին եւ սրահս բազմասիւնս բարձրաբերձ, հովանի եւ խրախարան իշխանացն»(8): Ի դեպ, նշենք, որ Ս.Յակոբյանը շփոթում է Սյունյաց այս արքայատան անդամներին: Նա գրում է, որ Վահանավանքի այս եկեղեցին կառուցել է «Սիսական եւ Բաղաց աշխարհների Սենեքերիմ թագավորը իր Շահանդուխտ թագուհու եւ դստեր՝ Կատայի հետ...»: Ստացվում է, որ Սենեքերիմն ու Շահանդուխտն ամուսիններ են, իսկ Կատան՝ նրանց դուստրը: Սյունյաց թագուհի Շահանդուխտ Բ-ն Գրիգոր Ա-ի կինն էր, իսկ Կատան՝ Շահանդուխտի եւ Սենեքերիմի քույրը: Այս մասին հանգամանորեն նշում է Ստեփանոս Օրբելյանը, որի վկայությունը հաստատում են հայտնաբերված վիմական արձանագրությունները: Նույնատիպ շփոթ ենք տեսնում Սյունյաց երկու Հակոբ եպիսկոպոսների վերաբերյալ(9): «Ագահ, դաժան եւ չարանենգ» որակումները վերաբերում են Հակոբ Ի-ին: Շարունակենք: Երկհարկանի այս կառույցը, որը գտնվում է մեծ տաճարից հարավ՝ շուրջ 70մ հեռավորությամբ, հատուկ ուսումնասիրել է ճարտարապետության դոկտոր Ստ.Մնացականյանը(10): Ուսումնասիրողի կարծիքով՝ Վահանավանքը, ինչպես նաեւ երկհարկանի եկեղեցին, կառուցված է «վարդագույն տուֆի կանոնավոր մշակված քարերից»(11): Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի գլխավոր երկրաբան Ռ.Հովհաննիսյանը կարծում է, որ Վահանավանքի հիմնական շինաքարը մարմարացված կարմրավուն կրաքարն է(12):

Պատմիչի բանաստեղծական նկարագրությունը վերաբերում է Վահանավանքի համակառույցի կրկնահարկ եկեղեցուն, որը, ըստ պահպանված արձանագրության, կառուցվել է, ինչպես վերը նշեցինք, 1086թ. եւ կոչվել է Սբ Աստվածածնի անունով: Եկեղեցին համեմատաբար փոքր է. Յու.Թամանյանի չափագրությամբ այն ներսից ունի 6,52 X 2,93մ եւ դրսից՝ 7,80 X 4,45մ չափսեր(13) (ըստ Ստ.Մնացականյանի՝ 2,75 X 3մ), սակայն աչքի է ընկնում ճարտարապետական մտահղացմամբ: Նրա ենթադրությամբ՝ գավիթը (չափսերն են՝ ներսից 8,60 X 4,06մ) կառուցված է արեւմտյան լեռնաբազկի հարթեցրած զանգվածի վրա, իսկ նրան կից Սբ Աստվածածինը վեր է խոյանում ճեղքված քարերով շարված արեւելյան կամարի երկայնությամբ: Սկզբնապես կարծում էինք, թե հյուսիսարեւելյան կողմից բացվում է ինչ-որ պատուհան, սակայն պեղումներով բացահայտվեց, որ դա պարզապես սենյակ է, որի պեղման աշխատանքները կատարվեցին արշավախմբի գլխավոր գիտական խորհրդատու, ակադ. Բ.Առաքելյանի առաջարկությամբ: Սբ Աստվածածինը կառուցված է նույն կարմրավուն մարմարացված կրաքարի զանգվածեղ սրբատաշ ժայռաբեկորներով՝ բերված արեւմտյան սարալանջի վանքապատկան, այժմ էլ շահագործվող քարհանքից:

Եկեղեցու մուտքերը հյուսիսից եւ արեւմուտքից են: Հյուսիսային մուտքի բարձրությունը 1մ 90սմ է, լայնությունը՝ 1մ 12սմ: Նրա տակ ներքնահարկն է: Արեւմտյան մուտքի բարձրությունը 2մ 0,8սմ է, լայնությունը՝ 1մ 24սմ: Արեւելքից արտաքուստ ունի խորանաձեւ, քանդակազարդ պսակով լուսամուտ: Սբ Աստվածածնի արտաքին պատերին ոչ մի արձանագրություն չի պահպանվել:

Ըստ Ստ.Մնացականյանի՝ եկեղեցի են բարձրացել արեւմտյան լեռնալանջի երկայնակի կառուցված սանդուղքով: Ընդհակառակն՝ վերականգնող ճարտարապետ Յու.Թամանյանի նախագծով արեւելք-արեւմուտք ուղղությամբ՝ եկեղեցու հյուսիսային պատին կից արտաքուստ կառուցված քարակերտ սանդուղքով: Եկեղեցու հարթակի վրա՝ հարավային եւ արեւելյան կողմերում, արտաքուստ եղել է սյունաշար, որը ներկայումս տեղադրված չէ: Այսօր սանդուղքը վերականգնված է երջանկահիշատակ Յու.Թամանյանի նախագծի համաձայն:

Եկեղեցու հարավարեւելյան կողմում՝ գավթից հարավ, կա սրբատաշ քարերով մուտք 82սմ լայնությամբ, որի առջեւ բացվում է անկանոն ճեղքված քարերով շարված ուղղանկյուն հատակագիծ ունեցող հարթակ: Վերջինիս նշանակությունը դեռեւս պարզված չէ: Հարթակի չափսերն են՝ հարավային (արեւելք-արեւմուտք ուղղությամբ) 4մ 25սմ, հյուսիս-հարավ ուղղությամբ՝ 4մ: Դարերի ընթացքում անձրեւաջրերի քայքայիչ ազդեցությամբ պատերի արտաքին սվաղն անհետացել է, եւ կառույցը գտնվում է փլուզման վտանգի առջեւ: Հետախուզական պեղումների ընթացքում մինչեւ 1մ խորությունից ի հայտ են եկել շինարարական բազմաքա-

# Հայկական ճարտարապետության պատմություն

## Հատված համանուն գրքից

**ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՎԱՀԱՆԱՎԱՆՔԸ եւս Սյունիքի հռչակված հոգեւոր կենտրոնն էր, կրթական-մշակութային օջախը, բարձրաստիճան հոգեւորականության ու իշխանական տոհմի ներկայացուցիչների հանգստարանը(1):

Հիմնադրվելով 10-րդ դարի սկզբին՝ այն կառուցապատվել է 10-11-րդ դդ. ընթացքում՝ իր կազմում հաջորդաբար ընդգրկելով գլխավոր եկեղեցին, թաղածածկ գավիթը, նրանց հարավային կողմում ձգված կամարակապ սրահը, կրկնահարկ վերդարպասյա եկեղեցին, տակավին չհայտնաբերված սեղանատունը եւ այլ կառույցներ՝ շրջափակված պարիսպներով:

Գլխավոր՝ Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կառուցումն իրականացվել է 911թ. վանքի հիմնադիր, Սյունյաց Ջագիկ իշխանի կրտսեր որդի Վահանի նախաձեռնությամբ (որը հետագայում այստեղի վանահայրն էր ու այդ կապակցությամբ իր մահից հետո վանքը կոչվել է Վահանավանք)(2): Եկեղեցին պատկանում է գմբեթավոր դահլիճների այն տարբերակին, որ զույգ ավանդատներ կան նաեւ արեւմտյան կողմից: Վահանավանքի եկեղեցին նշված տարբերակի վաղագույններից է(3): Նրա երկու մուտքերից արեւմտյանը բացվում էր ժամատան, իսկ հարավայինը՝ թաղակապ սրահի մեջ:

Ժամատան կառուցումն իրականացվել է նույն դարի 30-ական թվականներին Վահանի ավագ եղբոր՝ Զեւանշիրի որդի Վահանի վանահայրության տարիներին(4): Բավականաչափ ընդարձակ (104 քառ. մ) այս դահլիճը ծածկվում էր 3 թաղակիր կամարների վրա հենվող գլանաձեւ թաղով: Իր տեսակում սա եզակի է հայկական ժամատների մեջ, չի հանդիպում ո՛չ այս, ո՛չ էլ հաջորդ դարերում: Թաղակիր կամարները (պահպանվել է միայն մեկը) հենվում էին զույգ կիսասյուներից կազմված որմնամույթերին (3-ական հարավային ու հյուսիսային երկայնական պատերին, ներսից): Ժամատան հարավային մուտքը բացվում էր հարավակողմյան թաղակապ սրահի մեջ, իսկ արեւելյանը՝ տանում դեպի եկեղեցու ներսը: Երկայնական պատերին, որմնամույթերի խոյակների բարձրությամբ ձգված զարդանախշավոր գոտիներն աշխուժություն են մտցնում նրա պարզ ինտերյերում:

Եկեղեցու եւ ժամատան ողջ հարավակողմյան երկարությունն ընդգրկող ընդարձակ (140 քառ մ) սրահը նույնպես ծածկված էր թաղակիր կամարների վրա ու կամարային իր հինգ բացվածքներով ուղղված էր վանքի բակի կողմը:

Վերդարպասյա եկեղեցու (Սբ Աստվածածին) կառուցումը վերագրվում է Բաղաց Գրիգոր թագավորի կնոջը՝ Շահանդուխտին եւ իր քրոջ Կատային, որոնց պատվերով այն իրականացվել է 1086թ.(5): Գտնվում է վանքի հիմնական խմբի հարավարեւմտյան կողմում՝ կամարային բացվածք ունեցող ու անձեւ քարերից շարված մի բարձր պատվանդանի վրա: Մատուռանման, թաղածածկ երկթեք կտուրով մի կառուցվածք է:

Ի տարբերություն Սյունյաց աշխարհի մի շարք հուշարձանների՝ Վահանավանքի համալիրի մեջ մտնող բոլոր շենքերը կառուցված են խոշոր չափերի, սրբատաշ ու կարմրադեղնավուն բազալտով: Համալիրի մեջ մտնող հուշարձանները բնութագրվում են հորինվածքային շեշտված ինքնատիպությամբ:



1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# Քննություն Հայաստանի IV-XI դարերի շինարարական վկայագրերի

## Հատված Ալեքսանդր Մանուչարյանի համանուն գրքից

Վահանավանքի կաթողիկե եկեղեցին կառուցված է 911 թվականին: Մաքրման աշխատանքներ կատարելուց հետո պարզվեց, որ արեւմտյան հատվածում գմբեթակիր կամարները կրող մույթերն իրականում արեւմտյան ավանդատների արեւելյան պատերն են(1):

Եկեղեցու արեւմտյան կողմում եղել է ընդարձակ գավիթ, իսկ գավթի եւ եկեղեցու հարավային կողմի ամբողջ երկայնքով՝ սյունազարդ, երկարավուն սրահ, ինչպես Եղեգիսում, Որոտնավանքում եւ Տաթեւում:

Եկեղեցին կիսակործան վիճակում է: Առանձնապես ավերված է արեւմտյան հատվածը: Գավթի տանիքից մնացել են միայն երկու կամարները: Կործանվել է նաեւ հարավային կողմի սրահի ծածկը: Բոլոր շենքերը կառուցված են սրբատաշ բազալտից: Սրահից հարավ նշմարվում են եւս մի շինության մնացորդներ, որոնք վերագրվում են սեղանատանը:

Այս խմբից հարավ՝ մի քանի մետր հեռավորությամբ, տեղանքի թեքության վրա եղել է թաղածածկ մատուռ: Նրա արեւելյան զանգվածը լանջի թեքության պատճառով կրկնահարկ է: Մատուռի տանիքը չի պահպանվել:

Վանական շենքերի կառուցման պատմությանն ամբողջ գլուխ է (ԽԵ ) նվիրել Ստ. Օրբելյանը: Պատմիչը տեղեկացնում է, որ Ջագիկ իշխանի որդի Վահանը իր եղբայր Ջեւանշերի հետ միասին «...Սկիզբն առնէ շինուածոյ եկեղեցւոյն եւ կանգնէ տուն փառացն Աստուծոյ՝ յոյժ գեղեցիկ յօրինուածովք, գմբէթայարկ եւ եռախորան հաստահեղոյս եւ տաշածոյ վիմօք. եւ կարգէ զնա տուն կրօնաւորաց»(2): Այստեղից պարզվում են երկու կարեւոր հարցեր: Խորան բառի տակ պետք է հասկանալ բեմական հարթակը եւ կողմնային խաչաձեւ թեւերը միայն, որովհետեւ արեւմտյան թեւը միջանցքի դեր է կատարում եւ խորան՝ սրբատեղի(3) հասկացողություն բովանդակել չի կարող: Այստեղ խոսքն ավանդատներին եւս վերաբերել չի կարող, որովհետեւ դրանք բոլոր դեպքերում երեքը չեն եւ ավանդատների համար Ստ.Օրբելյանը միշտ սենյակ բառն է օգտագործում: Պարզ է նաեւ, որ, որմնամույթերի առկայության դեպքում եկեղեցին եռախորան բառով բնորոշվել չէր կարող, որովհետեւ արեւմտյան հատվածի կողմնային մասերն էլ կմտնեն խորան հասկացողության մեջ: Մնում է համոզվել, որ Վահանի կառուցածը եղել է ներքին խաչաձեւությամբ չորս ավանդատնով գմբեթասրահ:

Այս վկայությունից պարզվում է նաեւ, որ եկեղեցուց բացի, Վահանը կառուցել է տներ՝ միաբանության անդամների համար: Ներկայումս դրանք չեն պահպանվել, եւ հայտնի չէ, թե ինչպիսի տարածք է զբաղեցրել վանքը:

Շինարարական տեղեկություններից հետո պատմիչը բերում է նվիրատվությունների ցանկը, նկարագրում վանքի բարգավաճ վիճակը եւ Վահանի անունով այն կոչելու պատմությունը:

Եկեղեցու շինության թվականի մասին Ստ.Օրբելյանը գրում է. «Եղեւ շինութիւն սուրբ ուխտին 360 (911) թվականին հայոց»(4):

Վահանը, հաստատելով միաբանությունը, ինքն էլ դառնում է կրոնավոր վանահայր եւ մահանում ու թաղվում է Վահանավանքում: Պատմիչի այս տեղեկությունները հաստատվեցին նաեւ վիմագիր մի հիշատակարանով, որը վերջին ժամանակներս հայտնաբերեց եւ հրատարակեց Գ. Գրիգորյանը. «ՏԷՐ ՎԱՀԱՆ ՆԱԽԱՇԻՆՈՂ ՏԵՂԱՑՍ»(5):

Շինարարական աշխատանքները շարունակեց Ջեւանշիրի որդի Վահանը, որն իր կրթությունը ստացել էր այս վանքում եւ հորեղբոր՝ Վահանի մահվանից անմիջապես հետո դարձել էր միաբանության առաջնորդ: «Սա յաւել բազում շինութիւնս եւ զարդարեաց զվանսն հանդիսական կարգօք, շինէ զմեծ աղօթարանն ի դրան եկեղեցւոյն վիմարդեան մահարձանօք, յորում հանգուցեալ կան ի շիրմի բազում թագաւորք եւ թագավորք Աղվանից եւ Բաղաց, եւ բազում իշխանք փառաւորք Սիսական աշխարհիս: Շինէ եւ գեղեցիկ յօրինուածով զգավիթ եկեղեցւոյն մեծամեծ քերածոյ վիմօք 30 կանգնոց չափ, կանգնէ կամար ի դրան վանիցն եւ ի վերայ՝ երկու խորան յանուն Պետրոսի եւ Պօղոսի սուրբն առաքելոցն: Շինէ եւ ի ձուլեալ կրաշաղախ քարանց տրապէզ մի մեծ, եւ բերէ փողովք զջուրն ի դուռն նորա» (6):

Պատմիչի տված այս կարեւոր տեղեկությունը մեծապես օգնում է պարզաբանելու ոչ միայն մյուս շինությունների կառուցման ժամանակը, այլեւ մի շարք հարցեր՝ կապված ճարտարապետական տերմինների հետ: Ջեւանշիրի որդի Վահանն, ըստ պատմիչի, կառուցել է մեծ աղոթարան, որտեղ գտնվում են բազում թագավորների եւ թագուհիների շիրիմներ, գավիթը՝ վանքի մուտքի մոտ, երկու խորանով կամար՝ նվիրված Պողոս եւ Պետրոս առաքյալներին, սեղանատունը եւ խողովակներով ջուր է բերել վանք:

«Մեծ աղոթարան» պետք է հասկանալ հարավակողմի սյունասրահը, որովհետեւ տապանաքարերը հիմնականում այստեղ հայտնաբերվեցին: Միաժամանակ սրահի տեղադրությունը հարավային կողմում, մուտքին կից, նույնպես համապատասխանում է պատմիչի տված տեղեկությանը: Վերջապես, հիշատակված մյուս շինությունների որոշակիությունն ավելորդ անգամ հավաստում են, որ աղոթարան բառի տակ Ստ.Օրբելյանը նկատի է ունեցել հատկապես արտաքին սրահը: Այստեղ առավել կարեւոր է սրահի աղոթարան անվանումը, որովհետեւ այդ բառով, ըստ էության, բացահայտվում է սրահի գործնական իմաստը: Աղոթասրահ բառը ցույց է տալիս, որ IV-V դարերի արտաքին սյունասրահների նման սրանք եւս կառուցվել են որպես աղոթատեղի՝ տեղադրված եկեղեցու դահլիճից դուրս:

Վահան երկրորդի կառուցած երկրորդ մեծակերտ շինությունը թաղածածկ գավիթն է:

Առանձնապես հետաքրքիր է կամարը՝ նվիրված Պողոս, Պետրոս առաքյալներին: Ստ. Օրբելյանն ասում է, որ այդ կամարը գտնվել է «ի դրան վանիցն», այսինքն՝ վանքի, եւ ոչ թե որեւէ եկեղեցու մուտքի մոտ: Ներկայումս չկան ո՛չ կամարը, ո՛չ էլ միաբանության մուտքը, եւ այդ պատճառով էլ դժվար է որոշել նրա տեղը: Հիմք ընդունելով Ստ. Օրբելյանի նկարագիրը՝ կարելի է մոտավոր պատկերացում կազմել կամարի կառուցվածքային ձեւերի մասին: Պատմիչը նշում է, որ կամարի վրա եղել են երկու խորաններ, ուրեմն շինությունը եղել է երկհարկ: Միաժամանակ կամար բառից երեւում է, որ դա եկեղեցական շենք չի եղել: Ամենայն հավանականությամբ սա Հոռոմոսի մոտի Ղոշերի տիպի կոթողային շինություն էր՝ վրան երկու մատուռաձեւ աշտարակներով, որոնց Ստ.Օրբելյանը խորան է անվանում:

Չորրորդ շինությունը, որ կառուցել է Վահան երկրորդը, այժմ հիմնովին ավերված սեղանատունն է, իսկ աղբյուրը գտնվում է եկեղեցական շենքից հարավ: Գ.Գրիգորյանի վկայությամբ՝ «աղբյուրի ջուրը բերված է կավե թրծած խողովակներով» (պատմիչն օգտագործում է «փողովք» բառը):

Վահան երկրորդի շինարարական այս աշխատանքների թվականը Ստ. Օրբելյանը չի հաղորդում: Հայտնի է, որ վանքի առաջնորդությունը Վահանը ստանձնեց իր հորեղբոր՝ Վահան առաջինի մահից հետո: Հայտնի չէ նաեւ Վահան առաջինի մահվան տարեթիվը: Պատմիչը տեղեկացնում է միայն, որ նա մահացել է եկեղեցու կառուցումից «յետ բազում ճգանց եւ աշխատութեանց», որտեղից պետք է ենթադրել նրա երկար տարիների առաջնորդությունը 911 թվականից հետո:

Վահան երկրորդը միաբանությունը գլխավորել է մինչեւ 958 թվականը: Անահիա Մոկացուց հետո՝ 958 թվականին, Վահանը ձեռնադրվեց Սյունյաց թեմի գահակալ: Ելնելով այս տվյալներից՝ նրա կառուցած շինությունները հնարավոր ենք գտնում թվագրել X դարի 30-40ական թվականներով:

1968 թվականին Գ.Գրիգորյանը հայտնաբերեց շինարարական բովանդակությամբ մի կարեւոր արձանագրություն եւս.

*ԹՎ ՆՂԵ (1046)*

*ՈՂՈՐՄԵԱ ՔՍ ԱԾ ՍՄՊԱՏԱ ԹԱԳԱՒՈՐԻ*

*ԵՒ ԻՒՐ ԵՂԲԱՒՐՆ ԳՐԻԳՈՐՈ ՇԻՆՈՂԻ ՍՐԲՈ ԵԿԵՂԵՑՈՅՍ, ՍՐԱՀԻՍ ԵՒ ԺԱՄԱՏԱՆՆ ՈՐՔ ՄՏԱՆԷՔ ՅԱՐԿԱ ՍՐԲՈՒԹԵԱՆ ԶՍՈՅԱ ՅԱՂԱՒԹԱ ՅԻՇԵՑԷՔ(7):*

Շարունակությունը՝ էջ 28

### Ծանոթագրություն

1. Կիսակործան դարձած եւ մասամբ հաստ հողաշերտով ծածկված հուշարձանախումբը գտնվում է Ղափանից 7 կմ հարավ-արեւմուտք՝ Ողջի գետահովտի աջափնյա անտառապատ լանջին: 1966թ. այստեղ սկսվել են պեղումներ, որոնց ընթացքում փլատակներից մաքրվել են գլխավոր եկեղեցին ու ժամատունը, հայտնաբերվել են կամարակապ սրահ, բազմաթիվ արձանագիր տապանաքարեր: (Տես Գ.Գրիգորյան, Վահանավանքի պեղումների նախնական արդյունքները, 1960-1970թ.թ., «Լրաբեր», 1970, №10, էջ 81-93, նույնի՝ Վիմագրություններ Վահանավանքի պեղումներից, ՊԲՀ, 1980, №2, էջ 154-165):
2. Ստ.Օրբելյան, էջ 240: Վահանավանքի նորահայտ տապանագիրը, որում հիշատակված է. «Տեր Վահան նախաշինող տեղացս» (տե՛ս Գ.Գրիգորյան, հիշ. աշխ., էջ 80), միանգամայն հաստատում է պատմիչի վկայությունը:
3. Ս.Մնացականյան, հիշ. աշխ., էջ 87:
4. Ստ.Օրբելյան, էջ 240, նույն տեղում հիշատակվում է նաեւ տրապեզի (սեղանատան) կառուցման մասին:
5. Ստ.Օրբելյան, էջ 241: Վերդարպասյա եկեղեցու երկրորդ հարկը կազմող մատուռի պատին եղծված վիճակում պահպանված վիմական արձանագրության մեջ հիշատակվում է կառուցման նույն՝ ՇԳԵ-1086 թվականը:

1992թ.

■

նակ տձեւ քարերի թափոններ եւ երկրաչափական զարդաքանդակներով մի քարաբեկոր: Այս անորոշ շինության վերնամասից հայտնաբերվել են մոնոզոլական շրջանի 15 արծաթյա դրամներ, որոնց արձանագրությունների վերծանությունը կատարել է դրամագետ Արմինե Զոհրաբյանը: Կարծում ենք, որ այս կառույցը կարող էր լինել դամբարան կամ պարզապես դիտաանոց, որի՝ նախապես ունեցած սրբատաշ քարահատակը չի պահպանվել: Այս առեղծվածը կբացահայտվի պեղման աշխատանքներից հետո, եթե իջնենք կառույցի մինչեւ հատակը: Առանց պատերն ամրացնելու՝ այստեղ խիստ վտանգավոր է շարունակել պեղման աշխատանքները:

## ՎԱՀԱՆԱՎԱՆՔԻ ՀԱՆԳՍՏԱՐԱՆՆԵՐԸ

Սյունյաց եւ Աղվանից իշխանազունների գերեզմանոցը, ըստ նորահայտ խաչքարերի եւ տապանաքարերի, գտնվում է մեծ տաճարի գավթում եւ սյունասրահում, ինչպես նաեւ վանքի հյուսիսարեւելյան եւ հարավային սարալանջերին: Գերեզմանաքարերի մեծ մասը ծածկված է փլատակներով եւ անտառային բուսականությամբ: Այստեղ է Սոփի թագուհու հիշատակին 1081թ. նրա զավակների կանգնեցրած գեղաքանդակ խաչքարը, որը հայտնի է «Շահանդուխտի խաչքար» անունով: Վահանավանքի ավերակված բնակարաններից մի քանիսի պատերի մեջ նկատվում են վանքի շինաքարերի առանձին նմուշներ, որոնք հիմք են տալիս ենթադրելու, որ այդ շենքերը վեր են խոյացել Վահանավանքի կործանումից հետո: Բնակարանների մեծագույն մասը կառուցված է տարբեր չափերի ու մեծության տձեւ քարերի եւ կրաշաղախի կիրառմամբ, օգտագործված են նաեւ արհեստականորեն ճեղքված բազալտի բեկորներ եւ այլ քարատեսակներ: Բնակարաններն առանձնապես խիտ են աղբյուրի շրջակայքում, դեպի արեւմուտք ձգվող սարալանջին, ունեն տարածական տարբեր ծավալներ: Մինչեւ օրս գործող այս աղբյուրի սառնորակ, քաղցրահամ ջուրը կավե փողրակներով (քյունգերով) բերված է հյուսիսարեւմտյան սարալանջից՝ Տիգրանասարի ակունքներից X դարի 50-ական թթ. Վահան Ջեւանշերյանի առաջնորդության ժամանակ:

## ՎԱՀԱՆԱՎԱՆՔԻ ՄԵՏԱՂԱԶՈՒԼԱԿԱՆ ՎԱՌԱՐԱՆՆԵՐԸ

Վահանավանքի մեծ տաճարի կամարակապ գավթի արեւմտյան արտաքին պատը բացելու ժամանակ հայտնաբերվեցին մետաղամշակման երկու վառարաններ՝ կիսավեր վիճակում, եւ մեծ քանակությամբ խարամի կույտեր:

Ա. Հարավարեւմտյան վառարան՝ բարձրությունը՝ 1մ 30սմ, լայնությունը՝ 56,05սմ, տրամագիծը՝ 44սմ, տաշտակի երկարությունը եւ լայնությունը՝ 60-ական սմ, ձախակողմյան պատուհանի լայնությունը՝ 16սմ, բարձրությունը՝ 22սմ, աջակողմյան պատուհանի լայնությունը՝ 48սմ (ներքին մասում), վերին մասում՝ 35սմ, բարձրությունը՝ 63սմ, խորությունը՝ 31սմ:

Արեւմտյան հենապատից մինչեւ վառարանի ստորին մասը՝ 3մ 17սմ, վերին շերտից մինչեւ վառարանի վերին մակարդակը՝ 2մ 80սմ, ներքին մակարդակից մինչեւ հատակը՝ 1մ 60սմ:

Բ. Հյուսիսարեւմտյան վառարան

Արեւմտյան հենապատի վերին մակարդակից մինչեւ վառարանի վերին մասը՝ 3մ, մինչեւ արտաքին պատը՝ 80սմ, տրամագիծը՝ 37,05սմ, ներքեւը՝ նույնքան: Բարձրությունը՝ հատակից մինչեւ վերին մակարդակը՝ 1մ 27սմ: Վառարանի վերնամասում ուղղահայաց դիրքով՝ փոքր-ինչ թեքությամբ, իրար կից շուրջանակի շարված են 11 ուղղանկյունաձեւ թրծած աղյուսներ:

Նորահայտ վառարանների մանրամասն նկարագրությանը եւ ֆունկցիոնալ նշանակությանն անդրադարձել է Կապանի հնագիտական արշավախմբի անդամ, հնագետ Հուսիկ Մելքոնյանը(14):

### Ծանոթագրություն

1. Ստեփանոս Օրբելյան, էջ 175:
2. Ստ. Լիսցյանը նկատել է, որ Կապանի Բեխ գյուղի (ըստ Ստ.Լիսիցյանի՝ Բեխ ուդիերեն նշանակում է արեւ, («Զանգեզուրի հայերը», էջ 25) Անապատի շենքերի վրա «նկատվում է Վահանավանքի ճարտարապետության ազդեցությունը» («Զանգեզուրի հայերը», էջ 48): Ի դեպ, Վահանավանքը նա զետեղել է Սյունիքի պաշտպանական կառույցների մեջ (նույն տեղում էջ 46):
3. Նույն տեղում, էջ 245-246:
4. Ստ.Մնացականյան, Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երեւան, 1960, էջ 160:
5. Հովսեփ Եղիազարյան, Շիրակի լեռնահովտի պատմական հուշարձանները, Երեւան, 1975:
6. Նույն տեղում:
7. Вахтанг Беридзе, Лурджи монастери в Тбилиси. Разыскания Института истории грузинского искусства АН Груз, ССР, Тбилиси, 1948, илл. №13:
8. Ստ.Օրբելյան, էջ 176:
9. Ս.Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, h 2, էջ 38:
10. Ստ.Մնացականյան, Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, էջ 186-188:
11. Նույն տեղում, էջ 188:
12. Ըստ Ռ.Հովհաննիսյանի՝ Վահանավանքում պատմած բանավոր վկայության:
13. Յու.Թամանյան, Հուշարձաններին նոր կյանք, Երեւան, 1988, էջ 127:
14. Հ.Մելքոնյան, Վահանավանքի մետաղածուլական հնոցները, Երիտասարդ գիտնականների կոնֆերանսի զեկուցումների թեզիսներ, Երեւան, 1980:

■

1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ
ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# Վահանավանքի Սբ Աստվածածին եկեղեցի (XI դ.)

## Հատված Յու.Թամանյանի «Քարե տարեգրության վերականգնումը» աշխատությունից

**Սյունիքի պատմության համար կարեւոր նշանակություն ունեցող հուշարձանախմբերից է Վահանավանքը: Ոչ միայն իր կապարած դերով եւ տեղեկություններով, որոնց օգնությամբ պարզաբանվում են շատ պատմական անցքեր, այլեւ իր ճարտարապետական կառուցվածքներով: Այդ տեսակետից 1966 թվականին պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկերության միջոցներով սկսված պեղումները (հնագետ Գ.Գրիգորյանի ղեկավարությամբ) բացառիկ նշանակություն են ստանում:**

Պեղումների շնորհիվ համարյա լրիվ բացվել է գլխավոր եկեղեցու գավիթը՝ պահպանված պատերի մնացորդներով եւ իրարից անջատ զուգահեռ կամարներով: Նախքան պեղումները այդ կամարները հողից բուսած հսկա աղեղների տպավորություն էին թողնում: Գավթի հարավային մասին կից կառուցվածքը, որը նույնպես բացվել է պեղումների շնորհիվ, դեռ պարզված չէ, թե ինչ նպատակի է ծառայել: Սակայն պեղումների ղեկավարի կարծիքով՝ դա եղել է սյունազարդ սրահ եւ ծառայել է որպես դամբարան: Հատակը ծածկված է մեծադիր սալերով, որտեղ հանգչում են անվանի մարդկանց աճյունները (1): Մեր կարծիքով՝ դա կարելի է համարել նախագավիթ (Սանահինի օրինակով)(2):

Տապանաքարերը նույնպես հետաքրքիր վիմագրական տեղեկություններ են հաղորդում:

Համալիրի մեջ են մտնում նաեւ մեծ սեղանատան մնացորդները եւ մի շարք այլ կառուցվածքներ, որոնց նշանակության մասին կարելի է խոսել միայն հնագիտական պեղումներն ավարտելուց հետո: Հուշարձանախմբի շրջակայքում կան ընդարձակ գերեզմանատուն, աղբյուրի եւ բնակելի շենքերի մնացորդներ: Այդ բոլորը վկայում են երբեմնի խոշոր վանական համալիրի գոյության մասին:

Հիմնական հուշարձանախմբից դեպի հարավ՝ բարձունքի վրա, կառուցված է Աստվածածին եկեղեցին: Ըստ պահպանված արձանագրության՝ եկեղեցին 1086 թվականին կառուցել է Սյունիքի Գրիգոր առաջին թագավորի կին Շահանդուխտ թագուհին՝ իր քրոջ՝ Կատայի հետ միասին(3): Շահանդուխտ թագուհին եղել է Աղվանքի թագավոր Սեւադայի դուստրը: Աստվածածին եկեղեցին կարող է դասվել երկհարկանի դամբարան-եկեղեցիների շարքը, որը մեր ճարտարապետության մեջ առայժմ եզակի է: Նրա առաջին հարկը կառուցված է որպես դամբարան, որի վրա բարձրանում է եկեղեցու շենքը: Համաձայն Ս.Մնացականյանի ուսումնասիրությունների՝ մեծ եւ փոքր դամբարանները հաղորդակցվում են առանձին մուտքով(4), սակայն մեր դիտումներով այդ մուտքը չհայտնաբերվեց: Հավանական է՝ հետագա պեղումներն ու ուսումնասիրությունները լրիվ նյութ կտան այդ եզակի կառուցվածքի վերաբերյալ: Գիտական գրականության մեջ ընդունված է եկեղեցու ներքնահարկում լայն, թաղակապ բացվածքը համարել դամբարանի մուտք: Սակայն 1977 թվականի պեղումները պարզեցին, որ դա դամբարան չէ, այլ վանքի բակի մուտքն է, որը հարավից ձեւավորված է աղեղնակամարով (մնացորդը պահպանվել է):

Մուտքի եւ դամբարանների վրա բարձրանում է սրբատաշ բազալտից կառուցված Աստվածածին եկեղեցին: Ցավոք, այդ կառուցվածքից պահպանվել են միայն պատերի ստորին շարքերը, արեւելյան աբսիդի մի չնչին մասը եւ երկու՝ արեւմտյան ու հյուսիսային մուտքերը: Եկեղեցին՝ իր հատակագծային եւ ծավալատարածական հորինվածքով, պարզ կառուցվածք է: Արեւմուտքից արեւելք ձգված ուղղանկյան մեջ ամփոփված է միանավ հատակագիծ ունեցող եկեղեցին՝ ներսից՝ 6,52x2,93մ եւ արտաքինից՝ 7,80x4,45մ չափերով: Արեւմտյան մասում անմշակ քարերով կառուցված է գավիթը, որը, ինչպես ենթադրում ենք, ծածկված է եղել փայտե ծածկով եւ ավելի ուշ ժամանակի գործ է: Գավթի ներսի չափերն են՝ 8,60x4,06մ: Այժմ գավթի արեւմտյան պատը լրիվ թաղված է լեռնալանջի մեջ եւ գտնվում է կիսավեր վիճակում: Գավիթը հյուսիսից ունեցել է խոշոր, միակտոր բազալտի մույթերով ձեւավորված մուտք, որտեղ պետք է տանեին լեռնալանջի մեջ տեղադրված քարե աստիճանները, որոնցից ոչինչ չի պահպանվել: Եկեղեցու չափերն ավելի փոքր են, քան առաջին հարկի դամբարաններինը, որի հետեւանքով հյուսիսային եւ արեւելյան մասում առաջացել է շրջանցող հարթակ՝ 2,5x3,3մ լայնությամբ: Եկեղեցին իր երկայնական առանցքով լանջի նկատմամբ կառուցված է ուղղահայաց: Փլվել է դարեր առաջ, փլատակների վրա բուսած ընկուզենիները արդեն պատկառելի հասակ ունեն (շուրջ 100-120 տարի): Հողով ծածկված բեկորները շատ կարեւոր նյութ են վերակառուցման համար: Սակայն եկեղեցին վաղուց է քանդված, եւ քարերի զգալի մասը անհետ կորել է: Նախագծով նախատեսվում է վերականգնել եկեղեցու ճակատները, որտեղ համարյա չեն պահպանվել երեսապատերի քարերը: Լայնական կտրվածքը հնարավորություն տվեց վերականգնել թաղը եւ ապա, հաշվի առնելով թաղի քարերի եւ ծածկի սալերի հաստությունները, օգտագործելով գտնված քիվի անկյունաքարերը, որոշել ճակտոնների քիվերի եւ հետեւաբար տանիքների թեքությունները: Դրանք թելադրեցին ճակատների երեսապատման բարձրությունը: Արեւելյան պատուհանի տեղադրման համար նույնպես չէին պահպանվել համապատասխան տվյալներ, սակայն ելնելով դարձյալ համանմանության սկզբունքից՝ ժամանակավորապես տեղադրվեց՝ հետագայում ճշտելու պայմանով:

Ս.Մնացականյանն իր վերակազմության նախագծի մեջ տեղադրել էր արեւելյան պատուհանի պսակը, սակայն առայժմ չի գտնվել ոչ մի բեկոր, ուստի մեր վերակառուցման նախագծում այդ պսակը ցույց չի տրված: Գտնված քարերով վերականգնեցին քիվը: Պեղումներից հայտնաբերեցին ծածկի կղմինդրի ջարդված բեկորներ: Եվ հուշարձանի ծածկը նախագծվեց կղմինդրով:

Հյուսիսային մուտքի կամարի ներսի քարերը վերականգնվել են տեղում թափված բեկորների չափագրության տվյալներով: Նախագծով նախատեսվում է սալահատակել եկեղեցին եւ գավթի մուտքի առջեւ կոպտատաշ քարերից սանդուղքներ կառուցել:

### Ծանոթագրություն

1. Գ. Գրիգորյան, Վահանավանքի նորահայտ արձանագրությունները (ռուսերեն), Պատմաբանասիրական հանդես, 1, 1972:
2. Օ. Հ. Халпахчьян, Санаин, Москва, 1973, стр.49. Կ.Ղաֆադարյան, Սանահինի վանքը եւ նրա արձանագրությունները, Երեւան, 1957:
3. Գ.Գրիգորյան, նույն տեղում:
4. Ս.Մնացականյան, Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երեւան, 1960թ., էջ 186:

**1981թ.**

# Քննություն Հայաստանի IV-XI դարերի շինարարական վկայագրերի

**Սկիզբը՝ էջ 27**

Քանի որ կան Ստ.Օրբելյանի վկայությունը եւ վիմական վավերագիրը Վահան առաջին նախաշինողի վերաբերյալ, այս, անկասկած, նորոգման արձանագրությունն է:

Արձանագրության մեջ ուշադրության են արժանի սրահ եւ ժամատուն բառերը, որոնցով XI դարում արդեն փոխարինվել էին աղոթարան եւ գավիթ տերմինները:

Այս արձանագրությունը մի կիսակլոր քարի վրա է, որը, հավանաբար գավթի հարավային մուտքի ճակատակալն է եղել:

Վահանավանքի վերջին շինությունը երկհարկանի եկեղեցին է: Ստ.Օրբելյանը գրում է. «Բայց յետ բազում ժամանակաց յաւուրս Գրիգորի՝ թագաւորի Բաղաց, ի Շահանդխտոյ թագուհւոյն եւ ի Կայտայէ եւ ի Սենեքերիմայ թագաւորէ բազում եւ գեղեցիկ շինուածովք առաւել գեղեցկացուցին զվանսն Վահանու՝ կանգնեալ կամարս մեծամեծս, եւ ի վերայ՝ եկեղեցիս եւ սրահս բազմասիւնս բարձրաբերձ, հովանի եւ խրախարան իշխանացն. յորոց աւուրս եւ եկն երջանիկ կաթողիկոսն Աղվանից Տէր Ստեփաննոս եւ անդէն բնակեալ աւուրս ինչ՝ հանգեալ ի տեղւոջ, եւ եդաւ ի նմին սրբարանի»(8): Մոտավորապես նույնն է հաղորդում եկեղեցու հարավային պատի ներսի շինարարական արձանագրությունը.

*Ի: ՇԼԵ: (1086) ԹՎԱԿԱՆԻՍ ԵՍ ՇԱՀԱՆԴՈՒԽՏ ԴՈՒՍՏՐ ՍԵՒԱԴԱՅ ԱՂՎԱՆԻՑ ԹԱԳԱՒՈՐԻ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԳՐԻԳՈՐ ԹԱԳԱՒՈՐԻ ՈՐԴՈ ԱՇՈՏԿԱ, ՎԱՍՆ ՈՉ ԳՈԼՈ ՄԵՐ Ի ՄԻԱՍԻՆ ԺԱՌԱՆԳ [Ը]ՍՏ ՄԱՐՄՆՈ, ԵՍ ԵՒ ՔՈՅՐՍ ԻՄ ԿԱՏԱՅՍ ՇԻՆԵՑԱՔ ԶՍԲ ԱԾԱԾԻՆՍ ՓՈԽԱՐԵՆ ԳԹՈՅ ՆՈՐԱ: ՈՐՉԱՓ ԿԵՆԴԱՆԻ ԵՄ ՆՄԱ ԿԱՏԱՐԵՆ ԶՍԲ ԽՈՐՀՈՒՐԴՆ ԵՒ ՅԵՏ ԱՅՆՈՐԻԿ ԶՄԵԶ Կ[Ց]ՈՐԴ ԱՐԱՍՑԵՆ ԱՆՄԱՀ ԶԵՆՄԱՆՆ ՔԻ(9):*

Այս արձանագրությունից բացի՝ եկեղեցու շինության մասին հետաքրքիր հիշատակություն է փորագրված երեսապատման քարերից մեկի վրա(10):

Արձանագրություններից երեւում է, որ Շահանդուխտը եւ Կատան հաստատվել էին Վահանավանքում՝ ավելացնելով միաբանությունը նոր շինություններով եւ, ինչը կարեւոր է սկզբնաղբյուրները ճիշտ հասկանալու համար, նորոգել էին հները:

Ստ.Օրբելյանի թողած տեղեկությունն այս եկեղեցու մասին նույնպես ունի նկարագրական բնույթ: Եկեղեցին թաղածածկ է. պատմիչը գործածում է «կամարս մեծամեծս» արտահայտությունը, իսկ սրահը բնութագրում է «բազմասիւնս» բառով: Այս սրահի վերակազմությունը ներկայացրել է Ս.Մնացականյանը(11): Ուշագրավ է Ստեփանոս կաթողիկոսի արձանագրությունը, որտեղ սրահն անվանված է գավիթ: Սրահի տեղադրությունն արեւմտյան կողմում, որն ավանդական է գավթի համար, բնականաբար, ընկալվել է որպես գավիթ:

Վահանավանքի վերաբերյալ գրավոր վերջին տեղեկությունը վերաբերում է XIV դարի վերջերին:

### Ծանոթագրություններ

1. Տե՛ս Գ.Գրիգորյան, Վահանավանքի պեղումների նախնական արդյունքները (1966-1970), «Լրաբեր» հաս. գիտ.,1970, №10, էջ 85:
2. Ստ.Օրբելյան, էջ 238-239:
3. Տե՛ս «Բառգիրք հայկազեան լեզուի», էջ 391-392:
4. Ստ.Օրբելյան, էջ 240:
5. Գ.Գրիգորյան, նշված հոդվածը, «Լրաբեր» հաս. գիտ., 1970, №10, էջ 89:
6. Ստ.Օրբելյան, էջ 240:
7. Գ.Գրիգորյան, նշված հոդվածը, «Լրաբեր» հաս. գիտ., 1970, №10, էջ 87:
8. Ստ.Օրբելյան, էջ 241:
9. «Դիվան հայ վիմագրության», II, էջ 138:
10. Տե՛ս նույն տեղում, էջ 138:
11. Տե՛ս Ս.Մնացականյան, Հայկական ճարտ. Սյունիքի դպրոցը, էջ 187:

**1977թ.**

1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը

## Երեք հատված Ստ.Մնացականյանի նույնանուն գրքից

**1.** Սյունիքի IX-XI դարերի հուշարձանների հաջորդ հիմնական խումբն են կազմում կենտրոնագմբեթ եւ ընդերկայնական կառուցվածքների սինթեզի հիման վրա մշակված հուշարձանները, որոնց ակունքները նույնպես գնում են դեպի դարերի խորքը եւ որոնք արդեն VI-VII դարերում դրսեւորվել էին մի շարք բարձրարվեստ գործերում:

Սակայն այս տիպի կառուցվածքների մեջ եւս գմբեթավոր սրահների կոմպոզիցիան՝ իր այնքան ուշագրավ ձեւերով եւ հայկական ճարտարապետության հետագա շրջանների զարգացման համար ունեցած այնքան մեծ նշանակությամբ, առանձնահատուկ տեղ է գրավում, եւ հենց այդ պատճառով էլ որոշակի հետաքրքրություն է ներկայացնում IX-X դարերի սահմանագլխին կառուցված մի շարք հուշարձանների ուսումնասիրությունը, հուշարձաններ, որոնք հնագույններն են ոչ միայն Սյունիքում, այլեւ նշված դարաշրջանի ամբողջ հայկական ճարտարապետության մեջ առհասարակ:

Ճարտարապետական այս հորինվածքը եւս լավ հայտնի է VII դարում, երբ այն ի հայտ է գալիս այնպիսի նշանակալից գործերում, ինչպիսիք են Պտղնին եւ Արուճը:

Մասնագիտական գրականության մեջ այս տիպի կառուցվածքներից սովորաբար հիշատակվում է միայն IX դարի վերջին X դարի սկզբին Բագրատունյաց Սմբատ թագավորի կողմից արքայանիստ Շիրակավանում կառուցած եկեղեցին, որի ճիշտ թվագրումը դժբախտաբար հայտնի չէ: Երկրորդ կառուցվածքը արդեն Սյունիքից, հիշատակում է Ն.Տոկարսկին դեռեւս 1924թ. հրատարակած հոդվածում, որտեղ բերում է նաեւ հուշարձանի հատակագիծը(1): Մինչդեռ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տվյալ տիպը լավ հայտնի էր Սյունիքում եւ հատկապես այստեղ է, ուր հանդիպում ենք տվյալ էպոխայի առավել հնագույն օրինակներին, ընդ որում այստեղ՝ Սյունիքում, առկա է թե «ամբողջական» տիպը՝ արեւելյան եւ արեւմտյան որմնամույթերով հանդերձ, եւ թե՝ միայն արեւմտյան որմնամույթեր ունեցող «սեղմված» տարատեսակը:

Սյունիքում մինչեւ այժմ հաջողվել է հայտնաբերել IX-X դարերում կառուցված չորս կառուցվածք (Վահանավանք, Նորատուս, Բատիկյան, Գանձավանք), ընդ որում՝ նրանցից երեքը գտնվում են Գեղարքունիքում, իսկ չորրորդը՝ հարավային Սյունիքում: Նշված հուշարձաններից ճիշտ թվագրված է միայն Վահանավանքը (911): Նորատուսը կառուցել է Գրիգոր Սուփանի եղբայր Սահակը, որը 915թ., ինչպես հաղորդում է Ստեփանոս Օրբելյանը, թաղվել է եկեղեցու մուտքի առջեւ: Բատիկյանի եւ Գանձավանքի մասին որոշակի տեղեկություններ չկան, սակայն երկու հուշարձանն էլ՝ թե՛ իրենց ճարտարապետական հորինվածքով եւ թե՛ շինարարական տեխնիկայով, անքակտելիորեն կապված են Սյունյաց դպրոցի վերը հիշատակված հուշարձանների հետ եւ, ինչպես կտեսնենք հետագայում, պետք է թվագրվեն ոչ ուշ, քան IX դարի վերջը եւ X դարի առաջին տասնամյակները:

Ինչպես հայտնի է, գմբեթավոր սրահն ըստ էության միանավ թաղածածկ դահլիճ է՝ կենտրոնական մասում տեղավորված գմբեթով, որն իր հերթին հենվում է կառուցվածքի արտաքին պատերին հպված չորս բավականին ուժեղ որմնամույթերի վրա:

Այս հնագույն տիպի հետ մեկտեղ, X-XIII դարերում լայն տարածում է ստանում նաեւ այսպես կոչված «սեղմված» տիպը, որտեղ արեւելյան որմնամույթերը բացակայում են, եւ արեւելյան գմբեթակիր կամարը հենվում է եկեղեցու աբսիդի համապատասխան ելունների վրա:

Մասնագիտական գրականության մեջ այժմ ընդհանրացած է այն կարծիքը, թե տվյալ կոմպոզիցիան ստեղծվել է «ամբողջական» տիպի աստիճանաբար կարճեցման ճանապարհով, ընդ որում այդ կարճեցումը իբր ընթացել է հիմնականում արեւելյան որմնամույթերի եւ աբսիդի միջեւ ընկած տարածության նվազեցման ճանապարհով, որը եւ վերջիվերջո, արդեն XI դարի սկզբին, հանգեցրել է նշված էլեմենտների միաձուլմանը եւ պաշտամունքի կառուցվածքի նոր տիպի ստեղծմանը:

Չբացառելով արեւելյան զույգ մույթերի եւ աբսիդի միջեւ ընկած տարածության կրճատման ընդհանուր տենդենցը՝ նշենք, սակայն, որ այդ ոչ թե ինչ-որ առանձնակի երեւույթ էր՝ կապված հատկապես տվյալ տիպի զարգացման հետ, այլ արդյունք հուշարձանների բացարձակ չափերի եւ հատկապես նրանց երկարությունների որոշակի նվազեցման, որն ուներ, ինչպես նշվեց վերը, խորը արմատներ եւ կանխորոշված էր նոր էպոխայի նոր պահանջներով:

Դրա հետ մեկտեղ, պետք է նշել նաեւ, որ անկախ վերը նշված այս ընդհանուր պրոցեսներից, որը յուրահատուկ էր IX-XI դարերի հայկական ճարտարապետությանը առհասարակ, գմբեթավոր սրահների՝ առանց արեւելյան մույթերի տիպը վաղուց արդեն մշակվել էր Սյունյաց դպրոցի կողմից, եւ արդեն X դարի սկզբներին ներկայացված էր այնպիսի հետաքրքիր կառուցվածքներով, ինչպիսիք են Վահանավանքը եւ Գանձավանքը:

Այս կարգի հուշարձաններից հնագույն թվագրված կառուցվածքը Ղափանի շրջանի Բեխ գյուղից ոչ հեռու գտնվող Վահանավանքն է, որը, դժբախտաբար, մեզ է հասել կիսակործան վիճակում, իսկ վանական կոմպլեքսի գլխավոր եկեղեցուց կարելի է տեսնել միայն պատերի կրաբետոնյա լիցքի ոչ բարձր մնացորդները. երեսապատման քարերը դեռեւս հնում քանդվել են եւ հափշտակվել:

Ստեփանոս Օրբելյանն այս հուշարձանի մասին գրում է հետեւյալը. «Վահան ոմն՝ որդի Զագիկ իշխանի… եկեալ ի ստորոտ բարձր լերինն յորում անառիկ ամրոցն կայ Բաղաբերդու՝ հանդէպ Աճանանու եւ գտեալ տեղի մի հարթ եւ յոյժ ի ճահ... հրաւիրէ, զեղբարսն իւր ի նոյն գործ. եւ սկիզբն առնէ շինուածոյ եկեղեցւոյն եւ կանգնէ տուն փառացն Աստուծոյ՝ յոյժ գեղեցիկ յօրինուածովք, գմբէթայարկ եւ եռախորան, հաստահեղոյս եւ տաշածոյք վիմօք. եւ կարգէ զնա տուն կրօնաւորաց... եղեւ շինութիւն սուրբ ուխտին յ360 թուականին Հայոց... (= 911թ.)»(2):

Այժմ այս, երբեմնի հռչակավոր, վանական կոմպլեքսից շատ քիչ բան է մնացել, եւ նրա ամբողջ տերիտորիան ծածկված է անտառային բուսականությամբ:

Կառուցվածքների հիմնական խումբը բաղկացած է վերը նշված եկեղեցուց եւ նրանից արեւմուտք կառուցված գավիթից: Երկու հուշարձանն էլ մեզ են հասել խիստ վնասված դրությամբ, թեեւ այդ չի խանգարում պարզ կերպով տեսնելու, որ եկեղեցին իր հատակագծային հորինվածքով մի գմբեթավոր սրահ է եղել, որտեղ իսպառ բացակա են արեւելյան մույթերը:

Այս տիպի մի այլ հուշարձան է Սեւանի շրջանի Լճաշեն գյուղից ոչ հեռու գտնվող Գանձավանքը՝ կառուցված մի ոչ մեծ հրվանդանի գագաթին, ընդ որում վերջինս ափից անջատվում է մի բավական լայն եւ խոր հեղեղատով:

Հուշարձանը կառուցված է հրվանդանի հյուսիսարեւելյան անկյունում, եւ նրա հյուսիսային եւ արեւելյան պատերը, որոնք կառուցված են ապառաժի վրա դրված եւ զգալի բարձրության հասնող հենապատերի վրա, կազմում են վանքատեղը շրջապատող պարսպապատի մի օրգանական մասը:

Հուշարձանից մնացել են միայն արեւելյան մասի պատերը, ընդ որում ծածկի կոնստրուկցիայի մասին որոշ պատկերացում կարելի է կազմել փլատակների մեջ ընկած կրաբետոնի մի մեծ զանգվածի հիման վրա, որի վրա եւ պահպանվել են կոնաձեւ տրոմպի մնացորդներ:

Ուշագրավ է լուծված հուշարձանի արեւելյան մասը, որտեղ առկա է միայն մեկ ավանդատուն, որը եւ տեղավորված է կառուցվածքի հյուսիսարեւելյան անկյունում: Դժվար է որեւէ կոնկրետ բան ասել հուշարձանի ծավալային կոմպոզիցայի մասին, որովհետեւ ոչինչ չի հասել մեզ, որը հնարավորություն տար կազմելու նրա հավաստի վերակազմությունը: Բայց եւ այնպես պետք է նշել, որ ինչպես այս, այնպես էլ նույնատիպ այլ հուշարձանների ծավալային կոմպոզիցիաների միջեւ հազիվ թե որեւէ սկզբունքային տարբերություն լիներ, որովհետեւ խաչաձեւ ծածկի այն կլասիկ սխեման, որը հայտնի էր դեռեւս VII դարում եւ, ինչպես տեսանք վերը, լայնորեն օգտագործվում էր նաեւ սյունյաց դպրոցի տարբեր հուշարձաններում, ամենայն հավանականությամբ իր դրսեւորումն է գտել նաեւ այստեղ՝ Գանձավանքում:

**Ծանոթագրություն**

1. Н.Токарский, Предворительный отчет о поездке в Армению осенью 1923., "Известия" РАИМК, IV, 1924:

**2. Ստ.Օրբելյան, էջ 240:**

**2.** …Մյուս հուշարձանը Վահանավանքի երկհարկանի դամբարան-եկեղեցին է:

Ստեփաննոս Օրբելյանը, նկարագրելով վանական կոմպլեքսի կառուցվածքների շինարարությունը, գրում է. «Բայց յետ բազում ժամանակաց յաւուրս Գրիգորի թագաւորի Բաղաց, ի Շահանդուխտոյ թագուհւոյն... բազում եւ գեղեցիկ շինուածովք առաւել գեղեցկացուցին զվանսն Վահանու՝ կանգնեալ կամարս մեծամեծս, եւ ի վերայ՝ եկեղեցիս եւ սրահս բազմասիւնս բարձրաբերձ, հովանի եւ խրախարան իշխանացն, յորոց աւուրս եւ եկն երջանիկ կաթողիկոսն Աղվանից Տէր Ստեփաննոս եւ անդէն բնակեալ աւուրս ինչ՝ հանգաւ ի տեղւոջն, եւ եդաւ ի նմին սրբարանի»(1):

Հուշարձանի երկրորդ հարկը կազմող մատուռի պատի վրա պահպանվել են մի քանի խիստ հողմահարված արձանագրություններ, որոնցից մեկի վերջում կարելի է որոշակի կերպով նշմարել թվագրությունը – ՇԳԵ = 1086 թվական:

Հուշարձանի առաջին հարկը բաղկացած է կոպիտ մշակված սալաքարերից կառուցված երկու թաղածածկ դամբարանից, որոնք ժամանակին միմյանց հետ էին հաղորդակցվում առանձին մուտքով: Այժմ այդ մուտքն ամբողջովին փակված է, եւ երկրորդ դամբարանի ներքին տարածությունը կարելի է դիտել միայն նրա հյուսիսային պատի մեջ արված ոչ մեծ լուսամուտի միջով: Արեւելյան, ավելի մեծ չափեր ունեցող դամբարանի մուտքը նույնպես բացված է հյուսիսային կողմում եւ ուղղված է դեպի վանական կոմպլեքսի ընդարձակ, այժմ ամբողջովին անտառային բուսականությամբ ծածկված բակը, որի մյուս ծայրին ժամանակին բարձրանում էր կոմպլեքսի գլխավոր եկեղեցին եւ նրա արեւմտյան կողմում կառուցված գավիթը:

Դամբարանն ունի զգալի չափեր՝ 2,75x3 մետր, մի բավականին մեծ խորշ (1,20x2 մետր) արված է նրա հարավային պատի մեջ, ուղիղ մուտքի դիմաց: Դամբարանի բարձրությունն է մինչեւ կամարի վերին կետը՝ 3 մետր:

Ի հակադրություն առաջին հարկի անմշակ քարերից շարված պատերի՝ երկրորդ հարկի մատուռը, որից, դժբախտաբար, մնացել են միայն պատերի ներքեւի մասերը, շարված է եղել արդեն վարդագույն տուֆի կանոնավոր մշակված քարերից: Մատուռն ունեցել է երկու մուտք. արեւմուտքից եւ հյուսիսից արեւմտյան մուտքը բացվում էր լեռնալանջի մեջ արված երկարավուն հարթակի վրա, ընդ որում վերջինս լեռնալանջի կողմից պաշտպանված է հատուկ հենապատի միջոցով: Հարթակը ձգված է հարավից հյուսիս եւ նրա երկու ծայրամասերում այսօր էլ կարելի է տեսնել ընդարձակ շքամուտքերի մնացորդներ, որտեղ ուղղանկյուն կտրվածք ունեցող սյուների վրա հենվել են հորիզոնական ուժեղ քարե հեծաններ: Դեպի նշված շքամուտքերն են տարել լեռնալանջի երկայնքով տեղավորված քարե աստիճաններ, որոնցից այժմ պահպանվել են միայն աննշան մնացորդներ:

Ինչպես Ցաղացքարում, այնպես էլ այստեղ երկրորդ հարկի մատուռն ունի համեմատաբար ավելի փոքր չափեր, քան կառուցվածքի առաջին հարկը կազմող դամբարանը, եւ մատուռի շուրջը ստացվող 80սմ լայնություն ունեցող հարթակը հնարավորություն է տալիս ազատ կերպով շրջանցել երկրորդ հարկի կառուցվածքը: Լեռնալանջի վրա ծգվող սյունասրահից եւ դամբարանի առաջին հարկի տանիքի վրա արված հարթակից հիանալի տեսարան է բացվում դեպի հանդիպակաց անտառապատ լեռնալանջերը, եւ, ինչպես հիշատակում է Օրբելյանը, հատկապես այստեղ էր, որ հավաքվում էին Սյունյաց նշանավոր իշխանները, եւ այս սյունասրահը ոչ այլ ինչ էր, քան «հովանի եւ խրախճարան իշխանաց»:

**Ծանոթագրություն**

*1. Ստ.Օրբելյան, էջ 241:*

**3.** X-XIII դարերի հայկական ճարտարապետության մեջ գավիթները (ժամատները) առանձնահատուկ տեղ են գրավում եւ աչքի ընկնում իրենց թե՛ ֆունկցիոնալ եւ թե՛ ճարտարապետական առանձնահատկություններով:

Հանդիսանալով նոր դարաշրջանի առաջացրած պահանջների արդյունք, ֆունկցիոնալ տեսակետից սերտ կերպով կապված լինելով տարբեր տիպի ժողովների, դատավարությունների եւ համանման այլ հավաքույթների համար տեղ ունենալու անհրաժեշտության հետ՝ գավիթները միաժամանակ ծառայում էին որպես ֆեոդալական վերնախավի տոհմային դամբարաններ եւ ըստ էության հանդիսանում X-XIII դարերի հայկական մեմորիալ ճարտարապետության հուշարձաններ:

Գավիթները հայկական ճարտարապետության մեջ հայտնի են արդեն X դարից, ըստ որում հնագույն օրինակները պարզ, ուղղանկյուն հատակագիծ ունեցող կառուցվածքներ են՝ ծածկված փայտով կամ կիսաշրջանաձեւ թաղով: Հետագայում է միայն, մոտավորապես XI դարի առաջին տասնամյակներից սկսած, երբ հայկական ժողովրդական տան չորս սյուներով եւ հազարաշենով ծածկված կոմպոզիցիան իր լիարժեք մարմնավորումն է գտնում քարային կոնստրուկցիաներում եւ հիմք հանդիսանում հայկական գավիթների այնքան յուրահատուկ կերպարի ստեղծման համար:

Ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, հայկական հնագույն գավիթները գտնվում են Սյունիքում, ընդ որում նրանց կարելի է հանդիպել նահանգի քիչ թե շատ նշանակալից ճարտարապետական բոլոր կոմպլեքսներում (Մաքենոցաց վանք, Կոթավանք, Վահանավանք, Որոտնավանք, Քարկոփ, Ցաղացքար եւ այլն):

Սյունիքի բոլոր հայտնի գավիթների մեջ առավել պարզ կոմպոզիցիա ունի Մաքենոցաց վանքի գավիթը՝ կառուցված գլխավոր եկեղեցու արեւմտյան կողմում, ընդ որում, որպես նրա հարավային պատ ծառայում է միանավ եկեղեցու հյուսիսային պատը, մի բան, որը հնարավորություն է տվել նոր պատեր կառուցել միայն հյուսիսային եւ արեւմտյան կողմերում: Պատերը կառուցված են կոպիտ մշակված քարերից եւ ունեն համեմատաբար ոչ մեծ հաստություն, ընդամենը 65սմ:

Կենտրոնական քարե սյուների եւ նրանց համապատասխանող որմնասյուների բացակայությունը, ինչպես նաեւ պատերի ոչ մեծ հաստությունը, ընդարձակ ներքին տարածության պայմաններում, հիմքեր են տալիս ենթադրելու, որ կառուցվածքը ծածկված է եղել փայտով եւ, ամենայն հավանականությամբ, ունեցել է հազարաշենի տիպի մի ծածկ: Գլխավոր մուտքը տեղավորված է արեւմտյան կողմում: Սակայն կա մի երկրորդ, համեմատաբար ավելի փոքր մուտք եւս՝ բացված հյուսիսային պատի մեջ: Գավիթներում երկրորդ մուտքեր սովորաբար քիչ են հանդիպում եւ հայտնի են միայն առանձին հուշարձաններում

Շարունակությունը՝ էջ 30

1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ
ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը

## Երեք հատված Ստ.Մնացականյանի նույնանուն գրքից

**Սկիզբը՝ էջ 29**

(Արզական, Աստվածընկալ):

Գավթի արեւելյան պատի վրա պահպանվել է նշանակալից չափեր ունեցող կամարածածկ խորշի մի մասը, որի կամարի իմպոստը շատ ընդհանուր գծեր ունի գլխավոր եկեղեցու գմբեթակիր կամարների իմպոստների հետ:

Համանման խորշի մի մնացորդ էլ նկատվում է գավթի հյուսիսային պատում: Դեպի տաճար տանող մուտքի երկու կողմերում պատի շարքի մեջ դրված են IX-X դարերի յուրահատուկ ձեւեր ունեցող երկու բավականին մեծադիր խաչքարեր:

Իր ընդհանուր կոմպոզիցիայով այս գավթին է մոտենում նաեւ Վահանավանքի գավիթը՝ տեղավորված 911թ. կառուցված եկեղեցու արեւմտյան կողմում, ընդ որում այն հանգամանքը, որ գավիթը կառուցել է տաճարի կառուցողի հորեղբոր որդին, հնարավորություն է տալիս այն եւս թվագրել X դարի առաջին կեսով:

Ի տարբերություն Մաքենոցաց վանքի գավթի՝ այս գավիթը ծածկված է եղել կիսաշրջանաձեւ թաղով, եւ տեղում այսօր էլ կարելի է տեսնել երեք թաղակիր կամարի մնացորդները, որոնք ժամանակին գոտկել են գավթի ներսի տարածությունը:

Գավթի միակ մուտքը գտնվում է հարավային կողմում: Տրադիցիոն ձեւերի այսպիսի զգալի խախտումը, մեր կարծիքով, պետք է բացատրել կառուցվածքի տեղաբաշխման կոնկրետ պայմաններով, երբ նրա արեւմտյան պատը ընդհուպ մոտենում է անտառապատ լեռնալանջին, եւ լիովին բացառված էր արեւմտյան մուտքի հնարավորությունը: Կառուցվածքից պահպանվող են միայն նրա պատերի ներքեւի մասերը եւ բազալտի մեծադիր քարերից շարված թաղակիր ուժեղ կամարները, որոնք այսօր եւս բարձրանում են հուշարձանի փլատակների եւ նրանց՝ համարյա թե ամբողջապես ծածկող անտառային բուսականության վրա:

Թաղակիր կամարները ելնում են գավթի ընդերկայնական պատերին հպված որմնասյուներից, ընդ որում՝ վերջիններից նշմարվում են նրանց խոյակները միայն. պատերի ավելի ցած դասավորված մասերը լիովին ծածկված են փլատակներով: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում կամարների մշակման ձեւերը, այն ժամանակ, երբ արեւելյան կամարն ունի սովորական ուղղանկյուն կտրվածք, արեւմտյան կամարի ներքեւի կողմից, նրա ամբողջ երկարությամբ ձգվում է մի ուժեղ կիսագլան: Բացի դրանից՝ նրա երկու կողմերում եւս տեղավորված են մեկական՝ շատ ավելի փոքր տրամագիծ ունեցող կիսագլաններ:

Տարբեր են նաեւ որմնասյուները. հարավային որմնասյուներն ունեն պարզ, ուղղանկյուն կտրվածք, մինչդեռ հյուսիսայիններն ունեն շատ ավելի հարուստ մշակում: Նրանք ձեւավորված են երկու նուրբ սյունիկներով, որոնք իրենց հերթին պսակվում են գնդաձեւ խոյակներով եւ վերջինների վրա դրված միացյալ վերնասալով:

Գավթի ինտերիերի ձեւավորման մյուս առանձնահատկությունն է զարդաքանդակներով ծածկված լայն գոտու առկայությունը, որը ձգվում է որմնասյունից որմնասյուն, եւ նրանց խոյակների հարթության վրա շրջանցում, ինչպես կարելի է ենթադրել, բոլոր պատերը:

Կառուցվածքի ինտերիերը ձեւավորող համանման գոտի հայտնի չէ ո՛չ Սյունիքի եւ ո՛չ էլ այլ շրջանների որեւէ հուշարձանում, եւ հենց այդ տեսակետից էլ այն էական հետաքրքրություն է ներկայացնում: Հարավային մուտքի երկու կողմերից դուրս եկող որմնասյուների մնացորդները կասկած չեն թողնում շքամուտքի առկայության մասին:

Երրորդ հուշարձանը, որն ըստ էության ունի համանման կոմպոզիցիա, իշխանուհի Շահանդուխտի կողմից կառուցված Որոտնավանքի գավիթն է: Հուշարձանը գտնվում է 1000 թվականին կառուցված եկեղեցու արեւմտյան կողմում եւ, ինչպես կարելի է ենթադրել Ստեփաննոս Օրբելյանի հիշատակությունից, կառուցվել է թաղածածկ եկեղեցուց անմիջապես հետո, եւ այսպիսով հանդիսանում է XI դարի առաջին տարիների մի գործ:

Հուշարձանը մեզ է հասել համեմատաբար լավ դրությամբ, կանգուն են ե՛ւ պատերը, ե՛ւ կիսաշրջանաձեւ թաղը: Պատերը շարված են կոպիտ մշակված բազալտից եւ զուրկ են որեւէ դեկորատիվ հարդարանքից, եթե չնշենք մի խաչքար միայն՝ դրված արեւմտյան պատի մեջ՝ նրա հարավային կողմում: Գավիթն ունեցել է երկու մուտք՝ արեւմուտքից եւ հարավից, նրա ներսի պատերը ժամանակին սվաղված են եղել, թեեւ որմնանկարների հետքեր չեն երեւում:

Վերը հիշատակված բոլոր գավիթներն էլ՝ իրենց պարզ հատակագծային ձեւերով, պատկանում են այդ տիպի կառուցվածքների հնագույն շրջանին, երբ վանական կոմպլեքսները նոր էին զարգանում, եւ գավիթները հիմնականում կառուցվում էին որպես տոհմային դամբարաններ: Սակայն շատ չանցած, երբ աստիճանաբար զարգանում է վանական կյանքը, երբ այնտեղ բացվում են վանական դպրոցներ, կուտակվում ձեռագրեր, վավերագրեր, եւ լայն հիմքերի վրա է դրվում ձեռագրերի արտագրման գործը, վանական կոմպլեքսները հարստանում են նաեւ այլ տիպի կառուցվածքներով, որոնցից հատկապես անհրաժեշտ է հիշատակել գրատները:

Գրատների հիանալի օրինակներ ենք տեսնում ե՛ւ Սանահինում, ե՛ւ Հաղպատում, ե՛ւ շատ ուրիշ տեղերում, ընդ որում եթե ընդհանուր կոմպոզիցիայի լուծման տեսակետից նրանք ընդհուպ մոտենում են գավիթներին, ապա ինտերիերի մշակման մեջ զգալիորեն տարբերվում են նրանցից: Այստեղ չկան ավանդատներ, իսկ պատերի մեջ արված են բազմաթիվ, հաճախ հարուստ ձեւավորված խորշեր, որտեղ պահվում էին ձեռագրերը, մագաղաթները եւ գրենական անհրաժեշտ պիտույքները:

Ինչպես վկայում է Ստեփաննոս Օրբելյանը, Տաթեւի վանական կոմպլեքսը X դարի առաջին տասնամյակներին արդեն ուներ իր առանձին գրատունը: Սակայն ինքնին հասկանալի է, որ առանձին գրատների կառուցումը կարող էր արդարացվել միայն մեծ, կազմավորված վանական կոմպլեքսներում, որտեղ, անշուշտ, կային համապատասխան նախադրյալներ: Սակայն համեմատաբար փոքր վանքերում գրատների ֆունկցիաները հաջողությամբ կարող էին կատարել նաեւ գավիթները, եւ չպետք է զարմանալ, որ եւ Մաքենոցաց վանքի, եւ Ցաղացքարի գավիթներում առկա են բազմաթիվ, բավականին մեծադիր խորշեր:

Այս տեսակետից առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Ցաղացքարի գավիթը, որտեղ նրա հյուսիսային պատի ամբողջ երկայնքով տեղավորված են բավականին լայն, կամարածածկ խորշեր, որոնց ռիթմիկ շարքերն առանձնակի արտահայտչականություն են տալիս կառուցվածքի ինտերիերին:

Սակայն ձեռագրերի պահպանման եւ արտագրման համար ավելի բարվոք պայմաններ ստեղծելու ցանկությունը չէր կարող չբերել գավթի մի մասի անջատմանը եւ նրան կից մի քանի բաժանումների ստեղծմանը: Տվյալ տիպի կառուցվածքների վաղագույն օրինակներից մեկն է Քարկոփի գավիթը, որը կառուցված է եկեղեցու արեւմտյան կողմում:

Ուղղանկյուն հատակագծային կոմպոզիցիա ունեցող այս կառուցվածքը արեւմտյան կողմից բաժանված է երկու ոչ մեծ մասի, որոնցից հյուսիսարեւմտյանը մի լայն բացվածքով անմիջականորեն կապվում է գավթի ինտերիերի հետ, ընդ որում ուշագրավ է, որ նրա հատակը քիչ ավելի բարձր է բուն գավթի հատակից: Բացառված չէ, որ հենց այստեղ էլ պահվում եւ արտադրվում էին վանքի ձեռագրերը:

Արեւմտյան պատի երկայնքով արված մյուս բաժանմունքը արդեն անմիջականորեն կապված չէ գավթի ինտերիերի հետ, ունի իր առանձին մուտքը: Այն հանգամանքը, որ այստեղ պահպանվել են բուխարու հետքեր, որոշ հիմք է տալիս ենթադրելու, որ այստեղ տեղավորված է եղել խոհանոցը, եւ գավիթը, ըստ երեւույթին, միաժամանակ ծառայել է որպես սեղանատուն:

Գավթից հիմնականում պահպանվել է հյուսիսային պատը՝ երկու որմնասյան մնացորդներով: Միակ մուտքը տեղավորված է հարավային կողմում, եւ վերջինիս երկու կողմում որոշակի կերպով նշմարվում են շքամուտքի ելուստների մնացորդներ, որոնց ձեւերն ընդհուպ մոտենում են Վահանավանքի գավթի շքամուտքի ելուստներին:

Գավիթների այս տիպին է պատկանում Գնդեվանքի գավիթը, որը կառուցված է X դարի վերջին:

Ստեփաննոս Օրբելյանը, Գնդեվանքի տաճարի կառուցման մասին հիշատակելուց հետո, գրում է, որ «Դարձյալ յետ ամաց ինչ, ի 448 (=999թ.) թուականին Հայոց սուրբ հայրն Քրիստափոր շինէ զգաւիթսն եկեղեցւոյն»:

Գավիթը կառուցված է X դարի տաճարի արեւմտյան կողմում, արտաքինից ունի ուղղանկյուն եզրագիծ, եւ որոշ չափով արեւելքից արեւմուտք ձգված համաչափություններ:

Գավթի հյուսիսային պատի երկայնքով տեղավորված են երկու սենյակ, որոնցից արեւմտյանը՝ երկու լայն կամարածածկ բացվածքներով, անմիջականորեն կապում է գավթի ինտերիերի հետ, իսկ արեւելյանն ըստ էության մի ավանդատուն է՝ իր առանձին մուտքով, սակայն առանց աբսիդի: Գավթի հիմնական տարածությունը թաղածածկ է, ընդ որում թաղն ունի սլաքաձեւ կտրվածք եւ ուժեղացված է երկու թաղակիր կամարով: Ուշագրավ է, որ գավթի շքամուտքի կամարը եւս ունի պարզ դրսեւորված սլաքաձեւ գծագրություն:

Կառուցվածքի արտաքին ծավալային կոմպոզիցիան հիմնականում արտահայտում է նրա ներքին հորինվածքը. երկթեք տանիքով ծածկված ուղղանկյուն ծավալին հյուսիսային կողմից հպված է համեմատաբար ցածր, միաթեք ծածկով ավարտվող մի այլ ծավալ, որը եւ համապատասխանում է գավթի հյուսիսային մասում տեղավորված բաժանմունքներին:

Իրենց բնույթով գավիթներին ընդհուպ մոտենում են եկեղեցիների հարավային, հյուսիսային եւ արեւմտյան ճակատների երկարությամբ կառուցվող բաց սյունասրահները: X-XIII դարերի հայկական ճարտարապետության մեջ սյունասրահներ հանդիպում են համեմատաբար հազվադեպ, ընդ որում ուշագրավ է, որ առավել հնագույն օրինակները դարձյալ հանդիպում են Սյունիքում: Այդ սյունասրահներն իրենց կոմպոզիցիոն մշակման բազմաթիվ գծերով առնչվում են V դարի հայկական ճարտարապետության ընդհանրացած ձեւերի հետ եւ, ըստ էության, ներկայացնում են այդ հնագույն կոմպոզիցիաների վերապուրակային մնացորդները՝ հարմարեցված նոր պայմաններին եւ նոր դարաշրջանի առաջադրած խնդիրներին:

Այն հանգամանքը, որ սրահների հատակները եւս, որպես օրենք, ծածկված են գերեզմանաքարերով, կասկած չի թողնում, որ նրանք նույնպես, ինչպես եւ գավիթները, ըստ էության տոհմային դամբարաններ էին, գերեզմանատեղեր՝ ֆեոդալական վերնախավի ականավոր ներկայացուցիչների համար:

Սյունիքում սրահներ են հանդիպում ե՛ւ Տաթեւում, ե՛ւ Վահանավանքում, ե՛ւ Որոտնավանքում՝, ե՛ւ Ցաղացքարում:

Սյունիքի բոլոր սյունասրահներից առավել լավ պահպանված է Որոտնավանքի սյունասրահը՝ տեղավորված գմբեթավոր եկեղեցու հարավային կողմում: Մի այլ սրահ էլ ձգվում է թաղածածկ եկեղեցու հարավային ճակատի երկայնքով: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սյունասրահներն ուղղակի կցված են նշված եկեղեցիներին, եւ նրանց միջեւ չկա եւ ոչ մի կոնստրուկտիվ կապ: Դժվար չէ տեսնել նաեւ, որ գմբեթավոր եկեղեցու սյունասրահը ավելի վաղ է կառուցվել, քան թաղածածկ դահլիճի երկարությամբ ձգվող սրահը. վերջինիս պատը պարզապես հպվում է գմբեթավոր եկեղեցու սյունասրահի հյուսիսային մասին, եւ կասկած չի մնում նրանց կառուցման հերթականության առթիվ:

Գմբեթավոր եկեղեցու արեւմտյան ճակատի ամբողջ երկարությամբ ձգվող սյունասրահն իր կենտրոնական մասում ձեւավորված է երեք մեծ, կիսաշրջանաձեւ կամարներով, որոնք իրենց հերթին հենվում են Տ-ձեւ մույթերի վրա: Սյունասրահի կիսաշրջանաձեւ թաղը արեւելյան կողմում հենվում է եկեղեցու ճակատին հպված կամարաշարքի վրա եւ, ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, ծածկված է եղել միաթեք ծածկով: Հյուսիսային կողմում սյունասրահը ուղղակի հպվում է թաղածածկ եկեղեցու հարավային պատին: Ինչ վերաբերում է սյունասրահի հարավային վերջավորությանը, ապա այն այժմ ամբողջովին քանդված է, եւ մինչեւ հուշարձանը չմաքրվի փլատակներից, դժվար է որեւէ կոնկրետ բան ասել նրա ճակատային մասի կոնստրուկցիայի մասին:

Իր ընդհանուր ձեւերով այս սյունասրահից զգալիորեն տարբերվում է միանավ եկեղեցու հարավային ճակատի երկայնքով ձգվող, դարձյալ թաղածածկ սրահը, որը, ըստ էության, մի երկար կառուցվածք է՝ ձգված եկեղեցու եւ գավթի հարավային ճակատների երկարությամբ: Այն համեմատաբար ավելի բարձր է, քան գմբեթավոր եկեղեցու արեւմտյան սյունասրահը, եւ բակի հետ է կապվում մեկ լայն, պայտաձեւ կամարով ծածկված բացվածքով, որը հիանալի կերպով շեշտված է նրա երկար միապաղաղ եւ ճարտարապետական ոչ մի էլեմենտով չմասնատվող հարավային ճակատի վրա:

Հարավային ճակատը պսակվում է եռանկյուն ելուստներ ունեցող ատամնաշար քիվով, մոտիվ, որը խիստ հազվադեպ է այդ դարերում եւ, ընդհակառակը, լավ հայտնի VII դարում (Բագարան):

Կառուցվածքը, չնայած իր խիստ ձգված համաչափություններին, որոնք մոտեցնում են նրան սյունասրահներին, ըստ էության մի սովորական գավիթ է՝ կառուցված եկեղեցու հարավային կողմում: Այն փաստը, որ Որոտնավանքի այս երկու կառուցվածքների հատակներն էլ ծածկված են շիրմաքարերով, կասկած չի թողնում նրանց ֆունկցիոնալ նշանակության նույնության նկատմամբ, թեեւ նրանց ճարտարապետական լուծումներն այնքան տարբեր են, այնքան հեռու միմյանցից:

Նույն այս կառուցվածքների շարքին է պատկանում նաեւ Տաթեւի տաճարի հարավային ճակատի երկայնքով կառուցված սյունասրահը, որը, սակայն, խիստ տուժել է 1931թ. երկրաշարժի ժամանակ, եւ որից մնացել են միայն որմնասյուների եւ կամարների առանձին մնացորդներ: Կառուցվածքի արտաքին կերպարի մասին որոշ պատկերացում կարելի է կազմել տարիներ առաջ կատարված լուսանկարների հիման վրա, որոնք պատկերում են տաճարը մինչեւ կործանարար երկրաշարժը:

Սակայն լավ հայտնի է, որ 1138թ, երկրաշարժի ժամանակ, երբ կործանվեց տաճարի գմբեթը, խիստ վնասվեց նաեւ այդ սյունասրահը, որը, ինչպես եւ տաճարը, կիսակործան մնաց մինչեւ 1274թ,, երբ զգալի աշխատանքներ ձեռնարկվեցին վանական կոմպլեքսի վերականգնման ուղղությամբ:

Ամենայն հավանականությամբ հենց այդ է պատճառը, որ սյունասրահի (ինչպես այդ պարզ կերպով երեւում է նրա կանգուն ժամանակ կատարված լուսանկարներից) առանձին, համեմատաբար անադարտ հատվածների հետ մեկտեղ, կարելի է տեսնել նաեւ հատվածներ, որոնք վերաշարվել են, իսկ հնագույն կամարաղեղների քարերի դասավորությունը՝ խիստ կերպով խախտվել: Որ կառուցվածքի հնագույն մասերը անվիճելիորեն պատկանում են XI դարին, վկայում են այն ձեւավորող զարդամոտիվները, որտեղ V-VII դարերի ձեւերի կողքին (նշաձեւ զարդամոտիվներ, մեանդր) առկա են նաեւ այնպիսիներ, որոնք յուրահատուկ են հատկապես IX-XI դարերին:

Բացի սովորական եկեղեցիներին կից կառուցվող սյունասրահներից՝ Սյունիքում սյունասրահներ են հանդիպում նաեւ այնպիսի ուշագրավ հուշարձաններում, ինչպիսիք են երկհարկանի դամբարան-եկեղեցիները (Վահանավանք, Տաթեւ), ընդ որում նրանք այստեղ ոչ թե ինչոր հետագայում ավելացված կառուցվածքներ են, այլ, ինչպես այդ կտեսնենք, կազմում են տվյալ հուշարձանների ծավալային կոմպոզիցիաների օրինական մասը:

**1960թ.**

1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

## ՊԱՏՄՈՒՄ ԵՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ

# Հնագիտական-վերականգնողական աշխատանքներ

Ամեն ինչ սկսվեց 1964թ. ապրիլից, երբ «Սյունիքի վանական կալվածատիրությունը 9-13-րդ դարերում» թեման ուսումնասիրելու համար Կապան այցելեց Գրիգոր Գրիգորյանը (հնագետի մասին՝ թերթի սույն համարի էջ 90-ում): Վահանավանքի տեղը նրան ցույց տվեցին կապանցի հայրենագետներ Արտաշես Ծատրյանը, Աղամիր Աղամիրյանը…

Հնագիտական աշխատանքներն ավելի կանոնավոր փուլ մտան 1966թ. գարնանը: Դրանում մեծ է ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի վիմագրության բաժնի վարիչ Սեդրակ Բարխուդարյանի ավանդը:

Տեւական ժամանակ հնագիտական արշավախմբի գլխավոր խորհրդականն էր ակադեմիկոս Բաբկեն Առաքելյանը:

Վահանավանքի նորահայտ դամբարանները պեղեց եւ հանգուցյալներից մի քանիսի դեմքը վերականգնեց բժշկագիտության դոկտոր, պրոֆեսոր Անդրանիկ Ճաղարյանը (հանգուցյալներից երեքի վերականգնված դեմքը՝ էջ 66-ում):

Վահանավանքի վերականգնման ճարտարապետներն էին Աշոտ Հովսեփյանը, Յուլի Թամանյանը, Արթուր Մեսչյանը, Լեւոն Մելիքյանը:

1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ-ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

**Ռուբիկի (ձախից առաջինը նստած) ջոկատը մեկնելուց առաջ: Կանգնածներից 5-րդը (աջից) ՀՀ ապագա վարչապետ Անդրանիկ Մարգարյանն է:**

# Վահանավանքի արշավախումբը

Ըստ Գրիգոր Գրիգորյանի «Վահանավանք» գրքի

## Արշավախմբի անդամները

**Ցուցակը տրվում է այբբենական կարգով**

**Ազոյան Արեգ Վալերիի** - արշավախմբի անդամ, այժմ՝ տնտեսագիտության թեկնածու, տնտեսական համակարգի աշխատող:
**Առաքելյան Արամայիս Աշոտի** - արշավախմբի անդամ, մասնագիտությամբ պատմաբան, այժմ՝ ձեռներեց:
**Առաքելյան Բաբկեն Նիկոլայի** - ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, արշավախմբի գլխավոր գիտական խորհրդատու, Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի նախկին տնօրեն, վերջերս վախճանվեց մեր մեծանուն ուսուցչապետը:
**Ասատրյան Կլարա Տաճատի** - արշավախմբի անդամ, ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի վիմագրության բաժնի գիտաշխատող:
**Ավետիսյան Անդրանիկ Դավթի** - վաստակաշատ շինարար, Վահանավանքի ռեւիզոր-ճարտարապետ: Նրա խնդրանքով Վահանավանքի ծախսերի հաշվին վերականգնվեց իր հայրենի Գեղանուշ գյուղի եկեղեցին:
**Ավետյան Վարշամ Վահանի** - արշավախմբի պետի տեղակալ, հնագետ-պատմաբան, պրոֆեսոր, Երեւանի Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախոս:
**Բաբայան Սիրեկան Նորայրի** - արշավախմբի անդամ, պատմաբան-իրավագետ, այժմ՝ ՀՀ Վայոց ձոր մարզի Եղեգնաձորի քաղաքապետ:
**Բարխուդարյան Սեդրակ Գեւորգի** - Վահանավանքի պեղումների գիտական խորհրդատու, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի վիմագրության բաժնի հանգուցյալ վարիչ:
**Գասպարյան Ռուբեն Ռաֆիկի** - արշավախմբի անդամ, ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի վիմագրության բաժնի գիտաշխատող:
**Գրիգորյան Գրիգոր Մեսրոպի** - արշավախմբի ղեկավար, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Կապանի պատվավոր քաղաքացի, ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի վիմագրության բաժնի վարիչ:
**Գրիգորյան Նարեկ Գրիգորի** - արշավախմբի անդամ, ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ, այժմ՝ տնտեսագիտության թեկնածու:
**Գրիգորյան Տիգրան Գրիգորի** - արշավախմբի անդամ, պոլիտեխնիկական ինստիտուտի (այժմ՝ ճարտարագիտական համալսարան) ուսանող, զոհվել է ԽՍՀՄ Լեռնագնացների համամիութենական մրցումների ժամանակ՝ 1976թ. օգոստոսի 10-ին:
**Դանիելյան Գեւորգ Հմայակի** - արշավախմբի ճարտարապետ, որին կատակով կոչում էին «եղվարդցի Հլեենց Համոյի Գեւոր»:
**Թամանյան Յուլի Ալեքսանդրի** - արշավախմբի ճարտարապետ, Պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկերության նախագահի տեղակալ, Վահանավանքի կրկնահարկ եկեղեցու վերականգնման նախագծի հեղինակ, վախճանվեց 1993թ.:
**Թամրազյան Գրիշա Աղաթելի** - արշավախմբի վարորդ Կաղնուտ (Մողես) գյուղից:
**Թումանյան Ռուբեն Պավլուշայի** - արշավամբի անդամ, պեղող բանվոր, վարորդ:
**Կարապետյան Արմեն Սերյոժայի** - միջնակարգ դպրոցի աշակերտ, պեղող բանվոր, հետագայում՝ Կապանի քաղաքապետ:
**Կարարտինյան Լուսինե Գրիգորի** - արշավախմբի պրակտիկանտ, հմայիչ եւ կատակասեր աղջիկ: Գրեց փայլուն դիպլոմային աշխատանք Սյունիքի թագավորության մասին եւ ստացավ «գերազանց» գնահատական:
**Կիրակոսյան Արման Ջոնի** - արշավախմբի անդամ, պատմական գիտությունների դոկտոր, հետագայում՝ ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ, մինչ այդ՝ ԱՄՆ-ում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան:
**Հարությունյան Ավետիս Հմայակի** - արշավախմբի անդամ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, Երեւանի Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախոս:
**Հարությունյան Սամվել Վաղարշակի** - արշավախմբի անդամ, ուսանողական ջոկատի տնտեսվար, Գորիսի նախկին քաղաքապետ:
**Հովհաննիսյան Արայիկ Թադեւոսի** - արշավախմբի անդամ, Կապանի շինարարական տեխնիկումի շրջանավարտ, Արցախյան պատերազմի մասնակից: Արշավախմբի ճարտարապետի հանձնարարությամբ կատարում էր բոլոր շինաքարերի չափագրությունը:
**Հովհաննիսյան Գարեգին Սիմոնի** - արշավախմբի պեղող բանվոր, Հայրենական մեծ պատերազմի մասնակից, Վահանավանքի նախկին հսկիչ: Վախճանվեց 86 տարեկան հասակում:
**Հովհաննիսյան Սասուն Գարեգինի** - արշավախմբի անդամ, պեղող բանվոր:
**Հովսեփյան Աշոտ Հրանտի** - ճարտարապետ, Վահանավանքի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու, գավթի եւ սյունասրահի վերականգնման նախագծի հեղինակ:
**Հովսեփյան Ժորա Կոստյայի** - արշավախմբի անդամ, ազգագրագետ-պատմաբան, մանկավարժ, Քաջարանի նախկին քաղաքապետ:
**Ղուկասյան Հակոբ Հոկտեմբերիկի** - արշավախմբի անդամ, ուսանողության սիրելի «Պեխցի հնագետը», Արցախյան պատերազմի մասնակից:
**Մաթոսյան Սամվել Գաբրիելի** - արշավախմբի անդամ, հետագայում՝ Սպիտակ քաղաքի թիվ 8 դպրոցի տնօրեն:
**Մանուչարյան Աշոտ Գագիկի** - արշավախմբի անդամ, պատմական գիտությունների թեկնածու, արեւելագետ-վիմագրագետ, ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի վիմագրության բաժնի գիտաշխատող:
**Մարգարյան Անդրանիկ Նահապետի** - արշավախմբի անդամ, հետագայում՝ Հայաստանի Հանրապետության վարչապետ, Հայաստանի հանրապետական կուսակցության ղեկավար:
**Մարգարյան Հենրիկ Բագրատի** - արշավախմբի անդամ, կապանցի «մեր սիրելի Հենոն», որը միայնակ տեղափոխում էր ժայռաբեկորներ բարձած երկաթե սահնակը:
**Մելիքյան Լեւոն Պողոսի** - արշավախմբի անդամ, ճարտարապետ:
**Մելիքյան Սասուն Հենրիկի** - արշավախմբի անդամ, պատմական գիտությունների թեկնածու, հետագայում՝ՀՀ կրթության եւ գիտության նախարարության բարձրագույն ուսումնական հաստատությունների համակարգման եւ վերահսկման բաժնի պետ:
**Մելիքյան Վահան Հենրիկի** - արշավախմբի անդամ, պատմական գիտությունների թեկնածու, այժմ՝ Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի ամբիոնի վարիչ:
**Մելքոնյան Հուսիկ Անդրեասի** - արշավախմբի անդամ, հնագետ-վիմագրագետ, պատմական գիտությունների թեկնածու, այժմ՝ ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի միջնադարյան հնագիտության բաժնի վարիչ, գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար:
**Մելքոնյան Սամվել Կոլյայի** - արշավախմբի անդամ, գեղանկարիչ-քանդակագործ, կիթառահար:
**Մեսչյան Արթուր Ստեփանի** - արշավախմբի անդամ, ճարտարապետ, երգահան, երգիչ:
**Մինասյան Թամար Վոլոդյայի** - արշավախմբի անդամ, ուսանող-պրակտիկանտ, հետագայում՝ մանկավարժ:
**Միքայելյան Միքայել Միքայելի** - արշավախմբի պետի տեղակալ, ուսանողության սիրելի «Միխայիլ Միխայլիչը», որն աչքի էր ընկնում իր աշխատասիրությամբ եւ բարությամբ: Այժմ ԱՄՆում է:
**Մկրտչյան Սահակ Առուստամի** - Վահանավանքի պահակ, ուսանողության սիրելի «Սահակ դային»:
**Մուրադխանյան Սարգիս Գեւորգի** - արշավախմբի անդամ, ուսանողական ջոկատի հրամանատար, շեփորահար:
**Նավոյան Էլինարա Լյուդվիգի** - արշավախմբի անդամ, ուսանող-պրակտիկանտ:
**Պարունակյան Կարեն Միքայելի** - արշավախմբի անդամ, ուսանող-պրակտիկանտ, այժմ՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության փոխգնդապետ:
**Սաղոյան Արթուր Վանիկի** - արշավախմբի անդամ, մասնագիտությամբ պատմաբան:
**Սարգսյան Գագիկ Գվիդոնի** - արշավախմբի անդամ, վիմագրագետ-պատմաբան, պատմական գիտությունների թեկնածու, այժմ՝ ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի տնօրենի գիտության գծով տեղակալ:
**Սարգսյան Լեւոն Ազատի** - արշավախմբի անդամ, արեւելագետ-վիմագրագետ, պատմական գիտությունների թեկնածու, դասախոսում է Երեւանի պետական համալսարանում, ուր ամբիոնի վարիչ է:
**Սիդակով Ֆելիքս Կազբեկի** - արշավախմբի անդամ՝ աթլետիկ կազմվածքով, համեստափայլ երիտասարդ՝ «ժայռեր ճեղքող Ֆելոն», մասնագիտությամբ երաժիշտ:
**Սմբատյան Գրիշա Սերյոժայի** - արշավախմբի անդամ, ուսանողական ջոկատի հրամանատար, այժմ՝ Կապանի երկրագիտական թանգարանի տնօրեն, պատմաբան-մանկավարժ:
**Քոսյան Արամ Վաղինակի** - արշավախմբի անդամ, պատմական գիտությունների դոկտոր, հետագայում՝ ՀՀ կրթության եւ գիտության նախարարության գիտության վարչության պետ:

## Ֆրանսիայի երիտասարդական ջոկատը Վահանավանքում

2002թ. օգոստոսին ազգությամբ ֆրանսիացի մի խումբ երիտասարդներ (շուրջ 40 հոգի) օրիորդ Ռեգինա Միլլերի եւ Ժան-Պիեռ Նիզեի գլխավորությամբ պեղման եւ մաքրման աշխատանքներ կատարեցին Վահանավանքի տարածքում: Իրենց աշխատասիրությամբ առավել աչքի ընկան **Էլզա Բոնին, Անդրե Հերեմին, Ալիս Բաստիենը, Դավիդ Վերնեյը, Ֆրանսուա Բուկոն եւ ուրիշներ:**

Ջոկատի անդամները զեկուցումներ լսեցին միջնադարյան Սյունիքի կրթամշակութային կենտրոնների եւ, մասնավորապես, Վահանավանքի մասին: Պատեհ առիթն օգտագործելով՝ Վահանավանքի արշավախմբի ղեկավարը երախտագիտություն հայտնեց ֆրանսիական ժողովրդին եւ նրա խորհրդարանին՝ հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչելու եւ այդ ոճրագործությունն օրենքով դատապարտելու համար:

## Արշավախմբի աջակիցները

**Ազգանունները տրվում են այբբենական կարգով**

**Ալեքսանյան Արծրուն Հովակիմի** - «Գանձասար» պիոներական ճամբարի պետ, պատմաբան, լրագրող, դպրոցի տնօրեն, ուսանողների անշահախնդիր բարեկամը:
**Գասպարյան Ալեքսեյ Լեւոնի** - Կապանի քաղխորհրդի գործկոմի նախագահ, որի աջակցությամբ Երեւանից եկած մասնագիտական հանձնաժողովը միաձայն որոշում ընդունեց՝ ամբողջապես վերականգնել Վահանավանքի համալիրը: Նա հնագիտական

1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ-ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

# Վահանավանքի արշավախմբի անդամների հուշերը

**ՀՈՒՍԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ**

**Պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի միջին դարերի հնագիտության ամբիոնի վարիչ**

Շնայած արդեն անցել են 31 երկար ու ձիգ տարիներ, ամեն ինչ շատ պարզ հիշում եմ, ասես երեկ էր, երբ մեր արշավախումբը ժամանեց սյունյաց հիասքանչ բնաշխարհի գրկում ծվարած Վահանավանք: 70-ական թվականներն էին: Դեռ երիտասարդ էի, եւ առաջին պեղումներն էին, որին ես մասնակցեցի: Այժմ, արդեն տարիների խորքից՝ ժպիտով եւ կարոտով եմ հիշում վահանավանքյան մեր արշավախումբը, մեր անմոռաց օրերը, երբեմն՝ քաղցած ու թեւաթափ, հաճախ՝ ժիր ու եռանդով լեցուն: Այդ շրջանից ունեմ բազմաթիվ հուշեր նախեւառաջ ինձ հարազատ դարձած կապանցիների, նրանց մարդամոտ, օգնելու պատրաստակամ խառնվածքի հետ կապված: Այնտեղ ապրել ենք ուրախ եւ տխուր պահեր, հաճախ թրջվել անձրեւներից, բայց ամեն անգամ մեր կողքին են եղել Կապանի բնակիչները, ովքեր օժանդակել եւ խրախուսել են մեր սկսած գործը: Արշավախմբի պեղումներին մասնակցում էին տեղացի մի խումբ երիտասարդներ, որոնցից երկուսին լավ եմ հիշում. մարզիկներ էին, բնակվում էին Հունան Ավետիսյան փողոցում: Մեկի անունը Ֆելիքս էր, մյուսինը՝ Արթուր. ընկերներ էին: Մի օր պեղման ժամանակ գտանք կավե մի աման, որն այժմ գտնվում է Կապանի երկրագիտական թանգարանում: Դեռ նոր էի այն ձեռքս առել ու փորձում էի մաքրել հողից: Տղաները ոգեւորված դիտում էին, եւ ես կեսկատակկեսլուրջ մի միտք արտահայտեցի. «Ինչ իմանանք, գուցե տարիներ կամ դարեր առաջ սրանով Սյունիքի թագավորներից կամ իշխանավորներից մեկն իր ընթրիքն է վայելել»: Միտքս հազիվ էի ավարտել, երբ տղաներից մեկը՝ Ֆելիքսը, ձեռքիցս խլեց ամանն ու փախավ: Նրա հետեւից ես էլ ակամայից վազեցի եւ հասնելով վրաններից մեկին՝ ապշած կանգ առա. տղան ոտքերը ծալած նստած էր վրանի առաջ (միշտ այդպես էր հաց ուտում), առանց ամանը լվանալու մածուն էր լցրել եւ ուտում էր

**Լուսինե Զաքարյանը Վահանավանքում «Պատարագից» հատվածներ երգեց:**

երջանիկ բավականությամբ: Ձեռքերը հուզմունքից դողում էին, աչքերը՝ խանդավառվել: Չխանգարեցի: Երբ վերջացրեց, վերցրի ամանը, խնամքով լվացի. նա լուռ էր: Տղայի մեջ հայրենասիրության զգացումը պոռթկել էր, գոհ էր, որ օգտվել է այն ամանից, որը գուցե մի օր հայ արքաներից մեկը բռնել է ձեռքին: Այս դեպքից հետո մեր հարաբերությունները տղաների հետ ավելի մտերմացան: Հիշարժան պատմություններից մեկն էլ կապված է Վահանավանքի մոտակա տարածքում այդ օրերին հայտնաբերված գտածոների հետ: Պրոֆեսոր Գրիգոր Գրիգորյանն ինձ հանձնարարել էր գնալ այնտեղ եւ բերել դրանք: Գնացի, ափսոսանքով տեսա, որ տրակտորն իրերի մեծամասնությունը ոչնչացրել է, անվնաս մնացածները մաքրեցի, տեղավորեցի ուսապարկում եւ ուզում էի շարժվել դեպի Վահանավանք, երբ ճանապարհս փակեցին մոտ 30 ադրբեջանցի: Նրանք հարեւան գյուղից էին, պահանջում էին վերադարձնել իրենց «ոսկին», որ ես տանում եմ: Ավելի ուշ պարզվեց, որ այն ժամանակ, երբ գտածոները հողից մաքրում էի, կողքիս նստած նրանց հայրենակիցներից մեկը, տեսնելով դրանք, կարծել է, թե ոսկի է եւ կանչել է ազգակիցներին: Իմ խղճուկ ադրբեջաներենով փորձում էի նրանց բացատրել, որ դա ոսկի չէ, բայց չէր հաջողվում: Քառորդ ժամ նրանք պնդում էին իրենցը, ես՝ հակառակը, եւ այդպես դեռ երկար կշարունակվեր, եթե այդ պահին տարածքով անցնելիս չլիներ մի կին՝ երկու աղջկա հետ: Կինն ադրբեջաներեն գիտեր, նրանց սպառնաց, որ հաշվեհարդար կտեսնի, եթե վերջիններս անհապաղ չհեռանան: Ադրբեջանցիներն անմիջապես փախան մոտակա անտառը: Շնորհակալություն հայտնեցի այդ բարեսիրտ կնոջը՝ ինձ օգնելու համար: Եթե նա այդ պահին չհայտնվեր Վահանավանք տանող ճանապարհին, ադրբեջանցիներն իրենց եղաններով գուցեեւ հարձակվեին ինձ վրա: Միասին ճանապարհ ընկանք Վահանավանք: Եվ նմանատիպ բազում պատմություններ էլ պատահեցին՝ զվարճալի եւ հիշարժան: Իսկ երբ պրոֆեսոր Գրիգորյանի որդին՝ Տիգրանը մահացել էր, Կապանի արվեստի քոլեջի ուսանողները ռոյալ բերեցին Վահանավանք, եւ մենք մոմերի լույսի ներքո հիշատակի երեկո կազմակերպեցինք: Հաճախ եմ հիշում մեր արշավախումբը, արշավախմբում անցկացրած գեղեցիկ օրերն ու դեպքերը, ցավոք, շատերի դեմքերն ու անունները մոռացել եմ վաղուց:

**Գրի առավ՝ ԱՂԱՎՆԻ ՆԱՎԱՍՍԱՐԴՅԱՆԸ**

---

Արշավախմբին տրամադրեց վերականգնման բազա, որը մի ժամանակ ապօրինաբար «սեփականաշնորհել» էին հուշարձանների հետ առնչություն չունեցող մարդիկ:

**Գեւորգյան Գառնիկ Խուրշուդի** - մեխանիզատոր, Կապանի պղնձահանքային կոմբինատի մեխցեխի պետ, որի տրամադրած տեխնիկական միջոցներով հուշարձանախմբից հեռացվել են հսկայական ժայռաբեկորներ ու քարացած շաղախի զանգվածներ:

**Գրիգորյան Լենդրուշ Արմենակի** - Կապանի ճանբաժնի պետ, Վահանավանքի ճանապարհը կառուցող եւ Վահանի աղբյուրի շրջակայքը բարեկարգող ճարտարագետ-շինարար:

**Գրիգորյան Ռոբերտ-էջանացի** - դպրոցական ճամբարների պետ, մաթեմատիկոս, Լեռնաձոր գյուղի դպրոցի տնօրեն, բնավորությամբ երազող, ռոմանտիկ, սիրում է Սյունյաց չքնաղ լեռնաշխարհը՝ «Կապանա տունը»: Մշտապես օգնել է մեր ուսանողական ջոկատներին:

**Դավթյան Գագիկ Տիգրանի** - բանաստեղծ, թարգմանիչ, ՀԿԿ Կապանի շրջկոմի բաժնի վարիչ, ուսանողների սիրելի մտավորական եւ հայրենանվեր քաղաքացի:

**Դավթյան Ռիտա Արարատի** - ՀԼԿԵՄ Կապանի շրջկոմի 1-ին քարտուղար, կուսշրջկոմի բաժնի վարիչ, այժմ՝ Կապանի №3 հատուկ դպրոցի տնօրեն: Նրա կարգադրությամբ «Էլեկտրոն» ճամբարի դռները միշտ բաց են եղել արշավախմբի անդամների եւ ուսանողության առջեւ:

**Դավթյան Վոլոդյա Եղիշեի** - մեխանիզատոր, գնացքի մեքենավար, Կապանի երիտասարդության նվիրյալ առաջնորդը: Նրա եւ իր ընկերների ջանքերով արշավախումբն ապահովվեց անհրաժեշտ գործիքներով եւ մեխանիզմներով:

**Թադեւոսյան Ջոհրապ Հմայակի** - մեխանիզատոր, որի տրամադրած վերամբարձ կռունկները ցանկացած պահին մեր կողքին էին...

**Թումանյան Սվետլանա Արտաշեսի** - Կապանի շինարարական տեխնիկումի տնօրեն, կուսշրջկոմի քարտուղար, որը մեծապես նպաստեց Վահանավանքն ամբողջապես վերականգնելու որոշումն ընդունելուն:

**Խաչատրյան Սուրեն Սերգեյի** - Սյունիքի մարզպետ, Արցախյան պատերազմի հրամանատարներից՝ ուսանողության աջակիցն ու սիրելի բարեկամը:

**Կարապետյան Հրաչուհի Մեսրոպի** - Կապանի շրջխորհրդի գործկոմի նախագահի տեղակալ, Կապանի երկրագիտական թանգարանի գիտական քարտուղար, ուսանողության սիրելի «Սյունյաց տիկինը»...

**Հակոբյան Մաքսիմ Անուշավանի** - Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի գլխավոր տնօրեն:

**Համբարձումյան Հակոբ Մուշեղի** - տնտեսագետ, Կապանի առեւտրի բաժնի վարիչ, հետագայում՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Մկրտիչ (Սերժ) Մկրտչյանի օգնականը: Իբրեւ պեղող բանվոր՝ մասնակցեց Սյունիքի Գրիգոր Ա թագավորի դամբարանի բացման աշխատանքներին:

**Համբարձումյան Մուշեղ Աբրահամի** - Կապանի շրջխորհրդի գործկոմի նախագահի տեղակալ, կուլտուրայի բաժնի վարիչ, վաստակաշատ մտավորական, արշավախմբի ամենահաս պաշտոնատար անձը:

**Հայրապետյան Սլավիկ Ստեփանի** - Կապանի շրջխորհրդի գործկոմի նախագահ, որի ջանքերի շնորհիվ Կապանը հռչակվեց Սյունիքի մարզկենտրոն:

**Հարությունյան Վարազդատ Մարտիրոսի** - ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, արվեստի վաստակավոր գործիչ, Թ.Թորամանյանի անվան մրցանակի դափնեկիր, Պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկերության հանրապետական խորհրդի նախագահության նախագահ, ճարտարապետների միջազգային ակադեմիայի պատվավոր անդամ:

**Ղոնյան Ռոլանդ Սուրենի** - ՀԿԿ Կապանի շրջկոմի 1-ին քարտուղար, որի նախաձեռնությամբ եւ վերահսկողությամբ կառուցվեց դեպի Վահանավանք տանող ասֆալտապատ նոր ճանապարհը:

**Մարգարյան Դերենիկ Բագրատի** - Կապանի կապի հանգույցի գլխավոր ինժեներ, ՀՀ կապի նախարարի տեղակալ, Կապանի տրիկոտաժի կոմբինատի տնօրեն: Նա եւ Գրիգոր Հովհաննեսի Հարությունյանը (նորոգ հանգուցյալ մեր Պուշկինը)՝ Կապանի տուրիստական հանգրվանի ղեկավարը, մշտապես աջակցում էին ուսանողներին:

**Մինասյան Ռաֆայել Արմենակի** - ՀԿԿ Կապանի շրջկոմի 1-ին քարտուղար, ապա՝ Հայկական ԽՍՀ կոմունալ տնտեսության մինիստր, որն անձամբ հետեւում եւ աջակցում էր հնագիտական արշավախմբի աշխատանքներին:

**Մկրտչյան Կարեն Սամսոնի** - Կապանի շինարարական տեխնիկումի տնօրեն, Կապանի շրջխորհրդի գործկոմի նախագահ, ՀԿԿ Կապանի շրջկոմի 1-ին քարտուղար, շաբաթօրյակների կազմակերպիչ:

**Մկրտչյան Մկրտիչ (Սերժ) Էմիլի** - արշավախմբի հովանավոր, որի ֆինանսական մասնատրումով պեղվել է մեծ տաճարին կից հյուսիսարեւելյան սրահը:

**Մկրտչյան Սոկրատ Շահումի (Սոկրատ Տաթեւացի)** - էթնոհոգեբան, էթնոմանկավարժ, Մանկավարժահոգեբանական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, «Տաթեւ» գիտակրթական համալիրի ղեկավար եւ «Զանգակ-97» հրատարակչության գլխավոր տնօրեն, պեղումների աջակից:

**Մովսիսյան Արմեն Խիկարի** - Կապանի քաղաքապետի 1-ին տեղակալ, այժմ՝ ՀՀ էներգետիկայի նախարար, նպաստել է Վահանավանքի Գրիգոր Լուսավորիչ տաճարի նորահայտ սրահը բացելուն:

**Պետրոսյան Ֆրունզե Հմայակի** - Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի երկարամյա տնօրեն, տեխնիկական գիտությունների թեկնածու: Նրա աջակցությամբ գցվեցին Վահանավանքի հյուսիսային եւ հարավային երկաթգծերը, որոնց միջոցով էապես հեշտացավ պեղված հողազանգվածը տեղափոխելու գործը:

**Սարդարյան Աբիստոլ Վարդանի** - Կապանի շրջխորհրդի գործկոմի նախագահ, որը հաճախ էր այցելում ուսանողներին՝ նրանց կարիքները հոգալու մտադրությամբ:

**Ստեփանյան Ռուբեն (Օբո) Մարգարի** - ճարտարագետ-մեխանիկ. կյանքից անժամանակ հեռացած մեր անմոռանալի աջակիցն ու ընկերը:

**Ստեփանյան Օնիկ Հայկի** - ՀԼԿԵՄ Կապանի շրջկոմի բաժնի վարիչ, հետագայում՝ Ներքին գործերի ծառայության գնդապետ: Նրա ջանքերով կազմակերպվում էին երիտասարդական շաբաթօրյակներ՝ Վահանավանքը փլատակներից մաքրելու համար:

**Վարդանյան Սարգիս Սողոմոնի** - «Քաջարանշին» տրեստի նախկին կառավարիչ: Հիրավի, մեծ է ծերունազարդ շինարարի անշահախնդիր աջակցությունը:

Առանց այս եւ շատ-շատ ընկերների, որոնց անուններն այս գրքում, ցավոք, հատուկ չեմ արձանագրել, անչափ դժվար էին լինելու աշխատանքները մեր փառքի տաճարներից մեկում՝ Վահանավանքում: Բայց ես հավատացած եմ, որ առաջիկա տարիներին երկինք են խոյանալու այսօր դեռեւս խոնարհված մեր սրբարանի գմբեթները, որոնց զրնգուն զանգերը դարձյալ ողողանջելու են Սյունյաց երկրով մեկ՝ ի լուր աշխարհի ազդարարելով՝

**«Եկայք առ իս ամենայն վաստակեալք եւ բեռանաւորք, եւ ես հանգուցից զձեզ»:**

**Վահանավանքի մեծ տաճարի՝ Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու գավթի եւ սյունասրահի կառույցները վերականգնող վարպետներն ու բանվորներն են՝**

**Ազգանունները տրվում են այբբենական կարգով**

**Ասրիյան Արմեն Վիլենի** - բանվոր, Կապանի ճարտարագիտական համալսարանի շինարարական ֆակուլտետի ուսանող:

**Բաղդասարյան Բորիս Էդվարդի** - վերականգնող վարպետ Կապան քաղաքից:

**Գրիգորյան Տիգրան Յուրիկի** - վերականգնող վարպետ Բռնակոթ գյուղից:

**Եսայան Ռուբիկ Անդրանիկի** - վերականգնող վարպետ Տաթեւ գյուղից:

**Հայրապետյան Դավիթ Ռազմիկի** - վերականգնող վարպետ Բռնակոթ գյուղից:

**Հարությունյան Աշոտ Պավլիկի** - վերականգնող վարպետ Բռնակոթ գյուղից:

**Հարությունյան Գենիկ Պավլիկի** - վերականգնող վարպետ Բռնակոթ գյուղից:

**Հարությունյան Հովիկ Գենիկի** - վերականգնող բանվոր Բռնակոթ գյուղից:

**Հովհաննիսյան Գագիկ-Հակոբ Հովհաննեսի** - վերականգնող վարպետ Լոր գյուղից:

**Մարգարյան Հրաչիկ Շմավոնի** - վերականգնող վարպետ Շիկահող գյուղից:

**Մարգարյան Մուրադ Հրաչիկի** - կռունկավար Կապան քաղաքից:

**Վահանավանքի վերականգնման աշխատանքները ղեկավարում էր «Զանգեզուր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Սպարտակ Պավլիկի Հարությունյանը՝ Բռնակոթ գյուղից:**

■





1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ-ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

# Վահանավանքի արշավախմբի անդամների հուշերը

Լուսանկարողները՝ Ս. Ներկինսոնս

**ՎԱՀԱՆ ՄԵԼԻՔՅԱՆ**

**Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ նորագույն պատմության բաժնի առաջատար գիտաշխատող, Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ամբիոնի վարիչ**

Երբ «Սյունյաց երկիր» թերթի խմբագրությունից զանգահարեցին եւ առաջարկեցին վերհիշել Վահանավանքի մասին իմ հուշերը, սկզբում փոքր-ինչ տատանվեցի, քանի որ անցել է արդեն 31 տարի, եւ շատ բան վաղուց մոռացվել է: Սակայն վայրկյաններ անց արդեն հիշողությանս մեջ հառնեցին վահանավանքյան պատկերներ, դեպքեր եւ դիպվածներ, որոնք շատ կարեւոր, էական հետք են թողել իմ կյանքում: Դեռ 19 տարեկան էի, երբ եղբորս եւ ընկերներիս՝ արշավախմբի մյուս անդամների հետ ժամանեցի Վահանավանք: Արշավախմբի կազմում էին պատմաբաններ Ավետիս Հարությունյանը, եղբայրս՝ Սասուն Մելիքյանը եւ շատ ուրիշներ: Այն մեկ ամիսը, որ անցկացրինք այնտեղ, ընդմիշտ մնաց մեր հուշերում որպես երիտասարդ տարիների խենթ ու խելառ օրերի հիշողություններ: Եվ առաջին հերթին ուզում եմ շնորհակալություն հայտնել իմ դասախոսին՝ Սյունիքի պատմության գիտակ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գրիգոր Գրիգորյանին: Նա պարբերաբար կազմակերպում էր նման արշավախմբեր, որոնց անդամներն ակտիվ մասնակցություն էին ցուցաբերում պեղումներին եւ հնագիտական աշխատանքներին: Նաեւ չեմ կարող չհիշել այն հիասքանչ, անկրկնելի բնությունը, որի նմանն ուրիշ ոչ մի տեղ չես հանդիպի: Ինչ վերաբերում է Վահանավանքին, նրա ճարտարապետական կառուցվածքին, ապա այդ օրերին ուղղակի գերվել էի այդ ամենով: Երբեմն լուսանկարում էի բնության գեղեցիկ տեսարաններ, նոր պեղված իրեր, որոնք մինչեւ այժմ սրբությամբ պահում եմ: Արշավախմբի անդամ լինելն օգնեց նախեւառաջ ձեռք բերել հիմնավոր, մնայուն գիտելիքներ ինչպես հայկական ճարտարապետությանն առնչվող, այնպես էլ վիմագիր արձանագրություններ կարդալու համար, որ օգտագործում եմ մինչ օրս: Շուրջ 40 օր անցկացրինք վրաններում, սնվում էինք կապանցիների հյուրասիրած սննդով: Հիշում եմ, որ կատարվող աշխատանքներին մասնակցում էին նաեւ ադրբեջանցի մի խումբ երիտասարդներ, որոնց հետ երբեմն պատմագիտական բանավեճեր էինք կազմակերպում: Այս ամենից զատ ամենահիշարժան օրը Լուսինե Զաքարյանի այցն էր Վահանավանք, ով իր անկրկնելի ձայնով շարականներ հնչեցրեց կիսավեր վանքի պատերի ներսում: Մեզ հաճախ էին այցելում տարբեր մասնագիտության եւ բնագավառի մարդիկ, այդ թվում ե՛ւ տեղացիներ, ե՛ւ Կապան այցելած զբոսաշրջիկներ, ոմանք իրենց օգնությունն էին առաջարկում, սատարում մեր գործին, մյուսները՝ փորձում ինչ-որ կերպ հիշարժան դարձնել մեր օրերը: Ամենակարեւորը, սակայն, այն անսպառ գիտելիքն էր, որ ձեռք բերեցինք այդ օրերին: Բայցեւ երիտասարդներիս համար շատ նոր զգացում էր ապրել կատարյալ ազատության մեջ, կուսական բնության գրկում խարույկ վառել եւ զգալ փայտի ջերմությունը՝ երբեմն օրեր տեւող անձրեւներից հետո: Իսկ զվարճալի պատմություններ լինում էին գրեթե ամեն օր: Առաջին գիշերը բոլորս անքուն լուսացրինք արջերի, շնագայլերի մասին պատմություններ-ի ազդեցության պատճառով, որոնց այդպես էլ չտեսանք, բայց երբեմն լսում էինք նրանց կաղկանձը՝ հեռվից եկող: Մի շաբաթից համոզվեցինք, որ այդ առումով լուրջ վտանգ չկա: Մեզ միայն երբեմն «վնասներ» էին հասցնում տարածքում արածող կովերը, որոնք մի օր կերան մեր վրաններից մեկում գտնվող մի արկղ լոլիկը: Ցավոք, 80-ականներից հետո այդպես էլ չի հաջողվում նորից այցելել Վահանավանք: Քանի որ լրանում է Վահանավանքի հիմնադրման 1100-ամյակը, մեծ ցանկություն կա նորից այցելել, վերհիշել երիտասարդ տարիները, տեսնել վանքն արդեն վերականգնված վիճակում եւ վայելել սյունյաց հիասքանչ բնության գրկում գտնվելու անկրկնելի հաճույքը:

**ԱՐԹՈՒՐ ՄԵՍՉՅԱՆ**

**Ճարտարապետ, երգիչ, երգահան**

1969 թվականն էր՝ Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի երրորդ կուրսի ուսանող էի, երբ առաջին անգամ գնացի Վահանավանք: Հարեւանիս միջոցով ծանոթացել էի Գրիգոր Գրիգորյանի հետ եւ որոշեցի մեկնել: Ես էի, պրոֆեսոր Գրիգորյանը եւ Լեւոն Մելիքյանը: Ապրում էինք փոքրիկ շարժական տնակում՝ վանքից քիչ հեռու: Ամեն առավոտ արթնանում էինք, լվացվում մոտակա աղբյուրի ջրով եւ անցնում աշխատանքի: Մեզանից առաջ, կարծեմ, արշավախումբ էր եղել այդտեղ, բայց ոչ մի աշխատանք չէր կատարել, եւ մենք առաջիններից էինք, որ սկսեցինք Վահանավանքում կատարել չափագրական աշխատանքներ: Մեր գլխավոր խնդիրն էր կատարել վերականգնողական գծագիր, որով հնարավոր կլիներ վերականգնել եկեղեցին, չնայած այն ժամանակ վերականգնելու հույս չունեինք: Առաջին փուլում պեղումներ էինք անում, մեզ օգնում էին մի քանի կապանցի, որոնք այն երկու տարում մեր մշտական օգնականները եղան: Ապա սկսեցինք չափագրական աշխատանքները եւ կազմեցինք գծագրերը, որոնք այժմ գտնվում են ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտում: Դրանցում ճշգրտորեն պատկերված են եկեղեցու եւ մյուս կառույցների այն մասերը, որոնք կանգուն էին մնացել եւ հայտնաբերվել էին նախնական պեղումների ժամանակ: Եվ այդ չափագրումների արդյունքում ստացված տվյալների միջոցով էլ կազմում էինք կառույցի այսպես ասած «անձնագիրը»: Բավականին դժվար գործ էր: Սկզբից դաշտային աշխատանքներ էինք կատարում, այսինքն՝ չափագրումներ, էսքիզների կազմում, ապա դրանց հիման վրա՝ վերջնական փաթեթը, ինչն էլ մեր արշավախումբը կատարեց: Առօրյան հետաքրքիր էր, ապրում էինք քաղաքից հեռու՝ վայրի բնության մեջ, մեր կյանքում առաջին անգամ էր, որ արշավախմբի կազմում մասնակցում էինք պեղումների, չափագրական աշխատանքների: Երբեմն մեզ այցելում էին զբոսաշրջիկներ: Երեկոյան՝ աշխատանքի ավարտից հետո, խարույկ էինք վառում, թեյ պատրաստում, զրուցում, երբեմն նաեւ՝ երգում: Այնտեղ երգեր չեմ գրել: Մեր նպատակն այդ ժամանակ այլ էր: Աշխատանքը մանրակրկիտ էինք անում, չափագրմանը զուգահեռ հայտնաբերված բոլոր քարերը համարակալում էինք եւ դասավորում: Փորձում էինք նախ պահպանել եղածը, ապա՝ չափագրել, կազմել գծագիր, սակայն այն ժամանակ եկեղեցու վերականգնումը բավականին լուրջ խնդիր էր, որի լուծումը մենք չէինք տեսնում: Մեկ էլ մեզ ոչ ուղղակիորեն աջակցում էին տեղացի արկածախնդիր գանձ որոնողները: Հաջորդ ամռանը, երբ վերադարձանք վերսկսելու մեր կիսատ թողած աշխատանքը, նորանոր քարեր էինք հայտնաբերում, որոնք, ակներեւաբար, մենք չէինք փորել, հողից ազատել նախորդ տարվա ընթացքում: Երկու շաբաթը մեկ իջնում էինք Կապան՝ մթերք գնելու համար: Վահանավանքում եղած երկու տարին նպաստեց, որ փորձ ձեռք բերենք, նաեւ շատ գիտելիքներ ստացանք պրոֆեսոր Գրիգոր Գրիգորյանի շնորհիվ: Շատ ինքնատիպ մարդ է, չափազանց աշխատասեր եւ անսպառ եռանդի տեր: Մենք հիանում էինք նրանով. այն նվիրումը, որով նա կատարում էր ցանկացած աշխատանք, մեզ համար լավագույն օրինակ էր դառնում: Այնտեղ՝ Վահանավանքում, գործնականում կիրառում էինք գիտելիքները, որ ստացել էինք, կարեւոր էր նաեւ մեր մասնագիտությունն իմաստավորելու, աշխատանքը լրջորեն կատարելու համար: Մի անգամ որոշեցինք մեր անշուք տնակը տեսքի բերել, զարդարել եւ հին գծագրերի, թղթերի դարձերեսին գրեցինք մեր հորինած տարբեր կարգախոսներ՝ հումորային, հետաքրքիր արտահայտություններ (հետագայում պարզվեց՝ հակասովետական) եւ փակցրինք տնակի պատերին: Որոշ ժամանակ անց մեր տնակն այրեցին, իսկ ոստիկանությունում քննարկվել էր այդ կարգախոսների բովանդակության հարցը, որի համար նկատողություն ստացանք: Մի հաստաբուն ծառ կար ավերված վանքի սեղանատան մեջ աճած: Այդ ծառին վրան էինք ամրացրել եւ այդտեղ գիշերում էինք՝ մինչ մեր տնակը կվերականգնվեր: Բայց քանի որ ծառը վնաս էր հասցնում եկեղեցուն, իսկ ճարտարապետության ամենամեծ «թշնամիները» ծառերն ու արմատներն են, հարկավոր էր կտրել, արմատները հեռացնել: Կտրեցինք, որից հետո պարզվեց, որ այդ ծառի մեջ մի շատ մեծ թունավոր օձի (իժ էր կարծեմ) բույն էր, եւ ծառը կտրելուց օձը մեջտեղից երկու կես էր եղել: Իսկ մենք ոչինչ չկասկածելով, ապրել էինք այդտեղ, քնել թունավոր օձի «հարեւանությամբ»:

Մեզանից հետո արդեն եկան այլ արշավախմբեր, նորից պեղումներ կատարեցին, ի վերջո նաեւ վերականգնեցին եկեղեցին:

Տարիների հեռվից մի բան է ակնհայտ՝ ամենամեծ արժեքը հենց եկեղեցին է, որ այժմ վերականգնված է, իսկ մնացածը երկրորդական է:

**Գրի առավ՝**
**ԱՂԱՎՆԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԸ**

**Վերականգնվում է կրկնահարկ եկեղեցին՝ սբ Աստվածածինը:**

**Մերձակա դպրոցների, ճամբարների երեխաները մշտապես օգնում էին հնագետներին:**

1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ԲԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ-ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

# Վահանավանքի արշավախմբի անդամների հուշերը

**ԱՐՄԵՆ ՇԵԿՈՅԱՆ**

*Հատված «Հայկական ժամանակ» վեպից*

## Գիրք ութերորդ, գլուխ վեցերորդ

### Իսկական վարչապետը

Վերջին հրաժեշտներից անձամբ ինձ համար ամենացնցողն Անդրանիկ Մարգարյանի հրաժեշտն էր, որովհետեւ իր մահից հետո միայն իր ամբողջական կերպարն ինձ համար ի հայտ եկավ՝ ոչ թե էն իմաստով, որ հայերս սովորաբար մեր ունեցածը հողին հանձնելուց հետո ենք հողին հանձնվածի արժեքն ու կարեւորությունը գիտակցում ու հասկանում, այլ էն իմաստով, որ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի անակնկալ ու անժամանակ մահից հետո ինձ համար հանկարծակի հայտնի դարձավ, որ Մարգարյան Անդոյին ճանաչել եմ ոչ թե ընդամենը տասնհինգ տարի՝ Նավասարդյան Աշոտի ու Արշակյան Ազատի շնորհիվ, այլ ամբողջ երեսունհինգ տարի՝ ճակատագրի շնորհիվ ու կյանքի բերումով, ու էդ բանն ինձ համար անսպասելիորեն հայտնի դարձավ վարչապետի թաղման արարողության ժամանակ՝ պանթեոնում, եւ անձամբ իմ կյանքի ու կենսագրության էդ չափազանց էական մանրամասնության մասին ինձ իրազեկողն իմ հին ընկեր Ռուբիկն էր, որի հետ յոթանասուներկուսին ինստիտուտի արձակուրդիս շուրջ տասնհինգ օրերին Ղափանի Վահանավանքում պեղումների էի մասնակցել, եւ արդեն երեսունհինգ տարի էր՝ պեղումների էդ տասնհինգ օրերը մտապատկերիցս չէին ջնջվում, որովհետեւ յոթանասուներկուսի ամռան մեր էդ պեղումների հիմնական կորիզը պոլիտեխնիկում սովորող իմ ընկեր Ռուբիկի չափազանց ուրախ ու չափազանց կենսախինդ համակուրսեցիներն էին, ու իրենց էդ ուրախ ու կենսախինդ խմբում միակ կողմնակիները Ռուբոյի եղբայր Աշոտն ու ես էինք, որ Ռուբիկի միջոցով ու Ռուբիկի շնորհիվ էինք Վահանավանքի շրջակա անտառում խփված վրաններում հայտնվել, եւ Ռուբիկին հիմա եմ Ռուբո ու Ռուբիկ ասում, մինչդեռ յոթանասուներկուսի էդ ամառ ինքը բոլորի ու նաեւ ինձ համար Կիբուռ էր, որովհետեւ ինքն ու իր համակուրսեցիները միմյանց անունները թարս՝ հետեւից կարդալով էին ասում ու հետեւից կարդալով՝ Ռուբիկին Կիբուռ էին ասում, Յուրային՝ Արույ եւ այլն, եւ մեր էդ պեղումների երկրորդ օրն արդեն Աշոտին սկսեցին Տոշա ասել ու ինձ՝ Նեմրա, եւ երբ երկու հազար յոթ թվականի մարտի քսանութին պանթեոնում վարչապետի թաղման արարողության ժամանակ Ռուբիկին տեսա, ճիշտն ասած՝ մի քիչ զարմացա ու հարցրի՝ «իրան ճանաչո՞ւմ էիր» եւ Ռուբոն ապշահար նայեց ինձ ու հարցրեց՝ «դու չէիր ճանաչո՞ւմ», եւ ես պատասխանեցի ու ասացի՝ «հա», եւ Ռուբոն հարցրեց՝ «ուզում եմ ասեմ՝ վարչապետին անձամբ ճանաչո՞ւմ էիր», եւ ես պատասխանեցի ու ասացի՝ «հա», եւ Ռուբոն թախծոտ ժպտալով հարցրեց՝ «քանի՞ տարի կըլնի՝ որ իրան ճանաչում ես», եւ ես մի քիչ մտածեցի ու ասացի՝ «երեւի տասնհինգ տարի», եւ Ռուբոն թախծոտ ժպտալով հարցրեց՝ «հիշո՞ւմ ես՝ ոնց ես հետը ծանոթացել», եւ ես մի քիչ մտածեցի ու ասացի՝ «Աշոտ Նավասարդյանի կաբինետում ենք ծանոթացել. ինքը էն վախտ Աշոտի տեղակալն էր», եւ Ռուբոն ապշահար նայեց ինձ ու հարցրեց՝ «լուրջ ե՞ս ասում, թե՞ հանաք ես անում», ու էդ պահին, հիշում եմ, Տիգրան Թորոսյանն ավարտեց իր մահախոսական ելույթը, եւ դուդուկահարներն սկսեցին նվագել, եւ ես Կիբուռին ասացի՝ «ըսենց օրով ի՞նչ հանաք», եւ Ռուբոն շշուկով ինձ հարցրեց՝ «Վահանավանքի մեր տղերքից հեչ ո՞ւմ ես հիշում», եւ ես ասացի՝ «քեզ, ախպորդ, Յուրային» եւ մի քիչ մտածեցի ու ասացի՝ «ղափանցի Ալվարոյին էլ եմ հիշում» եւ մի քիչ էլ մտածեցի ու ասացի՝ «մյուս տղերքին էլ եմ հիշում, բայց անունները մոռացել եմ», եւ Ռուբոն ապշահար նայեց ինձ ու հարցրեց՝ «Օդնային չես հիշո՞ւմ», եւ ես ասացի՝ «ո՞նց չեմ հիշում. նիհար, բոյով ու մորուքով տղա էր», եւ Ռուբոն թախծոտ ժպտալով ասաց՝ «լավ էլ հիշում ես», եւ ես մի քիչ մտածեցի ու ասացի՝ «Օդնային հնարավոր չի մոռանալ» եւ մի քիչ մտածեցի ու հարցրի՝ «հիմի ինքը ի՞նչ ա անում», եւ Կիբուռը թախծոտ ինձ նայեց ու գերեզմանափոսը ցույց տալով ասաց՝ «թաղվում ա» եւ իր իսկ խոսքի վրա Կիբուռն ահավոր ցնցվեց ու մեկից սկսեց հեկեկալ, եւ երբ դուդուկները դադարեցին, Կիբուռի հեկեկոցը շարունակվում էր, եւ իր հեկեկոցի վրա մի քանիսը շրջվեցին ու նայեցին իրեն, եւ Ղարիբջանյան Գեղամն էլ շրջվեց ու ինձ տեսնելով շշնջաց՝ «բարեւ, իգդիրցի ջան», եւ ես Գեղամին հարցրի՝ «ո՞նց ես», եւ Գեղամը վարչապետի դագաղի կողմ նայելով ասաց՝ «ո՞նց պիտի ըլնենք», եւ ես ասացի՝ «մեր ախպերը գնաց», եւ Գեղամը հոգոց հանելով ասաց՝ «հա», եւ երբ փողային նվագախումբն ազդարարեց ամեն ինչի ավարտը, եւ մինչ փողայինի էդ ահավոր հնչյունների ուղեկցությամբ վարչապետին փոսը կիջեցնեին, ես մտքիս մեջ Օդնան ստուգաբանելով՝ Անդո ստացա, ու էդ պահին Կիբուռն ամբողջովին թրջված դեմքը թաշկինակով սրբելով ասաց՝ «գնանք՝ մեր ախպոր վրա էրկու բուռ հող լցնենք», եւ երբ մոտեցանք, տեսա, որ Ռուբոյի եղբայր Աշոտն ու Յուրան բահերով հող են լցնում, եւ ինձ տեսնելով՝ Յուրան հառաչելով ասաց՝ «բա, Արմեն ջան», եւ ես չգիտեի ինչ ասեմ ու ասացի՝ «հա», եւ Կիբուռն ինձ թախծոտ ժպտալով ասաց՝ «բա, Արմեն ջան», եւ երբ մի քանի բուռ հող լցրինք ու մի կողմ քաշվեցինք, Ռուբոն ինձ հարցրեց՝ «հիմա հիշեցի՞ր», եւ հանկարծ հեկեկոցս բռնեց ու հեկեկալով ասացի՝ «տղերքին չասես, որ իրան չէի հիշում», եւ Ռուբոն թախծոտ ժպտալով ասաց՝ «որ ասեմ էլ՝ չեն հավատա», եւ ես հեկեկալով ասացի՝ «հիմի նոր եմ հասկանում՝ ինչի էր ինձ հարազատի պես վերաբերվում», եւ Կիբուռն ասաց՝ «երեւի մտքով էլ չի անցել, որ իրան չես հիշում» եւ մի քիչ մտածեց ու հարցրեց՝ «հետներս չե՞ս գա», եւ ես հարցրի՝ «ո՞ւր», եւ Ռուբոն ասաց՝ «տղերքով մի տեղ կնստենք՝ մեր ախպոր օղորմաթասը կխմենք», եւ ես թաշկինակով դեմքս սրբելով ասացի՝ «ես արժանի չեմ», եւ Ռուբոն թախծոտ ժպտալով ասաց՝ «դու մեղավոր չես. ինքը արտաքինից շատ էր փոխվել» եւ մի քիչ մտածեց ու ավելացրեց՝ «բայց բնավորության իմաստով նույն Անդոն էր», եւ ես մի քիչ մտածեցի ու ասացի՝ «բնավորության իմաստով ավելի էր լավացել», եւ Ռուբոն մի քիչ մտածեց ու ասաց՝ «ճիշտ ես ասում», եւ ես մի քիչ մտածեցի ու հարցրի՝ «բա ինքը ե՞րբ ա քաղբանտարկյալ էղել», եւ Ռուբոն պատասխանեց ու ասաց՝ «ինստիտուտից հետո», եւ ես հարցրի՝ «իրա վարչապետության ընթացքում հեչ հանդիպե՞լ եք», եւ Ռուբոն ասաց՝ «մի անգամ իրա նախաձեռնությամբ կուրսով հավաքվել ենք» եւ մի քիչ մտածեց ու ավելացրեց՝ «սպասում էինք, որ Ազգային ժողովի էս ընտրություններից պրծնի՝ մի հատ էլ հավաքվենք» եւ մի քիչ էլ մտածեց ու ասացի՝ «ինքը համ էլ իգդիրցի ա», եւ Ռուբոն ասաց՝ «դու էլ ես իգդիրցի», եւ ես զարմացած հարցրի՝ «ի՞նչ գիտես», եւ Ռուբոն ասաց՝ «նկարիչ Էդվարդ Իսաբեկյանն ա ասել», եւ ես զարմացած հարցրի՝ «քեզ ա՞ ասել», եւ Ռուբոն ասաց՝ «ռադիոյով քեզ գովաց ու ասեց, որ Իգդիրն ամեն տեսակ մարդ տվել էր, բայց բանաստեղծ չէր տվել», եւ ես ասացի՝ «բանաստեղծություն գրելը թարգել եմ», եւ Ռուբոն ասաց՝ «շատ իզուր», եւ ես ասացի՝ «Անդոն Իսաբեկյանին էլ ա օգնել. իրա նկարների ալբոմն Անդոյի հովանավորությամբ ա տպվել. շատ շքեղ ալբոմ ա», եւ Ռուբոն ասաց՝ «պապայի բանաստեղծությունների գիրքն էլ պիտի տպեինք», եւ ես հարցրի՝ «պապադ ժուռնալիստ չէ՞ր», եւ Կիբուռն ասաց՝ «ժուռնալիստ էր, բայց վախտին ահագին բանաստեղծություններ ա գրել», եւ ես ասացի՝ «հետաքրքիր ա», եւ Կիբուռն ասաց՝ «շատ հետաքրքիր բանաստեղծություններ են. որ կարդաս՝ հաստատ կհավանես» եւ մի քիչ մտածեց ու ավելացրեց՝ «պապայի հիշատակի համար ուզում եմ իրա էդ բանաստեղծությունների գիրքը տպեմ», եւ ես ասացի՝ «շատ ճիշտ կանես», եւ Ռուբոն ասաց՝ «Անդոն խոստացել էր, որ կօգնի», եւ ես ասացի՝ «հաստատ կօգներ», եւ Կիբուռն ասաց՝ «մեր կուրսի էդ հավաքի վախտ խոստացավ», եւ ես ասացի՝ «ափսոս», եւ Կիբուռն ասաց՝ «էդ օրը քեզ էլ հիշեցինք», եւ ես զարմացած հարցրի՝ «ի՞նչ առիթով հիշեցիք», եւ Ռուբիկն ասաց՝ «պապայի բանաստեղծությունների էդ գրքի առիթով» եւ մի քիչ մտածեց ու ավելացրեց՝ «Անդոն ասեց, որ մինչեւ տպելը տամ քեզ՝ մի հատ աչքի անցկացնես» եւ մի քիչ էլ մտածեց ու թախծոտ ժպտալով ավելացրեց՝ «փաստորեն, ինքը քեզ հիշում էր, բայց դու իրան չէիր հիշում», եւ ես մի քիչ մտածեցի ու ասացի՝ «Անդոյին միշտ էլ հիշել եմ. Օդնային էի մոռացել», եւ Ռուբոն ժպտալով ասաց՝ «մենակ դու էիր իրան Օդնա ասում», եւ ես ժպտալով ասացի՝ «որովհետեւ էն վախտ մենակ ինքն էր ինձ Նեմրա ասում», եւ Ռուբոն թախծոտ ժպտալով ասաց՝ «ինձ մինչեւ վերջ էլ Կիբուռ էր ասում», եւ ես ասացի՝ «ձեր կուրսեցիք համարյա բոլորն իրար անունները թարս էին ասում», եւ Ռուբիկն ասաց՝ «առաջին կուրսում Յուրան ինձ Կիբուռ ասեց, ու էդ օրվանից սկսած՝ սովորություն դառավ», եւ ես ասացի՝ «վարչապետ դառնալուց առաջ Անդոյին հազար անգամ տեսել եմ, բայց ոչ մի անգամ Վահանավանքի մասին չի հիշացրել», եւ Կիբուռն ասաց՝ «երեւի մտքով չի անցել, որ մոռացած կըլնես», եւ ես մի քիչ մտածեցի ու արդարանալով ասացի՝ «ախր ինքը շատ էր փոխվել», եւ Ռուբոն մի քիչ մտածեց ու հարցրեց՝ «կարող ա՞ մենք չենք փոխվել», եւ ես ասացի՝ «ոչ դու ես փոխվել, ոչ Յուրան, ոչ էլ՝ ախպերդ», եւ Ռուբոն ասաց՝ «դու էլ համարյա չես փոխվել», եւ ես ասացի՝ «բայց ինքը շատ էր փոխվել. յոթանասուներկու թվի էն նիհար ու բոյով Անդոն չէր», եւ Ռուբոն մի քիչ մտածեց ու թախծոտ ժպտալով ասաց՝ «բայց էս Անդոն էն Անդոյին հեչ չէր զիջում» եւ մի քիչ էլ մտածեց ու ավելացրեց՝ «նույն բարի ու կամեցող Անդոն էր», եւ ես մի քիչ մտածեցի ու ասացի՝ «ավելի էր բարիացել», եւ Ռուբոն ասաց՝ «ուրիշներին պաշտոնը փչացնում ա, բայց իրան հեչ չէր փոխել», եւ ես ասացի՝ «իրա պաշտոնն էլ հո սովորական պաշտոն չէր. փաստորեն, հանրապետության երկրորդ դեմքն էր», եւ Ռուբոն թախծոտ ժպտալով ասաց՝ «երկրորդ դեմքն էր, բայց առաջին ու իսկական դեմքը չփոխեց», եւ ես ասացի՝ «ինքը մինչեւ վարչապետ դառնալն էր փոխվել», եւ Ռուբոն ասաց՝ «էդ ասածդ ընդամենը արտաքին փոփոխություն էր», եւ ես ասացի՝ «ո՞ւմ մտքով կանցներ, որ ինքը Վահանավանքի Օդնան ա», եւ Կիբուռը թախծոտ ժպտալով ասաց՝ «մենակ դու էիր իրան Օդնա ասում», եւ ես ասացի՝ «մեկ-մեկ դու էլ էիր ասում», եւ Ռուբոն ասաց՝ «բայց դո՛ւ էդ անունն իրան կպցրիր», եւ ես ասացի՝ «ինքն էլ ինձ Նեմրա էր ասում», եւ Ռուբոն ասաց՝ «սաղս էլ իրար անունները թարս էինք ասում, բայց Անդոյին Օդնա չէինք ասում», եւ ես հարցրի՝ «խի՞ չէիք ասում», եւ Կիբուռը մի քիչ մտածեց ու ասաց՝ «չգիտեմ. էդ մասին ոչ մի անգամ չեմ մտածել» եւ մի քիչ էլ մտածեց ու հառաչելով ասաց՝ «սրանից հետո իրան ոչ Անդո պիտի ասենք, ոչ էլ՝ Օդնա» եւ մի քիչ էլ մտածեց ու ավելացրեց՝ «սրանից հետո իրան մենակ Վարչապետ պիտի ասենք» եւ մի քիչ էլ մտածեց ու ասաց՝ «ժողովուրդն իրան որպես Վարչապետ ա ընդունում ու ճանաչում», եւ ես ասացի՝ «հիմի նոր եմ հասկանում, որ ժողովուրդն իրան սիրում ա», եւ Կիբուռը հառաչելով ասաց՝ «գնա մեռի՝ արի սիրեմ», եւ ես ասացի՝ «Վահանավանքից հետո շատ էր փոխվել», եւ Ռուբոն մի քիչ մտածեց ու ասաց՝ «մենք որ իրան միշտ տեսել ենք՝ մեր համար հեչ չէր փոխվել», եւ ես ասացի՝ «ես էլ եմ իրան միշտ տեսել, բայց՝ էս վերջին տասնհինգ տարիներին», եւ Ռուբոն զարմացած հարցրեց՝ «բա ո՞նց ա, որ ոչ մի անգամ Վահանավանքի մասին չեք խոսացել», եւ ես մի քիչ մտածեցի ու ասացի՝ «ինքը պիտի խոսար. ես որ չէի հիշում՝ ի՞նչ պիտի խոսայի», եւ Կիբուռը մի քիչ մտածեց ու ասաց՝ «իրա մտքով չէր կարա անցներ, որ Վահանավանքը մոռացել ես», եւ ես արդարանալով ասացի՝ «ոչ թե Վահանավանքն էի մոռացել, այլ՝ իրան»:

**«Առավոտ» օրաթերթ, 2009թ.**



1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ
ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

# Հակոբի ապստամբվելը եւ...

Ստ.Օրբելյան, Սյունիքի պատմություն,
Գլուխ ՃԲ, էջ 240-248

Աղվանքում Սահակ անունով կաթողիկոս կար, որը հոգեւոր սիրո կապով կապված էր Տեր Հակոբի հետ: Նրանք համախոհներ էին ու միմյանց խիստ մոտ: Սահակից հետո առաջնորդեց նրա եղբայր Գագիկը, որն առավել համարձակ գտնվեց Սյունյաց եպիսկոպոս Հակոբի հետ ունեցած միաբանական սիրո մեջ: Քանի որ այն ժամանակ[ներում] Հայոց կաթողիկոսները հեռացած էին իսմայելացիների ավազակային մշտական հարձակումների պատճառով, Դվինի աթոռը թողել ու հայոց թագավորների հետ շրջում էին այստեղ ու այնտեղ՝ երբեմն բնակվելով Վասպուրականի թագավոր Գագիկի մոտ, Վանա ծովի կղզում, որտեղ կային սուրբ Գրիգորի սեղանը, աթոռն ու գավազանը, երբեմն՝ Շիրակի գավառի Արգինայի վանքում՝ այսպես տարուբերվելով, այլեւ վախճանվել էր հայոց Թեոդորոս կաթողիկոսը, նրան հաջորդել Անանիա Մոկացին՝ երեք հարյուր իննսուն թվականին, այս Հակոբը հեռավորության պատճառով չէր կարողանում ամեն տարի գնալ հայոց կաթողիկոսի մոտ՝ մեռոն վերցնելու, ուստի հարկ եղավ մեռոնը խնդրելու Աղվանքի կաթողիկոսից: Եվ սա նրա համար մեծ մոլորություն ու անկանգնելի գլորում եղավ, որովհետեւ սխալվեց մարդկային դյուրախաբությամբ ու ըստ Սողոմոնի այն ասույթի, թե՝ «իմաստունն էլ քուն ունի»:

Եվ սա կատարեց ինքնահաճությամբ ու ինքնակամորեն, որովհետեւ խոշորակազմ ու հպարտ մարդ էր, մեծամիտ ու ամբարտավան, համարձակ բնավորությամբ ու ճոխ լեզվով, պայծառ հանճարով ու խիստ քաղցրախոս: Դրա համար էլ ինքնահավանությամբ մի փոքր գոռոզացավ: Իսկ Անանիա կաթողիկոսը պատվիրակների միջոցով [իր մոտ] հրավիրեց Հակոբին ու Սահակին, բայց նրանք իրենց աթոռներից չշարժվեցին, սուտումուտ պատճառաբանություններ բերելով՝ չգնացին: Եվ քանի որ կաթողիկոսը լսել էր նրանց խիստ մտերմության ու մոտիկության, ինչպես նաեւ [Հակոբի կողմից] Աղվանքից մեռոն խնդրելու մասին, գիտեր եւ այն, որ շատ տարիներ Հակոբը չի եղել սուրբ Գրիգորի աթոռը, ահեղ ոխով գրգռված ու սաստիկ ցասմամբ մղված եկավ Հակոբի հարցով, որ կա՛մ հնազանդեցնի ու ըստ իր կամեցածի անի, կամ մեծագույն պատիժներ ընդունել տա եւ ապա գնա Աղվանք, աղվանքցիներին եւս հնազանդեցնի: Չէ՞ որ Աղվանքի արքեպիսկոպոսները հայոց կաթողիկոսներից էին ձեռնադրություն ստանում. բայց դրանից քիչ տարիներ առաջ ետ էին կանգնել՝ Գեորգ կաթողիկոսի վախճանից մինչեւ այս Անանիայի ժամանակները, հինգ կաթողիկոսների՝ Մաշտոցի, Հովհաննեսի, Ստեփանոսի, Եղիայի եւ Թեոդորոսի օրոք:

Երբ [Անանիան] եկավ-հասավ մեր Սիսական աշխարհը, նրան ընդառաջ ելան Սյունյաց իշխանները՝ աստվածապահ տեր Սմբատը եւ Բաղքի Զեվանշերը: Բերեցին Տաթեւի եպիսկոպոսարանն ու մեծաշուք պատվող նստեցրին այնտեղ: Ապա եկավ Հակոբ եպիսկոպոսը, ընկավ նրա առաջ ու մեղքերը խոստովանեց՝ [ասելով]. **«Ո՛վ մեծապատիվ տեր կաթողիկոս, որովհետեւ աստվածաբար դեպի մեզ թեքվեցիր ու մեր հանդգնությունն անտես արեցիր, հնազանդվում ենք քեզ ու Գրիգոր Լուսավորչի սուրբ աթոռին՝ որպես աստծու: Մեղք գործեցինք երկնքի ու քո հանդեպ, բայց դու ների՛ր մեզ ու մեր հանցանքները»:** Կաթողիկոսն այդ տեսնելով մեծապես օրհնեց նրան, շնորհակալ եղավ եւ ուզեց գնալ Աղվանք: Բայց Աբաս թագավորից լրաբեր եկավ՝ [գուժելով] թագուհու մահվան մասին, կաթողիկոսին ետ դարձրեց այդ ձեռնարկումից: Այդ պատճառով էլ մեծամեծ պարգեւներով ու առատ ընծաներով Սմբատ իշխանն ու Զագիկ եպիսկոպոսը նրան ճանապարհեցին դեպի իր աթոռը:

Իսկ ամենաչարը, որ շարունակ խանդում է բարուն ու մարդկանց գրգռում դեպի խռովարարական չարություն, չհանդուրժեց այս կատարվածը, այլ սողոսկեց չար ու նախանձոտ մարդկանց սրտերը, [որոնք] սկսեցին կաթողիկոսի մոտ վերստին չարախոսել Հակոբի մասին, թե կրկին ապստամբվեց ձեր դեմ ու նա թույլ չի տալիս Աղվանքին քեզ ենթարկվելու, Անձեւացյաց Խոսրով եպիսկոպոսին էլ թղթով շեղեց ձեզանից: Նաեւ ուրիշ մեղադրանք էին հորինում, թե նա քողարկումով ընդունում է քաղկեդոնականությունը: Եվ այսպես խռովություն ու մեծ պայքար հրահրեցին եկեղեցու մեջ: Բայց ես ինքս այսպիսի բաները զրպարտություն եմ համարում եւ ոչ ճշմարտություն՝ իզուր դատապարտվող Հակոբ եպիսկոպոսի նկատմամբ, որովհետեւ ի՞նչ փառք ու պարծանք պիտի լիներ նրա համար՝ թողնել Գրիգոր Լուսավորչի սուրբ աթոռը եւ ծառայել իր ծառայակից[ներ]ին, որոնք պաշտոնական օծությամբ անկատար ու թերի էին: Սակայն սա թողնենք քննելու արդարադատ աստծուն:

Ապա Աղվանքի կաթողիկոս Սահակը մեռնում է, եւ նրան հաջորդում է իր եղբայր Գագիկը՝ նույն անկատար օծությամբ: Տեր-Անանիան այս իմանալով՝ Աղվանքի իշխաններին թուղթ է գրում իր իմաստալից խոսքերով ու հրամայում չենթարկվել կաթողիկոս կոչված այդ սնափառ Գագիկին: Նրանք հենց այդպես էլ արեցին. նրան ոչ ոք չհնազանդվեց, բացի իշխաններից միայն մեկից՝ Սենեքերիմ անունով: Իսկ մյուսները միաբանությամբ Հովնան անունով մի մարդու ուղարկում են հայոց կաթողիկոսի մոտ՝ իրենց համար արքեպիսկոպոս ձեռնադրվելու, որին եւ Տեր-Անանիան սիրով ու պատվով ընդունում է, ձեռնադրելով ուղարկում Աղվանք: Իսկ երբ այս այսպես եղավ, ոմանց նախանձով ու հակառակությամբ Հովնանի վրա սկսեցին բարդվել փուչ բամբասանքներ, եւ երկուսի՝ Գագիկի ու Հովնանի միջեւ բավականաչափ խռովություն եղավ: Եվ երկուսն էլ մերժվեցին:

Անանիան, այս բոլորը լսելով, իր մտքում վարանում եւ տարակուսում էր եկեղեցու տեսակ-տեսակ պառակտումների ու ապստամբությունների պատճառով, եւ հավաքելով եպիսկոպոսների ու գլխավոր հայրերի բազմությունը, խաչն ուսն առած՝ որպես առաջամարտիկ՝ գալիս է եկեղեցու շեղված ու պառակտված պաշտոնյաների հարցով, դիմումգնում է Աղվանք: Եվ երբ հասնում է Խաչենի գավառը, նրան դիմավորում է իշխան Գրիգորը՝ տանելով, իջեցնելով իր տանը: Այդ աշխարհի բոլոր իշխաններին, եպիսկոպոսներին ու վանականներին հավաքում է Ադախ կոչված տեղում. գալիս են նաեւ Գագիկն ու Հովնանը: Ապա Անանիա կաթողիկոսը պահանջում է «Աղվանքի պատմություն»-ը, որպեսզի իմանան Աղվանքի աթոռակալների որպիսությունը: Սակայն նրանք թաքցնում ու բոլորովին ցույց չեն տալիս: Ապա երկնային տնօրինությամբ Գանձասարի եկեղեցապանը գիշերային արարողության ժամանակ դնում է մի գիրք՝ իբր թե Հովնան Ոսկեբերանինը, եւ կաթողիկոսին մեծարանքով հրավիրում են կարդալու: Նա էլ, բացելով այն, գտնում է իր փնտրածը, քանի որ դա «Աղվանքի պատմություն»-ն էր: Նրա մեջ ամենայն ճշտությամբ գրված էր, որ Աղվանքի առաջին եպիսկոպոսը հայոց լուսավորիչ սուրբ Գրիգորից էր ձեռնադրվել՝

## Սյունյաց աշխարհի մատենագիր Ստեփանոս Օրբելյանը, ով «Սյունիքի պատմություն» կոթողային գործով գալիքին փոխանցեց Վահանավանքի կառուցման մասին առաջին տեղեկությունները

Ամաղու Նորավանքի Սբ Ստեփանոս վանքը, որի գավթում թաղված է Ստեփանոս Օրբելյանը:

Ստեփանոս Օրբելյանի շիրիմը Նորավանքի Սբ Ստեփանոս վանքի գավթում:

Ստեփանոս Օրբելյանի գեղանկարը (հեղինակ՝ Նվարդ Բալասանյան, կտավ, յուղաներկ, 50Х60սմ, 2004թ., պահվում է Գորիսի պետական համալսարանի պատմության եւ իրավագիտության ամբիոնի Ստեփանոս Օրբելյանի անվան կաբինետում):

№ 30(271) Սյունյաց երկիր 37
15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2012թ.

## 1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

# ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

Աղվանքի թագավոր Ուռնայրի խնդրանքով: Եվ չորս հարյուր քառասուն տարի ենթարկվելով հայոց աթոռակալներին՝ Աղվանքի կաթողիկոսները Հայաստանից էին ձեռնադրություն ստանում, որովհետեւ Հայաստանինը պատրիարք էր, իսկ Աղվանքինը՝ արքեպիսկոպոս: Սա այսպես էր հայոց քսանհինգ կաթողիկոսների ժամանակներում՝ մինչեւ Տեր-Աբրահամը:

Եվ երբ աղմուկ տեղի ունեցավ մեր աշխարհում, [Հայաստանի] հունական մասում ոմն Հովհան հակաթոռ [կաթողիկոս] էր նստած ու [եկեղեցու] ինը դասերի [կարգի] համաձայն հույների կողմից էր հետամուտ Հայաստանին: Վրաց կաթողիկոս Կյուրիոնն էլ իր փառամոլական ախտի պատճառով հեռացավ հայոց [եկեղեցու դավանակցությունից] ու քաղկեդոնիկ դարձավ, ապա եւ Աղվանքի [կաթողիկոսը] բաժանվելով հեռացավ՝ ինչ-որ պատրվակներ մեջտեղ բերելով: Իսկ երբ մեռնում են Աբրահամն ու Հովհանը, հայոց պատրիարք է նստում Կոմիտասը: Վախճանվում է եւ Աղվանքի կաթողիկոսը: Այնուհետու աղվանքցիները դարձյալ ենթարկվում են հայոց [եկեղեցուն] եւ Կոմիտասից կաթողիկոս են խնդրում, որը եւ իր հայրապետության երկրորդ տարում ձեռնադրում է:

Եվ այսպես հնազանդության մեջ մնացին ութսունհինգ տարի՝ հայոց յոթ կաթողիկոսների ժամանակներում՝ մինչեւ Տեր~Եղիան:

Սրա օրերում Աղվանքի իշխանական կանանցից մեկը կար՝ Սպրամ անունով, որն առնում է իր մերձավոր ու սիրող Բակուր անունով մի եպիսկոպոսի եւ խոստանում նրան տալ կաթողիկոսության աստիճանը: Բայց չի համարձակվում ուղարկել Հայաստան, որ չմերժեն, այլ ժողով է անում Պարտավում ու կաթողիկոս ձեռնադրել տալիս նրան, որը եւ անվանվում է Ներսես: Վերջինս գաղտնի կերպով ընդունում էր քաղկեդոնական դավանանքը: Այդ պատճառով Եղիա կաթողիկոսն արքունի հրամանով գնում է Աղվանք եւ բռնելով այն տիկնոջն ու Բակուրին՝ մերկացնում, կապում է իրար ու իշի վրա նստեցնելով շրջել է տալիս Պարտավի փողոցներում: Այդ պատճառով Բակուրը ութ օր քաղցած մնալով վախճանվում է:

Իսկ Եղիա կաթողիկոսն Աղվանքի համար արքեպիսկոպոս է ձեռնադրում ու այդ աշխարհի իշխաններից, եպիսկոպոսներից, գլխավոր վանականներից եւ ավագ տանուտերերից մեծամեծ նզովքներով երդում, պայմանագիր ու գրավոր երաշխիք է վերցնում՝ այլեւս սուրբ Գրիգորի աթոռակալներից չհեռանալու եւ ետ չկանգնելու համար, ինքն էլ վերադառնում է Հայոց աշխարհը: Եվ այսպես միաբանությամբ մնացին հարյուր երեսունյոթ տարի, տասնչորս կաթողիկոսների օրոք՝ մինչեւ Տեր-Գեորգ Գառնեցին:

Այնուհետեւ երբ Բուղա ամիրան եկավ Հայաստան, եւ Գեորգ կաթողիկոսը գերի տարվեց, դառն ու տեսակ-տեսակ պղտորումներ եղան Հայաստանում եւ Աղվանքում: Տեր-Գեորգի աթոռից Հովնան անունով դռան եպիսկոպոսը փախավ ու եկավ Աղվանք: Աղվանքի արքեպիսկոպոսն էլ մեռավ, իսկ [հայոց] կաթողիկոսը գերության մեջ էր: Կաթողիկոսի հանդեպ հավատարիմ համարելով՝ հավաքվեցին ու դռան եպիսկոպոս Հովնանին ձեռնադրեցին Աղվանքի կաթողիկոս: Իսկ երբ Գեորգը Աղվանքի թագավոր Համամի միջոցով վերադառնում է գերությունից, տեսնում է Հովնանին նրանց արքեպիսկոպոս եւ հրամայում է հանել նրա զգեստներն ու կաթողիկոսական նշանները: Այդ պատճառով էլ Համամը նրա առջեւն ընկնելով, ներում է խնդրում: Եվ կաթողիկոսը լսում է նրան՝ իր մեծ



Յայսմաւուրք, Կ.Պոլիս, 1706թ.

երախտիքի համար, ու Հովնանին նորից ձեռնադրում է Աղվանքի արքեպիսկոպոս եւ թողնելով այնտեղ գնում է իր սեփական աթոռը: Իսկ երբ Գեորգ կաթողիկոսը վախճանվեց, մեր աշխարհին իսմայելացիների կողմից վրա հասած դառն ու տեսակ-տեսակ անցքերի պատճառով, աղվանքցիները չէին կարողանում հասնել հայոց հայրապետների մոտ, նույնպես եւ Աղվանքն անփութորեն անտեսվում էր հայոց կաթողիկոսների կողմից, քանի որ յուրաքանչյուր ոք միայն իր անձի համար էր հնարներ փնտրում՝ իսմայելական սրից ազատ մնալու համար: Ապա Հովնանից հետո Աղվանքի կաթողիկոս են ձեռնադրում նրա Սիմեոն անունով եղբորը, այնուհետեւ՝ Դավթին, ապա՝ Սահակին, ապա հիշյալ Գագիկին: Եվ այսպես վաթսունինը տարի տեւեց նրանց ինքնագլուխ ու ինքնաձեռնադրական թերակատար օծումը:

Եվ ահա Անանիա կաթողիկոսը, կարդալով ու իմանալով այս ամենի մասին ու այս բաներով փակելով խոտորախոս մարդկանց զրախոս բերանները, պապանձեցնելով փառասերների ու ինքնահավանների լեզուն, բոլորին ամոթահար արեց: Ու իշխանները, իմանալով հաստատ իրողությունը, լիովին համոզվելով, ենթարկվեցին նրան: Իսկ նա արժանապես քննելով նախ կարգալույծ արեց իր իսկ ձեռնադրած Հովնանին՝ հորինած բամբասանքների պատճառով, եւ ապա՝ Գագիկին: Բայց Գրիգոր իշխանը մեծ աղաչանքներով խնդրում էր կրկին ձեռնադրել Գագիկին, որը, սակայն, ուղղադատ ու ճշմարտաքին հայրապետը պատշաճ չհամարեց, որովհետեւ վերստին ծնվածը վիժվածք կլինի, կրկին պսակվածը անվավեր կկոչվի:

Ապա խնդրեցին վերադառնալ Հայաստան՝ [ասելով], «Մենք կընտրենք մի շատ համապատասխան մարդու եւ կուղարկենք ձեզ մոտ, որպեսզի քո կողմից մեզ համար առաջնորդ ձեռնադրվի»: Հայրապետը հավաստիացվելով՝ այնուհետեւ դուրս ելավ Աղվանից տնից ու եկավ Սիսական տուն, Տաթեւի սուրբ հայրապետանոցի կողմը: Հակոբ եպիսկոպոսն այդ իմանալով գնաց Բաղաց ամրոցը՝ թաքցնելով իր երեսը ըստ այն խոսքի, թե՝ «Փախի՛ր, թաքնվի՛ր մի առ ժամանակ, մինչեւ անցնի տիրող բարկությունը»: Չէ՞ որ գիտեր, թե անիրավաբար պեսպես զրպարտություններ էին կցմցել ու բարդել իր վրա՝ երկաթը փայտի կամ սնդիկը ոսկու հետ խառնելու նման: Իսկ Տեր Անանիան, երբ այդ իմացավ, շատ օրեր մնաց այնտեղ՝ բազմաթիվ գրություններով ու պատգամավորների միջոցով պահանջելով, որ Հակոբը դուրս գա Ջեվանշերի հովանավորությունից, բայց սա թույլ չտվեց դուրս գալ: Այնուհետեւ կաթողիկոսը չկարողացավ շարունակել Տաթեւում մնալ, որովհետեւ ձմեռ ժամանակ էր. սաստիկ ցասմամբ բորբոքված՝ նա քանդեց ու ավերեց տեղը, ահավոր նզովքներով իշխանին ու եպիսկոպոսին խառնեց իրար, կապեց-կաշկանդեց կապանքներով, իսկ ինքն անցավ-գնաց իր աթոռը: Ապա այնտեղ մնալով՝ միշտ գրություններ ուղարկելով չկարողացավ հնազանդեցնել ու իր ծառայությանը բերել Գագիկ Աղվանեցուն կամ Հակոբ Սյունեցուն, այդ պատճառով էլ միայն աղոթքներով էր աստծուց խնդրում դրա ելքը: Եվ սա տեղի էր ունենում հայոց երեք հարյուր իննսունութ թվականին: Իսկ հայոց չորս հարյուր յոթ թվականին, կարծես վերին ակնարկմամբ, վախճանվեցին երկուսն էլ՝ Սյունյաց մետրոպոլիտ ու հայոց բոլոր եպիսկոպոսների գլուխ Հակոբը եւ Աղվանքի արքեպիսկոպոս Գագիկը: Վերջինս Անանիայի վերադարձից հետո անզգամաբար ապստամբվել էր ու իր պայմանը դրժել: Եվ գուժկան գալով՝ նրանց մահվան մասին տեղեկացրեց կաթողիկոսին, որը եւ, դա համարելով իր աղոթքների սադրանքով եղած, գոհունակություն հայտնեց աստծուն: Բայց նա պատշաճ չհամարեց իր կողմից ավերված առաքելական աթոռը զրկել հայրապետական գլխից, ուստի եւ ճանապարհ ընկնելով եկավ մեր այս Սիսական աշխարհը, Սյունյաց եպիսկոպոսարանի անբնակ տեղը, հրաման տվեց հավաքել կրոնավորներին ու շինել տեղը, իսկ ինքը գնաց Կապան քաղաքը: Նրան ընդառաջ ելնելով բանադրված Ջեվանշեր իշխանը՝ զղջմամբ խոստովանեց իր մեղքերը: Նույնպես եւ եկավ Սյունյաց գահերեց իշխան Վասակը՝ Աշոտի որդի Սմբատի որդին, գեղեցիկ խոստովանությամբ մեղա եկավ: Այսպիսով միասին [կաթողիկոսից] իրենց հանցանքների համար ներում ստանալով՝ նրան տարան, իջեցրին Կապան քաղաքի արքունական գահույքի վրա:

■


Տփղիս
Ռուսաստան
Սամշուլդե
Ախալցիխե
Ախալքալաքի
Խոռնաբուջ
Շաքե
(Նուխիպատ)
Կապաղակ
(Կաբալա)
Լոռի
Թագ.
(979 թվից)
Կարսի
Երազգավորս
Կարս
Անի
Գանձակ
Շամախի
Պարտավ
(Բարդա)
Փառիսոս
Բագավան
Անիի
Երեւան
Թագ.
Վաղարշապատ
Դվին
Սուրմալու
Վաղարշակերտ
Բայլական
Գորայս
(Գորիս)
Սյունյաց
(Կապանի)
Նախճավան
Մակու
Բարզանդ
Մարական
Ջաղրա
Գողթն
Սաւրաց.
Շաքիի
(Պարաչամբ)
Գոռիս
Արեւելեան Սաւրաց
Արեւելեան Սիւնեաց
Հարաւային Սիւնեաց
Հարաւային Սաւրաց
Ատրպատական
Ալանաց
Ալանաց դուռ
Ամիրաց.
Ամիրաց. (971 թվից)
Ամիրաց. (987 թվից)
Ամիրաց. (979 թվից)
Ամիրաց. (923)
Ամիրաց. (923)
Ամիրաց. (981 թ.)
Ամիրաց. (929 թ.)
Ամիրաց. (1000 թվից)
Ամիրաց. (1000 թվից)
Ամիրաց. (1000 թվից

1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ԲԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ



Զորովանց գյուղի վանքը, որի բակում թաղված է Վահան Ա Սյունեցի կաթողիկոսը (լուս.՝ Ճարտարապետ Բահմանի, 1913թ.)

# Վահանավանքի մեծ միաբանության առաջնորդ Վահանը՝ Սյունյաց եպիսկոպոս

Ստ.Օրբելյան, Սյունիքի պատմություն, ԾԲ գլուխ, էջ 246-248

...Հավաքելով բոլոր խաչապաշտ մարդկանց ու ճգնակյաց վանականներին՝ [կաթողիկոսից] խնդրեցին իրենց համար վերստին առաջնորդ [նշանակել]: Եվ նա ընդառաջելով Սյունյաց եպիսկոպոս դարձրեց Ջեւանշերի որդի Վահանին, որը Վահանավանքի(1) մեծ միաբանության առաջնորդն էր: Կաթողիկոսը երդմնագիր վերցրեց Վահանից ու իշխաններից, որպեսզի այլեւս չշեղվեն ու չհեռանան սուրբ Գրիգորի աթոռից եւ մտերմություն չանեն Աղվանքի արքեպիսկոպոսների հետ, որ նմանօրինակ մոլորություն առաջ չգա: Եվ մեծապայման երդմնագիրը եզրափակեցին ահեղ ու սոսկալի նզովքներով, «որ եպիսկոպոսներից ոչ ոք չհամարձակվի Հակոբի արածն անել կամ մտածել ոճիր, եւ որ իշխաններից ոչ մեկը չհամարձակվի այնպիսինին հետեւել, նրան օգնական կամ պաշտպան կանգնել, իսկ եթե եպիսկոպոսներից մեկը հանդգնի, շտապ կերպով հանձնեն հայոց կաթողիկոսի ձեռքը, եւ նրա համար թաքստոց կամ պատսպարան չլինեն»: Եվ երդմնագիրը կնքելով իրենց մատանի[ներ]ով՝ հանձնեցին կաթողիկոսին: Ավելորդ համարեցինք այն [այստեղ] գրելը, որովհետեւ [բոլոր նման] գրությունները լրիվ կան «Գիրք թղթոց»-ում(2), որոնք ժողովել է սույն Անանիան՝ «Հավատո նամակ» անվանումով: Բայց միեւնույն ժամանակ Սյունյաց տնից վերցրեց պատիվը, այսինքն՝ այն խաչը, որ առջեւից էին տանում, թանկարժեք ու մեծագին գավազանը, ոսկեթել գահավորակը, որոնք իրենց հետ ման էին ածում: Դրանք սահմանված էին հայոց թագավորների ու հայրապետների կողմից: Սրանք այսպես վերցվեցին ու վերացան մինչեւ Սյունյաց եպիսկոպոս Տեր-Հովհաննեսի(3) ու հայոց կաթողիկոս Տեր-Սարգսի(4) ժամանակները: Իսկ երբ Տեր-Հովհաննեսը ձեռնադրվեց, Սյունյաց աթոռակալների ամբողջ պատիվն ու իշխանությունը վերականգնվեցին հայոց կաթողիկոս Տեր-Սարգսի կողմից, որն իր տեղում կպատմեմ:

Ապա այս իրագործումից հետո կաթողիկոսը(5) գնում է Աղվանք՝ այնտեղի աթոռակալությունը հաստատուն դարձնելու համար: Սակայն նրա ետեւից գուժկան է հասնում Վասպուրականի եւ Արծրունյաց Գրիգոր թագավորի կողմից(6): Հայտնելով, թե [մարդ] է վախճանվել ու դին քեզ է սպասում»(7): Այսպիսով ետ են դարձնում:

Այս իմանալով Աղվանքի իշխանները՝ Իշխանիկն ու Սենեքերիմը, այլեւ մյուս Սենեքերիմը՝ Գրիգորի որդին, որին նախօրոք հիշատակեցինք, Ջեվանշերն ու Գուրգենը, իրենց մեղքերը մեծ զղջմամբ խոստովանելով, Խոտակերաց վանքից(8) Դավթին ուղարկեցին նրա մոտ՝ իրենց համար առաջնորդ ձեռնադրվելու: Նրան Տեր-Անանիան ընդունեց մեծաշուք պատվով, ձեռնադրեց, ճոխ ընծաներով եւ առատաբաշխ պարգեւներով այնտեղից ուղարկեց Աղվանից աշխարհը: Դրա համար էլ բոլորն իրենց լեզվով գոհունակություն ու փառք ուղղեցին վեր՝ բարերար աստծուն, որն այսպես վերացրեց եկեղեցու մեծ խռովությունը եւ խաղաղություն բերեց մեր կեղեքված ու տառապած հայոց ժողովրդին, եկեղեցու պատվական անդամները, որ խոտորվել էին նրանից, վերստին միացրեց գովելի գլխին՝ մեծ պատրիարքներին, ովքեր սուրբ Գրիգորի աթոռակալներն էին:



Վահան Ա Սյունեցի: Ամենայն հայոց կաթողիկոս 968-969 թվականներին: Սյունիքի Բաղք գավառի գահակալ իշխան Ջեւանշերի որդին:

Եվ արդ՝ այս պայքարից հետո եթե մեկը՝ Սյունյաց եպիսկոպոս կամ Աղվանից արքեպիսկոպոս, խորհի կամ մտաբերի այն կորստաբեր շավղով ընթանալ ու հեռանալ հայոց կաթողիկոսներից, ինչ պատճառով էլ լինի, բացի հոգեւոր վնասներից, եթե ինչ-որ հերձված կամ անպատշաճ նորամուծություն հանդես բերի, այնպիսին նզովված լինի սուրբ երրորդությունից, նրա մասն ու բաժինը հերձվածողների եւ ուրացողների հետ լինի ու սատանայի հետ նա դատապարտվի: Իսկ եթե ինչ-որ վնաս նկատեն հավատքի կամ եկեղեցու նկատմամբ, ճշմարտությամբ պիտի ստուգել հայոց կաթողիկոսների միջոցով: Եվ կամ եթե հանդիպեն ինչ-որ մեծագույն արատի ու վնասակարության, որոնք բազմաթիվ մարդկանց խռովության եւ կորստյան պատճառ են դառնում, իրենք պիտի իմանան՝ արժանապես վարվել, մինչեւ որ թյուրությունը բոլորովին մաքրվի:

## Առավել սուրբ եւ իմաստուն Վահանը՝ Ամենայն հայոց կաթողիկոս

Ստ.Օրբելյան, Սյունիքի պատմություն, գլուխ ԾԸ, էջ 248-249

Տեր-Անանիան, Հովհաննու վանքում(9) Վահանին ձեռնադրելով Սյունյաց եպիսկոպոս, իր հրամանում նաեւ սահմանում էր, որ [եպիսկոպոսը] քիչ ժամանակ պիտի Տաթեւի մեծ եպիսկոպոսարանում նստեր, իսկ մյուս օրերին՝ իր սեփական տանը(10), որովհետեւ տեղի ավերման պատճառով շատ պայծառություններ մարել էին, բազում բարեգործություններ՝ խափանվել երկար ժամանակ, շատ ունեցվածքներ՝ հափշտակվել ու պակասել եկեղեցուց՝ Տաթեւի մեծ կենտրոնից, որոնք ժամանակի ընթացքում իշխանները քիչ-քիչ այնտեղ վերադարձրին: Ինչպես օրինակ՝ Սյունիքի տեր աստվածասեր իշխան Սմբատը՝ մեծ Սմբատի եղբայր Աշոտի որդի Սահակի որդին, սուրբ եկեղեցիներին վերադարձրեց Ծացարդն ու Հարժիքը(11)՝ Տեր Վահանի միջոցով: Իր ձեռքով գրեց նաեւ այսպիսի վճռագիր.

**«Հանուն աստծու, առավել հաստատուն դարձնելու համար նախորդ այն պայմանագիրը, որ մեր հայրերը տվել էին Սյունյաց աստվածապատիվ եւ հոգեւոր [առաջնորդ] եպիսկոպոսներին, ես՝ իշխան Սահակի որդի Սմբատս, Հարժիքն ու Ծացարդը, որ մի կարճ ժամանակ հափշտակվել էին այս տնից, տվեցի աստվածապատիվ եւ հոգեւոր տեր Վահանին ու Տաթեւի աստվածաբնակ եւ լուսաճեմ եկեղեցիներին, այն պայմանով, որ առաջինների հիշատակը նորոգեն, ինձ եւս հիշեն իրենց սուրբ ու մաքրափայլ աղոթքների մեջ եւ մեր մեղքերին ներում խնդրեն: Եվ մեզանից հետո ոչ մեկը՝ մերոնցից կամ օտարներից չպիտի հափշտակի վանքից: Իսկ եթե հանդգնեն, աստծու բերանով նզովված լինեն սատանայի ու օձի հետ: Նրանց մասն ու բաժինն էլ Հուդայի, Կայենի եւ Արիոսի հետ լինի: Գրեցինք եւ կնքեցինք մեր մատանիով, չորս հարյուր տասներկու թվականին»**(12):

Վահանը եպիսկոպոսական պաշտոնին մնաց վեց տարի: Այնուհետեւ վրա հասավ հայոց կաթողիկոս Տեր Անանիայի մահը: Նրան թաղեցին Արգինայի վանքում(13): Եվ հայոց թագավոր Աշոտը(14)՝ Սմբատի որդին, եպիսկոպոսների ու սուրբ հայրերի ժողով գումարեց թագավորանիստ Շիրակավանում. նաեւ Սյունիքից հրավիրեց Վահանին: Նա առաջարկեց եպիսկոպոսներից մեկին ընտրել ու նստեցնել հայոց հայրապետական աթոռին:

Ապա ամբողջ ժողովն ընտրում է Վահանին՝ առավել սուրբ ու իմաստուն լինելու պատճառով: Եպիսկոպոսների բազմությունը նրան ձեռնադրում է ու օծում հայոց կաթողիկոս: Նա մեկ տարի մնալուց հետո սկսեց Վրաստանից պատկերներ բերել ու դնել սեղանի վրա: Հրամայեց նույնն անել բոլոր եկեղեցիներում՝ ըստ հույների սովորության, սեղանները զարդարել սրբապատկերներով(15), պատարագ չմատուցել առանց սրբապատկերների: Այս պատճառով բոլորը կասկածեցին, թե հույների հետ դաշինք է կնքել եւ կամենում է նրանց աղանդը [մեր] եկեղեցին խցկել: Թագավորի մոտ բողոք բարձրացրին: Եվ նա հրաման տվեց ժողով գումարել Անի

## 1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

# ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

**Զորովանց գյուղի վանքը, որի բակում թաղված է Վահան Ա Սյունեցի կաթողիկոսը (1940-50թթ. պայթեցումից հետո): Լուսանկարը՝ Սամվել Կարապետյանի, 2004թ.:**

Քաղաքում(16)՝ իսկությունը քննելու նպատակով: Վահանն, այդ իմանալով, ժողովին չներկայացավ, այլ ելավ-գնաց Վասպուրական աշխարհը, Գագիկ թագավորի որդի Համազասպի մոտ ու նրան իր հետ համաձայնության բերեց՝ ասելով, որ ինքը զրպարտված է նախանձոտ մարդկանց կողմից: Բնակվեց Զորո կոչված վանքում(17): Իսկ Անիում հավաքվածները, երբ իմացան նրա գնալը, Աշոտ թագավորի հրամանով նրա փոխարեն մեկ ուրիշ մարդու կարգեցին կաթողիկոս, Վահանին էլ պաշտոնանկ արեցին: Եվ այսպես կաթողիկոսի(18) տեղում կաթողիկոս նստեց Ստեփանոսը՝ Անիում, իսկ Վահանը մնաց Վասպուրականում: Երկու տարի մնալով՝ նրանք մեր աշխարհը լցրին նզովքներով, մինչեւ որ երկնային ակնարկումով երկուսն էլ մի օրում վերացան: Վահանը թաղվեց այնտեղ՝ Զորովանքի եկեղեցու բակում, տեղում եղած կաթողիկոսների [շիրիմների] կողքին: Իսկ հայոց կաթողիկոսական աթոռին հայրապետ նստեցրին արժանաժառանգ Տեր Խաչիկին(19), որը Անանիայի հարազատ արյունակիցն էր:

### Ծանոթագրություն

1. Վահանավանքը գտնվում է այժմյան Կապան քաղաքից մոտ 6-7 կիլոմետր հյուսիս-արեւմուտք, Շհարջիկ գյուղի դիմաց: Երկար ժամանակ հիմնական մասով թաղված էր հողի տակ: Սկսած 1966 թվականից, պատմական գիտ. դոկտոր Գ.Գրիգորյանի ղեկավարությամբ կատարված պեղումներով վանքն ազատվեց հողի շերտերից, հայտնվեցին մի շարք շինություններ, դամբարաններ, տապանաքարեր, որոնց վրա կան արժեքավոր վիմական արձանագրություններ (մեր այցելությունը՝ 1981թ. հունիսի 24-ին):
2. «Գիրք թղթոց»-ը դավանաբանական թղթերի ժողովածու է, ընդգրկում է 5-13-րդ դարերի գրություններ, որոնք ուղղված են դավանական շեղումների դեմ պայքարելու եւ եկեղեցու միասնությունը պահպանելու նպատակին: Հմմտ. «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901:
3. Խոսքը Սյունիքի Հովհաննես 7-րդ եպիսկոպոսի մասին է, որը գահակալել է 1006-1058թթ.:
4. Սա Սարգիս 1-ին կաթողիկոսն է, հայտնի Սեւանեցի մականունով: Կրթություն է ստացել Սեւանի վանքում: Եղել է նախ Շողվագա եւ ապա Սեւանի վանքերի վանահայր: Կաթողիկոս է ընտրվել 992թ. եւ ծերության պատճառով հրաժարվել է 1019թ.: Մեռել է 1022թ.: Նրա մասին գրել են Ասողիկը, Ա.Լաստիվերտցին, Մ.Ուռհայեցին, Ս.Անեցին, Կ.Գանձակեցին, Մ.Այրիվանեցին եւ ուրիշներ:
5. Այսինքն՝ Անանիա 1-ին Մոկացին:
6. Հ.Աճառյանը նշել է, թե անորոշ է մնում՝ ով էր այս Գրիգորը, գուժկա՞նը, թե՞ թագավորը (Հայոց անձնանունների բառարան, հ. 1-ին, էջ 502): Մ.Օրմանյանը, ժամանակին անդրադառնալով Օրբելյանի երկի բնագրի այս մասին, գրել է, թե խոսքը վերաբերում է թագավորին, բայց նկատում է, որ նշված տարիներին Վասպուրականում Գրիգոր անունով թագավոր չկար: Դեպքը մտացածին չհամարելու դեպքում պետք է ընդունել, որ թագավորի համար Գրիգոր անունն այդտեղ սխալմամբ է գրված (տե՛ս «Ազգապատում», Կոստանդնուպոլիս, 1912, էջ 1095):
7. Տպագիր բնագրում գուժկանի խոսքում նշված չէ, թե ով էր մեռնողը, որի դին սպասում էր կաթողիկոսին: Ըստ երեւույթին, Արծրունյաց թագավորի մի մերձավորը, հավանաբար կինն էր մեռել, եւ թագավորը Անանիա կաթողիկոսին հրավիրում էր թաղման: Այս մասին տե՛ս նաեւ Մ.Օրմանեան, «Ազգապատում», էջ 1095:
8. Խոտակերացի կամ Քարկոփի վանքը գտնվում է այժմյան Եղեգնաձորի շրջանի Խաչիկ գյուղի մոտ, նրանից դեպի հյուսիս, մոտավորապես 2 կիլոմետր հեռավորության վրա: Այժմ խիստ քայքայված վիճակում է:
9. Սա նույն Վահանավանքն է, որի անունն այս երկում տեղ-տեղ հանդիպում է եւ այլ ձեւով:
10. Այսինքն՝ Վահանավանքում:
11. Ծացարդ գյուղանունը հանդիպում է նաեւ Ծածարա, Ծածարդ, Ցացարդ ձեւերով: Հարկացուցակում ներկայացված է Ծղուկ գավառում՝ 10 միավոր հարկաչափով (գլ. ՀԴ), ուրեմն միջին մեծության գյուղ է եղել: Պահպանվել է միայն գյուղատեղը, որը գտնվում է Տաթեւի վանքից 1 կիլոմետր դեպի արեւմուտք: Տաթեւ գյուղի բնակիչները տեղը մինչեւ այժմ էլ կոչում են Ծացարդն (Գ.Գրիգորյան, նշվ. աշխ. «Պատմա-բանասիրական հանդես», 1966, №4, էջ 235):
Հարժիքն այժմյան Գորիսի տարածքում գտնվող Հարժիս գյուղն է: Հարժիք հին անունը հետո գործածվել է Հարժիս ձեւով (ք-ս), սա էլ ուշ ժամանակներում ժողովրդական ստուգաբանությամբ աղավաղվել ու ստացել է Յայջի ձեւը: Ներկայումս վերականգնված է Հարժիս:
12. Այսինքն՝ 963 թվականին:
13. Արգինայի վանքը գտնվում է Կարսի շրջանում, համանուն փոքրիկ գյուղի մոտ, Ախուրյան գետի ձախ ափին (այժմ մտնում է Թուրքիայի տարածքի մեջ): Ներկայումս ավերակ: Ժամանակին նշանավոր վանք է եղել: Կառուցվել է Տրդատ ճարտարապետի կողմից: Որոշ ժամանակ այստեղ կաթողիկոսներ են նստել: Նախաքրիստոնեական շրջանից տեղում եղել է բերդաքաղաք:
14. Սա Աշոտ 3-րդ (Ողորմած) հայոց թագավորն է: Իշխել է 954-977թթ: Բայց նա Աբաս 1-ին թագավորի որդին էր, որին եւ հաջորդեց: Իր որդին էր Սմբատ 2-րդը:
15. Բնագրում՝ կաւն (կաւնիւք), որ հունարեն է, որ նշանակում է «պատկեր» (այս դեպքում՝ «սրբապատկեր»):
16. Խոսքը Հայաստանի միջնադարյան հռչակավոր մայրաքաղաք Անիի մասին է:
17. Զորո կոչված վանքը գտնվում էր Վասպուրականի նահանգի Տոսպ գավառում, որտեղ մնաց եւ վախճանվեց Վահանը: Կոչվել է նաեւ Սալնապատ:
18. Բնագրում՝ քաւրէշ (քօրէշ): Նշանակում է «իշխանավոր, առաջնորդ, կաթողիկոս» (այստեղ՝ «կաթողիկոս»): Ասորերենից փոխառյալ բառ է, որ Կյուրոս հատուկ անունից հասարակի է անցել:
19. Տեր Խաչիկ կաթողիկոսն է, Անանիայի քրոջորդին: Եղել է Արշարունիքի եպիսկոպոս: Կաթողիկոս է դարձել 973թ., աթոռակալել է մինչեւ 992 թվականը: ■

## «Եվ արդ՝ դուք, Սիսական գավառներդ, ամենայն մտերմությամբ հնազանդ եղեք Սյունյաց աթոռին»

Ստ.Օրբելյան, Սյունիքի պատմություն, գլուխ ԾԸ, էջ 262-264

«Ամենակալ հայր աստծու շնորհիվ, նրա միածին որդու գթությամբ եւ ազատիչ սուրբ հոգու նախախնամությամբ սա իմ՝ աստծու նվաստ ծառա ամենայն հայոց կաթողիկոս Տեր-Սարգսիս հրամանի եւ օրհնության գիրն է, որ նորին ողորմածությամբ գրեցինք որպես շրջաբերական գրություն՝ ուղղված Սյունյաց նախապատիվ ու աստվածամեծար տանը, աստվածապսակ Վասակ թագավորին, աստվածապահ իշխաններ Սեւադային ու Աշոտին, բոլոր ազատ մարդկանց ու հասարակ ժողովրդականներին՝ ըստ սահմանված տասներկու գավազանների: Նախ նրանց օրհնություն ու պահպանություն թող հասնեն սուրբ Գրիգորի աթոռիցս եւ աստվածաներկ ու աստվածագումար այլ սրբերից ու մեզանից: Դրանցով դուք փրկված լինեք բոլոր տեսակի պատահարներից ու անպատեհ դիպվածներից:

Ի գիտություն ձեզ, մեր հոգեւոր որդիներ, որ թեեւ մեզանից առաջ եղած Տեր-Թեոդորոս եւ Տեր Անանիա կաթողիկոսների կողմից ինչ-որ պատճառով խախտված էր ձեր՝ Սյունյաց առաքելադիր աթոռը, եւ շեղված, բաժանված էր այդ գավազանի թեմը, բայց երբ եկավ աստծու ընտրյալ այս Հովհաննեսը, մենք նրան առաջին աթոռակալների նման ձեռնադրեցինք Սյունիքի մետրոպոլիտ ու վերստին հաստատեցինք տասներկու գավազանների նույն թեմը հայրապետի կնիքով, շարադրված երկար խոսքերով ու հրահոսան նզովքներով, որ ոչ ոք չհամարձակվի որեւէ բան պակասեցնել սրանց սահմանված թեմից եւ կամ նվաստացնել ու սրանց պատվից ու աստիճանից զրկել: Այդ պատճառով էլ մենք, վախենալով առաքելական հայրերի այդպիսի հրամանից ու պատկառելով Սյունյաց հնամենի աթոռից, վերադարձրինք նրանց թեմի բոլոր սահման[ներ]ը, վերստին հաստատեցինք նրանց պատիվը՝ խաչը, գահավորակը եւ գավազանը: Սրանք են նրանց ենթակա հոտի գավառների սահմանները՝ Սյունիք, Բաղք, Արեւիք, Օրդվատ, Արգուլիք , Վանանդ, Երնջակ, Նախիջեւան, Ջուղա՝ որքան Երասխ գետն է կտրում, Ճահուկ, Վայոց ձոր, Խաչերոխոռով, Գեղարքունիք՝ Կռղաբակով, Երիշատ, Ջաղացաձոր, Փորակն էլ ամբողջովին, որի վրա շատ հակառակություններ էին եղել, բայց հայոց կաթողիկոսները մեծամեծ նզովքներով ամրապնդել էին»:

Առանձնացվում է նաեւ Աղվանքի սահմանը՝ Ռմբածորը, Ծար գավառը, Աղահեճը, որը հատում է Աղվանո գետը մինչեւ Քարավազի կամուրջը, եւ Հաբանդ գավառը, մինչեւ Երնջակի սահմանի Բստիձորը՝ գրավված գողթնեցիների կողմից, նաեւ Վանանդն ու Գողթնը ամբողջովին, որոնք թեպետ եւ եպիսկոպոս ունեին, եւ սահմանափակ տեղերի համար էլ դեռ կար, բայց ենթարկվում էր Սյունիքին:

«Եվ արդ՝ դուք, Սիսական գավառներդ, ամենայն մտերմությամբ հնազանդ եղեք Սյունյաց աթոռին եւ ընդունեցեք մեր կողմից ուղարկված ձեր եպիսկոպոս Տեր-Հովհաննեսին՝ որպես աստծու պատվիրակի ու առաքելական մարդու, եւ ամենայն հպատակությամբ ծառայեցե՛ք դրան, ինչպես աստծուն: Իսկ եթե որեւէ մեկը կամենա հակառակվել այդ աթոռին եւ կամ խանգարման պատճառ դառնա եկեղեցու՝ հայրապետի կողմից սահմանված պատվին, վիճակին ու սեփականություններին, ժառանգի անբավ հրահոսան անեծքներ, որոնք դրվել են առաջին սուրբ հայրապետների եւ կրկնապատիկ դարձվել մեր իսկ կողմից: Իսկ այս հրամանը կատարողները կօրհնվեն ամենակալ աստծուց, սուրբ հայրապետներից, մեզանից ու սուրբ Գրիգորի աթոռից: Ահա այսպես մեր այս հրամանագիրը գրվեց մեր ձեռքով հայոց չորս հարյուր հիսունհինգ թվականին: Ավելի հաստատուն լինելու նպատակով կնքեցինք մեր սեփական մատանիով, ի փառս աստծու, որն օրհնյալ է հավիտենապես. ամե՛ն»: ■

Լուսանկարը՝ Հ. Մելքոնյանի

**Տաթեւի վանական համալիրը**

Սյունյաց տան նախապատիվ աթոռի՝ Տաթեւի վրա, ձեր այս մետրոպոլիտ ընտրված աստվածաշնորհ, բազմերջանիկ սուրբ եպիսկոպոս Տեր-Հովհաննեսի միջոցով, դրան կրկին հանձնեցինք իրենց նախնական պատիվը՝ խաչը, գահավորակը [եւ գավազանը]: Բայց սա չեղավ մեր իսկ պաշտոնական նախաձեռնությամբ, այլ ըստ մեզ մոտ բերված մեծափառ գրությունների եւ վճռագրերի՝ գրված հայոց նախնի հայրապետների ձեռքով, սկսած սուրբ Գրիգոր Լուսավորչից եւ իր որդիներից ու թոռներից: Այդ գրությունները մինչեւ սուրբ Սահակը գրվել էին հունարեն գրերով՝ յուրաքանչյուրը մատանիով դրոշմված եւ կապարե կնիքով կնքված, այնուհետեւ՝ հայերեն գրերով, մինչեւ Անանիան, նրանից հետո էլ [նույն ձեւով] գրված մինչեւ մեզ, բացառությամբ Անանիայի, որ գրել էր Վահան եպիսկոպոսի համար, բայց ոչ մյուսների ձեւով: Ամբողջը հիսունհինգ շրջաբերական գրություն էր՝ յուրաքանչյուրը [համապատասխան]

11100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 9111 (ՀԱՅՈՑ 3360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

# Նորավանքի սուրբ, գերհռչակ, փառավոր ուխտի եւ աշխարհաճանոթ հանդիսարանի շինության ու նախապատիվ գահերեցության սկիզբը եւ պատճառը

Ստ.Օրբելյան, Սյունիքի պատմություն, գլուխ ԿԴ, էջ 287-292

**Նորավանք**

Սրանից շատ ժամանակներ առաջ, վաղ օրեր ու երկար տարիներ ի վեր այն նեղլիկ ձորակում մի հարմար տեղում կառուցված էր մի եկեղեցի՝ կրաշաղախ քարերով՝ սուրբ Կարապետի անվամբ, հույժ սքանչելակերտ, հայտնապես ահազդու՝ մերձակա շրջակայքի նկատմամբ: Նրա մոտ բխում էր քաղցրահամ մի աղբյուր: Ամբողջ ձորը զարդարված էր այգիներով ու մրգաբեր թանձրախիտ ծառերով: Նույն ձորում, խիտ քարակույտերի մեջ կար նաեւ մի այլ եկեղեցի՝ կառուցված Փոկաս սուրբ հայրապետի անվամբ: Եվ եկեղեցու մեջ, բեմի տակից մի քիչ ջուր էր բխում, հետն էլ բուժիչ ձեթ էր դուրս գալիս, որի մասին շատ հին ավանդություններից իմացանք, թե բերվել էր սուրբ հայրապետ Փոկասի՝ այնտեղ թաղված նշխարների մոտից: Նրա անվամբ էլ տեղը Փոկաս կոչվեց: Դա զարմանալի հրաշքներ էր կատարում. ամեն տեսակի ցավերը, որոնց բուժումը մարդկանց կողմից անհնարին էր, ինչպես գողությունն ու բորոտությունը, երկար ժամանակվա նեխված ու ապականված վերքերը, բուժման հույսով այնտեղ հասցվելիս, այն ջրով լվացվելիս ու ձեթով օծվելիս բուժվում էին, իսկ դրանց մահացու լինելու դեպքում [հիվանդներն] անմիջապես վախճանվում էին: Այս պատճառով էլ այդ տեղի համբավը խիստ հռչակված էր ամբողջ աշխարհում:

Ապա երբ եկավ նեղ ժամանակը, երբ ամբողջ երկրիս ավեր հասավ, վերացավ թագավորությունը, սպանվեց Սենեքերիմ թագավորը, բնաջնջվեց Բաղքի իշխանությունը, խափանվելով լռեցին բոլոր գործող վանքերը հինգ հարյուր հիսունչորս թվականին, Հովհաննես անունով մի եպիսկոպոս կար՝ լցված ամեն տեսակի առաքինություններով, ամբողջովին տոգորված Քրիստոսով, ազնվական տոհմից, որդին Բաղաց մեծափառ իշխան Հասանի, որն իր ձեռքի տակ ուներ այն թագավորության բոլոր ազատներին եւ մեծ Համտունի որդին էր: Այս Հովհաննեսը, իր աշխարհի ավերումից հետո այս ու այնտեղ շատ դեգերելով, գալիս է Վայոց ձոր գավառը եւ կամենում է հաստատվել Նորավանքի խորաձոր անապատում, Հրասեկաբերդի անառիկ դղյակի մերձակայքում, սուրբ Կարապետի՝ հիանալի զորություն ունեցող եւ մեծասքանչ եկեղեցում: Գնում, ներկայանում է Պարսկաստանի մեծ արքա Մահմուդ սուլթանին, ծանոթանում է նրա հետ եւ այն տեղի համար նրանից ֆարման ու մանշուր է վերցնում: Համարձակորեն հաստատվում է այնտեղ՝ հավաքելով կրոնավոր ու ճգնակյաց մարդկանց եւ հիացնում է այս վայրերի բոլոր աշխարհական մարդկանց. ամբողջ վայրը շրջապատով սահմանափակում է՝ կանգնեցնելով տերունական նշան, որ այնտեղ չանցնեն կանայք ու լկտի [տղա] մարդիկ: Եվ եկեղեցու համար կալվածք է վերցնում հողեր ու դաշտեր սահմանակից գանձակեցիներից եւ տխարբեցիներից:

Այս Հովհաննեսը, նեղվելով Հրասեկի անհիծյալ ու պիղծ բերդապահից, որ Խորասանի խազրիկ էր եւ ձգտում էր սպանել սուրբ եպիսկոպոսին ու ավերել այդ սուրբ ուխտի կրոնավորանոց տունը, իրեն պարսիկ է ձեւացնում, մանավանդ որ հմուտ էր նրանց լեզվի մեջ, փախչում-գնում է Սպահան քաղաքը, սուլթանի մոտ: Սուլթանը միանգամ մի որդի ուներ, որը հիվանդացել էր անտանելի հիվանդությամբ ու մահամերձ էր, բժիշկների բոլոր միջոցառումներն ապարդյուն էին անցել: Մանկան ծնողներն ու սուլթանի հայրը մեծ սգի եւ տրտմության մեջ էին: Այնուհետեւ սուլթանի մայրը երազում տեսնում է, որ իրենց քաղաքը մտած այն օտար մարդը եպիսկոպոս է՝ Հովհաննես անունով, որը կբուժի մանկանը: Դրա համար էլ նրան որոնում են. գտնում, բերում են մեծ սուլթանի մոտ: Իսկ սուլթանը, լսելով նրա մասին, հիշեց ու ճանաչեց: Նրան ընդառաջ գնալով՝ երկրպագեց ու խնդրեց եթե հնարավոր է՝ բուժել մանկան հիվանդությունը: Եվ սուրբ եպիսկոպոսը, մեծահույս հավատով մտնելով կիսամեռ մանկան մոտ ու առաքելական զորությամբ դուրս վանելով ցավը, [գրեթե] մեռած մարմնին հրաման տվեց անկողնուց ոտքի կանգնել: Այդ պատճառով սուլթանը մեծ զարմանքով ու հիացմունքով եպիսկոպոսից հարցրեց գալու պատճառը: Եվ նա պատմեց Հրասեկաբերդի ամիրայի ու Անապատ բերդի մյուս խուլամի դառն աղետների մասին:

Սուլթանը դրանից խիստ զայրանում է ու երախտահատույց է լինում Հովհաննեսին: Եվ հրովարտակով Հրասեկաբերդը հանձնում է եպիսկոպոսի իրավունքին, նրա հետ էլ ուղարկում է հավատարիմ մարդկանց՝ սպանելու բերդապահին իր ընտանիքով եւ տեղը տալու եպիսկոպոսին: Սուլթանի մայրը դրա հետ միասին նույն Տեր-Հովհաննեսին շնորհում է Անապատ բերդը՝ տասներկու ագարակներով եւ իսկական սիգելով ու հաստատուն մանշուրով որպես կալվածք է տալիս Նորավանքի սուրբ եկեղեցուն: Դրանց արքունական վավերագրերը հենց մենք կարդացինք ու ստուգեցինք: Ըստ թուրքական օրենքի՝ անհուն երդումով հաստատված էր գրվածը, այնտեղ սահմանված էին բազում նալլաքներ ու ապիզարներ:

Եպիսկոպոսն այնուհետեւ մեծ խնդությամբ վերադառնում է իր տեղը՝ զինված ջոկատով հանդերձ: Եվ բռնելով Հրասեկաբերդի ամիրային իր ընտանիքի հետ՝ ժայռից գլորում, սպանում են, տեղն էլ քարուքանդ անում: Իսկ Անապատի բերդի մյուս ամիրային հալածելով՝ բերդը ագարակների հետ դարձնում է եկեղեցու սեփականություն:

Բայց հետո Հրասեկաբերդը [վերա] շինվեց, եւ այնտեղ պարսիկներ բնակվեցին, որը եւ Իվանե աթաբեկի օրոք նույնի հրամանով ուժով վերստին վերցվեց արփայեցի Ախթամարի ու խաչենեցի այն Վասակ իշխանի ձեռքով, որոնցից վերջինը բարեպաշտ եւ մեծատոհմիկ իշխան Պռոշի հայրն էր: Իսկ Անապատը մնաց սուրբ եկեղեցու իրավունքին՝ մինչեւ այսօր: Եպիսկոպոսը լի էր բոլոր առաքինություններով, ապրում էր մեծ ճգնություններով: Շատ հրաշագործություններ էր ցույց տալիս այն աստիճան, որ գորտերին հրամայում էր լռել, եւ լռեցին մինչեւ այժմ: Մի անգամ Տխարբ գյուղից մի կին ու մի ծծկեր մանուկ ընկնում են վանքի դիմացի քարաժայռից, սուրբը տեսնելով՝ դիմացից խաչակնքում է, եւ նրանք անվնաս են մնում ու ողջ եւ առողջ վերադառնում իրենց տունը ու ասում. «Տեր-Հովհաննեսը կանգնել էր ժայռի տակ եւ երկու ձեռքով բռնելով՝ մեզ փրկեց»:

Այսպես ապրելով բազում տարիներ՝ [եպիսկոպոսը] վախճանվում է հայոց վեց հարյուր վաթսուներեք թվականին, թաղվում է իր աղոթարանում, երկու վեմերի միջեւ, նույն վանքում: Նրա գերեզմանից մեծամեծ զորություններ են հանդես գալիս, ոչնչացնում է մուկն ու թրթուրը, բուժում մարդուն, անասունին ու հանդերին հասած վնասները:

Այնուհետեւ, երբ Ելտկուզն առավ սուլթանի մորը ու տիրեց արքայական գահին, նրանից հետո եկավ շնորհազարդ Ստեփանը, որը եւ աթաբեկից Ֆախր էլ Մսեհ կոչվեց, ու հաստատվեց Նորավանքի սուրբ ուխտում, որովհետեւ հին աթոռն ավերված, խաթարված էր, իսկ հայր Տեր-Գրիգորն էլ թաղված էր այստեղ: Եվ այս վանքը հաստատելով եպիսկոպոսական աթոռի տուն՝ մեծ աթաբեկից հրամանագիր ու սիգել է վերցնում այս վիճակի համար, որպեսզի այստեղ հաջորդեն եկեղեցու ժառանգորդները: Նմանապես շրջաբերական թուղթ է խնդրում հայոց մեծ կաթողիկոս Տեր-Գրիգորից, որպեսզի այս գավառները լինեն սեփական վիճակ Նորավանքի սուրբ ուխտին:

Այնուհետեւ գնալով Ելտկուզ աթաբեկի մոտ՝ ցույց է տալիս սուլթանի գրությունը, նրանից եւս հաստատուն մանշուր է վերցնում Նորավանքի բոլոր սեփականությունների համար: Պահանջում է նաեւ Ագարակի ձոր գյուղը, որը եւս [աթաբեկը] բարյացակամորեն, հաստատուն ու իսկական մանշուրով ընծայեց սուրբ եկեղեցուն եւ այն ամենը, ինչ պատկանում էր վանքին՝ հող, ջուր, այգի, գյուղ ու ագարակ եւ հենց Անապատի բերդն էլ, ազատեց աշխարհիկ բոլոր հարկերից: Այնուհետեւ [եպիսկոպոսը], ապրելով շատ տարիներ, մեռավ այնտեղ եւ թաղվեց իր հոր մոտ վեց հարյուր վաթսունհինգ թվականին: Նրան հաջորդեց Տեր-Սարգիսը, որը նահատակվեց Երուսաղեմում: Սա եպիսկոպոս դարձավ [Տեր-Ստեփանոսի] կենդանության ժամանակ եւ բնակվում էր Նորավանքում: Իսկ Տեր-Ստեփանոսը գրավ էր դրել աստվածամուխ սուրբ նշանը՝ Տեր-Հովհաննեսի մեծ խաչը, թիթեղնակապն ու կամարակապը: Թիթեղնակապը երեսի վրա ուներ ոսկի թիթեղներ, իսկ կամարակապը ակնածու կամար՝ թեւից թեւ: [Այդ բոլորը գտնվում էին] Շահապոնքի Ածապ վանքի Պետրոս անունով մի եպիսկոպոսի մոտ: Այս կողմերի կուսակալ Վասակը՝ Պռոշ իշխանի հայրը, այդ մասին իմանալով, բռնությամբ վերցնում է այս երեք աստվածային սուրբ նշանները եւ մեծ խաչը տանում, ընծայում է Իվանե աթաբեկին, իսկ մյուս երկուսը՝ թիթեղնակապն ու կամարակապը, տանում դնում է Կեչառույքի իր վանքում: Ապա վեց հարյուր վաթսունհինգ թվականին, երբ Իվանե աթաբեկը պաշարել էր Չարեք կոչված բերդը, Տեր-Սարգիսը իր քեռի Տեր-Ստեփանոսի առաջարկությամբ ու գրությամբ գնաց նրա մոտ՝ աստվածընկալ սուրբ խաչի պահանջով: Աթաբեկն ուներ մի գործակալ՝ իր ամբողջ իշխանության վրա [նշանակված] կառավարիչ, սենեկապանների ավագ. դա Բուպաք կոչված մեծ ու բարեպաշտ իշխանն էր, որը եւ Ելիկումի որդի Լիպարիտի աներն էր, իսկ Լիպարիտը շատ սիրված էր Իվանեի աչքում: Խաչն էլ պահված էր Պղնձահանքում: Նրանք եպիսկոպոսին ներկայացնում են աթաբեկին ու հանձնում գրությունը եւ իրենք էլ, մեծապես հոգ տանելով, ջանում են ազատել գերված խաչը: Շատ գանձեր ծախսեցին մեծամեծների ու ներքին խորհրդականների միջոցով: Բարեպաշտ Լիպարիտը հինգ հարյուր դահեկանի չափ ընծայեց: Աթաբեկի պահանջով էլ հինգ հարյուր դահեկան ընտիր կարմիր ոսկի տվեց ու այս ձեւով հատուցելով՝ նրա սիրտը շահեց՝ վերադարձնելու [խաչը]: Ապա [աթաբեկը] հրամայեց կանչել եպիսկոպոսին: Նրա առաջ պայման դրեց՝ ասելով. «Եթե մեկը կամենա սուրբ խաչի վերադարձը, [ապա] վաղը այս բերդը պիտի հանձնի իմ ձեռքը, եւ ես խաչը կհանձնեմ քեզ, եթե ոչ՝ ձեռնունայն պիտի վերադառնաս»:

Իսկ երբ լույսը բացվում է, սուրբ խաչի զորությամբ բերդեցիները ինքնահոժար կամքով բերում են բերդի բանալին, դնում աթաբեկի առաջ: Նրա հետ բերում են նաեւ բերդերի ուրիշ երկու բանալիներ ու դնում նրա առաջ: Շատ ուրախանալով ու զարմանալով այդ հրաշքի վրա՝ [աթաբեկը] հրամայում է իր դիվանի՝ Օնոֆրե անունով ավագ քարտուղարին գնալ Տեր-Սարգսի հետ եւ Պղնձահանքի վանքում գտնվող խաչը հանձնել նրան, որը եւ անմիջապես կատարվում է: Տեր-Սարգիսը գնալով ուրախությամբ ստանում է խաչը եւ շտապ կերպով անցնում, գալիս-հասնում է Նորավանքի ուխտը ու այնտեղ է հաստատում սուրբ նշանը: Այնտեղ էլ մեռած է գտնում իր քեռի Տեր-Ստեփանոսին: Բայց, ինչպես [վերն] ասացինք, գերված խաչի համար հազար դահեկան կարմիր ոսկի [փրկա] գին տրվեց Լիպարիտի կողմից:

■

**1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ**

**ՎԱՀԱՆԱՎԱՆՔՅԱՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ**

# Վահան Սյունեցու հնազանդության խոսքունագիրը

Հանուն Աստծո, այս ձեռագիրն իմ՝ Ձվանշեր իշխանաց իշխանի որդի Վահանինն է(1)՝ ուղղված աստվածապատիվ եւ հոգեւոր տեր Անանիա հայոց կաթողիկոսին: Որովհետեւ քմահաճ չգտնվեցին եւ բարի սրտով, քաղցր աչքով նայեցին ինձ՝ արժանի համարելով իրենց ծառայել, խաչակիրը լինել սուրբ կարգիս եւ Սյունյաց տան տասներկու գավառների վերակացության, որին արժան չեմ իմ խակ ու տհաս տարիքի պատճառով, եւ սա իմ կամքով չէ:

Արդ, ի դիմաց այդ բարեխոհ մտածումներիդ ես՝ հասարակ արարածս ի՞նչ փոխհատուցեմ. միայն այն, որ անձն իմ ծառա եւ հոգին իմ սպասավոր կլինի սուրբ Լուսավորչի Աթոռիդ: Եվ այս եմ ասում, թե ես եւ ինձանից հետո եկողները Ձեզանից [ոչ] մեծարանքի, ոչ խաչի, ոչ գավազանի, ոչ դիրքի եւ ոչ էլ այլ բարձր պաշտոնների ակնկալություն [չունեն], այլ միայն այն է իմ փառքն ու մեծությունն, ինչ կցանկանա Ձեր աստվածային կամքը տալ: Եվ ինչպես իմ՝ ձեռնադրություն ստանալու տերը եւ տվիչն եք, նույնպես եւ՝ պատվի, որին արժանի համարեցիք: Եվ Սյունյաց տան մեջ եղած այս հակասությունն ապստամբությամբ հրահրեց Հակոբը(2) Աղվանից կաթողիկոսի հետ եւ օտարացավ Սուրբ Լուսավորչի Աթոռիդ եւ դուրս եկավ քո հայրական գրկից, որի համար պատասխան է տալու Աստծուն:

Արդ, ինձ եւ ինձանից հետո այս աթոռին եկողների համար, այս հաստատումը թող կանոն եւ կտակ լինի, թե ես՝ Ձվանշեր իշխանաց իշխանի որդի, Սյունյաց եպիսկոպոս Վահանս եւ ինձանից հետո այս աթոռին եկող ամեն ոք, ով մտմտա այսպիսի ապստամբություն անել, կամ Աղվանքի կաթողիկոսից յուղ բերի մեզ համար, կամ նրա նման գոռոզությամբ ապստամբի՝ մարմնական իշխանության կամ բռնությամբ կառավարելու Աստծո եկեղեցին, կա՛մ սուրբ Լուսավորչի հավատի մեջ թերություն տեսնելու եւ լուծարելու առաքելական կանոնները, եւ ապստամբեցնել նրա արյամբ գնված ժողովրդին, որ Ձեր կամքով եւ հոժարությամբ ինձ վստահեցիք, եւ ովքեր ինձանից հետո գան, կշնորհվի նրանց եւս, եւ եթե ամեն տարի մկրտության յուղը չվերցնի, ինչպես սուրբ կանոնների կարգադրությունն է, եւ խղճմտանքով, ամենայն հավատարմությամբ արժանիորեն չծառայի Լուսավորչի սուրբ Աթոռին եւ զատվի բնից, որ սուրբ Լուսավորչի մասին վկայում են կանոններն ու (Աստվածաշունչ) գրքերը, եւ զորավորների կողմն աչառությամբ [հակվելով], կամ երեսպաշտության, կամ որեւէ աշխարհային հաշվենկատության պատճառով թիկունք դարձնի ճշմարիտ առաջնորդից եւ հակառակորդին հնազանդվի՝ նզովյալ լինի թե՛ կյանքում եւ թե՛ մահից հետո, եւ աստվածավաճառ Հուդայի, Գէեզի բորոտի(3), Սիմոն կախարդի(4) եւ աստվածասպան հրեաների բաժնեկիցը լինի: Եվ թող նրա վրա գա ցավագին անեծք, որ տեր Եղիա հայոց կաթողիկոսի օրոք հաստատեցին հայոց եւ Աղվանից սուրբ հայրերը Լուսավորչի սուրբ Աթոռից ապստամբելու պատճառով: Թող նրա վրա գա սուրբ հայրապետների՝ տեր Հովհաննեսի(5), տեր Թեոդորոսի(6), տեր Անանիայի եւ այլ սուրբ եպիսկոպոսների անեծքը, որ կարդացին Հակոբի վրա, որ ինձանից առաջ էր, եւ ապստամբեց սուրբ Աթոռի հայրական գրկից եւ մերժվեց սուրբերի օրհնությունից, եւ թող զրկվի սուրբ եւ աստվածատուր կարգերից եւ թող զրկվի Սուրբ Հոգուց:

Եվ եթե իշխաններից, կամ ազատներից, կամ մերձավորներից, եղբայրներից եւ ազգականներից եւ կամ օտարներից մեկն օգնի [նրան]՝ թող որ լինի եպիսկոպոս, կամ քահանա, կամ սարկավագ, կամ եկեղեցու ուխտից՝ Աստված նրան թող չողորմի ո՛չ կյանքում, ո՛չ մահից հետո, եւ թող անհավատներին բաժնեկից լինի:

Գրվեց աստվածապատիվ եւ հոգեւոր տեր Անանիայի կաթողիկոսության եւ հայրապետության եւ Աբասի որդու՝ Աշոտի(7) թագավորության օրոք, երբ Սյունիքի իշխանաց իշխանը տեր Վասակն էր եւ Բաղքի իշխանաց իշխանը տեր Ձվանշերն էր, եւ տեղի եպիսկոպոսներն էին տեր Դավիթ Խոռխոռունյաց եպիսկոպոսը եւ տեր Սահակ Գնդունյաց եպիսկոպոսը եւ հայոց թվականը Նէ (958)-ն էր:

Ըստ այն օրինակի եւ իշխաններից առնված ստորագրության՝ թող նա ապստամբության ժամանակ այլեւս սատար չլինի նրանց, իսկ եթե լինի՝ թող [հիշի], որ այս ստորագրությունն ուներ:

**Ծանոթագրություն**

1. Այս Վահանը Վահանավանքի համանուն հիմնադրի եղբոր՝ Ձվանշերի որդին է եւ Ձագիկի թոռը, որ այդ վանքի առաջնորդն ու Սյունիքի եպիսկոպոսը լինելուց հետո 968-ին ձեռնադրվում է հայոց կաթողիկոս (աթոռակալել է մինչեւ 969թ.): Նրա ջանքերով վերակառուցվել է Վահանավանքի գլխավոր՝ Ս. Գրիգոր եկեղեցին, կառուցվել գավիթը, սյունասրահը, սեղանատունը, Տիգրանասարից կավե փողրակներով խմելու ջուր է հասցվել վանք, ընդարձակվել Տաթեւի եւ մյուս վանքերի կալվածքները: Մահկանացուն կնքել է 972թ., Վասպուրականի Տոսպ գավառի Ձորավանք գյուղում:
2. Տե՛ս ծնթ. 3:
3. Տե՛ս Դ Թագավորության Ե 20-27:
4. Սիմոն մոգը կամ կախարդը գործել է առաքյալների ժամանակ: Մեծ համարում էր վայելում հատկապես Սամարիայի բնակիչների մեջ՝ շնորհիվ այն ժամանակների գիտության տարբեր բնագավառների վերաբերյալ իր կեղծ գիտելիքների: Առաքյալների վայելած հեղինակությանը հավասարվելու ու եկեղեցու մեջ թափանցելու նպատակով նա փորձեց արծաթով գնել հոգեւոր պարգեւները, որի պատճառով արժանացավ Պետրոս առաքյալի խստագույն հանդիմանությանը. տե՛ս Գործք Առաքելոց, Ը 9-24: Նրա անվան հետ է կապված սիմոնականությունը՝ հոգեւոր ընծաների ու պաշտոնի առքուվաճառքը:
5. Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոս Հայոց՝ 898-929թթ., հեղինակ է Հայոց պատմության:
6. Թեոդորոս Ռշտունի կաթողիկոս Հայոց՝ 930-941թթ.:
7. Տե՛ս ծնթ. 5:

**Աշխարհաբարի վերածեց եւ ծանոթագրեց Հակոբ Քյոսեյանը՝ «Սյունյաց երկիր» թերթի խմբագրության պատվերով**

# Սյունիքի իշխանաց իշխան Վասակի հնազանդության խոսքունագիրը

Հանուն Աստծո այս ձեռագիրը իմ՝ իշխանաց իշխան Սմբատի որդու, Սյունաց իշխանաց իշխան Վասակի(1) [ձեռագիրն է՝ ուղղված] Ձեզ՝ աստվածապատիվ եւ հոգեւոր տեր Անանիա Հայոց կաթողիկոսիդ (2), թե այս օրերից առաջ, երբ Հայոց թվականը Նէ (952թ.)-ն էր, երբ դուք սուրբ նշանով մեզ այցելեցիք, եկաք եւ մեր հանցանքները անտեսեցիք. [հանցանքներ], որոնք վերաբերում են սուրբ Լուսավորչի Աթոռից մեր ապստամբվելուն, Աղվանք վերադառնալու եւ այնտեղից թերակատար եւ ոչ կանոնական օտար յուղը մեր տուն եւ սուրբ Լուսավորչի սեփական վիճակ բերելուն: Եվ մենք նրան լսելով եւ հանդուրժելով՝ մեղք գործեցինք եւ Աստծուն եւ Աստծու փոխարինողիդ հանդեպ: Քանզի նրա համար ապաստան եղանք եւ [Ձեր] ձեռքը չհանձնեցինք, որպեսզի համաձայն Աստծո հրամանի եւ սուրբ կանոններով խրատեիք ձեր ծառային, ինչպես հրաման ունեք Աստծուց՝ արդարացնել արդարին եւ դատել անիրավին, ով խիստ դատապարտվեց, եւ մեզ իր կորստյանը հաղորդակից դարձրեց եւ անեծքի տակ դրեց մեր Սիսական տունն իր տասներկու գավառներով:

Արդ, եթե մեր տան եպիսկոպոսներից մեկը թե՛ մեր օրերում եւ թե՛ մեզանից հետո ուրիշն այդպիսի չարություն ընտրի, ինչպես Հակոբն(3) ընտրեց, եւ եթե իշխաններից եւ տերերից մեկը նրան չհանձնի հայրապետի ձեռքը, ով իր ժամանակին նստած լինի Սուրբ Գրիգորի Աթոռին, կամ նրան ուղղության չբերի եւ նրան մեր միջից չվերացնի՝ թող նզովյալ լինի ամենասուրբ Երրորդության կողմից եւ աստվածասպանների բաժին դառնա եւ պատասխան թող մնա Ս. Հոգուն հայհոյելու համար, որ առանց թողության է, եւ Աստված այնպիսիին ջնջելու է կյանքի գրքից: Եվ եթե մարտիրոսական արյուն հեղի՝ Աստված թող նրան ընդունի համաձայն Հուդայի խեղդամահության, ով այս Սիսական տան մեջ ապստամբ եպիսկոպոսին օգնական լինի ով էլ որ լինի, եղիցի, եղիցի:

Այս ձեռագիր պատճենը նրանից ընդունեցինք կանոնական հաստատությամբ ի սեր գալիք ժամանակների, որպեսզի կցորդ չլինեն ապստամբներին (վիճակված) կորստին, այլ արժանավոր լինեն հնազանդվողներին (պատշաճող) օրհնություններին:

Եվ մենք դեմ լինելով նրան, շտապեցինք գնալ հասնել Աղվանից աշխարհ՝ շինելու մի վայր, որ (կպատժեր) ապստամբ Գագկին եւ նրանից առաջ եղածներին;

Իսկ հետո գուժկան եկավ Սենեքերիմ մեծ իշխանից՝ արաբների՝ բռնությամբ նրա աշխարհն հասնելու, գերելու, ավերելու եւ սրի քաշելու մասին: Եվ մեզ տեղեկացնում է աղետալի դեպքերի մասին, որպեսզի այլեւս չմտնենք դառնալի ամպրոպի մեջ:

Իսկ հետո մեկնելով եկանք մեր աշխարհը, Մեծ Հայքի Աշոտ բարեպաշտ արքայի մոտ, որ մեզ տեսնելով ուրախացավ մեծ ուրախությամբ: Մանավանդ հոգեւոր գործի շինության վերաբերյալ մեր պատմածը լսելով՝ բերկրանքով փառաբանում էր Աստծուն: Եվ Աստծո հաջողությամբ, այս հզորի շնորհներով ու սրբոց աղոթքներով՝ չկամենալով անտեսել մեր չարչարանքը, Աղվանքի հզորների սրտում ծագեցրեց (լույսը)՝ թագավորի մեջ, որ կոչվում էր Իշխանակ, ով որդին էր տեր Ատրներսեհի եւ Աղվանից իշխանաց իշխան Սենեքերիմի եւ նրա ամուսնու ու նրա քրոջ եւ տեր Սենեքերիմի՝ Գրիգոր Խաչյան իշխանի որդու եւ Գորոզվաց իշխան տեր Վաչագանի եւ Արեւելից իշխան տեր Գուրգենի, եւ այլ բազում մեծամեծների, նաեւ խուռներամ մարդկանց: Եվ միաբանելով Ս. Հոգու շնորհներին նույն թվականի նույն առաջին ամսվա երկրորդ [կեսին], եւ ընտրելով Խոտակերաց վանական Դավիթ(4) անունով առաքելաջան մի հոգեւոր մարդու՝ մեծարված ծերունազարդ իմաստությամբ, առաքում են Շիրակ գավառ, որ հայոց տեր Սմբատ արքայի նստավայրն էր՝ կոչված Շիրակավան: Եվ լսելով Աստծո գործի մասին՝ ամեն աստվածասեր հոգի փառավորում էր էությունների ստեղծող Աստծուն:

Եվ հայոց Աշոտ արքան(5), նրա եղբայրները՝ Մուշեղը եւ Ատրներսեհը լսելով շատ ուրախացան եւ մեծապարգեւ շքեղությամբ թույլ տվեցին մեր նվաստ անձին նրան ձեռնադրել Աղվանքի կաթողիկոս:

Եվ մեծամեծ աղերսանքով, առատաձեռն տվչությամբ ու մեծապատիվ փառքով նրան տվեցինք հույժ ծանրագին ոսկե Խաչ՝ ընդելուզված մարգարիտներով, զարդարված պատվական ակնեղենով: Եվ խաղաղությամբ ուղարկեցինք իր աշխարհը՝ մեծապարգեւ ավետիսի լուրը տալով հոգեծին Լուսավորչի աստվածային գիրկը փափագողներին: Եվ ավարտելով կնքվեց մեր աշխատությունը եւ բազմամյա տառապանքի արդյունքը Հայոց Նէ (958) շրջանում Աստծո կամքով եւ սրբերի աղոթքներով: Եվ գոհացում գտավ մեր կարոտագին փափագը:

Եվ արդ, ես շնորհ ունեմ նրանով, որ զորացրեց ինձ՝ իմ Տեր Հիսուս Քրիստոսով, եւ պարծենում եմ Աստծո փառքի հույսով, եւ աղաչում եմ Ձեզ, ո՜վ սրբասնյալ եւ հոգեփարթամ ներանձնավոր տերեր եւ եղբայրներ իմ, որ մեր սուրբ Լուսավորչի աթոռի հաջորդներն եք, այլեւս մի արհամարհեք իմ աշխատանքը, այլ ձեր Հոր՝ Փրկչի նման գոհությամբ ընդունեք այն, [ինչպես] այրու տված երկու լուման(6), դուք

**Շարունակությունը՝ էջ 42**

# Ձվանշեր իշխանի հնազանդության խոսքունագիրը

Հանուն Աստծո սա իմ՝ Ձագիկ իշխանի որդու՝ Ձվանշերի(1) ձեռագիրն է առ աստվածապատիվ եւ հոգեւոր տեր Անանիա հայոց կաթողիկոս, որին հոժար եմ Աստծո եւ սուրբ Խաչի միջնորդությամբ: Որովհետեւ Աստծո մարդասիրությունը քաղցրացրեց աստվածապատիվ եւ հոգեւոր տեր Անանիա հայոց կաթողիկոսիդ կամքն իր ծառայի եւ այլ ծառաների ու նրանց իշխանության տակ գտնվողների եւ ժողովրդի [հանդեպ]: Եվ այսպիսի բարի կամքով քաղցրացած ծառայում ենք սուրբ Աթոռին ուղիղ մտքով, անխարդախ սրտով, ինչպես Աստծուն: Եվ ովքեր հաջորդեն [նրանք եւս մեզ նման] ուղիղ պետք է ծառայեն սուրբ Լուսավորչի Աթոռին:Եվ ովքեր սուրբ Աթոռիդ վրա հաջորդեն Ձեզ՝ աղերսում ենք, իբրեւ կարգ տվողներ եւ այլ ամեն տեսակ մեծարանք ի հատուցումն մեր հնազանդության եւ ծառայության՝ առաջին սուրբ հայրապետներից տրված պատիվը չվերցնել մեր առաջնորդից:

Իսկ եթե մեր եպիսկոպոսներից մեկը, որ հետո մեր զարմից գա եւ առանց հերձվածի, եւ կամ այլ բացորոշ պատճառի, որ վկայում են կանոններն ու [Աստվածաշունչ] գրքերը, ապստամբի սուրբ Լուսավորչից, ինչպես Հակոբն արեց եւ Սյունյաց տունը զրկեց [հայրապետական] կարգից, եւ նա եղավ նախակարապետն ու սկիզբը ապստամբության, որ բոլորովին չէր եղել Սյունյաց տան մեջ մինչեւ Հակոբը, որին սատար եղանք, եւ մեղք գործեցինք Աստծուն եւ Քեզ՝ նրա փոխանորդիդ:

Արդ, եթե մեկը մեր օրերում կամ հետագայում մեր որդիներից մեկը, մեր զարմից, իշխաններից կամ տերերից կամ ազատներից նրան օգնական լինի՝ [տալով] թաքնվելու դարան, եւ չտա հայրապետի ձեռքը, որպեսզի, ըստ կանոնների, արդարությամբ դատի, Աստված նրան թող չողորմա ո՛չ այստեղ եւ ո՛չ էլ Քրիստոսի Ահեղ դատաստանին, եւ սատանայի, աստվածավաճառ Հուդայի, Սիմոն կախարդի հետ մաս ու բաժին ունենա, եւ թող նզովյալ լինի ամենասուրբ Երրորդությունից, բոլոր սրբերից, եւ թող Աստված նրանից պահանջի բոլոր սրբերի արյունը, ով օգնական կլինի ապստամբ եպիսկոպոսին [նրա] անհրավության մեջ:

Այս ձեռագիրը գրվեց Նէ (958) թվականին Բաղաց իշխանի՝ Ձագիկի որդի Ձվանշերի ձեռքով եւ տրվեց Ձեզ՝ աստվածապատիվ եւ հոգեւոր տեր Անանիա հայոց կաթողիկոս, եթե Աստված կամենա:

**Ծանոթագրություն**

1. Սա Ձագիկ Գ-ի որդի Ձվանշեր (Ձիվանշիր) Բ-ն է, որի վերաբերյալ Ստեփանոս Օրբելյանը գրում է, թե երբ Անանիա կաթողիկոսը ,գնաց Կապան քաղաք, նրան ընդառաջ ելնելով բանադրված Ձեվանշեր իշխանը (ով ժամանակին հովանավորել էր կաթողիկոսից ապստամբած Հակոբ Սյունեցի եպիսկոպոսին), զղջմամբ խոստովանեց իր մեղքերը... (ԾԲ):

**Աշխարհաբարի վերածեց եւ ծանոթագրեց Հակոբ Քյոսեյանը՝ «Սյունյաց երկիր» թերթի խմբագրության պատվերով**

1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ
ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## ՎԱՀԱՆԱՎԱՆՔՅԱՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ

# Սյունիքի իշխանաց իշխան Վասակի հնազանդության խոստումնագիրը

Սկիզբը՝ էջ 41

եւս ընդունեք իմ աշխատանքը, եւ ձեր բազմաջան աղոթքների շնորհիվ նպաստ շնորհեք տկարիս եւ չափով բաշխեք ձեզ բաշխողի անչափելի հարստությունը՝ հարատեւելու վաղվա օրվա՝ մշտնջենավոր ապագայի մեջ:

Հայր Աստծուն, Հիսուս Քրիստոսին եւ Սուրբ Հոգուն փառք այժմ եւ հավիտյանս հավիտենից, ամեն:

### Ծանոթագրություն

1. Վասակ իշխանաց իշխան, գահակալել է 958-963թթ.: Այս խոստումնագրով իշխանն իր զանցանքներն է խոստովանում (Հայոց կաթողիկոսից ապստամբած Սյունյաց Հակոբ եպիսկոպոսին (տե՛ս) հովանավորելը) եւ միաժամանակ հայտնում իր հավատարմությունը Հայոց հայրապետին (Օրբելյան, ԾԲ):

2. Անանիա Մոկացի հայոց կաթողիկոս. աթոռակալել է 941-965թթ.: Հայտնի է իր վարչաքաղաքական նախանձախնդիր գործունեությամբ, որ ծավալել է մի կողմից քաղկեդոնականության դեմ եւ մյուս կողմից՝ սաստելու համար Սյունյաց Հակոբ եպիսկոպոսին (տես) եւ Աղվանից Գագիկ կաթողիկոսին՝ նրանց որդեգրած անջատողական գործողությունների համար:

3. Հակոբ Ա եպիսկոպոս Սյունյաց, եղբոր որդին է Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսի (տե՛ս), որի կողմից էլ ձեռնադրվել է այդ պաշտոնում՝ աթոռակալելով 918-ից մինչեւ 958թ.: Սա, օգտվելով կաթողիկոսական Աթոռի հեռավորությունից (Աղթամար) եւ այդ պատճառով՝ վարչական վերահսկողության տկարությունից, փորձում է ինքնիշխան ընթացք որդեգրել Աղվանից Գագիկ կաթողիկոսի հետ, որի պատճառով եւ արժանանում է Անանիա Հայոց կաթողիկոսի բանադրանքին, տե՛ս կաթողիկոսի «Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից...» նամակը. «Արարատ», 1897, էջ 129-144, վերահրատարակված Գ. Տեր-Մկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Բ, աշխտ. Պ. Հակոբյանի, Ս. Էջմիածին, 1998, էջ 92-116:

4. Դավիթ Աղվանից կաթողիկոս (958-965)՝ ձեռնադրված Անանիա Մոկացի կաթողիկոսի կողմից:

5. Սա Աշոտ Գ (Ողորմած) հայոց արքան է (954-977): Որդին է Աբաս Ա թագավորի: Աշոտ Գ-ի որդին էր Սմբատ Բ արքան:

6. Տե՛ս Ավետարան ըստ Ղուկասու, ԻԱ 2-4:

**Աշխարհաբարի վերածեց եւ ծանոթագրեց Հակոբ Քյոսեյանը՝ «Սյունյաց երկիր» թերթի խմբագրության պատվերով**

# Ազգապատում

## Հատված Մաղաքիա Օրմանյանի համանուն աշխատության Ա հատորից

### 768. ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՕԾՈՒՄ

**Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան:**

**Կ. Պոլսի հայոց պատրիարք (1896-1918), աստվածաբան, հայագետ, պատմաբան, բանասեր, հրապարակախոս, ազգային պահպանողական ուղղության հասարակական գործիչ:**

Երբոր Անանիա մեռաւ, Աշոտ թագաւոր իր ազդեցութեան գագաթնակէտն էր եւ ընդհանուր համաձայնութիւն կար տակաւին հայազգի բազմաթիւ թագաւորներու մէջ, ուստի լիագոյն իշխանութեամբ կրցաւ տէր կանգնիլ ընտրողական գործողութեանց: Հրաման ըրաւ որ գումարուի Ժողով եպիսկոպոսաց եւ հարց սրբոց, որք են վանքերու առաջնորդները, Շիրակաւան քաղաքը, որ թագաւորանիստ կը կոչուի տակաւին (ՕՐԲ. Բ. 32), թէպէտ Աշոտի օծուելէն սկսելով Անի եղած էր թագաւորանիստ քաղաք Հայոց (ՈՒՌՅ. 4): Ժողովին ներկայ էր նաեւ Վահան, Ջուանշիր իշխանի որդին եւ Սիւնեաց արքեպիսկոպոս, Անանիայէ ձեռնադրուած (754), իսկ ժողովին նախագահն էր Յովհաննէս Աղուանից կաթողիկոսը (ՈՒՌ. 40): Վահան իշխանական ճոխութեամբ եւ շինարար գործունէութեամբ մեծ համբաւ ստացած էր վեց տարիէ է ի վեր Սիւնեաց աթոռին վրայ, ամենէն ալ վկայուած էր վասն առաւել սրբութեանն եւ իմաստութեանն, ուստի միաձայն ընտրութեամբ ամենայն Ժողովոյն կաթողիկոսական աթոռին յաջորդութեան կոչուեցաւ: Ինչ որ պէտք կը զգանք շեշտել տալ այդ ընտրութեան մէջ, օրինական գործողութեանց շարքն է, որ մեր օրերուն մէջ կատարուած կարգադրութեանց ըստ ամենայնի յարմար կու գայ, եւ կը ցուցնէ թէ հին ժամանակներու մէջ ալ նոյնը գիտցուած ու գործադրուած էին:

Թագաւորն է որ կը կարգադրէ ժողով առնել, եւ հրամայէ ընտրել զմի ոք յեպիսկոպոսաց, եւ ոչ ուրիշ եկեղեցականներէն մէկը: Ամենայն ժողովոյն կողմէ ընտրութիւնը կը կատարուի, ընտրուածին վրայ դնեն ձեռն բազմութիւն եպիսկոպոսացն, եւ օծանեն զնա կաթողիկոս Հայոց (ՕՐԲ. Բ. 32): Եւ որովհետեւ պատմիչը այդ պարագաները իբրեւ նորութիւն մը չի ներկայեր, կը հետեւի թէ ասկէ առաջ ալ միեւնոյն էր կաթողիկոսական ընտրութեանց ձեւը: Ուռհայեցին հրամանաւ Անանիայի եղած կ'ըսէ Վահանի ընտրուիլը որ կրնայ իմացուիլ իբր յանձնարարութիւն մը իր մահէն առաջ եղած: Ասով մէկտեղ եթէ Վահանի համար ասանկ նպաստաւոր վկայութիւն մը ըլլար, զայն լռած չէր ըլլար Օրբելեան: Բայց աստի Ուռհայեցիին գրածը ոյժ մը կ'ունենար, եթէ միայն Անանիան յիշեր. մինչ կը գրէ, հրամանաւ Անանիայի, Յովհաննիսի եւ Աշոտոյ թագաւորացն Հայոց (ՈՒՌ. 40), մինչ Յովհաննէս ու Աշոտ, Գագիկի որդիները, Անանիայի մահուընէ 50 եւ աւելի տարի ետքը թագաւորեցին: Այսչափը շատ իսկ է Վահանի նկատմամբ Ուռհայեցիին գրածներուն կարեւորութիւն չտալու: Վահանի հայրը Ջուանշիր, Սիւնիք նահանգին Բաղք գաւառին իշխանն էր, եւ այս պատճառով Վահան երբեմն Սիւնի է կոչուած, եւ երբեմն ի Բաղաց (ՍԱՄ. 100) կամ Բաղացի: Իր անունը Վահանիկ ալ գրուած կը գտնենք (ԱՍՈ. 168, ԿԻՐ. 49, ՍԱՄ. 101), այլ չենք կրնար վճռակի որոշել թէ փաղաքշական կոչո՞ւմ մըն է, իր իշխանազուն սերունդէն յառաջ եկած, թէ ոչ անարգական նպատակով ըսուած է իր անկումէն ետքը, որովհետեւ կեանքին վերջին պահուն միայն գործածուած է այդ նուազ լուրջ կոչումը:

**Շիրակավան կամ Երազգավորս: Գտնվում էր այժմյան Բաշ-Շարագյալ գյուղի տեղում: Եղել է բերդ, ավան, գյուղաքաղաք, քաղաք: Գտնվում էր Ախուրյան ու Կարս գետերի միացման անկյունում, Ախուրյան գետի աջ ափին:**

### 769. ՎԱՀԱՆ ԱՄԲԱՍՏԱՆՈՒԱԾ

Որչափ փառօք եւ վստա-

## 1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

# ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հուքեամբ աթոռ բարձրացաւ Վահան, այնչափ ալ անակնկալ եղաւ անոր անկումը, եւ կաթողիկոսական աթոռէն վար առնուիլը եպիսկոպոսական ժողովի վճռով: Տարի մը իսկ չէր անցած Վահանին ընտրուբենէն, որ զանազան կողմերէ լուրեր տարածուեցան անոր գաղտնի յարաբերութեանց վրայ Վրաց եւ Յունաց քաղկեդոնիկ եկեղեցիներու հետ, թէ անոնց կողմը միտած է, եւ Հայոց եկեղեցին ալ կ'աշխատի անոնց համաձայնեցնել, եւ դաւանական խնդիրէն զատ ծիսական ձեւերու մէջ ալ համակերպութիւններ ընդունիլ, եւ գլխաւորապէս եկեղեցիներու ներքինը նկարէն պատկերներով լեցնել, յունածէս եկեղեցիներու նման: Ասողիկ պարզապէս կը գրէ. Սա ընդ Քաղկեդոնականս սիրելութիւն եւ հաճութիւն կամեցաւ թղթովք առել (ԱՍՈ. 168), իսկ Վարդան աւելի կարճ կերպով կ'ըսէ. Կարծիս առեալ թէ դաշնադիր է Վրաց (ՎԱՐ. 89), որոնք քաղկեդոնականութեան յարած էին. եւ ճիշդ այդ կէտին վրայ կը մեկնէ Կիրակոս, թէ դաշնադիր եղեւ ընդ Վիրս միաբան դաւանութեամբ (ԿԻՐ. 49): Օրբելեան, որ իբր անձնական պատուոյ խնդիր կը նկատէ իր աթոռին նախորդներէն միոյն գործը, կ'աշխատի որչափ հնար է պաշտպանել ու կը գրէ, թէ կարծիս իմն առեալ ամենեցունց՝ եթէ դաշնադիր է ընդ Յոյնս, եւ կամի սպրտել յեկեղեցի զաղանդ նոցին (ՕՐԲ. Բ. 32): Իսկ Օրբելեան կ'ուզէ կերպով մը թեթեւցնել, Անեցին ամէն կերպով կը ծանրանայ, թէ Վահանը ամբաստանեցին՝ ծանուցեալ հաւաստեաւ զհերձուած կորստեան մտաց նորա (ՍԱՄ. 101): Թէպէտ պատմագիրները համամիտ են Վահանը ամբաստանելու իբրեւ քաղկեդոնիկ, սակայն որոշակի գործի կամ փաստի մը յիշատակութիւն չեն ըներ, այլ ընդհանրապէս կասկածի ձեւը կու տան, թէ շատ մտերիմ յարաբերութիւններ հաստատած էր Քաղկեդոնականներու, եւ գլխաւորապէս Վրացիներու հետ: Իբրեւ կասկածի նշան յառաջ կը բերուին յունական պատկերներու կիրառութեան համար ըրած ջանքերը: Օրբելեան ինքն ալ կը հաստատէ, թէ սկսաւ պատկերս բերել ի Վրաց եւ դնէր ի վերայ սեղանոյն, եւ հրամայէր յամենայն եկեղեցիս զնոյն առնել ըստ Հռոմոց սահմանին, կօնիւք զարդարել եւ առանց կօնի ոչ առնել պատարագ (ՕՐԲ. Բ. 32): Կօները կամ իկոնները՝ որ է պատկերները, ուրիշներն ալ կը յիշեն, թէ ետ բերել պատկերս վասն նորոգման աղանդոյն Քաղկեդոնի (ՍԱՄ. 101): Ուզեցինք բառացի յառաջ բերել պատմագիրներուն ըսածները, որովհետեւ մեր տեսութեամբ ալ կարծես թէ բան մը կը պակսի Վահանի մտադրութիւնը բացորոշ կերպով հաստատելու համար: Պատկերներու ներածումը, եթէ միայն սեղանին վրայի համար էր, չենք կարծեր թէ մինչեւ այն ատեն Հայ եկեղեցւոյ մէջ պատարագի սեղանին վրայ պատկեր գտնուած չըլլայ, կամ թէ այդչափը դատապարտելի արարք մը ըլլայ եւ Հայ եկեղեցւոյ ուղղութեան դէմ, ուստի մեզի ալ տարադէպ չ'երեւիր յունական իկոնոստասի վրայ իմանալ (ՕՐԲ. Բ. 296), որ է պատկերներով զարդարուած միջնորմը՝ մեր վարագոյրին տեղը: Սակայն այդչափն ալ ուղղակի իբր քաղկեդոնական աղանդի նշան չի կրնար նկատուիլ, քանի որ պարզապէս ծիսական կէտ մըն էր: Ուստի պիտի ըսենք թէ իկոնները կամ իկոնաստասը միտք բանալու առիթ եղաւ, եւ այս կերպով մէջտեղ ելաւ քաղկեդոնիկ Վրացիներու հետ զիջողական յարաբերութիւնները՝ կամ դաշնադրութիւնները դաւանական կէտերու մասին: Բայց այդ մերձաւորութիւնը ընդունելով ալ տակաւին շատ հեռու ենք հնազանդ եղեւ եկեղեցւոյն Հռոմայ մեկնութենէն, ինչպէս Կալանոս կ'ուզէ իմանալ (ԿԱԼ-211) վասնզի Հոռոմոց եւ Հռոմայ եկեղեցիներ իրարմէ բաժանուած էին արդէն («667), եւ Հոռոմոց հետեւողութիւնը Հռոմի հնազանդութիւն եղած չէր ըլլար:

### 770.ԺՈՂՈՎՆ ՈՒ ՓԱԽՈՒՍԸ

Այլ թէ ինչպես եւ ինչու կրցաւ Վահան այդ միտքին հետեւիլ, այն ալ մութ կը մնայ: Նա Անանիա Մոկացիի նման խստապահանջ անձէ մը ընդունուած եւ ձեռնադրուած էր Սիւնեաց արքեպիսկոպոսութեան, վեց տարի առանց կասկած տալու պաշտօնը վարած էր, եւ կաթողիկոսական ընտրութեան ատեն եպիսկոպոսներու ժողովական որոշմամբ ըստ ամենայնի վստահելի նկատուած էր: Բայց հազիւ թէ կաթողիկոսութեան կը փոխուի եւ կասկածաւոր կը դառնայ: Սիւնեաց երկրին մէջ գայթիգայթի ընթացքը նոր չէր, ու դէպի Վրացիներն ու Աղուանները համակիր վերաբերումն ալ նախընթացներ ունէր, Արարատի եւ Սիւնեաց թագաւորութեանց մէջ ալ համերաշխութիւնը շատ հաստատուն չէր: Մի գուցէ նորէն քաղաքական անհամաձայնութիւն մը ըլլայ բուն պատճառը. իբր զի Վահան՝ Արարատի մէջ ստացած իր նոր դիրքը անտեսելով՝ եւ Սիւնիներուն կողմը հակելով, առիթ տուած ըլլայ իրեն կասկածներ արթնցնելու, եւ իկոնների խնդիրը եւ Վրաց հետ համակրութիւնը, պատճառ դարձած ըլլան քաղկեդոնականութեան կասկածը բորբոքելու, եւ զայն իբր գահընկեցութեան փաստ գործածելու: Միւս կողմէն ալ կը տեսնենք, որ Վահան չ'ուզեր վրան առնել այդ նպատակը, զոր պիտի չվարաներ յայտնել, եթէ իրօք քաղկեդոնականութեան համոզուած էր, այլ զպարտեալ ասէ զինքն ի նախանձաւոր արանց (ՕՐԲ. Բ. 33), եւ ամէնքը հաւանեցնէ սուտ զնմանէ կարծել զհամբաւ հերձուածոյ (ԿԻՐ. 49), եւ այս կերպով բացէ ի բաց հեռացնել կ'ուզէ քաղկեդոնականութեան կասկածը: Երբոր Վահանի դէմ բողոքները կը շատնան, Աշոտ Ողորմածը հրաման տայր ժողովայ յԱնի քաղաքի, զի քննեսցեն զարժանն (ՕՐԲ. Բ. 32): Իսկ Վահան չի վստահիր քննութեան ելքին, մինչ իր նախորդներէն Յովհաննէս Ովայեցին (641) եւ Գէորգ Գառնեցին (688), նմանօրինակ պարագաներու մէջ չէին խուսափած քննութենէ, եւ արդարացած էին ժողովով: Վահան ընդ հակառակն ոչ եկաց ի ժողովն (ՕՐԲ. Բ. 33), այլ փախստեայ անկանի ի Վասպուրական առ Աբուսահլ թագաւոր (ԱՍՈ. 168): Ինչ ալ ըլլար Վահանի ներքինը, շատ դիւրին էր յայտարարութեամբ մը կասկածը փարատել եւ իր դիրքը ամրացնել, եթէ միայն քաղկեդոնականութեան խնդիր էր եղածը: Անիի ժողովին ներկաներէն կը յիշուին. Խաչիկ Արշարունեաց եպիսկոպոս, Պօղիկարպոս Կամրջաձորոյ վանահայր, Սարգիս Հոռոմոսի վանահայր, Ստեփանոս Սեւանի վանահայր, եւ այլ եպիսկոպոսունք եւ հարք բազումք (ԱՍՈ. 168): Ժողովականք ամբաստանելոյն բացակայութեան, ծանուցեալ հաւաստեաւ զհերձուած կորստական մտաց նորա, որոշեալ զնա հալածական արարին (ՍԱՄ. 101), այսինքն՝ պաշտօնէ մերժեցին եւ գահընկէց հրատարակեցին: Նոյնիսկ Վասպուրականի կողմը փախչիլը, եւ ոչ իր բնակարանը եղող Սիւնիք ապաւինիլը, մեր տեսութեամբ կը տկարեցնէ քաղկեդոնականութեան կասկածը, վասնզի պատմութեան ընթացքն ալ կը ցուցնէ, թէ քաղկեդոնականութեան միտումը զօրաւոր էր Վրաց եւ Աղուանից սահմանակցութեան մէջ, այլ բնաւ չէր թափանցած հարաւային Հայաստանը, ուր նուազ էր Քաղկեդոնականներու ազդեցութիւնը: Արծրունի թագաւորներն ալ երբեք այդ կողմէն կասկածելի չեղան, մանաւանդ թէ ուղղակի դէմ գրող եւ մաքառողներ ալ եղան («743): Մենք աւելի պիտի միտինք կրօնական երեւոյթին ներքեւ քաղաքական խնդիր մը քօղարկուած տեսնել, եւ Աշոտ թագաւորի ու Վահան կաթողիկոսի մէջ հակառակութիւն մը տեղի ունեցած ըսել, որուն երեսէն Վահան ինքզինքը ապահով չի զգար, եւ փախուստով վտանգէն ազատելու միջոցին կը դիմէ:

### 771. ՊԱՇՏՕՆԻ ՏԵՒՈՂՈՒԹԻՒՆ

Վահանի կաթողիկոսութեան տեւողութիւնը, ամ մի ըսուած է յայտնապէս հնագոյն պատմիչներէն (ՕՐԲ. Բ. 32, ՍԱՄ 100, ՎԱՐ. 89, ԿԻՐ. 49), եւ ժամանակագրական պահանջն ալ աւելի երկարել չի ներեր: Ասոնց հակառակ է Ուռհայեցիին զամս 5 ըսելը (ՈՒՌ. 41), որուն մենք չենք կրնար կարեւորութիւն, թէպէտեւ ուրիշ մը կը սիրէ մեկը նախադասել պատմիչներու հանրութեան դէմ (ՉԱՄ. Բ. 841), փափագելով քաղկեդոնիկ կարծուած անձի մը պաշտօնավարութիւնը երկարել: Սակայն Ուռհայեցին արդէն վկայուած է իբր ժամանակագրութեան եւ ճշդութեան անտեղեակ գրող մը (ՀԻՆ. 665): Եթէ ոք Ուռհայեցիին պիտի հետեւի, պէտք է բոլոր ամբաստանութեան եւ գահընկէցութեան պարագաներն ալ ընդունի, վասնզի Ուռհայեցիին գրելովը, Վահանը խաղաղութեամբ վախճանած է իր աթոռին վրայ, եւ յաջորդը Ստեփանոս նստած է հրամանաւ եւ օրինութեամբ տեառն Վահանայ: Նա Վահանի ժամանակակից կը դնէ Յունաց կայսրութեան մէջ Վասիլ Բ, Բագրատունեաց թագաւորութեան մէջ Յովհաննէսը եւ Աշոտ, եւ Արծրունեաց թագաւորութեան մէջ Սենեքերիմ (ՈՒՌ. 42), որով պէտք կ'ըլլար բաւական ետքը ապրող եւ բուն Վահանէն տարբեր ուրիշ Վահան մը փնտռել, եթէ Ուռհայեցիին հետեւիլ ուզէինք: Այդ մասին անբաւական կը դատենք Ասողիկէ քաղած փաստն ալ, որ Անանիայի մահը Հայոց 414 թուին դնելով (ԱՍՈ. 168), եւ Ստեփանոսի երկու տարի տալով, հինգ տարի կը մնայ Վահանի: Սակայն Ասողիկ ոչ մէկուն տեւողութիւնը չի նշանակեր. իսկ տարեթիւերը թուատառերով նշանակուած ատեն շատ սխալներու եւ տարբերութեանց կ'ենթարկուին, ինչպէս նոյնիսկ մէկուն Նխէ կարդացածը (ՉԱՄ. Բ. 1017), ուրիշ տեղ ՆԻԵ կը գտնենք (ՈՒՌ. 40): Ուստի պատմագիրներուն համաձայնութեամբ ամ մի նշանակուած տեւողութիւնը փոփոխելու բնաւ պատճառ մը չենք գտներ, եւ Վահան 968-ին աթոռ բարձրացած, 969-ին աթոռէ զրկուած կ'ըլլայ Անւոյ ժողովին վճռով, եւ Աշոտ թագաւորի հրամանով կամ հաստատութեամբ: Շատ կարճառօտ տեւողութիւնը, եւ այդ միջոցին ալ հակառակութիւններով եւ ամբաստանութիւններով անցած ըլլալը, չներեցին Վահանի որեւէ հայրապետական գործունէութիւն ցոյց տալ, եւ պատմութիւնն ալ բնաւ պարագայ մը չի յիշեր: Օրբելեան միայն կը յիշատակէ թէ իր տեղ Սիւնեաց աթոռին արքեպիսկոպոս ձեռնադրած է զայրի երէց մի Աշոտ անուն՝ վասն առաւել ճգնութեանն եւ խոհեմութեանն, որ 17 տարի պաշտօն վարելէ ետքը հրաժարած է, եւ իր տեղը անցուցած իր իսկ որդին Յովհաննէսը, որ սակայն 6 ու կէս տարիէ կը վախճանի, եւ Աշոտ նորէն աթոռ կը դառնայ, եւ հինգ ու կէս տարի ետքը կը վախճանի ծերութեամբ եւ խաղաղութեամբ (ՕՐԲ. Բ. 94), որ տեղի ունեցած կ'ըլլայ 997-ին, Սարգիս Սեւանցիի օրով:

■

**Աշոտ Գ Ողորմած (թագավորի արձանը Գյումրիում):**

**Հայոց թագավոր 953-ից: Հաջորդել է հորը՝ Սմբատին: Աշոտ Գ-ի թագավորելու տարիներին Հայաստանն ապրում էր տնտեսական եւ մշակութային վերելք, երկրում տիրում էր համեմատաբար խաղաղ իրավիճակ:**

**Արգինա:**

**Պատմական ավան (գյուղաքաղաք) Շիրակ գավառում, Շիրակավան (Երազգավորս) քաղաքի մոտ՝ նրանից դեպի արեւմուտք: Այժմ գտնվում է Թուրքիայի տարածքում:**

1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

**Նարեկավանք: 10-րդ դարի հայկական վանական համալիր էր պատմական Վասպուրական նահանգի Ռշտունյաց գավառում՝ Վանա լճի հարավ արեւելյան ափին, Նարեկ գյուղում: Այստեղ է սովորել Գրիգոր Նարեկացին:**

**Վանքի հիմնադրման շարժառիթ են դարձել Բյուզանդիայի Ռոմանոս կայսրի կրոնական հալածանքները, որոնց պատճառով հայ վանականները Բյուզանդիայից փախել եւ Հայաստանում են ապաստանել ու հիմնել Նարեկավանքը:**

**Վանական համալիրի գլխավոր եկեղեցին Սբ Սանդուխտն է, որը եռախորան, արեւելյան կողմում զույգ ավանդատներով, արմ. կամարակապ խորշերով, արտաքուստ ուղղանկյուն կառույց է՝ ութանիստ թմբուկով եւ բրգաձեւ վեղարով գմբեթով:**

# Հայոց պատմություն

Հատված Հ. Միքայել Չամչյանի համանուն աշխատությունից

### Վահան կաթողիկոսի մասին

Սամվել քահանան(1), Վարդանը(2), Կիրակոսը(3) եւ այլք գրում են, թե Վահան կաթողիկոսը հայրապետական աթոռի վրա մնաց մեկ տարի եւ ուրիշները, թե՝ երկու, սակայն ըստ Ասողիկի հաշվարկի (Գիրք Գ, գլ. 8 եւ 9(4)) պետք է, որ նա առանձին նստած լինի հինգ տարի: Որովհետեւ նա արձանագրում է, թե Վահանը նստեց Հայոց ՆԺԴ (965) թվականին(5) եւ Խաչիկը նստեց ՆԻԱ (972) թվականին(6), ըստ այսմ նրա տարիները յոթն են: Արդ, յոթ տարիներից երկուսը Ստեփանոսին(7) տալով, որ աթոռակալեց այդ ժամանակ Վահանից հետո, մինչեւ Խաչիկի նստելը, համաձայն բոլորի վկայության, Վահանի միայնակ [աթոռակալությանը] մնում է հինգ տարի: Ուստի եւ Մատթեոս Ուռհայեցին պարզիպարզո հինգ է արձանագրում, թեպետեւ տարին, երբ աթոռակալեց, այլ կերպ է կարգորոշում, որ է՝ ՆԻԷ (978) թվականը(8):

Ասողիկը, Սամվելը, Կիրակոսը եւ Հայսմավուրքը (մայիսի 7) նմանապես ասում են, թե Վահանը եւ Ստեփանոսը նույն տարին են մահացել, բայց սա ճշմարիտ չի թվում, քանզի Վահանը համաձայն Լամբրոնացու(9) եւ ըստ հույների հարցումին տված Հայոց պատասխանի (գլ. Թ) (10) տակավին աթոռակալում էր Վասիլ Երկրորդ կայսեր ժամանակներում, ով նստեց Հայոց ՆԻԵ (976) (11) թվականին, իսկ Ստեփանոս կաթողիկոսն, ինչպես հայտնի է հիշյալ պատմիչների խոսքերից, Աղթամար կղզի գնաց եւ այնտեղից՝ Կոտորոց բերդ, ուր եւ շուտով մահացավ: Սրանից հետո կաթողիկոս նստեց Խաչիկը հայոց ՆԻԱ (972) թվականին:

Բայց այս Վահան կաթողիկոսի վերաբերյալ դարձյալ իմանալու է, որ թեպետ տգետներից ոմանք նրան զրպարտել են իբրեւ հավատի մեջ թերացող մեկը(12), նաեւ իբր թե այդ պատճառով հալածված է եղել ոմանց կողմից, սակայն նրա ուղղափառությունը հայտնի է ոչ միայն նրա վարքի պատմությունից, այլեւ հայոց գրվածքներում, նաեւ որովհետեւ Կ. Պոլսում 1700թ. տպված «Նարեկում» ուղղափառ է կոչվում. այնտեղ ասվում է, թե Նարեկացին ապրում էր «Վահան ուղղափառ կաթողիկոսի հայրապետության ժամանակ», թեպետ ոմանց կողմից հետագայում այդ բառը հանվել է(13): Եվ Ուռհայեցին նրան երանելի, շատերից գերադասելի եւ բոլորից լավ է անվանում՝ ասելով, թե՝ «ձեռնադրեցին բոլորից լավ եւ երանելի Վահանին»(14): Նաեւ Լամբրոնացին Ատենաբանության մեջ հիշատակում է իբրեւ սուրբ հայրապետ եւ գովաբանում միաբանության [միտված] նրա ջանքը, որ նա կամենում էր գործադրել(15)»:

**Հ. Միքայել Չամչյան: (1738-1823թթ.): Հայ ականավոր պատմաբան, քերական, լեզվաբան, աստվածաբան եւ մանկավարժ՝ Մխիթարյան միաբանության անդամ է եղել: Ծնվել է Կոստանդնուպոլսում, 23 տարեկանում մեկնել է Վենետիկ, որտեղ մտել է Մխիթարյան միաբանության կազմի մեջ: Շուտով ստացել է վարդապետի կոչում: 1795 թվականին նրան ուղարկել են Կոստանդնուպոլիս, որտեղ ապրել է մինչեւ կյանքի վերջը:**

### Հայոց մեջ սրբապատկերների [հանդեպ եղած] հարգանքի մասին

Նաեւ այժմ իմանալու է եւ այս, որ Սամվելը, Կիրակոսը եւ Վարդանը Վահան կաթողիկոսի՝ իր Աթոռից հրաժարվելը պատմելիս, պատճառների մասին խոսելուց հետո, թե միաբանվեց քաղկեդոնական ազգերին՝ հույներին եւ վրացիներին, ավելացնելով ասում են, թե պատվիրեց նաեւ պատկեր բերել եւ դնել եկեղեցում: Այս պատճառով օտար ազգերից ոմանք համարում են, թե հայերի մեջ չի եղել պատկերահարգություն եւ թե նաեւ նրանց մեջ էր մտել պատկերամարտության մոլորությունը: Բայց իմանալու է, թե այն պատճառը, որ վերագրում են հիշյալ պատմիչները, չի վերաբերում պատկերահարգությանը, այլ՝ մեկ այլ բանի, իբրեւ թե այն պատկերը, որ Վահանը բերեց եւ դրեց եկեղեցու մեջ, ոմանք համարեցին հունական ծեսին միաբանվելու բացորոշ նշան, եւ որովհետեւ ապիկար անձանցից ոմանք անհավանական գտան տվյալ միաբանությունը, այդ պատճառով խռովություն հարուցեցին Վահանի հանդեպ եւ, տարատեսակ մեղադրանքներ բարդելով, նրան հեռացրին Աթոռից:

Եվ դարձյալ թեպետ այսպիսի ապիկար եւ տգետ անձանց մեջ մեծարված էին սրբերի պատկերները Հայաստանում, [պատկերներ], որոնք նկարված էին շատ վաղուց, բայց նրանք, որ նկարված էին հույների կողմից այն դարում, ատելության պատճառով ընդունված չէին նրանց մեջ, ինչպես այս կարելի է տեսնել այն նամակում, որ անանուն եւ անծանոթ վարդապետներ առաքել էին Սեբաստիայի մետրոպոլիտին Խաչիկ կաթողիկոսի օրոք(16):

Բայց, որ հիրավի, ի բացառյալ որոշ տգետների, այսպիսի հակառակությունը՝ պատկերամարտության աղանդը, հայերի մեջ երբեք մուտք չի գործել, երեւում է շատ բաներից: Նախ որովհետեւ պավլիկյան պատկերամարտության սկզբնավորման ժամանակ իսկ Հովհաննես Իմաստասերի օրոք հայերը փութով մերժեցին նրանց, եւ թույլ չտվեցին, որ նույնիսկ արմատավորվի Հայաստանում: Երկրորդ՝ որովհետեւ ազգն առհասարակ միշտ մեծարել եւ պատվել է սրբոց պատկերները, ինչպես հնուց անտի դա պարզորոշ երեւացել է նրանց եկեղեցիներում, սրան վկա կարող են լինել նաեւ որոշ հին ժամանակներում կառուցված եկեղեցիների որմերի մնացորդները, որ մինչեւ օրս կան Հայաստանում: [Որմերի] վրա տեսնվում են նկարված եւ քանդակված պատկերներ, այլեւս չեմ խոսում Աստվածաշունչ գրքերի եւ եկեղեցու սպասքեղենի մասին, որոնցում բազում պատկերներ կան նկարված: Երրորդ՝ հայոց հին պատմությունների շատ դրվագներում խոսվում են սուրբ պատկերներին [տրված] հարգանքի մասին, ինչպես տեսնում եւ կարող ես տակավին տեսնել մի շարք պատմություններում: Վկայում է նաեւ Ասողիկը, որ մի փոքր հետո էր Վահանից (Բ, 4), (այն մասին), թե Լեւոն Իսավրացու ժամանակներում Իզիտ ամիրապետը հրամայեց կործանել «Տիրոջ ճշմարիտ մարդեղության եւ նրա աշակերտների» կենդանագրված պատկերները. եւ սա մանավանդ (կատարվել է) հայոց մեջ, ուրեմն Հայաստանում եղել է պատկերահարգություն: Չորրորդ՝ որովհետեւ հայերը մեծարում են Յոթներորդ ընդհանուր սուրբ ժողովը՝ սուրբ պատկերների նկատմամբ հարգանքը վերահաստատելու պատճառով, եւ այն ժողովը դասում են տոնելի ժողովների շարքին, ինչպես տեսնվում է Հայսմավուրքում (հոկտ. 11, էջ 151), ուր այսպես է գրված. «Տոնն է Յոթներորդ ժողովի, որ (գումարվեց) Նիկիայում... եկեղեցու սուրբ հայրերն ու վարդապետները հավաքվեցին Բյութանիայի Նիկիա քաղաքում եւ նորոգեցին սուրբ պատկերներին եւ նահատակների նշխարներին(17) (տրվելիք) պատիվն ու երկրպագությունը, որ հերձվածող արքա Լեւոն (Իսավրացին) եւ նրա որդին՝ Կոստանդին Կավալինոսը (մի ժողովում), որ կոչվում է թրքաժողով... արհամարհանքով անարգեցին տերունական, նաեւ՝ բոլոր սրբերի պատկերները եւ նահատակների նշխարները: Բայց մյուս Կոստանդինը եւ նրա մայր Հեղինեն (փոխանակ գրելու՝ Երինե - ծնթ. Հ. Մ. Չ.) ժամանակ անց վերստին նորոգեցին սուրբ պատկերների եւ նահատակների սուրբ նշխարների երկրպագությունն ու պատիվը եպիսկոպոսների ու վարդապետների խոսքով, որ հավաքվել էին Նիկիայում ի փառս Քրիստոսի՝ մեր Աստծո(18): Այսպես է գրված նաեւ դեկտ. 5, էջ 296 եւ 297 Ստեփանոս ճգնավորի վարքում, ուր նույն սրբի շուրթերով, բազում խոսքերով եւ օրինակներով բերված է պատկերահարգության ջատագովությունը, եւ պատմվում է, թե ինչպես նա նահատակվեց պատկերներ մեծարելու պատճառով: Հինգերորդ՝ որովհետեւ հայոց հայրապետներն ու վարդապետներն իրենց խոսքերում ամեն պարագային եւ միշտ ջատագովում են պատկերահարգությունը(19):

Հովհաննես Իմաստասերն այսպես է գրում «Ընդդեմ պավլիկյանների» ճառում, (պավլիկյանների), ովքեր մերժում էին Քրիստոսի պատկերն ու Խաչը, ասում է. «Սրանք գնում են չարիքից չարիք՝ պատկերամարտությունից դեպ Քրիստոսատեցություն... ու մեր ուղիղ եւ աստվածավանդ պաշտամունքի լուսավորությամբ (որով հարգում ենք պատկերները) հանդգնում են իրենց պղծալից շուրթերով նախատել մեզ՝ տերունական նշանապաշտության պատճառով (մեզ) անվանելով կռապաշտներ»: Եվ

## 1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

# ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ապա ավելացնում է. «Հիրավի, կռում, կոփում, քանդակում եւ քերում ենք, որով մեկընդմիշտ կատարվում են մեր աստվածապաշտական կարգերը եկեղեցիների, սեղանների, խաչերի եւ պատկերների (հանդեպ)... եւ բոլոր նյութերի մեջ պատկերում ենք կենդանի ու կենդանացնող Քրիստոսին. սրա պատճառով եւ հաստատուն է մեր հույսը... Ով մեծարում է Քրիստոսի Խաչը եւ նրա պատկերը՝ մեծարում է իրեն՝ Քրիստոսին, նույնպես նրան թշնամանալով՝ թշնամացողը մեղք է գործում հենց Քրիստոսի նկատմամբ» եւ այլն(20):

Վերը հիշատակված Վահան կաթողիկոսի ժամանակակից Սուրբ Գրիգոր Նարեկացին Սուրբ Աստվածածնի ներբողում խոստովանում է, թե նրա պատկերը պաշտելի է, ասում է. «Ծնրադրում եմ քո արժանապատիվ պատկերին»(21): Եվ Ապարանից Խաչի պատմության մեջ գրում է, թե Ստեփանոս վանահայրը պատվիրեց եկեղեցու պատերին նկարել խորհրդավոր պատկերներ՝ փոխաբերաբար աչքի առջեւ ունենալով պատմությունը: Ասում է. «Պատերի մակերեսը ծածկեց քարակերտ պատկերներով եւ իբրեւ փոխագուցված բազմագունի ակնեղեն դրանք նորոգեց հմուտ արվեստագետի նման բյուրերանգ ներկերով, եւ աննյութեղեն էությամբ եզեկիելյան տեսիլքը նոր նմանությամբ իբրեւ զգայությամբ (ընկալելի) առարկա վերահաստատեց եւ իբրեւ մենաստանի վերարկու գեղեցկատիպ բանվածքով ամբողջը ներդաշնակեց: Նույնը եւ որպես ապագա աներեւույթ բարիքի, ապառնի փառքի (վերաբերյալ) ծանոթություն, այժմ այստեղ տեսանելի դրոշմումով գծագրեց... Իսկ ստվերացած, ժամանակակիցներիս աչքին աներեւույթ դարձած հին օրերի (իրողություններն) իբրեւ ծաղկօրինակ ներկերով գունազարդած կենդանագիր պատկերների գեղեցություն արգասավորեց որպես շունչ եւ զգայություն ունեցող տեսանելի բան»(22):

Գրիգոր Մագիստրոսը մի իշխանի հասցեագրած իր 38-րդ նամակում, սուրբ եկեղեցու սրահի նկարագրությունը բովանդակող խոսքի մեջ այսպես է գրում. «Շատերը մոլորվելով ու տարուբերվելով իրենց սնոտի մտածումներով կասկածոտ խորհրդածությամբ մեղադրանքներ են հորինում՝ կարկատուն զրաբանությամբ մեր պաշտամունքը համարելով կռապաշտություն... եւ այս (գաղափարները) Աստծուց իսպառ բաժանվածներինն ու հարության հույս չունեցողներինն են, ովքեր սովորել են մանիքեցիներից, որ (այսօր) թոնդրակեցիներ են հորջորջվում: Բայց դու, որ քրիստոնյա ես՝ արժանացած սուրբ ավազանի կոչմանն ու լուսափայլությանը, եւ հավատացած հարության հույսին եւ երկրպագու Սուրբ Երրորդությանը, երբ Խաչի նշանը տեսնես՝ կերկրպագես՝ հիշելով, որ հանուն քեզ խաչվեց Հիսուս Քրիստոս եւ քեզ կտեսնես նրան խաչակից... Իսկ երբ մեծարես սրբերի պատկերները եւ աղոթքի կանգնես հիշելով նրանց չարչարանքն ու նահատակությունը, դա քեզ ուսուցիչ համարիր եւ ճշմարտության վկա քո ազգակցին քեզ համար բարեխոս դարձրու ճշմարիտ Աստծո առջեւ, որպեսզի նա, որ չի ննջում համաձայն քո հավատի, ծառա լինելով նրան, իբրեւ մարտիրոս, ողորմի մարտիրոսասերիդ»(23):

Սուրբ Ներսես Շնորհալին Ալեքս (կայսեր) հղած դավանության նամակի մեջ այսպես է գրում. «Նամակում ասված էր նաեւ սուրբ պատկերների մասին, թե հայերն ամենեւին չեն ընդունում, բայց պարզիպարզո ցույց տանք, թե որն է այստեղ ճշմարտությունը: Երկու ազգերի մեջ եղած հակառակության պատճառով սուտանուն բազում չարիք սերմանեց, ինչպես մեզանում եղած որոշ տգետ ժողովուրդների մեջ՝ սուրբ պատկերների մերժումը, որոնք եւ հանդիմանվում են մեր կողմից, նաեւ նզովք է դրվում նրանց վրա, ովքեր հանդգնում են հայհոյել: Քանզի մենք, որ առաջնորդի աստիճան ունենք, ընդունում եւ երկրպագում ենք մեր Փրկչի տնօրինության պատկերը, այլեւ բոլոր սրբերի պատկերները մեծարում ենք համաձայն յուրաքանչյուր կարգի, որ ներկայացված են մեր եկեղեցիներում եւ պատարագամատույցի հանդերձանքի մեջ, եւ պատուհասելով փակում ենք մեր մեջ եղած չընդունողների՝ տգետների եւ տխմարների բերանը»(24): Եվ Մանվել կայսեր հղած առաջին նամակում այսպես է գրում. «Ըստ այսմ եւ փրկչական պատկերի եւ նրա սրբերի վերաբերյալ որոշ տգետների կողմից հակառակություն է ցուցաբերվում եւ Դուք նրանց պատճառով գայթակղվելով՝ ամբողջ ազգիս օրենքն եք համարում դա: Մինչդեռ մենք եւ մեզ համաձայնողները այսպես ենք դավանում եւ քարոզում, թե ինչպես աստվածընկալ Խաչը տեսնելով՝ երեւացող նյութին չէ, որ երկրպագություն ենք մատուցում, այլ աներեւույթ Աստծուն, որ նրա մեջ է (բնակվում), ճիշտ այսպես էլ փրկչական պատկերի (պարագային) ոչ թե նյութին եւ ներկերին ենք երկրպագում, այլ՝ Քրիստոսին, որ աներեւույթ Հայր Աստծո պատկերն է: Իսկ սրբերի պատկերները մեծարում եւ փառավորում ենք՝ նրանց որպես միջնորդ եւ բարեխոս ունենալով Աստծո մոտ»(25):

Հռոմեացիներին գրած պատասխան նամակում, որ ավանդված է ժողովական գործերի մեջ (հտ. Իե, էջ 1259), Մխիթար կաթողիկոսն այսպես է գրում. «Հայոց առաջնորդները միշտ ընդունել են սրբերի պատկերները, որ եւ ունենք դրված մեր եկեղեցիներում, եւ թեպետ ժամանակին հույների եւ հայերի մեջ հակառակություն կար այս խնդրի շուրջ, բայց դա որոշ տգետների եւ տխմարների մեջ էր... Իսկ Մեծ Հայքի որոշ տեղերում պատկերների նվազման պատճառը այլազգիների բռնությունն էր, ովքեր տիրում էին Հայաստանում, եւ խիստ հալածում պատկերներն ու (պատկեր) ունեցողներին»(26):

Զանց եմ առնում մեջբերել նաեւ բազում այլ վկայություններ հայոց այլեւայլ վարդապետների խոսքերից, տարբեր երգերից ու շարականներից: Բայց (մեր խոսքի) ավարտին, ի հաստատումն այս ամենի, հարկ է ավելացնել նաեւ մեր սուրբ հոր՝ Գրիգոր Լուսավորչի այն խոսքը, որ բերված է Ագաթանգեղոսի գրվածքում (էջ 29) Խաչի վրա Քրիստոսի պատկերի մասին. «Փոխանակ փայտ» կուռքերի Խաչը բարձրացրեց տիեզերքում, որովհետեւ, ովքեր սովոր էին երկրպագել փայտին, արդեն ընտանի, սովորականոն հավատային երկրպագել խաչափայտին եւ նրանում եղած մարդադեմ պատկերին»(27):

Այս բոլորից պարզ է դառնում, թե պատկերահարգությունը միշտ ընդունված է եղել հայերի մեջ, ուստի եւ անհիմն զրպարտություն է այն, որ որոշ հույն եւ այլազգի մատենագիրներ պնդում են, թե հայերը չեն մեծարում պատկերներ: Բայց սա զարմանալի չէ, որովհետեւ հույները չարախոսում էին ոչ միայն հայերին, այլեւ՝ լատիններին, ինչպես ցույց է տալիս Բարոնիոսը 1054թ. (28) եւ Նատաղիսը XI դարի տակ(29): Եվ սա գուցե այն պատճառով, որովհետեւ քրիստոնյաների մեջ առավելապես իրենք՝ հույները հարյուրավոր տարիներ զինավառ մարտնչեցին սուրբ պատկերների դեմ ութերորդ եւ իններորդ դարերում, թեպետ եւ ոչ բոլորը:

### Սուրբ Գրիգոր Նարեկացու մասին

Մեր ազգի մեջ ընդհանուր ավանդություն է, թե սուրբ Գրիգոր Նարեկացին մահացել է երիտասարդական տարիքում, ինչպես եւ տպված է Նարեկի վերջում: Այս պատճառով ոմանք ասացին, թե երեսուն տարեկանում է մահացել եւ ոմանք էլ թե՝ երեսուներեք տարեկանում: Բայց ինչպես պարզ երեւում է սրբի իսկ խոսքերից, նրա կյանքը տեւեց հիսունից ոչ պակաս տարիներ, որովհետեւ ինքը գրում է Երգ երգոցի (մեկնության) վերջաբանում, թե հայոց ՆԻԶ 977 (977) թվականին նա գրեց այդ մեկնությունը Անձեւացյաց Գուրգեն արքայի խնդրանքով: Եվ պարզ է, որ այդպիսի մեկնության այդպիսի արքայի խնդրանքով շարադրելիս նա տասնամյա կամ տասներեքամյա մեկը չէր, մանավանդ նա այն ժամանակ քահանա էր, ինչպես նա ինքը վկայում է այնտեղ, եւ վարժապետ էր, եւ խոսելիս նա ինքն իրեն ցույց է տալիս իբրեւ հասուն մարդ, ուրեմն պետք է ասել, որ նա այն ժամանակ առնվազն գոնե քսանհինգ տարեկան էր կամ էլ մի փոքր ավելի կամ պակաս՝ ծնված մոտ Հայոց Ն (951) թվականին: Եվ քանի որ դրանցից հետո ապրեց եւս քսանվեց տարի, որովհետեւ մահացավ Հայոց ՆԾԲ (1003) թվականին, ապա գոնե հիսունմեկ կամ հիսուն տարեկան էր, երբ վախճանվեց: Ասացի, թե մահացել է Հայոց ՆԾԲ (1003) թվականին, որովհետեւ ինքը գրում է իր Աղոթամատյանի հիշատակարանում, թե Աղոթամատյանն ավարտել է «մեր հաբեթական տոհմի տոմարի իններորդ հոբելյանի ավարտին տասնյակը պսակող սկզբին»(30): Եվ քանի որ մեկ հոբելյանը հիսուն տարի է՝ ինը հոբելյաններն անում են չորս հարյուր հիսուն տարի եւ քանի որ մեկ տարի էլ վերցված է հաջորդ տասներորդ հոբելյանից, որ անվանում է տասներորդ սկիզբ, ըստ այսմ հաջորդ տարին, այն է՝ Հայոց ՆԾԱ (1003) թվականը համարվում է սրբի աղոթամատյանի ավարտման ժամանակը: Եվ սա ավելի է հաստատում հաջորդ խոսքը, որ հետո ասում է. «Հույների հաղթական եւ մեծ կայսեր՝ Վասիլի դեպ մեր երկրի հյուսիս-արեւելյան կողմերը կատարած արշավանքից երեք տարիներ հետո»: Արդ, այս Վասիլի արեւելք գալը, որի վերաբերյալ ըստ կարգի պատմում է ժամանակակից Ստեփանոս Ասողիկը (Գ, 42 եւ 43), նաեւ Արիստակես Լաստիվերցին (գլ. Ա)(31) երկու անգամ է հաշվում՝ մեկը Հայոց ՆԽԸ (999) թվականի վերջից, երբ նա եկավ Կիլիկիա եւ Փոքր Հայք ու նաեւ մյուս՝ հաջորդ տարվա սկզբին, այն է՝ Հայոց ՆԽԹ (1000) թվականին, երբ իր թագավորության քսանհինգերորդ տարում մտավ Մեծ Հայք: Եվ քանի որ Նարեկացին դնում է նրա գալուց երեք տարի անց, ըստ այդմ հարկ է հանել Հայոց ՆԽԸ (999) թվականը եւ հաշվել երեք լրիվ տարիներ, այն է՝ ՆԽԹ (999), ՆԾ (1000) եւ ՆԾԱ (1001) թվականները եւ այսպես որոշակիորեն ճշտվում է, թե նույն Հայոց ՆԾԱ (1001) թվականին սուրբն ավարտել է Աղոթամատյանը: Սրանից հետո, քիչ ժամանակ անց, երանելին փոխադրվեց այս կյանքից հաջորդ տարին՝ Հայոց ՆԾԲ (1002) թվականին, ըստ որում նրա վարքում, Հայսմավուրքի մեջ (փետր. 27), ինչպես եւ ոմանք դնում են Հայոց ՆԾԳ (1003) թվականին(32): Արդ, այս ամենից պարզ է դառնում, թե սրբի կյանքը հասավ մինչեւ Հայոց ՆԾԲ (1002) կամ ՆԾԳ (1003) թվականը, եւ քանի որ, համաձայն Երգ երգոցի մեկնության վերոբերյալ հիշատակարանի, նրա ծնունդն անկարելի է դնել Հայոց (951) թվականից հետո, ուստի եւ նրա տարիների քանակը չի համրվում հիսունից պակաս: Եվ այն, որ Հակոբ Նալյանը Նարեկի մեկնության Առաջաբանում (էջ 3) ասում է, թե նա ծնվել է Հայոց ՆԼԵ (986) թվականին Վասիլի եւ Կոստանդիանոսի ժամանակ եւ մեռել է 33 տարեկանում, տպագրական վրիպակ է, որովհետեւ, ինչպես ասացինք, ինքը՝ Նարեկացին, գրում եւ վկայում է, թե Հայոց ՆԻԶ (977) թվականին գրել է Երգ երգոցի մեկնությունը, այսինքն՝ Վասիլի կայսրության երկրորդ տարում, ուրեմն նրա ծնունդը չի կարող դրվել մեկնության թվականից հետո: Եվ դարձյալ նույն ինքը Հակոբ Նալյանը Խաչի ճառի բացատրության մեջ (էջ 742)(33) ասում է, թե Խաչի՝ Ապարանից վանք տեղափոխման ժամանակ սուրբը 12 տարեկան էր, իսկ Խաչը տեղափոխվեց ՆԼԲ (983) թվականին, ինչպես ինքն էլ հիշում է այնտեղ եւ կամ չէր ծնվել ՆԼԸ (986) թվականին, այլ՝ բազում տարիներ առաջ: Եվ հիրավի, նա այն ժամանակ չափահաս տարիքում էր, որը եւ նույն տարում, Ստեփանոս եպիսկոպոսի խնդրանքով, գրեց Պատմությունն ու Խաչի ճառը: Իսկ որ նա հավանություն էր տալիս Քաղկեդոնի սուրբ ժողովին եւ Հունաց եկեղեցու հետ միաբանությանը, հայտնի է նաեւ իր վարքի պատմությունից, որ կա Հայսմավուրքում (փետր. 27), ուր նշված է, թե նա հերձվածող համարվեց այլ եկեղեցիների, այսինքն՝ Հունաց եւ Վրաց հետ հայերի միաբանվելը կամենալու համար՝ նրանց հետ, որ քաղկեդոնականներ էին, նաեւ՝ նրանց բարեկարգությունը որդեգրելու (նպատակով), եւ այնտեղ ասվում է, թե նա այս պատճառով հալածվեց: Երկրորդ՝ Լամբրոնացու խոսքից հայտնի է դառնում նրա համամիտ լինելը Հովհաննես Իմաստասերին, Եզր կաթողիկոսին եւ Վահանին: Ասում է. «Ո՞ւր դնենք Հովհաննես Իմաստասերի եւ հայրապետի խոսքերը, որ սա մեզ համար ճշտվում է սուրբ հայրերի վկայությամբ, Եզր հայրապետի եւ իր (գումարած) ժողովի հավանությունը, Վահան հայրապետի համաձայնությունը Հունաց մեծ եկեղեցուն, եւ նրան հետեւող թագավորների եւ

Շարունակությունը՝ էջ 46

**Գագիկ Ա (ծն. թ. անհայտ-1020), Հայոց թագավոր 990-ից՝ Բագրատունիների հարստությունից: Անիի պեղումների ժամանակ գտնվել է Գագիկ Ա-ի արձանը, որի գլխին կա լայն փաթաթած սպիտակ չալմա, հագին երկարավուն արաբական կարմիր խալաթ եւ մեջքի փաթաթան: Արաբական տարազն այստեղ խալիֆայության կողմից ճանաչված լինելու նշան է: Գագիկ Ա թագավորը՝ իր տիկնոջ՝ Սյունյաց ազնվազարմ դուստր Կատրամիդեի հետ, վճռական դեր խաղաց Անանիա կաթողիկոսի կողմից Սյունիքի աթոռից վերցված պատիվը 1006թ. (Սարգիս կաթողիկոսի կողմից) վերադարձնելու հարցում:**

**1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ**

**ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

**Անիի Սուրբ Աստվածածին եկեղեցի կամ Անիի Մայր Տաճար, Անի քաղաքի գլխավոր եկեղեցին, կառուցվել է 989-1001 թթ. Տրդատ ճարտարապետի կողմից Հայոց թագավոր Սմբատ Բ Տիեզերակալի նախաձեռնությամբ:**

# Հայոց պատմություն

## Հատված Հ. Միքայել Չամչյանի համանուն աշխատությունից

**Սկիզբը՝ էջ 45**

վարդապետների (հոժարությունը), որոնցից մեկն էլ աստվածաշնորհ, գերազանց հոգի, մարմնի մեջ հրեշտակ Գրիգոր Նարեկացին է»(34): Արդ, մեր ազգի համար պարզ է, որ եզրը եւ Վահանը հայտնապես ընդունեցին եւ քարոզեցին Քաղկեդոնի սուրբ ժողովը, ուրեմն նաեւ Նարեկացին նրանց համաձայն լինելով՝ ընդունել է ինքը եւս այն սուրբ ժողովը, եւ ջանացել է միաբանել նրանց(35):

Այստեղ հարկ է տեղեկացնել նաեւ այն, որ ինչպես երեւում է, Կղեմես Գալանոսը կարդալով Լամբրոնացու խոսքերը, եւ Գրիգոր Նարեկացու անունը տեսնելով վարդապետների եւ հայրապետների մեջ՝ համարում է, թե նա էլ հայրապետներից մեկն է, եւ քանի որ գիտե, թե նա կաթողիկոս չէ, առանց տարակույսի մտքում որոշում է, թե գոնե նա պետք է եպիսկոպոս լինի, ուստի եւ Բ հատորի 155-րդ էջում լատիներեն (բնագրում) նրան անվանում է Գրիգոր եպիսկոպոս Նարեկացի, նաեւ Ա հատորի 211 էջում լատիներեն (բնագրում) նույնպես եպիսկոպոս Նարեկացի է անվանում ու հայերենում՝ վարդապետ եւ եպիսկոպոս(36): Եվ Կղեմեսի այս խոսքերը կարդալով Միքայել Լեքեն Գաղղիացին (Ֆրանսիացին), որ գրել է բոլոր եպիսկոպոսների մասին եւ Նարեկի վանքը եւս դասել է եպիսկոպոսարանների շարքը՝ Ա հատորի 1440 էջում այսպես է գրում. «Նարեկա (վանքը) կամ Նարեկը, ինչպես կարծում եմ, տարբեր է Նարեկաշենից, որ Սպահանի արքեպիսկոպոսարանի (տնօրինության) տակ է: Նարեկի եպիսկոպոսներից առաջինը Գրիգորն է: Կոստանդնուպոլսի կայսր եղբայրներ Վասիլի եւ Կոստանդիոսի ժամանակներում եւ Վահան կաթողիկոս Վասպուրականցու օրերին ծաղկել է հայոց մեծ վարդապետ Գրիգոր եպիսկոպոս Նարեկացին... ըստ Գալանոսի գրվածքի. հտ. Ա, էջ 210 եւ 211»: Ահա այսքան օտարանում են պատմությունները՝ մեկը մյուսից անտեղյակ լինելով եւ զարդարվելով (տարաբնույթ) մեկնաբանությամբ: Իսկ այն, որ Գալանոսից վերցնելով գրում է, թե Վահանը վասպուրականցի էր, պարզորոշ է, որ վրիպակ է. տե՛ս. Պատմության մեջ, էջ 840 եւ 841(37):

### Ծանոթագրություն

1. Տե՛ս «Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», աշխատասիրությամբ Ա.Տեր-Միքելյանի, Վաղարշապատ, 1893, նաեւ՝ Սամուէլ Անեցի, «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց Յաղագս գիւտի ժամանակաց անցելոց միչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ», բնագիրը կազմեց Անահիտ Հայրապետյանը, Եր., 2011, էջ 119:

2. Տե՛ս «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», [աշխատասիրութեամբ հ. Ղ.Ալիշանի], Վենետիկ, 1862, էջ 89:

3. Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ.Ա.Մելիք-Օհանջանյանի, Եր., 1961, էջ 87, նաեւ՝ Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, թարգմանությունը, առաջաբանը եւ ծանոթագրությունները Վարագ Առաքելյանի, Եր., 1982, էջ 72:

4. Տե՛ս «Ստեփաննոսի Տարոնեցւոյ Ասողական Պատմութիւն տիեզերական», աշխատասիրությամբ Ս. Մալխասյանցի, Պետերբուրգ, 1885, էջ 181:

5. Վահան կաթողիկոս հայոց, իրականում աթոռակալել է 968-969թթ., տե՛ս ծնթ. 8:

6. Խաչիկ Ա Արշարունի, կաթողիկոս հայոց (973-992):

7. Սա Ստեփանոս Գ Սեւանցի կաթողիկոսն է (969-971):

8. Ըստ այսմ Վահանի մահն Ուռհայեցին դնում է 26 մարտ 983թ. - 24 մարտ 984թ., տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, թարգմանությունը, ներածությունը եւ ծանոթագրությունները Հրաչ Բարթիկյանի, Երեւան, 1973, էջ 22: Մ. արք. Օրմանյանը հիմնվելով պատմիչների (Օրբելյան, Սամվել քահանա, Վարդան, Կիրակոս) միահամուռ վկայությունների վրա՝ մերժում է Վահանի 5 տարի գահակալելու վերաբերյալ Ուռհայեցու այս տեղեկության չամչյանական մեկնաբանությունը, որի նպատակը «քաղկեդոնիկ կարծուած անձի մը պաշտօնավարութիւնը» երկարաձգելն էր: Ըստ այսմ, պատմագիրներուն համաձայնութեամբ ամ մի նշանակուած տեւողութիւնը փոփխելու բնաւ պատճառ մը չենք գտնէր, եւ Վահանը 968-ին աթոռ բարձրացած 969-ին աթոռէ զրկուած կըլլայ Անւոյ ժողովին վճռով եւ Աշոտ թագաւորի հրամանով կամ հաստատութեամբ» (Ազգապատում, 771):

9. Տե՛ս «Ատենաբանութիւն սրբոյն Ներսիսի Լամբրոնացւոյ թարգմանեալ ըստ ընտիր օրինակաց յիտալական բարբառ ի հ. Յարութիւն վարդապետէ Աւգերեան... հանդերձ իտալական ծանօթութեամբք», Վենետիկ, 1812:

10. Նկատի ունի մի կողմից հունաց Մանվել կայսեր եւ Միքայել պատրիարքի 1172թ. Հայոց հաստատագրված նամակներն ու դրանց կցված դավանական 9 առաջարկությունները կամ հարցումները եւ մյուս կողմից հայերի՝ 1197թ. Տարսոնում գումարված ժողովի դրանց տրված պատասխանները (Մ. արք. Օրմանյան, Ազգապատում, « 983, 1011): Ինչպես երեւում է, Չամչյանը հենվում է Կղեմես Գալանոսի վրա, ըստ որի հայոց պատասխանները շարադրված են ոչ թե 1197-ին, այլ Հռոմկլայի ժողովում (1179թ.), որի հետ է կապում Լամբրոնացու Ատենաբանությունը (Կղեմես Գալանոս, «Միաբանութիւն հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռոմայ», հտ. Ա, Հռոմ, 1650, էջ 331-346):

11. Բյուզանդիայի Վասիլ Բ կայսրը (որ հետագայում ստացավ «Բուլղարասպան» մականունը) գահակալել է 976-1025թթ.:

12. Ինչպես երեւում է, ի գին դավանական եւ ծիսական զիջումների Վահանը փորձել է դրական հարաբերություններ հաստատել Հույն եւ Վրաց քաղկեդոնական եկեղեցիների հետ՝ նրանց բարյացակամությունը շահելու նպատակով: Ուստի հասկանալի են նրա գործունեության վերաբերյալ պատմիչների դիտումները, այսպես, Ասողիկը, Վարդանը, Կիրակոսը պարզիպարզո նկատում են, թե «սա կամեցավ քաղկեդոնականների հանդեպ ունեցած սերն ու հոժարությունը հաստատել նամակներով»՝ «ցույց տալով, թե դաշինք է կնքել Վրացիների հետ» կամ «միաբան դավանությամբ դաշինք կնքել» նրանց հետ (տե՛ս Օրմանյան, Ազգապատում, 769): Ստեփանոս Օրբելյանը հաստատում է իր նախորդների դիտումները՝ նկատելով, թե Վահանը «սկսեց Վրաստանից պատկերներ բերել եւ դնել սեղանի վրա: Հրամայեց նույնն անել բոլոր եկեղեցիներում, ըստ հույների սովորության, սեղանները զարդարել սրբապատկերներով, պատարագ չմատուցել առանց սրբապատկերների: Այս պատճառով բոլորը կասկածեցին, թե հույների հետ դաշինք է կնքել եւ կամենում է նրանց աղանդը [մեր] եկեղեցին խցկել» (տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը եւ ծանոթագրությունները Ա.Ա.Աբրահամյանի, Եր., 1986, էջ 205):

13. Տե՛ս «Գիրք աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ արարեալ, տպագրեցեալ էր գործարանում սրբոյն Մինասայ զօրավարի...», Կ. Պոլիս, 1700: Բնագիրը հրատարակության է պատրաստել մեծանուն եկեղեցական գործիչ եւ մատենագիր Մինաս Ամդեցին (Երուսաղեմի հայոց պատրիարք՝ 1690-96, 1698-1702, 1704 թթ.), որին եւ պատկանում է բերված բնորոշումը:

14. Տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, էջ 22:

15. Տե՛ս «Ատենաբանութիւն սրբոյն Ներսիսի Լամբրոնացւոյ՝ թարգմանեալ ըստ ընտիր օրինակաց յիտալական բարբառ ի հ. Յարութիւն վարդապետէ Աւգերեան... հանդերձ իտալական ծանոթութեամբք», վենետիկ, 1812, էջ 94, 96 (իտալերեն՝ էջ 95, 97):

16. Դավանական սկզբունքայնությամբ աչքի ընկնող այս նամակը տեղ է գտել Ասողիկի Պատմության մեջ (տպ. 1885, էջ 202-243, նաեւ Մատենագիրք Հայոց, Ժ հատոր, Ժ դար, Անթիլիաս, 2009, էջ 665-684):

17. Պատկերամարտական հերձվածի նկատմամբ վաղագույն ընդդիմությունը հայոց մեջ ցուցաբերել է VI-VII դ. մատենագիր Վրթանես Քերթողն իր «Յաղագս պատկերամարտից» երկով, (տե՛ս տպ. Ս.Տեր-Ներսեսյան, Հայ արվեստը միջնադարում, Եր., 1975, էջ 7-30, նաեւ՝ Մատենագիրք Հայոց, հտ. Գ, Զ դար, Անթիլիաս, Լիբանան, 2004, էջ 493-500):

Նկատի ունի Բյուզանդիայի Լեւոն III կայսեր (717-741 թթ.) 726թ. արձակած պատկերամարտական հրամանագիրը եւ նրա որդու՝ Կոստանդին V Կոպրոնիմոսի (741-775 թթ.) 753թ. փետրվարի 10-ին գումարած ժողովը, որով խստորեն արգելվում է պատկերների եւ սրբոց նշխարների պաշտամունքը, տե՛ս Ն.Ադոնց, Պատկերների խնդիրը, աշխատասիրել, ծանոթագրել եւ ներածությունը գրել է Պ.Հովհաննիսյանը, Եր., 2003, էջ 21, 24-25:

18. Իրենե. Բյուզանդիայի կայսրուհի (797-802): Եղել է Կոստանդին VII-ի խնամակալն ու կայսերակիցը: Հետեւորդն է պատկերապաշտության: 787թ. հրավիրել է 2-րդ Նիկիական VII տիեզերաժողովը, որտեղ եւ վերականգնել է պատկերապաշտությունը, տե՛ս Ն.Ադոնց, Պատկերների խնդիրը, էջ 76, ծնթ. 30:

19. Հայ եկեղեցու պատկերահարգական դիրքորոշմանն է նվիրված հետեւյալ աշխատությունը. Արիս եպս. Սեդրակեան, Հայաստանեայց եկեղեցու պատկերայարգութիւնը, մասն Ա, Ս. Պետերբուրգ, 1904:

20. Քաղված է ս. Հովհան Օձնեցի հայոց հայրապետի (717-728թթ.) համապատասխան ճառից, տես տպ. Մատենագիրք Հայոց, հտ. է, Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 37, 44:

21. Տե՛ս Մատենագիրք Հայոց, հտ. ԺԲ, Անթիլիաս, 2008, էջ 953-975:

22. Տե՛ս Մատենագիրք Հայոց, հտ. ԺԲ, էջ 922, 923:

23. Տե՛ս «Գրիգոր մագիստրոսի թղթերը՝ բնագիրն յառաջաբանով եւ ծանօթութիւններով առաջին անգամ ի լոյս ընծայեց Կ. Կոստանեանց», Ալեքսանդրապոլ, 1910, էջ 168-169, ըստ քննական բնագրի, քաղված է Մագիստրոսի ԿԹ նամակից:

24. Տե՛ս «Թուղթ ընդհանրական արարեալ երիցս երանեալ սուրբ հայրապետին մերոյ տեառն Ներսիսի Շնորհալւոյ...», Ս. Էջմիածին, 1865, էջ 131-132:

25. Տե՛ս «Թուղթ ընդհանրական ... Ներսիսի Շնորհալւոյ...», էջ 190-191:

26. Տե՛ս Mansi, “Sacrorum conciliorum nova et amplissima collectio”, հրատ. 1759-1788, վերահրատ. 1960-1962:

27. Վկայությունը քաղված է հետեւյալ հրատարակությունից. «Գիրք վիպասանութեան, որ կոչի հոմանունակի Ագաթանգեղոս...», Կ. Պոլիս, 1709-10, տե՛ս նաեւ քննական բնագիրը. Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, աշխատ. Գ. Տէր-Մկրտչեան, Ս. Կանայեանց, Տփղիս, 1909, էջ 47:

28. Կեսար Բարոնիոս (1538-1607 թթ.), կարդինալ, հեղինակ է ցարդ իր արժեքը չկորցրած եկեղեցական պատմության՝ “Annales ecclesiastici” (1588-1607), որ 12 հատորների մեջ ընդգրկում է մասնավորաբար կաթոլիկ եկեղեցու 12 դարերի պատմությունն ըստ տարեկան ժամանակագրության: Երկասիրության լավագույն հրատարակությունն իրականացրել է Ի.Դ.Մանսին 1738-1756թթ.:

29. Ալեքսանդր Նատաղիս (1638-1724). աստվածաբան, հեղինակ է 24 հատորից բաղկացած եկեղեցու պատմության (Selecta historiae ecclesiasticae capita. հրատ. 1676-86 թթ.), որը եւ նկատի ունի Չամչյանը:

30. Տե՛ս Մատեան Ողբերգութեան, աշխատ. Պ. Խաչատրյանի, Ա.Ղազինյանի, Եր., 1985, էջ 642, տ. 5-6:

31. Տե՛ս Ասողիկ, տպ. 1885, էջ 274-78, «Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերցւոյ», աշխատ. Կ. Ն. Յուզբաշյանի, Եր., 1963, էջ 21-25:

32. Տե՛ս Յայսմաւուրք, Կ. Պոլիս, 1730, էջ 395;

33. Տե՛ս Հակոբ Նալեան, «Մեկնութիւն աղօթից եւ ներբողիցաց սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ», Կ. Պոլիս, 1745:

34. Տե՛ս «Ատենաբանութիւն սրբոյն Ներսիսի Լամբրոնացւոյ...» էջ 94:

35. Չամչյանական այս միակողմանի մեկնաբանությունը դյուրությամբ մերժվում է Նարեկացու «Մատեան ողբերգութեան» հե բանով, որ բանաստեղծաշունչ հաստատագրումն է Հայ եկեղեցու դավանաբանության:

36. Տե՛ս Կղեմես Գալանոս, «Միաբանութիւն հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռոմայ», հտ. Ա, հայերեն եւ լատիներեն, Հռոմ, տպ. Ուրբանեան, 1650:

37. Տե՛ս Հ. Մ. Չամչյան, «Պատմութիւն հայոց», հտ. Բ, Վենետիկ, 1785:

**Աշխարհաբարի վերածեց եւ ծանոթագրեց Հակոբ Քյոսեյանը՝ «Սյունյաց երկիր» թերթի խմբագրության պատվերով**



1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ՎԵՐԱԴԻՏԱՐԿՈՒՄ

# Վահանավանքը եւ կապանյան տեղորոշումների թեականությունը

ՌՈԲԵՐՏ ԷՋԱՆԱՆՑԻ

**Ի մի բերելով հետազոտողների ուսումնասիրությունները Կապանա տան հնավայրերի տեղորոշումների վերաբերյալ՝ դեմ ենք առնում իրարամերժության ու թեականության մի խառնափնթոր կույտի: Անվիճելի տեղորոշվա՛ծ են հեթանոսական մեհյանները, Բաղաբերդն ու Բաղակուքարը, Հին Կապանը, Ջեւու բերդը եւ այլք: Մտահոգիչ է, որ ուսումնասիրողներից շատերը, զարգացնելով սեփական նոր տեսակետը, չեն ժխտում այլակարծիք մյուսներին:**

Տեղորոշումը հավաստի է, երբ մատենագրական տեղեկություններն ընդհանուր եզրեր ունեն պեղումների արդյունքների, տեղանվան ստուգաբանության, ավանդապատումների հետ: Այս առումով աներկբայելի է, որ հնամենի Ձորք գավառի տարածքում ճշգրիտ տեղորոշում ունի Վահանավանքը. վանական համալիրը նկարագրել է միջնադարյան պատմիչ Ստ.Օրբելյանը, տեղում է Վահան Նախաշինողի վիմագիր տապանաքարը, հնուց անտի տեղացիները վայրի ավերակներն առմիշտ Վահանավանք են կոչել: Վանքի տեղորոշվածությունը երկրագնդի վրա՝ արեւելյան երկայնության 46° 19′ 55″, հյուսիսային լայնության 39° 21′ 04″. գտնվում է Բաղաց լեռնաշղթայի հյուսիսակողմում՝ Ողջի գետի աջ մասում:

Պատմիչ Օրբելյանին հետեւելով՝ հարկ է կարեւորել Վահանավանքի՝ մերձակա կառույցների (ոչ միայն) տեղորոշման կողմնորոշիչ դերը: Ինչ խոսք, Վահանավանքը շփոթելու չէ համանուն բերդի եւ մի քարավանատան հետ, որոնք գտնվում են ոչ հեռու՝ Բեխ գյուղի մերձակայքում, եւ, անշուշտ, այդպես են կոչվել վանական համալիրին առնչակցվելու առիթներով:

Վահանավանքը նաեւ Հովհաննավանք ու Հովհաննու վանք է կոչվել, եւ այս երկվությունը տակավին սպառիչ պատասխան չունի:

1966թ. սկսված պեղումների բարեխղճությունն ու ծավալը պատկառանք են ներշնչում, մինչդեռ վերականգնման աշխատանքներում առկա են անհամոզիչ լուծումների միտումներ: Տարածքում ցանուցիր թափված սրբատաշերն ու խոյակները շինության մեջ ունեցած տեղի իմաստով մնացել են անհասցե կամ վերականգնման մեջ անհարկի փոխարինվել նորերով: Վերականգնման համայնապատկերը, կարծես, չի պատշաճում Հայր Ստեփանոսի նկարագրությանը՝ «օրըստօրե ճոխանում է որպես բազմամարդ քաղաք», «աղոթատուն՝ վիմակերտ մահարձաններով», «դռանը կամար կանգնեցրեց՝ վրան երկու խորան», «կանգնեցրին մեծամեծ կամարներ՝ վրաները եկեղեցիներ, բազմասյուն ու բազմահարկ սրահներ, իշխանական հովանոցներ ու խրախճարաններ», «կառուցեց մի մեծ սեղանատուն ու խողովակով ջուր բերեց նրա դուռը»…

Ըստ պատմիչի՝ Վահան Նախաշինողն Աստծու փառքի տուն է կառուցել՝ «գմբեթահարկ, եռախորան»: Բայց 1046թ. արձանագրության մեջ եկեղեցու, սրահի եւ ժամատան կառուցումը վերագրված է Սմբատ թագավորին ու նրա Գրիգոր եղբորը: Վահանի պատվանունը՝ Նախաշինող, պատմիչ Օրբելյանը չունի, այն նշված է միայն տապանաքարին: Արձանագրության բովանդակությունից կարելի՞ է մակաբերել, որ նա այդ անվամբ մեծարվել է թագավորության շրջանում: Նախաշինող, այսինքն՝ առաջին կառուցող կամ նախագնաց կառուցումների, որ, ըստ պատմիչի, «վախճանվում եւ թաղվում է սուրբ տաճարի դռանը»: Վահան Նախաշինողի եղբորորդի՝ Վահան Շինարարը (հետագայում՝ կաթողիկոս), սրբի գերեզմանի վրա, «գեղեցիկ հորինվածքով շինեց եկեղեցու գավիթը՝ մեծամեծ հղկած վեմերով, երեսուն կանգուն բարձրությամբ»: Նկատի առնենք, որ պատմիչն իր երկը գրել է վանքի հիմնարկեքից ավելի քան երեքուկես դար հետո եւ Սմբատ ու Գրիգոր թագավորներից մոտ երկուսուկես դար հետո: Արդ, Վահան Նախաշինողի երախայրիքի ու հետագա հավելումկառուցումների սահմանազատումն ու հաստատումը հետազոտողների խնդիրն է:

Մեզանում, չգիտես ինչու, տկար է պահանջկոտությունն արտերկրում մեր պատմագրությունը ներկայացնողների նկատմամբ: Զորօրինակ, ինչպե՞ս հանդուրժել, որ «Վիքիփեդիա» ազատ հանրագիտարանը Վահան Նախաշինողին ներկայացնում է сын царя Гагика, Շահանդուխտ եւ Կատա քույրերին կոչում Шаанадухт, Катан, շրջանառում Сюнянц, Сюнянац հորինովի անվանումներ, զուգահեռում Ваан եւ Вагана-ванк իրարամերժ ձեւերը (հանրագիտարանային վերջին ուղղումը՝ 16.06.2011):

Մեր պատմիչ Օրբելյանը, որ թեմի առաջնորդի կարգավիճակ ուներ, անշուշտ, եղել է Վահանավանքում, որի վկայությունը նրա պատկերավոր նկարագրությունն է. «Ոմն Վահան՝ Ջագիկ իշխանի որդին եւ Ջեւանշերի եղբայրը… գալով այն բարձր լեռան ստորոտը, որի վրա է Բաղաբերդի անառիկ ամրոցը, Աճանանի դիմաց՝ գտնում է մի հարթ տեղ, շատ հարմար…, սկսում է եկեղեցու շինարարությունը»: Սա, ակներեւաբար, Վահանավանքն է: Եվ հստակ է ասված, որ Բաղաբերդը բարձր լեռան վրա է: Մինչդեռ բոլոր ուսումնասիրողները, հետեւելով Ռաֆֆուն, ով 1881-ին զննել է Կապանա հնավայրերը, Բաղաբերդը ճանաչել են Ողջի գետի եւ ձախակողմ Գիրաթաղջուր վտակի կցվանքատեղի մոտակա բարձունքի պարսպափակ տարածքը, որը գետի հունից բարձր է մոտ 300մ: Ջեւու բերդն է՛լ Ռաֆֆին է ենթադրել Գեղվա գետաբերանին:

Ըստ Կաղանկատվացու՝ պարսից կանոնավոր բանակը՝ Շապուհ արքայի գլխավորությամբ, երեք անգամ գրոհել է Բաղաբերդի վրա, եւ մեր նախնիները միայն քարագլորքով հետ են մղել թշնամուն: Ըստ այդմ, ռազմավարական տեսակետից էլ այս ամրությունը Բաղաբերդ կոչել չի հարմարում: Հույժ արժեքավոր է նաեւ Ստ.Օրբելյանի՝ Բաղաբերդին տված մեկ այլ գնահատականը՝ «անհասանելի է մարդկանց մուտքին, եւ միայն տերը կարող է մատչելի դարձնել»: Հարկավ, եթե Ռաֆֆին լիներ գետի աջակողմ բարձունքի բերդավերակներում կամ Աճանանի Աղջկաբերդում (Ղըրղալա), այլ մատնանշում կաներ: Եվ Ջեւու բերդն էլ տեղանշել է վերաբնակված Ջեւա բնակավայրի ազդեցությամբ, թեպետ դավիթբեկյանները Ջեւու բերդը ցույց են տվել Փուխրուտի կողմերում:

Աճանան գավառի անվանատուն Եճանան խոշոր գյուղն էր, որը, Ալիշանի ենթադրությամբ, Շհարջիկն է: Տեղանունների բառարանը Շհարջիկի տեղում դնում է հինավուրց Շեկք գյուղը, որը Վահանավանքի դիմաց էր ու նրա հարկատուն: Հեղինակները քննության չեն առել դրանից մոտ 10կմ արեւելք գտնվող հնավայրը, որը տեղացիները կոչում են Շեկքանեն ձոր: Ի դեպ, Վահանավանքի կալվածքի բաժին են հիշված դիմացի գյուղերը՝ Աչաղու, Աչաղվագետ, Արավայր, Շեկք: Հետազոտողները չեն քննել այն իրողությունը, որ վերաբնակված այլազգիներն իրենց հետ են բերել նմանակ Աչխլու գյուղանունը: Իրավամբ, ներկայիս Աչաղուն Վահանավանքի դիմաց չէ: Աչաղու գյուղը պետք է փնտրել Խնկանց գյուղի մերձավորությամբ: Ի դեպ, Տաթեւի վանքի «Քէօթուկ» հարկացուցակում Չաղու անվամբ գյուղ է հիշված Կավարտից ու Ղաթարից հետո: Չաղու գյուղանունն առկա է նաեւ հմ.1488 ձեռագրում՝ Աճանան գավառում: Այս Աչաղուն «պատմական» գյուղ էր, որովհետեւ նրա քրիստոնյա բնակչության դավաճանությամբ սելջուկները 1170թ. գիշերով գրավեցին Կկոց քարն ու Բաղաբերդը: Արդ, բնական է ենթադրել, որ Աչաղուն մոտ էր Բաղաբերդին եւ Կկոց քարին: Տեղանունների բառարանը Կկոց քարը դնում է Կապան քաղաքի մոտ, իսկ պրոֆ. Թ.Հակոբյանն այն նույնացնում է Ղըրղալայի հետ: Ըստ այդմ՝ պատկերացնելու չէ, թե ինչպես մի գիշերվա մեջ հրոսակի բանակը կարող էր Ղըրղալայից Բաղաբերդ՝ իմա Գիրաթաղջրի գետախառնուրդը հասնել ու գրավել բերդը: Այս պարագային տրամաբանությունը հուշում է, որ Բաղաբերդը հենց Ղրղալա-Աղջկաբերդն էր, որի հարեւանությամբ գտնվող բերդերից մեկը կարող էր հարմարել Կկոց քարին: Հ.Ուբմազյանն էլ այն կարծիքին է, որ Վահանավանքը գտնվել է Բաղաբերդի հանդեպ: Սակայն այս ամենին դիմակայում է Հայր Ստեփանոսի դիտարկումը, թե Վահանավանքը Բաղաբերդի լեռան ստորոտում էր (վանքն ու Աղջկաբերդը Ողջի գետի աջ ու ձախ կողմերում են): Այլ մի թեականություն է առկա «Սյունիքի պատմություն» բուհական համառոտ դասընթացում. հեղինակները, ընդունելով, որ Բաղաբերդը Գիրաթաղջրի գետախառնուրդի մոտ է եւ անգամ, որպես ակներեւ թյուրիմացություն, Սմբատաբերդի մի լուսանկարը վերագրել են Բաղաբերդին, գրքի ներդիր քարտեզում Բաղաբերդը տեղանշել են Աչաղու եւ Նորաշենիկ գյուղերի միջեւ:

Այսքանից հետո կարող ենք վիպասանի տեղորոշած Բաղաբերդը կոչել «Սուտ Բաղաբերդ»: Հետազոտությունները վերաքննողների համար հետաքրքիր կլինի ծանոթանալ Ողջի գետի աջակողմ բարձունքում՝ Ջրախորջրի վերնագավառում գտնվող մի բերդավերակին, որը մոտ երեք հազար քառ.մ տարածք ունի, եռակողմ եզերվում է անդնդախոր ձորերով, պարսպափակ է: Ուրվագծվում են վիթխարատես մուտքը, տարածքի շինությունների հենապատերը, դեպի հյուսիսակողմ լեռնաբազուկը ձգվող բնահարմար սանդղաշարը, ջրամբարը եւ բերդադուրս այլ ավերակներ: Բերդավերակի տեղանքը տիրական է Կապանա ձորի վրա, նշմարվում է դեպի Վահանավանք ձգվող ճանապարհի աղուրը: Բաղաբե՞րդն է: Սուտ Բաղաբերդը տեղացիներն ավանդաբար կոչել են Դավիթ Բեկի բերդ: Անշուշտ, դավիթբեկյանները վերանորոգել-վերաօգտագործել են բերդը 1720-ականներին: Ակներեւ է, որ պարիսպները 3-4-րդ դարի հնություն չունեն (դեռեւս որմերում պահպանվել են գերանների ածխացած մնացորդներ): Ինչո՞ւ պատմիչի կողմից անառիկ համարված այս բերդը չգրավեց Դավիթ Բեկին, ով նախընտրեց նոր բերդի կառուցումը մոտակա Հալիձորում՝ դարձնելով իր աթոռանիստը:

Ստ.Լիսիցյանի հաղորդմամբ՝ խնդրո առարկա բերդի պարիսպների վրա կան ռմբակոծության հետքեր, որոնք այդտեղ պատսպարված թուրքերին քշելու՝ Նժդեհի թնդանոթաձգության հետեւանք են: Ի դեպ, Լիսիցյանը Գիրաթաղջրի աջակողմում է պատկերացրել Բաղակուքարը: Տեղանունների բառարանը Բաղակուքարի վանքը տեղանշել է Ջրախորջրի եւ Ողջի գետի հատման վայրի տափարակում:

Բաղաբերդի տեղորոշվածությունը թեական է եղել նաեւ դավիթբեկյանների համար: Տեր-Ավետիքն ակնարկել է Բաղաբերդի Ատոմ զորապետին եւ իր օգնությամբ՝ Ղուկաս Սեբաստացու կազմած քարտեզում Բաղաբերդի երկիր են համարել Աճանանը:

Աներկբայելի չէ, որ միջնադարյան Հին Կապան քաղաքը կայացել-զորացել է անառիկ Բաղաբերդի հովանու ներքո: Դեռ պրոֆ. Աճառյանն է հաշվարկել, որ Բաղաբերդը Ն.Ք. 1850թ. հիմնեց Սիսակ նահապետի ժառանգներից Բաղակը: Հին Կապանը 10-րդ դարում հայտնի դարձավ որպես Սյունիքի թագավորության մայրաքաղաք: Մինչ այդ էլ հայտնի էր Հին Կապանը: Երբ 958թ. Անանիա Մոկացի կաթողիկոսը Սյունիք եկավ, «նրան տարան, իջեցրին Կապան քաղաքի արքունական գահույքի վրա»:

10-րդ դարի պարսկագիր «Հուդուդ ալ Ալամ» ժողովածուն վկայում է, որ Կապանը ծաղկող քաղաք է, «արտադրում է լավ որակի շատ բամբակ»: 13-րդ դարի արաբ հեղինակի «Աշխարհի հրաշալիքները» աշխարհագրական երկում խոսվում է դժվարամատչ նահանգի մասին, որ ունի ամրոցների բազմություն: Դա, ըստ Միկլուխո-Մակլայի մեկնաբանության, Կապան քաղաքի շրջակայքի մասին է: Կապան քաղաքը վկայակոչել է նաեւ արաբ աշխարհագիր Յակուտ ալ Համավին:

Քաղաքն ավերվեց 1103թ.՝ «բազմաթիվ հետեւակ ծերպամուտ ու քարագնաց զորականներ բարձրացան ապառաժոտ լեռան գլուխը եւ հեղեղատի մեծ հունով իջան քաղաք, քանի որ այդ տեղը պարսպափակված չէր՝ մարդկանց մուտքի համար անհնարին լինելու պատճառով: Սկսեցին կոտորել Ջհտաթաղի կողմից»: Օրբելյանական այս նկարագրությունը խանդավառել է տեղորոշողներին. որտե՞ղ էր Ռաֆֆու ասած՝ Սյունիքի մեռած մայրաքաղաքը: Բնապատկերային առումով քաղաքատեղին հավակնում են Ղրղալայի բերդախումբը, Աչաղուն՝ ջրվեժով, Տանձուն լենջը եւ Վերին Ջրախոր գյուղատեղին: Ռաֆֆին հավակնել է Վերին եւ Ներքին Ջրախոր գյուղերի տարածքին: Տեղանունների բառարանն ամրագրում է Տանձուն լենջի տարածքը, որտեղ դպրոցականների ճամբարներն են: Այս պարագային հանելուկ է մնում, թե ինչ տրամաբանությամբ կամ դիպվածով այդ բաց՝ ոչ շրջափակ տեղանքին կպատշաճեր կապան-լեռնանցք բնորոշումը: Ի դեպ, վայրն ունի հեթանոսական մշակույթի երեւակումներ. ցայժմ պահպանվել են փորածո քարանձավը, եւ, ըստ իս՝ զոհաբերությունների քարե հարթակը:

Հետամուտ լինելով Հին Կապանի տեղորոշմանը՝ Ստ.Լիսիցյանն առավել հակվել է արեւմտակողմ տարածքին՝ Ջրախորջրի մերձակայքին, անգամ մատնանշել այն հեղեղատը, որտեղով ասպատակեց թշնամին: Ջհտաթաղը ոմանք հրեական թաղամաս են համարել (ջհուտ-ջհո՞ւդ), իսկ ըստ Ս.Ումառյանի՝ այն պղնձագործության թափոններից լաջվարդի երանգ առած թաղամաս էր:

Ղ.Սեբաստացու քարտեզում հին քաղաքի ավերակներն օտարահունչ անվամբ տեղանշված են Հալիձորի եւ Բեխի միջեւ: Բայց եւ, որ մտորելի է, հնավայրին մոտ է տեղորոշված Ղրղալա-Աղջկաբերդը:

Պրոֆ. Գր.Գրիգորյանը համոզված է, որ Հին Կապանի տարածքի մեջ են մտել նաեւ Աչաղու, Շհարջիկ գյուղերը եւ Վահանավանքը՝ իր բնակատեղիով:

Վահանավանքի կալվածքի օրբելյանական նկարագրության մեջ սահմաններ են նշված քաղաքի հավելյալ պարիսպն ու Տանձափարախի ձորը: Ի դեպ, այժմ էլ նշմարվում են պարսպի հետքեր վանական համալիրի եւ Տանձուն լենջի միջակա տարածքում: Բայց եւ հզոր մի պարսպահետք կա Ներքին Ջրախորից մինչեւ Աչաղու բնակավայրի արեւելակողմ ձորալանջը:

Պրոֆ. Թ.Հակոբյանը Տանձափարախը նախանշել է Տանձուն լենջի ձորում (համանուն՝ Տանձոլենջ անվամբ տեղանք կա Հավուց թառի վանքի մոտ, Գառնի գյուղից արլ): Ալիշանը Տանձափարախի մենաստանը պատկերացրել է Բաղքի հրարմ կողմում՝ «Խնկանց գիւղդ յերի անապատին Տանձափարախու»: Մուրադ Հասրաթյանը Տանձափարախ է ճանաչել Բեխի մերձակա Արիստակա անապատը, որը Ս. Բարխուդարյանը համարել էր Փառուարտա վանք:

…908 տարի առաջ, երբ թշնամին ավերեց Հին Կապանը, «սա եղավ այս աշխարհի ավերման սկիզբը, եւ այդ թագավորությունն օրըստօրե սկսեց թուլանալ ու ապա վերացավ: Այն ուներ իրեն ենթակա քառասուներեք բերդ, որոնցից տասներկուսն անվանի էին, քառասունութ վանք, հազար ութ գյուղ, մայրաքաղաքն էլ Կապանն էր»: Եվ այդքանից տեղորոշվածները՝ համոզիչ կամ թեական, փոքր թիվ են կազմում: Նորօրյա եւ ապագա ուսումնասիրողներին հաճելի ու ծանր աշխատանք է սպասվում:

**Ծանոթություն**

Բաղաբերդի տեղադրության հարցի քննարկման շարունակությունը՝ էջ 82-83-ում:

■

**1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ**

**ՊԱՏՄԱԿԱՆ ԴԵՄՔԵՐ**

# ՂԱՀԱՆԴՈՒԽՏ Ա

**Առաքելությունն՝ ի նախախնամություն:** Արեւելյան Հայաստանի վերջին՝ Սյունիքի թագավորության (970-1170) առաջին թագուհին է՝ Սմբատ Ա արքայի կողակիցը, հարսնությունը՝ Աղվանից տնից, դուստր Խաչենի եւ Ուտիքի իշխան Սահակ Սեւադայի: Սյունիքի թեմական առաջնորդ, պատմիչ Ստ.Օրբելյանի երկից (1297թ.) մակաբերվում է, որ ամուսնու հետ եւ նրա վախճանվելուց հետո հովանավորել է մշակույթը, վայելել շինարարի փառք ու համբավ:

**Հերանք:** Գրիգոր-Համամի որդի, քաջ ու բարեպաշտ իշխան Սահակ Սեւադան հորից ժառանգել էր Փառիսոսի իշխանությունն ու դրան միացրել Արցախի հարեւան Գարդման եւ Ջորոգետ գավառները: Նրա հաճությամբ դուստրերի ձեռքը խնդրել էին անվանի իշխանական տոհմերի երեւելի զավակները. Շահանդուխտինը՝ Սյունիքի գահերեց իշխան Սմբատ Սահակյանը, Սահականույշինը՝ Հայոց գահի ժառանգորդ Աշոտ Երկաթ Բագրատունին: Սահակ Սեւադան անմասն չէր Սյունիքում ծավալված իրադարձություններին՝ սատարում էր համախմբմանն ու իշխանության կազմակերպմանը: Ս.Սեւադան բուռն սեր ու հոգածություն ուներ մշակույթի ու դպրության նկատմամբ, որ ժառանգել էր հորից: «….իր տանը դպրապետներ կարգեց» (Կղնկ.):

**Անունը:** Հազարամյակների խորքում հայերենն ու պարսկերենը քույր լեզուներ են, բազմաթիվ բառարմատներ նույնն են երկուսի համար: Արդի ընկալմամբ Շահանդուխտ անունն արքայադուստր է նշանակում՝ շահան-թագավորաց, դուխտ-դուստր: Պատմության հոլովույթում հայոց մեջ տարածված էր հատկապես իշխանական տներում: Մեկ այլ՝ Վարազ-Տրդատի դուստր Շահանդուխտի անվամբ ցայժմ հայտնի են ժայռ, մատուռ, բերդագյուղ Գինական գետի (Տաթեւջուր) աջակողմ բարձունքներում: Իսկ Շահանդուխտ Ա թագուհու անվամբ ավանդասեր սյունեցիները երբեմն կոչում են գորիսակողմ Տեղ գյուղը:

Գործն է անմահ…: Պատմության սանդուղքի վրա թագուհիները մեծամասամբ երեւում են պերճանքի ու քմահաճությունների հետնախորքի վրա: Շահանդուխտի պարագայում դույզն-ինչ այդպես խորհելը սրբապղծություն կլիներ. մեր ստուգապատում պատմիչը՝ հիացած նրա շինարարական գործունեությամբ, այլ մանրամասների չի անդրադարձել: «Երանելի թագուհի Շահանդուխտը… աստվածային մի հիշեցումից մղված, շինում է Վաղատնի գեղեցկակերտ ու վայելչաձեւ վանքը, որը դեռ վաղուց ուխտադիր մարդկանց վայր էր, որովհետեւ այնտեղ վաղ ժամանակներից մի եկեղեցի կար Սբ Գրիգոր Լուսավորչի անունով… Այստեղ հենց այժմ էլ տեսնում ենք անպատմելի հրաշքներ. թունավոր զեռուններից խայթված, սեւացած ու պայթելու աստիճան ուռածներին հանում են բարձրադիր լեռները, ցույց են տալիս վանքը եւ կամ եկեղեցուց մի քիչ հող են հասցնում, մակարդված թույնն իսկույն քայքայվում է, ու հիվանդը՝ բուժվում: Այդ պատճառով մեծ բարեպաշտ Շահանդուխտը կոփածո քարերով եկեղեցի է շինում՝ սուրբ նախավկա Ստեփանոսի անունով, հայոց ՆԽԹ թվականին (1000թ.), այնտեղ հաստատում է կրոնավորների ու վանքի բազմաթիվ սպասավորների տուն: Եկեղեցու բակում շինում է նաեւ աղոթատուն՝ կրաշաղախ քարե շարվածքով, ինչպես նաեւ պահեստներ, արհեստանոցներ, եւ վանքը շրջափակում պարսպով» (Օրբ.):

Պատմիչի՝ Սիսական տան պատմության մեջ պահպանվել է մի վճռագիր, որով Շահանդուխտ թագուհին Տաթեւի վանքին է նվիրաբերել Տեղ գյուղը 998 թվականին: «Տեղ կոչված գյուղը, որ ինձ էր նվիրել իմ թագավոր Սմբատը, եւ ես խոպան տեղից գյուղ էի դարձրել, իմ երանելի թագավորի վախճանից հետո, նրա հոգու համար Տաթեւի սուրբ կենտրոնական վանքին ու սուրբ նշանին տվեցի…»(Օրբ.):

**Սերնդագործությունը:** Սմբատ թագավորն ու Շահանդուխտ թագուհին երեք զավակի ծնողներ էին՝ Վասակ, Սեւադա եւ դուստր, որ Բաղքի գահակալ իշխան Աշոտի կինն էր: Սմբատ արքայի վախճանից հետո գահին բազմեց Վասակ որդին, ում պատմիչը մեծարում է Կտրիճ պատվանունով: Վերջինիս եղբայր Սեւադան հռչակվեց իշխանաց իշխան: Շահանդուխտի թոռնուհին՝ Վասակ Կտրիճի դուստր Կատրամիդեն, ամուսնացած էր Աշոտ 3-րդ Ողորմածի որդի Գագիկ Ա Բագրատունի թագավորի հետ: Կատրամիդե թագուհին հայտնի է Անիի Սուրբ կաթողիկե երկնաճեմ սրահակի շինությամբ, Սյունիքի մետրոպոլիտության աստիճանի վերականգնման ջանքերով:

Շահանդուխտ Ա-ի աղջկաթոռ Գրիգոր Ա թագավորի կողակիցն էր Շահանդուխտ Բ թագուհին՝ դարձյալ Աղվանից տնից:

**Հանգչիմ ի Քրիստոս:** Ամուսնու՝ Սմբատ արքայի վախճանից հետո Սյունիքի (Բաղքի կամ Կապանի) թագավորությունը կառավարում էր Վասակ որդին, եւ նրան զորավիգ էր իմաստախոհ մայրը՝ Շահանդուխտ թագուհին: Թե որքան զուգահեռեց թագավոր որդուն, տակավին պարզված չէ: Վախճանվեց ու ամփոփվեց Վաղատնի (Որոտնավանքի) սրբարանի բակում: Սբ Ստեփանոս եկեղեցվո արեւելյան պատուհանի պսակի քարի վրա Ս.Բարխուդարյանը կարդացել-լուսանկարել է «ՇԻՆԵՑԱՒ ՀՐԱՄԱՆՈՎ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՍՆՊԱՏԱ Ի ՁԵՌՆ ՇԱՀԱՆԴԽՏՈ ԲԱՐԵՊԱՇՏ ԹԱԳՈՒՀՈՅ» արձանագրությունը:

**ՌՈԲԵՐՏ ԷՋԱՆԱՆՑԻ**

# Շահանդուխտ արքայազն աղջկա եւ մեր Սյունյաց աշխարհում կատարված մեծ ու ահազդու հրաշքի մասին

Ստեփանոս Օրբելյան, «Սյունիքի պատմություն», էջ 169

Ո՛վ եղբայրներ, ցանկանում եմ ձեզ պատմել այն զարմանալի հրաշքի մասին, որ այն ժամանակ եղավ աստվածային տնօրինությամբ: Աղվանքի գահերեց իշխան Վարազ Տրդատը մի դուստր ուներ՝ Շահանդուխտ անունով: Նրա կերպարանքն արտասովոր էր ու հրաշալի. չքնաղ գեղեցկությունը զարմանք էր պատճառում տեսնողներին: Ոչ ոքի չէր թվում, թե նա նյութեղեն է. այլ կարծես թե կերպարանավորված էր լուսատարր օդից ու նրբանուրբ շողերից: Նրան հարս խնդրեցին Թորգոմյան տնից: Եվ նա դուրս ելավ իր աշխարհից, հայրենի տնից գնաց՝ կին դառնալու հայ իշխանին: Մտնելով Բաղաց աշխարհը՝ անցնում էր ապահով տեղանքի ճանապարհով, մի ապառաժոտ վայրով, որտեղ մի քարաժայռի փլվածք էր՝ ահռելի խորությամբ, որն անդունդի նման ուղղված էր դեպի Տաթեւի մեծ հայրապետանոցի կողմը: Հենց այնտեղ թաքնված, ծվարած էին սուսերամերկ զորքի լեգեոնախումբ ջոկատներ, որոնք Շահանդուխտի սքանչելի գեղեցկության պատճառով եկել էին Պարսկաստանից, հսկում էին ճանապարհների անցքերն ու կիրճերը, որ հափշտակեն այդ աղջկան:

Ուղեւորներն այդ բանին իրազեկ չէին: Ձինված խմբերը հանկարծակի հարձակվեցին նրանց վրա եւ սրերը քաշած սկսեցին անխնա կոտորել [այս] քրիստոնյաներին: Ապա խորահավատ օրիորդն այս տեսնելով հասկացավ պատճառը եւ, տերունական խաչով երեսին խաչ հանելով, ձին մտրակեց ու թռավ քարաժայռի փլվածքը: Այս [տեղեկությունը] գտանք մի հնացած նամակում, որը իր իսկ՝ Շահանդուխտի ձեռքով էր գրված այսպես. «Ես՝ Քրիստոսի մեղավոր աղախին Շահանդուխտս, Վարազ Տրդատի դուստրս, Թորգոմյան տունը հարս էի գնում, հասա Բաղքի սահմանները, այս քարաժայռի գլուխը, որտեղով ճանապարհն է անցնում: Ահա [այստեղ] ինձ հանկարծակի հանդիպեցին իսմայելացիները, որոնք իմ հռչակված գեղեցկության պատճառով կամենում էին ինձ հափշտակել: Նրանք սրերը քաշած կոտորեցին ինձ հետ եղած հեծելագունդը: Եվ ես լավ համարեցի գայլաբարո այլազգիների ձեռքով կորչելու փոխարեն գահավիժումով մեռնել իմ Քրիստոսի համար: Եվ հիշելով սուրբ Աստվածածնին ու սուրբ Հռիփսիմեին՝ ինձ հանձնեցի սուրբ երրորդությանը. ողորմելի անձս խաչակնքեցի սուրբ խաչով եւ ձիու սանձը ետ դարձնելով՝ թռա քարաժայռից: Քամու ուժգին հոսանքով, աներեւույթ զորությամբ, կարծես թե կառքով իջա այս ձորի խորխորատը, ձիս էլ հետս՝ անվնաս: Այնտեղ դադար առնելով՝ մեծ հիացումով խիստ գոհունակություն վերառաքեցի ինձ այդպես փրկողին եւ այս անդորր տեղում իմ անձը նվիրեցի Քրիստոսին, ուխտեցի այլեւս այստեղից դուրս չգալ մինչեւ կյանքիս վերջը: Իսկ իսմայելացիներն այս տեսնելով մեծ զարմանքով անվնաս թողեցին իմ զորախմբի [մնացած մասը] եւ գնացին: Ես էլ այստեղ շինեցի մի մատուռ ու մի խցիկ, որտեղ ճգնեցի կյանքիս [մնացած] ամբողջ ժամանակամիջոցում: Թեեւ ծնողներս ու հարսնածու իշխանները շատ թախանձեցին, բայց ես տեղիցս չշարժվեցի: Հրավիրելով Սյունյաց երանելի եպիսկոպոսին՝ ենթարկվեցի նրան եւ իմ ամբողջ ունեցվածքը տվեցի նրա ձեռքը՝ կես մասը բաժանելու կարիքավորներին, կեսն էլ տալու Տաթեւի սուրբ եկեղեցուն: Նաեւ սուրբ եկեղեցուն ավանդեցի այս տեղերը՝ ամբողջ ձորով հանդերձ, որ ընկած են Շնհերի(1) սահմանից վեր, մինչեւ Գինական(2) գետը»: Եվ սա Շահանդուխտը հենց իր ձեռքով էր գրել: Նա, մնալով այնտեղ, իր մոտ է հավաքում ուրիշ կույսերի եւ տառապալից ճգնությամբ ապրելով երեսուն տարի՝ մեռնում է: Եպիսկոպոսը գնալով թաղում է նույն տեղում սրբի երանելի մարմինը, որի բարեխոսությամբ Քրիստոսը թող խնայի այս տունը եւ սրան բաժին ընկած հարազատ հոտին:



**Հալիձորի անտառում գտնվող այս դիտակետի դիմաց՝ Որոտան գետի աջ ափին Հարսնաձորն է, կամ՝ Շահանդուխտի ժայռը**

**Ծանոթագրություն**

1. Շնհերը Ս.Օրբելյանի երկում բերված հարկացուցակում նշվում է Շնոյ հերք ձեւով: Մեծ գյուղ է եղել (24 միավոր հարկաբաժնով): Շնհեր անունով պահպանվել է մինչեւ մեր ժամանակները: Այժմ մտնում է Գորիսի շրջանի մեջ: Կառուցված է նոր ավան:

2. Գինական գետը Ալիշանի կարծիքով Տաթեւ անունը կրող գետակն է («Սիսական», էջ 223): Գտնվում է Գորիսի շրջանում: Այս շրջանում գտնվում է նաեւ այն ժայռը, որը տեղացիները, ըստ ավանդության, կոչում են Շահանդուխտի անունով: Ազգագրագետ Ե.Լալայանն իր ժամանակին նշել է, որ Տաթեւից մի քանի կիլոմետր հարավ դեպի Որոտան գետի ափն ուղղահայաց իջնող երեք բլուրներից երկրորդը, որ ժայռապատ է, Շահանդուխտի անունով կոչվող ժայռն է (Զանգեզուր գաւառ, Նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար, Ա հատոր, Սիսիան, Թիֆլիս, 1898, էջ 55):

# ՂԱՀԱՆԴՈՒԽՏ Բ

Յոթնարքա երկրի ոսկեծղի տիրուհի: Սյունիքի թագավորության 200-ամյա ժամանակաշրջանում կառավարել են միմյանց հաջորդած յոթ տիրակալներ: Չորրորդը՝ Գրիգոր Ա Աշոտյան արքան, թագավորել է 1051-1072թթ.: Նա կնության էր առել Սահակ Սեւադա Ա-ի թոռ Սեւադա իշխանի դուստր Շահանդուխտին, որին իր հոր հորաքրոջից՝ Շահանդուխտ Ա-ից, տարբերելու համար ետիները կոչել են Շահանդուխտ Բ: Ամենաօրհնյալ բարեպաշտուհին կարողացավ դիմակայել վրահաս դժբախտություններին. վախճանվեց ամուսինը՝ Գրիգոր արքան, 1094թ. դավադրության զոհ գնաց եղբայրը՝ Սյունիքի Սենեքերիմ թագավորը, Գրիգոր-Շահանդուխտ թագավորական զույգը զավակ չունեցավ…: «Բաղքի Գրիգոր թագավորի օրոք, ինչպես եւ Շահանդուխտ թագուհու, Կատայի, Սենեքերիմ թագավորի կողմից բազմաթիվ ու գեղեցիկ կառուցումներով առավել գեղեցկացվեց Վահանավանքը: Կանգնեցրին մեծամեծ կամարներ՝ վրաները եկեղեցիներ, բազմասյուն ու բարձրահարկ սրահներ, իշխանական հովանոցներ ու խրախճարաններ » (Օրբ.): Ոսկեծղի տիրուհու անվամբ կառույցներ են պահպանվել մինչեւ մեր ժամանակները:

Դինաստիական անցում: Քանի որ Գրիգորն ու Շահանդուխտն անզավակ էին, ապա, իշխաններիր հետ խորհուրդ անելով, որպես թագավորության ժառանգորդ՝ Աղվանքից բերում են «Շահանդուխտի եղբայր, թագավորազն մանուկ Սենեքերիմին՝ խիստ գեղեցիկ տեսքով, առողջ կազմվածքով, իմաստուն ու հանճարեղ, այլեւ՝ աստծուց երկյուղած» (Օրբ.): Արդ, Սյունիքի թագավորական դինաստիան շարունակվում է Աղվանք-Արցախի թագավորազուններով: Ընդլայնվում են երկրամասերի ռազմական, տնտեսական կապերը: Աղվանքի երեւելիները բազմակի առումներով ապավինում էին Կապանա տանը: Վահան Ջեւանշերյանը Վահանավանքի «եկեղեցու բակում կառուցեց մեծ աղոթատունը՝ վիմակերտ մահարձաններով, որտեղ թաղված են Աղվանքի եւ Բաղքի շատ թագավորներ ու թագուհիներ, Սիսական աշխարհի բազմաթիվ փառավոր իշխաններ»: Ճողոպրելով թշնամիներից՝ Կապան եկավ Աղվանքի Տեր-Ստեփանոս կաթողիկոսը, վախճանվեց ու թաղվեց Վահանավանքում 1091թ.:

Սենեքերիմ արքայի եղերական մահից հետո իշխանությունը ստանձնեց նրա որդի Գրիգորը: Մերօրյա հետազոտողները նրա գահակալությունը հաշվարկում են 72 տարի՝ 1094-1166: Ի դեպ, ըստ պատմիչի՝ «….իշխանությունը ստանձնեց Սենեքերիմի որդի Գրիգորը՝ թագավորելով քիչ ու թույլ» (Օրբ.): Թյուրըմբռնումն ի դերեւ է լինում, եթե մակաբերենք, որ թագավորության փաստացի կառավարումը մոր՝ Շահանդուխտի ձեռքում էր, թերեւս մինչեւ իր մահը՝ 1116թ.:

**Միջնադարյան դիվանագիտության սնանկությունը:** 11-րդ դարում սելջուկներն ասպատակում էին տարածաշրջանը, որը «ենթարկված ու հարկատու էր նրանց» (Օրբ.): Բայց Մելիքշահ սուլթանը խաղաղասեր գտնվեց, որից «թագավորական պատվով մեծարվում էր Սենեքերիմը, որը

Շարունակությունը՝ էջ 50

1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

# Բաղքի Զագիկյանների գահակալ իշխանների տունը

## ԸՍՏ ՀԱՅԿԱՐԱՄ ՈՒԹՄԱՋՅԱՆԻ «ՍՅՈՒՆԻՔԸ IX-X ԴԱՐԵՐՈՒՄ»

Գահակալ իշխանների մի այլ տուն, 9-րդ դարի վերջերից, հանդես է գալիս Բաղքում: Ղ.Ալիշանը, խոսելով Բաղք գավառի աշխարհագրության մասին, կազմել է նաեւ իշխանական այդ տան ներկայացուցիչների հաջորդական սխեման, որը սակայն ունի ակնառու սխալներ: Այդ տան մեզ հայտնի իշխաններից առաջինը Զագիկն է:

### 1. Զագիկ 1-ին

Անհրաժեշտ ենք համարում մեջ բերել Զագիկ 1-ինի մասին եղած բոլոր վկայությունները ժամանակագրական կարգով:

1. Խոսելով Տաթեւի կաթողիկեի կառուցման նախապատրաստությանը մասնակից իշխանների մասին (895 թվին), Աշոտ գահերեց եւ Սուփան 2-րդ իշխաններից հետո Ս.Օրբելյանը նշում է՝ «Եվ միւս իշխանին, որ Բաղա՝ Զագիկ կոչեցելոյ՝ հօր Զեւանշէրի»(1)

2. Տաթեւի նոր սահմանները որոշող 906 թվի սիգելի սկզբում Աշոտ գահերեցի եւ այլ իշխանների թվում հիշվում է նաեւ «տէր Զագիկ եւ որդի Զեւանշէր», իսկ վերջում, մյուս իշխանների թվում կա նաեւ Զագիկի ստորագրությունը, «մէք Զագիկ եւ Հրահատ Սիւնի վկայեմք այսմ վճռի»(2):

3. Խոսելով 10-րդ դարի սկզբների մասին, Ս.Օրբելյանը գրում է. «Պայծառանայր եւ յայն աւուրս... ի Սիսական տոհմէ Զագիկ՝ մեծ իշխանն, ամենայն բարեպաշտութեամբ, որ ունէր ի բաժնի զԲաղաց գաւառն եւ զԿապան քաղաք, որ յետ բազում բարեկարգութեանց վախճանի. եւ դնի ընդ հարս իւր»(3):

Ինչպես տեսնում ենք, Զագիկը, որպես Բաղքի իշխան, առաջին անգամ հիշվում է 895 թվին, իսկ վերջին անգամ 906 թվին: Այս վկայություններից չի երեւում, թե Զագիկը երբ է դառել Բաղքի իշխան եւ ովքեր են նրա նախնիները: Ղ.Ալիշանն առաջարկում է մի անընդունելի ծննդաբանություն: Նրա կարծիքով, այս Զագիկից առաջ եղել են, իբրեւ նրա նախնիներ, էլի երեք իշխաններ: «Զայնու ժամանակաւ (821 թվի մասին է խոսքը – Հ. . Ութ.), - գրում է Ալիշանը, - ի բաժանել իշխանացն Սիսականաց զգաւառս Սիւնեաց՝ երեւի Վահան ոմն ժառանգորդ գաւառիս Բաղաց, ժամանակակից Վասակայ տեառն Սիւնեաց եւ նոր նահապետի Սիսականց. քանզի որդի նորին Զագիկ իշխան Բաղաց յիշի յամի 844. այս յետին անուն (Զագ) եւ Զուանշէր՝ յաճախ լսին ի պայազատս տոհմին ցվերջ Ժ դարու, եւ մարթի կարգել ծննդաբանութիւն այսու օրինակաւ»(4): Եվ ապա նա տալիս է ծննդաբանության սխեման, որի առաջին երեք իշխաններն են՝ Վահան, Զագիկ 1-ին (կողքը դնում է 844 թ.), եւ Ա. Ա.: Ալիշանը, իբրեւ Ա. Ա-ի որդին է համարում Զագիկ 2-րդին, որը եւ է մեր քննության ենթակա Զագիկը(5):

Ղ.Ալիշանը սխալվում է. նախ այն պատճառով, որ սկզբնաղբյուրներով չի ապացուցվում այդ դրույթի ճշտությունը, ըստ որի իբր թե Վասակ մեծ նահապետի ժամանակ (821 թվին) Սյունիքը բաժանվել է Սիսական իշխանների միջեւ: Նման բաժանումը եղած պետք է լիներ մինչ այդ, նախարարական սիստեմի քայքայման ընթացքում: Երկրորդ, այն պատճառով, որ Ալիշանի մատնացույց արած Վահանի որդի Զագիկ 1-ինը,

որը, իրոք, հիշվում է 844 թվին, իշխան չէ: Նա հիշվում է Փիլիպպե 1-ինի 844 թվագիր սիգելի երկրորդ կարգի վկաների, ազատների ցուցակում. «...նոյնպէս եւ յիմ ազատաց Հոռ, Քուրդոյ..., Զագիկ՝ Վահանայ որդի...»(6): Ուրեմն, այստեղ հիշված Վահանի որդի Զագիկը ոչ թե իշխան է, այլ «ազատ»՝ եւ այն էլ Վայոց ձորի գահերեց իշխանի ազատներից: Եթե Ղ.Ալիշանը ելնում է այն բանից, որ Փիլիպպեի այս «ազատ»-ի անունը նման է՝ հետագայում Բաղքում հանդես եկած իշխանների Զագիկ անվանը, ապա նա այդ նույնը կարող էր անել Փիլիպպեի ազատների այդ նույն ցուցակում նշված ոմն «Զեւանշէր՝ Թեոդորոսի որդի» անվան հետ, քանի որ Զեւանշեր անունն էլ բնորոշ է Բաղքի իշխանական այս տան համար:

Այս բոլորի հիման վրա ժխտվում է Ալիշանի նաեւ այն պնդումը, որ Վահանը (ըստ նրա՝ Զագիկ 1-ինի հայրը) Վասակ մեծ նահապետի ժամանակ (821թ.) Բաղքը ստացել է իբրեւ ժառանգություն: Պարզ հասկանալի է, որ եթե 844 թվին Զագիկը Վայոց ձորի իշխանի «ազատն» էր, ապա նրա ազատներից էր նաեւ նրա հայրը՝ Վահանը: Հետեւապես, չենք կարող ընդունել Ալիշանի այն պնդումը, որ իր սխեմայի առաջին երեք անձնավորությունները՝ Վահան, Զագիկ 1-ին եւ Ա. Ա. իշխաններ էին:

Մեր կարծիքով, Բաղքի իշխանական այս տան առաջին իշխանը Ալիշանի նշած Զագիկ 2-րդն է, Ա.Ա-ի որդին, որին մենք անվանում ենք Զագիկ 1-ին, եւ որին սակայն մենք չենք համարում Ալիշանի նշած Ա. Ա-ի որդին: Այլ կերպ ասած, մենք այս տան իշխանների հաջորդականությունը սկսում ենք Ղ.Ալիշանի սխեմայի 4-րդ իշխանից, համարելով նրան առաջին իշխանը:

Համաձայն չենք Ալիշանի հետ նաեւ այն բանում, որ նա այս Զագիկի իշխանության շրջանը դնում է 895-906 թվերը: Ս.Օրբելյանի վերոհիշյալ վկայություններում չի ասվում այն մասին, որ Զագիկը իշխան է դառել 895 թվին եւ մահացել է 906 թվին: Այդ թվերին մենք նրան տեսնում ենք միայն գործի մեջ: Անշուշտ, դեռ 895 թվից առաջ էլ Զագիկն իշխան էր եւ այն էլ բավականաչափ ազդեցիկ իշխան, որ կաթողիկե եկեղեցու կառուցման համար եպիսկոպոսը դիմել է նրան՝ խորհուրդ եւ օժանդակություն ստանալու համար: Իսկ նրա մահվան տարեթիվն ընկնում է 906-911 թվերի արանքը, որովհետեւ, ինչպես կտեսնենք, 911 թվին իշխան էր նրա որդին՝ Զեւանշերը:

Այս Զագիկ 1-ին իշխանի եւ ընդհանրապես այս տան կալվածքների մասին ունենք վերեւ մեջբերված 1-ին եւ 3-րդ վկայությունները միայն: Մենք գիտենք արդեն, որ 9-րդ դարում, Վասակ մեծ նահապետի, նրա որդի Փիլիպպե 1-ինի եւ հաջորդների ժամանակ Բաղքը հանդիսանում էր գահերեցների կալվածքը: Իսկ այժմ, ինչպես տեսնում ենք, այն համարվում է Զագիկյանների կալվածք: Այնուհետեւ, 9-րդ դարի ընթացքում Բաղքի մի մասը, Քաշունիքը պատկանում էր Կովսական գավառի իշխաններին (տե՛ս չորրորդ ծյուղը): Բացի այդ, ինչպես գիտենք, 10-րդ դարում, երբ գահերեց Սմբատ 1-ին իշխանը հայրենական ժառանգությունը բաժանեց իր եղբայրների հետ, Սահակին եւ մյուս եղբայրներին բաժին ընկավ նաեւ Բաղքը (տե՛ս Սահակի բաժինը): Ուրեմն, Բաղք կոչված գավառը 9-րդ դարի վերջերում բաժանվել է երկու մասի, որոնցից մեկը կոչվել է Բաղք, իսկ մյուսը՝ «միւս Բաղք», վերջինս կոչվում էր նաեւ Քաշունիք: Բաղքն այս բաժանված ձեւով էլ մտել է Ս.Օրբելյանի հարկացուցակի մեջ(7) (տե՛ս նրա հարկացուցակի 8-րդ եւ 9-րդ գավառները):

Այս բոլորը մեզ հանգեցնում են հետեւության. 9-րդ դարի ընթացքում Բաղքի մի մասը (հարավարեւելյան), որը կոչվել է Քաշունիք, պատկանել է Կովսականի գահակալ իշխաններին, իսկ բուն Բաղքը (հյուսիսարեւմտյան մասը) պատկանել է գահերեցներին: Հետագայում, 9-րդ դարի վերջում, երբ հզորանում են Զագիկյանները, Քաշունիքը (մյուս Բաղքը) Սահակյաններից անցնում է Զագիկյաններին, ընդ որում Սահակյանները ետ են մղվում, իսկ՝ բուն Բաղքը նորից մնում է գահերեցների ծյուղի (Սահակի) սեփականությունը:

Այսպիսով, Զագիկյանների կալվածքներն էին՝ Կապան քաղաքը (Ձորք գավառում) եւ մյուս Բաղքը-Քաշունիքը: Ստորեւ կտեսնենք, որ Զագիկյանների նստավայրը Կապան քաղաքն էր:

Այս Զագիկ իշխանն ունեցել է երկու որդի՝ Զեւանշեր եւ Վահան, «թողու ժառանգ զքաջազօրն Զեւանշէր եւ զՎահան»(8):

### 2. Զեւանշեր 1-ին

Զեւանշեր 1-ինը Զագիկ 1-ինի ավագ որդին էր, ինչպես այդ ցույց է տալիս վերոհիշյալ վկայությունը: Ս.Օրբելյանը շարունակության մեջ վկայում է, որ Զագիկին հաջորդել է Զեւանշեր որդին. «որ եւ պայազատէր զտէրութիւն նորա Զեւանշէր բազում ժամանակօք»(9): Թե ե՞րբ է տեղի ունեցել այս հաջորդումը, որոշակի դժվար է ասել, քանի որ Ս.Օրբելյանը ոչինչ չի հայտնում այդ մասին: Բայց գիտենք, որ 911 թվին, երբ սրա եղբայր Վահանը կառուցեց Վահանավանքը, Բաղքում իշխան էր Զեւանշեր 1-ինը (տե՛ս ստորեւ): Ուրեմն, նա իր հորը հաջորդել է 906-911 թվերի արանքում: Ս.Օրբելյանն այս Զեւանշերին անվանում է քաջազոր. կարելի է ենթադրել, որ նա իր քաջազորությունը ցուցադրել է Յուսուֆի 909-915 թվերի ասպատակումների ժամանակ:

Ղ.Ալիշանն այստեղ եւս, մեղանչելով փաստերի առաջ, այս Զեւանշերին իշխան է համարում 906 թվից, իսկ 911 թվին իշխան է նշում Զագիկ 2-րդին: Ալիշանը պարզապես անտեսել է Ս.Օրբելյանի այն վկայությունը, որ 906 թվին իշխան էր Զեւանշերի հայրը՝ Զագիկ 1-ինը եւ ոչ թե այդ Զեւանշերը, իսկ 911 թվին, երբ Զեւանշերի եղբայրը շինում էր Վահանավանքը, Բաղքում իշխան էր ոչ թե Զագիկ 2-րդը, այլ հենց այս Զեւանշերը(10):

Ս.Օրբելյանի մի վկայությունից իմանում ենք, որ Զեւանշեր 1-ինն ունեցել է Վահան անունով մի տղա, որը, ինչպես կտեսնենք, դարձել է հոգեւորական: Բայց, հավանաբար, Զեւանշերն ունեցել է նաեւ Զագիկ անունով մի այլ տղա:

### 3. Վահան 1-ին

Վահան 1-ինը Զագիկ 1-ինի կրտսեր որդին եւ Զեւանշեր 1-ինի եղբայրն(11) էր: Ս.Օրբելյանը վկայում է, որ Զեւանշեր 1-ինի եղբայր այս Վահանը «յանկարծակի ի չար դիւէ բախեալ եւ լլկեալ»(12): Այդ պատճառով էլ Վահանը հրաժարվում է աշխարհիկ կյանքից, դառնում է կրոնավոր եւ երկար ժամանակ ճգնելուց հետո, իր «պղծեալ հոգին» մաքրելու համար շինում է մի եկեղեցի(13): Մի այլ տեղ Ս.Օրբելյանը գրում է. «Որպէս ի վերագոյնն ասացաք, Վահան ոմն՝ որդի Զագիկ իշխանի, եղբայր Զեւանշերի, վասն դիւաբախ մոլեգնելոյն եղեւ կրօնաւոր, եւ կամեցաւ շինել վանս..,»(14): Նա Բաղաբերդի հանդեպ, մի հարթության վրա կառուցում է մի վանք եւ այն «կոչէ Վահանավանք»(15) իր անունով: Շինության ժամանակի մասին Ս.Օրբելյանը վկայում է՝ «Եվ շինութիւն սուրբ ուխտին յ360 (=911թ.) թուականին Հայոց, ի թագաւորութեանն Սմբատայ Բագրատունւոյ, յիշխանութեանց Սիւնեաց գահերէց իշխանին Սմբատայ՝ որդւոյ Աշոտոյ, ի Բաղաց Զեւանշէրի, յեպիսկոպոսութեան Սիւնեաց՝ տեառն Յովհաննիսի»(16):

Ինչպես տեսնում ենք, այս վկայությունն ուղղակի ասում է, որ 911թ. Բաղքում իշխան էր Զեւանշերը եւ ոչ թե Զագիկ 2-րդը, ինչպես սխալ կերպով կարծում է Ալիշանը: Ղ.Ալիշանի սխեմայում հիմնական սխալը սա է, որից բխում են նրա բոլոր հետագա սխալները:

Այս վկայությունները նաեւ ցույց են տալիս, որ Զագիկ 1-ինի Վահան որդին դառնում է կրոնավոր եւ շինում է Վահանավանքը: Ալիշանը, հակառակ այս փաստերին, կամայականորեն այս Վահանին էլ տեղահանում է իր այս տեղից եւ տանում ստորեւ ու դարձնում Զագիկ 2-րդի որդին եւ Զեւանշեր 2-րդի եղբայրը:

### 4. Վահան 2-րդ

Վահան 2-րդը Զեւանշեր 1-ինի որդին էր: Այդ երեւում է Ս.Օրբելյանի հետեւյալ վկայությունից. «Բայց յետոյ միւս Վահան՝ եղբօրորդի սորա, այսինքն Զեւանշէրի որդի, սնեալ եւ ուսեալ ի մանկութենէ, վարժեալ աստուածային իմաստիւքն ի սոյն տան, քահանայացաւ եւ եղեւ առաջնորդ սուրբ ուխտին»(17)

Ուրեմն, Վահանավանքում Վահան 1-ինին, իբրեւ վանահայր, հաջորդում է նրա եղբոր՝ Զեւանշեր 1-ինի որդին՝ Վահանը, որին, ըստ հերթականության, մենք անվանում ենք Վահան 2-րդ: Թվում է, թե Ս.Օրբելյանի մոտ շատ պարզ է ասված, բայց Ալիշանը դարձյալ, իր հիմնական սխալի հետեւանքով, այս Վահան 2-րդին տեղաշարժում է եւ դարձնում Զեւանշեր 1-ինի ծոռը, ոմն Ա. Ա-ի որդին:

Ս.Օրբելյանը վկայում է, որ երբ 958 թվին Անանիա կաթողիկոսը գալիս է (3-րդ անգամ) Սյունիք, Տաթեւում եպիսկոպոս է նշանակում Վահան 2-րդին: «Եվ ժողովեալ զամենայն արս խաչակրօն եւ ճգնազգեաց վանականաց խնդրէին վերստին առաջնորդ ինքեանց, որոց լուեալ կացոյց յեպիսկոպոսութիւնն Սիւնեաց զՎահան՝ որդին Զեւանշէրի, որ էր առաջնորդ մեծի ուխտին Վահանավանից»(18): Վեց տարի Սյունյաց եպիսկոպոսական աթոռում մնալուց հետո դառնում է կաթողիկոս ամենայն Հայոց(19)... Մահանում է Վասպուրականում, ուր ապաստանել էր քաղկեդոնականությանը հարելու պատճառով:

### 5. Զագիկ 2-րդ

Զագիկ 2-րդի մասին Ս.Օրբելյանն առաջին անգամ խոսում է ԾԱ գլխում: Սյունյաց եպիսկոպոս Հակոբը Տաթեւի վանքի գյուղերից մեկը փոխում է այս Զագիկի Տաշտակերտ գյուղի հետ. «... փոխանակէ տէր Յակոբ տեառն Զագկայ՝ իշխանի Սիւնեաց որդւոյն Զէվանշէրի»: Այդ կապակցությամբ իր գրած վճռապայմանի մեջ Հակոբ եպիսկոպոսը գրում է. «Ես տէր Յակոբ՝ Սիւնեաց եպիսկոպոս, արարի փոխանակս ընդ աստուածապահ տեառն Զագկայ՝ Սիւնեաց իշխանի, ...ի թուիս Հայոց 374 (= 925) հաստատէ կամաւն Աստուծոյ»(20): Այդ կապակցությամբ ինքը Զագիկը գրում է՝ «Եւ ես Զագիկ իշխան իմ կամոք արարի զայս վաճառս...»(21): Ինչպես տեսնում ենք, այստեղ չի ասված, որ Զեւանշերի որդի այս Զագիկը Բաղքի իշխան է(22): Ղ.Ալիշանն իրավամբ նրան համարում է Բաղքի իշխանական տնից, Զեւանշեր 1-ինի որդին: Բայց անհիրավացի կերպով Ալիշանն այս Զագիկի իշխանության շրջանը համարում է 911-925 թվերը: Մենք վերեւում տեսանք, որ 911 թվին իշխան էր Զեւանշեր 1-ինը, հավանաբար, սրա հայրը, ուստի նրա որդի Զագիկ 2-րդը երբեք չէր կարող 911 թվին իշխան եղած լինել: Ալիշանին թյուրիմացության մեջ է գցել այն, որ նա Օրբելյանի ԼԸ գլխի վկայությունը(23) վերագրել է այս Զագիկին, փոխանակ այն վերագրելու սրա պապին՝ Զագիկ 1-ինին:

Մեր կարծիքով, այս Զագիկ 2-րդի իշխանության սկիզբը պետք է փնտրել 911 թվից հետո: Սկզբնաղբյուրները մեզ հնարավորություն չեն տալիս ճշգրիտ ասելու, թե ե՞րբ է Զագիկ 2-րդը փոխարինել իր հորը՝ Զեւանշեր 1-ինին: Պետք է ենթադրել միայն, որ այդ տեղի է ունեցել 910-ական թվերի 2-րդ կեսին:

Մենք չգիտենք նաեւ սրա մահվան տարին: Վերոհիշյալ վկայություններից պարզ է միայն այն, որ նա 925 թվին իշխան էր եւ գործարք

Շարունակությունը՝ էջ 50

1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

## ՀԱՎԱՆԴՈՒԽՏ Բ

### ՊԱՏՄԱԿԱՆ ԴԵՄՔԵՐ

Սկիզբը՝ էջ 48

եւ երեւելի փառքով թագավորեց Բաղաց տանը, ընդարձակեց իր տերության սահմանները» (Օրբ.): 1092-ին այդ սուլթանը մեռավ, եւ Սենեքերիմն այլեւս վստահելի չէր: Երկու տարի հետո էմիր Փադլունը դավադրաբար սպանեց Սենեքերիմին Հին Կապանում, սկսեցին դառն ու դժնդակ տարիները: Բաղաբերդին հարեւանող Հին Կապանը շրջապատեց Բեկիարուխի Չորթման զորապետը: «….բազմաթիվ հետեւակ ծերպամուտ ու քարագնաց զորականներ բարձրացան ապառաժոտ լեռան գլուխը եւ հեղեղատի մեծ հունով իջան քաղաք, քանի որ այդ տեղը պարսպափակված չէր….» (Օրբ.): Դա 1103-ի աշնանն էր, եւ Սյունիքի կառավարիչներն էին մանկամարդ Գրիգորն ու իր թագուհի մայր Շահանդուխտը: Սյունյաց թագավորության մայրաքաղաքն ավերվեց, «կոտորեցին ամբողջ բնակչությանն առհասարակ» (Օրբ.): Միջնադարյան դիվանագիտության սնանկությունն ակներեւ էր: «Ահա հենց սա եղավ այս աշխարհի ավերման սկիզբը, եւ այդ թագավորությունն օրըստօրե սկսեց թուլանալ» (Օրբ.) եւ 1170-ին, Բաղաբերդի անկմամբ, վերացավ:

…Փոխարեն Գթոց նորա… Մեր միջնադարյան թագուհին մշակութամետ էր, սակայն հայտնվեց ռազմամոլության դարաշրջանում: Բոլորը չէ, որ Շամիրամ են, եւ ընդհանուր առմամբ կանացիությունը ներհակ է ռազմատենչությանը: Շահանդուխտ թագուհին Քրիստոսի անհագուրդ ծառայի մարմնացում էր: Նվիրատվություններ արեց Տաթեւի վանքին եւ Վահանավանքին, ձեռնարկեց-կառուցեց չորս եկեղեցի: Մինչեւ մեր ժամանակները կիսականգուն պահպանվել է Վահանավանքի մայր տաճարից մոտ 70մ դեպի հարավ գտնվող Սբ Ածն եկեղեցին՝ կրկնահարկ ու պատշգամբով, որի ներսում՝ բեմին հարող հարավային պատին, արձանագրված է.

**Ի:ՇԼԵ: ԹՎԱԿԱՆԻՍ ԵՍ ՇԱՀԱՆԴՈՒԽՏ ԴՈՒՍՏՐ ՍԵՒԱԴԱԻ ԱՂՎԱՆԻՑ ԹԱԳԱՒՈՐԻ ԵՎ ԱՄՈՒՍԻՆ ԳՐԻԳՈՐ ԹԱԳԱՒՈՐԻ ՈՐԴՈ ԱՇՈՏԿԱ ՎԱՍՆ ՈՉ ԳՈԼՈ ՄԵՐ Ի ՄԻԱՍԻՆ ԺԱՌԱՆԳ ԸՍՏ ՄԱՐՄՆՈ, ԵՍ ԵՒ ՔՈՅՐՍ ԻՄ ԿԱՏԱՅՍ ՇԻՆԵՑԱՔ ԶՍԲ ԱՇԱԾԻՆՍ ՓՈԽԱՐԵՆ ԳԹՈՑ ՆՈՐԱ ՈՐՉԱՓ ԿԵՆԴԱՆԻ ԵՄՔ ՆՄԱ ԿԱՏԱՐԵՆ ԶՍԲ ԽՈՐՀՈՒՐԴՆ ԵՒ ՅԵՏ ԱՅՆՈՐԻԿ ԶՄԵՋ ԿՅՈՐԴ ԱՐԱՍՑԵՆ ԱՆՄԱՀ ՋԵՆՄԱՆՆ ՔԻ:**

Ակներեւ՝ Սբ Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1086 թվականին՝ Վահան Նախաշինողի հիմնարկեքից 175 տարի հետո:

**ՌՈԲԵՐՏ ԷՋԱՆԱՆՅԻ**

# Բաղքի Զագիկյանների գահակալ իշխանների տունը

## ԸՍՏ ՀԱՅԿԱՐԱՄ ՈՒԹՄԱՋՅԱՆԻ «ՍՅՈՒՆԻՔԸ IX-X ԴԱՐԵՐՈՒՄ»

Գահակալ իշխանների մի այլ տուն, 9-րդ դարի վերջերից, հանդես է գալիս Բաղքում: Ղ.Ալիշանը, խոսելով Բաղք գավառի աշխարհագրության մասին, կազմել է նաեւ իշխանական այդ տան ներկայացուցիչների հաջորդական սխեման, որը սակայն ունի ակնառու սխալներ: Այդ տան մեզ հայտնի իշխաններից առաջինը Զագիկն է:

Սկիզբը՝ էջ 49

է կնքել Հակոբ եպիսկոպոսի հետ, բայց այդ չի նշանակում, որ այդ թիվը նրա իշխանության վերջին տարին էր, ինչպես կարծում է Ղ.Ալիշանը: Մենք կտեսնենք ստորեւ, որ 941 թվին արդեն իշխան էր սրա որդի Զեւանշեր 2-րդը:

### 6. Զեւանշեր 2-րդ եւ Վասակ

Զագիկ 2-րդն ունեցել է երկու որդի՝ Զեւանշեր եւ Վասակ: Հակոբ եպիսկոպոսի եւ Զագիկ 2-րդի միջեւ գյուղերի փոխանակման մասին գրված վերեւ մեր հիշած պայմանվճռի տակ, որպես վկաներ, հիշված են Զագիկ 2-րդի որդիներ՝ Զեւանշերն ու Վասակը: «Եւ մեք Զեւանշէր եւ Վասակ՝ որդիք տեառն Զագկայ վկայ եմք այս արարուածիս»(24): Ղ.Ալիշանն իրավացի կերպով սրանց հայր Զագիկին համարում է հենց գործարք կնքող Զագիկը: Սյունիքում ընդունված է, որ հայրերի կատարած գործարքների առթիվ կնքված սիգելների տակ, իբրեւ վկաներ, ստորագրում են նաեւ որդիները:

Ս.Օրբելյանը խոսելով 940-50-ական թվերի մասին, իբրեւ Բաղքի իշխան հիշում է Զեւանշերին, բերում ենք այդ վկայությունները.

1. Երբ Անանիա կաթողիկոսը 941 թվին գալիս է Սյունիք. «ընդառաջ ելանեն նմա իշխանքն Սիւնեաց աստուածապահ տէր Սմբատ եւ Զեւանշէր որ ի Բաղս» (25):

2. «Ապստամբ» Հակոբ եպիսկոպոսը կաթողիկոսի հալածանքներից ապավինում է Զեւանշերի մոտ: Կաթողիկոսը «յոլով թղթովք եւ պատգամաւորոք հայցէր ի դուրս զՅակոբ ի ձեռացն Զեւանշիրի. եւ ոչ տայր ի դուրս»(26): Կաթողիկոսը բանադրում է Հակոբին եւ Զեւանշերին: Այս տեղի է ունենում 949 թվին(27):

3. Անանիա կաթողիկոսը 958 թվին երրորդ անգամ գալիս է Սյունիք, Տաթեւ եւ ապա «գնայր ի Կապան քաղաք: Ընդ որում առաջ ելեալ բանադրեալ իշխանն Զեւանշէր՝ մեծաւ զղջմամբ զմեղայ խոստովանէր»(28):

4. Երբ Սմբատ 1-ին գահերեց իշխանի եղբայր Սահակը մահանում է, եւ իշխանությունն անցնում է որդուն՝ Սմբատ 2-րդին (տե՛ս վերեւ), այդ ժամանակ «էր եւ ի Բաղս իշխան մի ի սոյն ցեղէ Զեւանշէր անուն՝ որդի Զագկայ իշխանին»(29):

Մեջբերված վկայությունները կասկածի ոչ մի տեղիք չեն տալիս, որ 941թ., 949թ., 958թ., գուցե եւ 960-ական թվերին Բաղքում իշխան էր Զեւանշերը՝ Զագիկի որդին, այսինքն՝ 925 թվի իշխան Զագիկ 2-րդի որդի Զեւանշեր 2-րդը: Փաստերի պակասության պատճառով դժվար է ցույց տալ, թե երբ է Զեւանշեր 2-րդը հաջորդել իր հորը: Ղ.Ալիշանը շփոթելով փաստերը, այս Զեւանշեր 2-րդի իշխանության տարիները դնում է 911-958 թվերի միջեւ: Նա չէր կարող 911 թվին իշխան լինել, որովհետեւ, ինչպես տեսանք, այդ թվին իշխան էր նրա պապը՝ Զեւանշեր 1-ինը: Նա չէր կարող իշխան լինել անգամ 925 թվին, որովհետեւ, ինչպես տեսանք, այդ թվին դեռ իշխան էր նրա հայրը՝ Զագիկ 2-րդը: Նա կարող էր իշխան դառնալ միայն 925 թվից հետո:

Զեւանշեր 2-րդի գահանիստն էր Կապան քաղաքը: Այդ երեւում է ոչ միայն վերոհիշյալ վկայություններից, այլեւ Ս.Օրբելյանի հետեւյալ ուղղակի վկայությունից. «Եվ տարեալ մեծապէս շքով (խոսքը Անանիա կաթողիկոսի մասին է - Հ. Ութ., հանգուցին յարքունական գահոյս ի Կապան քաղաքի»(30): Վասակի մասին, բացի վերոհիշյալ ժլատ տեղեկությունից, ուրիշ ոչինչ չգիտենք:

950-ական թվերի վերջերից հետո մենք այլեւս տեղեկություններ չունենք Բաղաց այս իշխանական տան մասին: Հավանական է թերեւս Ղ.Ալիշանի այն պնդումը, որ, երբ Բաղքում ստեղծվեց Սյունյաց թագավորություն, սրանք դառան Սյունյաց թագավորների սատարը եւ, մեր կարծիքով, դառան ինքնուրույն ֆեոդալ իշխանական ընտանիք՝ Սյունյաց-Բաղաց թագավորության մեջ:

Վերջում նկատենք, որ 9-10-րդ դարերի Սյունիքում իշխանական այս տներից բացի, անշուշտ, կային նաեւ այլ իշխանական տներ, որոնց մասին, փաստերի պակասության պատճառով, կոնկրետ ոչինչ չենք կարող ասել: Ստորեւ մենք կնշենք մի քանի անհայտ իշխաններ, որոնք, հարկավ, իշխանական առանձին տների ներկայացուցիչներ էին:

### Անհայտ մի քանի իշխաններ

1. «Սիւնեաց իշխան», անունն անհայտ է:

Ս.Օրբելյանը ԽԶ գլխի վերնագրում հիշում է Սյունյաց մի իշխան, որի անունը չի տալիս: Այդ գլխի տակ պատմում է, որ Վասակ Իշխանիկի իշխանության ժամանակ, այս անանուն իշխանի որդին՝ Գեւորգը տնից փախչում է ու կորչում(31): «Ապա ճիչ բարձեալ մօր նորա Համամուհեայ՝ մեծահալատ տիկնոջն, եւ կնոջ նորա եւ եղբարց եւ ծառայից՝ եւ շրջէին խնդրել զԳեորգ եւ ոչ գտանէին»(32): Հետո Գեւորգը գտնվում է ու դառնում հոգեւորական:

Ինչպես տեսնում ենք, այդ անանուն իշխանն ունեցել է եւ այլ որդիներ, որոնցից եւ ոչ մեկի անունը չի պահպանված, պահպանված է միայն կնոջ անունը: Նրա տան մասին ասված է, որ մետաքսյա հագուստ էին հագնում, ունեին ծառաներ: Հանձին այդ անանուն իշխանի, մեր առաջ կանգնած է մի ֆեոդալ իշխանի ընտանիք իր ցոփ կյանքով ու ծառաներով:

Այս Գեւորգի որդին, Ստեփանոսը նույնպես դառնում է հոգեւորական ու շինում Նորավանքը՝ Բղեն գավառի մեջ(33):

2. Այդ վանքը շինելիս նրան աջակցում է Հրահատ իշխանը, որը հավանաբար այդ Բղեն գավառի իշխանն էր(34):

3. Փիլիպպե. - Թովմա Արծրունին վկայում է, որ Բուղան Հայոց իշխաններին գերեվարելիս (853-55թթ.) գերեվարել է նաեւ մի «Փիլիպպէ իշխանն Սիւնեաց»(35): Ս.Օրբելյանը, Հ.Դրասխանակերտցին, Վարդանը եւ Կաղանկատուացին Բուղայի կողմից նման Փիլիպպեի գերեվարման մասին չգիտեն: Եթե սա սխալմունք չէ Թովմա Արծրունու մոտ, ապա այս Փիլիպպեն չէր կարող լինել Փիլիպպե 1-ինը, որովհետեւ նա մահացել էր 848 թվին: Նա չէր կարող լինել նաեւ Վասակ Իշխանիկի որդի Փիլիպպե 2-րդը հետեւյալ նկատառումով: Այս Փիլիպպեն Բուղայի կողմից գերեվարվելիս առնվազն 20-ից ավելի տարիք պիտի ունենար, նշանակում է նա ծնված պիտի լիներ մոտավորապես 830-33 թվերին: Ինչպես տեսանք, Փիլիպպե 2-րդը կենդանի էր դեռ 943 թվին: Եթե մենք այս Փիլիպպեին նույնացնենք Փիլիպպե 2-րդի հետ, ապա նրան հասնում է առնվազն 110 տարվա կյանք, որն անհավանական է: Սա անհայտ Փիլիպպե է:

4. Տիգրան՝ մեծ նահապետ. - Սրա մասին եւս ունենք մի վկայություն միայն: «Դարձեալ էր գիւղ մի ի Գեղամ գաւառի ի Սոդից սահմանին, Վաղաւէր անուն, զոր տուեալ էր վաղ ժամանակօք Տիգրան մեծ նահապետ ի Սիսական տոհմ է, ի սուրբ եկեղեցին Տաթեւոյ...»(36):

Այս Տիգրանը, ինչպես երեւում է փաստաթղթից, գործում էր 9-րդ դարում:

5. Տեր Վարդան եւ տեր Ատրներսեհ. - Փիլիպպեի 839 թվագիր սիգելի մեջ հիշվում է իբրեւ վկա. «եւ տեառն Ատրներսեհի՝ տեառն Վարդանայ որդւոյ...»(37):

6. Տեր Վահան, - Փիլիպպե 1-ինի 844 թվագիր սիգելի մեջ իբրեւ վկա հիշվում է՝ «... տէր Վահան՝ Վարդանայ որդի...»(38): Ոչ իր եւ ոչ հոր մասին ուրիշ տեղեկություն չունենք:

7. Կտրիճ իշխան. - 925 թվի մի վճիռ-պայմանի վկաների մեջ հիշվում է՝ «... եւ ես Կտրիճ իշխան վկայ եմ այս վերագրելոցս»(39):

8. Ապուշամբ. - Վայոց ձորի իշխան: Հավանաբար Աշոտ գահերեց իշխանի վասալներից մեկը(40):

■

**Ծանոթագրություն**

1. Ս.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 223:
2. Ս.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 231, 234. Հրահատը կապ չունի Զագիկի հետ, նրանք, իբրեւ սյունեցիներ, միասին են հիշված, որպեսզի տարբերվեն իրենցից առաջ եւ հետո ստորագրած՝ Աղվանքի եւ Գարդմանի իշխաններից:
3. Նույն տեղում, էջ 200:
4. Ղ.Ալիշան, Սիսական, էջ 273:
5. Նույն տեղում:
6. Ս.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 207, 208:
7. Ի միջի այլոց այս հանգամանքը եւս ապացույց է այն բանի, որ Ս.Օրբելյանի պահպանած հարկացուցակը 10-րդ դարի հարկացուցակ է:
8. Ս.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական:
9. Նույն տեղում:
10. Ս.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 231-234 եւ 240:
11. Նուն տեղում, էջ 200:
12. Նույն տեղում:
13. Նույն տեղում, էջ 238
14. Նույն տեղում, էջ 239:
15. Նույն տեղում, էջ 240:
16. Ս.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 240:
17. Նույն տեղում, էջ 284, նաեւ 287, 288:
18. Նույն տեղում, էջ 288, 289, նաեւ 241:
19. Ս.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջեր 289, 290:
20. Նույն տեղում, էջ 272, 273:
21. Նույն տեղում, էջ 273:
22. Այդ գործում մեզ կօգներ այն, եթե պարզվեր, թե Տաշտակերտ գյուղը որ գավառում էր, բայց, ցավոք սրտի, հնարավոր չեղավ պարզել այդ:
23. Տե՛ս Ս.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 200:
24. Ս.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 273:
25. Նույն տեղում, էջ 276:
26. Ս.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 283:
27. Նույն տեղում:
28. Նույն տեղում, էջ 284:
29. Նույն տեղում, էջ 298:
30. Նույն տեղում, էջ 284:
31. Ս.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 241:
32. Նույն տեղում, էջ 242:
33. Ս.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 244, 245, 246:
34. Նույն տեղում, էջ 245:
35. Թ.Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, էջ 310:
36. Ս.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 272:
37. Նույն տեղում, էջ 205:
38. Ս.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 207:
39. Նույն տեղում, էջ 273:
40. Շապուհ Բագրատունի, էջ 81:



1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

# Սյունիքը X դարի առաջին քառորդում

Ըստ Հայկարամ Ութմազյանի «Սյունիքը IX-X դարերում» աշխատության

X դարի հենց սկզբին Աֆշինի փոխարեն Ատրպատականում ոստիկան է նշանակվում նրա եղբայրը՝ Յուսուֆը: Լսելով այդ փոփոխությունը, Բագրատունյաց Սմբատ թագավորը խնդրագիր է գրում խալիֆին, որ հարկը այլեւս Ատրպատականի էմիրին չմուծի, այլ մուծի ուղղակի խալիֆի գանձարանը: Խալիֆը համաձայնում է(1): Յուսուֆը, զայրացած Սմբատի այս քայլից, արշավանք է սկսում նրա դեմ: Ուտիք-Թիֆլիս-Շիրակ գծով կատարված այդ արշավանքը վերջանում է հաշտությամբ: Յուսուֆը բազմաթիվ նվերներ ու թագ է ուղարկում Սմբատ թագավորին եւ վերադառնում է Ատրպատական: Շուտով Յուսուֆն ապստամբում է խալիֆի դեմ: Նրան ճնշելու համար խալիֆն ուղարկում է զորք եւ միաժամանակ պահանջում է Սմբատ Բագրատունուց, որ նա եւս զորք ուղարկի Յուսուֆի դեմ: Երկու սրի միջեւ ընկած Սմբատն ուղարկում է մի գունդ, բայց զգալով, որ դա խախտում է իր եւ Յուսուֆի միջեւ կնքված խաղաղության դաշինքը, մի նամակով հայտնում է Յուսուֆին, թե այդ գունդը գալիս է ոչ թե նրա դեմ, այլ թիկունքից նրան օգնություն ցույց տալու նպատակով: Յուսուֆը չի հավատում դրան եւ չարությամբ է լցվում Սմբատ թագավորի դեմ:

Խալիֆի դեմ ապստամբած Յուսուֆը պարտվում է եւ բանտարկվում, բայց մի քանի տարի անց նորից դառնում Ատրպատականի էմիր (908թ): Չարությամբ լի Յուսուֆն անմիջապես մարդիկ է ուղարկում Հայաստան եւ Սմբատ թագավորից պահանջում Հայաստանի հարկը: Բայց այդ նույն հարկը պահանջում է եւ խալիֆը - «յերկոցունց կողմանց՝ յամիրապետէ անտի եւ Յուսփայ ոստիկանէն, - վկայում է Հ.Դրասխանակերտցին, - բան պատգամաց առ արքայ սաստկանայր, կրկին ուժգնապէս հայցեալ տալ զսակն արքունի. այլ եւ զանուր լծոյ ծառայութեանն ծանրաբեռն գրեալ» (2): Սմբատ թագավորը նորից ընկնում է ծանր կացության մեջ: Որի՞ն տալ հարկը, խալիֆին տար՝ Յուսուֆն էր թշնամանալու, Յուսուֆին տար՝ խալիֆն էր թշնամանալու: Համոզված լինելով, որ չի կարող ընդդիմանալ դաժան հարկահաններին, որոշում է դիմել ծայրահեղության՝ սեղմել ներքին միջոցները, գոհացնել երկուսին էլ եւ ցրել Հայաստանի գլխին կուտակված ամպրոպը: Նա կրկնապատկում է երկրի ներսում հարկերը. «Ընդ բոլոր աշխարհս տէրութեան իւրոյ հինգերորդել հրամայէ զամենայն երամակս ձիոց եւ զանդեայս արջառոց եւ զհօտս ոչխարաց՝ եւ տալ ի զրադատ տուգանս սակին… Եւ զայս ապա արարեալ զվճար՝ առնոյր այնմ ամի սակ»(3): Հարկահանության այս արտակարգ միջոցառումով թեեւ Սմբատին հաջողվում է գոհացնել Խալիֆին եւ էմիրին, բայց իր դեմ է հանում ներքին ուժերին: Հարկատու վասալ իշխանները թշնամանքով ու դավադրություններով են պատասխանում Սմբատ թագավորին, իսկ ժողովրդական մասսաները, որոնց ուսին էր վերջին հաշվով ընկնում հարկային այդ ծանր լուծը, խիստ դժգոհում են այդ անլուր կեղեքումից եւ մղվում դեպի դասակարգային պայքարը: Ահա այս ծանր ժամին Գագիկ Արծրունին առաջ է քաշում Նախիջեւանի հարցը: Սմբատ թագավորից չստանալով այն եւ այդ առիթով, բայց իրականում՝ իր նեղ, տեղային ինքնուրույն շահերի մղումով, անցնում է Հայաստանի ընդհանուր թշնամու՝ Յուսուֆի կողմը եւ սկսում դավեր նյութել Բագրատունյաց պետության դեմ:

Սմբատ թագավորը նորից դիմում է ծայրահեղ միջոցների: Ժամանակի կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցուն բազմաթիվ նվերներով՝ ձիերի եւ ջորիների երամակներով, զարդերով ու զենքերով, նաեւ «Գանձս ոսկւոյ եւ արծաթոյ» ուղարկում է Յուսուֆի մոտ: Բացի այս բոլորը, կաթողիկոսն էլ իր հերթին եկեղեցու հարստությունից շատ նվերներ ու գանձեր է տանում իր հետ: Պատգամախոս կաթողիկոսը Յուսուֆից հաշտություն է խնդրում: Յուսուֆն սկզբում բարյացակամ ընդունելություն է ցույց տալիս կաթողիկոսին, բայց հետո ձերբակալում է նրան ու բանտ նետում: Հենց այդ օրերին Յուսուֆի մոտ է սլանում Գագիկ Արծրունու եղբայր Գուրգենը եւ համոզում Յուսուֆին «վասն յաշխարհս մեր գալոյ եւ ելանելոյ»(4): Մի ամիս անց Յուսուֆի մոտ է գալիս ինքը՝ Գագիկ Արծրունին: Նա թագ է ստանում Յուսուֆից ու հռչակվում Վասպուրականի թագավոր(5), միաժամանակ Յուսուֆի հետ միասին մշակում է Սմբատ թագավորի վրա հարձակվելու ծրագիրը: Նախապատրաստական այս աշխատանքները կատարվում էին 908 թվի աշնանը:

Հենց այդ աշնանը կամ ձմռանը, երբ Յուսուֆը, Ս.Օրբելյանի վկայությամբ, «Զօր գումարէր, պատրաստութիւն կազմէր՝ ի գալ գարնան ելանել յաշխարհս Հայոց», մահանում է Սյունիքի գահերեց Աշոտ իշխանը(6), որի հուղարկավորությանը մասնակցում է նաեւ Սմբատ 1-ին թագավորը: Աշոտի տեղը գահերեց իշխան են նշանակում նրա երեց որդուն՝ Սմբատին «Ի վերայ ամենայն Սիսական աշխարհին» (7): Հենց նույն գարնանաբացին (909թ.) Յուսուֆն արշավում է Հայաստանի վրա՝ Օրբելյանի պատկերավոր արտահայտությամբ, այդ գարնանը բնության զարթոնքի շնչի փոխարեն «շնչեաց հողմ դառնութեան եւ ցոլաւ բոցն հարաւային յաշխարհս մեր» (8):

Յուսուֆը հասնելով Նախիջեւան, մի քանի օր դադար է առնում. նրա մոտ Նախիջեւան են գալիս Գագիկ եւ Գուրգեն Արծրունիներն իրենց զորքերով: Զորքը բաժանում են գնդերի, որից հետո արշավում Սյունիք(9), կամենալով ասպատակել ու ջնջել «Զգաւառն Սիւնեաց եւ զբռամբ ածել զիշխանսն»(10): Ինչո՞վ էր պատճառաբանվում այն հանգամանքը, որ Յուսուֆը փոխանակ Նախիջեւանից ուղիղ գնալու դեպի Դվին, դեպի երկրի սիրտը, թեքվեց աջ եւ բարձրացավ Սյունյաց լեռները: Անշուշտ այդ պայմանավորված էր ստրատեգիական նկատառումներով. նախ՝ Սյունիքը, որպես Բագրատունյաց թագավորների հավատարիմ վասալ, չէր կարող անտարբեր մնալ ծավալվող դեպքերի նկատմամբ, նա կարող էր խփել Յուսուֆին թիկունքից, ուստի անհրաժեշտ էր նախ հարվածել Սմբատի այդ հենարանին եւ չեզոքացնել այն: Երկրորդ՝ դրանում մեծ դեր խաղացած պետք է լինեն Արծրունի իշխանները, որոնք, որպես մրցակիցներ, ցանկանում էին թուլացնել Սյունիքի ուժը եւ այդ պատճառով, հավանաբար, Յուսուֆին մղեցին դեպի Սյունիք: Սյունյաց Սմբատ գահերեց իշխանը կազմակերպում է երկրի պաշտպանությունը: Նա իր վասալ իշխանների զորքերով աճապարում է փակել կիրճերն ու ճանապարհները. «Իսկ գահերէց գլխաւոր իշխանն Սիւնեաց համազուն եղբարբքն իւրով եւ համագունդ զօրօք աճապարեալ ունէին զանցս մտիցն եւ զկիրճս ճանապարհացն արիական քաջութեամբ ըստ հոյակապ անուանակիր հռչակութեանն՝ զէն ի վեր առեալ, առ նա զէն վառեալ եւ զբազումս թաւալգլոր խաղացուցանէին»(11): Նույնը պատմում է նաեւ Ս.Օրբելյանը, ավելի պարզ նշելով գահերեցի իշխանության տակ եղած բոլոր իշխանների զորքերի մասնակցությունը(12): Չնայած համառ դիմադրությանը, Սյունյաց իշխանները չեն կարողանում կանգնեցնել թշնամու գերազանց ուժերի առաջընթացը. «ո՛չ զօրեցին զօրաւոր կատաղութեանցն թշնամեաց հերքել զնոսա», «ո՛չ կարացին զդէմ առնել»: Սյունյաց իշխանները դիմում են փախուստի. փախչում են ամուր քարանձավները եւ լեռների ծործորները: Յուսուֆը կրնկակոխ հետապնդում է իշխաններին, որոնցից մի մասին տեղազերծ անում, փախցնում է երկրից, իսկ ոմանց՝ սրի քաշում կամ գերեվարում: «Եւ այս լինէր, - ամփոփում է այս դեպքերին անմիջապես ականատես կաթողիկոս պատմիչը, - յաւուրս տօնի մեծի պասէքի Զատկաց յերեքհարիւրերորդի յիսներորդի ութերորդի շրջագայութեան Թորգոմեանս համարոյ»(13), այսինքն՝ 909թ. գարնանը:

Առաջինը երկրից փախչում են Սյունյաց գահերեց Սմբատ իշխանը եւ նրա եղբայր Սահակը: Իրենց մայր Շուշանին, Սմբատի կին Սոփիին, որը Գագիկ Արծրունու քույրն էր, նրա ծծկեր երեխային եւ Սահակի կնոջը, որը Գուգարաց բդեշխի դուստրն էր, տանում ամրացնում են Երնջակի ամրոցում, իսկ իրենք փախչում իրենց աներների մոտ, Սմբատը՝ Վասպուրական, իսկ Սահակը՝ Գուգարք(14): Սմբատի մյուս եղբայրները՝ Բաբկենն ու Վասակը(15), ինչպես նաեւ Գեղաքունի իշխան Գրիգոր Սուփան 2-րդը եւ իր եղբայրներ Սահակն ու Վասակը, մնում են երկրում պատսպարված «ի կատարս լերանց եւ ի ծործորս ծէրպից վիմաց»(16): Սյունիքի գահակալ մյուս իշխանների, այսինքն՝ Զագիկյանների եւ այլոց մասին տեղեկություն չունենք, բայց հավանաբար, նրանք եւս քաշվել էին անառիկ ամրոցները, թշնամու քմահաճույքին թողնելով իրենց կալվածքների բնակչությանը:

Յուսուֆը, Սյունիքի զորական ուժն արագությամբ շարքից դուրս բերելուց, իշխաններին բարոյալքելուց ու ցրելուց եւ երկիրն ասպատակելուց հետո, իջնում է Դվին եւ ճամբար դնում Երասխի ափին: Շուտով Յուսուֆի այդ ճամբարն է գալիս Գեղաքունիքի գահակալ իշխան Գրիգոր Սուփան 2-րդը եւ անձնատուր լինում «ի սպասաւորութիւն ոստիկանին»(17): Սյունյաց պատմիչը նրա այդ քայլն արդարացնում է այն բանով, որ փրկության բոլոր հնարքները վերջացել էին, եւ միակ ելքը նա գտնում է անձնատուր լինելու մեջ, որպեսզի դրանով «թերեւս հնար լիցի զերծանիլ(18): Բայց իրականում, դա երկրի եւ ժողովրդի առաջ դավաճանությանը հավասար մորթապաշտ քայլ էր: Շուտով նրա օրինակին է հետեւում նաեւ Սմբատ գահերեցի կրտսեր եղբայր Վասակը, որը նույնպես գալիս կամովին անձնատուր է լինում(19): Յուսուֆը սկզբում սիրով ընդունում է այս իշխաններին, բայց շուտով շղթայակապում ու նետում է բանտ:

Այս բոլորից հետո Յուսուֆը պատգամավորների միջոցով տեղեկացնում է Սմբատին, որ իբր թե, եթե նա ամբողջ տարվա հարկը վճարի, ապա ինքը խաղաղություն կկնքի եւ կհեռանա Հայաստանից: Սմբատը, թեեւ ըմբռնում է կեղծիքը, բայց տալիս է պահանջված հարկը՝ 60 հազար կշիռ դահեկան: Ստանալով այդ գումարը, Յուսուֆը փոխանակ հեռանալու Հայաստանից, հարձակվում է Սմբատ թագավորի վրա եւ հալածում նրան մինչեւ Կղարջք, իսկ Հովհաննես կաթողիկոսին բանտարկված պահում Դվինում: Հակառակ բոլոր ջանքերին, Յուսուֆին չի հաջողվում բռնել Սմբատ թագավորին եւ իզուր դեգերելուց հետո վերադառնում է Դվին: Այնտեղ Յուսուֆի մոտ է գալիս Սմբատ թագավորի եղբոր որդին՝ Հայոց սպարապետ Աշոտը եւ ինքնակամ անձնատուր լինում Յուսուֆին(20): Բագրատունյաց պատմիչը՝ կաթողիկոս Հ.Դրասխանակերտցին Աշոտի այս քայլը արդարացնում է նրանով, ինչով որ Ս.Օրբելյանը՝ Գրիգոր Սուփանինը(21): Բայց այդ եւս բարոյալքվածության, փառասիրության եւ մորթապաշտության մի նմուշ էր, որը կարծես այդ ժամանակ ընդհանուր երեւույթ էր հայ իշխանների միջավայրում: Ինքնակամ Յուսուֆի կողմն է անցնում նաեւ Սմբատ թագավորի մյուս եղբորորդին՝ Սմբատը. «ինքնակամ դիմագրաւ դիմեալ ի ծառայութիւն հագարացւոյն»(22): Այժմ Յուսուֆի բանակին, բացի Գագիկ Արծրունու բանակից, միանում է նաեւ Աշոտ Բագրատունու բանակը, որը հլուհնազանդ կատարում էր Յուսուֆի կամքը:

Ահա այս թշնամիների ահռելի ուժի դեմ մենակ մնում է Սմբատ թագավորը: Չնայած դրան, նա խիզախում է ճակատել թշնամու հետ: Հաջորդ տարին (910 թվին) Նիգ գավառում, ըստ Ասողիկի, Չկնավաճառ կոչված վայրում, տեղի է ունենում ճակատամարտը թշնամական այդ միացյալ բանակի եւ հայոց բանակի միջեւ: Հայոց բանակը ղեկավարում էին Սմբատի որդիներ Մուշեղն ու Աշոտը: Կռվի թեժ պահին, հայոց բանակում եղած ուտիցիների գունդը դավաճանում է, լքում է Մուշեղի ղեկավարած թեւը ու անցնում թշնամու կողմը: Ծուղակն ընկած Մուշեղը ձերբակալվում ու գերի է վերցվում: Հայոց բանակը պարտվում է: Ճշմարտության առաջ չմեղանչելու համար նշենք, որ սյունյաց վերոհիշյալ իշխանները չմասնակցեցին հայոց բանակի դեմ մղվող այս կռվին Յուսուֆի կողմում: Նրանք անձնատուր էին եղել առանց բանակի եւ պահվում էին, ինչպես ասացինք, Դվինի բանտում: Յուսուֆի կողմը չէին անցել նաեւ սյունյաց Սմբատ եւ Սահակ իշխանները: Շուտով Յուսուֆը զանազան միջոցներով սպանում է Գրիգոր Սուփան 2-րդին, Սմբատ արքայի որդի Մուշեղին եւ եղբորորդի Սմբատին, ինչպես նաեւ հայոց ազատագնդից իր ձեռքն անցած շատ ուրիշների, բացի Գագիկ Արծրունուց եւ Աշոտ սպարապետից. «Եւ գրեթէ ի պատուաւորաց անտի ի մեծամեծացն յանձնատուր նմա եղելոցն եւ ընդ ձեռամբ անկելոցն ոչ ոք ապրեցաւ ի չարախտավատ եւ ի խարդաւանական մահուն տուգանաց, բայց միայն խոհեմամիտ թագաւորն Գագիկ եւ չքնաղագեղ սպարապետն Աշոտ»(23): Յուսուֆի սպանությունից ազատվում է միայն Սյունիքի ամենաերիտասարդ իշխանը՝ Սմբատ գահերեցի կրտսեր եղբայր Վասակը, այն էլ իր անձնական քաջության պատճառով: Նա, սպանելով պահակներին, փախչում է Դվինի բանտից:

Գեղաքունի իշխան Գրիգոր Սուփան 2-րդի սպանությունից հետո նրա եղբայրներ՝ Սահակն ու Վասակը փորձում են առժամանակ խույս տալ արաբների սրից: Նրանք, վերցնելով իրենց մորը՝ Մարիամ Բագրատունուն, կանանց, եւ ազատագնդի բանակով քաշվում ամրանում են Սեւանա կղզում: Արաբները, հետապնդելով նրանց, գալիս են լճի ափը: Վախենալով, որ թշնամին կարող է ներխուժել կղզին, նրանք բազմաթիվ նավերով գիշերով փախչում են ու դուրս գալիս Միափոր գավառը: Արաբները կղզին գրավելուց եւ կողոպտելուց հետո սկսում են հետապնդել փախչողներին: Միափոր գավառում Գեղաքունի այս իշխանները եւ զորքը հանկարծ շուռ են գալիս եւ մի սաստիկ հարված հասցնում հետապնդող թշնամուն եւ իրենք անցնում գնում են Գարդման ու Արցախ:

Այսպիսով, Յուսուֆին հաջողվում է մեկ առ մեկ հաշիվ տեսնել հայկական այս կամ այն չափով աչքի ընկնող իշխանների եւ իշխանական տների հետ: Նրա «Բաժանիր, որ տիրես» սկզբունքն ունեցող քաղաքականությունը տվեց հիանալի արդյունք, ջլատված ու մանրատված էր հայոց զորական ուժը, պառակտված ու թշնամացած էին հայ իշխանական տները: Այժմ Յուսուֆն անպատիժ ասպատակում էր երկիրը, «Իսկ անօրեն ոստիկանն, - կարդում ենք Հ.Դրասխանակերտցու մոտ, - տեսեալ, եթէ կուսակալք եւ կողմնապահք իւր ձեռնթափք լինին յաղթութեամբք մեծաւ յամենայն կողմունս երկրիս մերոյ՝ եւ ոչ ոք է որ ի դիմի նոցա հարկանի, այնուհետեւ ասպատակ չար հինից ընդ ամենայն կողմանս սփռէր ի Սիսական ազգս եւ յայնկոյս Տաշրայ եւ Կանգարաց եւ յեզր ծովակին Գեղամայ»(24):

Մեկուսացված էր հայոց թագավոր Սմբատը, որի հետ ավելի հեշտ էր այժմ հաշիվ տեսնելը: Եվ ահա Յուսուֆը կրկին սկսում է հետապնդել Սմբատին: Նա բազմաթիվ զորքով ու զորապետներով Գագիկ Արծրունուն ուղարկում է Սմբատ թագավորի դեմ: Համառ ու տեւական դիմադրություն է ցույց տալիս Սմբատ թագավորն իր ձեռքում մնացած հայոց բանակի փոքրաթիվ ջոկատներով Վաղարշակերտի եւ այլ ամրոցներում: Ի վերջո Սմբատ թագավորը քաշվում է իր վերջին հանգրվանը՝ Երասխածորի Կապույտ ամրոցը եւ ցույց տալիս օրհասական համառ դիմադրություն: Բայց հանդուգն ջանքերն իզուր էին, ամեն ինչ տանուլ էր տրված: Նրա պաշարված ամրոցի պարիսպների վրա էին գրոհում ոչ միայն արաբ հրոսակները, այլ նաեւ Գագիկ Արծրունու, Աշոտ սպարապետի հայ զորքերը: Յուսուֆը գրոհողների առջեւից բռնի կերպով քշում էր անզեն ռամիկներին, հայ աշխա-

Շարունակությունը՝ էջ 52

Շնո՛րհ ձեզ եւ խաղաղութի՛ւն մեր Հայր Աստծուց եւ Տէր Յիսուս Քրիստոսից: ● ՊՈՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ
www.syuniacyerkir.am
1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ
ԱՍՏԾՈ ՓԱՌՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

# Սյունիքը X դարի առաջին քառորդում

## Ըստ Հայկարամ Ութմազյանի «Սյունիքը IX-X դարերում» աշխատության

**Սկիզբը՝ էջ 51**

տավոր ժողովրդին՝ պարիսպներից նետված նետերի տարափն նրանց վրա ուղղելու եւ դրանով իր հրոսակներին պահպանելու նպատակով: Եվ այդ եղեռնը տեսնում էին ծախված ու բարոյազուրկ Աշոտն ու Գագիկը:

Սմբատ թագավորը դիմում է վերջին անձնազոհ քայլին: Ականատես պատմիչի վկայությամբ, նա որոշում է «զի ինքն միայն մեռցի, եւ մի ամենայն ժողովուրդն կորիցէ... լաւ համարեալ զմահ քաջութեամբ, քան զկեանս խղճիւ» եւ այս համոզումով դուրս է գալիս ամրոցից ու անձնատուր լինում թշնամուն(25):

Սակայն դեռ մնում էր Սյունիքի հարավ-արեւմուտքում մի ամրոց, ուր պատսպարվել էին սյունյաց իշխանների կանայք եւ ազատներից այլ «պատուական» մարդիկ: Դա Երնջակ ամրոցն էր(26): Յուսուֆը գալիս պաշարում է այդ ամրոցը, որը ցույց է տալիս համառ ու երկարատեւ դիմադրություն: Յուսուֆը Երնջակ է բերել տալիս Սմբատ թագավորին ու ստիպում նրան, որ հրամայի ամրոցը պաշտպանողներին անձնատուր լինել: Սմբատը հրաժարվում է: Նրան ենթարկում են անասելի տանջանքների եւ կրկին ու կրկին բերում ամրոցը պաշարող զորքի առաջ, որպեսզի պահանջվող հրամանը տա: Բայց նա միշտ էլ հրաժարվում է: Զայրացած Յուսուֆը հրամայում է գլխատել հայոց թագավորին եւ մարմինը կախել Դվինի պարսպից(26): Այս դեպքերը, ըստ Օրբելյանի, տեղի են ունենում հայոց 362 թվականին ( = 913թ.):

Երնջակը շարունակում է իր պաշտպանությունը նաեւ Սմբատի գլխատումից հետո: Բայց ամեն կողմից մեկուսացած ամրոցը, ի վերջո, ընկնում է թշնամու ձեռքը: Յուսուֆը կատաղաբար սրի է քաշում ամրոցի հանդուգն պաշտպաններին, ոմանց գերեվարում, իսկ ամրոցն ավերում: Այնտեղ եղած սյունյաց իշխանների եւ այլ ազատների կանայք գերեվարվում ու տարվում են Դվինի բանտը: Այդ կանանց տառապանքների լուրը հասնում է իրենց ամուսիններին՝ Սմբատ եւ Սահակ սյունյաց իշխաններին, որոնք, ինչպես տեսանք, փախել էին Գուգարք եւ Վասպուրական: Նրանք, որ լուռ ու անտարբեր էին մնացել Սյունիքի բնակչության տառապանքների, բնաջնջման ու գերեվարման նկատմամբ, անտարբեր չեն կարողանում մնալ իրենց փափկասուն տիկնանց տառապանքների նկատմամբ եւ կազմակերպում են զինվորական ջոկատներ՝ թշնամու վրա հարձակվելու ու գերի կանանց ազատելու համար: Բայց «ոչ կարացեալ վաղվաղակի գումարտակս զօրաց կազմեալ եւ ոչ ի հեռաստանէ աճապարել» Դվին: Դվինի բանտում մահանում են սյունյաց մեծ տիկին Շուշանը եւ Սմբատ գահերեցի ծծկեր երեխան: Իսկ Սմբատի եւ Սահակի կանանց Յուսուֆը տեղափոխում է Ատրպատական:

Այս դեպքերին հաջորդող ժամանակաշրջանը է՛լ ավելի է ծանրացնում երկրի ու ժողովրդի դրությունը: Հետագա դեպքերը, ըստ աղբյուրների, պատկերվում են այսպես: Սմբատ թագավորի ձերբակալումից հետո Գագիկ Արծրունին Յուսուֆի ճամբարից հանկարծ փախչում է Վասպուրական եւ իր եղբոր՝ Գուրգենի հետ միասին ամրանում է Կորդված լեռներում ու սկսում կռվել Յուսուֆի դեմ, որը Ատրպատականի կողմից փորձում էր ասպատակել նաեւ Վասպուրականը(27): Յուսուֆի հրոսակների դեմ պայքար է սկսվում նաեւ Սյունիքում. «Այլ եւ զՍիսականացն տերանց եւ ազգաց ոչ սակաւ ինչ աղմուկ շփոթից շուրջ պատէր յոստիկանէ անտի, որք եւ ամրացեալք իսկ ի խոխոմս խորոցն ձորոց եւ յամուրս քարանձաւաց՝ բազում արշաւասոյր հէնս ի վերայ թշնամեացն հասուցանէին, եւ գումարտակս սփռեալ՝ արեանց ճապաղիս հեղուին(28): Սյունիքում բարձրացած այդ պայքարի կազմակերպողները ոչ թե Սմբատ գահերեցը, նրա եղբայր Սահակը կամ Գեղաքունի իշխաններն էին, այլ գահակալ մյուս իշխանները՝ Բաղքի, Կովսականի եւ այլն, որոնք մնացել էին երկրում: Յուսուֆի դեմ պայքար էր սկսվել նաեւ կենտրոնական գավառներում: Այդ պայքարը ղեկավարում էր Սմբատ 1-ինի որդին՝ Աշոտը: Սա, իր հոր ձերբակալումից հետո, իր շուրջը համախմբելով համախոհների մի խումբ, սկսում է կռվել Յուսուֆի դեմ եւ մեկ առ մեկ ետ խլում հայրական ժառանգությունը հանդիսացող բերդերն ու ամրոցները: Վրաց թագավորի ջանքերով Աշոտը հռչակվում է թագավոր հայոց, որը հայտնի է նաեւ «Երկաթ» մականունով(29):

Այսպիսով, Սմբատի գլխատումից հետո ստեղծվում է մի բեկում, որի իմաստն այն է, որ այդ ժամանակվա Հայաստանի գլխավոր երեք նահանգում՝ Վասպուրական, Սյունիք եւ Շիրակ-Այրարատ, սկսվում է պայքար օտար նվաճողի դեմ: Սակայն պետք է նշել, որ այդ պայքարն ընդհանուր միասնական ճակատ չէր կազմում, այլ անջատ, տեղային բնույթ կրող պայքար էր, ֆեոդալ առանձին իշխանների տեղային շահերից բխող թույլ ընդհարումներ, որոնք ոչնչով չփրկեցին երկրի ու ժողովրդի ավերումն ու կողոպուտն արաբական հրոսակներից: Անգամ այդ թույլ շարժումը Յուսուֆը դիմավորեց կատաղի մոլուցքով: Այս բոլորը տեսնելով, - ասում է կաթողիկոս պատմիչը, - չար ոստիկանը «զայրագնաբար մռմռեալ մղձեալ սրտիվ ի թեթեւագոյնս անդր զթոյնսն թափէր»(30): Այնուհետեւ նա ավելի կատաղությամբ հետապնդում է բոլորին: Նրանից փախչում են «ռամիկն եւ անռամիկն», մոլեգնում էր Յուսուֆի սուրը եւ ամենուրեք «լցեալ էր արեամբ»: Ականատես պատմիչը էջեր շարունակ դառն հառաչանքով է նկարագրել երկրի ու ժողովրդի վիճակը, իրար հաջորդող, մեկը մյուսից արյունաներկ պատկերներ ու տեսարաններ է նկարագրել: Բացի այդ, Յուսուֆն իր մոտ եղած Աշոտ սպարապետին թագ է տալիս եւ հռչակում Հայաստանի թագավոր, ընդդեմ օրինական թագավոր Աշոտ 2-րդի: Սկսվում է մի ներքին ուժեղ ավերիչ կռիվ այս երկու Աշոտների միջեւ:

Աշոտ 2-րդի դեմ ապստամբում են նաեւ այլ իշխաններ, որոնք երկիրը ողողում են ներքին արյունալի ընդհարումներով: Այս բոլորին գումարած նաեւ սովը, որը վարակիչ հիվանդության նման ամեն տեղ մեկնում էր իր ոսկրոտ ձեռքը, կատարյալ է դարձնում մղձավանջային այն վիճակը, որն ապրում էր Հայաստանը 10-րդ դարի 2-րդ տասնամյակի կեսերին: Հայ աշխատավոր ժողովուրդը բառացիորեն բնաջնջվում էր, երկիրն ավերվում ու մոխրակույտի էր վերածվում: Հայաստան աշխարհը վեր էր ածվել սովից ու սրից ընկած աշխատավոր մարդկանց համատարած գերեզմանի: Պոռթկում է ժողովրդի ցասումն իրեն կեղեքող եւ հարստահարող ազնվականության դեմ, որն այժմ ժողովրդի աչքում առավել ատելի էր իր ծախվածության, մորթապաշտության եւ երկրի պաշտպանությունը չկազմակերպելու համար: Երբ Աշոտ 2-րդը ձեռք է բերում որոշ հաջողություններ, որպես երկրի օրինական թագավոր, նրա մոտ են գալիս սյունյաց իշխաններն իրենց հպատակությունը հայտնելու եւ աջակցելու համար: Առաջինը գալիս է Սմբատ գահերեց իշխանը. «Յայսմ վայրի եկն ապա մեծ իշխանն Սիւնեաց առ արքայորդին Աշոտ. եւ բազում պատուաւսէր եւ սերտ հարազատութեամբ ընկալաւ զնա՝ մեծապանծ պատուով շքեղացուցեալ»(31): Ապա գալիս է Գեղաքունիքի Գրիգոր Սուփան իշխանի Վասակ եղբայրը. «Եկն եւ մեծ Հայկազուն Վասակ՝ եղբայր մանկազրաւ իշխանին Գրիգորոյ, եւ զնա եւս ի նոյն պատիւ պերճութեան վայելչական կարգօք մեծարէր»(32): Իսկ Ս.Օրբելյանն ավելացնում է, որ Աշոտ 2-րդը այս Վասակին ընդունում է խնդությամբ եւ «վիճակեցոյց իւրոյ տերութեանն»(33):

Այս վկայություններից երեւում է, որ նախ՝ Սյունիքի գահերեց Սմբատ իշխանը, որպես Բագրատունիների վասալ, գալիս է, իր հպատակությունը հայտնում նոր թագավորին ու նրանից ստանում շքեղ պատիվներ: Երկրորդ՝ Գեղաքունիքը այժմ համարյա ինքնուրույն է Սյունիքի գահերեցից եւ անմիջականորեն ենթակա Բագրատունիներին, որովհետեւ, ինչպես տեսնում ենք, Գեղաքունիքի իշխանական գահը ժառանգելու համար Վասակը գալիս է ոչ թե Սյունիքի գահերեցի, այլ Բագրատունի թագավորի մոտ, որը եւ նրան «Վիճակեցոյց իւրոյ տերութեանն», այսինքն՝ իշխան է կարգում Գեղաքունիքի գահում: Հ.Դրասխանակերտցու եւ Ս.Օրբելյանի վկայությամբ վերադառնում են նաեւ Սյունիքի մյուս իշխանները՝ Սմբատ գահերեցի եղբայրներ Սահակը, Բաբկենը, Վասակը եւ Գրիգոր Սուփան 2-րդի մյուս եղբայրը՝ Սահակը: Սրանք ուղղակի գալիս են Սյունիք, իրենց հայրենի ժառանգությունները, առանց ներկայանալու Բագրատունյաց նորապսակ թագավորին(34): Այդ հասկանալի է, որովհետեւ սրանք Բագրատունի թագավորների անմիջական վասալները չէին, որպեսզի ներկայանային Աշոտ 2-րդին:

Աշոտ 2-րդին ներկայանալուց մի փոքր անց Սմբատ գահերեցը թույլտվություն է խնդրում նրանից վերադառնալու իր երկիրը՝ եղբայրներին հանդիպելու նպատակով. «Հրաման առնու յարքայէ եւ դառնայ յԱրագած լեռնէ եւ գայ, գտանէ զեղբայր իւր. եւ խնդութիւն ոչ փոքր ինչ լինէր ի մէջ նոցա» (35): Շուտով գերությունից ազատվում ու վերադառնում են նաեւ նրանց կանայք: Այսպիսով, վտանգի ժամին թե՛ երկիրը, թե՛ ժողովրդին լքած տիրակալ այս իշխաններն այժմ, երբ վտանգը հեռացել էր անմիջական իրենց կալվածքներից, նորից վերադառնում ու վերականգնում են իրենց քաղաքական իշխանությունը, որպես հայրենի տերեր:

Եվ հիրավի, վերադառնալուց հետո Սմբատ գահերեցի առաջին գործը, ինչպես կտեսնենք ստորեւ, եղավ երկրում բարձրացած գյուղացիական ապստամբությունը դաժանությամբ ճնշելը, փախած եպիսկոպոսին վերադարձնելը եւ Տաթեւի վանքի հեղինակությունը վերականգնելը:

Այժմ կարող ենք նորից հետեւել սյունյաց գահակալ այս իշխանների պատմությանը առանձին-առանձին:

**Գեղաքունիքի գահակալ իշխանությունը.** - Ինչպես տեսանք, վերադարձից հետո Գեղաքունիքի իշխան է դառնում Գրիգոր Սուփան 2-րդի կրտսեր եղբայր Վասակը: Ալիշանը գտնում է, որ իշխան է դարձել ոչ թե Վասակը, այլ Սուփան 2-րդի միջնակ եղբայր Սահակը(36): Ալիշանը հեռվում է, հավանաբար, Հ.Դրասխանակերտցու հետեւյալ վկայության վրա. «Զայսու ժամանակաւ ապա իշխանն Սիւնեաց Սահակ, որ սեպհականաբար պայազատէր զգաւառսն առ ծովեզերբն Գեղամայ՝ վախճանեալ փոխի ի կենացս, թողլով իւր ուստր մի մանկիկ տղայ փոխանորդ»(37): Որ իրոք, Սահակը վերադարձից մի փոքր անց մահանում է, վկայում է նաեւ Ս.Օրբելյանը. «Եւ սակաւ ինչ կեցեալ վախճանի»(38): Հ.Դրասխանակերտցու այս վկայության մեջ թեեւ Սահակը համարվում է Գեղամա երկրի իշխան եւ պայազետ, բայց այդ հակասում է իր եւ Ս.Օրբելյանի վերեւ մեջբերված վկայություններին, համաձայն որոնց Աշոտ 2-րդ Բագրատունուց այդ երկրի պայազատությունը ստացավ Վասակը եւ ոչ թե Սահակը: Գուցե պատմիչին, նրա հետ միասին նաեւ Ալիշանին, շփոթության մեջ է գցել երեցության կարգը, քանի որ Սահակը երեց էր Վասակից, բայց ֆեոդալական հասարակարգում միշտ երեցությունը չէ, որ գործում է, գործում է նաեւ ուժը, կորովը եւ ռազմունակությունը: Աշոտ Երկաթի համար այդ ժամանակաշրջանում ավելի կարեւոր էր ռազմիկ ու կորովի վասալը, քան թե երեցության կարգը: Իսկ այդ տեսակետից համեմատաբար ձեռնտուն Վասակն էր, քան Սահակը, որը մեր կարծիքով այդ ժամանակ շուրջ 70 տարեկան էր(39): Գուցե հենց այս էր պատճառը, որ նա վերադառնալուց սակավ ժամանակ անց մահանում է: Եվ վերջապես, մենք ունենք Ս.Օրբելյանի ուղղակի վկայությունը. «Գրիգոր Սուփան.. մեռանի… եւ պայազետէ զտերութիւն նորա Վասակ՝ եղբայր իւր: Մեռանի եւ Սահակն»(40): Ուրեմն, անկասկած է, որ Գեղաքունիքի իշխան է դարձել Վասակը: Սակայն, ինչպես երեւում է, նա իր Սահակ եղբորը չի զրկել իշխանությունից, հավանաբար, նրանք կալվածքները բաժանել են իրար մեջ: Այդ երեւում է նրանից, որ սրանց կալվածների մասին խոսելիս, պատմիչները Սահակի մասին ասում են, որ տիրում էր ծովափի գավառներին, իսկ Վասակի մասին՝ «Պայազատէր, զտերութիւնն Գեղարքունւոյ»(41):

Շուտով Գեղաքունիքի այս Վասակ իշխանը գժտվում է Աշոտ Երկաթ թագավորի հետ: Այդ գժտության մասին աղբյուրները պատմում են հետեւյալը: Վասակը, ինչպես տեսանք, իր հպատակությունն էր հայտնել Աշոտ Երկաթին, բայց վախենում էր նրանից եւ չէր գնում նրա մոտ: Երկյուղի պատճառը բավականաչափ հիմնավոր էր՝ նախ այն, որ վրաց բդեշխ Գուրգենի փեսան էր եւ բավականաչափ մոտիկ հարաբերությունների մեջ նրա հետ, իսկ Գուրգենը Աշոտ Երկաթի ոխերիմ թշնամին էր, եւ երկրորդ՝ Վասակը մոտիկ հարաբերությունների մեջ էր նաեւ մյուս թագակիր Աշոտի հետ, որը նույնպես Աշոտ Երկաթի երդվյալ թշնամին էր: Վասակ իշխանը խնդրում է կաթողիկոս Հովհաննեսից, որ նա Աշոտ Երկաթից «յետկար երդման» բերի, որ նա Վասակին ոչինչ չի անի, եթե վերջինս գնա նրա մոտ: Կաթողիկոսին հաջողվում է Աշոտ 2-րդից վերցնել նման մի հավատարմագիր, եւ Վասակը գնում է նրա մոտ ու իրոք լավ ընդունելություն գտնում: Բայց շուտով բամբասվում է Աշոտ 2-րդի առաջ եւ մեղադրվում է այն բանում, որ նա կապեր է պահպանում մյուս Աշոտի հետ, եւ անգամ նրան ու իր աներոջ Գուրգենին հասցեագրված նամակներ են հայտնաբերում նրա մոտ: Աշոտ 2-րդն անմիջապես շղթայակապում է Վասակին եւ նետում Կայեն կոչված ամրոցի բանտը: Կաթողիկոսի բազմաթիվ միջնորդությունները, ազատման կապակցությամբ, իզուր են անցնում(42): Վասակին ձերբակալելուց հետո Աշոտ 2-րդը գրավում է նրա տերությունը, այսինքն՝ Գեղաքունին: Միջադեպին մասնակից Հովհաննես կաթողիկոսը գրում է, որ ինքը սաստիկ հանդիմանել է թագավորին այն բանի համար, որ նա դրժել է իր խոստումը եւ «կապելոյ զՎասակն եւ ընդ իւրով ձեռամբ զտէրութիւն նորա նուաճելոյ»(43), մի այլ ձեռագրում՝ «եւ կապելոյ զՎասակն եւ իւրոյ ձեռամբն զտէրութիւն նորա նուաճելով»(44): Գեղաքունիքի այս նվաճման փաստը Ս.Օրբելյանը չի հիշում, ավելի ճիշտ, նա դիտավորյալ չի վերցրել իր աղբյուրից, որը տվյալ դեպքում, հենց այս Հովհաննես կաթողիկոսի աշխատությունն է, բայց անկասկած է, որ Գեղաքունիքը միացվել է Շիրակի Բագրատունիների երկրին: Թեեւ մի քիչ անց, աղբյուրների վկայությամբ, Վասակին Կայեն ամրոցից ազատում է Աշոտ 2-րդի աներ, բայց նրա դեմ ապստամբած, Գարդմանա իշխան Սահակ Սեւադան եւ ուղարկում իր հայրենի տունը, սակայն Վասակին այլեւս չի հաջողվում իշխել Գեղաքունիքում: Այդ օրվանից մենք այլեւս Վասակի եւ ընդհանրապես Գեղաքունիքի՝ որպես ինքնուրույն իշխանության մասին, ոչինչ չգիտենք: Վասակը Գեղաքունի իշխանների տոհմածառի վերջին ճյուղն էր, որը հատվեց Բագրատունի երիտասարդ թագավորի կամքով: Գեղաքունիքը տերիտորիալ իմաստով դուրս է գալիս Սյունիքի կազմից եւ դառնում Շիրակի Բագրատունիների տիրության մի մասը: Այդ տեղի ունեցավ 10-րդ դարի 2-րդ տասնամյակի վերջում:

**Վայոց ձորի գահերեց իշխանությունը.** - Ինչպես տեսանք, Յուսուֆի հալածանքներից փախած Սմբատ գահերեց իշխանը եւ նրա երեք եղբայրները՝ Սահակը, Բաբկենը եւ Վասակը վերադարձան եւ նորից տիրեցին իրենց հայրենի ժառանգություններին, այն է՝ Ծղուկ, Վայոց ձոր, Բաղք, Ճահուկ գավառներին: Վերահաստատումից հետո նրանք ընդհարվում են Գողթանի էմիրի հետ: «Մեծ իշխանն Սիսական տոհմին՝ Սմբատ, երիս եւս եղբարքն հանդերձ ցասմնական իմն սրտիւ դժգմեալ ընդ հագարացւոյն, որ յայնժամ զգաւառն Գողթան բռնակալեալ պայազատէր խնդրէին առ ի նմանէն յինքեանս դարձուցանել զսեպհական իւրեանց ամրոցն Երնջակ եւ զառստորոտով նո-



## 1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Որա զգավառն, զոր Յուսփայ ոստիկանին առեալ տուեալ էր ի ձեռս Գողթան բռնակալին, այլ նա իբրեւ յարքունուստ զայն նմա շնորհեալ համարէր եւ ոչ առնոյր յանձն տալ»(45): Այս եւ Ս.Օրբելյանի համանման վկայությունից երեւում է, որ այդ ժամանակ Գողթան գավառը քաղաքական-վարչական առումով չէր մտնում Սյունիքի մեջ: Այն բռնակալել էր արաբ էմիրը եւ ստեղծել առանձին վարչական միավոր: Բացի այդ, Յուսուֆի ձեռքով Գողթանի այդ էմիրին էր տրվել նաեւ Երնջակ ամրոցը եւ համանուն գավառը, այսինքն՝ այն եւս դուրս էր եկել Սյունիքի վարչական սիստեմից եւ ենթարկվել Գողթանի էմիրությանը: Սյունիքի գահերեց իշխանը, ինչպես երեւում է, ոչ մի կերպ չի հաշտվել Երնջակ գավառի եւ համանուն ամրոցի, որը Սյունիքի հարավում ամենաամուր բերդն էր, կորստի հետ եւ պահանջել է Գողթանի էմիրից այն իրեն վերադարձնել: Սակայն Գողթանի էմիրը մերժում է այդ պահանջը, պատճառաբանելով, որ ինքն արքունիքից (Ատրպատականի էմիրությունից՝ Յուսուֆի ձեռքով) ընդեր է ստացել այն, ուստի իր սեփականությունն է: Բանը հասնում է զենքի. ի միջի այլոց, ընդհարման համար դրությունը նպաստավոր էր, որովհետեւ Յուսուֆը երկրորդ անգամ բանտարկված էր խալիֆի կողմից:

Երկու կողմից էլ պատերազմական պատրաստություններ են տեսնվում, հակառակորդները հավաքում եւ կազմակերպում են իրենց բանակները եւ դուրս գալիս ռազմադաշտ: Սյունյաց բանակը ղեկավարում էին ինքը՝ գահերեց իշխանը եւ իր եղբայրները: Վճռական ճակատամարտում թշնամու բանակը երերվում է, սկսում է փախուստի դիմել, բայց հենց այդ նույն պահին սյունյաց բանակի թիկունքում կատարված մի դավաճանություն հաղթանակ է ապահովում Գողթանի զորքին: Այդ դավաճանության մասին աղբյուրները տարակարծիք են: Ըստ Հ.Դրասխանակերտցու՝ սյունյաց բանակում էր Գաբավոնացի իշխան Սմբատի գունդը, որը կանգնած էր սյունյաց բանակի ձախ թեւի թիկունքում, ուր մարտը ղեկավարում էր Սմբատի կրտսեր եղբայր Վասակը: Եվ ահա մարտի վճռական մոմենտին Գաբավոնյաց այդ գունդը թիկունքից խփում է Վասակին ու փախչում Նախիջեւանի կողմերը(46): Իսկ ըստ Ս.Օրբելյանի՝ Սմբատ իշխանն իր զորքի մեջ էր ընդգրկել իր աշխարհի շրջապատում ապրող թուրքերին, որոնք եւ կանգնած լինելով ձախ թեւում, թշնամու հետ գաղտնի բանակցություն են վարում եւ թիկունքից խփում Վասակին ու փախչում Նախիջեւանի կողմը(47): Սյունեցիները պարտվում են, սպանվում է Վասակ իշխանը: Երնջակը մնում է Գողթանի վարչական սիստեմում:

Այդ անհաջողությունից հետո, մնացած երեք եղբայրները իրենց հայրենի ժառանգությունը բաժանում են իրար մեջ. «Աւագն Սմբատ զաւագագոյն մասն Սիւնեաց ընդ արեւմուտս կողմն եւ զբոլոր Վայոց ձոր ունէր ի բաժնի, իսկ Սահակ՝ ընդ արեւելս մինչ ի Հակարի, բայց փոքրիկն Բաբգէն սակաւ ինչ ունէր մասն ի բաժնի»(48): Հ.Դրասխանակերտցու վկայությամբ Բաբկենին ընկած այդ փոքրիկ բաժինը նրանից խլում է Սահակ եղբայրը(49):

Այս վկայություններից երեւում է, որ տասներորդ դարի երկրորդ տասնամյակի վերջում կրկին տրոհվում են Սյունիքի գահերեց իշխանական տան կալվածքները: Այս եւ հետագա վկայություններից երեւում է նաեւ, որ կալվածքների մեծ մասն անցնում է Սմբատին: Սահակը, ստանալով արեւելյան մասը, փաստորեն բաժանվում է գահերեց եղբորից եւ ստեղծում վարչական մի նոր միավոր, գահակալ մի նոր իշխանություն, որի բուն կենտրոնը Բաղքն էր:

Բաբկենը դժգոհ այս բաժանումից, սպասում է հարմար առիթի իր եղբոր հետ հաշիվ տեսնելու համար: Առիթը գալիս է: Իր երկրորդ բանտարկությունից ազատվելուց (922թ.) հետո Յուսուֆը նորից հաստատվում է Ատրպատականի գահում: Նա այս անգամ Հայաստան է ուղարկում իր Նսր անունով զորավարին, որը հայտնի է մեր մատենագրության մեջ նաեւ Սբուկն անունով: Նսրը Հայաստան է մտնում Արաքսի հովտով եւ գալիս առժամանակ նստում է Նախիջեւանում: Այդ միջոցին Բաբկենը գալիս է Նախիջեւան, Նսրի մոտ եւ գանգատվում իր եղբորից, որ նա իրեն զրկել է ժառանգությունից: Նսրը Բաբկենին շատ լավ է ընդունում եւ խոստանում միջամտել նրա գործին եւ նրան վերադարձնել իր հայրենի ժառանգությունը: Նսրն իր մոտ է հրավիրում Սահակ իշխանին, որը եւ, խաբվելով նրա բարեկամական խոստումներից, գալիս է Նախիջեւան: Նսրը սրան եւս ցույց է տալիս բարեկամական ընդունելություն ու առաջարկում է իր եղբոր՝ Բաբկենի հետ միասին գալ Դվին, այնտեղ հանգամանորեն եղելության մասին խորհրդակցելու համար: Սակայն հենց որ սյունեցի եղբայրները հասնում են Դվին, Նսրը անմիջապես շղթայակապում է նրանց ու գցում բանտ(50): Յուսուֆի պահանջով առժամանակ Ատրպատական գնալուց ու կրկին Հայաստան վերադառնալուց հետո Նսրը որոշում է ասպատակել Սյունիքը եւ ձեռք գցել նաեւ Սմբատ գահերեց իշխանին. «Յետ բազում աւուրց դառնայ (խոսքը Նսրի մասին է - Հ. Ուք.) այսրէն մեծ սպայակոյտ զօրու. եւ խորհի ի միտս իւր գնալ զՍիսական կողմամբ եւ յաւարի առնուլ զաշխարհն. եւ թէ հնար գտցէ՝ ըմբռնեսցէ եւ զմեծ գահերեց իշխանն Սիւնեաց զՍմբատ, յանկարծօրեն աւազակաբար. եւ կամ մարտօրէն առաթուր հարուլ, գերել եւ աւերել զտուն նորա, եւ զինքն տանել առ եղբարսն ի Դվին»(51),

Օտար բռնակալի այս նոր նվաճման փորձը Սմբատ իշխանը դիմավորում է կազմակերպված: Տեղեկանալով սպառնացող աղետի մասին, նա համախմբում է իր հեծելազորը Վայոց ձորում, այն դասավորում է իր մայրաքաղաք Եղեգիսում, ամրացնում է ամրոցներն ու բերդերը: «Իսկ մեծ եւ ամենիմաստն, - ասում է Ս.Օրբելյանն այդ մասին, - Սմբատ ի սեպհական գաւառին իւրում դարեալ, դադարեալ նստէր ի Վայոց ձոր: Լուեալ ապա զհամբաւ գալոյ նորա, եւ ամրացուցեալ զտուն իւր եւ զամենայն գաւառն յամուրն Վայոց ձորոյ. եւ ինքն հորդան տուեալ զօրացն ամբոխս բազումս սպայակոյտ զօրու շուրջ զիւրեաւ կացուցանէր իւրում արքունական յապարանսն որ ի գիւղաքաղաքն յԵղեգիս»(52): Նա որոշում է վարել պաշտպանական մարտ եւ այն էլ իր սեփական գահանիստ գավառում՝ Վայոց ձորում: Նսրը մտնում է Սյունիք իր հրոսակախմբերով, բայց տեսնելով Սմբատի կազմակերպված ուժը, հրաժարվում է ռազմական գործողություններից եւ պատգամավորների միջոցով խաղաղության բանակցություններ սկսում Սմբատի հետ: Նրանք տեսակցում են եւ կնքում հաշտության պայման, ընդ որում Սմբատը Նսրին տալիս է բազմաթիվ «օժիտս» եւ «պարգեւս», իսկ Նսրը խոստանում է նրա բանտարկված եղբայրներին ազատ արձակել, որն իբրեւ պայման առաջարկել էր ինքը՝ Սմբատը(53): Նսրը, երբ վերադառնում է Դվին, բանտից ազատում է Բաբկենին, նրանից վերցնելով մեծ փրկագին, իսկ Սահակին առժամանակ պահում է, որովհետեւ նա պահանջված փրկագինն այդ պահին չի կարողանում տալ: Սակայն շուտով նա եւս վճարում է «բազում կշիռս» ոսկի եւ ազատ արձակվում ու գալիս է իր «տէրութիւնը». «եւ խնդութիւն բազում լինէր ի մեջ եղբարցն ու աշխարհին: Եւ կային միաբան խաղաղութեամբ պարապեալ շինութեանց եւ գովելի գործոց». եզրափակում է Ս.Օրբելյանն իր ասելիքը այս շրջանի մասին: Մութ է մնում այն հարցը, թե Բաբկենը ի վերջո ստացա՞վ հայրենի ժառանգությունից իր համար բաժին: Բայց դժվար չէ ենթադրել, որ եթե դրանից հետո եղբայրները հաշտ ու համերաշխ էին ապրում, ապա դա նշանակում է, որ Բաբկենն այս կամ այն կերպ բավարարվել էր:

**Զագիկյանների գահակալ իշխանությունը.** - Ս.Օրբելյանը հայտնում է, որ 10-րդ դարի առաջին քառորդում Սյունիքում ծաղկում էր նաեւ գահակալ իշխանների մի այլ ճյուղ՝ Զագիկյանների ճյուղը, որն ուներ իբրեւ բաժին Բաղաց գավառը եւ Կապան քաղաքը:

Այս ճյուղի հայրենական բաժինը կազմող Բաղքը ոչ թե գահերեցների ճյուղի բաժինը կազմող Բաղքն էր, այլ Բաղքի այն մասը, որը կոչվում էր Քաշունիք կամ՝ Մյուս Բաղք եւ, ըստ Ս.Օրբելյանի հարկացուցակի, հանդիսանում էր Սյունիքի 9-րդ գավառը:

Ամփոփելով ասվածը, պետք է նշել, որ Սյունիքը վարչական եւ տերիտորիալ տեսակետից հսկայական փոփոխություններ կրեց Ատրպատականի ոստիկանների արշավանքների ժամանակ (909-920-ական թվերի կեսերը), 908 թվին, Աշոտ գահերեցի մահվան ժամանակ, տերիտորիալ եւ վարչական տեսակետից Սյունիքի կազմում էին հիմնական բոլոր գավառները՝ Գեղաքունի, Վայոց ձոր, Ծղուկ, Ճահուկ, Աղահեջ, Հաբանդ, Բաղք, Մյուս Բաղք (Քաշունիք), Արեւիք, Երնջակ, Ջորք, Կովսական, Նախիջեւան (որը ձեռք բերին 10-րդ դարի սկզբում), գուցե նաեւ Գողթն: Սյունիքի տերիտորիան այդ ժամանակ իր առավել մեծությանն էր հասել, նման մեծություն նա չուներ ո՛չ դրանից առաջ, եւ ո՛չ էլ դրանից հետո: Այդ ժամանակ մեծ էր նաեւ գահերեց իշխանական ճյուղի բուն սեփականությունը կազմող տերիտորիան: Գահերեցների ճյուղին էին պատկանում՝ Վայոց ձորը, Ճահուկը, Ծղուկը, Բաղքը, Երնջակը եւ նրանց անցած Նախիջեւանը: Հաբանդն ու Շնհերը 9-րդ դարի վերջերում ժառանգություն էր հասել այդ ճյուղի ներկայացուցիչ Փիլիպպե 2-րդին, որը կազմել էր առանձին գահակալ իշխանություն:

Սակայն Ատրպատականի ոստիկանների արշավանքներից հետո իրերի պատկերը զգալի չափով փոփոխված էր: Տերիտորիալ եւ վարչական առումով Սյունիքից անջատվել էին Գեղաքունին, որն անցել էր Բագրատունիներին, Երնջակը, Նախիջեւանը (նաեւ Գողթանը), որոնք անցել էին արաբներին՝ Գողթանի եւ Նախիջեւանի էմիրություններին: Նվազել ու փոքրացել էր նաեւ իրենց՝ գահերեցների ճյուղի բուն տերիտորիան: Նրանից անջատվել էին ոչ միայն Երնջակն ու Նախիջեւանը, այլեւ մնացած չորս գավառները տրոհվել էին երեք եղբայրների միջեւ, մի բան, որն իր հետ բերում էր նաեւ վարչական ու քաղաքական իշխանության տրոհում: Սմբատ գահերեցի ձեռքում մնացել էին Վայոց ձոր եւ Ճահուկ գավառները, գուցե նաեւ Ծղուկի մի մասը: Բնական է, որ նա այժմ քաղաքական գերիշխանության տեսակետից լուրջ հեղինակություն չէր կարող ներկայացնել մյուս գահակալ իշխանների աչքում, հատկապես, Սյունիքի հարավ-արեւելյան մասի իշխանների աչքում: Գահերեցի իշխանության տերիտորիալ եւ վարչական տրոհումը եւ նրա հեղինակազրկումը լուրջ փոփոխություն էր Սյունիքի ներքին կյանքում: Ահա թե ինչո՛ւ Սմբատ գահերեց իշխանի մահվանից հետո Սյունիքի քաղաքական իշխանության ղեկավարությունը շուտով Վայոց ձորից տեղափոխվում է հարավ-արեւելք՝ Բաղք:

### Ծանոթագրություն

1. Տե՛ս Ասողիկ, էջ 163: Նաեւ Հովհ.Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 193:
2. Հովհ.Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 204:
3. Հովհ.Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 205:
4. Նուն տեղում, էջ 211, 212:
5. Նույն տեղում:
6. Ս.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 184:
7. Նույն տեղում, էջ 184, 185:
8. Նույն տեղում, էջ 185: Տե՛ս նաեւ Հովհ.Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 213:
9. Հովհ.Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 213:
10. Ս.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 185:
11. Հովհ.Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 213:
12. Ս.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 185:
13. Հովհ.Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 213, 214:
14. Տե՛ս Ս.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 185, 186: Տե՛ս նաեւ Հովհ.Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ237:
15. Տե՛ս Հավելված:
16. Ս.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 186:
17. Հովհ.Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ214:
18. Ս.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 186:
19. Նույն տեղում, էջ 187:
20. Հովհ.Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 213-215:
21. Նկատենք, որ տոհմային պատմիչները կողմնապահորեն արդարացնում են իրենց տոհմի իշխանների դավաճանական արարքները. Թ.Արծրունին՝ Գագիկի, Ս.Օրբելյանը՝ Գրիգոր Սուփանի, Հովհ. Դրասխանակերտցին՝ Աշոտի:
22. Հովհ.Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 225:
23. Հովհ.Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 225, 226:
24. Հովհ.Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 230, 231:
25. Նույն տեղում, էջ 235:
26. Արիստակես վարդապետ Սեդրակյանն իր «Հնութիւնք հայրենեաց ի գաւառին Երնջակայ» աշխատության մեջ այդ բերդի տեղի ու դիրքի մասին պատմում է հետեւյալը. «Երնջակ գետի ձախ ափին եւ Նորաշեն գյուղից 2-3 կիլոմետր հեռու միապաղաղ սյան նման ուղղակի վեր է բարձրանում Երնջակ բերդը» (էջ 98): Այժմ նկատելի են այդ ամրոցի պարիսպների հետքերը եւ հարյուրավոր գերեզմաններ ամրոցի ստորոտում: Սեդրակյանը երեք անգամ բարձրացել է այդ ամրոցի գլուխը եւ երեք անգամ էլ զարմացել այնքան հոյակապ եւ բազմաթիվ արհեստահնար շենքերով: Ժայռերի գլխին թառած այդ ամրոցը բարձրանալու համար եղել է երկու ճանապարհ: Ամրոցն ունեցել է 3 տակ պարիսպ, նաեւ միջնաբերդ: Պարսպի մեջ եղել են հարյուրավոր մեծ ու փոքր սենյակներ քարակիր եւ աղյուսից շինված: Եղել է 9 ջրաբար: Այս բոլորը գտնվել են լեռնագագաթի ցածր ճյուղի վրա, իսկ ավելի բարձր ճյուղի վրա գտնվել են բազմաթիվ շենքեր, կամարներ, դահլիճ, իշխանական արքունիքը եւ այլն (էջ 90-98):
27. Հովհ.Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 237-240: Ս.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 190-191:
28. Հովհ.Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 245:
29. Նույն տեղում, էջ 245, 246:
30 Հովհ.Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 245:
31. Նույն տեղում, էջ 246:
32. Հովհ.Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 294, Ս.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 193:
33. Հովհ.Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 294:
34. Ս.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 193:
35. Տե՛ս Հովհ.Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 297, 298: Ս.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 193, 194:
36. Ս.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 193: Տես նաեւ Հովհ.Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 297:
37. Ալիշան, Սիսական, էջ 33:
38. Հովհ.Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 301:
49. Ս.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 194:
40. Եթե նա իր հոր՝ Վասակ Գաբուռի մահվան ժամանակ՝ 859-860թթ. անգամ 10 տարեկան լիներ, ապա այժմ 70-ին մոտ ծերունի էր:
41. Ս.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 298:
42. Հովհ.Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 305:
43. Հովհ.Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 305: Ս.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 194, 195:
44. Հովհ.Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 305:
45. Նուն տեղում, էջ 391:
46. Հովհ.Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 307, 308: Ս.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 195:
47. Հովհ.Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 308:
48. Ս.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 195-198: Այս հակասական վկայությունները գուցե բացատրում են միմյանց: Կարող է պատահել, որ Գաբավունյաց Սմբատը հենց այդ թուրքերի ղեկավարն էր. այդ դեպքում դուրս կգա, որ այդ ցեղն ապրում էր Գաբավունյաց երկրում:
49. Նույն տեղում, էջ 157:
50. Հովհ.Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 332:
51. Հովհ.Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 232, 233: Ս.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 197, 198:
52. Ս.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 198, 199: Տե՛ս նաեւ Հովհ.Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 358,359:
53. Ս.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 199: Հովհ.Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 359:
54. Ս.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 199:
55. Տե՛ս Հավելվածի համապատասխան տեղը:

■

1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ԺԱՄԱՆԱԿԻ ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ

# Պատկերների խնդիրը

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑ

**Հնուց գոյություն ունեցող հարց է, բայց սուր կերպով հրապարակ իջավ VIII-IX դարերում: Եկեղեցու հայրերը, ինչպես ուրիշ շատ խնդիրներում, այս դեպքում եւս համերաշխ չէին եւ ունեին հակառակ կարծիքներ՝ երբեմն մեղմ, երբեմն կտրուկ եւ անհաշտ ոգով արտահայտված:**

Հեթանոս աշխարհը կանգնած էր կուռքերի առաջ: Քրիստոնեությունը տապալելով անշունչ նյութերի պաշտումը, իր կողմից մշակում էր հետզհետե այնպիսի պաշտամունքներ, որ հեթանոսական մոլորության կերպարանք կարող էին ստանալ: Խաչի, Քրիստոսի Մարդեղության եւ Տնօրենության պատկերներն, ինչպես եւ աստվածահաճո սրբոց նկարները սրբազան իրերի բարձր համարում էին ստացել:

Հեթանոսները եւ հրեաները հիմք ունեին մեղադրելու քրիստոնյաներին, որ անշունչ առարկաներ են պաշտում՝ քար եւ փայտ: Եվ կամ անտես եւ աներեւույթ Աստծուն շոշափելի ձեւով են ներկայացնում, այս կամ այն կերպարանքը տալիս:

Խաչի եւ պատկերների խնդրում որոշելու է երկու վերաբերում.

1) պատկերը որպես զարդարանք կամ ուսուցման միջոց, որ փոխարինում է անգրագետներին գիրը, կամ հորդորիչ միջոց բարեպաշտության եւ կրոնասիրության,

2) պատկերը որպես օրինակ նախատիպի, սուրբ եւ պաշտելի ինքնին (1):

Առաջին վերաբերումը կարելի է անվանել ընդհանուր խոսքով պատկերահարգություն…

Ոմանք հենվելով Ելքի վրա, ժխտում էին դրականորեն պատկերները(2), մանավանդ երկյուղ էին կրում, որ կդառնար մի տեսակ կռապաշտություն: Էլվիրի (Elvira) ժողովը 306թ.(3) որոշում է 30 կանոն, որով արգելվում է սրբապատկերների պաշտամունքը՝ որպես կռապաշտություն placuit picturas in ecclesia esse non debere, nequod colitur et adoratur in parietibus depingatur.

Եվսեբիոս Կեսարացու(4) վերաբերումը նշանակալից է: Կոստանդին Մեծի(5) քույրը՝ Կոստանցիա, խնդրել էր Եվսեբիոսից Քրիստոսի պատկերը: Եվսեբիոս հարց է տալիս, թե ի՞նչ պատկերի մասին է խոսքը: Արդյո՞ք Բանի պատկերը, որ է Հիսուս Քրիստոս: Սակայն ասված է, որ միայն Հայրն ինքը գիտե, թե ի՞նչ կերպ պիտի ունենա, ինչպե՞ս պիտի լինի Որդին: Կամ գուցե խոսքը նրա փառավորյալ Մարդեղության մասի՞ն է: Սակայն ինչպե՞ս կարելի է անշունչ գույների միջոցով ներկայացնել այն Մարդեղությունը, որ այլակերպյալ է եւ ողջովին սուզված աստվածային լույսի մեջ: Գուցե վերջապես Կոստանցիա խնդրում է Մարդեղության պատկերը նախքան Հարությունը եւ Համբարձումը: Սակայն մի՞թե Կոստանցիա չգիտեր, որ Ս. Գիրքը արգելում է կերտել պատկերը նրա, որ է երկրի վրա, թե երկնքում: Ուստի Եվսեբիոս ստիպված է մերժել նրա խնդիրը: Եվ որպես լուսաբանություն եւ հիմնավորումն իր մերժման, Եվսեբիոս ավելացնում է, որ տեսնելով մի կնոջ ձեռքին Քրիստոսի եւ Պողոս (Առաքյալի) ենթադրյալ պատկերները, խլեց, որպեսզի այս սովորությունը չընդհանրանա եւ ժողովուրդը չսկսե, կռապաշտների հետեւությամբ, ներկայացնել Աստծուն պատկերների մեջ:

Իր «Եկեղեցական պատմության» մեջ Եվսեբիոս նկարագրելով Pane՝as քաղաքի արձանը, ուր ներկայացված է տեռատես կինը եւ Քրիստոս, (այն) համարում է հեթանոսական նախապաշարմաց մնացորդք (Վրթանեսի մոտ(8) ընդհակառակը, այս անդրին հիշվում է որպես ապացույց պատկերապաշտության):

Պատկերապաշտությունը թվում է, (թե) արդեն տարածված էր, երբ սկիզբ առան առասպելներն ու զրույցները Քրիստոսի եւ Մարիամ Աստվածածնի անձեռագործ պատկերների մասին: Աբգար թագավորին(9) ղրկված պատկերի հրաշագործության մասին գիտե VI դարի պատմագիր Եվագրիոս(10): Սրա ասելով, (պարսից) Խոսրով (թագավոր) չկարողացավ առնել Եդեսիան(11), շնորհիվ պատկերի պաշտպանության:

692թ. Ժողովի(12) 82-րդ կանոնն ընդունում է պատկերները որպես հարգելի եւ պատվիրում է Քրիստոսին ներկայացնել մարդու կերպարանքով եւ ոչ թե գառան:

Պատկերների (վերաբերյալ) վեճերի մեջ կարեւորը հարցի տեսական, աստվածաբանական կողմն է, որ երեւան է գալիս ուշ, թեեւ, եթե հավատալու լինենք Թեոփանեսին(13), նախաձեռնությունը պատկանում է Մաբբուգի Փիլոքսենոս եպիսկոպոսին(14): Նույնը կարծես հաստատում է եւ Հովհաննես Եփեսացին(15): Յոթներորդ Ժողովում՝ 787թ.(16), բերված եւ հերքված են սրանց վկայությունները: Այս տեղեկության (համաձայն), Փիլոքսենոս (եպիսկոպոսը) կարծում էր, որ Քրիստոսին հարգել չէ նշանակում, երբ նրա պատկերներն են շինում: Նա աններելի էր համարում հրեշտակներին նկարել մարմնով, քանի որ նրանք հոգեւոր էակներ են եւ տղայամտություն է Ս. Հոգին ձեւակերպել որպես աղավնի: Այսպիսի հայացքներ ունենալով, նա ոչնչացնում էր հրեշտակների պատկերները եւ ծածկում նկուղներում՝ Քրիստոսինը:

Յոթներորդ ժողովում, Փիլոքսենոսի հետ, մեղադրվում են նաեւ Սեվերոսը(17), Պետրոս Ֆուլոն (Թափիչը) (18) եւ ընդհանրապես միաբնակները:

Պատկերամարտությունն, այսպիսով, տեսական հողի վրա կապվում է միաբնակության հետ: Այս նկատումով շատ կարեւոր է Եվսեբիոսի վերեւ հիշված դատողությունը: Ըստ Եվսեբիոսի, անկարելի է ներկայացնել Քրիստոսի մարդեղացումը, որովհետեւ նա այլափոխված է եւ աստվածացած: Եթե խնդրի վրա նայենք միաբնակ վարդապետության տեսանկյունից, ապա պիտի խոտելի համարվի Քրիստոսի պատկերագործությունը եվտիքյաններին(19) աչքում, քանի որ մարդկայինը ձուլվում է աստվածայինի հետ եւ կլանված է նրանով: Անհնարին է մարդկայինը նկատել առանձին: Սեվերյանների օրինակով մարդկայինը ներկայացնել առանձին նշանակում է (այն) զատել աստվածայինից եւ, ուրեմն, նեստորական գործ կատարել: Աստվածայինը եւ մարդկայինն այնպես են միացված, որ անկարելի է դրանք ներկայացնել անջատ-անջատ, ինչ որ անհնարին է, քանի որ մեկը սահմանափակ եւ պարագիր (circonscrit) է, մյուսը՝ անհուն եւ անսահման եւ անպարագիր: Պատկերների խնդիրն ուներ արտաքին եւ ներքին խթաններ: Արտաքինը գալիս էր օտար կրոններից՝ հրեական եւ մուսուլմանական համայնքներից, մանավանդ պավլիկյան աղանդավորներից: Ներքինը՝ եկեղեցական գործիչներ(ից), որ Ս. Գրքի հիման

վրա եւ կամ քրիստոսաբանական տեսություններով դատապարտում են պատկերապաշտությունը: Սակայն կարեւորը ազգայնական եւ աստվածագրական մթնոլորտների տարբերությունն էր, որով տարվում էին Բյուզանդական կայսրության արեւմտյան եւ արեւելյան թեւերը:

Արաբական խալիֆ Օմար II (717-720) եւ Բյուզանդիայի կայսր Լեւոն III (717-741) միաժամանակ հանդես են գալիս պատկերների դեմ, ոչ անշուշտ, միեւնույն եւ ընդհանուր պատճառներից դրդված եւ ոչ մեկը մյուսի ազդեցությամբ: Թեոփանեսի զրույցը Բեսեր Ուրացողի (20) մասին շինծու է թվում:

Փիլիպպիկոս Վարդան կայսրը(21), Նիկեփոր պատրիկի որդին, որպես թե նպատակ է ունեցել ջնջել պատկերապաշտությունը: Սակայն կանխահաս մահը արգելք է եղել գործին: Լեւոն (III) Իսավրացի կայսրը վճռում է իրագործել: Տակավին մանուկ հասակում նա առիթ է ունեցել մի ուղեւորության ընթացքին ծանոթանալ մի քանի հրեաների հետ, որ արտաքսված էին Սիրիայից Մուավիայի որդի Եզիդ (1-ի) օրով (680-683): Լեւոն Իսավրացին նրանց ազդեցության ներքո սկսեց թշնամական վերաբերում ցույց տալ պատկերների հանդեպ: Հրեաներից մեկը, որպես թե կատակով, գուշակել էր, թե Լեւոնը մի օր գահ պիտի բարձրանա եւ երդում էր առել, որ ոչնչացնե պատկերապաշտությունը: Թեոփանեսի ասելով, երբ Լեւոնը կայսր դարձավ, հիշեց իր խոստումը: Մի հրեա Փյունիկեի Լավոդիկիա քաղաքից, որ մոտ բարեկամն էր Եզիդ [II] խալիֆի (720-724), հավատացրեց խալիֆին, որ երեսուն տարի (ըստ Թեոփանեսի 40 տարի) կթագավորե, եթե վերացնե պատկերապաշտությունը: Եզիդ խաբված՝ հրաման արձակեց նույն մտքով: Սակայն ինքը շուտով մեռավ, հակառակ մարգարեության: Քսան տարի անցավ եւ գահ բարձրացավ Եզիդի որդին՝ Վալիդ (II) (743-744), որը սուտ մարգարեին պատժեց՝ մահվան տալով իր խաբեբայության համար:

Լեւոն ( III-ը) նախանձով էր նայում մուսուլման տիրակալների նախաձեռնությանը մի խնդրում, որ մոտ էր իր սրտին: Մի սիրիացի օգտվեց Լեւոն (կայսեր նման) պատրաստի տրամադրությունից եւ նրան մղեց գործի: Բեսերը ծնված էր քրիստոնյա, գերի էր ընկել արաբների ձեռքը, կրոնափոխ եղել եւ փրկվել ստրկությունից: Մարմնավոր ուժի եւ ճարպկության շնորհիվ ընկնում է կայսերական դուռը եւ սադրում Լեւոնին պատկերամարտության: Մյուս գործակիցներն էին Փռյուգիայի Նակոլիա քաղաքի եպիսկոպոս Կոստանդինը, Կլավդիոպոլիս քաղաքի եպիսկոպոս Թովմասը եւ Եփեսոսի արքեպիսկոպոս Թեոդոսիոսը, որ էր որդի Տիբերիոս III կայսեր:

726 թվին Լեւոն (III-ը) արձակեց իր հրամանագիրն ընդդեմ պատկերապաշտության, հայտարարելով, որ ինքը եւ՛ կայսր է, եւ՛ նվիրապետ:

Հրամանագիրը մեզ չի հասել եւ դժվար է որոշել բուն իմաստը: Մայրաքաղաքում եւ արեւմտյան երկրներում՝ Իտալիա, Հունաստան եւ կղզիներ, մեծ ցույցերով ընդդիմացան հրամանին: Վերջիններս անգամ ապստամբություն հայտարարեցին եւ ոմն Կոզմասի կայսր ընտրեցին եւ մի նավատորմով ղրկեցին Լեւոն [III-ի] դեմ, սակայն 18 ապրիլի 726 թվին ձախողեցին:

(Կայսրության) արեւելյան մասը խաղաղ մնաց: Պատրիարք Գերմանոսը միայն 730 թվին ստիպված էր հրաժարվել գահից եւ քիչ հետո խեղդամահ եղավ: Նրա հաջորդը՝ Անաստասիոս Սինկելլոսը համակերպվեց կայսեր քաղաքականության:

Ասորական արեւելքից պատկերամարտության դեմ ելավ Հովհան Դամասկացին(22): Առաջին ճառը արտասանված է 726թ., երկրորդը՝ 730 եւ երրորդը՝ քիչ հետո: Սրա տեսության հիմնական հոդվածներն են, որ Աստված, անտարակույս, անտեսանելի, անպարագիր եւ անմարմին է եւ ուրեմն չի կարելի նրան ներկայացնել որեւէ զգայական պատկերով, թեեւ մարգարեներին երեւում է շոշափելի ձեւով:

Սակայն Աստված մարդացել է եւ ուրեմն կարելի է նրան նաեւ նկարել եւ ներկայացնել մարդկային ձեւի տակ. «Ոչ եթէ զանտեսանելին պատկերացուցանեմ Աստուածութիւն, այլ պատկերացուցանեմ զտեսանելի մարմինն Աստուծոյ»(23): Այսպես եւ պատկերացնել կարելի է նաեւ Ս.Կույսին եւ սրբերին եւ ընդհանրապես բոլոր մարմնավոր էակներին: Նույնը եւ հրեշտակների, դեւերի եւ մարդկային հոգիների նկատմամբ: Ճիշտ է, համեմատելով երկրային մարմինների հետ սրանք աննյութ են, սակայն մարմին ունեն, եթե համեմատենք Աստծո հետ այն մտքով, որ սահմանափակ են, որոշ տեղ են բռնում եւ շոշափելի ձեւով էլ երեւացել են մարգարեներին եւ արդարներին: Պատկերագրությունն ուրեմն թույլատրելի է, սակայն վեճի էական մասն այն է, թե գործածության ի՞նչ |ոլորտ| պիտի ունենա նկարը: Կամ, որ հենվելով Ս. Գրքի վրա, ընդհանրապես դեմ են պատկերի գործածությանը: Դամասկացու կարծիքով, Ս. Գիրքը նախ հետեւողական չէ, անպայման ընդդեմ չէ, երկրորդ՝ պարտավորիչ չէ, քանի որ մենք գտնվում ենք ոչ թե հին օրենքի, այլ շնորհի տակ:

Ի՞նչ վերաբերում պիտի ցույց տալ դեպի պատկերները: Դամասկացի զանազանում է սոսկ հարգանքը պաշտամունքից: Տալ հարգս արժանավորին, երկրպագել կամ պաշտամունք իսկական: Ուրեմն որոշելու է պատկերահարգությունը պատկերապաշտությունից, սովորական հարգանքը, սերը, ակնածությունը կամ պատկառանքը՝ կրոնական պաշտամունքից (Տիրոջ պատկերին կամ Ս. Կույսի եւ կամ սրբերի, նրանց նշխարների, խաչի տված հարգանքը կրոնական է) (24):

Դամասկացին ավելացնում է նաեւ, որ անգրագետների համար նկարը գիրք է:

Պատկերներն այս մտքով հիշեցնում են եւ կենդանի պահում Տիրոջ Տնօրենությունն եւ վերջապես քաջալերում են մեզ նմանել սրբերի օրինակին: Դամասկացու մյուս տեսությունն այն է, որ սուրբ անձանց պատկերները ներկայացնելով, դրանք [պատկերները] կարծես մի տեսակ սրբանում են, շնորհ են ստանում:

Լեւոն [III-ը] մեռավ 741 թվի հունիսի 18-ին, առանց կարողանալու զգալի հարված տալու պատկերապաշտությանը: Միայնակի Փոքր Ասիան էր նրա հենարանը: Նրա որդին՝ Կոստանդին [V] Կոպրոնիմոսը(25), որոշեց իրագործել հոր ծրագիրը: Առաջին տարին Արտավազդի(26) ապստամբությունը արգելք եղավ: Արտավազդը հաջողեց տիրանալ մայրաքաղաքին եւ վերականգնել պատկերների պաշտամունքը 741 թվին: Սակայն Արտավազդի հաղթանակը ժամանակավոր էր: Կոստանդին [V] զորեց (= ընկճեց) իր հակառակորդին եւ մայրաքաղաք մտավ 742թ. նոյեմբերին: Սպասեց վայր մի (= մի պահ) մինչեւ որ իշխանությունը հաստատեց վերջնականապես եւ 743 թվին նորեն կրոնական գործին կպավ:

Կոստանդին (V) զգաց, որ ամենից առաջ հարկավոր էր ժողով գումարել եւ հոգեւորականության հավանությունը երաշխավորել: Այնուհետեւ միայն պետությունը կարող էր հիմնել իր անելիքը ժողովի վճիռների հիման վրա: Հիերիայի (Hieria) պալատում 753 թվի փետրվարի 10-ին գումարվեց ժողով՝ մասնակցությամբ 338 եպիսկոպոսների: Բացակա էին Անտիոքի, Երուսաղեմի եւ Ալեքսանդրիայի պատրիարքությունները, ինչպես եւ [Հռոմի] պապը չուներ իր ներկայացուցիչները: Նախագահում էր Եփեսոսի Թեոդոսիոս արքեպիսկոպոսը: Դժբախտաբար ժողովի արձանագրությունները մեզ չեն հասել, մնացել են միայն որոշումները եւ նզովականները՝ պահպանված VII ժողովի (787թ.) գործերի մեջ:

**Ժողովը գտնում է, որ**

1. Անկարելի է եւ անթույլատրելի կրոնական պատկերներ շինել, գործածել եւ պաշտել: Եթե մեկը ձգտե Հիսուս Քրիստոսին ներկայացնել ամբողջովին եւ որպես Մարդ եւ Աստված միաժամանակ, դրանով կպարագրե, կպարփակե աստվածայինը եւ կշփոթե բնությունները: Կամ եթե ձգտե ներկայացնել Քրիստոսի միայն մարդկայինը, նա դրանով կբաժանե այն, ինչ որ պետք է միացած լինի, այսինքն՝ կկազմե մի մարմին, ուրեմն կմեղանչե նեստորականության մոլորությամբ: Հետեւապես, ով որ պաշտե այսպիսի մի պատկեր, հաղորդակից կլինի նույն մոլորության: Միակ պատկերը, որ Հիսուս Քրիստոս մեզ է ավանդել, ինքն է՝ հաղորդությունը, հաց եւ գինի:

2. Գալով Ս. Կույսի եւ սրբերի պատկերներին, անթույլատրելի են եկեղեցու կողմից, որ խորշում է կուռքերի կռապաշտությունից: Ժողովը կարծում է, որ սրբերի պատկերներ շինելը ոչ մի կերպ չի կարելի բարեպաշտություն համարել, քանի որ սրբերն ապրում են Աստծո հետ եւ ամբարիշտություն է պատկերների միջոցով երկատել նրանց երկնային կյանքը: Ոչ թե հարգել, այլ անարգել է նշանակում նրանց լուսավոր անձերը պատկերացնել պիղծ նյութի միջոցով:

3. Ժողովը պատվիրում է, որ բոլոր պատկերները՝ նկարած, թե այլ կերպ շինած, պետք է հանել եկեղեցիներից, որպես խոտելի եւ կշտամբելի հավատի տեսակետից: Ով որ համարձակվի շինել կամ պաշտել կամ եկեղեցում կախել, կամ դնել իր տանը եւ կամ ծածուկ պահել, կարգալույծ կլինի, եթե եպիսկոպոս է, քահանա կամ սարկավագ, եւ կբանադրվի, եթե աշխարհական է կամ վանական:

4. Զգուշացնում է ոչնչացնել սրբազան պատկերազարդ անոթները՝ պատկերամարտության պատրվակով:

5. Նզովք՝ Գերմանոս պատրիարքին(27), Գեւորգ Կիպրացուն(28) եւ Մանսուրին (=Հովհաննես Դամասկացուն):

Կոստանդին [V] կայսրը մեռավ 775 թվի սեպտեմբերի 14-ին: Պատկերապաշտների բանակը տակավին հաղթված չէր: Արեւմուտքում Հռոմը դեմ եղավ 769 թվի Լատերանի ժողովով, իսկ Արեւելքում՝ Երուսաղեմում, 767 թվին գումարվեց ուրիշ ժողով, երեք պատրիարքությունների ներկայացուցիչնե-

## 1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

# ԺԱՄԱՆԱԿԻ ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ

### Քաղկեդոնի ժողով

451թ. հոկտեմբերի 8-ից առ նոյեմբերի 1-ը տեղի ունեցած եկեղեցական ժողով, որը հրավիրվել է Կոստանդնուպոլսից ոչ հեռու գտնվող Քաղկեդոն քաղաքում (ներկայումս Ստամբուլի արվարձաններից մեկն է) Բյուզանդիայի կայսր Մարկիանոսի կողմից Լեւոն Բ պապի համաձայնությամբ՝ Եվտիքեսի ուսմունքը քննելու եւ Քրիստոսի բնության մասին վեճերին լուծում տալու նպատակով: Կաթոլիկ եւ Ուղղափառ եկեղեցիների կողմից Քաղկեդոնի ժողովը ճանաչվում է որպես տիեզերական: Հայ առաքելական եկեղեցին, ընդունելով Քաղկեդոնի ժողովի որոշ դրույթները, հրաժարվել է ճանաչել ժողովի կողմից հռչակած քրիստոսաբանական բանաձեւը, որի հիմքում դրված է Լեւոն պապի տումարը:

### Եվտիքեսի վարդապետությունը

Եվտիքեսը Կ.Պոլսի վանքերից մեկի վանահայր էր, որը 430-ական թթ. սկսեց ուսուցանել, որ Քրիստոսն ունի միայն մեկ՝ աստվածային բնություն, իսկ նրա մարդկային որակները լուծված են աստվածային բնության մեջ, իբրեւ մի կաթիլ մեղրը օվկիանոսի մեջ, որով եւ մարդկային բնությունը աստվածացել է: Ըստ Եվտիքեսի՝ թեեւ Քրիստոսն ունի մարդկային մարմին, սակայն այն նման չէ սովորական մարմնի, այլ անապակ է ու իջեցված երկնքից:

Եվտիքեսի ուսմունքը դարձավ բուռն եկեղեցական-աստվածաբանական վեճերի առիթ: Անտիոքի քրիստոնյա աստվածաբանական դպրոցը դեմ դուրս եկավ Եվտիքեսին՝ հիմնվելով իր վարդապետներ Թեոդորիտոս Կիրոսացու եւ Թեոդորոս Մոփսուեստացու գաղափարների վրա: Ալեքսանդրիայի աթոռը այս հարցում ավելի չափավոր էր. չպաշտպանելով Եվտիքեսին՝ նա, այնուամենայնիվ, դեմ էր Քրիստոսի մարդկային եւ աստվածային բնությունների տարանջատմանը, երկյուղում էր Եփեսոսի ժողովում դատապարտված Նեստորի ուսմունքի վերածնումից եւ կասկածներ էր հայտնում Անտիոքի վարդապետների գաղափարների ուղղափառության վրա:

448թ. գումարված Կ.Պոլսի պատրիարքության տարեկան ժողովը նզովում է Եվտիքեսի ուսմունքը, զրկում նրան կարգից եւ վանահայրությունից: Եվտիքեսը դիմում է Ալեքսանդրիայի աթոռին, Հռոմի պապին եւ այլ եպիսկոպոսական աթոռների: Հռոմի պապն իր դիրքորոշումները հարցի վերաբերյալ արտահայտում է մի գրության մեջ, որը հետագայում ստանում է Լեւոնի տումար անունը: Լեւոնի տումարը Քրիստոսի մեջ ընդունում էր մի դեմք՝ երկու բնությամբ եւ էությամբ: Երկու բնությունները չեն խառնվում եւ չեն շփոթվում միմյանց հետ («Երկու բնութիւնք եկեալ առ իրեարս ի միանձնաւորութիւն»):

### Եփեսոսի 449թ. եկեղեցական ժողովը

449թ. Բյուզանդիայի կայսր Թեոդոս Բ կարգադրությամբ Եփեսոս քաղաքում գումարվում է եկեղեցական ժողով, որը նախագահում է Ալեքսանդրիայի պապ Դիոսկորոսը: Ժողովը հարկադրում է Եվտիքեսին հրաժարվել իր վարդապետությունից: Միեւնույն ժամանակ ժողովը մերժում է Լեւոնի տումարը եւ դատապարտում Կ.Պոլսի Փլաբիանոս պատրիարքին իբրեւ երկու բնություն ուսուցանողի: Լեւոն Բ պապը, անվանելով Եփեսոսի ժողովը «ավազակային», չի ընդունում դրա որոշումները: Սակայն Թեոդոս Բ կայսրը կարեւորություն չի տալիս պապի բողոքներին:

### 451թ. Քաղկեդոնի ժողովի ընդունած բանաձեւը

450թ. Թեոդոս Բ կայսեր մահից հետո գահ են բարձրանում նրա քույր Պուլքերիան եւ վերջինիս ամուսին Մարկիանոսը, ովքեր եկեղեցական հարցերում հակադիր էին հանգուցյալ կայսերը: 451թ. հոկտեմբերի 8-ին Քաղկեդոնում գումարվում է նոր ժողով, որի նախագահությունը հանձնվում է պապի պատվիրակներին: Ժողովը իբրեւ դավանության հիմք ընդունում է Լեւոնի տումարը, դատապարտում Նեստորին եւ Եվտիքեսին: Իբրեւ հավատի ամփոփում ընդունվում է «Մի Քրիստոս յերկուս բնութիւնս» բանաձեւը:

### Քաղկեդոնի ժողովի որոշման նկատմամբ հակազդեցությունը

Քաղկեդոնի ժողովի քրիստոսաբանական բանաձեւը լուրջ ընդդիմության հանդիպեց եւ դատապարտվեց Ալեքսանդրիայի եւ արեւելյան մի շարք աթոռների կողմից: Հրավիրվեցին բազմաթիվ տեղական եկեղեցական ժողովներ, որոնք մերժեցին Քաղկեդոնի վարդապետությունը: Այդ ընդդիմությունը հանգեցրեց այն բանին, որ Բյուզանդիայի Զենոն կայսրը 482թ. հրապարակեց Հենոտիկոն անունով փաստաթուղթ, որով հավատքի կանոն էին համարվում Նիկիայի, Կ.Պոլսի եւ Եփեսոսի տիեզերական ժողովների դավանաբանական որոշումները, իսկ Քաղկեդոնի ժողովը եւ Լեւոնի տումարը բնավ չեն հիշատակվում:

### Հայ եկեղեցին եւ Քաղկեդոնի ժողովի որոշումները

451թ., երբ գումարվեց Քաղկեդոնի ժողովը, Հայաստանում Վարդանանց պատերազմի եւ Ավարայրի ճակատամարտի տարին էր: Հայոց եկեղեցին, զբաղված լինելով պարսկական զրադաշտական կրոնի դեմ պայքար մղելով, ի վիճակի չէր հստակեցնել իր դիրքորոշումը Բյուզանդական կայսրության մեջ ծավալվող դավանաբանական վիճաբանությունների նկատմամբ: Դրությունը փոխվեց 480-ական թթ. Վահան Մամիկոնյանի մարզպանության շրջանում, երբ Հայաստանում դրությունը փոքր-ինչ խաղաղվեց եւ կայունացավ: Հայոց եկեղեցին այս վեճերում որդեգրեց այդ ժամանակ Բյուզանդական եկեղեցում գերիշխող պաշտոնական դավանաբանությունը՝ Զենոնի հենոտիկոնը: Այդ դիրքորոշումը պաշտոնապես ամրագրվեց 506թ. Դվինում գումարված եկեղեցական ժողովի կողմից, որին մասնակցում էին «Հայոց, Վրաց, Աղվանից եւ Սյունյաց» եպիսկոպոսները:

### Նեստորականություն

Քրիստոնեական ուսմունք է, որը դատապարտվել է որպես հերետիկոսական 431թ. Եփեսոսի ժողովում: Ուսմունքը ստացել է իր անունը 428-431թթ. Կ.Պոլսի պատրիարք Նեստորից: Ուսմունքը, որը դավանում էր Նեստորը, նաեւ Անտիոքի աստվածաբանական դպրոցի դավանանքն էր, զարգացվել է 4-րդ դարի աստվածաբաններ Դիոդորոս Տարսեցու եւ Թեոդորոս Մոպսուեստացու աշխատություններում:

Նեստորականությունը ճանաչում է Քրիստոսի մեջ երկու բնություն եւ երկու դեմք: Քրիստոսի մի գործողությունները (Մարիամից ծնվելը, չարչարվելը, խաչի վրա մահը) նեստորականությունը վերագրում է նրա մարդկային, իսկ ուրիշները (հրաշքներ գործելը, գերբնական գործողությունները)՝ նրա աստվածային դեմքին: Քանի որ ըստ նեստորականության Մարիամից ծնունդը վերաբերում է միայն Քրիստոսի մարդկային դեմքին, բայց ոչ նրա աստվածությանը, Մարիամի նկատմամբ «Աստվածածին» եզրը մերժվում է: Նեստորականությունն ընդգծում է մարդկանց փրկության համար Քրիստոսի ամբողջ կյանքի, այլ ոչ թե միայն նրա մահվան եւ հարության կարեւորությունը, թեեւ ընդունում է դրանց կուլմինացիոն նշանակությունը: Հատկապես շեշտվում է Քրիստոսի՝ որպես մարդու սխրանքների կարեւորությունը: ■

---

ից, դարձյալ ընդդեմ պատկերամարտության:

Այս վերջին հանգամանքը վկայում է պերճորեն, որ պատկերամարտության շարժման դրդիչները որոնել Սիրիա եւ Եգիպտոս անհիմն է: Շարժման բույնը Փ[ոքր] Ասիան էր: Արտավազդի օրինակը ցույց է տալիս, որ քաղաքական նկատառումներն էին առաջնորդում գործիչներին, եթե հարում կամ խորշում էին պատկերամարտությունից: Այդ օրինակը չի կարող հիմք համարվել ո՛չ Փ[ոքր] Ասիայի եւ ո՛չ էլ հայերի իսկական դիրքը որոշելու շարժման մեջ: Երեւում է, որ շարժումը ազգայնական դրոշակ չուներ, այլ ազատամտական երեւույթ էր, որ համակրողներ ուներ ամենուրեք եւ մասնավորապես Հալիսի եւ Եփրատի ափերին, պավլիկյանների ազդեցության տակ եւ նրանց հետեւողությամբ:

Կոստանդին [V-ի] որդին՝ Լեւոն [IV] Խազարը(29) շարունակեց հոր քաղաքականությունը: Երբ 780թ. սեպտեմբերի 8-ին մեռավ, կինը՝ աթենացի Իրենեն(30), անցավ կառավարության գլուխ, որպես խնամակալ իր մանուկ որդու՝ Կոստանդին [VI] Ծիրանածնին (31): Իրենե պատկերապաշտ էր եւ ամեն ջանք գործեց ջնջելու 753 թվի ժողովը: 784 թվի դեկ[տեմբերի] 25-ին պատրիարքական գահը վիճակվեց Տարասիոսին(32), որ կայսերական քարտուղար էր եւ համամիտ Իրենեի:

786 թվի օգոստոսի 17-ին տեղի ունեցավ առաջին ժողովը, բայց անհաջող: Պահակ զորագունդը ընդդիմանում է թագուհու ձեռնարկին: Սա ստիպված էր արձակել ժողովը: Երկրորդ ժողովը զգուշությամբ նշանակվեց Նիկիա քաղաքում՝ 787 թվի սեպտ[եմբերի]՝ 24-ին, որ եւ կոչվեց յոթերորդ ժողով: Ներկա էին 333-337 անձն: Այստեղ էին Հռոմի պապի երկու ներկայացուցիչները, իսկ Երուսաղեմի, Անտիոքի եւ Եգիպտոսի պատրիարքներն անհաղորդ էին, թեեւ երկու վանական՝ Հովհաննես եւ Թովմաս, ինքնակոչ իրենց համարում էին նույն վիճակների հոգեւորականությանց բերան: Ժողովի ութ նիստերից միայն երկուսը զբաղվեց մեզ հետաքրքրող հարցով: Դ-րդ նիստին (հոկտեմբերի 1-ին) կարդացին Ս. Գրքի վկայությունները, ինչպես եւ Ս. Հայրերից քաղվածքներ, որ ի նպաստ էին պատկերների:

Ժողովն ընդունեց, որ կարելի է համբուրել խոնարհաբար խաչի նկարը, եւ հետեւելով եկեղեցու ավանդություններին՝ հարգանք մատուցանել Տիրոջ, Ս. Կույսի, հրեշտակների պատկերներին եւ նույնպես սրբերի: Զ-րդ նիստը նվիրված էր 753թ. Հիերիայի ժողովի որոշումներին եւ նրանց հերքման: Է-րդ նիստը ձեւակերպեց ժողովի որոշումները: Ժողովը սահմանեց, որ խաչի, Տիրոջ, Ս. Կույսի, հրեշտակների եւ սրբերի պատկերները ցուցադրելի են եւ կարելի է համբուրել եւ մատուցանել նրանց հարգանքի երկրպագություն, միայն Աստծուն վերապահելով պաշտամունքի երկրպագությունը: Բացի սրանից, պատկերների առաջ կարելի է խունկ ծխել, մոմեր վառել, ինչպես անում են խաչի եւ Ավետարանի առաջ, այն հավատքով, որ պատկերին մատուցած հարգանքը վերաբերում է իրապես պատկերի ինքնատիպին:

Վերջին նիստը տեղափոխեցին մայրաքաղաք, այն կայացավ Magnaura պալատում 787 թվի հոկ[տեմբերի] 23-ին, որից հետո ձեռնամուխ եղան անհետացնելու պատկերամարտների գրությունները:

Ժողովի որոշումներից երեւում է, որ արդյունքը չէ համապատասխանում հարուցած աղմուկին եւ, որ ս. հայրերը ստիպված են եղել բռնել միջին ճանապարհը՝ մեծ զիջումներ անելով իրենց հակառակորդներին: Նախ Հայր Աստծո պատկերը չի հիշվում բնավ: Ասել է, թե պատկերամարտների տեսությունն այս կետում հաղթանակել է: Հիսուս Քրիստոսի նկարը թույլ տալը բացատրվում է Մարդեղության պարագայով: Բացի սրանից, ժողովն իրապես ընդունում է հակառակորդների տեսակետը, որ պատկերները պաշտելի չեն, այլ միայն հարգելի: Այլ է հարգանք, այլ է կրոնական պաշտամունք: Գուցե ծայրահեղ պատկերամարտներ

Շարունակությունը՝ էջ 56

1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ԺԱՄԱՆԱԿԻ ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ

# Պատկերների խնդիրը

**Սկիզբը՝ էջ 55**

կային, որ ժխտում էին անգամ հարգանքը, սակայն կային եւ ծայրահեղ պատկերապաշտներ, որոնք պատրաստ էին պաշտել պատկերներ, որպես իրական սրբություններ, ինքնատիպը փոխարինող: Գաղափարները պարզելուց եւ միմյանց զատելուց հետո, իսկապես վեճը կրոնական մտքով վերջացած պետք է համարել եւ դժվար է ասել, թե հաղթանակը որի կողմն է՝ պատկերապաշտների, թե պատկերամարտների: Ամբոխը չի սիրում եւ չի կարող միջին գծի վրա կանգնել: Պատկերահարգությունը դարձավ պատկերապաշտություն, եւ սա է հաղթողների կասկածելի առավելությունը հանդեպ իրենց հակառակորդների, որոնք զգալով այս կարելիությունը, ընդդիմանում էին պատկերների գործածությանը:

Յոթերորդ տիեզերական ժողովը [787թ.] մի նշանավոր մոմենտ է պետության եւ եկեղեցու հարաբերությունների եւ պատմության մեջ: Ժողովին նախագահեց ինքը՝ պատրիարքը, փոխանակ կայսեր: Այս զիջումը բացատրելու է մասնավորապես նրանով, որ պատրիարքը՝ Տարասիոս, պետական նախկին պաշտոնյա էր, աշխարհականությունից կոչված պատրիարքական աթոռ, եւ վայելում էր կայսեր վստահությունը: Ամեն պարագային այս ժողովը մի նոր սկզբունք առաջ բերավ, որ դավանաբանական խնդիրները ենթակա են եկեղեցու իրավասության եւ եկեղեցին միանգամայն անկախ է այսպիսի վեճերում պետության միջամտությունից: Մյուս հարցերում, որ վերաբերում են օրենսդրության եւ վարչության, կայսրը պահում է իր վճռական ձայնը: Հայտնի է, որ Կոստանդին Մեծի օրվանից կայսերական իշխանությունը հենվում էր եկեղեցու վրա, որպես պետական մի գործակալության վրա: Կայսրը, ինչպես հայտարարում էր Կոստանդին V Կոպրոնիմոսը, «եւ՛ կայսր է եւ՛ նվիրապետ»: Եկեղեցական ժողովները կայսրերն էին գումարում եւ իրենք էլ նախագահում, ինչպես մի տեսակ ծերակուտական ժողով: Ընդունված էր, որ եկեղեցական ժողովների սահմանած կանոններն արժեք ունեին միայն այն ժամանակ, երբ անցնում էին կայսերական օրենսդրության խողովակով եւ հայտարարվում էին որպես օրենք: Երբեմն գումարվում էին խառն ժողովներ՝ պետական եւ եկեղեցական պաշտոնյաներից: Եկեղեցու մեջ հաճախ ձայներ էին լսվում եւ ճիգեր թափվում, որ եկեղեցին ազատ համարվի պետության ճնշումից եւ գործե որպես անկախ եւ ինքնուրույն մի հաստատություն: Երկու հակադիր եւ ծայրահեղ հոսանքների մեջ հաշտարար դիրք էր բռնել երրորդ ուղղությունը, որին կողմնակից էր եւ Տարասիոս: Նա եւս պնդում էր, որ եկեղեցին անկախ ճանաչվի գեթ դավանաբանական կնճիռները հարթելիս: 787 թվի ժողովը Տարասիոսի գործն էր եւ այս քաղաքականության հաղթանակն էր: Տարասիոս պատրիարքը մեռավ 806 թվի փետրվարի 25-ին: Նիկեփոր կայսրը(33), որ գոհ էր Տարասիոսի վարքագծից, խորհեց նրա հաջորդ ընտրել դարձյալ աշխարհական փորձառու անձերից: Հարմարագույնն էր նկատվում Նիկեփոր(34), որն, ինչպես հանգուցյալ Տարասիոս, կայսերական առաջին քարտուղարն էր: Նիկեփոր կայսրը զգալով, որ վանականությունը կարող էր ընդդիմանալ իր ընտրությանը, քաղաքագիտորեն նախապես դիմեց Թեոդորոսին՝ Ստուդիոսի(35) վանահորը, եւ հարցրեց նրա կարծիքը պատրիարքական ընտրությունների վերաբերյալ: Թեոդորոս ջատագով էր եկեղեցու կատարյալ անկախության աշխարհական իշխանություններից: Նա վերակազմել էր վանական կյանքը եւ կարողացել էր ստեղծել վանականության մի ահավոր ուժ: Ստուդիոսի վանքը հաշվում էր մինչեւ 700 կրոնավոր (ըստ այլ տեղեկության՝ 1000): Թեոդորոսը այն միտքը հայտնեց, որ պատրիարքական աթոռին վայել ժառանգ ընտրելի է միշտ վանականներից, որը պետք է գոհացնի նրանց պահանջները: Նա պետք է լինի առաքինի, բարեսեր, իսկական եկեղեցական, որ անցել է աստիճանաբար եկեղեցական նվիրապետության ամբողջ սանդուխը: Ասել է, թե Թեոդորոս ընդդեմ էր Նիկեփորի ընտրության եւ ավելի ինքն իրեն էր առաջարկում: Նիկեփոր կայսրը Թեոդորոսին եւ վերջինիս հորեղբայր (Սակկուդիոնի վանահայր) Պլատոնին 24 ժամով բանտարկեց, որպեսզի չխանգարեն Նիկեփորի ձեռնադրության, որ տեղի ունեցավ Զատիկին՝ ապրիլի 12-ին:

Խռովարար Թեոդորոսը գլուխ բարձրացրեց շուտով մի ուրիշ առիթով: Կոստանդին VI-ը բաժանվել էր իր կնոջից՝ [Մարիայից] եւ վերստին ամուսնացել Թեոդոտե անունով կնոջ հետ 795 թվին: Կոստանդինի անկումից հետո Իրենե դրդեց Տարասիոս պատրիարքին հայտարարելու, որ Կոստանդինի վերամուսնությունը ապօրինի էր, եւ Հովսեփ վանահայրը, որ կատարել էր պսակադրության կարգը, արժանի է պատժի: Տարասիոսի կենդանության խնդիրը մնաց առկախ, քանի որ ինքն եւս անմասն չէր ապօրինի համարված գործին: Հենց որ (Տարասիոս) մեռավ, հին հարցը վերստին երեւան եկավ: Կարեւորը, հարկավ, այն չէր, թե մեռած կայսրը տարիներ առաջ ի՞նչ ապօրինի գործ է կատարել: Սկզբունքային հարց էր, որ հրապարակ էր հանվում: Կայսրն իրավունք ունի՞ ոտնակոխ անելու եկեղեցական կանոնները: Ստուդիոսի վանական միաբանությունը պնդում էր, որ կանոնը վեր է, աստվածային օրենքը պարտավորեցուցիչ բոլորի համար, եւ արքայական ծիրանին անգամ բացառություն չի կարող կազմել: Պետական իշխանության տեսակետն էր, որ կայսրը բարձր է, ինչպես աշխարհական, այնպես էլ եկեղեցական օրենսդրությունից: Խնդիրը քննվեց 809 թվի հունվարին գումարված աշխարհական եւ եկեղեցական պաշտոնյաներից գումարված խառն ժողովում, ուր պետական տեսակետը վեր առավ: Խռովարար վանականները, Թեոդորոս եւ Հովսեփ եղբայրները եւ իրենց հորեղբայր Պլատոնն աքսորվեցին, կայսրը Ստուդիոսի միաբանությունը եւս ցրեց:

Նիկեփոր կայսրը կրոնական նկատումով թվում է, թե անտարբեր էր, անկրոն ոմն էր, ո՛չ պատկերների դեմ էր եւ ո՛չ թեր, հաշտ աչքով էր նայում անգամ պավլիկյան եւ մյուս աղանդների վրա: Այս է պատճառը, որ նրան գաղտնի կապեր են վերագրում պավլիկյանների հետ, մանավանդ աթինգանների (36): Նիկեփոր սնած էր Պեսիրես, ուր բավականին զորեղ աղանդավոր համայնքներ կային: Լուր էր տարածված, որ Վարդանի(37) ապստամբության ժամանակ աղանդավորներն ի նպաստ Նիկեփորի ցուլ են զոհել եւ այլ հուռութներ գործել (Վարդանի շորերը ջրաղաց նետել): Թեոփանեսը նշում է, թե Նիկողայոս անունով մի վանական «մեր առջեւ՝ անարգելով սրբապատկերները, սկսեց ազատ քարոզել պատկերապաշտության դեմ՝ բնակվելով քաղաքի դռան մոտ մի խցում, իսկ իշխանություններն անտարբեր էին»: Նիկեփորին կրոնը հետաքրքրում էր պետականորեն, այսինքն՝ որքան որ այն կապ ուներ պետության հետ, (իսկ) անձնապես անտարբեր էր:

Նիկեփոր եւ իր հաջորդը՝ Միդայել (I) Ռանգաբե (38) մնացին ընդհանուր առմամբ նույն տողի վրա, որ գծել էր Իրենե: Պատկերամարտությունը սակայն խեղդված չէր: Առիթ էր հարկավոր, որ նորեն առկայծեր մոլեռանդության գաղտնի հուրը: Միքայել (1-ի) անհաջող արշավանքը բուլղարների դեմ 812 թվին, առիթ տվավ պատկերամարտությանը հրապարակ ելնելուն:

### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Արեւելաքրիստոնեական աստվածաբանական գիտակցությունը զատորոշում է պատկերի ընկալման հինգ մակարդակ՝ ուսուցողական, նշանագիտական, նվիրական-խորհրդապաշտական, օիսական եւ գեղարվեստական, տե՛ս Հ.Հ. Бычков, Из истории византийской эстетики, “Византийский временник”, 1976, №37, стр.187:

2. Դա Տիրոջ չորրորդ պատվիրանն էր Մովսեսին. «Վերեւում՝ երկնքում, ներքեւում՝ երկրի վրայ, եւ երկրի խորքի ջրերի մէջ եղած որեւէ բանի նմանութեամբ քեզ կուռքեր չպիտի կերտես» (Ելք, Ի 4):

3. Էլվիրի ժողով, համաքրիստոնեական առաջին ժողովներից մեկը, որ հրավիրվել է Իսպանիայի էլվիրա քաղաքում, 306 թվականին: Ժողովն ընդունել է 81 կանոն, որոնց մի մասը վերաբերում էր պատկերների խնդրին:

4. Եվսեբիոս Կեսարացի (260-339), հույն ականավոր եկեղեցական գործիչ, պատմագիր, Պաղեստինյան Կեսարիայի եպիսկոպոս (311-339): Հեղինակ է «Քրոնիկոն («ժամանակական կանոններ»), «Եկեղեցական պատմություն», «Կոստանդին կայսրի վարքը» եւ բազմաթիվ դավանաբանական աշխատությունների: Մասնակցել է Կտակարանների կեսարյան բնագրի կազմմանը:

5. Կոստանդին Մեծ, խոսքը Հռոմի Կոստանդին I (Կոստանդիանոս) կայսեր (306-337) մասին է: 325 թվականին Նիկիայում գումարել է Առաջին տիեզերական ժողովը, որը դատապարտել է արիոսականությունը:

6 Բարսեղ Մեծ, Բարսեղ (Վասիլ) Կեսարացի (329-379), մատենագիր, աստվածաբան, եկեղեցական ականավոր գործիչ: Կեսարիայի արքեպիսկոպոս (370-379): Հեղինակել է բազմաթիվ երկասիրություններ, որոնցում խրախուսել է կուսակրոնությունն ու վանականությունը: Հետեւողականորեն պայքար է մղել արիոսականության դեմ: Ն.Ադոնցը եւ այլ հայագետներ Բարսեղ Մեծին վերագրում են հայկական ծագում (տե՛ս Ն.Ադոնց, Գրիգոր Պարթեւի Հարցարանը եւ Եզնիկ, «Հայրենիք», ամսագիր, Բոստոն, 1928, №7, էջ 75):

7. Միտքն առկա է նաեւ Հովհան Օձնեցու (+728), Անահիա Սանահնեցու (XI դար), Ներսես Շնորհալու (+1173) եւ այլոց երկերում, տե՛ս «Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ Մատենագրութիւնք», Վենետիկ, 1833, էջ 40, նաեւ՝ «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», հատ. Բ, Վենետիկ, 1837, էջ 385, 398:

8. Վրթանես, նկատի ունի VI դարի երկրորդ կեսի հայ նշանավոր մատենագիր, եկեղեցական գործիչ Վրթանես Քերթողին: Հեղինակ է բազմաթիվ երկերի, որոնց մեջ գլխավորը «Յաղագս պատկերամարտից» գործն է: Այստեղ հեղինակը դատապարտում է պատկերամարտությունը եւ հիմնավորում պատկերների օգտագործման անհրաժեշտությունը, այս մասին մանրամասն տե՛ս Երվ. Մելքոնյան, Վրթանես Քերթողը եւ պատկերամարտությունը, «Էջմիածին», 1970, ՆՁ-է, էջ 89-90: Մ. Տեր-Ներսեսյան, «7-րդ դարի մի երկ նվիրված պատկերների պաշտպանությանը»՝ հեղինակի «Հայ արվեստը միջնադարում» գրքում, Երեւան, 1975, էջ 7-30; Հ. Քյոսեյան, Դրվագներ հայ միջնադարյան արվեստի աստվածաբանության, Ս. Էջմիածին, 1995, էջ 114-132:

9. Աբգար թագավոր, Օսրոենեի հայ-ասորական միացյալ թագավորության գահակալ Աբգար V (մ. թ. ա. I դ. վերջ- մ. թ. I դ. կես): Ավանդության համաձայն, նամակագրական կապ է ունեցել Հիսուս Քրիստոսի հետ: Ծանր հիվանդությունից բուժվել է Թադեոս Առաքյալի կողմից Եդեսիա բերված Հիսուս Քրիստոսի պատկերի շնորհիվ:

10. Պատմագիր Եվագրիոս, խոսքը վերաբերում է նշանավոր իրավաբան, եկեղեցական գործիչ ու պատմագիր Եվագրիոս Աքոլաստիկոսին (535-VI դ. վերջ): Հեղինակել է վեց գրքերից բաղկացած «Եկեղեցական պատմություն» երկասիրությունը, որն ընդգրկում է 431-593 թթ. իրադարձությունները:

11. Ակնարկում է Սասանյան Խոսրով I Անուշիրվան թագավորի կողմից Եդեսիան գրավելու 544 թվականի անհաջող փորձը:

12. Խոսքը Կ. Պոլսի կայսերական պալատի Տրուլլան դահլիճում հրավիրված եկեղեցական ժողովի միասին է, որը քննարկեց ոչ թե դոգմատիկ, այլ կարգապահական, կազմակերպչական հարցեր:

13. Խոսքը բյուզանդական պատմիչ Թեոփանես Խոստովանողի (760-818) մասին է: Հեղինակ է «ժամանակագրություն» նշանավոր երկասիրության, որն ընդգրկում է 284-813 թթ. անցքերը:

14. Փիլոքսենոս (Քսենայա, V դ. կես-523), եկեղեցական նշանավոր գործիչ, մտածող, մատենագիր: Իրականացրել է Նոր Կտակարանի ասորերեն թարգմանությունը:

Ծայրահեղ միաբնակ, նզովելով մերժել է Քրիստոսի երեւութական մարմինն ընդունելը:

15. Ակնարկում է VI դարի ասորի մատենագիր, եկեղեցական գործիչ Հովհան Եփեսացուն (507-586): Եփեսոսի եպիսկոպոս: Հեղինակ է «Եկեղեցական պատմություն» նշանավոր աշխատության, որն ընդգրկում է մ.թ.ա. I դ.- մ.թ. 585 թվականի դեպքերը:

16. Խոսքը 2-րդ Նիկիական պատկերամարտական ժողովի մասին է:

17. Սեվերոս (Սեվերիանոս) Անտիոքացի, Անտիոքի պատրիարք (512-518): Միաբնակների հիմնական առաջնորդներից ու գաղափարախոսներից: 518 թվականին Հուստինոս I կայսեր կողմից զրկվել է պատրիարքական աթոռից եւ աքսորվել Ալեքսանդրիա:

18. Պետրոս Անտիոքացի (Թափիչ), մականվանյալ «Գայլ», Անտիոքի պատրիարք (471, 475-478, 485-488): Միաբնակության հիմնավորողներից ու ակնառու առաջնորդներից մեկը:

19. Եվտիքյաններ, եվտիքեսական հերձվածողական վարդապետության հետեւողներ: Ուսմունքի հիմնադիրն է Կ. Պոլսի վանքերից մեկի վանական Եվտիքես Կոստանդնուպոլսեցին, Ալեքսանդրիայի ընդդիմադիր հոգեւորականության դրածոն մայրաքաղաքում: 431 թ. Եփեսոսի տիեզերական ժողովում հանդես է եկել նեստորականության դեմ: Փորձել է հիմնավորել, թե Քրիստոսը, մարդկային բնության համաձայն, մարմին չի ունեցել, այլ այնպիսի, ինչպես կար մարդկանց ստեղծագործությունից առաջ՝ աստվածային եւ հավիտենական: Եվտիքեսի ուսմունքը դատապարտվել է Քաղկեդոնի տիեզերական IV ժողովում, իսկ ինքը հայտարարվել է հերձվածող եւ ենթարկվել բանադրանքի:

20. Բեսեր (Բեշեր, Բշիր) Ուրացող, բյուզանդացի պատրիկ, որ Ասորիքում ռազմական գործողություններից մեկի ժամանակ գերի էր ընկել արաբների ձեռքը եւ ուրանալով ընդունել մահմեդականություն: Գերությունից ազատվելուց հետո ծառայության է անցել Լեւոն III-ի մոտ՝ դառնալով վերջինիս պատկերամարտ քաղաքականության հիմնական գործակիցն ու կիրառողը:

21. Փիլիպպիկոս Վարդան (Վարդան Փիլիպպիկոս), Բյուզանդիայի կայսր (711-713), հավանաբար Մամիկոնյան ընտանիքից: Հուստինիանոս II եւ Տիբերիոս III կայսրերի օրոք զորավար: Հենվելով փոքրասիական պրովինցիաների եւ հատկապես հայ ազնվականության ու զինվորականության վրա՝ փորձել է գրավել գահը, սակայն չի հաջողվել եւ աքսորվել է Խերսոնես: 711 թվին բանակը նրան հռչակել է կայսր: Գործուն մասնակցություն է ցուցաբերել եկեղեցական կյանքին: 712թ. հրավիրել է եկեղեցական ժողով, որը նզովեց միակամականների (մոնոթելիտների) դեմ գումարված տիեզերական VI ժողովը: Կարգալույծ է արել Կ. Պոլսի Կյուրոս պատրիարքին եւ նրա փոխարեն նշանակել Հովհաննես Զ-ին (712-715): 715թ. գահընկեց է արվել եւ կուրացվել:

22. Հովհան (Մանսուր) Ոսկեհոս Դամասկացի (մոտ 675-749), աստվածաբան, բանաստեղծ, պատկերապաշտության խոշորագույն տեսաբաններից: Ս. Սաբբայի վանքի (Սիրիա) միաբան, Երուսաղեմի պատրիարքի խորհրդական: Խստորեն քննադատել է Լեւոն III կայսեր եկեղեցական քաղաքականությունը եւ տեսականորեն հիմնավորել պատկերապաշտությունը: Հեղինակ է «Իմացության աղբյուրը» փիլիսոփայական երկասիրության: Կ. Պոլսի 754թ. եկեղեցական ժողովի կողմից ենթարկվել է բանադրանքի:

23. Բանի մարմնավորման եւ մարդացման շնորհիվ սրբանկարչության «իրավունքները» պաշտպանում է նաեւ Հովհան Օձնեցին, տե՛ս Հ. Քյոսեյան, նշվ. աշխ., էջ 133-134:

24. Սրբազան պատկերներին տրվելիք հարգանքի ու պաշտամունքի այսօրինակ տարբերակում առկա է Հովհաննես Սարկավագ Իմաստասերի (+1129) մատենագրության մեջ, տե՛ս Հ. Գ. Ջ. Սահակեան, Յաղագս բարեխօսութեան սրբոց եւ զնշխարս նոցա եւ զպատկերս մեծարելոյ, Վենետիկ, 1852, էջ 357; Հ. Քյոսեյան, նշվ. աշխ., էջ 148-149:

25. Կոստանդին V Կոպրոնիմոս, Բյուզանդիայի կայսր (741- 775): Շարունակել է հոր՝ Լեւոն III Իսավրացու պատկերամարտական քաղաքականությունը: 754 թ. եկեղեցական ժողովում պաշտոնապես դատապարտել է պատկերապաշտությունը եւ սկսել հալածել ընդդիմադիր վանականությանը, փակել է տվել հարյուրավոր վանքեր: Հանդուրժողական վերաբերմունք է ցույց տվել աղանդավորական շարժումների, մասնավորապես պավլիկյանների նկատմամբ:

26. Արտավազդ, Բյուզանդիայի ուզուրպատոր (բռնատիրող) կայսր (741-742): Հավանաբար Մամիկոնյան ընտանիքից: Նախապես Արմենիակների, ապա՝ Օպսիկիոն բանակաթեմերի զորավար, կյուրոպաղատ: Լեւոն III-ի դստեր՝ Աննայի ամուսինը: Լեւոն III-ի մահից հետո՝ հենվելով զինվորականության եւ հատկապես մեծ դիրք ունեցող հայ ազնվականության վրա, ապստամբություն է բարձրացրել եւ գահը խլել Կոստանդին V-ից: Անաստասիոս պատրիարքի կողմից օծվել է կայսր: Դառնալով կայսր, Արտավազդն անմիջապես վերականգնել է պատկերների պաշտամունքը: Արտավազդի ապստամբությունը ճնշել է Կոստանդին V-ը, որի հրամանով էլ կուրացվել է (որդիների հետ միասին) եւ աքսորվել:

27. Գերմանոս, Բյուզանդիայի հոգեւոր-եկեղեցական նշանավոր գործիչ, պատկերապաշտության կարկառուն ներկայացուցիչ:



1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

# Սրի եւ սիրո հանդիպում

## Հատված Սերգեյ Ումառյանի «Բաղաբերդ» վեպից

Սենեքերիմ արքան եւ Շահանդուխտ թագուհին հոնի խիտ ծառերի կքած ճղների տակ կանգնել հիացմունքով էին նայում Վահանավանքի հրապարակում դիզված գորշ ու սրբատաշ քարերին: Երկհարկանի հինավուրց վանքի նոր կամարները շքեղաշուք տեսք ունեին բարձրադիր հրապարակում ու հեռվից նայողին կորաթեք կամարները թվում էին ծիածան:

Տաթեւի վանքից հետո եռախորան ու գմբեթահարկ Վահանավանքը Սյունիքի երկրորդ հոգեւոր դպրոցն էր: Վանքի հիմնադրումից անցել էր ինը տասնամյակ, բայց բարեփոխիչները շարունակ գեղեցկացնում էին նոր կառույցներով:

Վահանավանքի կամարների կառուցմանը մասնակցում էին սրբակրոն եկեղեցականները ու քրծակյաց աշակերտները, որոնք կտակարանի պես կրծքերին սեղմած քարերը փոխանցում էին շինարարներին:

Արքան դիտում էր այդ ամենն ու տապակվում չար, խառնիխուռն մտքերի մեջ: Նա երեւակայորեն աչքերի առջեւ տեսնում էր հանկարծահաս ոսոխին ու փլատակի վերածված գեղեցիկ վանքերն ու հոյակառույց բերդերը: Արքան վախով նայեց վանքի կամարներով զմայլված Շահանդուխտ թագուհուն եւ ամաչեց տարօրինակ մտքերի համար:

Բաղաց թագավորը ծանր ու թեթեւ արեց ժամանակի հանելուկային կշռաքարերը, բայց ապագայի իրադարձության նախազգացումով տեսավ մոտալուտ եւ անխուսափելի ճակատամարտը:

Ճակատամարտը իրոք որ մոտալուտ էր: Ամեն ազգի ճակատագիր որոշում էր նրա հավատի պատկանելությունը, քանի որ նոր երկրներ նվաճելու քաղաքականությունը կրում էր սրբազան դիմակ:

Եվրոպական խաչակիրների սրերը ուղղված էին արեւելք՝ դեպի Երուսաղեմ: Խաչի եւ կիսալուսնի սահմանը անցնում էր Միածնի գերեզմանի մոտով…Սելջուկյան ցեղերը համախմբված էին Սանջակի Շերիֆ(1) դրոշի ներքո: Կապրի նա՝ ով ուժեղ է:

Սենեքերիմ թագավորը գիտեր, որ վաղ թե ուշ Բաղաց հովազը լեռներից պիտի իջնի դաշտ՝ իր ուժը չափելու սելջուկյան փղի հետ:

Մելիքշահի եւ Նիզամ ալ- Մուլքի սպանությունից հետո տրոհվում էր սելջուկյան մեծ պետությունը եւ յուրաքանչյուր ցեղ առաջ էր քաշում դինաստիական առաջնության իր եսը:

Բաղաց աշխարհը շրջափակված էր կիսալուսնով ու հեռու էր խաչակիր երկրներից: Ապագա պատերազմը հավատի անունով էր, ուստի պետք էր սուր սրել, որ իսլամի վրիժառու որդիները չպատառոտեին խաղաղ օջախի շուրջը բոլորած միամիտներին, խաչի հավատի շուրջը բոլորած այն մոլորյալներին, որոնք կարծում էին, թե իրենց բախտը կախված է լոկ աստծուց ու չարիքի դեմ չպետք է չարիք գործել…

Գրիգոր եպիսկոպոսը հանդիսավոր քայլեց դեպի վանքի հրապարակը: Ծերությունից երերվող ոտքերը արդեն չէին ենթարկվում նրա երիտասարդ ձեւանալու ցանկությանը, ուստի քայլերը ստացվում էին բռնազբոսիկ ու ծիծաղելի:

Եպիսկոպոսը գալիս էր Տաթեւից: Մի շաբաթ առաջ նա մայր աթոռն էր մեկնել, որ կազմակերպի մատյանները Բաղաբերդ տեղափոխելու աշխատանքը:

Բաղաբերդը վաղնջական ժամանակներից եղել է Սյունիքի հավատի անսասան ամրոցը: Այնտեղ էին պահում երկրի թանկագին հարստությունները, հոգեւոր մշակույթի սրբազան մասունքները: Այնտեղ էին պահվում հենց իրենք՝ Բաղաց իշխանները, իրենց խիզախությունները վերագրելով հավատի զորությանը:

– Եպիսկոպոսը մեզանից դժգոհելու ի՞նչ ունի, եղբայր Սենեքերիմ, - հարցրեց Շահանդուխտ թագուհին, - Հայոց եկեղեցու նկատմամբ մեր պարտքը կատարել ենք:

Եպիսկոպոսը լսեց թագուհուն ու թույլ չտվեց, որ արքան պատասխանի:

– Թող աստված փառավորի Բաղաց երիտասարդ արքայի կյանքը, քանզի նա ընթանում է նախնյաց աստվածալույս ճանապարհով… Նրա ոտնահետքերի վրա աճում են հոգեպտուղ ծառեր: Շահանդուխտ թագուհու աստվածահաճո օժանդակությամբ ծաղկեցին Տաթեւն ու Վահանավանքը, Բաղաց երկնահրաշ աթոռները: Ձեր անունները մեր վանքերի ու եկեղեցիների զանգերի հետ հավերժ պիտի հնչեն մեր լեռնակուտակ աշխարհում:

Թագավորը տեսավ, որ եպիսկոպոսը ձգում է շողոքորթության շղթան, ընդհատեց:

– Ե՞րբ ես մատյանները բերում Բաղաբերդ…

– Մի քանի օրից հետո, արքա: Շտապելը գործին միշտ վնաս է բերում: Մենք պետք է զգույշ վարվենք, այլապես տագնապի կենթարկենք ժողովրդին: Տագնապի առաջին ազդանշանը թշնամին է իմանում: Այժմ այդ անելու իրավունքը չունենք:

– Ճանապարհի վրա երբ մառախուղ է իջնում, հոտը անմիջապես պետք է քշել գոմերը, որ գայլերը չուտեն: Արեւմուտքից շարժվող խաչերը ստիպում են, որ արեւելքի սրերը ավելի սրվեն:

– Պարսիկները այդքան շո՞ւտ մոռացան մեզ, արքա:

– Ում տունը որ կրակի մեջ վառվում է՝ ջրում խեղդվող հարեւանի կանչը չի լսում, եպիսկոպոս, այդպես է կյանքը: Պարսիկները այլեւս սելջուկների խուրջինի մեջ խնձոր չեն դնում:

– Դա օգուտ է մեզ:

– Թվում է…

– Սյունյաց քաջերը երբեք գլուխ չեն խոնարհել թշնամու սրերի առաջ, մեր երկիրը փոքր է, բայց հզոր է հավատը մեր:

– Ամեն մի ցեղ կարծում է, որ հզորն ու ճշմարիտը իր հավատն է:

– Վերջին ժամանակներս Բաղաց թագավորի մտահոգությունները ծանրացել են: Նա խոսում է ծանր ճակատամարտից եկած զինվորի պես: Նա միշտ սրի մասին է խոսում…

– Լավ կլիներ, որ վանականները նույնպես մտածեին սրի մասին…այդ դեպքում նրանք պարապությունից չէին բամբասի նույնիսկ իրենց թագավորին:

Շահանդուխտ թագուհին հեռացավ, որ ներկա չլինի իր եղբոր ու եպիսկոպոսի անախորժ զրույցին, չնայած ինքն էր խնդրել հոգեւոր առաջնորդին, որ ետ պահի երիտասարդ արքային աղանդասեր աղջկա սիրահետումներից, մի բան, որ խոսում էին Բաղաց աշխարհում:

– Նրանք չեն բամբասում, որդիս, այլ վշտանում են:

– Ինչո՞ւ շինականները իմ մասին վատ բաներ չեն ասում….

– Շինականների գովեստները պատիվ չեն բերում թագավորին:

– Իսկ եթե հայհոյե՞ն…

– Մի նեղացիր, արքա, քեզ հետ սրտաբաց խոսելը իմ հոգու պարտքն է: Ես չեմ ցանկանում Բաղաց բարեպաշտ թագավորի անունը կապել մի աղանդասեր ու անառակ աղջկա անվան հետ:

– Իսկ ես կրկնում եմ, որ Սյունեի պես հարյուր աղջիկ ունենալն ինձ համար ավելի շահավետ է, քան հարյուր ողորմելի այրեր: Նա քաջ է տղամարդու պես: Եթե վաղը սելջուկը հարձակվի ու այս հոյակերտ կառույցն ավերի, քո վանականներից ոչ մեկը ձեռք չի մեկնի զենքի, թեկուզ իր անձը պաշտպանելու նպատակով:

– Աստվա՜ծ իմ, ինչե՞ր ես խոսում, Սենեքերիմ արքա…

– Ուզո՞ւմ ես հաստատեմ ասածներիս ճշմարտությունը, Բաղաց եպիսկոպոս, մոտենանք շինարարներին:

Սենեքերիմ թագավորը մոտեցավ մի վանական աշակերտի, որը կտակարանը ձեռքին հիացմունքով դիտում էր վանքի նոր կառուցվող կամարը:

– Եթե վաղը սելջուկը հարձակվի վանքի վրա ու հրի մատնի մեր բոլոր կտակարանները, դու ի՞նչ կանես:

– Ես նրան կանիծեմ, – երկար մտածելուց հետո պատասխանեց վանականը:

– Իսկ եթե սուր քաշի քեզ վրա՞…

– Աստված կօգնի ինձ:

– Միամիտ գառնուկ,- ասաց թագավորն ու եպիսկոպոսի հետ մոտեցավ որմնադիր աշակերտին:

– Եթե վաղը սելջուկը հարձակվի ու ավերի քո աչքերի առաջ այս երկնահաշ վանքն ու գեղեցիկ կամարները, դու ի՞նչ կանես:

– Ես այս որձաքարով կջախջախեմ իմ պատիվը անարգողի գանգը, Բաղաց թագավոր:

– Ապրես, որդիս,- ասաց արքան ու համբուրեց նրա քրտնած ճակատը, – այսօր ես հանգիստ հաց կուտեմ: Գրիգոր եպիսկոպոսն ինձ ուրիշ ասելիք չունի՞…

– Ոչ…

Տանձափարախի վանքից դուրս եկան մի քանի կույսեր ու վախվորած եղնիկների պես դեսուդեն նայելով, արագ հեռացան անտառամեջ կածանով, որոնց հետեւեցին մի քանի խարազնազգեստ վանականներ:

Սենեքերիմ թագավորը բլրի վրա քաշեց ձիու սանձը ու նայեց վանականներին, մինչեւ որ նրանք մտան խիտ անտառը: Արքան չէր ցանկանում, որ իր որդին եւ իրեն ուղեկցող հեծվորները տեսնեին նրանց, բայց նրանք թագավորից շուտ նկատեցին: Արքան սահմանավորք վանականների մասին վատ բան չմտածեց, մանավանդ, որ այդ օրը վարդավառի տոն էր: Այնուհետեւ արքան նկատեց Հալեձորի կողմից մոտեցող երկարավուն քարավանը ու ակամայից վերհիշեց մանկության երազային այն տարին, երբ հենց այդ բլրի վրա կանգնել էին Գրիգոր առաջին թագավորը եւ իր քույրը՝ Շահանդուխտ թագուհին:

Այն ժամանակ այդպիսի մի մեծ քարավան Բաղաբերդից գնաց դեպի Պարսկաստան, երբ սելջուկյան պետության մեծ վեզիր Նիզամ ալ- Մուլքը Սպահան էր տանում հայկական քաջընտիր իշխանազորը:

Շատ տարիներ էին անցել այդ օրից, բայց Սենեքերիմ արքան չէր մոռացել, երբ վեզիրը մոտեցավ, սիրալիր խառնեց իր գանգուրները, ասելով. «Այս գեղեցիկ պատանին թագավոր դառնալու համար է ծնվել»: Ու Սենեքերիմը լսեց մեծ վեզիրի խոսքերը, սրտի խորքում ինչ- որ հաճելի խայտանք զգաց: Նա զգաց, որ մի առաջնորդիչ ուժ իրեն պոկեց բլրից ու տարավ սուրբ Վահանավանք եւ այդ ուժը ստիպեց չոքել ու երդվել, որ, իրոք, ինքը կդառնա բարեպաշտ թագավոր ու շեն կպահի գեղեցիկ երկիրն իր: Եվ վերջապես, արքան հիշեց, թե ինչպես էր Նիզամ ալ- Մուլքը հիացմունքով դիտում Տաթեւի մատենադարանը, որտեղ նա տեսավ մեծ փիլիսոփա, բժիշկ Ավիցեննայի «Կանոն բժշկության» քառահատորը ու թե ծնկաչոք ինչպես համբուրեց գրքի կաշվե կողեզրը, ասելով. «Այն ժողովուրդը, որ աչքի լույսի պես պահում է ուրիշի հոգետուր ոսկե մասունքները՝ երբեք չի մեռնի»… Ավա՜ղ, այլեւս չկա վեզիրը, չկան շատ ուրիշներ ու մահը մի օր էլ այդ քարավանի պես դանդաղ կմոտենա իրեն…», – մտածում էր Բաղաց թագավորը, ափսոսանքով նայում հավերժական կանգուն սարերին, կանաչ անտառներին:

Քարավանը աննկատելիորեն եկավ ու հավասարվեց Սենեքերիմ թագավորին, նա սթափվեց:

– Բոլո՞ր մատյաններն եք բերել, – հարցրեց թագավորը մատենագետին:

– Բոլորը, աստվածապսակ արքա:

– Ինչպե՞ս դիմավորեցին տաթեւացիք:

– Հայհոյանքներով…

– Մի՞թե…

– Թոնդրակեցիների ոգին դեռ պտտվում է Տաթեւի շուրջը, արքա: Իսկ հավատացյալները գոռում էին. «Մատյանները թողեք, տարեք վանականներին, մենք նրանց կերակրողը չենք»:

– Ես այդպես էլ կարծում էի…

– Երբ բեռնավորված ձիերը դուրս բերեցինք սուրբ Տաթեւից, – շարունակեց մատենագետը, – ականատես եղանք մի հուզիչ տեսարանի, Սենեքերիմ արքա: Ճանապարհի երկու կողմերին հավաքվել էին հարյուրավոր կանայք, ծերեր ու պատանիներ ու մաղթանքներ անելով մեզ հաց մատուցեցին: Նրանցից շատերը արտասվում էին, կարծես իրենց հարազատներին էին ճանապարհում պատերազմ: Նրանք պարկեր ու ջվալներ նվիրեցին, որ ճանապարհին հանկարծ անձրեւից չքրջվեն մատյանները:

– Ապրես, մատենագետ, ապրես…Դու ինձ անչափ ուրախացրիր, շնորհակալ եմ քեզանից: Գեղջուկների մասին միշտ պետք չէ վատ բաներ մտածել: Ես իմ բարեհոգի ժողովրդին լավ եմ ճանաչում, ամենադժվար պահին էլ նրան պետք է ձեռք մեկնել…Դուք գնացեք Բաղաբերդ, ես այսօր ուզում եմ Վարդավառի ուրախությունը անցկացնել Հալեձորում: Ասում են Վարդավառը նրանք լավ են տոնում:

– Մի՞թե դա վայել է թագավորին, հայր, – ասաց արքայազնը:

– Ինչ որ վայել չէ վանականներին՝ վայել է արքաներին, – պատաս-

Շարունակությունը՝ էջ 58

Կյուզիկոսի մետրոպոլիտ, Կ. Պոլսի պատրիարք (715-730): Կարգալույծ է արվել Լեւոն III կայսեր կարգադրությամբ: Կ. Պոլսի ժողովի կողմից 754 թվականին ենթարկվել է բանադրանքի:

28. Գեւորգ Կիպրացի (VII դ. կես -VIIIդ. սկիզբ), գրող, եկեղեցական գործիչ: Պատկերապաշտության տեսաբան, «Մեկուսակյաց ծեր վանականի ուսմունքը սուրբ պատկերների մասին» աշխատության հեղինակ: 754 թվականին, եկեղեցական ժողովի կողմից ենթարկվել է բանադրանքի:

29. Լեւոն IV Խազար, Բյուզանդիայի կայսր (775-780), մեղմ պատկերամարտության քաղաքականության կողմնակից: Արգելել է պատկերապաշտների հետապնդումներն ու հալածանքները:

30. Իրենե, Բյուզանդիայի կայսրուհի (797-802): Կոստանդին VI-ի խնամակալն ու կայսերակիցը: Պատկերապաշտության ջատագով: 787 թվականին հրավիրել է 2-րդ Նիկիական VII տիեզերական ժողովը, որտեղ վերականգնել է պատկերապաշտությունը: 797 թ. կուրացնելով որդուն՝ Կոստանդին VI-ին, բռնազավթել է գահը:

31. Խոսքը Բյուզանդիայի կայսր Կոստանդին VI-ի (780-797) մասին է: «Ծիրանածին» է կոչվել, քանզի ծնվել է Բյուզանդական արքունիքի «Ծիրանի» կոչված դահլիճում:

32. Տարասիոս, նշանավոր հոգեւոր-եկեղեցական գործիչ, Կ. Պոլսի պատրիարք (784-806):

33. Նիկեփոր I, գենիկոնի լոգոթետ, պատրիկ: 802 թ. հոկտեմբերի 31-ին կատարելով պետական հեղաշրջում եւ գահընկեց անելով Իրենե կայսրուհուն՝ հռչակվել է կայսր (802-811):

34. Նիկեփոր պատրիարք, եկեղեցական ու քաղաքական նշանավոր գործիչ, պատմագիր: Կ. Պոլսի պատրիարք (806-815): 815 թ. եկեղեցական ժողովի կողմից կարգալույծ է արվել եւ աքսորվել: Հեղինակ է «Համառոտ ժամանակագրություն» եւ 610-769 թթ. ժամանակահատվածի պատմական անցքերին նվիրված «Համառոտություն պատմության» երկասիրությունների:

35. Ստուդիոսի վանք, հռչակավոր վանական հաստատություն Կ. Պոլսի արեւմտյան մասում՝ Սամաթիայից հարավ: Կառուցել է Ստուդիոս պատրիկը՝ V դ. երկրորդ կեսին:

36. Աթինգաններ, IXդ. սկզբներին Փռյուգիայում եւ Լիկաոնիայում տարածված աղանդավորական շարժում, որը ճնշեց Միքայել 1-ը:

37. Վարդան, մականվանյալ «թուրք», Անատոլիկոն բանակաթեմի զորավար, մոնոստրատեգոս, Արեւելքի զորքերի դոմեստիկոս, սպարապետ, պատրիկ, հավանաբար Մամիկոնյան ընտանիքից: 803 թ. հուլիսի 19-ին գավառական ազնվականությունն ու հայկական զինվորականության մի մասն ընդդիմացել են Նիկեփոր 1-ի գահակալությանը եւ կայսր հռչակել Վարդանին: Սակայն Նիկեփոր 1-ին հաջողվել է հնազանդեցնել Վարդանին, կուրացնել եւ աքսորել: Որոշ պատմաբաններ Վարդանին համարում են օրինական կայսր:

38. Միքայել I Ռանգաբե (811-813), նախապես կյուրոպաղատ: Նիկեփոր I կայսեր Պրոկոպիա դստեր ամուսինը, գահընկեց է արվել Լեւոն V Հայկազնի կողմից եւ. աքսորվել:

■

Շնո՛րհ ձեզ եւ խաղաղութի՛ւն մեր Հայր Աստծուց եւ Տէր Յիսուս Քրիստոսից: ● ՊՈՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ
www.syuniacyerkir.am

1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ
ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

# Սրի եւ սիրո հանդիպում

## Հատված Սերգեյ Ումառյանի «Բաղաբերդ» վեպից

**Սկիզբը՝ էջ 57**

խանեց Սենեքերիմ արքան ու ձին քշեց դեպի Տանձափարախի ծորը:

Սեւ երիվարը ջրի սահունությամբ թեթեւ իջավ ձորը, դունչը մեկնեց քարակողերից թափվող սառն ու զուլալ ջրի շիթերին, սմբակով դոփեց ջրափոսը ու ցոլքերով հովացրեց իր քրտնած փորատակը:

Արքան ցանկացավ ձիուց իջնել, որ նա հանգիստ ջուր խմի, բայց այդ պահին չռչռի ակունքի մացառների միջից լսվեց մի զիլ ծիծաղ:

Արքայի ձին խրտնեց ու քիչ էր մնում նրան թամբից շպրտեր դարավանդը: Բայց արքան ամուր ձգելով ձիու սանձը՝ իրեն հավասարակշռեց, ամուր հենվելով ասպանդակներին:

Ծիծաղը կրկնվեց եւ այս անգամ ջրի շիթերը թափվեցին արքայի ուսերին: Ձին պտույտ-պտույտ եկավ տեղում ու խրխնջաց:

– Չէի՞ր սպասում, արքա, – չռչռի վերեւից ասաց Սյունեն:

– Այդ ի՞նչ ես անում, խելագար…

– Ինչ եմ անո՞ւմ... խելագա՞ր... Արքան մոռացե՞լ է, որ այսօր Վարդավառի օր է:

– Վարդավառը այստեղ չեն տոնում, քիչ էր մնում ձիուց գլորվեի:

– Հեծյալին լավ եմ ճանաչում, նա չի գլորվի,– պատասխանեց Սյունեն ու իջավ չռչռից:

– Դու մենակ ի՞նչ գործ ունես այս խուլ ձորի մեջ:

– Գնում եմ Արավար(2) մորաքրոջս մոտ: Հեռվից տեսա քեզ՝ թաքնվեցի:

– Տինիքում կարող էիր Վարդավառ տոնել: Դու դրա համար չես եկել:

– Տինիքում ես ոչինչ չունեմ: Մեր տունը հրդեհված է, հողերը՝ գրավված, իսկ հավատացյալները երես են թեքել մեզանից: Արավարում մորաքույր ունեմ, մորս հետ ապրում ենք նրա մոտ: Այստեղ ինձ համար լավ է, որովհետեւ հաճախակի կտեսնեմ Բաղաց գեղեցիկ արքային...

– Դու խենթ ես, խե՜նթ, Սյունե...

– Իջիր ձիուց, թագավոր,– ասաց Սյունեն ու ավելի մոտեցավ արքային,– ասածներս անսովոր են, տարորինա՞կ, որովհետեւ Կտակարանից սերտած բարոյական խոսքեր չեն:

– Լռի՛ր, Սյունե… Կտակարանում աստծու խոսքերն են, իսկ դու անհավատ ես:

– Առանց ամաչելու, աղաչում եմ՝ իջիր: Իջիր, որ քո մեջ էլ արքնաան հավատից բքացած զգացումներդ…

Սենեքերիմ արքան նայեց Սյունեի հաստ ու գեղեցիկ շրթունքներին ու թխորակ աչքերին, որոնք սիրո կայծեր էին արձակում: Նա ցանկացավ թամբից կռանալ ու համբուրել աղջկան, բայց զսպեց իրեն, մտածելով՝ կռանալ կնշանակի գլուխ խոնարհել աղջկա առաջ, թեկուզ այն լինի համբույրի նպատակով:

Սյունեն նկատեց թագավորի դեմքի վրա շարժվող ցանկությունը ու նորից կրկնեց.

– Իջիր ձիուց, թագավոր, Բաղաց աշխարհում Վարդավառից գեղեցիկ օր չկա:

– Ոչ, ո՛չ, Սյունե: Լսո՞ւմ ես ձիերի դոփյունները: Իմ համարզներն ու որդիս մոտենում են, լավ չէ, որ մեզ միասին տեսնեն, առանց այն էլ իմ ու քո մասին շատ են բամբասում:

– Արքան վախենում է բամբասանքներից... ո՞ր թագավորին չեն բամբասել: Մի վախեցիր, իջիր... Այն մեծ կաղնիները տեսնո՞ւմ ես, արքա,– Սյունեն ցույց տվեց գետեզրի հսկա կաղնու ծառերը,– այնտեղ կսպասեմ, կգա՞ս…

– Լա՛վ, հեռացիր...

Սյունեն անէացավ դեպի Ողջի գետը ձգվող խիտ անտառի մեջ: Արքայազնն ու համհարզները մոտեցան Սենեքերիմ թագավորին:

– Իջեք Տանձափարախ, – դիմեց նրանց թագավորը:

– Իսկ արքա՞ն,– հարցրեց Գրիգոր արքայազնը:

– Արքան կիջնի գետը ձին լողացնելու:

– Մենք թագավորին մենակ չենք թողնի:

– Բաղաց թագավորն իրավունք ունի իր երկրի մեջ ազատ շրջելու: Դուք հսկեք գետը տանող ճանապարհներն ու կածանները,– հրամայեց թագավորը ու գնաց Սյունեի ետեւից:

Թիկնազորներն ու համհարզներն անցան իրենց պարտականություններին, իսկ արքայազն Գրիգորը կասկածելով թագավորի նման վարմունքի վրա, հետեւեց նրան:

Անցնելով կաղնիների պուրակը, արքայազնը տեսավ, որ հոր ձին կապված է հաստաբեստ կաղնու ճյուղից: Նա զգուշությամբ շրջանցեց պուրակը, իջավ ցանցառ մասրենիների արանքով ու դեմ առավ եղնջոտին: Դեպի գետը ուրիշ ճանապարհ չկար, ամեն տեղ հսկա որձաքարեր էին ու խիտ թփուտներ: Արքայազնը ստիպված անցավ խիտ եղնջոտի միջով, ձեռքերով ճանապարհ հարթելով իր համար: Եղինջները ծակոտկեցին նրա նուրբ ձեռքերը, բայց նա համառությամբ ճեղքեց ու անցավ:

Սրընթաց գետը պտույտ-պտույտ էր գալիս ողորկ ու հսկա քարերի արանքներում ու զայրացած իրեն նետում առաջ, շուրջը տարածելով հաճելի աղմուկ:

Արքայազն Գրիգորը, սահուն քարերից բռնելով, դժվարությամբ իջավ գետի հոսանքն ի վար ու տեսավ երկնագույն ավազանի ջրապտույտը: Բնության կախարդանքից զմայլված, արքայազնը ավելի ապշեց, երբ տեսավ վճիտ ավազանում կանգնած ջրահարսին, որը մերթ սուզվում էր ջրի մեջ ու մերթ կանգնում՝ իր երկար ու սեւ մազերը փռելով ճերմակ մեջքի ու կրծքի վրա:

– Աստվա՜ծ իմ, սա իրականությո՞ւն է,– մրմնջաց արքայազնը, եղինջից դեռ ծակծկվող, տաքացած ձեռքերը իջեցնելով սառը եւ հաճելի ջրի մեջ: Նա ափուռ-ափուռ մի քանի անգամ ջուր խմեց, մոտեցավ ջրավազանին, կանգնեց մասրենու խիտ ճղների ետեւում, որ նկատելի չլինի:

– Մի՞թե սա Սյունեն է, իսկ գետափին նստածը՝ հայրս…

Խանդի ներքնաբուխ ալեկոծումը ցնցեց արքայազնի հավատի խորաններն ու փլուզեց նրա ամոթխածության ամուր կառույցը: Նրա ոտքերը ծալվեցին ու նստեց ողորկ քարին, աչքերը ավազանի վրա…

Արքայազնը տեսավ ջրապտույտի մեջ խլրտացող տեսանելի այն ուժը, որը դարերով ջրածեծ քարին գամեց հոգեւոր աղոթքներով սնուցվող իր եսը: Սիրո բնածին զգացումը, որը բքացել էր երկարամյա բարոյական դաստիարակությունից, եւ որը օրենքի պատշաճ սահմաններից մազաչափ անգամ չէր խոտորել նրա ներաշխարհը, հանկարծ արթնացավ Վարդավառի խանդաղատեսիլ մի վայրկյանում: Արքայազնի ձեռքերը սկսեցին դողդողալ ու նա կրկին իջեցրեց սառը ջրի մեջ, այդպես մեղմելով շփոթված հոգեվիճակը:

Արքայազնը ուզում էր տեղից պոկվել ու փախչել, բայց կարծես աչքերի թարթիչները երկար թելերի պես ձգվել ու միացել էին ջրավազանում լողացող մերկ աղջկա գիսակներին եւ անզոր էր նրանից պոկվել:

Սենեքերիմ արքան փոքրիկ քարեր էր նետում ջրավազանի մեջ, երեխայի պես հրճվում աղջկա խաղերի վրա, նրան պատասխանում ջուր ցանելով եւ ուրախ-ուրախ ծիծաղով: Արքան թրջված շապիկը հանեց, աղջիկը տեսավ նրա վզից կախված թանկագին ակներով զարդարված խաչը:

Սյունեն կանգնեց ջրավազանի մեջ, աչքերը փակեց ու ձեռքերը տարածեց ալիքների վրա… Վարդավառի խաղի մեջ պարտված արքան իրեն գցեց ջրի մեջ, ամուր գրկեց Սյունեի բարակ մեջքը ու համբուրեց…

Արքայազն Գրիգորը տեսավ Վարդավառի խաղերը, ձեռքերով ծածկեց ամոթխած դեմքը ու փախավ:

Համհարզների այն հարցին, թե՝ «Ո՞ւր է արքան», արքայազնը պատասխանեց.

– Թագավորը գետի զուլալ ջրի մեջ լողացնում է իր գեղեցիկ նժույգը…

...Բաղակու քար եկեղեցին կառուցվել էր Ողջի գետը բաժանող Խուստուփ եւ Բաղքուշատ լեռների հատման կետում, անդնդախոր ձորերի եւ անտառախիտ ապառաժների արանքում: Եկեղեցին բնական պատնեշներից բացի, պաշտպանված էր նաեւ ամուր պարիսպներով:

Բաղակու եկեղեցին խնկի ու մյուռոնի պահեստ էր: Այնտեղ էր գտնվում հոգեւոր տիրոջ ամբողջ հարստությունը:

Գրիգոր եպիսկոպոսը բացեց եկեղեցու հսկա փականքը, դուռը ճռռալով ետ մղեց: Դրսի սառը օդը խցկվեց եկեղեցու մեջ՝ խնկի բույրը տարածելով շրջապատում:

Եպիսկոպոսը դանդաղ ու զննող հայացքով մոտեցավ շամդաններին, վառեց մի քանի մոմ: Լույսերից փայլատակեցին ոսկեղեն իրերը, եպիսկոպոսի սիրտը ամեն անգամվա պես լցնելով ուրախությամբ: Քարե փոշեպատ սեղանի վրա մատով մի քանի անգամ եպիսկոպոսը գրեց իր անունը, բառամիջերին դնելով խաչի նշաններ:

– Աստված, պահպանիր իմ եկեղեցին, թշնամիներս շատ են…– հազիվ արտասանեց նա:

– Քո եկեղեցին ամուր է պաշտպանված, Գրիգոր եպիսկոպոս, աստծուն հարկ չկա դիմել, – ասաց Սյունեն, հայտնվելով եկեղեցու շեմքին:

Եպիսկոպոսը տեսնելով սուրը կողքից կախած աղանդասեր աղջկան, մի քանի քայլ ետ-ետ գնաց:

– Վախենո՞ւմ ես քո եկեղեցու մեջ…Չէ՞ որ աստծու ուժը քո ձեռքին է:

– Ի՞նչ գործ ունես այստեղ, սատանա:

– Սատանա՞… սատանի նմա՞ն եմ: Ո՞ւր է հավատի քո ուժը, որ սատանան անգամ համարձակվում է եկեղեցի մտնել, Գրիգոր եպիսկոպոս:

– Ի՞նչ ես ուզում ինձանից…

– Ուզում եմ ինձ հավատափոխ անես: Փորձիր, իմ հոգին դարձի բեր ճշմարիտ ուղու վրա, որ ես այստեղ մտնեմ աղոթքների համար, որ աստծուց խնդրեմ, աղերսեմ, որ շատանան քո ոսկե պնակները, որ եռապատկվեն վանքերին տրվելիք հարկերի քանակը, որ անվանի եպիսկոպոսը այս անցողիկ աշխարհում ապրի երկա՜ր ու խաղաղ…

– Դրա համար չես եկել, Սյունե:

– Ինչի՞ համար եմ եկել…

– Գողության:

– Հա՞… այն ժամանակ դու պետք է օգնես ինձ, եպիսկոպոս: Հավաքիր ոսկեղեն իրերը եւ լցրու պարկի մեջ…

– Ես իմ ձեռքով այդ չեմ անի:

– Եթե չանես՝ կսպանեմ,– պատասխանեց Սյունեն ու քաշեց սուրը:

Եպիսկոպոսը սարսափահար կպավ պատին ու կարկամելով ասաց.

– Հիմա, հիմա ես ամեն ինչ կհավաքեմ, Սյունե, կտամ ավելին, ինձ մի սպանիր:

– Տեսա՞ր, թե ինչպես են ծերացած ոտքերդ դողում սարսափից… ո՜չ, եպիսկոպոս, ես գող չեմ, գողության համար չեմ եկել: Կրկնում եմ՝ փորձիր հավատիդ զորությունը ու դարձի բեր ինձ: Իսկ եթե չկարողանաս՝ վզիցդ կհանեմ այդ ծանր խաչը ու Բաղաց աշխարհում կտարածեմ, որ Գրիգոր եպիսկոպոսը... Սյունեն դեռ չէր ավարտել իր միտքը, եպիսկոպոսը գոռալով գավազանը բարձրացրեց, որ հարվածի, բայց ճարպիկ աղջկա սուրը դեմ առավ գավազանին ու մնաց օդում:

– Գրիգոր եպիսկոպոս, քո հավատի տանը աստված նույնիսկ չօգնեց քեզ: Տես, սուրս կիսով չափ մտել է գավազանիդ մեջ: Սուտ է քո հավատը, դու պարտված ես,– Սյունեն քաշեց սուրը, բայց գավազանն էլ քաշեց եպիսկոպոսի ձեռքից: Գրիգոր եպիսկոպոսը սպանել տվեց հորս, բայց նրա աղջիկը այս սրով, մյուռոնի այս սեղանի վրա կմորթի եպիսկոպոսին… Այնպես կմորթեմ քեզ, ինչպես գառներին մատաղ են անում աստծու տան համար...

– Ո՛չ, ո՛չ, աղջիկս, մի սպանիր ինձ... ասա, ի՞նչ ես ուզում.. Ես, ես ամեն ինչ կանեմ:

– Մահից վախենո՞ւմ ես, բայց քանի՜ աղանդասերների արյուն թափեցիր: Քեզ կսպանեմ եւ ոչ ոք չի իմանա, թե սպանողը ես եմ: Եպիսկոպոսական աթոռիդ վրա անշուշտ մեծ ախորժակներ կան... Մահիցդ հետո ով որ նստեց քո աթոռին, կասեն՝ քեզ սպանողը նա է:

– Աթոռիս թեկնածուն իմ որդի Ստեփանոսն է, նա իր հորը չի սպանի: Մի արատավորի նրա բարի անունը, Սյունե, աղաչում եմ: Դու այդ բանը չես անի, ես գիտեմ, որ բարի աղջիկ ես: Սենեքերիմ արքան ինձ ամեն ինչ պատմել է...

Սյունեն եպիսկոպոսին սպանելու միտումով չէր մտել Բաղակու եկեղեցին: Նա վաղուց էր առիթ փնտրում երես առ երես խոսել Բաղաց հոգեւոր տիրոջ հետ, քանի որ նա էր արքայի եւ իր մասին վարկաբեկիչ բամբասանքներ տարածողը, աղանդասերներին հետապնդողը նա էր, պատիժներ սահմանողը նա էր: «Սենեքերիմ արքան ինձ ամեն ինչ պատմել է» խոսքերը լսելով՝ Սյունեն հուզվեց, այլեւս չէր լսում եպիսկոպոսի աղատանք-պաղատանքները, որը վախից կուչ էր եկել պատի տակ ու խնդրում էր...

– Ասում ես արքան պատմե՞լ է,– հարցրեց Սյունեն:

– Այո՛, աղջիկս:

– Ի՞նչ է պատմել...

– Նա ասաց, որ այդ սուրը ինքն է տվել քեզ:

– Այդ մասին բոլորը գիտեն: Գիտես եւ դու:

– Այդ մասին չէր, որ պիտի ասեի, Սյունե… Նա ասաց, որ քեզ սիրում է:

– Արքան այդպիսի բա՞ռ արտասանեց:

– Ես նույնպես տեսնում եմ: Բոլորն են տեսնում :

– Բոլորը կրկնում են քո խոսքերը, իսկ դու ինչ որ տեսնում ես՝ սուտ է:

– Ինչ որ տեսնում եմ՝ հոգուս պատուհանից եմ տեսնում, դրա համար ինձ մի մեղադրիր:

– Ասենք թե այդպես. ի՞նչ հանցանք կա դրա մեջ:

– Այդ անկարելի բան է, աղջիկս, հասկացիր: Նա ընտանիք ունի, պարտավոր է մաքուր պահել իր անունը: Թագավորը շատ բան կարող է ցանկանալ, բայց ազատության սահմանները որոշված են սուրբ հավատի օրենքով: Մեր պարտքն է մոլորվածներին դարձի բերել, քանզի խաթարված են նրանց բանականության կապը հոգեւոր կենտրոնից: Աղջիկս, նաեւ մի մոռացիր, որ նա ազնվածին թագավոր է, իսկ դու գեղջուկ… Այդ տարբերությունը որոշողը ես չեմ: Մի մոռացիր, որ արքային բարոյական քարոզներ կարդացողը Բաղաց եպիսկոպոսը պետք է լինի, այդպես է կարգը:

– Ես խոստովանության համար չեմ եկել, եպիսկոպոս, որ քարոզներ կարդաս: Ես ուզում եմ, որ այսուհետեւ չստես: Քիչ առաջ դու ասացիր, որ արքան ինքն է քեզ ասել, որ ինձ սիրում է: Ոչ, արքան այդպիսի բան չի ասի, որովհետեւ նա ինձ չի սիրում: Ես եմ նրան սիրում… Այո, մի զարմացիր, Գրիգոր եպիսկոպոս, նրա սերը ուրիշ սեր է, որը դու չես հասկանում… իսկ ես նրան սիրում եմ... Քո քարոզներն ու բամբասանքները անօգուտ են: Մի ստիպիր ինձ, որ ես մարդասպան դառնամ, թագավորի նվիրած սուրը դեռ անբիծ է…

– Ի՞նչ է քո ցանկությունը, Սյունե:

– Հորս սպանելուց հետո՝ ինձ չվարկաբեկել:

– Այդպես էլ կլինի:

– Վերջ տուր աղանդասերներին հետամտելը:

– Այդ կլինի, աղջիկս:

– Երդվիր Ավետարանի վրա:

– Երդվում եմ…

– Երդմնազանց լինելու դեպքում՝ այստեղ կմտնեն նաեւ ուրիշները, չկարծես, թե մենակ եմ, ինչպես ցանկանաս այնպես էլ կվարվես ինձ հետ:

– Անհոգ եղիր, աղջիկս:

– Այնպես չանես, որ երկրորդ անգամ հանդիպեմ: Եթե այս անգամ սուրս կիսով չափ մտավ գավազանիդ մեջ, երկրորդ անգամ գլուխդ կթռցնի: Ես քեզ հետ խոսել էի ցանկանում եւ խոսեցի…Մյուս անգամ եթե ստիպես՝ կգամ կռվելու: Բաղաց թագավորը ինձ լավ է հասկացել, եպիսկոպոս, ինչո՞ւ չես մտածում… Աղանդասերները հիմա առաջվա պես ապստամբներ չեն, նրանք կանգնած են ամեն մի քարի տակ, ամեն մի ճանապարհի վրա, ամեն մի բերդի մոտ եւ ամեն մի վանքի դռան: Զգույշ, եպիսկոպոս, Ավետարանի վրա ես երդվել…

– Աստված քեզ հետ, Սյունե…

– Աստված չտա, որ երկրորդ անգամ ստիպված հանդիպեմ Գրիգոր եպիսկոպոսին… Նա նույնպես գիտի այն հին առասպելը, որ հեթանոս հայերը Բաղակայ(3) ամրոցում զոհ էին մատուցում իրենց աստծուն: Եվ քանի որ եպիսկոպոսը ինձ հեթանոս է անվանում՝ իմ առաջին զոհը նա կլինի,– սաստեց Սյունեն ու հեռացավ Բաղակու եկեղեցուց:

**Ծանոթագրություն**

1. Սանջակի Շերիֆ դրոշը գործված էր այծի բրդից: Այդ դրոշով Մահմեդն առաջին անգամ ամբոխին առաջնորդեց դեպի Մեքքա:
2. Արավարը գտնվում էր Վահանավանքի մոտ:
3. Սյունեի ակնարկած Բաղակայը եղել է հեթանոսական մեհենատեղի: Հետագայում ժողովրդական ստուգաբանությամբ դարձել է Բաղակու քար: Ստ.Օրբելյանը այն կապում է Բաղակ նախարարի անվան հետ. «Բաղք գաւառ որ ի Բաղակայ անուանեցավ»: Գր.Ղափանցյանը երկրիս անունը կապել է բաղեր (պալեր) ցեղանվան հետ:

■

1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

# Հին Կապանի վերջին աշունը

## Ավանդավեպ, լրագրային տարբերակ

Լուսանկարը՝ Մեկնը Բաղրամյանի

ՌՈԲԵՐՏ ԷՋԱՆԱՆՅԻ

Հայոց ՌԺԹ թվականին, որ է Փրկչական 1170-ը, աշունը ծանրախոհ շուլալվել էր Կապանա տանը: Սարերում գերված անասնագող ելուզակները սպառնում էին աթաբեկի մոտալուտ հաշվեհարդարով: Հալածական գաղթականների խմբերը, գալով Սեւասարի կողմերից, Տաթեւի ուխտն էին գնում եւ այնտեղից սփռվում Վայք, Վիրք ու Մանքերմանի երկիր:

Հոնի ու տանձի կաթուկը, փոփ զկեռն ու կտողենի կեծուռը բռնել էին Բաղաց անտառները, բայց Կապանա գեղջուկն աշնանային հավաքչության չէր գնում:

Բաղաբերդի երիտասարդ տիրակալը զորահավաք էր հայտարարել ու հաճախակի էր գավառները գնում զորատեսի: Իր նախորդի՝ Գրիգոր Բ Նվազ թագավորի գահակալման տարիներին սելջուկներն ավերել էին Կապան ոստանը, ասպատակել թագավորության տասնյակ վանքեր, բերդեր ու գյուղեր: Իր սեւ գործն էր արել 1139-ի ահեղ երկրաշարժը: Գաղթն ահագնացել էր, երկիրը տկարացել, սակայն սելջուկը դեռ աչք ուներ Կապանա կիրճի վրա, որը Բաղքի կապ-լեռնանցքն էր եւ իր աջակողմ բարձունքին ուներ անսասան Բաղաբերդը:

Մոտակա Բաղաբերդ, Աչաղու, Արավար, Շեկք, Հողար, Եճանան, Իցան, Հիմանդրախտ եւ այլ գյուղերի տարեցներն օրավարձու աշխատանք էին կատարում բերդում: Տաթեւից եւ այլ վայրերից այս սարսափազդու ամրոցը բերված հարստություններն ամբարելու նպատակով, բերդավագի ղեկավարությամբ կառուցում էին նոր պահեստարաններ, ընդլայնում Կկվաքարի ու գետակողմի քարայրները:

Մունետիկները շրջում էին գյուղերում.

– Աթաբեկը մեր թագավորին նեղում է, հինգ տարվա հարկ է ուզո՞ւմ…

– Ի՞նչ հարկ, – ընդդիմանում էին ռամիկները, – երկու տարի չկա՝ Գրիամն ու Գեղավանքն է թալանել: Դա ոչ թե հինգ, այլ տասը տարվան կարժենար: Նախիջեւանի աղն ի՞նչ է, վրան ոսկու գին է դրել…

Միապետության ոսկերիզ խաչվառը փողփողում էր Բաղաբերդի վրա: Պարսպամերձ աշտարակի դիտարանից թագավոր Հասան Սակոյան Գեռաքարեցին փարվել էր Կապանա չնաշխարհիկ ձորաստանին: Բերդաբնակ ձեռնասուն եղնիկները հետեւում էին նրան, եւ մտասույզ միապետը, սպասավորի բերած քրեղանից լավաշն ակամա կտրելով, մոտեցնում էր նրանց դնչիկներին: Արքայական հոգում կրակ կար եւ այն ավելի էր փոթոթում թագուհի Կատային: Մի քանի օր առաջ Նորավանքից Ստեփանոս Մեղրեցի եպիսկոպոսը գաղտնագիր էր ուղարկել, որ աթաբեկը երկու կողմերից՝ Գանձակից ու Նախիջեւանից, մտադիր է ներխուժել Սյունիք:

Հասանն օղակված էր: Նրան օրհասական կռիվ էր սպասում:

Երբեմնի աշխարհակալ Մեծ Հայք տերությունը դար ընդ դար բեկորվել էր եւ նրանից Սյունյաց աշխարհի երրորդ մասում այս փոքրավուն՝ Բաղքի թագավորությունն էր մնացել:

Սարավույթի շթաքարե դղյակում կաշեգիր քարտեզներն ու իր նախորդների հրովարտակները քննելով, թագավորը խորհրդի նստեց իշխանների հետ: Նրանց իրազեկեց Կիլիկիո Ներսես կաթողիկոսի, Անիի, Վայքի իշխանների սուրհանդակների թղթերը, տեղեկացավ բերդերի ամրացման ու զինյալների բաշխման աշխատանքների ընթացքին, կազմավորեց համբարակային ծառայություն:

Նավասարդն անցել, հոռի ամիսն էր սկսել, եւ Սիսական տունը Մայր եկեղեցու օրն էր նշում: Գահակալ եպիսկոպոս Տեր-Ստեփանոս Ֆախրէլ Մսեհը (սիրեցյալ Քրիստոսի) գիտեր, որ թագավորը, ընդհանուր իրավիճակից ելնելով, ոչ Տաթեւ, ոչ Նորավանք կարող է ժամանել: Արդ, հոռիի Արեգ օրը Հասան թագավորն ու թագուհի Կատան շքախմբով Վահանավանք գնացին:

Սյունյաց Մայր եկեղեցու օրը սահմանել էր Սբ Մեսրոպի աշակերտ եւ գործակից, գահակալ եպիսկոպոս Անանիա Թարգմանիչը, եւ այն յոթ դարից ավելի անընդմեջ նշվում էր ժողովրդական տոնախմբությամբ:

Ձիակառքի մեջ, պատարագին ընդառաջ, ծանր խոհեր էին համակել թագավորին: Փորձելով կռահել առաջիկա իրադարձությունների զարգացումը, բռնվում էր սարսուռ պատճառող կասկածի վրա. «Գուցե՞ վերջին անգամ է Սյունիքը տոնում Մայր եկեղեցու օրը»:

Նա սթափվեց թագուհու ձեռքմեկնումից: Թիկնազորը նրանց ուղեկցեց վանքի գավիթ, որտեղ հոգեւոր դասը օվսաննա ձայնեց:

Վահանաձորից մինչեւ Կրկնահարկ եկեղեցին ասեղ գցելու տեղ չկար: Գյուղերից ուխտավորներ էին եկել մատաղացուներով, օրհնություն էին հայցում նորապսակները: Թագավորի մռայլությունն աննկատ չմնաց: Սարեցի ձայնարկու մի տատիկ, քթակալն իջեցնելով, կանչեց.

– Աստուծ պահի թագավերին, մեր կլխան անպակաս նի՞…

Աշխուժությունը ծովացավ ուխտավայրում: Թագավորական զույգը ծունր իջավ Վահան Նախաշիհնողի մահարձանին: Պատարագիչ Տեր-Սահակ քահանան օրհնաբանեց արքային ու թագավորությունը:

Հավարտ պատարագի, Սյունյաց տերն ու իր կողակիցը գեղմնահյուս նոր մույկեր հագան ու անցան նախնյաց դամբարանագավիթը: Սարկավագները խնկարկում էին, իսկ թագավորը հազիվ լսելի աղոթում էր. «Քրիստոս աստված, խոնարհ ծառայիդ արժանի արա մեր նախնյաց փառքին…»:

Թագուհին արցունք էր հեղում հոր՝ Գրիգոր թագավորի մահարձանին:

Դրսում տոնախմբությունը շարունակվում էր: Ձոկ գուսանների փանդիռների նվագի տակ, իշխանական խրախճարանի գավթում պար էին բռնել նորակոչիկները:

– Մատենագե՛տ, – դարձավ թագավորը Տեր-Սահակին, – միաբաներիդ հաճո՞ էր իմ հրովարտակը:

– Վսեմաշո՛ւք, վանահայրն այդ գործով է զբաղված: Բղենո Փղոսկրյա Ավետարանն արդեն զինակիրների ուղեկցությամբ ուղարկել ենք Վայոց ձոր: Մեր սրբությունները բերդ կբերենք տոնավարտին ու կհանձնենք գանձարանապետին: Ձանգերը հանելու համար արդեն ժամանել են աճանանցի վարպետները…

– Որքա՞ն ժամանակ է անցել քաղաքի ավերումից:

– Ահա վաթսունյոթ տարի է՝ եկեղեցին խնկարկում է Կապանա նահատակներին: Ով ողջ էր մնացել, բնավորվել է հեռու մի գյուղում: Գավառից շատերը գաղթեցին Վիրք ու Մանքերմանի երկիր: Հենց երկու տարի առաջ Գեղավանեցի Վարդիկը Վայք գնաց ու հետը տարավ գյուղերում եղած իր մերձավորների հինգ ընտանիք: Մոտ քսան տարի առաջ Շլորուտի երկու գյուղերը հեռացան մեր աշխարհից…

– Եվ Ձուրջ իշխանը Շահապոնք գնաց, – նրբանկատ շարունակեց թագավորը, – Բաղքի ազատներն են հեռացողներին օրինակ ծառայում: Ի՞նչ կասեք, մեծափառ իշխաններ:

Մահեւան եւ Համտուն իշխաններն անթաքույց խոժոռությամբ նայեցին արքային:

– Ժամանակները փոխվում են, – դժկամ խոսեց Կովսականի իշխանը, – քաղաքի ավերումից երկու տարի հետո Բղենից Խոսրովիկ իշխանին գերի տարան, իսկ ահա երկու տարի առաջ Գեղավանքի, Գրհամի ու Կաքավաբերդի երեւելիներից շատերը հայրենաթող եղան:

– Նրանք Տիրոջ պատժից չեն խուսափի, նզովյա՛լ է հայրենադավը, – պոռթկաց Տեր-Սահակը:

Բաղացսարի կողմի անտառախիտ ձորում կրահորը բանում էր գիշեր-ցերեկ: Մի քանի աչաղվեցիներ օգնում էին կրագործներին: Իրիկնադեմին, երբ կրաքարի շեղջը հողածածկ էին անում, աչաղվեցի Համազը զրուցում էր եճանանցի Սիմոնի հետ:

– Աթաբեկը Շլորուտի կռվի տարուն մեր գյուղից երկու աղջիկ է տարել: Մի առ ժամանակ հետո նրանց տերերին մի– մի խալաթ է ուղարկել: Աղջիկներից մինն իմ ազգականն էր:

– Դե ասա Ելտկուզները քո խնամին են, էլի՛, – հեգնեց Սիմոնը:

– Հա՛, բա՛, – գոհացավ աչաղվեցին:

– Համադանի է՛շ, ձերոնք էլ աղջիկ չունե՞ն, որ տաք, խալաթ առնեք, էսա գալիս են:

– Էդպես մի խոսի, Սիմո՛ն, թուրքն էլ ա մարդ:

Սիմոնը շուրջը նայեց, որ մի բան գտնի, տա Համազի գլխովը, բայց սսկվեց:

Դիմացի լեռնակատարից ղողանջ լսվեց: Գուրզը զարկում էին հսկա պղնձե սինուն: Քիչ անց արձագանքեց Աճեն լեռան զանգը: Լսելի եղան հեռավոր լեռնակատարներից եկող խուլ ղողանջները: Մեկը մեկին իմաց անելով, բարձունքներում բոցկլտացին խարույկները:

Աղջամուղջին գործավորները ուրվականների պես հավաքվեցին քարայրի դռանը:

Ձանգն ու խարույկը գուժում էին թշնամու գալուստը:

Կապանա տունը չքնեց:

Մթնժորեքը տեղի տվեց խորհրդավոր գիշերվան: Խուստուփի ետնախորքի վրա բիբլիական լեռնակատարները նմանվեցին դիվական կերպարանքների: Գյուղական եկեղեցիների զանգերը գիշերային տագնապ էին հնչեցնում:

Խավարը ճեղքելով, Կապանա տան կանայք՝ ոմանք բարուրները մեջքներին կապած, զարդեղենը ծոցներն առած, լաչակները հանած, իրար ձայն տալով սարվորների մոտ էին բարձրանում:

… Վախթանգի որդի Հասան թագավորը բազմեց գահավորակին, նրա կողքին տեղ գրավեց թագուհին, ամեն մեծավոր կանգնեց իր տեղում: Կերոնների ձիթահոտից նեղվելով, թագավորը խոսեց իրավիճակի մասին.

– Սուրհանդակները գուժել են Ելտկուզ աթաբեկի հարձակումը: Մեզ վրա գալիս են ե՛ւ Գանձակից, ե՛ւ Նախիջեւանից: Թշնամու բանակում շատ են վարձկան այլազգիները ու նաեւ՝ ուրացած հայեր:

Աթաբեկին հայտնի է, որ այստեղ են Տաթեւի ու մյուս վանքերի հարստությունները եւ մեր թագավորական գանձարանը: Նա մտադիր է պաշարել մեր ոստանը եւ գնալ Դվինի վրա: Վրաստանում ամիրսպասալարն ապստամբել է Գեորգի թագավորի դեմ եւ օգնության ակնկալիք չկա: Անիի Շադդադներից էլ հույս չկա: Մեր կողմից պաշտպանության հրամանները տրված են: Գրադարանը պահված է գետնափոր գաղտնարանում: Համտուն զորապետը թշնամուն կճակատի Հագարու գետի կողմում, Մահեւան զորապետը՝ Ձվարավանքի: Բերդի կայազորի գլուխ ենք կարգում Սմբատ Վաժունեցուն, ազատագունդը նրան զորավիգ: Գլորքի համար քարհատները բերդում կբանեն գիշեր-ցերեկ…

Խոսք վերցրեց Տեր– Սահակը.

– Բոլոր գյուղերի երիտասարդ մարդիկ բանակում են, ժողովուրդը քահանաների ու տանուտերերի առաջնորդությամբ լեռնաստանի ապաստարաններն է քաշվում: Բայց մենք քիչ ենք թուրքի երեք տասնյակ հազարի դեմ: Ո՞ւր է քաջ խաչենցիների օգնությունը, որին սպասում ենք ամսից ավելի:

Թագավորը չարձագանքեց:

Խոնարհման նշան անելով թագավորին, ներկաներին դիմեց թագուհին.

– Իմ բարեհիշատակ հայրը չորս տարի առաջ, մահվան անկողնում պատգամ խոսեց, որը կարդում եմ բոլորիդ. «Իմ հայր Սենեքերիմ արքան քաջազն էր, բայց դավաճանի միջոցով խաբվեց ու թշնամու ծուղակն ընկավ: Դա թող դաս լինի մեր հետնորդների համար»: Ահա այդ թշնամու սերունդն է գալիս մեզ վրա, հետեւաբար ավելի նենգ է ու դաժան: Իմ արքան թող հրամայի, որ թշնամու հետ երբեք բանակցելու չպիտի գնանք…

Թագավորը գեղագանգուր գլուխը ետ ու առաջ արեց, որ հաստատումի նշան էր:

Թագուհին արքունի գրագրին, որ իր ազգականն էր, հրավիրեց զրույցի:

– Իմ տերը Մանուել կայսրին թուղթ չի՞ ուղարկել:

– Ո՛չ, զարմուհիս: Նա անգամ չի զրուցել Բյուզանդիոնի հյուպատոսի հետ:

– Եվ ոչ էլ՝ ռուսաց իշխանի՞ն:

– Մեծ իշխանը Վլադիմիրից գնացել ու գրավել է Մանքերման– Կիեւը: Շաբաթ առաջ սուրհանդակ էր եկել, եւ արքան պատվեց նրան:

Թագուհին փոթորկվում էր: Երկրի կառավարումը, իր հորաքույր Շահանդուխտ թագուհու մահվանից հետո, գրեթե այրերի գործն էր: Թագավորն իրեն մասնակից չէր դարձնում շատ խնդիրների քննարկմանը: Նեղվում էր այն շշուկներից, թե, իբր, Հասանն իրեն դեռ եկվորի նման է պահում: «Քո պապ Սենեքերիմը Աղվանից տնից էր եւ դարձավ Կապանա տան զոհը», – երբեմն հիշեցնում էր Հասանը, եւ Կատան ինչ– որ չարագուշակ բան էր գտնում նրա պահվածքի մեջ: Կատա Սենեքերիմյանը պահանջեց կառքը եւ տխրադալուկ Կապան քաղաքի միակ բանուկ փողոցով դիմեց դեպի Վահանա ուխտ:

Նրան դիմավորեց տագնապած վանահայրը եւ ուղեկցեց սբ Աստվածածին եկեղեցին, որ կառուցել էին թագուհու հորաքույրեր Շահանդուխտ թագուհին ու օրիորդ Կատան: Բազկատարած մոտեցավ Սուրբ սեղանին ու Տիրամոր պատկերի առջեւ արցունքախեղդ աղոթում էր.

– Հայր մեր, որ հերկինս ես… Երկնաճեմ արքա, մեր պաղատանքն ու խոսքը քեզ ենք առաքում քառասունուք վանքերից ու հազար եկեղեցիներից: Քո կամքով ստեղծվեց ու հզորացավ Բաղքիս թագավորությունը: Դու մեր փառքը հասցրիր մինչեւ Չին ու Մաչին, Կիեւյան Ռուսիա, Հոռոմոց երկիր: Աղաչում եմ, մեղմիր քո բարկությունը մեզ վրա: Այն օրհասները, որ թուրքի միջոցով բերեցիր մեզ, բավ են եւ մի տանիր նոր փորձությունների: Գթա՜ մեզ, Քրիստոս աստված, պահիր– պահպանիր Սիսական տան վերջին ապավեն Բաղաբերդը: Դու ես այն անպարտելի դարձրել իր ստեղծման օրվանից, երբ Բաղակ նահապետն ապառաժը մեր նախնյաց համար հանգրվան դարձրեց եւ միայն դու կարող ես մեր հայրենի պատվարը մատնել հեթանոսի ձեռքը…

Ձվարավանքի կողմերից նահանջելով, Մահեւան իշխանն անցավ Տաշտունի լեռնանցքն ու ամրացավ Բեխորոտի ու Վաժունիքի բարձունքներում: Սուրհանդակի միջոցով նա օգնական ուժեր խնդրեց Հասան թագավորից ու մերժում ստացավ: Հեծյալների ազատագունդը ելտկուզյանների հետ ճակատելու էր գնացել Բղենո կողմերը՝ Համտունին զորավիգ: Մեկօրյա նահանջից հետո Սմբատ Վաժունեցին սելջուկյան բանակի դեմ ճակատամարտեց Կավարտի Կշմատուք հանդում: Վիրավորվելով, մարտի դաշտը լքեց Համտուն Բաղացին, եւ դա պարտության նախանշանը եղավ:

Կապանա գետն ի վեր ավերելով գյուղերն ու Վահանավանքը, սելջուկները դյուրավ հասան հին Կապանի ավերակներին: Իրենց հետ առած Տանձափարախի խարազնազգեստ կրոնավորներին, մերձիմահ ծեծելով նրանց՝ ստիպում էին ցույց տալ թաքցրած գանձերն ու անասունների մակաղատեղերը:

Առաջապահները Աչաղու գյուղի տափարակում մետաքսափայլ վրանադրյակ հավաքեցին, եւ շուտով այնտեղ հանգրվանեց Շամսադդին Ելտկուզ աթաբեկը:

Ավարից զամբիկներ մորթեցին եւ կրակին անցկացնելով, առաջապահ զորքը երիվարի միսը հոշում էր ու փառք տալիս ալլահին՝ պարգեւած հաջողության համար: Մահապարտ ղուլերի (ստրուկ) ջոկատներին հրաման տրվեց՝ անվարան դեպի բերդը գնալ, մագլցել ապառաժներն ի վեր, ճանկապարան գցել:

– Քանի՞ դար է այդ խաչանախշ բայրաղը փողփողում կալայի վրա, – նվաստացում ապրելով Բաղաբերդի

Շարունակությունը՝ էջ 60



1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

# Հին Կապանի վերջին աշունը

## Ավանդավեպ, լրագրային տարբերակ

**Սկիզբը՝ էջ 59**

երկնագնա պարիսպներից, հարցրեց աթաբեկը:

– Իմ տիրակա՛լ, շուտով այդ փալասն իր դարերի հետ քո ոտքի տակ կլինի, – զվարճաբանեց պալատական խեղկատակը, – սիսաջանցիներն այնտեղ, ոսկու դեզերի վրա նստած, քո ուղտերի քարավանին են սպասում:

– Քո քաջազարմ որդի Մուհամմադ– Ջահանն ավերել է բարձրի գյուղերն ու մոտեցել բերդին: Գյավուրների Սումբաթ մինբաշու (հազարապետ) հայրենի Վաժունիք գյուղում քարը քարին չի թողել, – շողոմեց հետախուզության միաչքանի սերասկյարը:

Հագարացի թարիխչի պատմաբանը հաճոյացավ աթաբեկին.

– Ալլահի՛ ստվեր, ինչպես հրամանդ է՝ հիմնահատակ ավերում ենք այն գյուղերը, որոնք ավելի շատ կռվողներ են հանել մեր դեմ: Դավքարում արդեն քսանհինգն անց եմ կացրել, խրթին անուններ ունեն՝ Արավար, Շեկք, Բարերվայր, Տագամար, Արուքս, Վարդավանք, Պարքոն, Լերմենի շեն, Բեշ…

Աթաբեկը լսել չէր կամենում: Բերդից ու մոտակա բարձունքներից քարագլորքը շարունակվում էր: Պարսպին մոտեցողների վրա վառվող կուպր ու ձեթ էին թափում: Ժայռաբեկորները դղրդյունով գահավիժում էին՝ մահապարտների դիակները թողնելով քարակարկառների մեջ, հասնում ու զարնվում երբեմնի ծաղկուն քաղաքի լքված շինություններին:

Սարերից քշված տավարն ու ոչխարը սելջուկի ձեռքում էին: Մարդորս ասկյարները դարանակալել էին կապերում ու քարափների վրա:

Գերեզմանախույզներն իրենց սեւ գործն էին անում Վահանավանքում:

❧•❧

Աթաբեկի պահանջով գերիներից մի վարդապետ բերեցին, եւ թարիխչին նրան թելադրեց տիրակալի վերջնագիրը. «Հասան աղա, այս երկիրն ալլահը մեզ է նվիրաբերել: Հրամանս է, որ բացես բերդի դարպասը: Դու Առանի խաչենեցի ես եւ, փեսայանալով Սիսաջանի թագավորին, կնոջդ փոխարեն քեզ թագավոր ես հռչակել: Եթե մեկ օրվա մեջ նվերներով չգաս ինձ մոտ որպես բարեկամ, ուրթերից բերել կտամ քո ժողովրդին ու կմորթոտեմ պարսպի տակ, քո աչքի առջեւ»:

Աչաղվեցի երկու պատանդի հետ սուրհանդակ ասկյարները բարձրացան Կկոց քարի ժայռագլուխը, եւ նետածիգը, թուղթը կապելով նետին, հասցրեց բերդապահներին:

Աչաղուում իրիկնանում էր, երբ պատասխանը տեղ հասավ: Վարդապետն այն կարդաց թարիխչիին: Իմանալով, որ թագուհու կողմից է, պալատականը պապանձվեց: «Վաչկատուն սելջո՛ւկ, մորեխի պարսի պես բռնել ես աշխարհը եւ ահա յոթ տասնամյակ ասպատակում ես իմ հայրենի տունը, գերեզմանները պղծում: Այս երկիրը Նոյի ժամանակներից մերն է, դու երբեք չես կարող տեր լինել: Հեռացիր, մենք չենք կարող անգութ թշնամուն բարեկամ լինել: Սուլթանի մորը քո հարեմում առնելով, քեզ սուլթան ես կարծում: Շատ սուլթաններ են այս ձորում գտել իրենց մահը, հիմա քո ժամն է հասել»:



**Ժայռապատկեր (Կապանի կիրճում), որ ավանդաբար վերագրվում է Սենեքերիմ արքային**

Թագուհու քայլը կատաղության հասցրեց տիրակալին: Ձայրագին հոխորտալով, նա ոտնատակ տվեց թարիխչիին եւ հրամայեց՝ վարդապետին կապկպել ու գլուխը խոթել գյուրզաների մահապարկը:

❧•❧

Աթաբեկը նոր բան մտածեց:

Ձառչիների միջոցով հավաքեց աչաղվեցիներին: Գերեցին նաեւ սարը փախած մի քանիսին: Համազին նշանակեց չորբաչի (քրիստոնյաների ջոկապետ): Սիրաշահեց այդ միամիտ մարդկանց՝ ավարից մեկական էշ կամ ընջուղ խոստանալով: Եվ հրամայեց գերի քահանային՝ Աչաղուի եկեղեցում պատարագ անել, իսկ ինքն իր մարդախոշոշ ձեռքը դրեց հնամաշ Ավետարանին ու զարմացրեց ռամիկներին.

– Թող հաշտություն լինի, թող սելջուկն ու հայն այլեւս արյուն չթափեն:

Համոզեց՝ կանանց ուղեկցությամբ բերդ բարձրանալ եւ ավետել հաշտությունը: Ձառչի– մունետիկները հասան բարձունքներին, եւ Կապանա ձորն արձագանքում էր.

– է հե հե՛յ, աթաբեկը հաշտություն է ուզում, կռիվը վերջացել է՛…

Բայց դավադիր թուրքը ծածուկ զգուշացրեց սերասկյարներին եւ Բեխորոտի կողմից առաջ շարժվող Ջահան Փահլավանին՝ սպառազենների խմբեր ուղարկել Կկվաքարի կողմերը եւ դարանակալ լինել:

❧•❧

Մոլլայի հետ աչաղվեցի բանագնացներն օրվա երկրորդ կեսին գնացին բերդի արեւելակողմ ձորն ի վեր եւ իրիկնադեմին դարձան դեպի Կկվաքար, որ հարեւանում էր բերդին ու նրա հետ միացած էր կաղնեփայտե հսկա կամուրջով:

Կանայք կողովիկներով միրգ էին տանում բերդապահների համար եւ շտապում ժամ առաջ տեղ հասնել: Կկվաքարի աշտարակից բերդապահները ճանաչեցին նրանց:

– Որդյա՜կ, աթաբեկը հեռանում է, էլ կռիվ չկա, – ձայնեց եկվոր ծերուկը:

– Խաբեական խոսք է ասել, հայրի՛կ, մի՛ հավատա, – մռնչաց վիթխարահասակ բերդապահ զինվորը եւ անվրեպ նետահարեց մոլլային: Բանագնացներն իրար անցան: Կանանց վայնասունն արձագանքեց ձորերում: Աչաղվեցի բերդապահների հորդորով բացեցին դարպասը, որ ներս առնեն յուրայիններին: Թաքստոցներից դուրս եկան ասկյարները եւ քարատակերից գահավիժելով ինչպես հեղեղ, սրամարտելով մտան Կկվաքար: Բերդաքաղաքը շանթահար եղավ: Կայազորի կտրիճների մի խումբ, Սմբատ զորապետի ղեկավարությամբ, մայր բերդից խոյացավ դեպի կամուրջը եւ նետերի տարափի տակ ընդունեց մարտը: Մոտակա սարալանջերից ջահերով թշնամական նոր զորախմբեր էին գալիս: Կամուրջն այրվում էր:

– Հասանը փախչո՜ւմ է, – բղավեց մեկը դղյակի դիտաշտարակից:

– Թուլական թագավորին արժանի փեսա է, – այրվող կամրջի վրա հառաչեց Սմբատ Վաժունեցին՝ նետն առնելով կրծքին:

❧•❧

Գիշերային բերդաքաղաքը նման էր շնաճանճի վնասված բույնի: Հասանը հրամայեց թիկնապահներին՝ թագուհուն ու ընտանիքի մյուս անդամներին գաղտնուղիով հասցնել մոտակա Բաղաբերդ գյուղ, որտեղ երիվարներ էին պատրաստել: Կատան հեռանալ չէր կամենում, եւ Հասանը, գրկելով փոքրիկ Խերխանին, ահազդու աղաղակեց.

– Ես սրան որտեղի՞ց մայր գտնեմ:

– Վա՜յ մեզ, վա՛յ մեզ: Հորս թագավորական տունն է ավերվում: Փրկյա մեզ, Քրիստոս աստված, – ողբում եւ առ երկինք պաղատում էր Գրիգոր թագավորի դուստրը:

– Բաղաց իշխաններն են լքում իրենց երկիրը, – թունոտ վրա բերեց Հասանը, – իմ տեղեկություններով սելջուկից փախած Մահեւանը հիմա Շիրակ է հասել, իսկ Համտունը՝ Վայքի Հրաշկաբերդ…

– «Իրենց երկիրը», – ցնցվածի պես մտքում կրկնում էր Կատան: Եվ կանացի հնազանդությամբ նաժիշտի ետեւից գնաց դեպի գաղտնադուռը:

Քարագնաց ու ծերպամուտ ասկյարները մթության մեջ, հրդեհի բոցերի ներքո, արդեն կռվում էին մայր բերդի տարածքում: Գիշերային չարագուշակ ժխորը երբեմն ճեղքում էր թուրքաբարբառ վայնասունը. բաղացի կտրիճները, մթան մեջ որսալով նրանց, պարսպից դուրս՝ անդունդն էին նետում:

Կռվի թեժ պահից ժամ առաջ, առանց յուրայիններին հրաժեշտ տալու, Հասան Խաչենեցին՝ Բաղաց թագավորի խույրը գլխին, պարկեր շալակած երկու ծառայի ուղեկցությամբ դուրս եկավ բերդից: Աքլորականչին Բաղաբերդ գյուղում առավ իր ընտանիքն ու Գեղվածորով ճողոպրեց իր հայրենի տունը՝ Խաչեն:

Սահմի ամսվա Ձոպաբեր օրը (հոկտ. 18) օրհասական եղավ Բաղաբերդի համար: Սելջուկը տեր եղավ գիշերային բերդին: Նա սրածեց մինչեւ հնազանդեցնելն ու գերի հանձնվածներին փակեց եկեղեցու մեջ:

Վրա հասավ դառն ու դժնդակ ժամանակը:

❧•❧

Բաղաբերդի գիշերահամակ բոցերը ճառագում էին մինչեւ անդնդախոր Կապանա գետի պղտոր կոհակները: Արնահոտ գետից լույսի փայլը հասնում էր Քաշունիքի բարձունքներին: Լեռնածերպերում սսկված գեղջուկ մշակներն ամբողջ գիշեր հետեւում էին բերդաքաղաքի հոգեվարքին, ողբում գերյալ հայրենի եզրաց դառնաղետ ճակատագիրը:

Երբ արփին շողաց Արեւիք լեռնապարից, եւ ժամն էր Շառավիղյալ, աթաբեկը շքախմբով ժամանեց Բաղաբերդ: Իջնելով սեւաթույր նժույգից, ուղղեց կարակուլ ոչխարենին, շուրջառի փեշերն առավ ափերի մեջ, անցավ տապալված դարպասներ ու փնտրելով, հարցական նայեց խազինադար– գանձարանապետին:

Տիրակալին ուղեկցեցին բերդի ժայռափոր պահատունը, որի կապարե կնիքն արդեն հանել էին: Կերոնների լույսի ներքո, խազինադարի կարգադրություններով ոսկեղենն ու ակնեղենը դասավորում էին կաշվե պարկերում՝ դավքարում նշումներ անելով:

– Օ՜, արեւափա՛յլ, ակնազարդ այս ոսկե խաչը Տաթեւի խալիֆայինն էր, այս շողափայլ սպասքը Սանաքյարիմ թագավորինն էր, այս…

– Իսկ այս ի՞նչ դավքարներ են դարակներին: Գյավուրի՞ լեզվով են, թե՞ իմ, – թարիխչիին ընդհատեց Ելտկուզը:

– Իրենց լեզվով են, իրենց սուրբ գրքերն են: Ունեն եւ հույն ու ասորի գիտունների գրքերը, Բալազուրիի եւ ուրիշ մուսուլմանների քիթաբներ՝ թարգմանած իրենց լեզվով: Սա Հուդուդ ալ– Ալամն է, որում կա, թե այս Կապանն ունի ընտիր բամբակ, – բացատրություն տվեց թարիխչին եւ ավելացրեց.

– Տասը հազարի հասնող այս կաշեկույտը չի կարող զորացնել աշխարհատենչ սուլթանիդ: Լավ է՝ այն կրակի ճարակ դարձնենք կամ գետը թափել տանք:

– Օ՜, վեհագույնդ բոլոր մուսուլմանների, – մեջտեղ եկավ վայելչատես մի երիտասարդ, որ պալատական բանաստեղծ էր՝ Նիզամի Գյանջեւին, – որքան հաճո են լսելիքիդ իմ քասիդներն ու գազելները, առավել հաճո է ինձ այս անհավատների նարեկը: Քո ծառան այն կարդում է հենց իրենց լեզվով: Աղաչանքս է՝ մի ընդունիր թարիխչիի առաջարկը: Այս ազգը գրքի խենթ է: Ցիր ու ցան արա այս մատենադարանն աշխարհքի երեսին: Ոսկի առած, քո ոտքն են գալու, որ վերստին գնեն կտակարանները:

Աթաբեկին դուր եկավ բանաստեղծի խորհուրդը եւ հրամայեց կուսակալներին՝ գրքերը բարձել ուղտերին, ով ինչքան կամենում է:

Հազարամյա անխորտակելի բերդաքաղաքը նենգաբար նվաճած առաջին թշնամին զննում էր բերդատարածքի շինությունները:



**Կապանի կիրճում**

**1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ**

# «Վահանավանք» հիմնադրամ

**Համարի հովանավորը**

**Սասուն Մանուկյան**
**«Խուստուփ-TV» ՍՊ ընկերության տնօրեն**

Ինչպես արդեն նշվել է թերթի սույն համարի առաջին էջում, «Սյունյաց երկրի»՝ Վահանավանքի 1100-ամյակին նվիրված հատուկ համարի տպագրությունը, ինչպես եւ այդ առիթով Ռոբերտ Կամոյանի հեղինակությամբ գեղանկարի պատրաստումը (զետեղված առաջին էջում), հովանավորել է «Վահանավանք» պատմամշակութային հասարակական կազմակերպությունը, որի նախագահն է Սասուն Մանուկյանը: Ե՛վ Սասուն Մանուկյանին, ե՛ւ հասարակական կազմակերպության խորհրդի բոլոր անդամներին մեր եւ ընթերցողների երախտագիտությունն ենք հայտնում: Սասուն Մանուկյանը «Խուստուփ-TV» ՍՊ ընկերության տնօրենն է, այդ հեռուստալրատվամիջոցի գլխավոր խմբագիրը:

«Սյունյաց երկրի»՝ Վահանավանքի հիմնադրման 1100-ամյակին նվիրված այս համարի հովանավորությունն այդ ընկերության գործերից մեկն է միայն: 2011թ. հիմնադրված ՍՊԸ-ն նաեւ մեծածավալ ծրագրեր ունի՝ կապված Կապանի գլխավոր սրբավայրի՝ Վահանավանքի պատմության ուսումնասիրման եւ մասսայականացման, ինչպես եւ նրա պահպանության կազմակերպման ու Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին գործող դարձնելու ուղղությամբ:

# Բաբկեն Առաքելյան

## ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Վահանավանքի արշավախմբի գլխավոր գիտական խորհրդատու, Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի նախկին տնօրեն

**ՎԱՀԱՆԱՎԱՆՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԻՑ**

Հնագիտության զարգացումը Հայաստանում վերջին տասնամյակներում անխզելիորեն կապված է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ Բաբկեն Նիկոլայի Առաքելյանի անվան հետ: Որպես ԳԱ պատմության ինստիտուտի հնագիտության սեկտորի վարիչ, ապա՝ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի՝ երկար տարիների անփոփոխ տնօրեն, Բաբկեն Առաքելյանն իր կազմակերպչական ընդունակություններով ղեկավարած ինստիտուտը դարձրեց ԳԱԱ առաջավոր գիտական կենտրոններից մեկը, իսկ հնագիտությունը՝ հանրապետության համար կարեւորագույն գիտական ուղղություններից մեկը:

Ծնվել է 1912թ. փետրվարի 1-ին Հոկտեմբերյանի շրջանի Մրգաշատ գյուղում: Տարրական եւ յոթնամյա կրթությունը ստանալով գյուղում եւ էջմիածնում, 1931թ. ավարտում է Երեւանի գյուղատնտեսական տեխնիկումը, որից հետո շուրջ երկու տարի աշխատում Եղեգնաձորի շրջանում՝ ագրոտեխնիկ: 1933թ. ընդունվում է Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, որն ավարտում է 1938-ին: Դեռեւս ուսանողական տարիներին աչքի ընկնելով իր աշխատասիրությամբ եւ ուշիմությամբ, գրավում է ակադեմիկոս Հ.Օրբելու եւ ԽՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ Կ.Տրեւիերի ուշադրությունը: 1938-1941թթ. եղել է Արմֆաքի պատմության ինստիտուտի ասպիրանտ եւ գիտական աշխատանքի է պատրաստվել Երեւանում ու Լենինգրադում՝ Հ.Օրբելու ղեկավարությամբ: 1941թ. պաշտպանում է թեկնածուական դիսերտացիա՝ «Հայկական պատկերաքանդակները IV-VII դարերում» թեմայով: Հայրենական մեծ պատերազմի տարիներին՝ 1941թ. վերջից մինչեւ 1946թ. հոկտեմբերը գտնվել է խորհրդային բանակում ու մասնակցել Հյուսիսային Կովկասի, Բելոռուսիայի, Լեհաստանի ազատագրմանը եւ Բեռլինի գրավմանը: 1946թ. վերադառնում է գիտահետազոտական աշխատանքի ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում: 1947-1949թթ. վարել է ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի գիտական քարտուղարի պաշտոնը, իսկ 1949-1959թթ. ղեկավարել է պատմության ինստիտուտի հնագիտության եւ վիմագրության բաժինը: 1954թ. պաշտպանում է դոկտորական թեզ, 1957թ. նրան շնորհվում է պրոֆեսորի կոչում: 1959թ. մինչեւ 1990թ. վարում է հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի տնօրենի պաշտոնը, որից հետո նույն ինստիտուտի տնօրինության խորհրդատուն էր: Գիտական ակնառու վաստակի համար 1965-ին արժանանում է գիտության վաստակավոր գործչի կոչմանը, 1968-ին ընտրվում է ՀԽՍՀ ԳԱ թղթակից-անդամ, իսկ 1974թ.՝ ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս: Պարգեւատրվել է Կարմիր դրոշի, Հայրենական մեծ պատերազմի II աստիճանի, Կարմիր աստղ, Աշխատանքային կարմիր դրոշի (2) շքանշաններով:

Բ.Առաքելյանի տնօրինության տարիներին ՀԽՍՀ ԳԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտը դառնում է հանրապետության գիտական կարեւոր օջախներից մեկը, որտեղ արդյունավետ գիտահետազոտական աշխատանքներ են տարվում Հայաստանի հնագիտության, հայ ազգագրության, բանահյուսության, մարդաբանության ուղղությամբ: Այս մասին են վկայում ինստիտուտի՝ հանրապետությունում եւ նրա սահմաններից դուրս բեղմնավոր աշխատանք ծավալող բազմաթիվ արշավախմբերը, ինչպես նաեւ հրատարակած աշխատությունները, մանավանդ «Հնագիտական պեղումները Հայաստանում» (17 պրակ), «Հայաստանի հնագիտական հուշարձանները» (11 հատոր), «Դիվան հայ վիմագրության» (6 պրակ), «Հայ ազգագրություն եւ բանահյուսություն» (13 գիրք), «Հայ ժողովրդական հեքիաթներ» (11 հատոր) արդեն լայն ճանաչում ստացած մատենաշարերը: Ուշագրավ է նաեւ Բ.Առաքելյանի կատարած գիտամանկավարժական աշխատանքը Երեւանի պետական համալսարանում եւ այլուր: Հին Հայաստանի մշակույթին նվիրված նրա դասընթացները ծանոթացնում էին մեր ուսանողությանը Հայաստանի հնագիտության նվազ ուսումնասիրված ժամանակաշրջանի կապակցված պատկերին: Այդ դասընթացները եւ առավելապես Բ.Առաքելյանի ղեկավարած արշավախմբերը դարձել էին հնագիտական կադրերի պատրաստման իսկական դարբնոց: Այստեղ հասակ առան բազմաթիվ մասնագետներ, որոնք հաջողությամբ լուծեցին գիտական բարդ ու կարեւոր խնդիրներ:

Բաբկեն Առաքելյանը վախճանվել է 2004թ. օգոստոսի 16-ին:

---

ները, հիանում նրա բացառիկ դիրքով: Արեւելակողմից բերդը տիրական էր Բաղքի վրա, արեւմտակողմից՝ Ձորքի:

Ելտկուզը մոտեցավ կամրջախելի մոտ հավաքվածներին: Սեիդները գլուխ չէին հանում տապալված սրբատաշի վրա պատկերված արեւային ժամացույցից: Թարիխչին, որ ամենագիտունի համբավ ուներ, մեկնաբանեց, որ դա գյավուրների ամենազորավոր խաչքարն է: Տիրակալն այլայլվեց: Թարիխչին, որ նրան մեծարելու առիթը բաց չէր թողնում, սիրահոժար խոնարհվեց տիրակալի գոտկատեղին եւ, դժկամության չհանդիպելով, վարժ շարժումներով նրան միզեցրեց կարծեցյալ խաչքարի վրա:

– Այս կալայի (բերդի) անունը պետք է մոռացությա՛ն տրվի, – հոխորտաց տիրակալը, – գյավուրն այլեւս չպիտի գլուխ բարձրացնի: Թավրիզից դերվիշներ բերեք, որ այստեղ Ղուրան կարդան, սրբագործեն վայրը եւ այն դարձնեն զեյվա:

Ավարառու գումակի սերասկյարին հրամայեց՝ գերիների միջոցով քանդել դղյակը, եկեղեցին, փուռը, աղյուսի թրծարանը, ապականությամբ լցնել ջրամբարները: Եվ ինչ ավարի չի առնվել՝ վիմագրեր, խաչքարեր, գործիքներ ու ամանեղեն, թափել տվեց երեք կողմի անդունդներն ի վար:

Շամսադդին Ելտկուզը ոսկեբեռ ուղտերի քարավանը հանձնեց զորապետ ավագ որդուն եւ նոր ժամանած իշխան Ալակումին ու պատվիրեց՝ անվնաս հասցնել Նախիջեւան:

Նիզամի Գյանջեւին ավարից Նարեկն իրեն վերցրեց:

Երկու օր անց, երբ բերդամերձ գյուղերի ավարը՝ անասուններ, զենք, կահ-կարասի ու սննդամթերք, տնօրինել էին, եւ օրն էր Երեզկան, Աչաղուի հոնուտ դաշտում հավաքվեցին հրաժեշտի խնջույքի: Աշուղները տափաստանաբնակի մուղամներ էին կլկլացնում: Իժերն իրենց վրա առնելով, օձախաղացները հիացք էին պատճառում հաղթողներին: Երբ օձահման խայտաճամուկ Նայա վիշապը դրեց աթաբեկի ուսերին, Նախիջեւանի, Համադանի, Թավրիզի ու Գանձակի տիրակալ Շամսադդին Էլդագյազը փառաբանեց ալլահին, որ իր գահակալման ողջ պատմության մեջ իրեն պարգեւեց ամենաճոխ ավարը՝ Բաղաբերդի հարստությունը:

Արծաթափայլ սինու վրա մատուցեցին մտրուկի խորոված ազդր, տիրակալը գոչեց.

– Մեր Մեծությունը երախտիք ունի այս գյուղի նկատմամբ, այստեղ ենք առաջինը մեր արդար հացը կտրում: Ալլահն այս գյուղի միջոցով մեզ օգնեց: Ի՞նչ է այս գյուղի անունը…

– Աչախլը՛, Աչախլը՛, – իրենց հնչաբերումին հարիր, բղավեցին չավուշները:

– Եվ ինչո՞ւ են մնում անհավատ ու անհաղորդ մեր կրոնին, – բազմանշանակ մռլտաց նա, – թող մեր հավատքին դառնան եւ շեն ու հաստատ մնան:

Ելտկուզը դեսպակից շրջվեց դեպի հարճերը: Սերասկյարներն անցան գործի: Գյուղում իրարանցում սկսվեց: Ասկյարներն ընկուզենու տակ հավաքեցին ողջ մնացած տղամարդկանց ու մանչուկներին, գերիներից ջոկեցին աչաղվեցիներին: Ձուռնա-թմբուկի նվագի տակ թլպատողներն առաջ եկան: Սեիդի հրահանգով տկլորացնում էին մեծին ու փոքրին, պառկեցնում քուրձի վրա: Հեքիմը, ինչ-որ աղոթք ասելով, ասկյարների դիվական քրքիջի ներքո նշտարն ու եղեգնափողը մոտեցնում էր ընկածի ցայլքին: Թլփատվողը, աղիողորմ վայնասուն բարձրացնելով, ցավից գալարվելով դեպի մոտակա եկեղեցու բակն էր վազում: Երբ Համազին մեյդան բերեցին, նա բղավում էր.

– Երկրորդ անգամ մի՞ արեք, ինձ Կապանա ամռանն են թլփատել…

– Օ՜ տայր ինձ զծուխ ծխանի
Եվ զառաւօտն Նաւասարդի,

Ձվազելն եղանց եւ զվարգելն եղջերուաց, – խաչքարին կրթնաց՝ երգում էր Տեր– Սահակը ավերակ Շլորուտի եկեղեցու գավթում: Մարդակեր գայլերի ոհմակից մազապուրծ՝ գավիթ մտան անտուն ու թափառական երեք կին:

– Աղոթիր մեր փրկության համար, Տեր հայր, մարդիկ գազանի բաժին են դառնում, – խանչխանչ էր գալիս ցնցոտիավոր կինը:

– Թուրքը մարդուս գլուխն է կերել, գայլը՝ երեխայիս, խալան երեսանոցս է չանթել, – մղկտում էր հերարձակ գեղջկուհին:

Քահանան անտարբեր էր: Լաչակով կինը նրան վայրի խնձոր մեկնեց: Չվերցրեց:

– Ո՞ւր է ոսկե լանջախաչդ, որ համբուրում էի, դա է՞լ թուրքին մնաց, – հեգնական խոսեց հերարձակը, – ո՞ւր է մեր աստվածը, տուն ու տեղս են ավերել:

– Մեք փող հարուաք եւ թմբկի հարկանէաք.

Որպէս օրէն էր թագաւորաց, – շարակնում էր քահանան՝ հայացքը հառած դիմացի Քաշինձորին, որտեղով դանդաղ առաջ էր գնում սելջուկյան գումակը՝ ավարը բարձած գրաստներին: Հետո փարվեց խաչքարին ու ողբում էր հորդաբուխ արցունքներով.

– Ամենատես Երկնավոր, ինչո՞ւ աշխարհի վերջն իմ երկրով ավետեցիր, սելջուկի յաթաղանով հայի վերջին ոստանը բնավեր արեցիր, Սյունյաց իշխանական տներն արմատից կտրեցիր, բոլորի ապավեն Բաղաբերդը մատնեցիր հեթանոսին: Մենք խղճահարություն եւ կարեկցանքի ենք արժանի, որովհետեւ մեր կորուստն ու ավերածությունն առավել եղան, քան Երուսաղեմինը՝ Նաբուգոդոնոսոր արքայից: Մեզ համակեց վերջին թշվառությունը՝ անդառնալիորեն ու հավիտենապես…

Հավաքած վայրի խնձորն ուտելով, կանայք խղճահար նայում էին քահանային: Իսկ նա, աղոթքը վերջացնելուց հետո, կաշեկազմ Ավետարանը թողեց խաչքարին, դեն նետեց տրեխները եւ արեւախանձ արեգունիով մեկեն դիմեց դեպի ձորը:

– Սա էլ է ցնորվել, – թթու խնձորը չփփացնելով, ասաց լաչակավորը:

Տեր-Սահակն անցավ Ձորքի գետն ու, քարավանին հեռվանց հետեւելով, գնաց նրա ետեւից: Աշնանային ձորի բուրմունքի փոխարեն նրան արբեցրել էր գերության տարվող մատենադարանը, որ ավար դարձած՝ մայր մտնող արեւի հետ անցնում էր Բաղաց սահմանասար լեռնանցքով:

Մատենագետը հասավ լեռնանցք, քարավանը տեսադաշտում էր: Հոգեկան տվայտանքին չդիմանալով, Տեր-Սահակն իր արյունոտված մարմինը թողեց ոսկեդեղին անթառամների լանջին ու հրեշտակի թեւով… հանգաւ ի Քրիստոս:

Ձուռնայի նվագի եւ թմբուկների որոտի տակ Էլդագյազը մտավ Նախիջեւան: Դիմավորեցին գահաժառանգը՝ Մուհամեդ Ջահան Փահլավանը եւ իր մտերիմը՝ Ալակում Օրբելյան իշխանը: Ալակումի բախտի անիվն ակամա էր ամրացված սելջուկյան կառքին: Իր տոհմակիցների ոչնչացման վրիժառությամբ լցված՝ նա անձնուրաց ծառայում էր Ելտկուզյաններին: Վլադիմիր–սուզդալյան ռուսական գունդը, որ ճակատելու էր գալիս սելջուկների դեմ, սուրհանդակի միջոցով Տփխիսում պահելով, Ալակումն արդեն ավանդ էր ներդրել Բաղքի թագավորության կործանման մեջ: Ելտկուզյանները նրան խոստացել էին Ռեյ, Սպահան եւ Ղազվին քաղաքների ամիրայի պաշտոնները եւ տեր եղան իրենց խոսքին:

…Ավարաբեռ ուղտերի քարավանն ուղղվեց դեպի ապարանքի գանձարան, իսկ աթաբեկն իր շքախմբով այցի գնաց դամբարանաթաղ:

– Վարպետաց վարպե՛տ, – դարձավ նա Աճեմ ճարտարապետին, – թե գյավուր մնայիր, երբեք հայտնի չէիր դառնա: Իմ գանձարանը լիքն է, կարող ես սկսել մեր տոհմական դամբարանի կառուցումը:

Աճեմի աչքերը փայլ ստացան եւ արտորնոք աթաբեկի ոտքերն ընկավ:

…Բաղաբերդի ավերումից չորս տարի անց Շամսադդին Ելտկուզը մեռավ ու թաղվեց Աճեմ Նախիջեւանցու կառուցած մեծաշուք դամբարանում: Հետո Նոյյան ոստանում հայտնվեցին Մոմինա խանումի եւ այլ ակնեղեն դամբարաններ:

Իսկ Բաղաբերդն ահա ծխում է ութ դարից ավելի: Կապանա տանն առ այսօր թեւում է թագավորության ժամանակներում ստեղծված ասացվածքը. «Թօրքըն օխծու անա յա»: Երբ մի տեղ ծուխը սովորականից երկար է տեւում, նոր կապանցիներն իրենց նախնիների խոսքն են հիշում.

– Բաղաբերդի ծուխն է:

■

# Ծաղկած քարեր

## Հատված Մուշեղ Գալշոյանի համանուն գրքից

...Ուրեմն, երբ դաշնակ սպարապետը պայթեցրեց իր վերջին հրանոթն ու անցավ Պարսկաստան, Թիֆլիսում Լեոն «Անցյալից» հիշողությունների իր գրքում գրեց. «Զանգեզուրը միացվում է Խորհրդային Հայաստանին: Առանց այն էլ մի լեռնային աղքատ երկիր, նա քարուքանդ էր եղել չորս տարի ի վեր, կտրված լինելով աշխարհից եւ շարունակական կռիվների ասպարեզ դարձած եւ այժմ կարող էր միայն ծանր հոգսեր պատճառել Հայաստանի կառավարությանը...»:

Իսկ Ղափանում Եղիսաբեթ տատը ավանդությունն էր փոխանցում իր Արտաշես թոռանը:

- Քե մատաղ, մեր հայոց հսկաները մեր հայոց գանձը էս մեր հայոց թշնամիներից փախցրալ են, բերա՞լ-թաքցրալ են էս մեր Կապուտջուղի փեշի սրտումը, է՞: Բա հեչ հարցրե՞լ ես, խե՞ա էն սարի անունը Գանձասար: Էնտեղ ա, է՞, հայոց գանձը: Հայոց հսկաներն են պահալ, է՞, քե մատաղ:

Արտաշեսը խելքը գլխին տղամարդ էր, գրագետ, աշխարհի չար ու բարուց տեղյակ ե՛ւ ավանդությունը գիտեր, ե՛ւ Գանձասարի տեղն ու սարերի հարստության, գիտեր, որ Բեխո Մելիքը, է՞, երբ մի քանի գռոշ վերցրել՝ մի սար իր ընդերքով շնորհել է ֆրանսիացիներին, եւ ֆրանսիացիները ձորում՝ Ողջի գետի վրա, մի փոքրիկ ու պինդ էլեկտրակայան են կառուցել, Բեխո Մելիքը մի քանի գռոշ վերցրել, մի սար շնորհել է հույներին, եւ հույները Կավարտասարից վերեւ մի փոքրիկ ու պինդ եկեղեցի են կառուցել, որ թուրք Մուհամմեդը եկել, հայ Կարապետին դուրս է քշել հանքից, դարձել տեր, եւ գիտեր, որ Բեխո Մելիքը չկա եւ սարի կողերը կրծմրծած ֆրանսիացին, հույնը, թուրքը հեռացել են: Եվ օրերը խառն էին, ու Արտաշեսը՝ խառնակ մտքերի մեջ. Եղիսաբեթ տատին ո՛չ ցանկություն ուներ լսելու, ո՛չ ժամանակ:

- Ա՛յ տատ, աշխարհին հայտնի բաներ ես ասում:

Իսկ Եղիսաբեթ տատի ականջները չէին լսում, բայց Արտաշեսի դեմքից հասկացավ, որ թոռն իր խոսքերը կշեռքի չի դնում:

- Քե մատաղ, բան եմ ասում, է՞, հսկաները, որ հայոց գանձը պահալ են, է՞, ասալ են, նեղ օրումը պետք կգա, ասալ են, ով մեզ թորքի ձեռքիցը փրկի, էս գանձը նրան ենք տալու, քե մատաղ:

- Հա, է՞, հա, - Արտաշեսը ձեռք ու գլխով հասկացրել էր ու փեշը պոկել տատի ձեռքից:

Ղափան քաղաքի Չարենցի փողոցի № 1 շենքի բնակիչ Արտաշես Ծատուրյանը հիմա չգիտեմ քանի թոռան պապ է, միտքն ու հիշողությունը տեղը թոշակառու, անցած-գնացածով հետաքրքրվող մարդ: Նստում, Հայաստանի «Բանբեր»ին նամակ է գրում, թե՝ «1881 թվականի օգոստոսին հայ մեծ վիպասան Ռաֆֆին շրջագայել է Զանգեզուրում, որին ուղեկցողներից մեկը եղել է իմ հայրը՝ Ավետիսը: Հայրս ժամանակին հուշեր է գրել Ռաֆֆու մասին, որը ես պահել եմ եւ ուղարկում եմ ձեզ տպագրության», - եւ «Բանբերը» տպագրում է.

«Իսկ Պղնձի հանքերը տեսե՞լ եք եւ ի՞նչ կարծիք ունեք այդ մասին» հարցրեցի ես:

- Հալիձորի տակ՝ գետի ձախ ափին, - շարունակեց վիպասանը (Ռաֆֆին), - տեսա մի քանի արհեստանոցներ, ուր մի քանի հայ եւ հույն պղնձագործներ պատրաստում էին կաթսաներ, սինիներ, կժեր եւ այլ անոթներ: Ջրուցեցի վարպետների հետ, - ասում են՝ լեռների ընդերքը հարուստ է պղնձով ու արճիճով, անգամ արծաթ ու ոսկի կա: Իսկ Բեխից վերադառնալիս ինձ հետ եկող Փարսադանը ծանոթացրեց պղնձահանքին: Գետի ձախ ափին տեսա հալոցքի քուրաներ, որ մխում էին: Գետի աջ ափին մի քանի չարչու խանութներ կան, դարբնոց, ներկատուն, ջրաղաց, ուղտերով պղինձ էին տեղափոխում: Բայց պղինձը մեծ հարստություն է, ժամանակին կզարգանա այդտեղ արդյունաբերությունը: Կապանի տեղ հայ ժողովուրդը կկերտի մի նոր քաղաք: Դեռեւս 17-րդ դարում Իսրայել Օրին զեկուցեց ռուսաց կայսր Պետրոս Մեծին, թե իր հայրենիքը հարուստ է պղնձով, երեւի ի նկատի է ունեցել Ղափանի հանքերը»:

Ձոր ու ձոր ձգվում է Ղափան քաղաքը: Ձորով անցնում է Ողջի գետը, վերից, է՞, Կապուտջուղից է գալիս, Ղափանով անցնում-հասնում է Արաքս: Ե՛վ ձորն է ոլոր-մոլոր, ե՛ւ գետը՝ ծալծլված, ե՛ւ Ղափանը՝ դարձեդարձ: Դե, ում ինչ գործն է, թե նստած տեղը ձոր է, քաղաք է, ուրեմն... Եվ Ղափանը երկար ու կարճ փողոցներ ունի, Ողջիին ուղեկից մի թեւանի պողոտա, Ողջիի ափին՝ մարզադաշտ, հրապարակ ունի, հրապարակում՝ լճակ ու շատրվան, քաղաք է՝ զբոսայգիներ ու արձաններ ունի, իր բազմահարկ շենքերն ու ասֆալտը, գետափնյա քաղաք է. իր կամուրջներն ունի:

Գետափերն ահագին տեղ բետոնապատել են, կապել կամուրջ, անցել՝ մի ափում կառուցել շենք ու փողոց, դեմ առել սարին, իսկ սարը հասարակ սար չէ, այլ պղնձահանք սարի հարեւան: Եվ մի քիչ բարձրացել են ու ետ եկել՝ աջ ափին շինել շենք ու փողոց, հասել մինչեւ սարի պորտը, ետ եկել: Գետափերն ահագին տեղ բետոնապատել են, դրել կամուրջ, անցել են՝ կառուցել, դարձել՝ մյուս ափը կառուցել: Եվ Ողջի գետը ահագի՜ն-ահագին տեղ բետոնապատ ափեր ունի, մեջքին՝ մի տասը կամուրջ: Իսկ Ղափանը դեռ պետք է ձգվի՛, հրի՛, մագլցի՛, մեծանա՛: Բայց Ողջի գետի հոսանքով վար՝ պրծա՜վ՝ չի կարող. Ղափանի երկաթուղային կայանից «Զանգեզուր» գնացքը երբ դառնում է դեպի Երեւան, կայարանից դուրս է գալիս թե չէ, երկաթուղու մի ռելսը մտնում է Ադրբեջանի սահմանը: Հա՛, երկաթուղու այդ հատվածում ռելսերից մեկը Ղափանի սահմանում է, մեկը՝ Զանգիլանի: Եվ Ղափանի երկաթուղային կայարանի պետը շաբաթը մեկ շրջկոմի քարտուղարի մոտ է.

- Ընկե՛ր Մինասյան, ես էլի էն հարցով. կայարանին, ախր, պահեստ է հարկավոր, այսինքն՝ պահեստներ կառուցելու տեղ է հարկավոր, տերիտորիա:

- Իսկ տեղ-տերիտորիա ճարե՞լ ես:

- Ինչքան մտածում եմ, էլի գծի կողքի էն դուրանն է ելքը:

- Սխալ ես եկել, - ժպտում է Ռաֆայել Մինասյանը, - էդ «դուրանի» հարցով դու պիտի գնայիր մեր հարեւան Զանգիլանի շրջանի քարտուղարի մոտ:

- Ախր, ընկե՛ր Մինասյան, - կայարանապետը պատասխան ժպտում է, - ամեն անգամ կատակի եք տալիս, ախր, պահեստի տեղ է հարկավոր, տերիտորիա:

- Չեմ կատակում, ա՛յ տղա, - խիստ կտրում է Մինասյանը, - գնա՛, ասում եմ, էն սարի փեշը քանդի՛ր, կառուցի՛ր պահեստներ: Հասկանալի՞ է: Ուրիշ ինչո՞վ կարող եմ օգնել. բանվորական ո՞ւժ, տե՞խնիկա, սուզանա՞վ, հրթի՞ռ... տամ:

Ուրեմն, Ղափանը Ողջի գետի հոսանքով վար ձգվել չի կարող: Գետի ձախափնյա սարերը բարձրանալ չի կարող, սովորական սարեր չեն: Պղնձի հանքի վարիչ էդիկ Դանիելյանը նստած է սարում կառուցված գրասենյակում եւ Տաշքենդից իր պապի Ղափան աշխարհին տեսության եկած մի ջահելի ռուսերենով բացատրում է.

Մերը 7-10 հանքն է, էն կողմ 6-րդն է: Դե, ինչ ասեմ, հայրենակից, դուրս արի կանգնիր դռանը, նայիր սարերին, հենց՝ հանքերն են:

I

Զահելն, աչքերը լայն բացած, լսում է. երեւում է, որ նա, է՞, Տաշքենդում է որոշել՝ եղած-չեղածին լավ ծանոթանալ, ետ դառնալիս պատմել հայ-հայրենակիցներին: Դանիելյանին դուր է եկել, որ տղան իր խոսքի առջեւ ականջներն այդպես սրել է...

- Հանքերը հանքուղիներ ունեն, որտեղով գնում են հանքի աշխատուղիները: Հանքուղիներում, հայրենակի՛ց, ինչպես Տաշքենդի ձեր շենքերում, լիֆտեր կան: Հանքագործները նստում-իջնում են տարբեր հորիզոններ: Վերջը, հայրենակցիս ասեմ, հանքը տալիս է հանքաքար, հանքաքարը գնում է ֆլոտացիոն ֆաբրիկա, էն սարի տակն է, դուրս գաս բակը, կտեսնես: Ֆաբրիկայում հանքաքարը մշակվում, դառնում է կոնցենտրատ, կոնցենտրատն էլ գնում է Ալավերդի, - ձեռքը դնում է ջահելի ուսին, - բավարարվա՞ծ ես:

Պատին փակցված է հանքաքարի արտադրության դիագրամը: 1925 թվականի ցուցանիշը կպել է հորիզոնական գծին, կուչ եկել, կախել գլուխը, իսկ 69-ի պլան-ցուցանիշը թռել, նստել է մի բարձր պատվանդի, դրոշի պես ծփում է:

- Հանքագործ է հարկավոր, հանքագործ, - ասում է հանքի վարիչը:

- Իսկ որտեղի՞ց եք սպասում:

- Էս մեր գյուղերից, Ադրբեջանի մեզ մոտիկ Զանգիլանի շրջանից, որտեղից ուզում են թող գան, միայն թե գան:

Ինժեներ Նապոլեոն Եսայանը ներս է մտնում եւ խռոված ձեռքը թափ տալիս.

- Գլուխները բան չի մտնում. ոչ մեկին համոզել չեղավ:

Ամառ է, Սյունիքի սովխոզը խոտ պետք է հնձի, եւ 7-10 հանքի ղեկավարությանը կարգադրված է մի տասը օրով մի տասը հանքափոր ուղարկել Սյունիքի սովխոզ:

- Կանչի՛ր այստեղ:

Նախկին կավարտեցին, նախկին կոլտնտեսականը, նախկին հնձվորը՝ հանքափորի իր սաղավարտով ու լապտերիկով, կանգնում է գրասենյակի կենտրոնում եւ լուրջ-լուրջ պատճառաբանում.

- Կարող չեմ հնձել, գնալու եմ խայտառակվեմ: Կոլեկտիվի պատիվն է, բան է...

- Բա Կավարտում տնամերձդ ո՞վ է հնձում:

- Ընկե՛ր Դանիելյան, հիվանդ եմ, կարալ չե՛մ, դու ուզում ես, որ քո կոլեկտիվի պատիվը...

- Բա էդ ո՞նց ես հիվանդ-հիվանդ աշխատում հանքում, ա՛յ մարդ:

- Ի՞նչ անեմ, կոլեկտիվի պատիվն է, բան է... Հետո հերթով գալիս են՝ բոլորը՝ նախկին գյուղացի, բոլորը՝ նախկին հնձվոր, բոլորը՝ առաջավոր հանքագործ, բոլորը լուրջ-լուրջ պատճառաբանում են, հրաժարվում: Հաջողվում է միայն Նիկողայոսին համոզել.

- Ի՞նչ է հարկավոր, ասա՛, էստեղ տասը օրվա աշխատավարձդ պահպանվում է, էնտեղ էլ կերուխումի մեջ ես լինելու:

- Հա, ղրկում ես սանատո՜րիա:

- Բա ինչ, մաքուր օդ, ճաշը տալիս են:

- Ճաշը պետքս չի, թող փողը...

- Ա՛յ տղա, ամոթ է, նրանց տված փողն ի՞նչ պետք է լինի: - Եվ Դանիելյանը հերթ չի տալիս, որ Նիկողայոսը մի քիչ էլ առարկի: - Դե, ապրես, թփթփացնում է ուսին, - կոլեկտիվ ես ներկայացնելու, իմացի՛ր, ներկայացուցիչ ես:

Նիկողայոսին ուղեկցում ենք մինչեւ բակ, եւ նա շոյված գնում է:

- Վա՜յ, - հանգիստ շունչ է քաշում հանքի վարիչը, - էս սարը պայթեցնելն ավելի հանգիստ է, քան մեկին հնձի ուղարկելը:

Իսկ սարը լերկ էր, ուսնկից սարերը լերկ էին ու մռայլ, դեպի քաղաք փռած փեշերը գորշ, ծարծրված. ֆրանսիացիները, հույները, թուրքերը կրծմրծել-ծակծկել են սարերի փեշերը՝ եւ բացվել, երեւում են ջղերը կարմիր, տեղ-տեղ դեղին, կապույտ, պղնձագույն: Անսկիզբ, անուղղություն ու անվերջ կածանները խճճվել են սարերի ճակատներին, իրար կտրող-անցնող էլեկտրալարերը հազար տեղ խաչ են քաշել, եւ մեր ոտքերի տակ ընդերքը պարպվում է՝ գըվ՜վը՜ըը՜... Մեր ոտքերի տակի սարը սար չէ, այլ սարի տանիք: Եվ էդ տանիքը ծածկել էր ձորի քաղաքի մեծության մի քաղաքտուն՝ պղնձի հանքերը խոտորվող ու խաչվող ուղիներով, հարկեհարկ վերելակներով, բացված ու բացվող գաղտնիքներով: Եվ կավարտեցին, ով Սյունիքի սարի ուսին, խոտհարքում, կարող էր «խայտառակվել», ճակատի լապտերիկը փայլեցնելով՝ այդ խորհրդավոր աշխարհից էլի մի գաղտնիք էր հանում արեւերես, որը մինչ այդ ոչ մեկը չէր հորինել եւ այդ օրն էլ մի քիչ մեծացնելու էր իր խորհրդավոր տան կտուրը: Ուրեմն, մեր ոտքերի տակ սար չէր, այլ սարի կեղեւ: Օհո՜, վտանգավոր է:

- Օդը լցվում է հանքը, մեծ ճնշում առաջացնում:

Եվ եթե երբեմն-երբեմն սարի կեղեւը չպայթեցնեն, օդը դուրս չմղեն, մնաց, կճնշի, հարկերն ու խորշերը կխառնի իրար: Մի քա-

Գանձասարի բանալին

№ 30(271) Սյունյաց երկիր 63
15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2012թ.

## 1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

# ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մի օր առաջ սարի հերթական պայթեցումն էր եղել, պայթեցրել էին շատ հաջող: Ղափան քաղաքն ու քաղաքին մոտիկ ու հեռու գյուղերը ձայնը լսել էին եւ, մի քանի օր էր, պայթյունի մասին էին խոսում:

Դե եկ ու էս սարի կեղեւի վրա հիմք փորիր: Ուրեմն, Ղափանը Ողջիի ձախ ափը հրել-բարձրանալ չի՛ կարող:

Իսկ Ղափան քաղաքը պե՛տք է աճի, մեծանա: Չմեծանալ չի՛ կարող: Պղնձի հանքերը օր օրի լայնանում-խորանում են: Պղնձի հանքերի դիրեկտոր Գեորգի Գասպարյանը մտածում է. «Ղափանի պղնձակոլչեդանային հանքավայրի շահագործման հեռանկարների» մասին, նոր հանքագործ ու պղնձագործ է պետք: Պարզվում է, որ Կարմրաքարի նստած տեղը պետքական սար է. եւ Կարմրաքարի տները քանդում են, իսկ կարմրաքարցիները վաղո՜ւց գյուղացի չեն, այլ բանվոր. Ղափանում բնակարանով ապահովել է պետք: Շիկահողցի Անդոն գյուղում չի ուզում ապրել՝ Ղափանը պետք է մեծացնել: Արծվանիկցի Գրիգորը գյուղում չի ուզում ապրել: Սրաշենցի Վոլոդյան չի ուզում, Երվանդը չի ուզում, Գվիդոնը չի ուզում, Հմայակը չի ուզում: Եղվարդի կոլտնտեսության ծխախոտագործուհի Նվարդի հրշեջ ամուսինը չի ուզում, Ռազմիկը չի ուզում, Մնացականը չի ուզում, Հենրիկը չի ուզում... Ղափանը պետք է մեծացնել... էս ձորը, էս Ողջի գետը (որ կարգին գետ էլ չէ, այլ Քաջարանի «պոչ»), էս սարերը որտեղի՞ց մեջ ընկան: Էհե՜յ, էն կողմ գնացեք, թեւերը բացելու համար Ղափանին տեղ է հարկավոր:

Եվ քաղաքը հրում է, մագլցում աջակողմի սարերը, բայց պորտից բարձրանալ չի կարող, սարերը շատ են դիք եւ գետի հունն ի վեր քաղաքը ծալվլվում, ծնկեծալ գնում է դեպի իր պապի հանգստարանը՝ Կապան քաղաքի ավերակները: Հին Կապանի պալատի ավերակը դեռ ահագին հեռու է, եւ Մյուսլուն պալատի շուրջբոլոր՝ պալատի ավերակների վրա, հիմա դեռ լոբի է ցանել, կարտոֆիլ, եգիպտացորեն, դդում, տնակ է պատրաստել, շուն բերել՝ իր բանջարանոցին պահապան: Շրջանի կոլտուրայի բաժնի վարիչ Մուշեղ Համբարձումյանի հետ դիմացի անտառը տակնուվրա ենք արել, դուրս եկել ու էս պուճուր բանջարանոցի պռնկին լռվել ենք. Մյուսլուի շունը թույլ չի տալիս՝ մոտենանք «պալատին»:

- Ա՛յ մարդ, շունդ պահի՛ր, է՜, - Համբարձումյանը ադրբեջաներեն ձայն է տալիս:

Անտառում, երբ քափ ու քրտինքի մեջ կորած բարձրանում էինք դեպի Դավիթ Բեկի բերդը, Համբարձումյանը սայթաքեց, կառչեց ծառից եւ հիշեց.

- Գրոզնիից մինչեւ Բեռլին ոտքով եմ գնացել, է՜, - թափ տվեց իրեն ու շարունակեց մագլցել...

Անտառը խուժել է բերդի կիսավեր պարիսպներից ներս, ծառն արմատ է ձգել բերդի պատին եւ ճաքեցրել: Սալորենի է աճել բերդի կտուրին եւ քաշելով արդեն չես պոկի: Անձրեւին ու արեւին հովիվներն անասունները պատսպարել են բերդում, ուրիշները կրակ են արել, խորոված են պատրաստել, գինի են խմել Դավիթ Բեկի կենացը եւ դատարկ շշերը դարձրել են թիրախ՝ փշրել, հետո՝ տարեթիվ ու օր, իրենց անուններն են մրոտել պատերին, անունները քանդակել են եւ «անմահացած» հեռացել:

- Սեյրա՛ն..., - մակագրություններին ու փորագրությունների թունջուկից ջոկում է Համբարձումյանը, - թաղեմ ձեզ, թաղեմ...

Հիմքը մի քանի տեղ ծակել, ուժանակ են լցրել, պայթեցրել:

-Ես ձեզ պետք է ասեմ, որ ոսկի են որոնում: Հիշում եւ Համբարձումյանին հիշեցնում եմ Ռաֆֆու խոսքը հենց Ղափանի բերդերի մասին. «Ինձ թվաց, թե իրենց քարե լեզվով նրանք ասում էին. - Մենք դարերով պաշտպանեցինք ձեզ թշնամիներից, բայց դուք չեք պահպանում մեզ կործանումից»:

- Պիտի ասեմ, որ երիտասարդները չեն հասկանում: Անտառի խորքում կողք կողքի մի ընկուզենի ու թխկենի արմատներով չանչել են Սբ Աստվածածին եկեղեցու փլատակները: Ամեն ծառ՝ մի արծիվ՝ իրար մեջ կիսել են եկեղեցու փլատակները, մագիլներով կորզել՝ հիմա պիտի առնեն, տանեն երկինք:

Քիչ այն կողմ Վահանավանքի ավերակներն են…

*«Ինչ քիվեր ու քանդակ,*
*Ինչ գմբեթ ու գավիթ...*
*Իմ քարերի վրա*
*Էլ թիվ ու դող չունեմ:*
*Խառնվել են իրար*
*Խոյակներ ու խորան,*
*Կործանումից անգամ*
*Էլ ահ ու դող չունեմ:*
*Լռած զանգ է կյանքս...*
*Ես՝ ավերակ վանքս,*
*Էլ աղոթող չունեմ»:*

Հնագիտության ու ազգագրության գիտաշխատող Գրիգոր Գրիգորյանը քանդել-գտել է վկայագիրը. «Տեր Վահան, նախաշինողս տեղացս» եւ մի տապանաքարի մոտ ծնկած վերծանում է. «ԹՇԾ (1101 թ.) Զ. Գիորգ Պահլավունվո որդվո…»:

- Ես ձեզ պիտի ասեմ, որ իզուր եք չարչարվում:

Ազգագրագետը զարմացած նայում է:

- Կգան քարը կպայթեցնեն, գերեզմանը կքանդեն, գանձ կորոնեն:

Ամառ է: Անտառում հասունացել են գետնաելակը, սալորը, մոշը, կարմրել, հասունանում է հոնը, եւ տաբատներ հագած կանայք, տղամարդիկ՝ հովեկ ու տեղացի, զամբյուղ ու դույլերով ցրվել են անտառում:

- Ես ձեզ պիտի ասեմ, որ բարեխիղճ չեն հավաքում: Թփերն ու ծառերը ջարդում են: Այո՛: Պիտի ասեմ, որ հոնի ծառի ճյուղերը ջարդում, կուտակում են մի տեղ, հետո նստում են էդ ջարդված ճյուղերի գլխին, հոնը հավաքում: - Եվ հիշում է, - մեր հարսն էլ էս տարի փոքր երեխա ունի:

Հա՛, Համբարձումյանի հետ անտառը տակն ու վրա ենք արել եւ լռվել՝ Կապանի ավերակ պալատը օղակած Մյուսլուի բանջարանոցի պռունկին...

- Ա՛յ մարդ, շունդ պահի՛ր, է, - Համբարձումյանը ադրբեջաներեն ձայն է տալիս եւ դառնում ինձ, - պիտի ասեմ, որ սրանց շները կատաղի են լինում, որ վրա քշի, կնստեք:

Մյուսլուն ժպտում, խոնարհվում է, թեւի տակ առնում շան գլուխը եւ աչքի պոչով դժգոհ հետեւում մեր ոտքերին. - «Էս քարերի մեջ ի՞նչ կա, որ եկել ու բոստանս էլ տրորում եք»:

Կործանված Կապանի կործանված պալատը Ողջիի աջ ափին է, կիպկպած գետին: Չէ՛, այդտեղ ոչ մի պալատ էլ չի եղել: Գարնանը հեղեղի հետ գետը էս քարերը բերել, շպրտել է Մյուսլուի բանջարանոցը, վատություն արել մարդուն: Ուզում ես գետն անցիր՝ կանգնիր ձախ ափին՝ ասֆալտապատ ճանապարհին, եւ այնտեղից մի քիչ բարձրից, նայիր՝ Մյուսլուի բանջարանոցը փչացել է:

Իսկ ճանապարհը՝ մինչեւ Քաջարան, ո՛չ ձորից պոկվում-դուրս է գալիս, ո՛չ գետից հեռանում է: Միայն թե մի տեղ գետափից ու ճամփի պռնկից սարերն ահագի՜ն ետ են քաշվել, բացել մի մեծ կիրճ, տեղ արել Մուսալամ գյուղին: - Սալա՜մ, սալա՜մ, - ճամփեզրի ծառից մի մարդ միս է կախել, ժպտում ու գլխի շարժումով ողջունում է, ողջույնի կեսն էլ՝ հարց, - մի՞ս չեք ուզում:

Մի տեղ ձորափ-սարերն ահագին ետ են քաշվել, տեղ բացել Աչախլու գյուղի համար: Ընկույզի ծառերը վերեւից՝ սարի կատարից, իջնում են, հեղեղի պես պոկված իջնում են կիրճը, օղակում գյուղ Աչախլուն, գյուղի գլխին թափ տալիս ընկույզ, իջնում-կտրում են գետը եւ անցնում դիմացի անտառը:

- Չգիտեմ՝ դուք նկատե՞լ եք, բայց ես Ղազախում էլ շատ եմ եղել, եւ, պետք է ասեմ, ադրբեջանցիներն ընկույզ շատ են սիրում:

Մի տեղ սարերն ահագին ետ են քաշվել, տեղ բացել Շհարջի գյուղի համար:

- Պատմական անունը չեմ հիշում, բայց, կարծում եմ, Ստեփանոս Օրբելյանի գրքում կա: Այստեղ հայեր են ապրել:

Եվ մի տեղ գետափից ու ճամփի պռնկից սարերը ահագի՜ն-ահագի՜ն թեքվել-գնացել են, տեղ բացել բոլոր ու որձաքար մի սարի՝ կատարին Բաղաբերդի մնացորդն է, ստորոտում՝ գառ ու ուլ, տնակներ ու վրաններ: Վրանների տերերը, մի տեսակ, դեռ ոտքի վրա են, պիտի նստեն եւ բնակատեղին կնքեն հարմար մի անունով: Մի մարդ բուլկ գառները դեմն արած քշում է, կանգնում, ճամփա է տալիս, խոնարհ ու հարգանքով գլուխ է տալիս, - սալա՜մ, սալա՜մ, - ողջույնի կեսը հարց է, - գառ չե՞ք ուզում:

- Պետք է ասել, որ սա գյուղ չէ, Քաջարանի մեջ է մտնում:

Առաջին անգամ եմ անցնում այդ ճանապարհով. զարմացած նայում եմ առնական լեռներին, ամպ է՝ մառախուղը թավալվում է կատարներին, եւ տոհմիկ գյուղացու իմ երեւակայությամբ ամեն սար դառնում է մի թոնրատուն, մառախուղը՝ երդիկից բարձրացող ծուխ, իսկ ճամփեզրին միս վաճառողը, ով մեզ խոնարհ բարեւ տվեց, - սալա՜մ, սալա՜մ, - թվում է՝ դանակ խաղացող, կապը կտրած մի երեխա, ով հիմա պիտի բարձրանա թոնրատան կտուրը, խուփը դնի պոռթկան ծխով երդիկի վրա: Առաջին անգամ եմ գնում Քաջարան: Նոր պիտի տեսնեմ Գանձասարն ու նրա պղնձամոլիբդենային կոմբինատը, որի մասին, է՜, ամերիկյան «Կլայմաքս» մոլիբդենային ընկերության բաժնետերերը 10-15 տարի է շշուկով ու ահով են խոսում: Եվ զարմացած, մի քիչ էլ տխուր նայում եմ աջ ու ձախ, հայացքս երկնքից իջնում է, լողում մառախուղի հետ, հետո սարերի կողերով սահում է ձորը եւ... Ողջիի ջրերի վրայից փախցնում եմ հայացքս: Մի քանի օր է՝ գետի ափերին թափառում եմ, բայց շիփշիտակ նայել չեմ կարող, որովհետեւ այդ գետում ջուրը մեռել է, եւ ձորը ջուր չի տանում, այլ ջրի դիակ: Հենց այդպե՛ս:

Մի քանի օր առաջ, երբ Ղափան հասա, իրիկուն էր, թուխպ, անձրեւ էր մաղմղում, խարկված օդն ու ասֆալտը հազիվ թրջվել էին, բայց գետը պղտո՜ր-պղտոր էր: Առավոտյան Ղափան քաղաքում արեւ էր, իսկ Ողջին՝ գույնը թռցրած, պղտո՜ր, շատ պղտոր: - Ուրեմն, էս սարերից բարձր, է , վերեւի սարերում, Քաջարանում, տեղատարափ է, - դե, ես էն գլխից դյուրահավատ ու միամիտ եմ:

- Չէ՜, ախպեր ջան, - ղափանցի մի երիտասարդ ժպտում է քթի տակ, - անձրեւի հետ կապ չունի, սա շոգին ու սառնամանիքին էլ էդպես է. սա Քաջարանի պոչն է:

- Պո՞չը, - գլխի չեմ ընկնում:

Հա՛, պոչը: Բանից պարզվում է, որ էդ պոչ ասածը մողեսի պոչի պես ավելորդ մի բան չէ, որ վտանգի պահին թողնում, գնում է իր քարի տակ նորը ծլելու: Էդ պոչը հանքաշխարհի մի կարգին ու խիտ տերմին է, տվյալ դեպքում՝ Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի համար, նշանակում է. - Գանձասարի հանքաքարից արտադրության պրոցեսում քսան տոկոս չկորզված մոլիբդեն, չգիտեմ՝ քանի տոկոս չկորզված պղինձ, բոլորովին չկորզված ցինկ, բոլորովին չկորզված ոսկի (սանիկիս համար մի ոսկյա խաչ լիներ), բոլորովին չկորզված արծաթ, բոլորովին չկորզված ռենիում, բոլորովին չկորզված ալյումին, բոլորովին չկորզված... բոլորովին չկորզված չգիտեմ ինչ ու ինչ... Եվ էդ բոլորը խառնվում են իրար, մի պուտ ջրի պես կոմբինատից դուրս գալիս մտնում խողովակաշար, դառնում պոչ եւ էդ պոչը գալի՜ս, գիշեր-ցերեկ գալիս է (որովհետեւ կոմբինատը գիշեր-ցերեկ է աշխատում) եւ թափվում Ողջի գետը: Այդտեղ գետը մի քանի անգամ թպրտում է թունավորված ձկան պես, մի քանի անգամ բերանը բացում-փակում: Այդտեղից գետը դառնում է մի սատկած ձուկ գնո՜ւմ-ընկնում Արաքս գետը: Արաքսն էլ, թե որ ծովն է թափվում, մոռացել եմ: Չէ՛, Ողջին ո՛չ ոսկի է քշում-տանում, ո՛չ արծաթ, ո՛չ մոլիբդեն, ո՛չ... ո՛չ... ո՛չ էլ ջուր, այլ մի սատկած ձուկ, եւ դրան պոչ անվանելը շատ է:

- Քառասուն-քառասունհինգ տարի է աչքերս ինչե՜ր են տեսել, - ասում է Ղափանի պղնձի կոմբինատի ֆլոտացիոն ֆաբրիկայի դիրեկտոր Մխիթար Գրիգորյանը:

Քառասուն տարի Մխիթար Գրիգորյանի աչքերը տեսել են, որ իրենց կոմբինատից պոչը դուրս է գալիս ու թափվում Ողջի գետը: Եվ Մխիթար Գրիգորյանը հանքաշխարհի մարդ էր ու գիտեր, որ էդ պոչը ոսկեղեն է, այսինքն՝ ոսկե մատանիներ կուլ տված ձկների վտառ է, ու էդ վտառը գնու՜մ, կորչում է Կասպից ծովը: Մխիթար Գրիգորյանը սրտացավ մարդ էր ու ամեն ժողովի գոռում էր՝ պոչամբար է հարկավոր, պոչամբա՜ր: Ու էդ պոչամբարը կառուցվեց... քառասունմեկերորդ տարում:

- Քառասուն տարի պոչը ծովը թափվեց, քառասուն տարի:

Հետո՝ մի օր, Մխիթար Գրիգորյանը տեսավ, որ վերեւից գետի հետ մի ուրիշ պոչ է գալիս, - հա՜, Քաջարանի կոմբինատի պոչն է, - եւ մասնագետի աչքով որոշեց, որ դա իրենց կոմբինատի պոչից ավելի առատ ու հարուստ է: Եվ Գանձասարից ոսկեղեն պոչն իջավ, վարա՜ր-վարար եկավ, հասավ Ղափան, խառնվեց պղնձի կոմբինատի պոչին ու գնաց: Հետո, մի օր, տեսավ, որ Քաջարանի պոչը կտրվեց, մի պուճուր պոչամբար էին կառուցել: Տեսավ՝ գալիս է. պոչամբարը լցվել էր: Տեսավ՝ կտրվեց. մի նոր ու պուճուրիկ պոչամբար էին կառուցել: Տեսավ՝ գալիս է. ամբարիկը լցվել էր: Տեսավ՝ գալիս է... Տեսավ՝ գալիս է...

Եվ վարա՜ր-վարար գալիս ու գնում Կասպից ծով:

Հերն անիծած, Զանգեզուրում, Ղափանում, որ միայն սար ու ձոր է, կիրճ ու սար է, չգտնվե՞ց մի ցամաք ձոր, մի մեծ կիրճ, որ քառասուն տարի պղնձի կոմբինատի պոչը չթափվեր ծով: Որ Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի պոչը, որ մողեսի պոչ չէ, մոլիբդեն է, ոսկի է, պղինձ է, արծաթ է... Գանձասար է՝ չթափվի, մինչեւ... մինչեւ որ Երեւանի, Մոսկվայի, Լենինգրադի, Սվերդլովսկի... գիտահետազոտական ինստիտուտների գիտության թեկնածուներն ու պրոֆեսորները կհորինեն-կնախագծեն-կիրագործեն «Հանքի մշակման կոմբինացված տեխնոլոգիա»: Կամ թե՝ Ղափանի պղնձի հանքերի դիրեկտոր Գեորգի Գասպարյանն ամենաճիշտն է.

- Ավելի լավ է կուտակել պոչերը, թողնել գալիք սերունդերին, նրանք մեզանից լավ կմշակեն:

Եվ ամենատեղին՝ Մխիթար Գրիգորյանի կատակն է.

- Նրանք էլ մարդ են, չէ՞: ■

## Պրոֆեսոր Անդրանիկ Ճաղարյանի վերականգնած դիմաքանդակները

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ



ՀԱՍԱՆ ԻՇԽԱՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ԳՐԻԳՈՐ Ա ԹԱԳԱՎՈՐ

ԴԻՆԱՐ ԹԱԳՈՒՀԻ



**1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ**

**ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

# Հայրենապատում

## Հատված Սերո Խանզադյանի համանուն գրքից



Կապան-Ղափան քաղաքը (նաեւ մայրաքաղաք) միջնադարում իր անունը տվել է պատմական Սյունիքի մեծ մասին: Պղնձի առեւտուր անելով Եվրոպայի հետ, ղափանցի վաճառականները գաղութներ են ստեղծել Իտալիայում, Ֆրանսիայում եւ այլ տեղեր: Տասնհինգերորդ դարի սկզբներից Վենետիկում «Ղափանցիների» փողոց կար: Առաքել Դավրիժեցին հիշում է «աշխարհն Ղափանա», սա առանձին դնելով «Գավառն Սիսակա»՝ Սիսիանից: Տասնյոթերորդ դարում Սյունիքի ստորին ու հյուսիսային լեռնաշխարհը կոչվում էր Ղափան կամ Ղափանստան աշխարհ: Ցիպնա վանքում Հովհաննես գրիչը գրել է. «Հայսմ ամի՝ (1457-ին) Ջղանշայ ղան էառ (առավ) Բաղդատ եւ Կ (վաթսուն) պարնություն (իշխանություն) կալան (գրավեցին), ԿՌ (60.000) ոգի ի սուր քաշեցին եւ ԼՌ (30.000) ջորաբեռն մալ (ապրանք) ի Ղափանն տարան»: Գրավելով Ղափանը, պարսից Ջահնշահը կողոպտել տարել է երեսուն հազար ջորաբեռ պղինձ: Տասը տարի հետո՝ 1467-ին մի այլ բռնակալ է նվաճում Ղափանը: Մովսես Արծկեցին իր չափածո հիշատակարանում գրում է.

Հասան Ալին, այն չար գազանն,
Որ ի Մակու էր ի զնդան,
Ելեալ գնաց դեպի Ղափան
Եվ կոտորեց...

Գրիչ Խաչատուրը 1620 թվականին ընդօրինակած մի ձեռագրի հիշատակարանում գրում է. «Ղափան աշխարհի Տանձեւար գյող»: Գրիչ Ղազարը 1631-ին՝ «Շինհեր գյուղ Ղափանա»: Ինչպես վկայում է գրիչ Եսայի Բարկուշատցին, Մեղրին (նաեւ Տաշտոն-Տաշտուն) գյուղը մտնում է Ղափան երկրի մեջ: Այժմ Ղափան քաղաքը քայլ առ քայլ նվաճում է դժվարին լեռները:

1958, հոկտեմբեր: - Ղափանի շրջկոոպի նախագահ Աշոտ Արզումանյանն ինձ ցույց է տալիս գետի ձախ ափին կառուցվող քաղաքի նոր թաղամասը:

- Սա Հունան Ավետիսյանի անվան թաղամասն է: Աշոտ Արզումանյանին ճանաչում եմ քառասունմեկ թվականից, երբ նա մեր վաշտի քաղղեկն էր: Նա բարալիկ, համակրելի երիտասարդ էր: Ինձ թվում էր, թե հենց նրա նման է եղել Սյունյաց (Կապանի) Սենեքերիմ թագավորը: Վարդան Բարձրաբերդցի պատմագիրը ասում է, թե 1094 թվին Գանձակը զավթած Փատլուն (նաեւ Փալտուն) ամիրան «Մեծ Սյունիեց»՝ ասել է Բաղաց եւ Կապանի Սենեքերիմ թագավորին «խաբեությամբ հանելով բերդիցն սպանեց»: Մեր այս դժբախտ թագավորը թաղված է Ղափան քաղաքից մի փոքր վերեւ, անտառի մեջ եղած հռչակավոր Վահանավանքում:

Ստ.Օրբելյանն այսպես է պատմում: Իսմայելցիք (սելջուկները) եկան «Ընդ գեղեցիկ եւ ամուր թագավորությունս Բաղաց, որ խոչ մեծ համարեին ինքեանց (իրենց համար): Եվ լեալ ամիրայն Պարտավա եւ Ռանա (Առան) եւ Գանձակա, բազում զորոք գա ի պատերազմ ընդ Սենեքերիմա... Եվ տեսավ (ամիրան) զի անհնարին է ի մարդկանե առնուլ բերդն, ուղարկե Գրիգոր իշխանն Անեցի... առ Սենեքերիմ արքայն: Գրիգոր մտեալ առ Սենեքերիմն եւ մեծամեծ երդմամբ հավանացուցանե նա առ ամիրայն, որք եւ եկին միասին (Սենեքերիմն ու Գրիգորը): Եվ ստեաց ուխտին (ամիրան) սպանե թագավորն Սենեքերիմ»:

Բայց ահա Ղափանի հայերը չեն խաբվել 1918 թվականի ամռանը, երբ այս սելջուկ թուրքի մի այլ հետնորդ, թուրք Քյազիմ Փաշան 824 տարի անց, Բաքվի կոմունան տապալելուց հետո, եկավ հասավ այս լեռները: Թուրքը փորձեց խաբեությամբ իր մոտ հրավիրել ինքնապաշտպանական ջոկատների ղեկավարներ Շահսուվարյանին ու Անուշյանին եւ դատաստան տեսնել նրանց հետ: Այս երկու խիզախ խմբապետները հասկացան թուրք փաշայի միտքը եւ նրան պատասխանեցին զորքով ու դիմադրությամբ: Եղվարդի ու Ագարակի ճակատամարտում Ղափանի հայերը ջախջախեցին թուրքական զորքը, որ «տասնապատիկ շատ էր ու լավ զինված», որին միացել էր նաեւ Բարկուշատի հովտի տեղացի մուսավաթական խառնամբոխը: Ափսո՜ս, այս պատերազմի հաղթողներից շատ քչերի անուններն են մնացել այս ձորերում, այն էլ առանց ավանդվելու: Որպեսզի նրանց անունները անհետ չկորչեն, ես պրպտում եմ ժամանակակիցների հիշողությունները: Այստեղ հազիվհազ հիշում են ինքնապաշտպանության հետախուզության պետ գորիսեցի Սաքո-Յապոնին, ապա մի քաջ կռվող ու հետախույզ Գասպար Գասպարյանի անունը, որ Նախիջեւանի Ջահուկ գյուղացի էր: Էլի մի քանի անուն, եւ հիշողությունը թուլանում է...

Սելջուկները, Չորթման ամիրայի գլխավորությամբ, նորից երեւացին Կապանի պարիսպների տակ: Նորից լսենք Օրբելյան պատմիչին.

«ՇԾԲ թուին (1103) օր մի, հանկարծակի, մինչ կային անհոգութեան քաղաքացիքն, մատնեաց տեր (աստված) անառիկն ի մարդկանե Կապան քաղաք, եւ անիծեալն Չորթման վասն քինուն յուր եղակարծում ժամու (խոր գիշեր) հեղավ ի վերա քաղաքին: Նախ բազում հետեւակազոր մարդիկ սորամուտք (անառիկ տեղեր մտնող) եւ քարագնացք ելին ի գլուխ ապառաժուտ լերինն եւ իջեն ընդ Մեծավարի հեղեղատն (սա Խուստուպի հեղեղատն է) ի քաղաքն, զի այն վայր ոչ էր պարսպափակ, վասն անհնարին գոլո մոտից մարդկան (մարդ մտնելու համար) եւ սկսան կոտորել ի Ջիտաթաղոյն: Բացին դուռն քաղաքին, որ է Խնձորո գլուխ հայեր (նայեր) եւ մտին զորքն ամենայն եւ հարեան սատակեցին ամենեսեան առհասարակ, բայց ի բերդն ոչ ինչ կարեցին ձեռնարկել, այլ գնացին անդրեն ի տեղի յուրեանց:

Ահա այս եղեւ սկիզբն ավերման աշխարհին (Սյունիքի) եւ օր ըստ օրեն սկսավ նուազել եւ պակասիլ իշխանությունն այն, որ ուներ ընդ ձեռամբ բերդս 43 եւ անուանիքն ի նոցանե 12 եւ վանորայս 48 եւ գյողս 1400 եւ մայրաղաքացն Կապան»:

Այսպես է եղել մեր հին մայրաքաղաքներից մեկի ճակատագիրը:

1136 թվականին Ատրպատականի իշխանությունը զավթեց նախկինում ստրուկ Շամսադդին Ելտկուզը եւ գրավելով Կապանը, ոչնչացրեց Կապանի թագավորությունը, որտեղ վառեց Տաթեւի 10 հազար ձեռագիր: Այդ օրից Կապան քաղաքը մնացել է ավերակ...

Այժմ իմ մեջ մի վեհ զգացմունք է աճում-ուռճանում՝ Կապան-Ղափանն ապրում է իր հազարամյա փառքի նշխարներով ու նոր էությամբ:

■

# Զանգեզուրի հայերը

## Հատված Ստեփան Լիսիցյանի համանուն մենագրությունից

Բաղքի պաշտպանական սիստեմի օրգանական մասն էր կազմում եւ Վահանավանքը, որը ծառայում էր որպես տեղական թագավորների եւ իշխանազուների թաղման վայր: Վանքը հիմնված է 911թ. Ջագիկ իշխանի որդի՝ Վահանի ձեռքով, որի կառուցած «յոյժ գեղեցիկ յօրինուածովք, գմբէթայարկ եւ եռախորան, հաստահեղոյս ե տաշածոյ վիմօք» եկեղեցին ոգեւորությամբ նկարագրում է Սիսական նահանգի պատմագիրը: Մեծամեծ կալվածքներով ապահովված այս վանքը, ուր հենց սկզբից հավաքվել էին «եղբարք սրբակրօն, ավելի քան q100», այնուհետեւ հատուկ հոգատարության առարկա դարձավ Կապանի եւ Բաղաբերդի տերերի կողմից: Այստեղ վանահայր նստեց հիմնադրի՝ Ջիվանշիր իշխանի որդի՝ Վահանը, որը հետո դարձավ Տաթեւի եպիսկոպոս եւ մի կարճ ժամանակամիջոց՝ Հայոց կաթողիկոս: Սա էլ նոր շենքերով փայլեցրեց մենաստանը. «...յետ բազում ժամանակաց յաւուրս Գրիգորի՝ թագաւորի Բաղաց, ի Շահանդխտոյ թագուհւոյն եւ ի Կայտայէ եւ ի Սենիքերիմայ թագաւորէ բազում եւ գեղեցիկ շինուածովք առավել գեղեցկացուցին զվանսն Վահանու»: Այստեղ «հանգուցեալ կան ի շիրմի բազում թագաւորք եւ թագուհիք Աղվանից եւ Բաղաց, եւ բազում իշխանք փառաւորք Սիսական աշխարհիս»:

Վանքի ավերակները պահպանվել են Հալիձորի բերդից մեկուկես-երկու կիլոմետր դեպի արեւմուտք, դեռ Կապան քաղաքին չհասած, Ողջի գետի նույն աջ ափին, մի խիտ անտառի մեջ: Մի կածան այստեղ բաժանվում է դեպի հարավ գլխավոր ճանապարհից այն կետում, որն այժմ կոչվում է Չոր կամուրջ, հնում՝ Ղուրու քոպրի, երեւի հին կամրջի վայրում, որն այժմ փոխարինված է փայտե ձողապատ կամրջով: Կառուցումների այժմյան վիճակը պարզ գաղափար է տալիս վաղեմի պլանի եւ ճարտարապետական մանրամասնությունների մասին: Ամբողջ կոմպլեքսը տեղավորված է մի փոքրիկ հարթ հրապարակի վրա, որը երկու կողմից թեքված է դեպի ոչ խոր ձորակները, իսկ ետեւից, որոշ հեռավորության վրա, վերջանում է սեպ բարձրացող ժայռերի ստորոտին:

Այդ վանքն իր ապահովության համար հույսը դրած է եղել ոչ այդ քարաժայռերի դժվարամատչելիության, ոչ էլ հարեւան ձորերի համեմատաբար փոքր խորության վրա: Նա չի շրջապատել իր բազմանդամ միաբանությունն եւ կուտակած եկեղեցական սպասներն եւ այլ հարստությունները հաստահիմն պարիսպներով՝ ավերակների մեջ պարիսպների շարքերը չեն նշմարվում: Նա վստահացել էր ձորի աշխարհիկ տերերի կառուցած ամրությունների սիստեմին, նրա պաշտպանությունն այդ կողմի իշխանական տան տոհմական պատվի գործ էր:

Այդ վստահությունը չունեին Սիսական նահանգի այլ խոշոր սրբավայրերը, որոնք այդ խառը ժամանակներում պետք է իրենք մտածեին իրենց ինքնապաշտպանության մասին, եւ ոչ միայն կրոնական առանձնարաններ էին, այլ վեր էին ածված ռազմական պաշտպանական կետերի, որոնց պարիսպների ետեւ կարող էին վտանգի ժամանակ ապաստան գտնել ոչ միայն միաբանությունը եւ նրա տնտեսության հետ կապված մարդիկ, այլեւ մերձակա գյուղերի բնակչությունը: Այդպիսի ամուր պարիսպներով իրեն պատել է օրինակ՝ նույն Ողջի գետի ավազանում, Բեխ գյուղից արեւելք, անտառների բարձր գոտում ծվարած Անապատը, որը տեղացիների լեզվով կոչվում է Արիստակէս: Դրա բարդ կառուցվածքների խումբը, որտեղ նկատվում է Վահանավանքի ճարտարապետության ազդեցությունը, օղակված է հաստ պարիսպներով: Ներս մտնելու համար կար միայն մի դարպաս, այժմ իր փեղկերից վաղուց զրկված մի լայն բացվածք:

■

1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# Ռաֆֆին Զանգեզուրում

Հատված Արտաշես ՕՀատուրյանի հուշերից

– Ռաֆֆին եղվարդից Բեխ ճանապարհվելուց հետո, – շարունակեց հայրս, – մի շաբաթ անց լսեցի, որ վերադարձել է Արծվանիկ: Դա 1881թ. օգոստոս ամսին էր: Նստեցի ձին ու աճապարեցի Արծվանիկ: Այնպիսի արագությամբ էի ձին քշում, որ խեղճ անասունը քափուքրտինքի մեջ կորել էր: Ամբողջ ճանապարհին մտածում էի, թե որքան ձգողական ուժ կար այդ մարդու հոգում, որ այդպես հրապուրել էր ինձ եւ համոզվեցի, որ այդ զորությունը վիպասանի հայրենասիրական հանճարն է, նրա մեծ հմայքը: Ճանապարհվելիս նա ինձ ասել էր, որ իր որոնումների նպատակը Դավիթ Բեկի բերդն է ու նրա շուրջ պտտող ավանդությունները: Եվ ես շտապում էի իմանալու, թե ինչ արդյունքի հասավ վիպասանն ու լսել նրա տպավորությունների մասին:

Տեղ հասնելուն պես իջա մեր բարեկամ Մակունց Միրզայի տանը, ձին կապեցի գոմում ու գնացի տեր Մեսրոպի մոտ:

Ուխտավորի ջերմեռանդությամբ մտա ներս: Ռաֆֆին քահանայի հետ սեղանի շուրջը նստած թեյ էր խմում: Մոտեցա ու ողջունեցի: Ռաֆֆին ժպտաց ու ձեռքս սեղմելով ասաց.

– Ուրախ եմ քեզ նորից տեսնելու, նստիր:

Տեղավորվեցի դիմացի բազմոցին:

– Անհամբեր սպասում էի ձեր վերադարձին, լսելու ձեր տպավորությունները, – սկսեցի ես:

– Իմ տեսածն ու լսածը պատմելով չի վերջանա, կասեմ համառոտը. ինչպես գիտեք, ձեր գյուղից գնացի Բեխ, այնտեղից՝ Հալիձոր, Վահանավանք, Բաղաբերդ, Ջեյվա մինչեւ Քաջարանց: Վերադարձիս այցելեցի Վաչագան, Գուտկում եւ Ճակատեն գյուղերը: Ամեն տեղ էլ ջերմ ընդունելության հանդիպեցի: Ձեր ժողովուրդը շատ հյուրասեր է: Գլխավորը, որ իսկական հայ մարդիկ են, չեն մոռացել առաքինի նախնիների թողած ավանդությունները, պահպանել են սյունեցու ազատասեր ոգին: Տեսա Ղափանի յոթն ահռելի բերդերը, որոնք արքուն պահապանների նման իրենց վաղեմի վեհությամբ ասես թե հսկում են շրջակայքի վրա: Իսկ Կապանը դրանց անմատչելի կողպեքն է: Բնության այդ հրաշակերտ ամրությունները պարսպաձեւ վեր են սլանում դեպի երկինք: Լեռների կատարներին աճել է անտառը, ասես քարից է ծլել: Ժայռերի կրծքին արծիվների հետ բույն են դրել եւ մարդիկ, որոնք գառների պես բարի են խաղաղ մարդկանց նկատմամբ եւ վագրի պես չար՝ դեպի թշնամին: Բաղաց հզոր բերդի տասներկու աշտարակները դեռ կանգուն են, պարիսպները՝ խարխլված. Կատեի եկեղեցին՝ կիսավեր: Ինձ թվաց, թե իրենց քարե լեզվով նրանք ասում էին. «Մենք դարերով պաշտպանեցինք ձեզ թշնամիներից, բայց դուք չեք պահպանում մեզ կործանումից»: Բաղաբերդի այդ պարիսպները յոթը դար իրենց գրկի մեջ պահպանել են Հայաստանի հոգեւոր մշակույթի տասը հազար ձեռագիր մատյանները: Սյունյաց Անդովկ իշխանը IV դարում այդ պարիսպների տակ ջախջախել է պարսից Շապուհ արքայի զորությունը: Այդ մեծ գրադարանը ոչնչացվել է XI դարում սելջուկների ավերիչ ձեռքով. նրա անունը պահպանվել է Բերդի դիմացի սարալանջի մի ավերակ բնակավայրում, որը կոչվում է Գրաբաղ:

Ես, ներողություն խնդրելով, ընդհատեցի վիպասանի զրույցը, բացատրելով, թե Գրաբաղ անունով գյուղ կա այժմ եւ հարցրի, թե ինչ է նշանակում խոյակերպ քարե արձանը, ավելացնելով, որ նման արձաններ տեսել եմ Քիրս, Աջիբաջ, Փխուրուտ եւ Ավսարլու գյուղերի հին գերեզմանոցներում, եկեղեցիների մոտ:

Ռաֆֆին բացատրեց, թե Սյունիքում շատ կան այդ արձաններից եւ դա զինվորական խորհրդանիշ է. խոյ նշանակում է ռազմիկ, ճակատ առ ճակատ կռվող, հետեւապես դրանք պատերազմում ընկած հերոսների հուշարձաններ են:

– Հետո, այդ լավ հիշեցրիք, – շարունակեց Ռաֆֆին, – ես շատ փնտրեցի Դավիթ Բեկի գերեզմանը, բայց ցավոք սրտի, ինձ չհաջողվեց այդ սրբազան դամբարանը տեսնել: Հալիձորի բերդի դարբասի առաջ միտքս գրավեց մի խոշոր դամբարանաքար, սիրտս բաբախեց հուզմունքից, բայց երբ վերծանեցի արձանագրությունը, տեսա, որ կալերցի Մահտեսի Հայրապետի գերեզմանն է, վախճանված 1651 թվականին: Գտա եւ Մելիք–Փարսադանյանի կողակցի՝ Ռեհանի դամբարանը, վախճանված 1741 թվականին: Շատ հետախուզեցի բերդի եկեղեցու ներսն ու գավիթը, նույնպես Հալիձոր գյուղի հին եկեղեցու շուրջը, դարձյալ ապարդյուն: Հետո Վահանավանքում շատ ման եկա, տեսա սյունյաց իշխանների, հոգեւոր հայրերի շիրիմները, – բայց փնտրածս չկա ու չկա: Մտածեցի, թե այստեղ մի առեղծված կա. այդպիսի կարծիք հայտնեցին եւ Բեխի ծերունիները, թե տապանաքարը թաքցված է կամ շրջված հակառակ երեսի վրա՝ գրերը թաքցնելու նպատակով: Ո՞վ էր շահագրգռված այդ բանն անելու. իմ կարծիքով կամ հարազատներն են թաքցրել Դավիթ Բեկի աճյունը՝ թշնամիների պղծումից փրկելու համար, կամ թշնամիները՝ նրա հիշատակը ջնջելու համար, որի հուշարձանը, որպես ազատամարտի դրոշ, կարող էր միշտ խանդավառել սյունեցիների ըմբոստ ոգին:

Առանց մարգարեության, համոզված եմ, որ մեզանից հետո էլ մեր հայրենասեր սերունդը կհայտնագործե այդ մեծ սրբությունը: Ես տեսա Թորոս իշխանի գերեզմանը Եղվարդում, Մխիթար սպարապետինը՝ Խնձորեսկի բերդում: Մելիք-Փարսադանի աճյունը մնաց Ագուլիսի Թովմա Առաքյալի վանքում: Տեր Ավետիսը գնաց Երուսաղեմ մեղքերի թողության համար ապաշխարելու եւ չվերադարձավ: Իսկ Դավիթ Բեկի եւ մյուս հերոսների գերեզմանները այդպես էլ մնացին անհայտ:

– Իսկ դուք ոչինչ չասացի՞ք պատմական Կապան քաղաքի ավերակների մասին, – հետաքրքրվեց Մեսրոպ քահանան:

– Ի՞նչ է մնացել Կապան քաղաքից, անունն էլ չեն հիշում: Ինձ ուղեկցող բեխցի Հարությունն ասում էր, թե այդ վայրը կոչվում է «Տանձին լենջ», երեւի դա առաջացել է մի ժամանակ եղած Տանձափարախ վանքի անունից: Այս կողմից գնալիս տեսանելի են ձորի գլխին երկու փլված աշտարակների քարակույտերը եւ արեւմտյան կողմից բարձունքի վրա մի փլված շենքի հիմնապատկերը. դա երեւի եկեղեցի է եղել: Իսկ հարթության վրա եւ անտառի մեջ կան ապարի զանգվածներ, որ փլատակներ են հիշեցնում: Մի քանի տեղ էլ հանդիպեցի հողի մեջ կիսով չափ թաղված խաչքարերի, եւ ուրիշ ոչինչ: Առանց պեղումների ավելին հնարավոր չէ հայտնաբերել, վայրը շատ գեղատեսիլ է:

– Իսկ պղնձի հանքերը տեսե՞լ եք եւ ինչ կարծիք ունեք այդ մասին, – հարցրեցի ես:

– Հալիձորի տակ, գետի ձախ ափին, – շարունակեց վիպասանը, – տեսա մի քանի արհեստանոցներ, ուր մի քանի հայ եւ հույն պղնձագործներ պատրաստում էին կաթսաներ, սինիներ, կժեր եւ այլ անոթներ: Զրուցեցի վարպետների հետ, ասում են լեռների ընդերքն այնտեղ հարուստ է պղնձով ու արճիճով, անգամ արծաթ ու ոսկի կա: Իսկ Բեխից վերադառնալիս ինձ հետ եկող Փարսադանը ծանոթացրեց պղնձահանքերին: Գետի ձախ ափին տեսա հալոցքի քուրաներ, որ մխում էին: Գետի աջ ափին մի քանի չարչու խանութներ կան, դարբնոց, ներկարան, ջրաղաց, ուղտերով պղինձ էին տեղափոխում: Բայց պղինձը մեծ հարստություն է, ժամանակավոր կզարգանա այդտեղ արդյունաբերությունը: Կապանի տեղ հայ ժողովուրդը կկերտե մի նոր քաղաք: Դեռեւս XVII դարում Իսրայել Օրին զեկուցել էր ռուսաց կայսր Պետրոս Մեծին, թե իր հայրենիքը հարուստ է պղնձով, երեւի ի նկատի էր ունեցել Ղափանի հանքերը:

Նախաճաշը վերջանալուց հետո սենյակը լցվեց մարդկանցով: Քահանան ծանոթացրեց եկողներին: Առաջինը բռնակոթցի Հայրապետ բեկն էր, որ բնակվում էր Սեւքարում եւ գավառային հաշտարար դատարանի ատենադպիրն էր (դատարանի ատյանը Արծվանիկում էր գտնվում, որպես գավառի կենտրոն), հետո ըրկենանցի աշուղ Առաքելն էր, չափնեցի Տերանց Գասպարը, Թունին, Աբելանց Վանեսը, սեւքարեցի Օհանը, զեյվացի Ասրին, Արծվանիկի խոջաները՝ Առաքելը, Մանասը, Արզումանը եւ ուրիշներ: Քահանայի տունը դարձել էր ուխտատեղի: Նրանք ողջույն տալով, գլխարկները հանած, բազմեցին պատերի ուղղությամբ դրված թախտերին ու հարգալից լռությամբ հայացքները բեւեռեցին վիպասանին:

Ողջույններն առնելուց հետո վիպասանը դիմեց նրանց.

– Ինձ համար շատ հաճելի են ձեր զրույցները, ձեր հայրերից ու պապերից լսած անցքերի, ավանդությունների ու զրույցների մասին... Ես լսում եմ ձեզ:

Առաջինը խոսք առավ չափնեցի Գասպարը,

– Ես քահանայի որդի եմ. հորիցս լսել եմ, որ մեր գյուղը Հին Չափնին էր, Կարմրաքարում: Գյուղի տեղը շատ լավ էր, բայց անօրեն պարսիկները հափշտակում էին գյուղի ունեցվածքը, մարդկանց գերեվարում: Այդ պատճառով մեր պապերը տեղափոխվեցին եւ հիմնադրեցին Նոր Չափնին՝ Արծվանիկին ավելի մոտիկ լինելու համար: Այդ նույն պատճառով էլ սեւքարեցիք են տեղափոխվել Եղեգավանքից, որ այժմ կոչվում է Շաբադին: Այսպիսով չորս գյուղ, մեջք մեջքի տված պաշտպանվում էին թշնամիներից:

Գասպարի զրույցն ընդհատեց Թումանը՝ բացատրելով.

– Բայց Նոր Չափնում էլ բարի օրի չենք արժանացել: Ռուսի տիրապետությունից հետո սուլթանի անունով թուրք բեկերը մեզ հանգստություն չեն տալիս, զավթել են Կարմրաքարի մեր լավ հողերը:

Վանեսն ավելացրեց, թե սկզբում Կարմրաքարի հողերի համար մենք հարկ էինք վճարում պետությանը, հողը պետական էր:

– Իսկ այդ հարկաթերթերից ձեզ մոտ կա՞ն այժմ, – հարցրեց Ռաֆֆին:

Թումանը արխալուղի կարկատանների միջից հանեց մի հնամաշ դեղնավուն թուղթ ու մեկնեց վիպասանին, – թղթի մի անկյունում երեւում էր ճրագի մրով դրոշմված արծվանիշ կնիքը:

Ռաֆֆին առավ թուղթը, կարդաց եւ բացատրեց.

– Թեեւ ես իրավաբան չեմ, բայց այս վավերագիրը կփրկե ձեզ բեկերի ոտնձգությունից, դիմեք դատարան:

Ապա դառնալով Հայրապետ բեկին՝ ասաց.

– Դուք ատենադպիր եք, խնդրում եմ օգնել այս գյուղացիներին՝ իրենց արդարացի դատը պաշտպանելու օրենքով:-

Հայրապետ բեկը բացատրեց.

– Ճիշտ է, այդ փաստաթուղթը օրինական ուժ ունի, սակայն գյուղացիք անգրագետ մարդիկ են, պետք է դիմեն իրավաբանի օգնության, – եւ հարցը լուծված համարվեց:

Աշուղ Առաքելը տեղից վեր կացավ, թե՝ ես եկել եմ քո գովասանքն ասելու, պատվելի վիպասան:

– Գալդ բարի, վարպետ, – ասաց վիպասանը: – Ես սիրում եմ մեր հայրենի գուսաններին, որ իրենց երգերով վառ են պահում մեր ժողովրդի սրբազան ավանդություններն ու հայրենասիրական զգացմունքները, իսկ ինձ գովելը միտք չունի, իմ գնալուց հետո կուզեք գովեք, կուզեք հայհոյեք:

Բայց աշուղը չհասկացավ վիպասանի միտքը, սազն առավ գիրկը, զարկեց լարերին ու երգեց.

Դու աստղ ես լուսավոր,
Հայոց երկնքում խավար,
Մարդ կա՝ մարդկության զարդն է,
Ունես համբավ ու ուսում:
Մարդ կա պատկերով մարդ է,
Ինքը հիմար անասուն.
Էդպիսին տեսնելը ցավ է,
Տեսնես էլ, չխոսեցնես լավ է...

– Շնորհակալություն, աշուղ, այդ երգ ու նվագն ինչպես գուսաններն են ասում՝ «սոհբաթն ու սազը», ազատ ժամանակվա բաներ են. հիմա, տեսնում եք, այս մարդիկ ինձ են սպասում, պիտի վերջացնեմ գործս, դուք կներեք ինձ, – այսպես ասելով, Ռաֆֆին մի արծաթե ռուբլիանոց դրեց աշուղի ափի մեջ: Աշուղը սազի շապիկը հագցրեց ու գոհ սրտով դուրս գնաց:

Դրանից հետո Արծվանիկի խոջաները սկսեցին պատմել իրենց առեւտրական գործարքներով կատարած շրջագայությունների մասին, թե ինչպես ջորիների քարավանով ապրանք էին ներմուծում Թիֆլիսից, Շամախուց, Նուխուց եւ Շուշի քաղաքից: Բերում էին մետաքսյա եւ բրդյա գործվածքներ, մահուդ, գլխի աղլուխներ, արծաթյա զարդարանքներ ու այլ ապրանքներ եւ թե ինչպես հեռավոր ճամփաներին

Շարունակությունը՝ էջ 66

1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ
ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ
ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# Ռաֆֆին Զանգեզուրում

## Հատված Արտաշես Օատուրյանի հուշերից

Սկիզբը՝ էջ 65

երբեմն ենթարկում էին ավազակների հարձակմանն ու կողոպուտին: Այնուհետեւ խոսեց ծերունի Հայրապետը: Նա ասաց.

– Քիչ առաջ չափնեցիք բողոքում էին բեկերի դեմ եւ իրավացի էին: Ղափանում նրանք շատ հողերի են տիրացել: Գյուղացիների պայքարը բեկերի դեմ սուր կերպարանք է ստանում: Դատարանում բազմաթիվ գանգատներ կան, սակայն բռնագրավիչները, ներկայացնելով պարսկական խաների կողմից նախկինում տրված կալվածագրերը, շատ անգամ շահում են հողային վեճերը: Մեր դատավորն էլ խղճով մարդ է, ցավում է գյուղացիության վիճակի համար, բայց ի՞նչ կարող է անել, երբ օրենսդրությունն իրավական է համարում կալվածագրերը:

– Ո՞վ է ձեր այդ բարեխիղճ կոչված դատավորը, – հարցրեց Ռաֆֆին:

– Ղարաբաղցի հայ է, Կուսապատ գյուղից: Ազգանունը Բեկզադով է, իրավաբանական կրթությունը ստացել է Պետերբուրգում:

– Իսկ ինչպե՞ս է, որ Մելիք Փարսադանի, Թորոս իշխանի եւ Մելիք Նուբարի ժառանգները չեն կարողացել պահպանել իրենց հայրական կալվածքները:

– Որովհետեւ դրանք չունեին պարսկական խաներից կալվածագրեր, որոնց հետ թշնամական դրության մեջ էին: Հետո էլ Մելիք Փարսադանի ժառանգների մի մասը թողել-գնացել է Թիֆլիս, Պետերբուրգ, Փարիզ, գեղում մնացածներից նշանավոր է Դավիթ Բեկ անունով մի գնդապետ, որն այժմ սահմանապահ զորամասի գլխավորն է Արաքսի սահմանագծի վրա, իսկ Մելիք Նուբարի ժառանգները տեղափոխվել են Թիֆլիս: Թորոս իշխանի ժառանգները հայտնի չեն:

– Բայց այդ, բեկերի կալվածագրերը կարող են եւ կեղծ լինել: Ես վերջերս Ղարաբաղում էի, իրազեկ անձինք ինձ պատմեցին, թե ինչպես առաջացան այդ կեղծ կալվածագրերը՝ թալդաները: Հայտնի դարձավ, որ Ղարաբաղի բռնակալ Իբրահիմ խանին, ռուս զորքի առաջխաղացման ժամանակ, երբ նա ուզում էր դավադրություն սարքել ռուսաց դեմ, Շուշվա բերդում հայերը սրախողող արին իր ազգականների հետ: Այդ դեպքից հետո, երբ ղարաբաղցի հայազգի Մադաթով զորավարը Ղարաբաղում ջախջախեց պարսից զորաբանակը եւ հաստատվեց ռուսաց տիրապետությունը, Իբրահիմ խանի հաջորդը՝ Մեհտի-Կուլի խանը, կեղծ կալվածագրով, գրված Իբրահիմ խանի անունից ու նրա կնիքով, Ղարաբաղի մելիքներին եւ Գանձասարի վանքին պատկանող կալվածները բաշխեց իր բարեկամներին, ծառաներին, ձիապաններին եւ այլոց՝ իբրեւ սեփականություն: Հետագայում, համառ պայքարից հետո, բարձրագույն ատյանների միջոցով Զալալյան Բաղդասար Մետրոպոլիտին հաջողվեց Գանձասարի վանքապատկան կալվածքների մեծ մասը փրկել, նույն կարգով եւ Ղարաբաղի մելիքների ժառանգները ետ ստացան իրենց կալվածների մի մասը: Դուք, Հայրապետ բեկ, պետք է լուրջ ուշադրություն դարձնեք այդ վեճերին եւ օգնեք գյուղացիներին, ես կխոսեմ եւ դատավորի հետ:

– Դժբախտաբար, դատավորը իր տիկնոջ հետ գնացել է Շուշի անեռոջ տեսությանը, եթե այստեղ լիներ, ինքն էլ կդիմավորեր ձեզ:

Զեյվացի Ասրին, որ թախտին ծալապատիկ նստած լսում էր զրույցները, տերողորմյան դանդաղ գցելով, ուզում էր մի բան էլ ինքն ասի:

Ռաֆֆին նկատելով այդ՝ ասաց.

– Երեւի, հայրիկ, Դուք ասելու բան ունեք:

Ծերունին տեղում շտկվեց ու մորուքը տմտմբացնելով՝ սկսեց.

– Մեր հին գյուղը Տախն էր, այժմ էլ հին եկեղեցին մնում է անտառի մեջ: Մեզանից դենն էլ Մատաղաքար գյուղն էր, նա էլ հիմա ավերակ է: Հորիցս լսել եմ, որ Զեյվու բերդը, որտեղ խանն էր նստում, Դավիթ Բեկը քանդել է: Այնտեղից գաղթական հայերը եկան մեր կողմը եւ հիմնեցին Նոր Զեյվան: Հետո մեր գյուղացիք էլ Տախից տեղափոխվեցին Զեյվա, քանի որ այնտեղի ջուրը առատ էր, հողը հարուստ...

– Ասում են Բարկուշատի բերդը ձեզ մոտիկ է, – հարցրեց Ռաֆֆին, – ի՞նչ գիտեք այդ մասին:

– Բերդը մեր գյուղից մի երկու ժամվա ճանապարհի վրա է դեպի հյուսիս-արեւելք, Որոտանի աջ կողմին, բարձր քերծերի վրա: Պարսպի պատերը, աշտարակները հիմա էլ մնում են. հիմա կոչվում է Խոջա-Մուսախլու, Խոջա Միսակի անունով: Ասում էին, թե իմ պապը՝ Գուքին (Գրիգոր), իր թանկանոց «Շաբան» հրացանը առել էր Խոջա Միսակից, որի դիմաց մի ձի էր տվել: Ասեմ, թե Գուքի պապին ինչու է առել այդ լավ հրացանը, նա վաչագանցի Խոջա Նուրիջանի թվանքչին էր (հրացանակիր պահակ), նրա ուղտերի, ջորիների քարավանի հետ գնում էր Պարսկաստան, գալիս: Խոջա Նուրիջանը Սպահանից, Զուղայից, Թավրիզից թանկագին ապրանքներ՝ մահուդ, քաշմիրի շալ, մետաքսյա նուրբ կտորներ, քիրմանի լալա, ղանավուզ, դարեյի հնդկական համեմունք՝ հիլ ու զանջաֆիլ, չինի թասեր, սեւ չայ, ֆռանկի շաքար, որ գործածում էին հիվանդների համար որպես դեղ, բերում առեւտուր էր անում Արաքսից մինչեւ Քաջարանց, Մեղրուց մինչեւ Տաթեւ: Մեծ վաճառական էր:

Զրույցները տեւեցին երկար եւ մենք արդեն ձանձրացել էինք: Հյուրերը ցրվեցին, կեսօրն անց էր: Ռաֆֆին Մեսրոպ քահանայի հետ ուղեւորվեց դեպի գյուղի ստորոտը՝ բաց օդում թարմանալու: Ես հետեւեցի նրանց: Գյուղի տակ պռշնի մի մեծ ծառ կա, որի շուրջը գտնվում են հինավուրց խաչքարեր: Ռաֆֆին կանգ առավ այդ քարերի մոտ, որոնք ծածկված էին կանաչ մամուռով եւ հափշտակված զննում էր դարերից մնացած այդ հուշարձանները: Դրանցից մեկը այնպիսի բարձրարվեստ նուրբ ճաշակով էր քանդակագործված, որ հմայք էր պատճառում տեսնողին: Քահանան բացատրում էր, թե դրանք ավելի հին են, քան գյուղի մոտ գտնվող գերեզմանոցի եկեղեցին, որը X-XI դարերի գործ է:

Իջնում ենք ցած, Ռաֆֆին ուշադիր դիտում էր առջեւում փռված գեղատեսիլ դաշտավայրը՝ ծածկված թավշյա կանաչ թփերով: Բավականին մոտիկ տարածության վրա դաշտում սիգաճեմ քայլում էին երկու եղջերու, վզներից կախված զանգակների ներդաշնակ հնչյունների տակ:

– Ինչ բան է, աչքերիս չեմ հավատում, Ավետիս: Եղջերուներ են: Կուսական անտառների թագուհին ինչպե՞ս է ընկել այստեղ, – հարցրեց վիպասանը:

– Այո, եղջերուներ են ընտելացրած, ես էլ առաջին անգամ որ տեսա, զարմացել էի:

– Դրանք դատավոր Բեկզադովի ձեռնասուն եղջերուներն են, – ասաց քահանան: – Նվեր է ստացել ներքին Հանդ գյուղից, սրանց փոքր ժամանակ բռնել էին Մթնաձորի անտառում որսորդները:

Այնտեղից վերադարձանք տուն ճաշելու: Քահանան օրհնեց սեղանն ու ասաց.

– Ճաշակեցեք խնդրեմ, Ղափանի մթերքի համն ուրիշ է. մանավանդ Եղվարդի լավաշն ու Փխուրուտի մոթալ պանիրը հիանալի են:

Ճաշից հետո գնացի Մակունց Միրզայի տունը: Նա հրավիրեց ճաշի, ասացի, որ ճաշել եմ, ապա հարցրեց թե՝ բա էդ վարժապետը ինչ է շինում տերտերի տանը:

Ես բացատրեցի, որ նա վարժապետ չէ, այլ գրող, վիպասան եւ զբաղվում է պատմագրությամբ:

– Միրզա, – ասացի, – դու ի՞նչ գիտես Ֆրանգուլի մասին:

– Ես էն գիտեմ, – բացատրեց Միրզան, – ինչպես փոքր ժամանակս պատմում էր տատս, մեր պապ Վանեսը Ֆրանգուլի զորքում յուզբաշի է եղել (հարյուրապետ): Ղոչաղ մարդ էր, գնդակը տափը չէր ընկնում: Երբ Եղվարդի տակ, Նարգիզլուի կռվում, Ֆրանգուլը դավաճանությամբ հրամայել էր զորքին՝ հրացաններում գնդակ չդնել, միայն վառոդով կրակել պարսիկների վրա, Վանեսը չի լսել եւ մի քանի պարսիկների գնդակով տապալել է: Էդ օրը Ֆրանգուլը ուզեց նրա գլուխը կտրել, Վանեսն էլ դե, կուլ գնացող պատառ չէր, իր հավատարիմ զինվորներին առավ փախավ Թորոս իշխանի կողմը եւ սկսեց կռվել թշնամու դեմ: Ֆրանգուլը մինքաշում (հազարապետին)՝ թե ուր կորավ էն Ղարա-գյուլլան (սեւ գնդակը), ճարեք, սպանեցեք: Բայց դե, էլ որտեղ ճարեն: Էդ օրվանից էլ Վանեսի մականունը մնաց Ղարագյուլլա եւ մինչեւ հիմա էլ մեր տոհմին կոչում են Ղարագյուլլենց:

Երեկոյան դարձյալ գնացի քահանայի տուն: Ռաֆֆին զբաղված էր. ամփոփում էր իր հավաքած տեղեկությունները:

Ընդհատելով աշխատանքը, Ռաֆֆին դարձավ դեպի մեզ, թե ինչ ավանդություններ եք լսել Երիցավանքի մասին:

Տեր Մեսրոպը բացատրեց.

– Մեր նախնիներից լսել ենք, որ այդ վանքը շատ հին է, հավանական IV-V դարերից, կոչվում է նաեւ Կարմիր վանք, շրջակա կարմիր ժայռերի պատճառով: Նրա կալվածքը նույնպես կոչվում է Կարմրաքար: Վանքին էր պատկանում եւ Պհածտեղ կոչվող մոտակա բերդագյուղը, որի կիսավեր պարիսպները այժմ էլ մնում են: Վանքը եղել է Սյունյաց եպիսկոպոսական աթոռը, որ հետո փոխադրվել է Վահանավանք, այնտեղից էլ X դարում՝ Տաթեւ: Հետո նզովյալ, երիցս անիծյալ Ֆրանգուլի աջակցությամբ Ֆաթալի խանը քանդեց վանքի երեսապատման սրբատաշ քարերը, իր համար ամառանոցի շենք կառուցեց հենց վանքի մոտ, պղծելով այդ օրհնյալ հողը: Հետո Դավիթ Բեկը ավերեց այդ սոդոմային շենքը եւ հիմնապատերը այժմ էլ նշմարվում են:

– Ես որքան փնտրեցի, վանքի պատերի վրա ոչ մի գիր չգտա, – ասաց Ռաֆֆին, – հավանորեն քանդակագրված քարերը մնացել են փլվածքների տակ, կամ տեղահանված սրբատաշ քարերի վրա: Չի կարող, որ նման հոյակապ կոթողը վիմագրություն չունենա:

Ես բացատրեցի, թե Տաթեւի դպրոցում Հովակիմ վարդապետը Չամչյանի հայոց պատմության դասավանդման ժամանակ մեկնաբանում էր մեզ, թե հայոց Մուշե կաթողիկոսը Դվին մայրաքաղաքից եկել էր Երիցավանք, սպիտակ ջորիներ լծած կառքով՝ վանահայր Երիցակին եպիսկոպոս ձեռնադրելու մեծ հանդիսավորությամբ:

– Այդպես էլ ասված է, – շարունակեց վիպասանը, – Ստ.Օրբելյանի «Սյունյաց պատմության» 54-55 էջերում. «Եվ էր վանքս այն տեղի գեղեցիկ եւ զարմանատիպ ի վերայ բարձրավանդակի միոջ, շինեալ եկեղեցի յանուն սրբոյն նախավկային նորին Երիցակայ ձեռամբն, պարսպեալ մեծամեծ քարամբք...»: Մուշե հայրապետը ապրել է VI դարում, Վահան Մամիկոնյանի մարզպանության ժամանակ եւ այդ դարում էլ կառուցվել է այս վանքը: Ձեզ մոտ, Ղափանում, պատմական հիշատակարաններ շատ կան, ինչպիսիք են՝ Գրիամա բերդը (Ագարակի մոտ), Նավսա բերդը-Վարոսի վանքը, Խփցխա բերդագյուղը Շիկահողի անտառներում, Վանանդաձորի բերդը (Զայզամի), Բարկուշատի բերդը, որի մասին մեզ ծանուցեց Ասրի քեռին եւ այլն: Սակայն ես ժամանակի սղության պատճառով ի վիճակի չեղա շատ տեղեր այցելելու:

– Պատմություն ստեղծելու համար, – շարունակեց վիպասանը, – անհրաժեշտ է խոսեցնել քարե վկաներին, ուսումնասիրել հինավուրց վիմագրությունները, գրի առնել ժողովրդի մեջ մնացած ավանդությունները, ունկնդրել բանահյուսության ակունքներին, որի համար էլ ես հաճախ դիմում եմ ժողովրդին: Իսկ դու, սիրելի Ավետիս, դեռ երիտասարդ ես եւ ուսյալ, տեսնում եմ, որ շատ ես հետաքրքրվում մեր պատմական անցյալով, հետեւիր եւ գրի առ լսածդ ավանդությունները, հին զրույցները, մեր հնադարյան հոգեւոր մշակույթի փշրանքները, որոնք ժամանակի հետ մոռացվում, անհետանում են, որպեսզի մեր հաջորդներն էլ այդ բանում չմեղադրեն մեզ:

Հետեւյալ առավոտը գնացի Ռաֆֆուն ճամփա դնելու: Նա, սրահում կանգնած, սպասում էր գյուղից նշանակված ուղեկցողներին: Բեղլու Օհանջանին տեսնելուն պես Ռաֆֆին դարձավ դեպի ինձ.

– Մոռացա քեզ ասելու, ձեր գյուղից ինձ ուղեկցող Խոսրովը շատ հետաքրքիր մարդ է. թուրը կապած, ատրճանակը գոտին խրած, փափախը թեքած ականջին, իր նիհար ձիով արշավում էր իմ առջեւից: Երբ ձին հոգնած ետ մնաց, նա սկսեց պատմել իր արկածների մասին: Ասում էր. ջահել ժամանակս փախցրել եմ գյուղի տերտերի աղջկան, տերտերը դիմել է մովրովին, փախել եմ անտառ ղաչաղների մոտ, վերջը տերտերը ստիպված հաշտվել է: Ասում էր գյուղի բեկին ծեծել է, հարկը չի տալիս:

– Ճիշտ է, – ասացի, – նա խիզախ մարդ է, Մելիք Մուշկամբարի թոռն է եւ իր տոհմային հպարտության պատճառով ոչ ոքի չի ենթարկվում: Բան էլ չունի, հենց այն լղար ձին է ու թուրը: Ապրում է իր քեֆին, դժբախտաբար իմ էլ մորեղբայրն է:

Ռաֆֆին ծիծաղեց՝ ասելով.

– Կատարյալ Դոն-Կիխոտ է քո քեռին: Արծվանիկցի Մանուչարն ու Օհանջանը պիտի ուղեկցեին վիպասանին մինչեւ Տաթեւ, քանի որ ճանապարհը վտանգավոր էր ավազակներից: Ռաֆֆուն ճանապարհեցինք մինչեւ գյուղի ծայրը, բարեմաղթելով հաջողություն:

■

Հալիձորի բերդը



1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

## ԿԱՊԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

# ՍԻՍԱԿԱՆ

Հատված Ղեւոնդ Ալիշանի համանուն կոթողային գրքից

### Է

### Բաղք

Սյունյաց տերության եւ պայազատության վերանորոգությունից հետո 8-9-րդ դդ. բարգավաճեց, իսկ 10-րդ դարի վերջից մինչեւ 12-րդ դարի կեսերն առաջնորդության պատիվն ընդունեց Սյունիքի գավառներից Բաղքը՝ այնտեղ թագավորական գահ հաստատվելու պատճառով(1): [Բաղքը] գտնվում է Սյունյաց աշխարհի հարավակողմում, բայց ոչ ծայրագույն հարավում, որովհետեւ այդ կողմից այն եզրափակում են Արեւիք եւ Կովսական գավառները, հարավ-արեւմուտքից՝ Չորքը: Բաղքի թագավորության ժամանակ սրանց գրեթե կից միացած էին հյուսիս-արեւմուտքից Ծղուկքը, հյուսիսից Հաբանդ գավառը, արեւելքից՝ նույնը կամ Աղահեճքը, քանզի այս կողմից ինձ համար հստակ չեն հարակից գավառների սահմանները, սակայն թվում է, թե Բաղքը հասնում է մինչեւ Հագարի գետի ստորին ընթացքը: Մեր տեղագիր եւ պատմիչ Օրբելյանն ու մյուսները միմիայն մեկ Բաղք գավառ են գրում ի թիվս [Սյունյաց] աշխարհի տասներկու [գավառների], բայց եկեղեցուն հարկատու գյուղերի ցուցակում արձանագրված է երկու առանձին գավառ. պատմիչը Բաղքի համար ասում է, թե այն այժմ կոչվում է Աճեն, որ ըստ հետինների Աճանան է [անվանվում]: Իսկ Ցուցակը, որ Մյուս Բաղք է կոչում գավառի զատված մի մասին, խորագրում ավելացնում է. «որ անվանվում է Քաշունիք»: Նույնը հաստատում է պատմիչը՝ ասելով. «Քաշունիք գավառը, որ այժմ Բարկուշատ է անվանվում»: Նոր ցուցակները եւ պատմիչները Բարկուշատ են կոչում Մյուս Բաղքը, որով այն ունենում է երեք անուն, իսկ առաջինը՝ երկու անուն: Սրա մեջ համրվում է 41 գյուղ, նրանում՝ 52: Այս երկուսի բաժանման սահմանները որոշելը մեզ համար դժվար եւ նույնիսկ ավելորդ է, որովհետեւ տեղագրությունը կատարում ենք ըստ հին աշխարհագրության եւ պատմիչների, սակայն կարգի թելադրանքով զատորոշում ենք նախ ըստ այն բանի, որ Մյուս Բաղքը կամ Քաշունիքն Աճեն կոչվածի արեւելակողմում է եւ Բարկուշատի հովտում կամ գոնե սրա աջ կողմից. այս պատճառով իսկ Բարկուշատ անվանվեց: Իսկ Աճեն-Բաղքը գտնվում է Չավնդուր գետի հովտում՝ նրա վերին կողմում, ձախից: Եվ քանի որ Բաղաց գավառը տարածված է գետի երկայնքով, հետինների կողմից եւ մինչեւ այժմ ամբողջ երկիրը կամ նրա մեծ մասը կոչվում է Չավնդուր:

Դարձյալ Տաթեւի եկեղեցու մի նոր ցուցակում այս գավառն արձանագրված է առանձին անուններով: Աճանանը՝ 26 գյուղով, Բարկուշատը՝ 31 եւ Չավնդուրը՝ 24, որի վրա ավելացվում է Մաղանջը՝ 12 գյուղով, որ մասն է Մյուս Բաղքի, սրանց գումարը 94 է. սա համեմատելի է երկու Բաղքի գյուղերի հին թվին՝ 91, սակայն, ստուգապես բոլորը նույնական չեն եւ ոչ էլ զետեղված են սրանց մեջ, քանզի սահմաններն անցնում են նաեւ Հաբանդի եւ Կովսականի կողմերը, որի հետեւանքով հարկ չէ գավառների նոր բաժանումը հավասարեցնել նախկինին: Սրա հետեւանքով հարկադրված եմ ըստ նախնիների Բաղքի սահմանները հիշելուց հետո ներկա տեղագրությանս մեջ առավել ուշադրությամբ արձանագրել Չավնդուր գետի ձախակողմյան ձորերն ու գետակները, ուր, ինչպես ասացինք, գտնվում էր Բաղաց երկիրը:

Զարմանալի է, որ չի հիշվում (կամ ես չեմ գտնում) նախնիների մոտ այս հզոր գետի բնիկ անվանումը, որ ունի ձորեր եւ հովիտներ, եւ առանձին թափվում է Երասխ գետի մեջ: Սյունյաց պատմիչի վերոհիշյալ խոսքը ենթադրել է տալիս, թե հենց սա է Աղավնո հորջորջված գետը(2), եւ ըստ այդ վկայության, այս գետը գտնվում է Բաղքի եւ Բարկուշատի միջնահատվածում, եւ, անշուշտ, պատշաճում է միայն Չավնդուրին, մանավանդ որ Սարգիս կաթողիկոսի կանոնական խոսքում, որ հիշեցինք Աղահեճ գավառի տեղագրության մեջ, որոշակիորեն Աղվանից գետն անվանվում է Ագարա եւ ոչ՝ Աղավնո: Արդ, այս գետը բխում է Տաթեւի տարածքի հարավ-արեւելյան լեռների թիկունքից եւ հոսում է արեւելքից հարավ-արեւելք՝ ուղղությունը գրեթե նույնը պահելով մինչեւ վերջ, Հագարու գետաբերանից 6 կամ 7 մղոն արեւմուտք թափվում է Արաքսի մեջ՝ սկզբում ձախից վերածվելով մանր վտակների, բուն իսկ Բաղաց երկրում հյուսիսից Զեմի գետն անջրպետող լեռների թիկունքից, որ Հաբանդից հարավ է եւ ձորի չափազանց նեղ լինելու պատճառով ստորին մասում գրեթե անհետանում է: Իսկ աջից Չորք գավառից ընդունում է Կապան գետը եւ այլ [գետեր] եւս այն գավառից եւ Կովսականից, ուր թողնում եմ նրանց քննությունը: Երկու այլ փոքրիկ գետակ եւս արեւելքում Չավնդուրի միջով զուգընթաց Հաբանդի հարավային սահմաններից իջնելով, խառնվում են Հագարի գետին. նրանց անուններն արձանագրված չեն, այլ, ըստ նրանց եզերքին եղած գյուղերի, հյուսիսակողմում գտնվողին անվանում ենք Վաժնունյաց (գետակ), հարավայինին, որ սրա եւ Չավնդուրի միջնամասում է, Ագարակ գետ:

Երկու գետակի հովիտներն ընկնում են Մյուս Բաղքում կամ Քաշունիքում, ուր սահմանակցում են Բարկուշատի գետահովտին, եւ առաջինը համարյա հենց նույն մեծ գետի մեջ է թափվում՝ խառնվելով Հագարուն, իսկ երկրորդը, ինչպես երեւում է մի փոքր ներքեւ, թափվում է նույն Հագարու մեջ(3): Համաձայն գետերի նշված ընթացքի՝ պարզ է դառնում Բաղաց երկրի դիրքը, որ հյուսիս-արեւմուտքից մինչեւ հարավ-արեւելք ամբողջապես անհարթ ու անտառախիտ է, թեպետ նրանում չեն երեւում մեծամեծ լեռներ, սակայն քիչ չեն պարսպանման բարձունքները, որոնք ձեւավորում են կիրճեր ու խորունկ փոսեր եւ ըստ այսմ նման է իր սահմանակից եւ բախտակից Չորք գավառին, որ հռչակված է ամրությամբ: Այդ պատճառով էլ այնտեղ հաստատեցին Բաղքի կամ Սյունիքի թագավորներն իրենց աթոռը, եւ, մասնավորաբար, երկու գավառի անունով կոչվեց Բաղքի կամ Բաղական թագավորություն, քանզի, գոնե ուշ ժամանակներում, նրանց ձեռքը համարյա չէր հասնում ուրիշներին, բայց միայն Ծղուկի, Կովսականի եւ Արեւիքի մի փոքր մասին: Եվ համաձայն իր այս դիրքի եւ կերպարանքի, 14-րդ դարի սկզբին երբեմն կոչվում է նաեւ Բաղածոր: Սակայն երկրի բնական հանածոների ու հանքերի վերաբերյալ ստույգ ոչ մի բան չիմանալով՝ հայացք նետենք նրա քաղաքական [կացության] վրա:

107. Այս գավառի անվան եւ ծագման վերաբերյալ Սյունյաց պատմիչը հաստատում է, թե Բաղակից է, ով «Սիսակի տոհմից էր... իբրեւ ժառանգության մաս վերցնելով այս գավառը, շինում է Բաղակի քարը՝ ամրոցը» եւ այլն(4): Հիրավի, այս անունն ունի վաղեմության նշաններ, որի նախատիպը Բաղ-ն է, որից էլ Բաղքը եւ Բաղակը, եւ ոչ թե Բաղակից է Բաղը: Եվ ինչպես հին, դիցական նահապետներից եւ իր ազգակիցներից Ծղուկն ու Չագը, այնպես էլ սա ամրոց է կառուցում քարալեռան վրա. Սյունյաց աշխարհի, նաեւ՝ բովանդակ հայոց իսկ ամրագույն բերդերից մեկը, որը հետո մեծարվեց՝ լինել Սյունյաց թագավորների ոստանը, ինչպես անվանվում է Չորք գավառի տեղագրության մեջ, որին եւ պատշաճում է, այլեւ միանգամայն հավաստում է, թե Չորքը եւ Բաղքը սկզբից մեկ վիճակ են (ներկայացրել) եւ հետո ինչ-որ բռնությամբ բաժանվել են, ոստանը մնացել է մեկի մեջ, իսկ անունը՝ մյուս մասում: Կան ոմանք, ովքեր այժմ Բաղքը եւ Չորքը նույնն են համարում(5), բայց Խորենացու աշխարհագրության բոլոր օրինակներում եւ Սյունյաց պատմության մեջ դրանք կարգված են իբրեւ երկու տարբեր [գավառներ] Սյունիքի տասներկու գավառի մեջ:

Գավառի պատմության մեջ որեւէ առանձին դեպք չի պատմվում վիպական կամ ավանդական նահապետ Բաղակի մասին մինչեւ գրեթե Սյունյաց իշխանության նորոգության օրը՝ 9-րդ դարի սկիզբը, երբ 821թ. Բաբան բռնավորը մեծ կոտորած արեց(6), ինչպես ցույց է տրված Սյունյաց աշխարհի [վերաբերյալ] ներածության մեջ: Այն ժամանակ Սյունիքը Սիսական իշխանների մեջ բաժանելիս երեւում է Բաղաց գավառի ժառանգորդ Վահան անունով մեկը, որ Սյունիքի տեր եւ Սիսակյանների նոր նահապետ Վասակի ժամանակակիցն էր, որովհետեւ նրա որդի Չագիկը հիշվում է իբրեւ Բաղաց իշխան 844թ.: Այս վերջին անունը (Չագ) եւ Զվանշերը հաճախ հիշվում են իբրեւ տոհմի ժառանգներ՝ մինչեւ 10-րդ դարավերջը: Կարելի է նրանց տոհմաբանությունը կարգել հետեւյալ կերպ.




Վերջին Զվանշերը Վահան կաթողիկոսի(16) հայրն է, ով Անանիա կաթողիկոսից(17) ապստամբած Հակոբ եպիսկոպոսի մոտ հստակորեն կոչվում է իշխան Բաղքի եւ Կապանի, ուր եւ ամրացրեց այն եպիսկոպոսին ընդդեմ կաթողիկոսի: Փարաջից հետո՝ 11-րդ դ. Սյունիքի թագավորության ծաղկմանը տիրակալված է երեւում սրանց Բաղք գավառը եւ այս անվամբ թագավորությունը կոչելը, որի վերաբերյալ պատմիչը Վաղարշապատի ողբի մեջ ասում է.

*«Բայց մեզ համար մեկ այլ ջահ վառեցին*
*Սիսականի Բաղաց գան մեջ»(18):*

Եվ թեպետ կային Չագիկյանների եւ Զվանշերյանների սերունդները, սակայն նրանք չեն հիշվում անվանապես, համաձայն իմ իրազեկության: Իսկ այդ հիշվածները 10-րդ դարում սատար եւ հետեւող եղան Սյունիքի նախագահ իշխաններին ու թագավորներին եւ առատ տուրքերով ճոխացրեցին Տաթեւի եկեղեցին: Սրանց տոհմի ժառանգները նաեւ պաշտոնյաներ կարգվեցին, ինչպես Զվանշերի եւ Վասակի եղբայր Վահանը, ով կրոնավորելով կառուցեց անվանի մենաստան Վահանի վանքը, որը եւ Հովհաննավանք է կոչվում, եւ նրա համանուն եղբորորդին նախ դառնում է Սյունիքի եպիսկոպոսը՝ պաշտոնավարելով վեց տարի եւ ապա ընտրվում Հայոց կաթողիկոս(19): Սա նշանավոր եղավ ծեսի մեջ կատարած ինչ-ինչ նորամուծություններով եւ աթոռանկ լինելով կամ հրաժարվելով՝ խույս տվեց տարբեր վայրեր ու մեռավ անժամանակ(20):

11-րդ դ. վերջից 12-րդ դարի կեսերը Սյունյաց թագավորության նվազման ժամանակ իշխանական փայլով աչքի է ընկնում Բաղքի Համտունյանների տոհմը, որի մեջ առաջինը Մեծ Համտուն հորջորջվածն է, իսկ նրա որդի Հասանը 12-րդ դարի սկզբում կոչվում է «Բաղաց մեծափառ իշխան, որ իր ձեռքերի մեջ պահում էր այն թագավորության բոլոր ազատներին»: Սրա որդին եւ ժառանգորդը Համտուն Բ-ն է եւ մյուս որդին՝ Հովհաննավանքի Հովհաննես եպիսկոպոսը, ով եւ աշխարհի ավերման պատճառով գնաց Վայոց ձոր եւ կառուցեց հռչակավոր Նորավանքը, ուր եւ առանձնացավ նաեւ իր եղբայրը՝ Համտունը, հրաժարվելով աշխարհից, եւ «այնտեղ կրոնավորելով նույն վայրում վախճանվում է ՈՁ (1231) թվականին»(21):

Այլազգիները 1104թ. գրավեցին Սյունյաց թագավորության ամրոցը՝ մայրաքաղաք Կապանը(22) ու մի առ մի մյուս ամրոցները եւ ապա թագավորության հզորագույն ամրոցն ու ապաստարանը՝ Բաղաբերդը 1170թ.:

Բայց թագավորը կանխազգալով՝ փախչում է իր հայրենի Խաչեն, որով եւ վերացավ, կամ ըստ պատմիչի, մարեց նաեւ հայկական հարստության այս ջահը, եւ երկիրը Սյունիքի մյուս գավառների նման կոխան եւ որս դարձավ օտարներին՝ չվայելելով ազատությունը, որ նվաճեցին նրանցից ոմանք՝ աշխարհակալ, աշխարհաշեն Զաքարյանները:

Բաղաց թագավորների իշխանության (որի սահմանները վերը հիշատակեցինք) ժամանակ, ըստ պատմիչի, կային 2000 կամ 1008, կամ ըստ այլ գրչագրերի ու Վարդան ավագագույն պատմիչի՝ 1400 գյուղ, 43 բերդ, որոնցից անվանի էին 12-ը եւ 48 վանք: 550 տարի անց Դավիթ Բեկի ազատարարական [պայքարի] օրերին Բաղաց թագավորության վաղեմի երկրում ծագեց ազատության եւ քաջարի գործերի [հույսի] շողը, բայց նրա մահից հետո դարձյալ ստվեր իջավ, բացառությամբ Սյունիքի այլ մասերի՝ տեղ-տեղ նախաձեռնությունն անցնելով Մելիք կոչված իշխանաշուք հետնորդներին եւ տանուտերերին:

108. Ըստ Հին հարկացուցակի Սյունյաց եկեղեցու հարկատու գյուղերը երկու Բաղքում հետեւյալներն են՝ տուրքերով հանդերձ.

### Ա. Բաղք = Աճանան

*Աչաղու-Աջիլու ..... 8*
*Աճանան ..... 12*
*Բարերվայր ..... 6*
*Շեկք ..... 12*
*Վարդավանք ..... 6*
*Տորթն ..... 26*
*Տափյար ..... 6*
*Ավարագետք ..... 10*
*Տագամայր ..... 20*
*Խոտանան ..... 12*
*Եղինգն ..... 6*
*Նորաշինիկ ..... 6*
*– մյուս ..... 6*
*Հյունյաց ձոր ..... 6*
*Որն ..... 6*
*Գոդեվանք ..... 12*
*Ատոռ ..... 10*
*Արուքս ..... 6*
*Հողար ..... 8*
*Կրավագետ ..... 6*
*Խմայծ ..... 6*
*Կավարտ ..... 8*
*Արկանիծոր ..... 10*
*Տոգող ..... 6*
*Զարերիկերտ ..... 10*
*Տաթեղիշեն ..... 10*

**Շարունակությունը՝ էջ 68**

**1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ**

**ԿԱՊԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

# ՍԻՍԱԿԱՆ

## Հատված Ղեւոնդ Ալիշանի համանուն կոթողային գրքից

**Սկիզբը՝ էջ 67**

*Տերոնդատ ..... 8*
*Ագարակ ..... 20*
*Թուրք ..... 12*
*Մակարագ ..... 6*
*Անագոն ..... 7*
*– մյուս ..... 7*
*Պարքոն ..... 6*
*– մյուս ..... 6*
*Գեղաքունի ..... 10*
*Կմեզ ..... 10*
*Գուկական ..... 10*
*Փառավակ ..... 8*
*Մեծամարգ ..... 12*
*Կովսական գյուղ ..... 12*
*Արծանաձոր ..... 6*
*.....*

### Բ. Մյուս Բաղք = Քաշունիք

*Երեց ..... 12*
*Խողվանի ..... 10*
*Դաստակերտ ..... 6*
*Տանձավայր ..... 8*
*Վանանդ ..... 10*
*Մաճ ..... 7*
*Անահտաձոր ..... 6*
*Շոռնոխտ ..... 8*
*Լերմենիչէ ..... 6*
*Խախտք ..... 12*
*Եվեղի ..... 7*
*Հատատուք ..... 6*
*Մոգք ..... 6*
*Մատախոնի ..... 10*
*Իցան ..... 6*
*Տողոր ..... 6*
*Ավերք ..... 6*
*Տաճկաձոր ..... 6*
*Տեխք ..... 8*
*Կոճարու ..... 7*
*Մաղձնատուք ..... 6*
*Խոտի ..... 6*
*Ջավթք ..... 8*
*Տուտուստուք ..... 7*
*Սնծնյակ ..... 6*
*Ակն ..... 6*
*Բակուրի վանք ..... 12*
*Տախն. Դախն ..... 12*
*Մերթակերտ ..... 6*
*Հացնյան ..... 6*
*Ծղու ..... 8*
*Տատա ..... 12*
*Բարկուշատ ..... 12*
*Խիրք ..... 12*
*Տրյա ..... 12*
*Ագատի ..... 8*
*ճակկուք ..... 6*
*Կորակիթ ..... 6*
*Անդոկաբերդ ..... 12*
*Նակորզան ..... 20*
*Արտէն ..... 10*
*Նախջաւանիկ ..... 10*
*Արթիկ ..... 10*
*Թով ..... 8*
*– մյուս ..... 7*
*Աղահորդ ..... 10*
*Պահուբերդ ..... 7*
*Աժդակ ..... 12*
*Աթխույք ..... 12*
*Երվանդակերտ ..... 6*
*Վաժունիք ..... 8*
*Կռմեն ..... 6*

Սրանցից բացի նորագույն հարկացուցակում արձանագրված են նաեւ այլ գյուղերի անուններ. (Ա) Աճանանում, (Բ) Բարկուշատում, (Գ) Մաղանջում եւ (Դ) Չավնդուրում.

**Ա.** *Թիլիկանց*
*Հռոմանց*
*Խլաթաղ*
*Շրվենանց*
*Չորեր*
*Ղաթար*
*Հալիձոր*
*Խնկանց*
*Ըռստամանց*
*Քոլու*
*Վչքան*
*Գթկոմ*
*Սրհակ*
*Ըռակյահ*
*Բեջանիշեն*
*Թախսն*
*Մողես*
*Արջաձոր*
**Բ.** *Փակահան*
*Բերդիկ*
*Չափնի*
*Ըրկենանց*
*Սեւաքար*
*Երիցվանիկ*
*Սուսնակ*
*Կռմեն մյուս*
*Վքանանց*
*Խաչտափ*
*Ծավիկ*
*Աղնաթաս*
*Ղարիբանց*
*Խաթունքաղ*
*Ակադի*
*Փռոչանց*
*Կաշկառոտ*
*Խոտորանց*
**Գ.** *Երիցուքումբ*
*Պաշարաջուր*
*Հուռիտափ*
*Մազմէ*
*Սեթանց*
*Շինոխոռ*
*Գուշվրանց*
*Քոսաքարեր*
*Նոր գյուղ*
*Նակահդար*
**Դ.** *Նատիր*
*Ջավն*
*Սարաշեն*
*Քեղցահանդ*
*Քարագլուխ*
*Թոփ*
*Ակտուռն*
*Խորձոր*
*Տնկռնակերտ*
*Կարմրահողուտ*
*Հանդիքովշան*
*Անձանալի*
*Ջանալուշեն*
*Բրթելանց*
*Քոթանլար*
*Ղզլարաղաճ*

Հավանական է, որ Նոր ցուցակում բերված գյուղերից շատերը տարբեր լինեն Հին ցուցակում եղածներից, որովհետեւ պատճառ չկար, նաեւ հարմար էլ չէր հետագա դարերում, որ հին գյուղերը նոր հայ անուններ ստանային, ինչպես եւ հավանական է սրանցից շատերի փոփոխվելը թուրքերեն անուններին, այնպես որ հարյուր հիսուն հայանուն գյուղերից այժմ հազիվ թե տասնհինգը գտնվեն իրենց հայերեն անվանումներով՝ արձանագրված տեղագրական քարտեզում, ինչպես կտեսնենք առաջիկայում, թերեւս եւ հին շեներից շատերն ամայացել են եւ նորերը հաստատվել այլազգիների կողմից, որովհետեւ բազմաթիվ են օտարանուն գյուղերը Բարկուշատի եւ Հագարու ստորին հովտում, բայց թերեւս Չավնդուրի տարածքում արձանագրված որոշ գյուղեր պատշաճ են Կովսական գավառին:

Համաձայն բնական դիրքի՝ Բաղքը բաժանում ենք Արեւմտյանի, որ Աճանանն է եւ Արեւելյանի, որ Բարկուշատն է:

### Ա. Արեւմտյան Բաղք = Աճանան

109. Աղավնո գետի (Չավնդուրի) բարձրադիր ակունքներն արեւելակողմից շրջափակված են Տաթեւի վտակն անջրպետող լեռներով կամ Ղամպիլ բարձր լեռով եւ Թեփեսարով, հյուսիսից՝ Զեմ գետակի անջրպետով, ուր արձանագրված են Քյաքի լեռը եւ Պարտականլուն (՞), հարավից՝ Կապան գետի անջրպետով, որն ունի առանձին գագաթներ Մելիքդյուզով եւ Չիմեն դաղը, որոնցով, թվում է, այս կողմից սահմանավորված էին Բաղքը եւ Ձորքը, բայց նախկինում, թվում է, թե այս անջրպետներն ընդգրկված էին Բաղքի մեջ՝ բովանդակելով Գեղվաձորի տարածքը մինչեւ գետակի խառնվելը Կապան գետին, որի մոտ արձանագրված է Աջիլու գյուղը, եթե սա նույնը չէ Օջախլու գյուղի հետ, որ նույնն եմ համարում Աչաղուին: Առաջին գյուղն արձանագրված է Բաղքում համաձայն Հին ցուցակի, որ հիշվում է նաեւ «Պատմության» մեջ եւ նրա հետ նաեւ մի այլ գյուղ՝ Աչաղվա անունով(23), որոնք իբրեւ կալվածք տրված էին Վահանավանքին՝ Շեկք եւ Գետարավայր գյուղերով. առաջինը հարկացուցակում Շեքքս է գրված եւ արդեն կարգից հայտնի է, որ մոտիկ է Աչաղուին, երկրորդը, թվում է, թե արձանագրված է՝ Բարերվայրք՝ անմիջապես Շեկքին նախորդող: Բայց սրանցից եւ ոչ մեկը նշանակված չեմ տեսնում քարտեզում, նաեւ սրանցից ոչ անկարեւոր այս վիճակի անվանատուի՝ Աճանանի [անունը], որ Ցուցակում առաջին տեղն է գրավում Աչաղուից հետո, թե՛ անվամբ եւ թե՛ տուրքի քանակով պատշաճ էր, որ ունենար նաեւ քաղաքական առաջնություն: Այժմ թերեւս սրա տեղը զբաղեցնում է Շահարջիկ կամ Շհարջուկ (Քաղաքիկ) թուրքաբնակ մեծ գյուղը, որ Կապան գետի ձախ կողմում է: Սրանք դուրս են Չավնդուրի բնիկ հովտից: Ռաֆֆին («Դավիթ Բեկ» վեպում) Աչաղվա բերդը նույնն է համարում այժմ Ղրղալա կոչվածի հետ, որ կոնաձեւ քարաժայռի գագաթին է, գետի ձախ կողմում՝ մորենոներով շրջապատված, ուր կան աղյուսաշեն տների ավերակներ, արեւելքից եւ արեւմուտքից պարիսպների երկու դռներ, որոնցում կան անցքեր նետաձգության եւ ռմբաձգության համար: Այդ կողմերի բնակիչները պատմում են մի ծերունազարդ իշխանի (մելիք) այնտեղ եւ մեկ այլ տեղ նրա դստեր բնակվելու մասին, որի պատճառով այդ մասը կոչվում էր Ղըզղալայ (Աղջկաբերդ), հոր մահից հետո աղջիկը տեղափոխվում է մյուս բաժին եւ ապա հեռանում այլ վայր, բայց հետագա դարերում մոտակա բնակիչները մարտերի եւ վտանգի ժամանակ ապավինում էին այդ ամրոցին: Բերդի ստորոտին կա Օճաղլու [անունով] գյուղ՝ թուրքերի 20 տնով: Սրան կամ բերդին մոտիկ նշված է Բռաթումբ գյուղը, որ անծանոթ է գրականության մեջ, սակայն հիշատակված՝ մեր նորագույն գրողների կողմից(24):

Շհարջուկի հյուսիս-արեւելյան կողմում Արջաձորն է, ինչպես գրված է Տաթեւի թեմի երկու նորագույն ցուցակում. այժմ կոչվում է Առաջաձոր եւ աշխարհացույց քարտեզում Աճիզուր, որը մոտիկ է Պղնձահանքին: Սա բնակեցված է հայերով, որոնք ունեն հին եկեղեցի եւ զբաղված են հողի մշակությամբ, ոչխարաբուծությամբ: Հողը պտղաբեր է եւ ավելացած պտուղն ուղարկվում է Մեղրի եւ Նախճավան: Ունի նաեւ ընտիր ձեռագործ, որ կոչվում է Ղափանի կտավ: Երկրի մեծ մասը Մելիք-Ստեփանյան տոհմի սեփականությունն է, գյուղի մոտերքով անցնում է երկու վտակ՝ մեկը՝ հյուսիսով՝ Խլաթաղ գյուղի անունով, մյուսը՝ հարավով՝ Զալիհ գյոլ, մի հզոր գետակ էլ իջնում է արեւելյան կողմից, Թթասա՞ր (Դիվասա՞ր) լեռից եւ շատ հաճախ հորդանալով ողողում է այգիներն ու անդաստանները, բայց եւ օժանդակում է ջրաղացներին: Խլաթաղի բնակիչները հայ հողագործներ են, ունեն 35 տուն, փոքր եկեղեցի(25): Սրանից մի փոքր հեռու՝ հյուսիսակողմում, գետի նույն կողմով դեպի վեր կա Ախտախանա գյուղը, որ անծանոթ է ըստ ցուցակների, նույնպես սրանից վեր՝ դեպ հյուսիս Գարաճա կամ Գարաղաճ (գյուղերը): Սրանցից վերեւ՝ գետի ձախակողմում, ծայր հյուսիսում կա Տորթնի կամ որ նույնն է Տորթն (գյուղը) համաձայն ցուցակի: Եթե ստույգ է արձանագրված եկեղեցուն տրվող հարկի չափը, պետք է որ այն ժամանակ մեծ եւ ընդարձակ լիներ, քանզի 26 չափ (կամ կապիճ՝ աման) էր վճարում, որչափ եւ ոչ մի գյուղ չէր վճարում, բայց առավելագույնը՝ 20, թեպետ պատմության մեջ չի հիշատակված. եկեղեցին կոչվում է Ս. Հռիփսիմե: Սրանից մի փոքր հեռու՝ եկեղեցու հարավ-արեւելքում կա Դավրուսը, որ թերեւս Տափեարն է՝ կից Տորթնին՝ արձանագրված Հին ցուցակում. այն կոչվում է նաեւ Տափեարս, ըստ այլազգիների՝ նրան տված նոր ձեւի: Սրան մոտիկ՝ Տորթնի հարավային կողմում գտնվում է Հռոմանց-ը ոչ թե ըստ Հին, այլ ըստ Տաթեւի Նոր ցուցակի, ուր աշխարհացույցը նշանակում է մի ամրոց, որ մոտիկ է գետեզրին, ինչպես եւ նրանից արեւելք՝ մեկ կամ քիչ ավելի մղոն ներքեւ. գտնվում է Օխտարը՝ համաձայն աշխարհացույցի, որ թերեւս Հին ցուցակում հիշված Հողար-ն է, որին արեւելյան կողմից գրեթե կից է Սոպանլու-ն (՞): Հին ցուցակում Հողարին կից է Արուքս գյուղը, որը 871թ. Սյունիքի տեր Սահակի որդի Զեվանշիր իշխանը տվեց Սողոմոն եպիսկոպոսին եւ դրա փոխարեն վերցրեց եկեղեցուն պատկանող Բեխ գյուղը, որ Կովսական գավառում էր(26): Իր գործարքի մեջ նա գրում է, թե դա «հորիցս ու եղբայրներիցս ինձ կտակված ժառանգություն էր հասել եւ իմ սեփական կալվածքն էր, անվիճելի տեղ... Այժմ տնօրինողդ դուք եք, տեր Սողոմոն, վայելելու եւ ժառանգելու այդ Արուքս գյուղն իր սահմաններով՝ ամբողջովին, ծառերով ու այգիներով, գետով ու ցամաքով, արտերով եւ մարգերով, ջրաղացներով ու պարտեզներով, եկեղեցիով ու այլ շինություններով... Արուքսի սահմանները սրանք են. արեւելյան կողմից Կշմատուքն է սահմանակից, արեւմտյան կողմից Հմանդրախտն է նույն Ս. Խաչի սահմանը, հարավային կողմից [բաժանող գիծն անցնում է] հին Առվով մինչեւ Բեխի սահմանը, հյուսիսային կողմից Կավարտի (27) սահմանով է: Վերցրինք Բեխն իր սահմաններով եւ արքունի նեպակով ու տվեցինք Արուքսն իր սահմաններով եւ արքունի նեպակով, որը տասներկու դրամ է: Այս գործարքի վկաներն են Սյունյաց տեր Վասակը եւ իմ եղբայր Արումանը, իմ որդի Տիգրանը, Բաղքի տանուտերերը, Ս. Խաչի (Տաթեւի) սպասավորներ: Կնքեցինք մեր մատանիով»(28):

Քանի որ հայտնի է Կավարտի եւ Բեխի դիրքը, ուստի Արուքսն ընկնում է Չավնդուրի աջակողմում եւ, ինչպես երեւում է, նրանցից դուրս է եւ մոտիկ Կապան գետի ձորին:

Հանրածանոթ գյուղ է Խոտանանը՝ իր Ս. Սարգիս եկեղեցիով, որ Հողարից եւ Սոպանլուից մեկ մղոն հյուսիս է: Այս գյուղը նախ հիշվում է Տաթեւի սահմանագրության մեջ 9-րդ դարի վերջում: Հետո ասվում է, թե 943թ. Սյունյաց տեր Փիլիպեն գնել է խոտանանցիներից Աղվերծը (գյուղ Հաբանդում): Վայրը նվեր է դառնում՝ հետագայում Մովսես Բ կաթողիկոս ընծայելով (13 հունվ. 1630- 14 մայիս 1633), ով խառնակ ժամանակներից եւ իր նախորդների գործերից հետո 17-րդ դարի սկզբին եւ 16-րդ դարի վերջում հաջողությամբ կարգավորեց էջմիածնի աթոռի գործերը: Նրա աշակերտներից մեկը՝ Երեմիա Կարճավանցին նրա մասին գրում է նախքան կաթողիկոսանալը (1625-26 թթ.), երբ «փայլում էր մեր այս վարդապետը տեր Մովսես քաջ ռաբունին Սիսակի աշխարհից, երկրից, որ կոչվում է Աճանան, Խոտանան գյուղից, Եվստաթեոսի աթոռից, որ այժմ Տաթեւ է կոչվում, որը լուսավորում է հայկազյան ազգը: Եվ ժողովելով կրոնավորական դասեր՝ նորոգեց վանքերը եւ անապատները, կրկին հաստատելով պայծառացրեց»: Եվ ապա պատմում է նրա՝ Երեւան գնալը, այնտեղ վանքեր եւ դպրոց հաստատելը Ս. Անանիային կից: Ճոռոմաբան Զաքարիա Վաղարշապատեցին՝ նրա աշակերտը, բազում գովաբանությամբ գրում է. «Տիեզերահռչակ երկրորդ լուսատու հայոց եւ վերստին նորոգող Ս. էջմիածնի... կրթված, վարժված բուն առաքինության մեջ, Սրապիոն Եդեսացու ձեռքի տակ» եւ այլն: Զաքարիայի հետ նրան աշակերտեցին նշանավոր վարդապետներ՝ Փիլիպոս հաջորդ կաթողիկոսը(29), Արիստակես Շամբեցին, Խաչատուր Կեսարացին, Իսրայել Մեղրեցին, հիշյալ Երեմիան եւ ուրիշներ, որոնց անվանապես հիշատակում է Առաքել պատմիչը՝ երկար եւ ոճավոր խոսքերով գրելով Մովսեսի մասին (ԻԴ գլխում)(30): Եվ բոլոր նրան հիշատակողները չեն կարող առանց գովասանքի գրել: Նրա կարեւոր գործերն են՝ էջմիածնի նորոգությունից հետո նրա ջանքը եւ հաջող գործունեությունն էր իր նախորդների վրա կուտակված պարտքերը մարելը, ինչպես ժամանակին խորհրդատու էր դարձել Երուսաղեմի աթոռի պարտքերի [հետ կապված], ժամասացության մեջ քաղվածո շարականների կարգավորումը, Երեւանում Ս. Անանիային (կից) դպրոցների եւ կրթարանի հաստատումը, մոմը մաքրելու եւ ճերմակեցնելու արվեստը, որի համար կանչվեց ու մեծարվեց Շահ Աբասի կողմից: Հիշվում է նաեւ նրա նամակը լեհերի Վլադիսլավ արքային (30 օգոստ. 1632), նրա իշխանության տակ գտնվող հայերին խնամք տանելու վերաբերյալ(31):

Բարկուշատի խանը Խոտանանի սահմանին բախվեց Դավիթ Բեկի զորապետ Մխիթարին 1724թ., երբ սա վերադառնում էր Հաբանդի կողմերում թուրքերի կոտորածից(32): Եվ քանի որ այն ժամանակ գժտված էր Դավթի հետ, թույլ էր կռվում եւ ընկերներով նահանջեց, որի պատճառով հայ քաջերից ոչ քչերն ընկան մարտում, եւ գերեվարվեց Ստեփանոս Շահումյանը, ով այս դեպքերի պատմողն է(33), ով եւ մի թուրքի բարյացակամությամբ փրկվեց: Ընկածների մեջ էր նաեւ Բալի զորավարը՝ Մելիք Փարսադանի որդին, ով վիզը «կիսով չափ հատված՝ ընկած էր Խոտանանին մոտիկ մի վայրում, ուստի մի փոքր ժամանակ անց ուշքի գալով, ձեռքերով գլուխն իր վրա պահելով, գնում մտնում է մացառուտների մեջ մինչեւ գիշերվա մութը եւ գիշերը ճանապարհ ընկնելով գալիս եւ երեք օրից հասնում է Հալիձոր, եւ բոլոր տեսնողներին դա զարմանք պատճառեց, որովհետեւ չմեռավ, այլ կենդանի է մինչեւ օրս եւ Հալիձորի մելիքն է»(34):

Եպիսկոպոսարանին հարկատու գյուղերի Հին ցուցակում Խոտանանից անմիջապես հետո հիշված է Եղինգն գյուղը, որ ըստ տուրքի չափի գուշակելի է, թե մեծ չէր. չգիտեմ՝ այժմ կա՞ այդ անունը կամ գյուղի տեղը, սակայն այստեղ

## 1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

# ԿԱՊԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

հիշեցի այն պատճառով, որ այն հիշատակված է 1616թ. (ՌԿԴ) Զաքարիա երեցի որդի Մինաս քահանայի՝ Հարանց Վարք ընդօրինակողի կողմից. «այն վայրում, որը գրվեց, Էճանանի երկրում, Եղինգյան գյուղում, Ս. Առաքյալի Եվստաթեի ուխտի մեջ», որտեղ այն ժամանակ րաբունապետ էր Մովսես վարդապետը՝ վերոհիշյալ կաթողիկոսը:

110. Խոտանանից մեկ մղոն հյուսիս-արեւելք արձանագրված է մի գյուղ ինձ համար կասկածելի Դայմա-Դաղա անվամբ, եւ սրանից հարավ-արեւելք մեկ մղոն ներքեւ մի գետի վտակի երկայնքով լեռան ստորոտում՝ Սեւաքար, որ չի հիշված Հին ցուցակում, այլ՝ հետագայում, եւ նրա պտուղը, այսինքն՝ տուրքը Տաթեւի աթոռին 6 մարգպան է, եկեղեցին Ս. Աստվածածնի անունով է: Արեւելքից հարավ նրան մոտիկ է Չափնի կամ Չափնիս գյուղը Ս. Գեւորգ եկեղեցիով, նույնպես Նոր ցուցակում սրանք նշանակված են իբրեւ Քաշունյաց կամ Բարկուշատի գյուղեր: Դավիթ Բեկի ժամանակ հայերի՝ ընդդեմ այլազգիների [մղած] պայքարի սկզբում Մանիչարի որդի Սափի Ղուլի հորջորջվածը, որ իշխում էր Լեվազի եւ Մեղրու կողմերում, 300 սպառազինյալով եկել բանակել էր Չափնիում եւ սպասում էր այլ գնդերի հավաքվելուն, ինչը տեսնելով Թորոս զորավարը, ով նստում էր Խորձորում, գիշերը 500 հոգով հարձակվեց [նրանց վրա], որից «զարհուրած Սափի Ղուլին փախավ, եւ Թորոսը հետապնդելով՝ նրանցից 80 հոգու սպանեց: Եվ այն ժամանակ հարվածեցին ու կոտորեցին թուրքերի երեք գյուղ եւ առան նրանց ամբողջ ունեցվածքն ու վերադարձան Մանլեվ» (35):

Չափնիից դեպ հյուսիս-արեւելք՝ կես փարսախ հեռու Գելաքլու գյուղն է, որ թվում է՝ Հին ցուցակի Գեղաքունին է, ունի անտառախիտ ծործորներ: Ավելի ուշ հիշվածների մեջ հարավ-արեւմուտքի եւ Չավնդուր գետի արանքում արձանագրված են Մաղրիլ, Շորդարա, Խալաջ (Խմա՞յճ), Չինարլու եւ այլ իջեւանատուն-ամրոցները:

Ստորին մասում՝ Կապան եւ Չավնդուր գետերի խառնման կետում՝ սրա ձախակողմում, ավելի մեծ ամրոցներ կան. Սեիդլար կամ Սեյիդար, Բայդա՞ղ, Ղարաչիման, Զառիգյան եւ այլք: Կես փարսախ գետի երկայնքով ի վեր Հողարի արեւմտյան մասում կա Նորաշեն գյուղը, որ Նորաշենիկ անվանված երկու գյուղից մեկն է Հին ցուցակում՝ իր Ս. Ամենափրկիչ եկեղեցիով: Նորաշենից երկու մղոն հարավ՝ գետի այն կողմում՝ աջից կա Բաղքի եւս մի գյուղ ըստ Հին ցուցակի՝ Կավարտը, որ տեսանք վերին Արուքսի սահմանները նկարագրելիս, գտնվում է նրա հյուսիսակողմում, ունի եկեղեցի Ս. Գեւորգ անունով: Կես եւ կամ մի փոքր ավելի մղոն հեռու՝ Կավարտի հարավակողմից 860 ոտնաչափ բարձր Ղաթար հայանուն գյուղն է, որ չի հիշված ցուցակներում եւ պատմության մեջ, այլ միայն՝ Կատարո վանք: 1890թ. մայիսի վերջին կաթոլիկ մարդաբան Շանդրն այս գյուղում կատարեց մարդաբանական քննություն: Գյուղի սահմանին, ինչպես եւ Կավարտում, հայտնաբերված է Պղնձահանքը, ինչը որոշ հույների եւ ագուլեցի հայերի կալվածքն է: Այստեղ կան հալոցներ, զտելու քուրաներ, որի պատճառով գյուղը բարգավաճել է իր սահմանակից բնակավայրերով, որոնք միաբանվելով 1891-ի սկզբին մեծագումար դրամ հանգանակեցին դպրոցներ հաստատելու համար: Պղնձահանքի մի հարուստ, ով հալոցներ հաստատեց, Նազարբեկյանցն է, ով ուսանել էր Ֆրայբուրգում: Պղինձն առատ է, չհալվածը մոտ 56%, շուրջ 20.000 փութ [320.000 կգ] տարեկան արդյունահանում, տեղում 1 փութը վաճառվում է 11 ռուբլով, մի մասն առաքվում է Շամախի եւ մեծ մասը՝ Մոսկվա: Սակայն փայտի եւ վառելանյութի պակասը գործը դժվարացնում է ոչ քիչ. փայտածուխի 1 իշաբեռն արժե 2 ռուբլի, իսկ գործավորների օրավարձը 60-80 կոպեկ է: Այս տվյալներն ըստ Ռադդեի է, ով քննեց այդ վայրը (11-12 հունիս, 1890թ.), համարյա նույն օրերին, ինչ Շանդրը:



Լուսանկարը՝ Ա. Նավասարդյանի

Լուսանկարը՝ Ա. Նավասարդյանի

**Բեխ գյուղն այսօր:**

Սրա հարավում, Չավնդուրի եւ Կապանի ձորերի անջրպետված լեռների թիկունքում է եւս մի վանք՝ Նորավանք անունով: Քանզի Սյունյաց պատմիչը վկայում է, որ Սիսական տոհմից Ստեփանոս քահանան 10-րդ դարի կեսերին Հովհաննես Սյունյաց եպիսկոպոսից ձեռնադրվելուց հետո «Փափագելով աստվածային մի գործ կատարել՝ կամեցավ եկեղեցի շինել եւ այնտեղ կրոնավորների միաբանություն ու սպասավորների դասեր հաստատել, չէ՞ որ ով առաջնորդություն է ստանում, անընդհատ զորանում է եւ Աստծուն ու հրեշտակներին է երեւում Սիոնում: Ապա գնալով Կատարի վանքի հակառակ կողմը՝ մի շատ գեղեցիկ ու վայելուչ տեղ է գտնում երկու ձորի միջեւ հարթ [մակերեսով] մի լեռնաբազկի վրա եւ Հրահատ իշխանի օժանդակությամբ եկեղեցի է կառուցում: Ավարտում է այն եւ [ավելացնում] եկեղեցական գավիթներ, սրահներ ու կրոնավորների բնակարաններ: Նավակատիքի է հրավիրում Սյունյաց տեր Հակոբ եպիսկոպոսին: Դա սահմանում է միաբանություն, շրջակա բոլոր վանքերն էլ կալվածք [հատկացնում] եկեղեցուն: Վանքի դիմաց հիմնում են բորոտանոցներ ու այնտեղ հավաքելով բազմաթիվ բորոտների՝ դարմանում էին: Եվ այսպես ամեն տեսակ հարմարանքներով եւ կարգ ու կանոնի հաստատումով վանքը ծաղկեցրեց հայոց երեք հարյուր ութսունհինգ թվականին(36): Ինքը՝ երանելի, մարդկանց մեջ անհամեմատելի Ստեփանոսն էլ, առաքինաբան վարքով շատ տարիներ ապրելով ու հրեշտակակրոն առաքինությամբ... երկնաքաղաքացի այրը գնաց իր քաղաքապետ Քրիստոսի մոտ հայոց չորս հարյուր տասնհինգ թվականին(37), նավասարդ ամսի 17-ին, հինգշաբթի օրը, սուրբ Հոգեգալուստին: Թաղվեց սուրբ եկեղեցու մոտի գերեզմանոցում: Այնուհետեւ Նորավանքի միաբանության առաջնորդությունը ստանձնեց հայր Հրահատը եւ նրանից հետո(38) նույն Ստեփանոսի եղբորորդի Քրիստափորը՝ այդ սուրբ հոր աշակերտը՝ ամբողջապես նմանվելով իր ուսուցչին:

Բայց կարճ ժամանակ անց հայր Գեւորգի ու Հովհաննես քահանայի կողմից «այնտեղ կառուցվեց [նոր] եկեղեցի՝ շատ գեղեցիկ հորինվածքով, դռանն էլ՝ զարմանալի կամարներ՝ սքանչելի վարպետների ձեռքով հարմարեցված մեծ վեմերով եւ խարսխավոր սյուներով»(39): Հայր Գեւորգի եւ Հովհաննես քահանայի ժամանակը հիշված չէ, բայց հավանաբար 11-րդ դարն է(40): Սակայն երկբայելի է վանքի տեղավայրը(41), որովհետեւ «Պատմության» խորագրում այս Նորավանքի համար ասված է «Բղենո գավառում» եւ ոչ մի տեղ հիշված չէ այս գավառի անունը, այլ՝ մի գյուղ Հաբանդ գավառում, եւ Բղենո բերդ, որի գավառը նշված չէ: Բղենը հիշվում է [Պատմության] տարբեր տեղերում, սակայն, թվում է, նրանք մի վայրում չեն, որովհետեւ Բղենո ջուրը թվում է ավելի հարավ է, քան տեղագրված վայրը, իսկ Չագեձորի ջուրը, որ Ծղուկի եւ Հաբանդի միջասահմանում է, իրեն մոտիկ է ցույց տալիս նաեւ Բղենին Բորոտնի հետ միասին, ըստ որում զույգ է հիշված նաեւ այլուր: Եվ Բորտին Այլախում է, այսինքն՝ արեւելյան Ծղուկում, որ իբրեւ գլխավոր վայր կամ ընդարձակ սահման, Զաքարյանները խլեցին այլազգիների ձեռքից եւ ապա գրավեց Սմբատ Օրբելյանը: Պատշաճ է կարծել, որ ոչ թե մի, այլ երկու Բղենոներ են եղել, ինչպես որ Սյունիքի տարբեր գավառներում շատ են համանուն գյուղերը, նաեւ միեւնույն գավառում [կարող էին համանուն գյուղեր լինել]:

Ժամանակին եւ պատեհ առիթին թողնելով սրանք պարզելը՝ փնտրենք մյուս անվանի վանքը, որի տեղը նույնպես որոշված չէ եւ նշանակված չէ քարտեզում, այլ հավանաբար գտնվում է Բաղքի ցարդ տեղագրված մասի հարավ-արեւմտյան կողմում, Կապան գետի հովտի մի տեղում, եւ կոչվել է Տանձափարախ, որ չի նշված Տաթեւի թեմի ցուցակում եւ ոչ էլ քարտեզում, այլ նախ հիշվում է 10-րդ դարասկզբին Վահանավանքի շինության [առիթով]. սա շատ հեռու չէ Բաղաբերդի լեռան ստորոտից, որի առջեւ գտնվում էր Տանձափարախը՝ նրանից բաժանված լինելով մեկ լեռով, ձորով եւ գետով, այլեւ Աչաղու, Աչաղվա, Գետարավայր եւ Շեկք գյուղերով: Այն «Սուրբ առաքինարան» է անվանում պատմիչը, միայնակյացներին՝ խարազնազգեստ եւ սակավապետ, ուր մի որոշ ժամանակ ճգնավորաբար գտնվեց Բաղքի Չագիկ իշխանի որդի Վահանը՝ հրաժարվելով աշխարհից(42): Շատ դարեր հետո 1393թ. Գրիգոր Տաթեւացու աշակերտ Մատթեոս վարդապետն այստեղ գրում էր իր քաղվածո Քարոզագիրքը Եվագրի եւ Նեղոսի երկերի մեկտեղումով(43), ինչպես ասում են «Տանձափարախի խորին անապատում, որի մեջ նստած ենք լռությամբ»: Չգիտեմ՝ նրանից առաջ, թե հետո, մեկն ընդօրինակում է մեկ այլ մատյան՝ «Խնկանց գյուղում Տանձափարախ կոչված այս սուրբ անապատում՝ առաջնորդությամբ սուրբ մենաստանիս՝ տեր Մովսեսի, ով վարդապետական գավազանով եւ բարձրագահ իշխանությամբ հովվում է մեր ժողովրդին»: Ճգնական կյանքի վերանորոգության ժամանակ 17-րդ դարի սկզբին Արիստակես վարդապետ Բարկուշատեցին այստեղ կառուցում է անապատ, պարզ է՝ հնից տարբեր, կամ հիմնավորապես նորոգելով «եւ այնտեղ մնում մինչեւ իր կյանքի վերջը եւ այնտեղ էլ թաղվում, եւ այդ վանքը մնում է հաստատուն մինչեւ այսօր»: Խնկանց գյուղը, որ հեռու է Տանձափարախի վանքից, Նոր ցուցակում դասվում է Աճանանի գյուղերի շարքը: Այս նույն կողմում պետք է լինեն եւ այլ որոշ գյուղեր, որ Հին ցուցակում արձանագրված են Բաղքում եւ Նոր ցուցակում Աճանանի մեջ, որոնցից շուրջ հիսունը տակավին դուրս է տեղագրությունից եւ նշանակված չէ քարտեզում: Եվ քանի որ շատ ընդարձակ չէ Բաղաց արեւմտյան սահմանը, թվում է, թե բազմաբնակ շինությունները խիտ էին եւ իրարից հեռու չէին, եւ պետք է այսպես լիներ Բաղաց փոքրածավալ թագավորության մեջ տեղավորելու համար 1000 կամ 1400 գյուղ:

### բ. Արեւելյան Բաղք = Քաշունիք = Բարկուշատ

111. Համաձայն Հին ցուցակի՝ Քաշունյաց կամ Մյուս Բաղաց գյուղերի մեջ առաջինը Երեցն է, ինչն օրինակներից մեկում Երեն է, որ համարում եմ սխալ, որովհետեւ հավանաբար այսպես էր կոչվել Երիցակ վանահոր, իսկ հետո Սյունյաց եպիսկոպոսի անունով, ով այնտեղ կառուցեց Երիցու վանքի հռչակավոր մենաստանը, որից եւ գյուղը Երիցվանիկ է [հորջորջվել](44), բայց այժմ նաեւ՝ Կարմիր վանք: Ելնելով պատմիչի նկարագրությունից եւ գյուղերի կարգից եւ լեռան Վանք անունից՝ ենթադրվում է, թե երկու Բաղքերի սահմանամիջում էր, Սեւաքար գյուղից երկու մղոն հյուսիս-արեւելք եւ նույնքան էլ Զեւուից հարավ: Հետագաների համար մնալով առանց այցելության եւ անծանոթ՝ պատմիչին երախտապարտ ենք նաեւ նրա համար, որ սրա դիրքի մասին ասում է. «Այնտեղի վանքը գեղեցիկ էր, զարմանալի տեսքով. եկեղեցին

Շարունակությունը՝ էջ 70

**1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ**

**ԿԱՊԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

# ՍԻՍԱԿԱՆ

## Հատված Ղեւոնդ Ալիշանի համանուն կոթողային գրքից

**Սկիզբը՝ էջ 69**

մի բարձրադիր տեղում էր՝ կառուցված նույն Երիցակի ձեռքով՝ Սուրբ Նախավկայի անվամբ, պարսպապատված մեծամեծ քարերով, պարիսպներից ներս կար շուրջ քառասուն խցիկ՝ քուրձ հագնող լռակյաց մշտական ճգնավորներով, որոնք, ինչպես մշտավառ եւ անշեջ կանթեղներ՝ յուրաքանչյուրն իր հյուղի մեջ, անընդհատ տքնությամբ վառվում էին հոգու շնորհների բոցով:

Այս Երիցակը նախ՝ երկար տարիներ ապրել էր Բաղք (5-րդ դարի երկրորդ կես) գավառում, մի քարանձավ տեղում, ապա՝ գնացել էր երանելի Գյուտի վանքը եւ այնտեղ անտանելի ճգնությամբ անցկացրել շատ օրեր: Այնուհետեւ սուրբ տեր Գյուտի օժանդակությամբ ու հրամանով գալով այդտեղ՝ տասներկու կրոնավորով ու հայր Գյուտի պարգեւած բազմաթիվ ունեցվածքներով, շինեց եկեղեցին, որը կոչվեց Նոր Երուսաղեմ: Բայց բորոտները, որ ժամանակին քշվում էին անբնակ տեղեր, հայր Գյուտի կողմից բնակեցվել էին այդ վայրում: Նրանք դիմադրում էին Երիցակի շինարարությանը: Սուրբ հայրն այդ լսելով՝ եկավ, նրանց համոզեց, որ խաղաղվեն, եւ սահմանեց համապատասխան չափով վանքից [նրանց] կարիքները [հոգալու հնարավորություն] ընծեռել: Ինքն էլ օրըստօրե մասնակցում էր շինարարությանը եւ կառուցողներին ճաշ էր ուղարկում: Եվ [Երիցակն] այսպես շինելով Աստծո տուն եւ կանգնեցնելով փառաբանության տեղ՝ այն հարմարեցնում է հրեշտակակրոն մարդկանց բնակության համար»(45): Սյունյաց Մուշեղ եպիսկոպոսի մահից հետո (մոտ 519թ.) Սահակիա աշխարհատիկինը բովանդակ ժողովրդով հրավիրելով հայոց համանուն կաթողիկոս տեր Մուշեղին՝ նրանից իր աշխարհի համար եպիսկոպոս խնդրեց [ձեռնադրել] այս Երիցակին, ով [սակայն] հանձն չառավ, որի պատճառով պատգամավորներից հետո կաթողիկոսն ինքը եկավ մտավ «նրա սրահը եւ բարկությամբ լցված ու զայրացնելով խաչակնքում է եւ ասում. «Ինչո՞ւ ես այդպես համառած մնում, քո մեջ դեւ կա, Աստված թող սաստի ու հալածի չարին»: Այն ժամանակ սրբի խոսքից թանձր ծուխ բարձրացավ որպես փոթորիկ եւ շենքից վերացավ: Ապա եկան սպիտակ աղավնիների երամներ, իջան սրահի տանիքին: Եվ աղավնիներից մեկը սլանալով եկավ, իջավ կաթողիկոսի վրա, նրա վրայից էլ բարձրանալով՝ իջավ Երիցակի վրա ու շրջում էր նրա խոշոր կնգուղի վրա, բարակ ձայնով մարդու պես ասում. «Արժանի է, արժանի է»: Իսկ բազմությունն այդ տեսնելով միաբերան ուժեղ ձայնով գոչում էր. «Արժանի է, արժանի է»: Սուրբ հայրն այս տեսնելով էլ չհամարձակվեց հակաճառել, այլ ծնկի գալով կաթողիկոսի առջեւ՝ արտասվաթոր աղերսանքով ասաց. «Թող լինի քո՝ տիրոջդ կամքը եւ ոչ թե իմը»: Ապա կաթողիկոսը, նրա ձեռքից բռնած, տանում է եկեղեցին եւ հանելով բեմի վրա՝ օծում Սյունիքի մետրոպոլիտ(46) ու բերում, նստեցնում է աթոռին... Իսկ երանելի Երիցակը, աթոռին մնալով մեկ տարի, փոխադրվում է վերին Երուսաղեմ»(47): Այս մենաստանը հիշվում է նաեւ Սյունիքի նոր իշխանների փարթամության օրերին՝ 843թ., երբ նրա վանահայրը Ահարոնն էր: Իսկ 9-րդ դարավերջին [հիշվում է] Գեւորգ Սիսականին՝ ազնվատոհմիկ մի երիտասարդ, որ փափագ ունենալով ներանձնական կյանքի՝ թողնելով կնոջն ու ծնողներին, երկրորդ անգամ խույս տվեց [աշխարհային կյանքից] եւ «հագնելով մազեղեն կոպիտ ու պատառոտուն քուրձերը՝ գնաց Երիցավանքի մեծ առաքինարանն աստվածակիր ու սրբափայլ, մեծ կառավարիչ Թեոդորոս քահանայի մոտ, ով չափազանց ուրախությամբ ընդունեց նրան: Իսկ մայրն ու կինը, իմանալով եւ վերցնելով Սյունյաց ազգակից իշխաններին, դիմեցին դեպի Երիցավանք, բազում ու զանազան խնդրանքներով ջանացին [վերադարձնել], բայց չկարողացան նրա համառությունը կոտրել: Ապա իմանալով Քրիստոսի հանդեպ ունեցած անխախտելի սերը՝ նրան թողեցին իր կամքին ու գնացին»(48): Հետո նա գնալով Սեւան՝ մեծ ճգնավոր հայր Մաշտոցի մոտ եւ կրթվելով նրանից, վերադարձավ Երիցավանք, իսկ մյուս անգամ գնալով եւ նրանից գիր վերցնելով՝ Գեւորգ կաթողիկոսի հրամանով քահանա ձեռնադրվեց, եւ մխիթարվում էր Մաշտոցի նամակներով: Եվ նրա վախճանից հետո «բերում է այդ երանելու շուրջառը, խույրակերպ կնգուղը եւ պարեգոտը որպես նշան Սյունիքի համար: Ինքն էլ Թեոդորոսի հետ հրեշտակակրոն վարքով բնակվում է Երիցավանքում: Այնտեղ էլ վախճանվում է, եւ նրա սրբասուն մարմինը թաղվում է երիցս երանելի սուրբ հայր Երիցակի մոտ՝ նույն սրբարանում»: Սյունիքի պատմության մեջ Երիցավանքը դասվում է այդ աշխարհի նշանավոր վանքերի, ինչպես նաեւ հարատեւ պաշտամունք կատարող խստակրոն վանականության կարգին: Գյուղը գտնվում է վանքի լեռան արեւմտյան ստորոտին:

Դավիթ Բեկի ժամանակ գյուղի մելիք Ֆռանգյուլն անհավատարիմ գտնվեց ազգակիցներին ու հավատին եւ, դաշնակցելով Բարկուշատի Փաթ Ալի խանին, մարտի ժամանակ նենգությամբ կոտորել տվեց հայոց զորքին, ուր սպանվեց քաջ զորավար Թորոս իշխանը, ով Չավնդուրի կողմերից էր: Քիչ անց Մխիթար զորավարը՝ հասնելով այս գյուղի կողմերը, հարձակվեց Բարկուշատի վրանաբնակ թուրքերի վրա, ավարի ենթարկեց նրանց ունեցվածքը եւ անասունները: Դեպքերի պատմիչն ասում է, որ գյուղը կոչվում էր նաեւ Կարմիր վանք, իսկ Երիցավանքի եկեղեցին այժմ կոչվում է Ս. Աստվածածնի անունով: Գյուղից դուրս գտնվում է գերեզմանատունը եւ մի փոքր հեռու. առանձին մի կաղնու տակ ցույց են տալիս ուրացող Ֆռանգյուլի գերեզմանը, եւ մինչեւ օրս Վասակի հետ նրա հետեւից նզովք են նետում:

Գետակի գլխին՝ հարավից, որ վերն արեւելյան Բաղքի մեջ հիշեցինք, ինչը մոտիկ է Չավնդուրին, արձանագրված է Սիրքեադա՞զ գյուղը: Սա հայտնի չէ, թե ինչ էր հնում, բայց ստույգ է, որ նրան արեւելյան կողմից մոտիկ է Աղահորդը(49)՝ Ս. Աստվածածին եկեղեցով: Վերոհիշյալ պատերազմն այստեղ մղեց Փաթ Ալի խանն ընդդեմ Թորոս զորավարի, ով Ֆռանգյուլի խաբեությամբ գալով «ինքն եւ իր բովանդակ զորքը բանակ դրեց այնտեղ: Եվ նրան մոտեցավ Ֆռանգյուլն իր երկու հազարով եւ կանգնեց Թորոսի մի կողմում, այնտեղ հասան նաեւ Փաթ Ալի սուլթանը եւ նրա եղբայր Աղասի խանը՝ բազում զորքերով՝ Թորոսի [զորքից] կրկնապատիկ, եռապատիկ ավելի զորքով՝ շուրջ տասնութ հազարով: Եվ երբ սուլթանի զորքն ու Թորոսի զորքը բախվեցին, սուլթանի զորքը փախուստի դիմեց, եւ նրանք հետապնդում էին նրանց, անօրեն Ֆռանգյուլը մարդիկ ուղարկեց սուլթանի մոտ եւ ասաց. «Ի՞նչ եք անում, ինչո՞ւ եք փախչում, շրջվեք, որովհետեւ, ահա, ես ձեզ հետ եմ. դուք առջեւից, իսկ ես նրանց հետեւից, խորտակենք սրանց»: Եվ այնպես արեցին ու պաշարեցին Թորոսի զորքը հետեւից եւ առջեւից ու սկսեցին կոտորել, եւ սպանեցին Թորոսին, եւ նրանից միայն հազար չորս հարյուր մարդ փրկվեց ու հասավ Չավնդուր, իսկ մնացյալ բոլորն ընկան այնտեղ»(50): Փաթ Ալին մտածում էր նրանց հետապնդել եւ մտնել Չավնդուր, բայց լսելով, որ Նուբար եւ Պապ զորավարները զորք են հավաքում իր դեմ, վերադարձավ:

Աղահորդից հարավ՝ մեկ մղոն հեռու, գետեզրին կա Ագարակ գյուղը, որ ըստ Հին ցուցակի՝ արեւմտյան Բաղաց բաժնում է: Սրանից նույնքան հեռու արեւելքից հարավ գետեզերքին արձանագրված է ամրոց իջեւանատուն Էմազդո՞ւն, գետակի մոտ նույնպիսի երկու տեղեր էլ կան, ինչպես Ալադինը, թերեւս՝ Արտենը՝ համաձայն Հին ցուցակի, նաեւ՝ Քեասլուն, Համզալուն, Գարագոյունլուն:

Բարկուշատի գետահովտի աջ կողմում մյուս գետակի վերնակողմում արձանագրված է Փառիջան ամուր գյուղը, որ հիշված չէ Տաթեւի թեմի հարկացուցակում: Նրանից հարավ Սալդաշ իջեւանատունն է, սրա վերջում՝ Չարիլին, որոնցից հարավ եւ մղոն ու կես դեպ հյուսիս Աղահորդից Վժանիս կամ Վաժունիք [գյուղն է], ըստ Հին ցուցակի: Սրանց հարավային ծայրամասում՝ գետեզերքին, արձանագրված է մի ամրոց-իջեւանատուն Բոյնաքեա՞ր անունով:

112. Այսքան քիչ տեղեր են արձանագրված աշխարհացույց քարտեզում, եւ քանի որ անհավանական է, որ երկու գետակի ձորահովտում տեղավորվեն Քաշունիքի շուրջ վաթսուն գյուղերը, ուստի հնարավոր է, որ դրանք սփռված լինեն Բարկուշատ գետի երկու կողմում, որի պատճառով եւ սրա անունով էին կոչում արեւմտյան Բաղքը, եւ գետն էլ գավառի մեծագույն գյուղի անունով Բարկուշատ էր [կոչվում] ըստ Հին ցուցակի, որը հետագա դարերում այլազգիների տիրապետության ժամանակ եղել է իշխանանիստ, ուր եւ վերոհիշյալ Փաթ Ալին էր նստում: Սակայն սրա դիրքն արձանագրված չէ. հավանաբար եղել է գետեզերքին եւ հնում ունեցել է հզոր ամրոց, որը Սյունյաց աշխարհի նշանավոր [վայրերից] էր: Սրանց պատշաճ է թվում երկարաձիգ Զեմի-չայ կոչված նեղ ձորագետը, որ Հաբանդի հարավից է՝ մասն կազմելով Քաշունյաց, որովհետեւ համաձայն Նոր ցուցակի այնտեղ քարտեզի վրա արձանագրված է Բերդիկ կոչված վայրը. այժմ այդ անունով մի փոքրիկ լեռ է ճանաչվում: Դարձյալ, ինձ թվում է, թե այս ձորագետին մոտ է եղել Մաճ գյուղն ըստ Հին ցուցակի, որ Սյունիքի նոր նահապետ Վասակի որդի Ատրներսեհը վաճառել էր իր քրոջ ամուսնուն՝ Հրահատ իշխանին, եւ քանի որ որդի չունեին, Քուպղիդուխտ տիկինն իր ծերության ժամանակ 867թ. նվիրեց Տաթեւի եկեղեցուն տեր Սողոմոն եպիսկոպոսի ձեռքով՝ գրելով նվիրատվության գիր, ուր ասում է. «Ես՝ Քուպղիդուխտս, այդ շենն իր լեռներով, դաշտով, մարգով, արտով, ջրով, ցամաքով, ծառերով եւ տունկերով նվիրեցի Ս. Խաչիդ եւ տեր Սողոմոն Սյունյաց եպիսկոպոսին: Ես իմ հոգին քեզ եմ վստահում, արդ իրավունք ունես դու՝ տեր Սողոմոն եւ քեզանից հետո եկող Սյունյաց աթոռի սրբությանց հաջորդները՝ եպիսկոպոսները վայելել այդ շենն ամբողջապես իր սահմաններով մինչեւ հավիտյանս ժամանակների... Եվ գրեցի Հայոց 316 (867) թվականին վկայությամբ իմ եղբորորդիների՝ տեր Վասակի, տեր Աշոտի, տեր Գրիգորի, տեր Սահակի եւ իրենց ազատների եւ բոլոր շնհերցիների...»(51): Մաճին մոտ կամ նրան կից ձորահովտում ինձ թվում է՝ կա Տանձավայր գյուղը, որ հետագաների կողմից Տանձավեր է կոչվում, եւ Խողվանին, որ Տաթեւի թեմի Նոր ցուցակը նույնացնում է Մեզրե Մալդաշ գյուղի հետ, իսկ հնում նրա առանձին վիճակը մատնանիշ արվելով՝ անվանվել է Վանանդաձոր՝ Վանանդ գյուղի անունով, որը նույնպես ըստ կարգի համարվում է Տանձավայրին մոտիկ, իսկ 11-րդ դարավերջին Սենեքերիմի թագավորության ժամանակ՝ «Խողվանի գյուղ Վանանդաձորում», որ նրա բարեպաշտ տերերն իբրեւ կալվածք տվեցին Տաթեւի եկեղեցուն, Մաղանջուխը (որ Մաղանջն է) Տանձավերի սեփական վիճակ կամ գավառ է անվանում Դավրիժի եւ Ազիզի որդի ոմն Դավիթ եպիսկոպոսի աշակերտ Խաչատուր քահանան 1619թ.(52), որպես գրիչ մի Ավետարանի՝ գրված բարեպաշտ Խանի տիկնոջ եւ նրա ամուսին Խոջաջանի խնդրանքով, ուր եկեղեցին անվանում է Ս.Ստեփանոս, իր խոսքի մեջ հիշատակում է, թե այն ժամանակ Տաթեւի երջանիկ ռաբունապետը տեր Մովսեսն էր (կաթողիկոս)՝ «նմանվելով անհաղթ եւ քաջ քերթող սուրբ Մովսեսին»:

Բարկուշատի ստորին գետահովտի արեւմտակողմը լեռնային է, այլեւս անհարթ եւ անտառային է թվում է, թե չի ենթարկվել մշակության, բայց բազում մանր բերդեր կան լեռան լանջերին եւ գագաթներին: Չախակողմը (արեւելյանը) թվում է՝ ավելի հարթ է, սակայն ոչ շատ դալարավետ: Ստույգ չիմանալով այս վայրերի որպիսին լինելը՝ գյուղերն ու բերդերն արձանագրեցի ըստ աշխարհացույց տախտակի՝ սկսելով Հյուսեին-քեոփրու կամրջից եւ գետով իջնելով դեպ հարավ: Գետի ձախակողմյան առաջին բերդիկը Պապայլուն կամ Պեվայլուն է, որին հանդիպակաց կողմից է Թամիր կամ Մուսխանլու ոչ փոքր գյուղը եւ սրան նույն կողմից մոտիկ է Ղոլճիկ կամ Գյոլջի՞կ բերդագյուղը, գետեզրին սրան մոտիկ է Բախտիարլու բերդիկը, որին մերձ է մի վտակ, որ Տաթեւի սահմանի արեւմուտքից գալիս թափվում է Բարկուշատը՝ ձախ կողմից, այն է՝ հյուսիսից՝ մեծ եւ ամուր Ղարաղշլաղ գյուղը: Երկու մղոն հարավ գետեզրով աջից գտնվում է Ճոմուրլու բերդագյուղը, որից դեպ արեւմուտք գետից մեկ մղոն հեռու՝ Խալապա ամրոցը, որի հանդիպակաց կողմում, գետից ձախ՝ Կուբաթլու, Ղարաքյահյա գյուղերը: Ճոմուրլուից դեպ հարավ (գետի աջ կողմում) ոչ քիչ հեռու երկու բերդատեղի կա՝ Քերդճամանլու, մյուսը՝ գետեզրին՝ Գյոլջի՞կ անուններով. սրա դիմաց՝ գետի ձախ կողմում գտնվում է ամուր եւ մեծ Գյոդաքլու գյուղը, եւ մոտ կես մղոն արեւելքից դեպ հարավ Գոյալուի կողմը գետի աջ կողմում մեծ եւ հզոր Դեմիրչիլար գյուղը (Երկաթագործներ)՝ ընդարձակ այգիներով եւ պարտեզներով՝ մինչեւ Զեմի-չայ կամ Զեյվա գետակի խառնման տեղը(53), որը գալիս է արեւմուտքից՝ Տաթեւի արեւելյան սահմանի լեռների թիկունքից եւ հոսում է մեկ այլ նեղ դալարավետ ձորակով, Քափազդա՞ղ երկայնանիստ լեռան միջով, ձախից (հյուսիսից)՝ Քյաքի եւ Պարտավանլու, իսկ հարավից՝ Ալամլու եւ Բերդիկ լեռներով: Սրանց սահմանին Կորես (Գորիս) գնալիս Ռատտեն արձանագրել է (27 մայիսի 1890) հետեւյալ բուսատեսակները. Վաղշիժակը (Veronica multifida)՝ կաթնակապույտ ծաղիկներով, Շնակեռասը (Xylusteum), Խազիյանը՝ սպիտակածաղիկ, ծաղկագեղ եզնալեզուն [եզանլեզու]. վայրի Հասմիկը, Լոշտակը, Չելսիան (Celsia), Կյուպսելի (Cupselus apus):

Չորակի միջակողմում, ջրի եզերքին աջից գտնվում է Թաղախտար ամրոցը, բայց ձորահովտի գլխավոր շենը Զեյվան է, որ նրանից աջ է՝ հիշյալ ամրոցից մեկ փարսախ հեռու: Իսկ Զեյվայից հեռու արձանագրված են Ջոր եւ Մազանդի՞ ամրոցները: Բարկուշատի Զեյվա գետակի բերանին կից, աջից, Դեմիրչիլարից մեկ մղոն հարավ կա նրա նման ամուր եւ Դոնդարլու մեծ գյուղը, եւ սրա հարավում Բարկուշատի եզերքին Միլլա՞րն է, որից մեկ փարսախ ներքեւ եւ նույնպես գետեզրին Կալն է, ու նրան կից հարավից Մամարն է, գետի ձախ կողմում՝ արեւելքից Գյունեիդ իջեւանատունն է: Մամարից երկու մղոն հարավ, գետի աջ կողմում Ուլաշլու իջեւանատունը եւ նրան գրեթե կից Օպլիճա կամ Դիլիջան(54) գյուղն է, եւ սրան նույնպես մոտիկ է Խալիջանը, որին կից է ավերակ կամ Խալիջան-դարպասի կոչված ապարանքը, որի դուռը կերտված է գեղեցիկ կոփածո քարերով, ինչպիսին է նաեւ խորտակված ապարանքի դրսի բակը եւ նրա շուրջը կան հայերի անգիր գերեզմաններ: Համաձայն Դյուբուայի ուսումնասիրության՝ գյուղի եւ Օպլիջայի միջակա տարածքի հողի բնույթը հրաբխային է: Խալիջանից կես մղոն հարավ Խոջահան մեծ գյուղն է, որ մոտիկ է գետի հունին. այլազգիների կողմից այսպես աղավաղված հորջորջվել է մեծահարուստ վաճառական Խոջա Յովհաննի անունով, որի ինչքերը հափշտակեց Փաթ Ալի բռնավորը՝ դիմամարտելով Դավիթ Բեկին, եւ ազգականներին կոտորեց:

Մի փոքր ներքեւ Բարկուշատ եւ Հագարի գետերի խառնման տեղն է, եւ նրանց անկյանը կից՝ կրաշաղախ քարերով մի փոքրիկ բերդ կա՝ Չիզմելի անունով:

Բաղքի Հին ցուցակում հիշատակված Եղեգն գյուղը վկայված է 1671թ. մի հիշատակարանում, իբրեւ Բարկուշատ գավառի [գյուղ]՝ Եղինգ անվանումով: Այստեղ գրված է Յովհաննես քահանայի որդի տեր Մելքիսեթ քահանայի մասին, ով ծննդով Գեղամա Գավառ գյուղից էր եւ այստեղ որդեգրված էր Սիմեոն անունով մի բարեպաշտ մարդու կողմից: Շահ Աբբաս թագավորի ժամանակ սա փեսայացել էր նրա Սիմա [անունով] դստերը, իսկ հետո մեկուսացել անապատ՝ Արիստակես վարդապետի մոտ. ինչպես եւ իր մյուս դուստրը՝ Սանդուխտ անունով, մտավ կուսանոց եւ թաղվեց հոր կողմից: Հիշատակարանը երկարորեն խոսում է Մելքիսեդեկի որդիների եւ թոռների, նրանցից սերված ուստրերի եւ դուստրերի մասին մինչեւ հինգ կամ վեց սերունդ:

113. Մեծ հավանականությամբ արեւելյան Բաղաց մաս է կազմում նաեւ Չավնդուրի ստորին գետահովիտը, որին պատշաճում են Սյունյաց պատմիչի խոսքերն ու նրա մեջ հիշատակված Աղավնո գետը, որ կտեսնենք նոր գյուղերի կարգին կից, համաձայն աշխարհացույցի՝ սկսած փոքր խառնատեղիից եւ գետի հետին վտակներից, որ աջից են՝ հարավակողմից: Այստեղ Քեղեալի գյուղի ստորին մասում է Շայիփլի գյուղը, սրանից հարավ



## 1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

# ԿԱՊԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Մերթիքար կամ Մերթինքարի լեռն է, որ գտնվում է Չավնդուր եւ Բասուտ լեռնապարի արանքում. թվում է՝ սա Հին ցուցակում հիշված Մերթիկերտ գյուղի անունով է, որ գտնվում է Բաղքի կամ Քաշունիքի տարածքում: Այստեղից մինչեւ ներքեւ Չավնդուրի՝ Արաքս թափվելու գետաբերանը հետեւյալ հզոր գյուղերն են՝ Փրչվան, Չարի-Մաշուլան, Դուրապատ կամ Դերի, որ թվում է Հին ցուցակում հիշված Տրյան է, որ գտնվում է Չավնդուրի Արաքս խառնվելու արեւելյան անկյունում, մոտ 300-400 ոտնաչափ բարձրություն ունեցող մի բլրի կողին, որի քարագագաթին կա մի բերդի ավերակ: Տրեա գյուղի ավագի մոտ իջեւանեց Դյուբուան 1834թ. (ապրիլ 13), եւ նստելով դալար խոտի վրա՝ նկարագրում էր շրջակա վայրերը, ինչքան տեսանելի էին նրան դեղնավուն Արաքսի փրփրած եւ պղտոր ալիքները, որոնք ընդունում էին Չավնդուրի պայծառ վտակները, որոնք սահագնաց ընթանում են թփերի եւ բրնձի արտերի միջով: Նախքան գետեզրի խառնվելը՝ կան գեղեցիկ դաշտ, այգիներ, ծառաստան, արոտավայրեր, որոնք նշմարվում էին սեւորակ կետի նման: Երասխի այն կողմում՝ ձախից, եռատակ պարսպաձեւ կրային լեռներ են, որոնք պսակված են մարգերով եւ գիհիներով, աջից Ալանկեզի կամ Կապանի լեռնապարն է, որ Գեղամա ծովի ափից պատվար է կանգնում Երասխին: Նրանց ձյունափայլ գագաթներին տեղ-տեղ ցցված են լերկ կատարները: Հովտի գոգին, որտեղից հոսում է Երասխը, կան զանազանակերպ լեռներ, որոնցից ոմանք ձյունապատ ու ամպամած են, այնտեղ կան նաեւ ցածրադիր բլուրներ, որ իջնում են Առանի դալարավետ դաշտերի հարթության վրա, որով հոսելով գնում է մեծ գետը(55):

Չավնդուրի ձախակողմում բարձրանում է Բեզիր խանե լեռը, գետեզրով ներքեւ գտնվում է Մարշալի իջեւանատունը, իսկ Կենիք կամ Հենիկ գյուղը, Մարաքեշի՞նը, Սաֆլյարը, Թաքարը, Գարա-Մուշուլանը գտնվում են Սարի Մուշուլանի եւ Զանգիլանի դիմաց եւ Չավնդուրի ու Երասխի խառնման տեղում, երկու կողմից նրանց անկյուններում կան համանուն գյուղեր Մինքեւանլի անունով, որոնք հին հնչողություն ունեն, թեպետ նշանակված չեն ցուցակներում: Ձախակողմյան ափին կա Ռուսաց պահակատուն:

Տարածքի այս կողմում, ինձ թվում է, գտնվում է Նախկորզան կամ Նակորզան գյուղաքաղաքը, Վասակ ուրացողի հոր՝ քաջն Բաբիկի դաստակերտը, որ կառուցեց իր դարձին, կարծեք «Նախ այն սեփականելու իր հայրենիքում» պարսից արքունիքում երկարամյա տարագրությունից եւ ծառայությունից հետո. այնտեղ իր ցուցաբերած մեծամեծ քաջագործությունների համար շնորհ գտավ վերցնելու իր հոր՝ Անդովկի վրեժի հուշարար նշանը (մոխրալի սանդ), եւ ազատ արձակվելով իր անշքացած երկիր, նախ սա կառուցեց. վայրը մեծ էր ոչ միայն Վկայի գյուղաքաղաք անվանումով, այլեւ Սյունյաց եկեղեցուն տրված հարկերի շատությամբ (20 բեռ): Նրա դիրքի այս կողմից լինելը փաստում է նաեւ զրուցախառն պատմությունը հայր Գյուտի, որ Գողթանի իշխան Շաբիթայի որդին էր եւ սկզբից Վասակ էր անվանվում: Նա, ժառանգության համար կռվելով, մահացու վիրավորել էր իր եղբայր Շապուհին, բայց հետո մեծապես զղջալով՝ ուխտել էր հրաժարվել աշխարհից, եթե եղբայրն ապաքինվի: Եվ այնպես եղավ: Արդ, նա դուրս գալով իր հայրենիքից, գնաց Բաղաց կողմը: Եվ երբ հասավ բարձր լեռանը... գավառներով անցնելով Աղավնո գետի եզրը՝ այնտեղ անցկացրեց ձմեռային եղանակը, [ապա] անցավ մյուս վտակը (որ կարծում եմ Ջեմի վտակն է), դեպի Բերդի (ըստ իս Բերդիկ լեռն է) կողմը, Քաշունիք գավառը, եւ բնակվեց չոր ու անբերրի բլրում, մի հյուղակի մեջ երեք տարի եւ վեց ամիս: Երկիրն անբնակ էր, եւ ինչպես արձանագրեցինք սկզբից, եւ քանի որ նրան անհանգստացնում էին մերձակա բնակիչները, այնտեղից դուրս եկավ «եւ ընկնելով դաշտը՝ հրեշտակի առաջնորդությամբ գնաց մինչեւ արեգակի ծագելը: Հասնելով Արաքսի ափը՝ մի ձորակ գտավ՝ մեջը մի մեծ ժայռ, իսկ ներքեւում՝ փոքրիկ մենարան, որտեղ բնակություն հաստատեց տասը տարի»(56): Բերդիկի կողմից, որ համարում եմ առաջին մենաստանը, մինչեւ Արաքս, թերեւս 20 մղոն լինի, որ կարելի էր անցնել մեկ գիշերվա ընթացքում, մանավանդ հրեշտակի առաջնորդությամբ: Երկրորդ մենարանն ասվում է, թե «մոտիկ է Երասխի եզրին, այն վայրում, որ անվանվում է Քարավազ, որ երեք մասի է բաժանում ջուրը»: Չեմ կարծում, որ սա Որդուատի կողմերում եղած մեծ Քարավազ գետը լինի, այլ Չավնդուր եւ Պասուդ գետերի բերանի միջնամասում, որի անունը մնացել է Քարադեզ իջեւան, որ երկրորդի ( Պասուդ - Հ. Ք.) եզրին է, գետաբերանից մեկ փարսախի չափ հեռու: Այստեղ, ասում է զրուցաբան պատմությունը (որ գրված է վանքի Հովհաննես եկեղեցապանի ձեռքով), Գյուտին հանդիպում է պարսից արքայորդին, որ դուրս էր եկել որսի, եւ զարմացած էր նրա վրա, որովհետեւ արջերի մեջ էր եւ բժշկում էր նրանց վերքերը, եւ նա հավատաց Քրիստոսին եւ մկրտվելով անվանվեց Քրիստոսասեր, ու շատ արծաթ բերելով «Վանք կառուցեցին եւ բազում եղբայրներ հավաքեցին», եւ պարսից թագավորից առաքված հազար գործավորների օգնությամբ, ի սեր որդու «տեղը փոխում են ժայռից վեր, հարթում քարքարոտ տեղերը, շինում են երեք եկեղեցի՝ Սուրբ Երրորդության անունով: Եվ սրա համբավը տարածվում է ամբողջ աշխարհում: Գալիս են բազմաթիվ կրոնավորներ, լցվում Աստծո տունը... Նրա մեջ հաստատվեցին 500 եղբայրներ, որոնցից երկու հարյուրը՝ վանքում եւ 300-ը՝ քարանձավներում, անտառներում: Նաեւ անապատաբնակներ»:

Ապա Գյուտը հայտնվեց իր ընտանիքին եւ բժշկեց կուրացած մորը, եւ եկեղեցին հանձնեց Գողթան գավառի եպիսկոպոսին՝ բերելով նրան այդ վայրը, «եւ ամեն տարի Երասխից ութ օր ու կես կետ (ձուկ) էր տալիս եկեղեցու ժառանգավորներին ուտելու: Դարձյալ պատմվում է նրա հորեղբորորդի Քրիստոսասերի՝ Քրիստոսին հավատալու եւ Աղվանքի Վաչագան արքային փեսայանալու, նաեւ գետեզրին «բերդ կառուցելու մասին, որպեսզի այնտեղ բնակեցնելով պահի կրոնավորներին... Տվեցին հինգ գյուղ այսպիսի սահմաններով՝ սկսած Սեւուսարից մինչեւ Բոթիբոթեր, դեպի վար, որտեղ Թզենու գետն է, մինչեւ ուրկանոցի այգիները, այնտեղից մինչեւ Աղավնո գետի պտույտները, Նակորզանի եկեղեցու դիմաց, եւ այնտեղից [մինչեւ] Աստծո տունը: Տնտեսությունն էլ փարթամացած էր, որովհետեւ ուներ հազար խոշոր եղջերավոր անասուն, տասներկու հազար ոչխար, յոթ հարյուր ուղտ, վեց հարյուր ձի, չորս հարյուր էշ եւ հարյուր յոթանասուն այգեպան»: Ըստ այսմ, եթե չեմ սխալվում, Նախկորզանի տեղին հարմար է գալիս արեւմտյան Մինջեւանին՝ Աղավնո գետը միշտ նույնացվելով Չավնդուրին: Ասվում է, թե տարիներ անց այն պարսից արքայի որդին կամ թոռն ավերում է վանքը եւ եկեղեցին՝ կոտորելով կրոնավորներից շատերին, եւ «Քարը նետում են գետը», այսինքն՝ վիմափոր բնակարանը, իսկ ողջ մնացածները «մեծ ողբով լալիս են եկեղեցու համար ու թաղում [սպանված] կրոնավորներին: Սկսում են Աստծո նոր տուն կառուցել՝ առաջիններից ավելի շքեղ: Հավաքվում են վեց հարյուր վանական, այլ տեղում կառուցում եկեղեցին, տալիս Մանակկա [անունը](57), ինչպես եւ կոչվում է նոր վանք: Հիմնում են ուրկանոցներ եւ վանքից առատորեն հոգում նրանց կարիքները: Եվ Կապանից(58) այստեղ եկավ հայր Հովհաննեսը, վանականներին վերցնելով գնաց գետի ափը, Տիրոջից խնդրեց վանականների կարիքների համար ձուկ շնորհել... Եվ այսպես վանքին արտոնվեց գետից ձուկ որսալ: Իսկ երբ լրացավ սուրբ հայր Գյուտի կյանքի ութսունչորս տարին «եւ Քրիստոսասերի տեսիլքով զգալով իրենց մոտալուտ վախճանը, հորդորում էր նրան չվախենալ... Եվ կերակուր վերցնելով՝ նրանք շրջեցին ճգնավորների մեջ, կերակրեցին ու ողջունեցին նրանց եւ օրհնվեցին նրանցից: Եվ երբ սաղմոսելով Մախաղատափով գալիս էին դեպի վանքը, տեսան հեծյալների բազմություն, որը գալիս էր: Իրենք շտապեցին եկեղեցի: Նախ՝ մտնելով աղբյուրը՝ լվացվեցին, ապա անցան եկեղեցին, համբուրեցին սուրբ Սեղանը, ողջունելով լաց եղան: Եվ ահա զորքը շրջապատեց եկեղեցին: Ներս մտնելով՝ փնտրեցին Գյուտին ու Քրիստոսասերին: Իսկ նրանք առաջ գալով ներկայացան: Նրանց բռնեցին, կապեցին, տարան Գողգոթա եւ այնտեղից վայր գցեցին: Առաջին անգամ ոչ մի վնաս չեղավ, իսկ հետո Գյուտի գլուխը ճեղքվեց, եւ երբ պիտի շունչը փչեր, ձայն էր տալիս Քրիստոսասերին. «Որդյակ, ջանա, դիմացիր ինձանից հետո»: Իսկ զինվորները Քրիստոսասերին սրով սպանեցին քարի վրա: Եվ այսպես սրբերը մեռան Քաղոց տասնհինգին..: Իսկ ցրված վանականները հավաքվելով մեծ սգով լաց ու կոծ արին եւ փարվեցին հոր ու Քրիստոսասերի սուրբ մարմիններին... Գյուտին տարան, թաղեցին եկեղեցու գավթում, Քրիստոսասերին՝ եկեղեցում. տեղերն էլ գաղտնի պահեցին»(59): Հայր Գյուտի այս վանքում էր կրթվել նաեւ ճգնասեր Երիցակը՝ Երիցավանքի կառուցողը եւ Սյունյաց եպիսկոպոսը, ինչպես վերն ասացինք: Բայց դրանից հետո Գյուտի վանքն այլեւս չի լսվում պատմության մեջ եւ ոչ էլ [հիշվում] պատմիչի կողմից թվարկված Սյունյաց նշանավոր վանքերի կարգին:

## Ը

### Կովսական

Սյունիքի գրեթե բոլոր գավառներից, Աղահեճից հետո, Կովսականը մնացել է քիչ ծանոթ: Այժմ լոկ անվանապես հայտնի սակավաթիվ գյուղերից ենթադրվում է նրա դիրքը. հյուսիսից եւ արեւելքից՝ երկու կողմից սահմանակից է Բաղքին, արեւմուտքից՝ Չորքին, հարավից՝ մասամբ Արեւիքին եւ մասամբ՝ Երասխ գետին: Գավառի մեծ մասը, ինձ թվում է, հովիտն է Բասուդ գետի, որ Չավնդուրի արեւմտյան մասից մոտ մեկ փարսախ նրանից հեռու թափվում է Երասխ գետը՝ Հին ցուցակում կրելով Բոստ գյուղի անունը: Իսկ փոքրագույն մասն աջից (արեւմուտքից) Չավնդուրին կից մանր ձորակներ են, որոնց անունն իսկ արձանագրված չէ քարտեզում, բայց պատշաճ է դրանք անվանել շրջապատող գյուղերի անուններով, եւ մեծագույնը (որի երկարությունը ութ կամ տասը մղոնից ավելի չէ) հարմար է անվանել Խուստուփի կամ Խուստուփ լեռան անունով՝ 9885 ոտնաչափ բարձրությամբ, որից բխում է, եւ գտնվում է Չորքի եւ Կովսականի միջասահմանին, որին հարում են բարձունքով եւ մյուս լեռները, որոնք ձեւում են նրա բովանդակ արեւմտյան սահմանը եւ արեւելյանն՝ Արեւիքից, ինչպես եւ այլ շարածիգ լեռներ կան, որոնք արեւելքից անջրպետ են նրա եւ Չավնդուրի գետահովտի միջեւ: Եվ դարձյալ լեռների փոքր կամ կարճ շարքերը երկիրը բաժանում են ձորակների, որոնք կից են Բասուդ գետին: Խուստուփ լեռան կողերին կա մի դժվար մատչելի անվանի ուխտատեղի, քիչ ավելի վերեւ, ինչպես ասվում է՝ երկու ճգնավորի գերեզմանը: Սրանից հյուսիս-արեւմուտք բարձրանում է մեկ այլ բարձր քարաբլուր Չռչըռ անունով, [որ այդպես անվանվում է] թերեւս ջրվեժ հոսքի պատճառով, որովհետեւ թափվելիս [ջրերը] ցայտելով ցաքուցրիվ են լինում:

Երկիրն արեւելյան Բաղքի նման անտառախիտ է: Ենթադրելի է՝ Արեւիքի նման պտղաբեր եւ այգեվետ է, բայց այս կողմերի վերաբերյալ մասնավոր ծանոթություն չունեմ:

Սյունյաց պատմիչն աշխարհագավառների անունները թվարկելիս սրա մասին ասում է. «Կովսական գավառ, որ այժմ Գրհամ են անվանում», եւ հետագաները՝ Գուրհամ, որի անվան պատճառն ու ծագումը մեզ անծանոթ են, ինչպես եւ հին անվանումը, որ ըստ Խորենացու աշխարհագրության տարբեր օրինակների, գրվում է թե Կուսական եւ թե Կոսական ձեւով(60), եւ ինչպես մյուս գավառների հին եւ նոր սահմանները չեն համընկնում իրար, ճիշտ այդպես էլ Գուրհամինը՝ հետագաների հետ, քանզի, ինչպես երեւում է, մասամբ խառնված են Արեւիքին:

Ըստ քաղաքական կացության, եթե առաջին ժամանակներում Կովսականն ուներ առանձին տեր եւ իշխող, ապա 9-րդ դարակեսին սրա եւ Քաշունիքինը մեկն էր, այն է՝ Սահակի որդի, Գրիգորի եւ Արումանի եղբայր Հրահատը: Գավառի տերերի վերաբերյալ այլ հիշատակություններ չեմ գտնում, բացի որոշ գյուղերից, որոնք բերելու եմ ստորեւ:

Տաթեւի թեմի ցուցակում Գուրհամի փոխարեն հիշվում է Կովսականի այլ անվանումը, այն է՝ Գիլաբերդ եւ այլ ցուցակում այս գավառի մի մասը հատկապես Ղափան է կոչվում, ինչպես եւ ցարդ այս անունով են կոչվում հին Կովսականն ու Չորքը միասին եւ Բաղքի մի մասը: Սյունյաց աթոռի հին հարկացուցակում արձանագրված է Կովսականի 53 գյուղ, որոնք են հետեւյալները(61).

*Իցան* ..... 12
*Բեխ* ..... 6
*Շտատուկ* ..... 6
*Ողույհի. Ողուհի* ..... 12
*Փառվարտո վանք* ..... 6
*Բեխեվերջի* ..... 8
*Լոսուձոր. Հուսձոր* ..... 6
*Վաժնատուք* ..... 10
*Բոստ* ..... 10
*Մառակոթ. Մառագատ* ..... 12
*Գագավանք. Կաչավանք* ..... 6
*Մենիկ* ..... 6
*Թաթումարգ. Թարումարք* ..... 6
*Դալք* ..... 5
*Մարուր* ..... 8
*Վարոսի վանք* ..... 10
*Գոն* ..... 5
*Հոյնոց ձոր* ..... 5
*Երեգիք* ..... 7
*Դախարեան. Տախ* ..... 10
*Համուլք. Համուրք* ..... 6
*Վառամաղբյուր* ..... 6
*Մաճկան* ..... 8
*Մանուշակի մարգ* ..... 6
*Նախկոտան* ..... 6
*Գիրկն. Դիրքն* ..... 8
*Լիմ Ստորին* ..... 8
*Լիմ Վերին* ..... 8
*Չամորտուք* ..... 8
*Լիմախովիտ* ..... 6
*Փշատեցարուս* ..... 6
*Դից մայրի* ..... 6
*Բերքի* ..... 8
*Աշտարակ* ..... 6
*Արգաբ* ..... 6
*Կերեն* ..... 12
*Սղաթաղք* ..... 12
*Շիկահողք* ..... 12
*Պողոսի վանք* ..... 7
*Վախտանգաձոր* ..... 7
*Թեղոյկից. Թողոկից* ..... 7
*Շաշիկետ* ..... 10
*Արձախամայրի* ..... 17
*Ծանաղու* ..... 20
*Մառի* ..... 6
*Բարդուքաղք* ..... 6
*Լուցմայրի* ..... 6
*Նորաշինիկ* ..... 8
*Առվանոտ* ..... 12
*Խոզաձոր.Խուզաձոր* ..... 7
*Դռնակերտ. Տգեռնակերտ* ..... 7
*Ծոբի* ..... 12
*Կից* ..... 15

Սրանից բացի Սյունյաց պատմության մեջ հիշվում են նաեւ Նորաշինիկից սահմանակից Տրի եւ Արտավազուց գյուղերը(62), ինչպես նաեւ՝ Ջեռատի վանքը եւ Խոշտատա տափը: Իսկ մասնավորաբար Գիլաբերդի տարածքի մեջ, ըստ Տաթեւի թեմի Նոր ցուցակի, [արձանագրված են հետեւյալ գյուղերը].

Գուբկում
Ճկտեն
Գյուլմեշե
Իռիկիս
Նոխոթլու
Ալթունանց
Ըռոտմանց
Խազազաձոր
Նոր գյուղ
Չխուրուտ:

115. Վեց տասնյակից ավելի հայանուն գյուղերից տասի անունն իսկ ծանոթ չէ այդ անվամբ եւ դիրքով: Այս թվից գրեթե ոչ ավելի հիշվում են նաեւ «Պատմության» մեջ. այլանուն գյուղեր քիչ կան կամ արձանագրված չեն Բասուդի գետահովտում եւ Չավնդուրի հարավային եւ աջակողմյան մասերում, որոնք Կովսական գավառի հատվածները համարեցինք: Եվ այժմ ծանոթ են եւ արձանագրված են նախ Չավնդուրին կից ձորակներում՝ սկսած վերից, այն է՝ հյուսիս-արեւմուտքից, որտեղից հոսում է դեպ հարավ-արեւելք, Չորքի եւ Բաղքի սահմանակցությամբ հնում եւ նոր ժամանակներում հայտնի առաջին գյուղը Բեխ կամ Բիխն՝ է, որ գտնվում է Խուստուփ լեռան հյուսիսային ստորոտին մի գետառվի եւ մեծ գետի անկյան վրա՝ քարաբլրին, որ գավառի մյուս գյուղերի մեջ առաջինն է կարգված Սյունյաց աթոռի հարկատուների Հին ցուցակում, որովհետեւ հին ժամանակներից Ս. Խաչի եւ եպիսկոպոսների սեփական ժառանգությունն էր(63), որ 871թ. Սյունիքի տեր Սահակի որդի Ջեւանշեր իշխանը խնդրելով Սողոմոն եպիսկոպոսից, այն փոխանակեց Բաղք գավառի իր Արուքս գյուղի հետ, ինչպես եւ արձանագրեցինք տեղագրության մեջ: Ղափանցիների պատերազմի ժամանակ 1726 կամ 1727թթ. օսմանցիների կողմնապահ զորավարը գալով բանակել էր այստեղ յոթ օր շարունակ եւ մտմտում էր նենգել Դավթին եւ նրա հետ եղողներին, բայց սրանք գիշերը «նրանց վրա հարձակվեցին, հարվածեցին եւ նրանցից շատերին կոտորեցին, եւ փաշային հալածեցին»: 18-րդ դարի երկրորդ կեսին այս գյուղից էր Տաթեւի Ղազար եպիսկոպոսը, որ գետի մեջ խեղդվեց այդ կողմերի իշխողի ահից փախչելիս: Բեխի փոքրիկ եկեղեցին նվիրված է Ս. Գեւորգին: Այժմ փափագում են կանգնեցնել նոր եւ ընդարձակ եկեղեցի: Հայազգի բնակիչները 40 տուն են, որի երրորդ մասը Փարսադանյան մելիքների տոհմից է, որի կալվածքն է գյուղն իր սահմաններով՝ Պղնձահանքի հետ միասին:

Շարունակությունը՝ էջ 72

**1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ**

**ԿԱՊԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

# ՍԻՍԱԿԱՆ

## Հատված Ղեւոնդ Ալիշանի համանուն կոթողային գրքից

**Սկիզբը՝ էջ 71**

Քիչ հեռու՝ դեպի հյուսիս-արեւմուտք քարտեզում արձանագրված է սրբազան վայր, եկեղեցի կամ մենաստան: Համաձայն հին գյուղերի ցուցակի՝ Բեխին մոտիկ գտնվում է Փառվարտո վանքը, կամ Բեխից արեւելք մոտ մեկ մղոն հեռու գետի մյուս վտակի խառնուրդին արձանագրված Կռոզանի բերդագյուղը: Սրանից վերեւ՝ հարավակողմում, նրա վտակի մոտ, նույնքան հեռու, գտնվում է Վեչաքենտ գյուղը, որ, թվում է հնում Վաժնատուք է կոչվել: Սրա դիմաց, վտակից աջ, որ արեւելքից շուրջ մեկ մղոն հեռու է, ըստ Հին ցուցակի կա եւս ծանոթ մի գյուղ՝ Բեխեւերջի անունով. այժմ կոչվում եւ գրվում է Բաղաբուրջի՞ (Պաղավե՞րճ), որի եկեղեցին անվանվում է Ս. Հռիփսիմե:

Չավնդուրի մեծ վտակին մոտ ձախից (արեւմուտքից) միայն մեկ հանգրվան կա կամ փոքրիկ մի գյուղ՝ Կյուտկում կամ Գուբկում, որ ըստ Տաթեւի թեմի Նոր ցուցակի արձանագրված է Գիլաբերդում, որի եկեղեցին անվանվում է Ս. Հռիփսիմե: Իսկ աջից՝ ստորին կողմում, որ հյուսիսակողմում է, նշանակված են Գազանջիլի, Ռաղա հանգրվանները եւ Չավնդուր գետի մոտիկ Գեղյալի ամրոցն ու հանգրվանն է մեծ գյուղի անունով, որ կա Չավնդուրի վտակների ու խառնուրդների անկյունում: Սրանց վերին մասում Չքատին փոքրիկ գյուղն է, որ ցուցակում երբեմն գրվում է Չկտեն կամ Ճկտեն՝ Ս. Հռիփսիմե եկեղեցիով: Այս գյուղից էր ոմն Անում, որ գրվում է Չքետեցի: Սա 1697թ. Վենետիկում էր: Չավնդուր գետին մոտիկ կա նաեւ մի փոքրիկ գյուղ Կյուն անունով, որ թվում է հին Գոնն է, որի մեջ զետեղվում է Հոյնոց ձոր գյուղը՝ ձեռագրերում Հոյնոցկոր անունով: Հին Գոնը հետագայում հավանաբար կոչվել է Կան կամ Կյան, որտեղից էր 18-րդ դարի սկզբին Մահտեսի Աբել հարուստ վաճառականը, որն իր չորս որդիներով բնակվում էր Վենետիկում. քաղաքի հայ վաճառականների մեջ նրա որդիներից հայտնի եւ փարթամ դարձավ Առաքելը (ով հիշվում է 1728թ., եղբայրներն են Հարությունը, Պետրոսը եւ Հովհանը), ով կնության առավ մեկ այլ հարուստ վաճառական Մանուկի դստերը եւ ծնեց 12 զավակ, որոնց հետնորդները՝ երեք, չորս սերունդ այնտեղ հիշվում են մինչեւ այս դարի կեսերը, Աբել (Apel) մականվամբ, նրանց հավատավոր աղջիկներից ոմանք մտել են կուսանոցներ: Ինքը՝ Առաքելը, վախճանվել է ութսունվեց տարեկան հասակում 1792թ. եւ թաղված է քաղաքի Ս. Լավրենտ եկեղեցում՝ հետեւյալ լատիներեն տապանագրով.

*D. O. M.*
*APOSTOLO D'APEL*
*PATRI AMANTISSIMO*
*AETATIS SUZE ANNO LXXXVI.*
*CITA FUNCTO*
*THOMAS FILIUS MCERENS*
*SIBI POSTERISQUE SUIS*
*P. C.*
*V. KAL. SEPTEMBRIS.*
*MDCCXCIII.*

Արձանագրության մեջ հիշված Թովմասն Առաքելի առաջնեկն է, ով սեղանավոր էր՝ ծնված 1745թ. եւ մահացած Վենետիկի Մեստրե ավանում 1827թ.:

116. Բոստ (Բասուտ) գետի հովիտն արեւմուտքից Մեղրու հովիտն անջրպետող լեռներից ձգվում է սակավ խոտորմամբ՝ երկու կողմից վտակներ ընդունելով իր մեջ: Երկու սկիզբ է արձանագրված սրա համար. մի ձորի գլխին կա Շեշկերտ (կամ Իշկերտ), ըստ Հին ցուցակի Շաշիգետ գյուղը: Այստեղ հարյուր հիսուն զինյալ հայեր անտառախիտ վայրում դարանամուտ լինելով՝ ժամանակին արգելք եղան Բարկուշատի Փաթ Ալի խանի զորքերի անցումին, եւ, այլ գնդերի օգնությամբ, նրանցից 4000 մարդ կոտորեցին: Քիչ ժամանակ անց Դավիթ Բեկն այստեղ գլխատել տվեց Պապ զորավարին, որովհետեւ նա խուսափել էր [առճակատել] Որդվատի Սափիղուլի խանի զորքի հետ: Այնտեղից Դավիթ Բեկը շարժվեց դեպի Կեմանցու դաշտավայրը, որի դիրքն ինձ անծանոթ է: Երկու գետառուների կցման վայրին մոտիկ կա Իմարեդ գյուղը, որից մոտ մեկ ու կես մղոն ներքեւ, գետի ձախ կողմում [գտնվում է] Պյումին ամուր գյուղը, աջից (հարավակողմից) Սաֆուլու (գյուղը), որի ելքի կողմից, լեռների հարավային սահմանից մի վտակ է իջնում եւ թափվում Բոստի մեջ: Գետահովտի միջնահատվածում մի գետակի կից, որ հյուսիսից (ձախակողմից) է, կա Շախաուզ կոչված գլխավոր գյուղը, որ ըստ իս Շիկահող կամ, համաձայն Հին ցուցակի, Շիկահողքն է: Ելնելով հարկի (12 բեռ) չափից՝ սա փոքր չի եղել. մանավանդ որ կա նաեւ մեկ այլ համանուն գյուղ՝ հիշված գետակի ափին, եւ պատշաճ է այն կոչել Վերին Շիկահող եւ գետակն էլ՝ Շիկահողի գետ, որի միջակողմում, աջից, որ արեւմտակողմն է, արձանագրված է Քիլիսաքենդ փոքրիկ գյուղը, որ նշանակում է Եկեղեցագյուղ: Եվ քանի որ Հին ցուցակում Շիկահողին անմիջապես կից մատնանշված է Պողոսի վանքը՝ [ուստի] հարկ է [սա] նույնը համարել օտար անվանումով: Վայրն արժանի է ուսումնասիրության մանավանդ այն պատճառով եւս, որովհետեւ երկարաձիգ լեռը, որ բաժանում է Բոստ գետակի ձորը, կոչվում է Ճանճի բերդ, թեպետ գրքերում այս անունը չի գտնվում:

Բոստ գետահովտի ստորին մասից մինչեւ Երասխ նշանակված են Բահարլու, Աջիլու գյուղերը՝ երկուսն էլ ձախից, Որդակլուն՝ աջից, իրար մոտ, ավելի ներքեւ՝ Ղարադարան (Սեւաձոր)՝ աջից, Քարաղեզ, որ համարում ենք հայր Գյուտի պատմության մեջ հիշված Քարավազը: Երասխին մոտիկ է Ուղատում մեծ գյուղը, որին մոտ Բոստին խառնվում է նեղ ձորով հոսող մի գետակ՝ աջից՝ բխելով հարավից, Գուշկուրադազ լեռից: Եվ եզերքին կան փոքր գյուղեր, որոնցից մեկը Չալտերեն է: Բոստի՝ Երասխի մեջ թափվելու վայրում, Մուղատում գյուղավանի մոտ հաստատված է Ռուսաց պահակատուն՝ Պեխարլուի (Պեխարլինսկի) անունով: Չալտերե ձորագետակի հարավային կողմից Երասխին մոտիկ կան ամուր հանգրվաններ Համլյավը, թերեւս Հին ցուցակի Համուլքը եւ Դուլանլուն:

Բոստի գետահովտի եւ արեւելքի սահմանին կա մի փոքրիկ ձորակ, որ առանձին բացվում է դեպ Երասխ: Սա երեք կողմերից պարսպված է լեռներով, որոնք են (ըստ ռուս աշխարհացույցի) հյուսիսային կողմից Գուշկուրադազը, արեւմուտքից՝ Շիխարադազը, հարավից՝ Բարթազը(64): Այս վերջին անունով է կոչված նաեւ գլխավոր գյուղը, որ գետակի ձախ կողմում է, եւ թվում է աղավաղ կամ կրճատ [տարբերակն է] Հին ցուցակի Բարդաթաղի կամ Բարդուքթաղի: Գետի այն կողմում, նրան հանդիպակաց կա Լազարեթ փոքրիկ գյուղը: Երասխին միանալու գետաբերանին մոտ կա Պարադազայ (Բարդազսկի) պահակատունը, եւ հյուսիսային լեռնաշղթայի սահմանին՝ Սարալու ամուր գյուղը:

Այդ գյուղերի մեջ Հին ցուցակում «Պատմության» մեջ հիշատակվում են Նորաշինիկը եւ դարձյալ նրան մոտիկ որոշ գյուղեր, որոնք, սակայն, թվում է, թե Բոստի գետահովտում չեն, այլ կից են Չավնդուրին: Վերոհիշյալ Հրահատը՝ այս գավառի տերը, 844թ. այս գյուղը նվիրեց Տաթեւի եկեղեցուն, տեր Դավիթ եպիսկոպոսի միջոցով՝ բառացիորեն այսպես գրելով հանգամանքների եւ սահմանների վերաբերյալ. «Ես՝ երանելի իշխան Սահակի որդի բազմամեղ Հրահատս, որ չար ու անհիրավ վարքիս պատճառով խաբված էի սատանայից բազմատեսակ հանցանքներով, ծովի նման լցված էի անթիվ չարիքներով, ահեղ դատաստանի օրվա փրկության ակնկալություն չունենալով, մտաբերելով անզավակությունս եւ այն, որ հույս ու ապավեն չկար հոգուս փրկությունը հոգալու համար եւ գիտենալով, որ մահկանացու է մարդկային ցեղը, որդիների փոխարեն այդ աստվածընկալ խաչին ինձ ապավեն արեցի: Եվ մի գյուղ Կովսական գավառում՝ Նորաշինիկ անունով, որը ոչ թե հափշտակումով կամ մեկին ճնշելով եւ կամ ուրիշ անիրավություններով, այլ միայն իմ արդար վաստակի արծաթադրամի գնով եմ ձեռք բերել, իմ հոգու համար հատկացրի Սուրբ Խաչիդ՝ իր բոլոր սահմաններով, լեռներով ու դաշտերով, տաք ու ցուրտ [տեղերով] ծառ եւ տունկով: Նրա սահմանները սրանք են՝ արեւելյան կողմից Տոր-վանոտի սահմանը, հյուսիսից՝ Ծոբի, արեւմուտքից՝ Տրի եւ Արտավազուց, հարավից՝ Կերեն եւ Բերքնի... Եվ այս հաստատ կտակագիրս ես՝ իշխան Սահակի որդի Հրահատ իշխանս, տվեցի քեզ՝ Սյունյաց եպիսկոպոս տեր Դավթիդ, վկայությամբ Վառիի վանական հայր Հակոբի, Ներսեսի որդիներ Հովհաննեսի ու Սմբատի, Բաբիկի որդի Հովհանի, իշխան Տիրոցի որդիներ Ստեփանոսի եւ Մուշեղի, Վարազտիրոցի որդի Վիժանի, Գրիգորի որդի Ըռանձարի, Հովհանի որդի Խուդափի, Սահակի որդի Համազասպի, Մառաքատի երեց Բարսեղի, Ըղվերծի երեց՝ Մխիթարի որդի Սանդոկի, Վանանդի երեց Հմայակի, Նորիքի քահանաներ Սահակի ու Ահարոնի, Ույծի ավագերեց՝ Հակոբի որդի Մաթուսաղայի: Այս վճռագիրը կնքեցի ես՝ իշխան Հրահատս, իմ սովորական մատանիով: Եվ շարադրածիս առավել հաստատության համար Սյունյաց տեր, աստվածապահ իշխան Գրիգորի մատանին էլ վրան դրեցի: Աստված վայելում տա մինչեւ հավիտյան»: Թեպետ այսպես վավերացված էր վճռագիրը եւ գյուղը զավթողների հասցեին նզովքով եզրափակված, սակայն, այդուհանդերձ, բռնազավթվեց մինչեւ 1087թ.: Սենեքերիմ արքայի օրոք Գրիգորի որդի Հասան իշխանն այն վերադարձրեց եկեղեցուն, դրա հետ նաեւ՝ Չեռատիվանքը(65), որ գտնվում էր Կովսական գավառում, «որոնք եւ առաջ ժամանակով կալվածք էին տրվել Տաթեւի սուրբ եկեղեցուն: Նորաշինիկը տվել էր Հրահատ իշխանը տեր Դավթի միջոցով, իսկ Չեռատիվանքը հանձնել էին Հակոբի մետրոպոլիտության ժամանակ: Ուստի եւ սա վերադարձնում է տեր Գրիգորի միջոցով: Եվ թագավորի ներկայությամբ գրում է հաստատուն որոշման այսպիսի կտակագիր. «Հանուն Աստծո սա իմ՝ Գրիգորի որդի Հասանիս գրածն է: Այսօր, որ Աստված ինձ հաջողություն տվեց, իմ բերդը Մշտաքախքենից վերցրի եւ իմ արյամբ Փատլուն(66) ամիրայից Կովսական գավառն ազատեցի, Նորաշինիկն ու Չեռատիվանքը Տաթեւի Ս. Նշանին վերադարձրի՝ իմ Սենեքերիմ թագավորի հրամանով, Սյունյաց եպիսկոպոս, աստվածապատիվ հոգեւոր տեր Գրիգորի ժամանակներում եւ ողջ ազատների ներկայությամբ ու բոլորի վկայությամբ հանձնեցի սրանց՝ ազատ արքունի հարկերից: Հետագայում այս գյուղերի վերաբերությամբ ոչ ոք որեւէ չափով հաշիվ չունի... Ես Սենեքերիմ թագաւորս, իմ ձեռքով հաստատեցի այս որոշումը Հասանի, որն այս գյուղերն իր արյամբ ազատել էր տաճիկներից, իմ հրամանով նորից հանձնեց Տաթեւին: Եվ ես իմ որդիներով եւ ազատներով վկա եմ, որ այս եկեղեցիները որքան հաստատուն մնան, ոչ ոք չհամարձակվի ու հանդգնի այս նվիրատվությունը հափշտակելու փորձ անել: Սրա հետ ես էլ տվեցի Խոշտատա տափը: Արդ, եթե որեւէ մեկը հափշտակի, վերոգրված անեծքը ժառանգի: Եվ ես՝ Ռահիբս(67), վկա եմ այս գործարքին, որին ոչ ոք չհամարձակվի հակառակ կանգնել: Հայոց հինգ հարյուր երեսուն հինգ (1086) թվականին»(68):

### Թ

### Չորք = Կապան

Գավառը փոքրիկ է. սրա անունն իսկ ցույց է տալիս փոքրիկ լեռներ ունենալը՝ լինելով վերջին խորհրդարանը Սյունյաց թագավորական տան եւ թերեւս հայ թագավորների վերջին գահը բնիկ Հայաստանում: Բոլոր կողմերից շրջափակված է վերոհիշյալ գավառներով՝ սահմանակցելով Կովսականին՝ արեւելքից, Բաղքին՝ հյուսիս-արեւմուտքից, Ծղուկին՝ հյուսիս-արեւելքից, Երնջակի Պեղեւ տարածքին՝ արեւմուտքից եւ Արեւիքին՝ հարավից: Ամբողջ երկիրը լեռնային եւ անտառային մի հովիտ է Կապան գետի համար, որ Չավնդուրին է միանում աջից, որին եւ խառնվում է Կովսականի սահմաններում: Ունի իրեն միացող գետակներ՝ աջից՝ արեւելյան կողմից՝ փոքրիկ [գետակ], ձախից՝ արեւմտյան կողմից՝ երկարը, որ Գեղվածորի գետակն է: Հյուսիսային կողմից Ծղուկի տարածքի մեջ մտնող Լորածորի եւ Տաթեւի լեռների թիկունքից ընդունում է ոչ քիչ վտակներ, որոնցով եւ քաջապես ճշմարտվում է գավառի Չորք անվանումը: Գեղվա գետակի աղբյուրները Ղազանգյուլի նշանավոր լեռներում են, որոնք գտնվում են Չորքի եւ Պելեւի մեջտեղում, որից սկսած դեպ հարավ արեւելախառն գնալով՝ հիշյալ տարածքի Գողթան գավառի մեջտեղում են Չորք գավառի Հաջի դաղ [լեռը] ու բովանդակ Սյունիքի լեռներից բարձրագույնը, եւ, ինչպես կարծվում է, Հայոց երկրի բարձրագույն գագաթներից մեկը՝ Կապուջուղ կամ Ղափուջիղ (Կապուտջիղ) լեռն՝ իր որձաքար զույգ կատարներով՝ 12060 ոտնաչափ, որի հարավակողմում գտնվում է Այրայքալի (Արագլի՞) դաղ սրագագաթ լեռնասարը: Սրա նման են Չորքի եւ Արեւիքի լեռնապարի, Կապանի եւ Գեղվա զույգ ձորագետերի անջրպետում գտնվող Մեչիդ դաղ, Փիրյալի դաղ եւ այլ լեռներ: Երկրի բնապատկերի մեջ ծանոթ է Կապանին մոտիկ մի ջրվեժ, եթե սա մեզ արդեն ծանոթ Չռչըռը չէ:

Այսքան քիչ բան է ինձ հայտնի երկրի բնական դիրքի վերաբերյալ, որ հանքային եւ այլաբնույթ բարիքի չգոյության դեպքում իսկ արժանի էր քննության, գոնե տվյալ տարածքում տեղի ունեցած քաղաքական եւ ազգային անցուդարձի պատճառով՝ նկատի ունեմ Կապան քաղաքի եւ Բաղաբերդի ամրոցի՝ իբրեւ Սյունիքի թագավորների վերջին բնակարան եւ նրանց խլյակների մեծահռչակ գահ լինելը:

Աներկբայելի է, որ այս աշխարհի շինության եւ բնակության սկզբում Բաղակ նահապետը, որից է Բաղաց գավառի անունը, այստեղ հաստատեց կամ կառուցեց իր բույնը՝ Բաղակի քարի վրա, որ հետո Բաղաբերդ կոչվեց, եւ դարձավ վերջին ապաստանը Սյունյաց իշխանների: Եվ Չավնդուրի ամբողջ գոգահովիտը նրա տոհմին վիճակվեց: Այն հետո բաժանվեց երեք կամ չորս գավառի՝ Բաղք-Աճանան, Բաղք-Քաշունիք, Կովսական եւ Չորք(69): Վերջինը՝ բոլորից փոքրը, մյուսներից ավելի մեծարվեց թագավորական գահով, շնորհիվ իր ամրությունների, մինչեւ որ հետնորդները Չորքի արքաներ կոչվեցին, եւ նրանց ամուր քաղաքի պատճառով ամբողջ գավառը Կապան անվանվեց 11-12-րդ դդ. եւ մինչեւ այժմ էլ նույնպես է անվանվում՝ միայն թե աղավաղ Ղափան ձեւով: Բայց այս անունով [գավառի] սահմաններն ընդարձակորեն ձգվում են Կովսականի եւ Չավնդուրի գետահովտի մեծ մասի վրայով, որ նշանակում է վերադարձ Բաղակի տոհմի վաղնջական սահմաններին:

Ստույգ հայտնի չէ, թե երբ են Սյունիքի թագավորներն իրենց աթոռը հաստատել գավառի ամրոցներում՝ Ծղուկի եւ Վայոց ձորի կողմերից տեղափոխվելով [այնտեղ], բայց հայտնի է, որ 11-րդ դարից մինչեւ 12-րդ դարի կեսն այնտեղ էին նստում նաեւ Սենեքերիմի ժամանակ՝ 1070թ., քանի դեռ «Կապանի գավառները շեն էին», ըստ պատմիչի, ով դրանով ճանաչում է ժամանակի Սյունյաց թագավորությունը՝ հիշատակված այն տասը գավառով եւ հինգ գավառին պատշաճող չորս բերդով, որոնք են Ծղուկքը, Չորքը, Արեւիքը եւ Կովսականը: Եվ ոչ մի տեղ չեն հիշվում Հաբանդը եւ Բաղքը, որոնց տիրում էին սկզբից: Եվ այդ թվականից հետո այլազգիները սկսեցին աստիճանաբար նվաճել գավառը եւ բերդերը ու ամենավերջում՝ 1170թ., հզոր Բաղաբերդը, որից մի տարի առաջ իր հայրենի երկիր Խաչեն էր հեռացել վերջին արքա՝ Հասանը: Եվ այդ կողմերում իսպառ վերացավ Սյունիքի արքունական եւ արքունավայել իշխանությունը՝ անմոռաց թողնելով «Կապան» անունն իբրեւ հզոր վայրի խորհրդանիշ՝ նաեւ լեռների դժվարանցանելի կիրճերով, որոնցով հարկադրված են անցնել այդ տարածքով եւ Արեւիքով երթեւեկողները: Ու թերեւս նեղ կածանների պատճառով բարձրագագաթ այն լեռն ըստ իմաստի Կապուտջուղ կոչվեց (Դռնակ), որովհետեւ ճանապարհներն անցնում են այն տեղով, ինչպես արձանագրել է տեղանքը հետազոտող մի անգլիացի գիտնական: Չգիտեմ, թե ինչպես էր հնում անվանվում, որովհետեւ պետք է որ այդպիսի բարձրությունն իր սեփական անունն ունենար: Թագավորության վերացումից, մանավանդ երկրի՝ այլազգիներին ոտնակոխ լինելուց հետո հայ իշխանները եւս հեռացան ուրիշ գավառներ, ուր տակավին խաղաղության մեջ էին ազգակիցները: Մերձակա գավառների նման Չորքը նմանապես անցավ եւ ընկավ թուրքերի ու թաթարների բռնությունների տակ, որոնց սերունդները ցարդ սփռված են այս կողմերում: Բայց ինչպես նույն մերձակա գավառներում, այստեղ եւս անշեջ մնաց ազգության կրակի կայծը մինչեւ մեր դարը, Մելիքենց ծուխի մեջ, որոնց քաջագործությունները ծանոթ էին Դավիթ Բեկի

### 1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

# ԿԱՊԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հառաջնորդության ժամանակ, ինչպես եւ տեղ-տեղ հիշատակեցինք նախորդ գավառների մասին խոսելիս, հիշենք նաեւ այստեղ եւ հետագայում:

Սյունյաց աթոռի Հին ցուցակում Ձորքում կարգված գյուղերը, համաձայն երկրի փոքրության, սակավաթիվ են, հարկերի հետ միասին, դրանք են.

*Բաղաբերդ ..... 12*
*Նորագյուղ..... 12*
*Տիմիք ..... 12*
*Բակավանք ..... 12*
*Ծաղքանու ..... 6*
*Կահուրդ. Կահուրա ..... 6*
*Գեղո վանք ..... 20*
*Ողչէթի ..... 6*
*Բեխորոտ ..... 8*
*Շարաքո ..... 8*
*Բեշ ..... 6*
*Կաճաճուտ (Կաճաճա)..... 8*
*Բոկախու. Բագախու ..... 8*
*Կիցք ..... 8*
*Աջաբաջ ..... 10*
*Վաժունիք կամ Վաժանիք..... 11*

Հետագա դարերում գավառը, ինչպես երեւում է, բաժանվում է երկու վիճակի, ըստ Տաթեւի թեմի նոր ցուցակների եւ երկրի բնական դիրքի, այսինքն՝ համաձայն երկու ձորագետերի, որ վերն արձանագրեցինք, որոնք են Գեղվաձորը եւ Բաղաբերդը, որն այսպես է կոչվել հռչակավոր ամրոցի անունով, եւ յուրաքանչյուրում վեցական գյուղ է նշանակված, որոնք դուրս են վերոհիշյալներից.

Ամբեժ
Կարդ Վերին
Կարդ Ներքին
Չաթու
Քրդիկանց
Հանդիշեն
Քչանանց
Փրմազրա
Արջաձոր

Եվ սրանցից դուրս այլ գրություններում հիշված են Կալեր, Վանքն եւ Ղեղնավոր [գյուղերը]:

**Բաղաբերդ (ըստ Ռաֆֆու)**

## Ա. Գեղվաձոր

Վերն արձանագրեցինք նաեւ այս տարածքի սահմանների՝ Ձորք գավառի հյուսիսային մասում լինելը: Եվ այսպես է կոչվում մեծ գյուղի անունով, որ գտնվում է ձորի միջակողմում, աջ եզրին, որ հարավից է: Հին ցուցակում Գեղո վանք է կոչվում, եւ եկեղեցուն տրված հարկերից ելնելով ենթադրվում է, թե եղել է բարգավաճ կամ Ձորքի բոլոր գյուղերից ամենամեծը, որովհետեւ միայն սա է աթոռին վճարում 20 բեռ, մինչդեռ այլք՝ 12-ից ոչ ավելի, իսկ հետագա ցուցակներում գրվում է Գեղի(70) եւ չի հիշվում վանքը: Թվում է, թե ամուր էր, քանզի դասվում է այլ ամրոցների շարքին, որոնք մի առ մի խլեցին այլազգիները Սյունիքի թագավորներից 12-րդ դարում: Վտակների մոտ, որ հյուսիսից եւ ձախից իր մեջ ընդունում է Գեղվա գետը, Լորաձորը եւ Տաթեւը բաժանող լեռներին մոտիկ, արձանագրված են Քիսա՞, Քյուրուտ, որ անշուշտ Հին ցուցակի Կահուրդն է, որ գրչագրերից մեկում Գահուրա է գրված, Չիրիշ, եւ սրանցից հարավ Սանջարաղի՞մ բերդն է: Գեղաձորի վտակներից մեկի միավորման տեղում, արեւմտակողմում արձանագրված է միայն մեկ՝ Կարդ գյուղը, մյուս [վտակի] մոտ առաջինին [սահմանակից է] արեւելքից Մահմուդլուն է, որ թերեւս Ներքին Կարդն է: Այս երկուսից մեկից էր Տաթեւի Թովմաս եպիսկոպոսը, որ գովաբանվում է առաքինակրոն վարքով եւ թաղված է այնտեղ: Մահմուդլուից կես փարսախ հեռու՝ Գեղիից հյուսիս-արեւմուտք եւ վերջինիցս հազիվ մեկ մղոն հեռու գետի ձախակողմում Փիրիլի գյուղն է, իսկ գետի աջից, բացի Գեղիից, այլ գյուղ չի արձանագրված:

Համաձայն նոր ցուցակների, Գեղվաձորի վիճակի մեջ է Կից կամ Կիցք հին գյուղը, որ 1657թ. մի հիշատակարանում կոչվում է Գեց, եւ վկայված է, թե գտնվում է «աստվածապահ Գեղվաձոր երկրում». այդպես կոչվել է, թվում է, իր ամրության պատճառով, ինչը նշանակում է, որ բնակիչները եղել են ապահովության մեջ: Գյուղի եկեղեցին կոչվել է Ս. Ստեփանոսի եւ Ս. Աստվածածնի եւ «բոլոր սրբերի (անունով), որ այստեղ են հավատով»(71): (Շարականի) գրիչը (Պողոս կարգավորը) ասում է, թե ընդօրինակությունն ավարտել է Ղեղնավոր գյուղում, Ս. Սարգիս Ձորավարի հովանու ներքո, եւ հայտնում է, թե գրել է ձմռանը, որի խստությունը ցույց է տալիս հետեւյալ խոսքերով. «Թանաքը սառչում էր... չէր տալիս. վայ ինձ՝ մեղավորիս»:

## Բ. Բաղաբերդ

119. Բաղաբերդի սեփական վիճակը, որ այժմյանները Բաղաբերդ են անվանում, Կապան գետի ձորն է, Կապուտջուղ բարձրաբերձ լեռից իջնելով դեպ արեւելակողմ՝ ընթանալով հյուսիսախառն, ուր Աջիլու գյուղի մոտ աջից՝ հարավակողմից մի վտակ է ընդունում Կովսականի կողմից, մի փոքր ներքեւ ընդունում է Գեղվաձորի գետակը, որը խառնվում է Ողջի կամ Ողջանց գյուղի անունով մեկ այլ գետակի հետ, ապա մի քիչ ընթանալով դեպի արեւելք-հյուսիս՝ թափվում է Չավնդուրի մեջ: Այս վիճակի մեջ քիչ գյուղեր են արձանագրված քարտեզում. ըստ գետի ընթացքի նրա ձախ կողմում է Շաբադի՞- Ողջին, որը եւ Ողջից կամ Ողջանց գլխավոր գյուղն է, որի անունը չի լսվում հների մեջ, հյուսիսակողմից նրան մոտիկ կամ գրեթե կից է Աթկիզի [գյուղը], որից շուրջ կես փարսախ արեւելք, գետեզրին Բանալու [գյուղը] եւ սրանից մեկ մղոն հեռու դեպ հյուսիս-արեւելք Դալուլերն է:

Կապան գետի աջից՝ մի գետառվի մոտ, Ողջիից մեկ մղոն դեպ հարավ Փիրդավդան կամ Չիրդավդան գյուղն է, մեկ եւ ավելի փարսախ հեռու՝ (Կապան) գետին մոտիկ, Կապանի լեռների ստորոտին կամ լանջին Մեզրե գյուղն է, որ մոտիկ է հարավից եկող մի վտակի, եւ առավելագույն չափով մոտիկ է Բուխրուտը, այն է՝ Հին ցուցակի Բեխորոտը՝ դիրքով եւ անունով այժմ ծանոթ Բաղաբերդի միակ գյուղը՝ Ս. Ստեփանոս եկեղեցիով: Նրա անունով է կոչվում նաեւ մերձակա երկայնանիստ լեռը՝ համաձայն ղափանցիների պատմության: Սրան մոտիկ արեւմտյան կողմից խառնվում են Գեղվա եւ Ողջի գետակները, որոնց անկյունամասում՝ Բաղաբերդից ոչ հեռու, Ձեւու բերդն է: Այստեղ Ալամազ Ղուլի խանը կամ Պարսից կողմնապահ իր ուժերը կենտրոնացնում է ընդդեմ Դավիթ Բեկի, ով յուրայինների հետ փութալով գալիս է Ղարաչիման գյուղ եւ այնտեղից շարժվելով՝ գալիս «պաշարում է Ձեւու բերդը, բայց դժվար եղավ այն նվաճելը, որովհետեւ խիստ բարձր եւ անառիկ էր: Նրա վրա երկու օր գրոհելուց հետո Մխիթար Սպարապետը եւ Տեր Ավետիքը վեր շարժվեցին, իսկ նրանք պարսպի այն կողմից սրանց հետ մղեցին: Սակայն Տեր Ավետիքը նրանց խաբելով բարձրացավ բերդի վրա եւ ձերբակալեց նրանց գլխավորին: Այստեղ ամբողջ զորքը, որ շրջապատել էր բերդը, պարսպից ներս է մտնում եւ սրի անցկացնելով՝ բոլորին կոտորում: Եվ այն օրը թուրքերից 4000 մարդու կոտորեցին, եւ սրանցից միայն քչերը մեռան(72): Այնտեղից գալիս են Աջբեջ (որ Հին ցուցակի Աջաբաջն է) եւ այնտեղ եւս կոտորում են այլազգի բնակիչներին»: Այս գյուղից էր Մովսեսի ու Եղիսաբեթի որդի Սողոմոնը, նրա քեռին՝ Բաղդասարի որդի Յավրի Գաղեցին, որը (Սողոմոնը) լսելով իր քեռու մահվան մասին Վենետիկում, գնաց այնտեղ (1736) եւ դատ վարեց՝ պահանջելու համար Ս. Խաչ եկեղեցուն նրա կտակած ինչքերը եւ ապա զղջալով՝ վերցրեց միայն իրեն կտակված մեկ մասը (600 դուկատ) ու ճանապարհածախսը եւ ստորագրեց դրանից հետո չպահանջել եւ ոչ մի բան(73): Այժմ Ձեւու բերդն ամայի է, նույնպես եւ՝ համանուն գյուղը: Ավելի լավ վիճակում չեն կարծեմ Ողջանցը, որ գտնվում է Ձեւուի հարավակողմում, եւ նրանից հարավ փոքր կամ սակավաբնակ, բայց մեծանուն Քաջարանց հայոց գյուղը:

120. Բեխորոտի հարավից ձգվում են երկայնանիստ լեռներ հորիզոնական դիրքով Արեւիքի եւ Ձորքի միջեւ. Կապան գետի ձախ կողմում փնտրելի են սրա երկու կարեւոր վայրերը, որ դժբախտաբար արձանագրված չեն տեղացույց տախտակի վրա. պարզորոշ է, որ դրանք պետք է Բաղաբերդի կամ Բաղա բերդի եւ Կապան քաղաքի ավերակները լինեին: Այդ երկուսը եւս տվյալ գավառների անվանատուներն են եւ Սյունյաց թագավորության վերջին ժամանակներում նահանգի բոլոր հին շենքերից ու ոստաններից ավելի էին հռչակված, թեպետ այն բերդը հռչակված էր ի սկզբանե անտի եւ երկրի բոլոր բերդերի գլխավորն էր համարվում եւ անառիկ էր: Ըստ պատմիչի՝ դա այնպիսիներից մեկն էր, «որ անհասանելի է մարդկանց մուտքին, եւ միայն Տերը կարող է մատչելի դարձնել. դա Բաղաբերդն է. դա այն է, որ Սիսակի սերունդներից մի մարդ՝ Բաղակ անունով, այս գավառն ստանալով ժառանգության բաժին, Բաղակի ապառաժը շինում է ամրոց, որը կոչվում է Բաղակի քար, բերդն ամրացնում է եւ անվանում Բաղաբերդ»(74): Խոսքերը ցույց են տալիս, որ այն Բաղակ նահապետը նախ քարաժայռը, որ ուղիղ բարձրանում է ձորի միջից, այդպես անվանել է իր անունով, եւ նրա գագաթին կառուցել դժվարամատչելի բերդը(75), եւ այն եւս նույնակերպ անվանել, եւ մինչեւ այժմ այդպես է անվանվում ամբողջ վիճակի եւ լեռան հետ միասին, որ նայում է դեպ հյուսիս, «Աճանանի դիմաց», այսինքն՝ Բաղքում, կանխապես տեղագրված Աչաղուի եւ Տանձափարախի կողմերը: Տեղի ամրության մասին քաջապես հավաստում է խրոխտ Անդովկ [իշխանը], որ մահուչափ քենով լցված պարսից Շապուհ մեծ արքայի հանդեպ, ավարի ենթարկեց Տիզբոնի նրա արքունիքը, երբ նա իր մեծ բանակով կռվի էր գնացել ընդդեմ խազարների. «Եվ բերելով անհաշիվ ավարը՝ ամբողջը հավաքեցին Բաղաբերդում: Եվ բոլոր գավառների (Սյունյաց) հացի, խոտի, հարդի պաշարները, ամբողջ գինին, յուղը, մսացուները, մեղրը, տեսակ-տեսակ մրգերը՝ անհամար կենսապաշար, ինչպես նաեւ հեծելազորի սարքերն ու զենքերը կենտրոնացրին Բաղաբերդում: ...Եվ խազարների դեմ մղած պատերազմն ավարտելուց հետո պարսից Շապուհ արքան վերադարձավ, մեծ ցասումով հրամայեց իր բոլոր զորքերին գնալ Սյունյաց աշխարհ... Շապուհը դարձյալ Պարսկաստանի, Արյաց աշխարհի... ամբողջ բազմության զորահավաք կատարեց, գնաց պատերազմելու Բաղաբերդի դեմ, բայց տեղի ամրության պատճառով ոչինչ չկարողացավ անել, որովհետեւ բերդից զառիվայր քարեր գլորելով՝ բոլորին առհասարակ ոչնչացնում էին: Ապա Շապուհ արքան հրամայեց, որ դրանից ավելի շատ, կրկնապատիկ զորքեր գան Պարսկաստանից: Եվ վերջապահ թողնելով՝ կարգադրեց սաստկացնել պատերազմը ամրոցի դեմ:

Եվ ինչպես առաջին, նույնպես եւ այս երկրորդ անգամ, պարսաքարերով ու վեմերի գլորումով պարսկական զորքի անհամար բազմությունն ամբողջովին դիաթավալ արեցին: Շապուհը նորից ուրիշ զորք գումարեց՝ դրանից եռապատիկ ավելի, ու հրամայեց սաստկացնել պատերազմը: Կարգադրեց վերջապահներ թողնել եւ ասաց. «Եթե մեկը հետ դառնա, սպանեցեք»: Սրանք էլ նույն ձեւով, ինչպես առաջին, երկրորդ, այնպես եւ այս երրորդ անգամ, վեմերով ու պարսաքարերով ջախջախվելով առհասարակ ոչնչացան: Եվ

**Շարունակությունը՝ էջ 74**

1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

## ԿԱՊԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

# ՍԻՍԱԿԱՆ

### Հատված Ղեւոնդ Ալիշանի համանուն կոթողային գրքից

**Սկիզբը՝ էջ 73**

պարսից Շապուհ արքան կատարված դեպքերից դարձյալ զայրագին ցասումով լցվեց ու կամեցավ ուրիշ անհամար զորք գումարել՝ եւս սաստիկ պատերազմ տալու Բաղաբերդի դեմ: Այդ ժամանակ մեծամեծ իշխաններն ու նախարարները, պարսից Շապուհ արքայի առաջ ծնկի իջնելով, աղաչեցին էլ չպատերազմել Բաղաբերդ անառիկ ամրոցի դեմ եւ արյաց զորքերը կոտորել չտալ: Բայց ասացին՝ ամրոցի շրջակայքը պետք է ավերակ դարձնել, այդպես էլ՝ Սյունիքի գավառների բոլոր իշխանությունները: Արքունիքից հրաման ելավ՝ մարդ թե անասուն Արյաց աշխարհի զորքերի ծառայության տակ լինեն: Իսկ Սյունյաց տեր Անդոկը հարմար օր գտնելով, դուրս եկավ Բաղաբերդ ամրոցից մեծ ավարով, անցավ Հոռոմոց աշխարհը, մեծ ինքնակալ Թեոդոսի՝ հունաց արքայի մոտ: Նրանցից մեծագույն պատվի արժանացավ՝ պատրկաց պատրիկ դարձվեց: Այնտեղ՝ Հոռոմոց երկրում էլ վախճանվեց»(76): Դրանից հետո բերդը բազմիցս ապավեն եւ փրկիչ է դարձել Սյունիքի՝ վտանգի ենթարկված իշխանների ու ենթակաների համար այլազգիների արշավանքների ժամանակ, ինչպես 9-րդ դարի կեսերին Բուղայի հարձակումների օրերին, «կուսակալ տերերից շատերը դիմելով Բաղաց ամրոց՝ հավաքվելով [այնտեղ] ձերբազատվում էին նեղիչների ձեռքերից»(77):

Բաղաց բերդն ապաստանի մեկ այլ օրինակ դարձավ 10-րդ դարի կեսին Սյունյաց վեհասիրտ Հակոբ եպիսկոպոսի (Հովհաննես Զ կաթողիկոսի եղբորորդու) համար, ով փախչում էր Անանիա Մոկացի կաթողիկոսից՝ իրեն պաշտպան ունենալով Բաղաց իշխան եւ այս բերդի տեր Զվանշերին տասը տարի, մինչեւ իր մահը: Այս մասին լսելով՝ կաթողիկոսը եկավ Սյունիք եւ Տաթեւի քանդված եպիսկոպոսարանը կառուցելու հրաման տալուց հետո «գնաց Կապան քաղաքը: Նրան ընդառաջ գնալով բանադրված Զեվանշեր իշխանը՝ զղջումով խոստովանեց իր մեղքերը: Նույնպես եւ եկավ Սյունյաց գահընկեց իշխան Վասակը... եւ գեղեցիկ խոստովանությամբ մեղա եկավ: Այսպիսով միասին [կաթողիկոսից] իրենց հանցանքների համար ներում ստանալով՝ նրան տարան, իջեցրին Կապան քաղաքի արքունական գահույքի վրա»(78): Այնտեղ ձեռնադրեց Զվանշերի որդի Վահանին Սյունիքի եպիսկոպոս եւ վերցնելով հավատարմության գիրը՝ գնաց: Այս խոսքից երեւում է, որ այն ժամանակ Կապան քաղաքը լոկ Բաղաց իշխանի նստավայր էր եւ դրանից հետո Սյունյաց նահապետների ոստանը դարձավ, երբ հասան թագավորության պատվին, եւ մտածում էին այն դարձնել խաղաղ մի վայր, եւ, հիրավի, սրանից ավելի ապահով վայր չկար, որովհետեւ ոչ միայն զորավոր էր Բաղաց բերդը, այլեւ ինքնըստինքյան ամուր էր Կապանն ի բնե եւ արվեստաշեն, որի հանգամանքները փոքր-ինչ ներկայացնում է պատմիչը՝ խոսելով այլազգիների կողմից նրա մատնության եւ ավերման չարաշուք դեպքերի մասին 11-րդ դարի վերջին կամ 12-րդի սկզբին, [որ կատարվեց] Մելիքշահ սուլթանի սիրելիի՝ թուրքերի Չորթման ամիրայի քինախնդրությամբ. [բանն այն էր], որ երբ մի անգամ Սյունիքի Սենեքերիմ թագավորը նրա մոտ էր, այդ այլազգին աղաչեց նրան իր դստերը կնության տալ իրեն: Թագավորը չհամաձայնեց, այլ լռեցնելու համար նրա թախանձանքները, երեսանց խոստացավ, իսկ նա ստույգ համարելով՝ պահանջելով էր խնդրում: Եվ թագավորի կողմից մերժվելով՝ թշնամացավ, ապա Մելիքշահի եւ Բերկիարուխի մահից հետո՝ թափանցելով Սյունիքի սահմանները, սկսեց ավերել երկիրը, քանդել ամրոցները, եւ, ինչպես երեւում է, սադրեց Գանձակի Փաթլուն ամիրային, եւ սրա հրամանով Շիրակի Գրիգոր Ապիրատյան իշխանը(79) Առանի ամբողջ զորքով եկավ Բաղքի եւ Կապանի ամրոցների մոտ, եւ «խաբեությամբ հնարքով մտան ներս, եւ սպանելով Սենեքերիմ հայկազուն արքային... այնտեղ մարեց ճրագը, եւ տիրեցին պարսիկները»(80): Ըստ Օրբելյանի՝ Գրիգոր Ապիրատյանը խաբվելով եւ հարկադրվելով (Փաթլուն) ամիրայից, որ նրան համոզում էր սիրո պատրվակով հրավիրել Սենեքերիմին եւ եթե չհամաձայներ՝ [սպառնում էր] կտրել Գրիգորի գլուխը: Եվ երբ թագավորը միամտաբար եկավ, «իր պայմանը դրժեց, մռլտոցով հարձակվելով թագավորի վրա՝ սպանեց նրան, իսկ ինքն անցավ-գնաց իր աշխարհը...: Եվ եկան մեծամեծերն ու [սպանվածի] որդիները, մեծ լաց ու կոծ արեցին նրա վրա եւ վերցրին-տարան Վահանի սուրբ վանքը եւ այնտեղ գերեզման դրեցին ուրիշ թագավորների շիրիմների մոտ»: Մոտ տասը տարի անց (1103), ավելացնում է նույն պատմիչը, «մի օր, երբ քաղաքացիներն անհոգ դրության մեջ էին, Տերը [կորստյան] մատնեց մարդկանց համար անառիկ Կապան քաղաքը. անիծյալ Չորթմանն իր վրեժը [լուծելու] համար անսպասելիորեն հարձակվեց քաղաքի վրա: Նախ՝ բազմաթիվ հետեւակ ծերպամուտ ու քարագնաց զորականներ բարձրացան ապառաժոտ լեռան գլուխը եւ հեղեղատի մեծ հունով(81) իջան քաղաք, քանի որ այդ տեղը պարսպափակված չէր՝ մարդկանց մուտքի համար անհնարին լինելու պատճառով: Սկսեցին կոտորել Ջիտաթաղի կողմից, ապա բացեցին քաղաքի դարպասը, որ նայում էր Խնձորոգլխին: Բոլոր զորքերը մտան ու ջարդեցին, կոտորեցին ամբողջ բնակչությունն առհասարակ: Սակայն բերդի նկատմամբ ոչինչ չկարողացան ձեռնարկել եւ հետ դարձան իրենց տեղը: Ահա հենց սա եղավ այս աշխարհի ավերման սկիզբը, եւ այդ թագավորությունն օրըստօրե սկսեց թուլանալ եւ ապա վերացավ», որովհետեւ այլազգիները մի առ մի գրավեցին բերդերը եւ ամենավերջում՝ 1170թ., «բոլորի ապավեն եւ ապաստարան անառիկ Բաղաբերդ ամրոցը մատնեց Իսմայելի անիծյալ ու գիշակեր մարդու ձեռքը, որը բազմաքանակ զորքերով եկավ, բայց չկարողացավ ոչինչ անել: Այնուհետեւ խաբեական խոսքերով խաբեց աչաղվացի պարզամիտ քրիստոնյա մարդկանց, ու նրանց միջոցով նախ գրավեց Կկոց քարը(82), ապա գիշերը նույն մարդկանց միջոցով հափշտակեց եւ Բաղաբերդը, որը գրավելով սաստիկ կոտորած արեց: Եվ քանի որ այն անհաղթահարելի ամրություն ուներ, բոլոր վանքերից այնտեղ էին կուտակել սրբությունները, գրքերը, եկեղեցական սպասքները, առավելապես Տաթեւի փարթամ ու հարուստ աթոռի անհամար եւ աննման սրբություններն ու եկեղեցական սպասքները, ոսկե եւ արծաթե խաչերը, հիշատակային իրերը՝ զարդարված անգին ակնեղեններով, անհամար մարգարիտներով: Այնտեղ ամբարված էին շատ կտակարաններ՝ թվով ավելի քան տասը հազար: Դրանք բոլորն էլ գերի տարվեցին եւ ցիր ու ցան եղան երկրի երեսին... Ապա մինչ Տերը մեզ դատապարտեց ու կամենում էր օրեցօր ոչնչացնել, մյուս բերդերն ու ամրոցներն ինքնակամ հանձնվեցին Ելտկուզ աթաբեկին(83), եւ ամենուրեք տիրեց տաճիկը»(84): Բայց Սյունյաց թագավորների վերջին ժառանգներից Հասան Խաչենեցին, որ փեսայացել էր Գրիգոր թագավորի (+ 1166թ.) դուստր Կատային, բերդի գրավումից առաջ իր կնոջ հետ փախավ՝ ապահովություն գտնելով իր հայրենի Խաչենում: Թեպետ շատ չանցած աշխարհաշեն Զաքարյանները տաճիկներից «հերթով խլեցին աշխարհը՝ Կայենից մինչեւ Բաղաբերդ» եւ երկրի համար քիչ դյուրին չեղավ Օրբելյանների ժառանգորդության ժամանակ 13-րդ դարում: Բայց Կապանը եւ Բաղաբերդն այլեւս չեն հիշվում, որովհետեւ երկրի ազատներն արքայազունների հեռանալուց հետո, ցրվելով գնացին տարբեր կողմեր՝ Համտունյաններն ու Մահեւանյանները. Բաղաբերդի անունը մնաց եւ այսօր էլ մնում է լոկ իբրեւ վիճակ: Անցյալ դարի սկզբներին(85) Դավիթ Բեկի տիրապետության ժամանակ Բաղաբերդի կողմնակալ զորավարն Ադամ անունով մեկն էր՝ 150 մարդկանցով: Այդ ահավոր ամրոցը դեռեւս կիսականգուն է իբրեւ ահեղախրոխտ սեպացած քարաժայռ, որ թվում է, վայրն անմատչելի դարձնելու նպատակով շուրջբոլորը սրածայր խութեր ունի: Սրան սատար է նրան փարված հորձանքահոս գետը, որ ճանապարհի տեղ իսկ չի թողնում, բացի մի կամրջից, սակայն դա էլ երկու կողմից ապահովված է ամրոցներով, որոնք հասնում են մինչեւ ջրի ափը: Իսկ պարիսպներն ու նրանց վրայի շենքերն ու եկեղեցին, որ քայքայված ու վնասված են, կուպրով ու կապարով շաղախված քարերից են:

Կապանի եւ Բաղաբերդի կարեւոր եւ ուսումնասիրելի վայրերից է նրանց երրորդ զույգը՝ Վահանա վանքը կամ Հովհաննա վանքը, որ կառուցված է Զվանշերի եղբոր՝ Զագիկ իշխանի որդու՝ Վահանի կողմից 911թ., ով ժամանակին դիվահար լինելով, իսկ հետո սթափվելով, հրաժարվեց աշխարհից եւ «գալով այն բարձր լեռան ստորոտը, որի վրա է Բաղաբերդի անառիկ ամրոցը... ու գտնելով մի հարթ եւ հարմար տեղ... նույն գործին է հրավիրում իր կրոնակից եղբայրներին. սկսում է եկեղեցու շինարարությունը եւ կանգնեցնում Աստծո փառքի տուն՝ հույժ գեղեցիկ կառուցվածքով, գմբեթահարկ, եռախորան, ամուր միացված տաշած վեմերով, եւ դարձնում կրոնավորների տուն: Արժեքավոր ու թագավորական սպասքներով զարդարում է այն, հավաքում է ավելի քան հարյուր մաքրակրոն վանականի: Եվ սուրբ Գրիգոր Լուսավորչի անունը կրող այդ եկեղեցուն հատկացնում է կալվածքի բաժին՝ ձորը գետով եւ այս ու այն կողմի հանդերն ու վանքի այգիները, լեռնակողմը՝ դեպի վեր, մինչեւ բարձրավանդակի ծայրը, որտեղ մակաղում էին մանր եղջերավոր անասունների հոտերը, իսկ քաղաքի կողմից՝ մինչեւ պարսպի արտաքին պատը, որը սկսվում է լեռնից, Տանձափարախի կողմից մեծ բնաձորը, որ սկիզբ է առնում լեռնից ու իջնում մինչեւ գետը եւ վանքի դիմացի գյուղերը՝ Աչաղուն(86), Աչաղվա գետը, Արավայրը, Շեկքը(87), ինչպես եւ եկեղեցու ուրիշ շատ նվիրատվություններ ու տիրույթներ՝ հաստատելով անխախտ որոշմամբ: Վահանն իր անունով վանքը կոչում է Վահանավանք(88), որն այնուհետեւ օրըստօրե ճոխանում է որպես բազմամարդ քաղաք: Նույն Վահանը շատ ճգնություն եւ ջանադիր աշխատանք կատարելուց հետո վախճանվում եւ թաղվում է սուրբ տաճարի դռանը:

Սուրբ վանքի կառուցումը կատարվել է հայոց երեք հարյուր վաթսուն թվականին, Սմբատ Բագրատունու թագավորության, Աշոտի որդի Սյունյաց գահերեց իշխան Սմբատի, Բաղքի Զեվանշերի իշխանության, տեր Հովհաննեսի՝ Սյունիքի եպիսկոպոսության ժամանակ:

Իսկ հետո մյուս Վահանը՝ նախորդի եղբորորդին, այսինքն՝ Զեվանշերի որդին, այս վանքում մանկությունից դաստիարակվելով ու սովորելով, վարժվելով աստվածային գիտություններին, քահանայացավ ու դարձավ սուրբ միաբանության առաջնորդ: Նա ավելացրեց բազմաթիվ շինություններ ու վանքը զարդարեց երեւելի բարեկարգումներով: Եկեղեցու բակում կառուցեց մեծ աղոթատունը՝ վիմակերտ մահարձաններով, որտեղ թաղված են Աղվանքի ու Բաղքի շատ թագավորներ ու թագուհիներ, Սիսական աշխարհի բազմաթիվ փառավոր իշխաններ: Գեղեցիկ հորինվածքով շինեց եկեղեցու գմբեթը՝ մեծամեծ հղկած վեմերով՝ երեսուն կանգուն բարձրությամբ: Վանքի դռանը կամար կանգնեցրեց՝ վրան երկու խորան, Պողոս ու Պետրոս սուրբ առաքյալների անվամբ: Կրաշաղախով միացված քարերով կառուցեց եւ մի մեծ սեղանատուն ու խողովակով ջուր բերեց նրա դուռը: Եվ այսպես՝ զանազան կառույցներով գեղեցկացրեց վանքը: Ապա ինքը հրավիրվեց Սյունյաց եպիսկոպոսության պաշտոնին՝ տեր Հակոբից հետո, իսկ այնտեղից էլ [հասավ] ծայրագույն փառքի՝ հայոց կաթողիկոսության, որ եղավ տեր Անանիա Մոկացուց հետո: Կաթողիկոսության աթոռին մնալով հինգ տարի՝ վախճանվեց Վասպուրական աշխարհի Տոսպ գավառի Բերկրիի մոտի Չորավանքում ու թաղվեց տաճարի բակում:

Երկար ժամանակ անց Բաղքի Գրիգոր թագավորի օրոք, ինչպես եւ Շահանդուխտ թագուհու, Կատայի, Սենեքերիմ թագավորի կողմից բազմաթիվ ու գեղեցիկ կառուցումներով առավել գեղեցկացվեց Վահանավանքը: Կանգնեցրին մեծամեծ կամարներ՝ վրաները եկեղեցիներ, բազմայուն ու բարձրահարկ սրահներ, իշխանական հովանոցներ ու խրախճարաններ: Այդ ժամանակներում եկավ Աղվանքի երջանիկ կաթողիկոս տեր Ստեփանոսը եւ, որոշ օրեր այնտեղ ապրելով, վախճանվեց ու թաղվեց նույն սրբարանում»(89), որը եւ կա, մնում է տապանի ՇԽ (1091) թվականով եւ արձանագրությամբ, որը վնասվելու հետեւանքով չի ընդօրինակվել մի նոր տեղագրի կողմից(90), բայց, բարեբախտաբար, մեզ պարգեւում է Շահանդուխտ թագուհու 1086թ. մի կարեւոր արձանագրությունը.

«ՇԼԵ (1086) թվականին ես՝ Աղվանքի մեծ արքա Սեւադայի դուստր եւ Աշոտի որդի Գրիգոր թագավորի ամուսին Շահանդուխտս, ըստ մարմնի չունենալով ժառանգ, ես եւ իմ քույրս՝ Կատան կառուցեցինք այս Սուրբ Աստվածածինը ի հատուցումն նրա ողորմածության, ինչքան ողջ եմ թող կատարվի սուրբ խորհուրդը եւ դրանից հետո մեզ թող կցորդ դարձնեն...»:

Ցանկալի էր ճշտել այս արձանագրությունը եւ գտնել այն ազնվազարմ ու սրբազան մարդկանց այլ տապանագրեր եւս եւ հասու լինել Սիսակյանների պատմական անցյալին ու ցեղաբանությանը, որովհետեւ Հոռոմոսի վանքի, Հաղպատի, Սանահինի եւ մոտիկ գտնվող Նորավանքի նման, սա նմանապես թվում է, հռչականուն ննջեցյալների հանգստարան է, եթե այն իսպառ չքանդեր ու չպղծեր այն Հարոն ամիրան, որ 1126թ. առավ Կաքավի Բերդը (այն է՝ Կաքավաբերդը), Բաղակի քարը, որ վանք էր, ուր «ամբարված կային բազում սրբություններ, խաչ, ոսկի, արծաթ, նահատակների մասունքներ եւ կտակարաններ, որոնք փոխադրվել էին գավառներից: Այս բոլորը գերության մատնվեցին»՝ ըստ պատմիչի(91):

Բաղաց թագավորության ամուր տեղերից մեկն էր Կաքավաբերդը, որ թերեւս նույն է Կքեբերդի հետ, եւ Սյունյաց աշխարհի հզորագույն ամրոցներից մեկն է համարվում պատմիչի կողմից «Պատմության» սկզբում, բայց հավանաբար պատշաճում է Արեւիքին: «Պատմության» մեջ երկիցս հիշատակվում է նաեւ Շլորուտ ամուր բերդը: Դավիթ Բեկի եւ նրա զորավարների գործերի պատմիչը Ղափանի գավառը պարծանքով անվանում է Յոթնաբերդ՝ որոշակի ցույց չտալով, թե որ բերդը նկատի ունի, բայց հայտնի է, որ նախ՝ Կապանը եւ Բաղաբերդը նկատի ունի, թեպետ հայոց զորավարներին թվարկելիս միայն հարեւանցի են հիշատակվում, իսկ Կաքավաբերդը եւ Շլորուտը՝ ամենեւին: Եվ քանի որ այժմ ընդարձակվում են Ղափանի սահմանները՝ նրանում ներառելի են հարկավ Դավթի բերդը եւ Ծղուկքում ու Բաղքում եղած մյուսները, նաեւ Արեւիք գավառում եղածները <...> (92):

### Ծանոթագրություն

1. [Բաղքի թագավորությունը կործանվեց 1170թ.՝ Բաղաբերդի անկումով. տե՛ս Գ. Մ. Գրիգորյան, «Սյունիքը Օրբելյանների օրոք», Եր., 1981, էջ 41]: Անկյունավոր փակագծերի ծանոթագրությունները թարգմանչինն են:

2. Շահնազարյանի տպագիրը [հտ. Ա-Բ, Փարիզ, 1859] ունի Աղունոյ, մինչդեռ մեր օրինակներում՝ Աղուանի, ուրիշների մոտ Աղունի կամ Աղուանի: [Օրբելյանի «Պատմության» մեջ անունը պայմանավորված է Աղուան (Աղվան) գետ, Աղուանոյ գետ տարբերակներով. տե՛ս Ստեփանոս Օրբելյան, «Սյունիքի պատմություն», թարգմանությունը, ներածությունը եւ ծանոթագրությունները Ա.Ա.Աբրահամյանի, Եր., 1986, էջ 432, ծնթ. 217]:

3. Ռուսաց մեծ աշխարհացույցի մեջ երկբայորեն է նշանակված այս գետակի վերջը, կամ որովհետեւ անստույգ է եւ կամ, չհասնելով Երասխ, սպառվում է:

4. [Մինչ այժմ կան Բաղաբերդի ավերակները, որոնք գտնվում են Ողջի գետի եւ նրա ձախակողմյան Գիրաթաղ վտակի անկյունում, այժմ Դավիթ Բեկ ավանի մոտ, Կապան քաղաքից դեպի հյուսիս, Քաջարան քաղաքից 17 կմ արեւելք, Թ.Խ.Հակոբյան, «Սյունիքի թագավորությունը», Եր., 1966, էջ 122-18, տե՛ս Օրբելյան, «Սյունիքի պատմություն», էջ 413, ծնթ. 27]:

5. Ինչպես [Կ. վրդ.] Շահնազարյանն է նշում Սյունյաց պատմության ծանոթագրության մեջ, Բ, 315:

6. [Օրբելյան, ԼԳ]:

7. Օրբելյան, ԼԹ:

8. Նույն, ԽԱ, ԽԳ:

9. Նույն, ԽԱ, ԽԳ:

10. Նույն, ԼԸ, ԾԱ:

11. Նույն, ԽԵ, ԾԱ, ԾԲ:

12. Նույն, ԾԱ:

13. Նույն, ԽԵ:

14. Նույն, ԾԲ:



## 1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

# ԿԱՊԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

15. Նույն, ԾԴ:

16. [Անանիա Մոկացի կաթողիկոսի կողմից Վահանը ձեռնադրվել է Սյունյաց եպիսկոպոս տեր Հակոբի փոխարեն (962), 968-ին դարձել կաթողիկոս՝ այս դեպքում արդեն փոխարինելով Անանիա Մոկացուն]:

17. [Անանիա Ա Մոկացի կաթողիկոս (941-968)]:

18. [Տե՛ս «Բան բարառնական ոգեալ դիմառնաբար ի դիմաց Վաղարշապատու Ս. Կաթուղիկէին. Ողբ աւաղավանք եւ ձայն աշխարհականք լեալ անհուն հեծեծանօք վասն աւերման աշխարհիս Հայոց... շարեալ չափական բերմամբ հոմերական արհեստիւ ի Ստեփաննոսէ Սիւնեաց այցելուէ ի խնդրոյ շնորհազարդ վարդապետի Խաչատրոյ Կեչառեցի», հրատ. Կ.Կոստանյանց, Թիֆլիս, 1885]:

19. [Տե՛ս ծնթ. 16. «Սյունիքի պատմության» աշխարհաբար թարգմանության ծանոթագրություններում նշված է, թե Վահանավանքի (Հովհաննավանք) առաջնորդն ապագա Վահան կաթողիկոսն է (ծնթ. 788, էջ 479), ըստ Ալիշանի նա եղել է Վահանի համանուն հորեղբայրը, որը եղբայրն էր Զվանշիրի եւ Վասակի]:

20. [Քաղկեդոնականությանը հարած լինելու պատճառով Վահանի կաթողիկոսությունը չի ճանաչվել: Նա վտարվել է 969թ., փախել Վասպուրական, ուր եւ մահացել է 972-ին]:

21. Օրբելյան, ԿԴ: Հայտնապես վրիպակներ կան թվերի մեջ, որովհետեւ սկզբից ասում է Հովհաննավանքում Հովհաննեն եպիսկոպոսի լինելու մասին ՇԾԴ (1105) թվին եւ նրա մահը դնում է ՈԿԳ թվին (1214), որ 110 տարի հետո է, իսկ եղբոր մահը՝ եւս 17 տարի հետո. բայց եպիսկոպոսը մահացել է հավանաբար 1164թ., իսկ Համտունը՝ 1181-ին:

22. [Կապանը նվաճվեց 1103թ. Մելիք-Շահի երբեմնի մատռվակ Չորթմանի հրոսակախմբերի կողմից. տե՛ս Գ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 207-208]:

23. Օրբելյան, ԽԵ:

24. «Նոր դար», է,129:

25. «Նոր դար», է, 81, 129:

26. Օրբելյան, Խ:

27. [Կավարտ գյուղը հիշատակված է Օրբելյանի երկում բերված հարկացուցակի մեջ: Այն այսօր մաս է կազմում Կապան քաղաքի]:

28. [Օրբելյան, Խ]:

29. [Փիլիպպոս Ա Աղբակեցի կաթողիկոսի (1633-1655) մասին տե՛ս Մ. արք. Օրմանյան, «Ազգապատում», եւ 1666-1722]:

30. [Տե՛ս Առաքել Դավրիժեցի, «Գիրք պատմութեանց», աշխտ. Լ.Խանլարյանի, Եր., 1990]:

31. [Առաքել Դավրիժեցի, «Գիրք պատմութեանց», էջ 205, 305: Մովսես Գ Տաթեւացի կաթողիկոսի մասին հանգամանալից տե՛ս Մ. արք. Օրմանյան, «Ազգապատում», եւ 1653-1665, նաեւ՝ Հ. Ն. Ակինյան, «Մովսէս Գ Տաթեւացի եւ իր ժամանակը», Վիեննա, 1936]:

32. [Դեպքերի մասին առավել մանրամասն տե՛ս Ա.Այվազյան, Իրադարձությունները Ղափանում եւ Նախիջեւանի խանությունում 1724թ., «Պատմա-բանասիրական հանդես», 1991, № 2 (133), էջ 102-114]

33. [Տե՛ս Դաւիթ Բէկ կամ «Պատմութիւն Ղափանցւոց», աշխատասիրեց Սամուէլ վրդ. Արամեան, Վենետիկ, Ս. Ղազար, 1978, էջ 119-130]:

34. [Դավիթ Բէկ կամ «Պատմութիւն Ղափանցւոց, էջ 135]:

35. [Դավիթ Բէկ կամ «Պատմութիւն Ղափանցւոց, էջ 155]:

36. [Այսինքն՝ 936թ.: 1948թ. հայտնաբերված որմնասյան խոյակի վրա արձանագրված թվականը ՅՁԴ է, այսինքն՝ 935: Պահպանված են նաեւ վանքի եւ նրա հիմնադրի անունները, որոնք հաստատում են, որ դա իրապես էլ Բղեն գավառի Նորավանքն է: Այդ ժամանակ ավարտվել է առաջին հուշարձանախմբի կառուցումը. «Դիվան հայ վիմագրության», պրակ 2-րդ, էջ 43-44, տե՛ս «Սյունիքի պատմություն», ծնթ. 721, էջ 474:]

37. [Այսինքն՝ 970թ.]:

38. «Սյունիքի պատմության» աշխարհաբար թարգմանության մեջ բացակայում են «հայր Հրահատը եւ նրանից հետո» բառերը (էջ 222)]:

39. [Օրբելյան, ԽԷ]:

40. [Համաձայն արձանագրությունների՝ հայր Գեւորգի եւ Հովհաննես քահանայի կատարած շինարարությունը ավարտվել է 1062թ.: Այն պահպանվել է. «Դիվան հայ վիմագրության», պր. 2-րդ, էջ 42, տե՛ս «Սյունիքի պատմություն», ծնթ. 724, էջ 475]:

41. [Տե՛ս ծնթ. 34]:

42. Օրբելյան, ԼԹ, ԽԵ, ԿԲ:

43. [Մատթեոս վրդ. Ջուղայեցու այս երկի խորագիրն է «Մատթեոսի վարդապետի աշխատասիրեալ վասն քարոզության բանի, ի վարդապետութենեն սուրբ հօրն Եւագրեայ, որ միտք անապատի կոչի եւ ի նորին վարուցն հետեւողէ սրբոյն Նեղոսէ, որ ցան եւ ցիր գոյր ի բանս նոցա՝ հաւաքեալ ի մի ի պէտս բանասէր անձանց», տե՛ս Լ. Խաչիկյան, Մատթեոս Ջուղայեցու կյանքն ու մատենագրությունը, Աշխատութիւններ, Ա, Եր., 1995, էջ 255]:

44. Ռաֆֆին նույնն է համարում Երիցվանիկն ու Նախջվանիկը, նաեւ [ընդունում] դրա մի երրորդ՝ Արծվանիկ անունով կոչվելը: Մինչդեռ Հին ցուցակը տարբեր է արձանագրում Երեցն ու Նախջվանիկը, իսկ երրորդ անունը չի հիշում:

45. [Օրբելյան, Ի]:

46. Պատմիչը կանխում է իրավիճակը. այն ժամանակ դեռ չկար մետրոպոլիտության խնդիր կամ ենթադրություն:

47. [Օրբելյան, Ի]:

48. [Օրբելյան, ԽՁ]:

49. Ռաֆֆին գյուղի անունը Եղվարդ է գրում իր «Դավիթ Բեկ» վեպում, եւ ճակատամարտի վայրը պարսիկներն անվանում են Նարգեզի զամի, այսինքն՝ Նարգիզ ծաղիկների մարգ: Եվ ասվում է, թե այնտեղ է թաղված հավատարիմ մելիք Թորոսը:

50. [տե՛ս Դավիթ Բէկ կամ «Պատմութիւն Ղափանցւոց, էջ 125]:

51. [Օրբելյան, Խ]:

52. Այս քահանա գրիչը հիշատակում է նաեւ իր եղբորը՝ Խոջային, իր կնոջը՝ Նուպհարին, որդուն՝ Խոջաջանին, առաջին կնոջից Հուստիանայից՝ Խումարին, սրա կնոջը՝ Խանումին, մատաղահասակ որդիներին՝ Մուրադբաշխին, Խաչումին եւ Եսաղուլին եւ Խանումից ծնվածներին՝ Էվազին, Դելիք պապին, Գավարին եւ մատյանի վրա ծախս կատարած կանանց՝ Սոլումին, Նանեին, «որ Ավետարանի համար մեկ աբասի տվեց» (աբասի դրամ) եւ Մարիանեին, որ նույն պետքի համար «մի փոքրիկ մա՞կ» է տալիս:

53. [Ճանապարհորդ-բնագետ] Ռադդեն Ղարաբաղի տեղագրության մեջ ու նրա քարտեզում այս գետակն անվանում է Չայիսմի:

54. Այսպես է գրում Դյուբուան, Դ 60:

55. «Հիանալի տեսարան. վերեւից երեւում է Արաքսը, որը դանդաղեցնում է իր հոսքը՝ մտնելով Ղարաբաղի տարածքը, եւ որը գալարվում էր՝ ստեղծելով բազում կղզիներ: Իր կեղտոտ եւ դեղնավուն ջրերը միախառնվում են Չալուդեռչայի մաքրամաքուր եւ թափանցիկ ալիքներին, որոնք սահելով գալիս են լեռներից եւ բրնձի արտերից: Գետերի այս միախառնումը ստեղծում է մի գեղեցիկ հարթավայր՝ ծածկված հացահատիկի արտերով եւ ծառերով, որտեղ եւս փոքրիկ կետերը անասունների նախիրն է, որ արածում է: Ձախ կողմում՝ Արաքսի հետեւում, աչքի է ընկնում եռահարկի բարձրության դեղնավուն կրաքարե մի պատվար՝ ծածկված կանաչով ու գիհիներով: Աջ կողմում՝ բլուրների ետեւում, տարածվում է Ալանգյազի կամ Կապանի ողջ շղթան, որ Սեւանա լճի ափերից գալիս է եզերելու Արաքսը: Նրա գագաթները ծածկված են փայլող ձյունով, որը ժամանակ առ ժամանակ ծակվում է դիորիտե սուր բեկորներով: Մի կողմից կլորավուն խորքում, ուր Արաքսն է վարարում, քննող հայացքով հառնում են ամեն տեսակի սարեր՝ մի քանիսը ծածկված ձյունով, որոնց գագաթները թաքցնում են ամպերը: Հեռվից գագաթները հավասարվում են Ղարաբաղի կանաչ հարթավայրերին, որտեղով հոսում է Արաքսը», տե՛ս Dubois, Voyage, iv, p. 56-57:

56. [Օրբելյան ԻԱ]

57. [Ա. Աբրահամյանը գրում է. «Այստեղ հավանաբար աղավաղում կա: Այսպիսի անունով վանք կամ եկեղեցի հայտնի չէ: Մ.Բրոսեն, նրան միացնելով հաջորդ երկու բառերը, դարձրել է Manacca-i Ners.»] («Սյունիքի պատմություն», էջ 433, ծնթ. 227):

58. [Կապան բնակավայրը կամ քաղաքը գտնվում էր այսօրվա Կապան քաղաքից վերեւ, Կապան-Քաջարան ճանապարհի միջին հատվածում, Ողջի գետի բարձրադիր աջ ափին, այն վայրում, որ տեղացիներն հորջորջում են «Տանձուլենջ»: Սա հիշատակված է 5-րդ դարից: 10-րդ դարում արդեն քաղաք էր եւ դարավերջին դարձավ Սյունիքի թագավորության կենտրոնը]:

59. [Օրբելյան, Խ]:

60. [Տե՛ս Մատենագիրք հայոց, հ. Բ, Անթիլիաս, 2003, էջ 2172 (72), 2153 (81), 2188 (101)]:

61. «Նոր դար», է, 88, Ը, 159:

62. [Օրբելյան, ԼԹ]:

63. [Օրբելյան, Խ]:

64. Հարկավոր է խորհրդանշական համարել այն, որ երեք գյուղի անվան մեջ կա Դազ մասնիկը, ինչը չկարողացա ստուգաբանել. թերեւս հայերեն աղավաղված Թաղ բառն է:

65. [Ջեռատիվանքը ոչ թե վանք է, այլ՝ գյուղ, ինչպես կարելի է հասկանալ վճռագրից. տե՛ս «Սյունիքի պատմություն», էջ 486, ծնթ. 928]:

66. Այս Փատլունը, որ Շվարյան տոհմից է, Անիի առաջին տիրողն է, որ մասնահատուկ անվանումով Մանուչէ է կոչվում:

67. Եթե այլազգի իշխան չէ՝ ապա Սենեքերիմի կամ դպիրը, կամ գրիչն է:

68. [Օրբելյան, Կ]:

69. Մեր հին պատմիչ Բուզանդը 4-րդ դարի երկրորդ կեսին հիշատակում է Ձորոց աշխարհի Գորութ իշխանին [Գ դպ., ԺԲ], որի անունը եւ նրան կից Գողթնյաց իշխանի հիշատակումը ենթադրել են տալիս, թե ակնարկը վերաբերում է այս գավառին, բայց քանի որ նրանց հետ հիշվում է նաեւ Կողբի իշխանը, հարկ է նրանց հետ այստեղ հիշված Ձորքը համարել Գուգարաց Ձորոփոր գավառը, թեպետ եւ չափազանց է թվում երկուսը միասին ընդարձակորեն աշխարհ անվանել: Ինչպես երկու տեղի Ձորք անունն անստույգ է դարձնում [անվան] հիշատակումը, նույնն էլ Կապանի [պարագան] է, որովհետեւ Փոքր Հայքում էլ համանուն քաղաք կա, եւ չգիտեմ, թե որտեղի՞ց էր Տիրանուն իմաստասեր վարդապետ Կապանեցին 11-րդ դարում [տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, թարգմանություն, ներածություն ու ծանոթագրությունները Հ. Բարթիկյանի, Եր., 1973, էջ 69, 118]:

70. Ռաֆֆին «Դավիթ Բեկ» վեպում նույնացնում է Գեղին եւ Ջեւուբերդը, սակայն դիրքը, որ նկարագրում է, չի համապատասխանում տեղագրի տախտակներին, քանի որ Հալիձորի գետը կից չէ նույնին:

71. Պետք է գրվեր «հավաքված»:

72. Ռաֆֆին խիստ երկարացնում է այս բերդի պաշարման եւ գրավման նկարագրությունը՝ երեւակայածին պարագաներով:

73. Եթե մեկը սա արժանի համարի հետազոտության՝ իմանալու նրա գրությունը եւ այն վավերացնողներին, ապա գրությունն այս է. «Աստծով ՌՃՁԶ (1737) թ. օգոստոսի 17-ին եկա Վենետիկ եւ ՌՃՁԷ (1738)թ. մարտի 20-ին կատարվեց ներքոգրյալը: Գրությանս պատճառը հետեւյալն է. Ես՝ Ղափան երկրի Աջբեջ գյուղից Մովսեսի որդի Սողոմոնս եկա Վենետիկ, իմ քեռի Բաղդասարի որդի Յավրիի [առիթով], որ 4 տարի առաջ վախճանվել էր եւ մի քիչ ապրանք ուներ եւ ում մոտ որ փող ուներ բոլորը կտակել էր, եւ իր հոգու փրկության համար թող ժամ եւ պատարագ լինի: Եվ ինձ համար 600 դուկատ էր թողել իր բերանի խոսքով, ինչպես մեր ժողովը վկայեց, այսպես էր ասված: Եվ ես գնացի դատ հարուցեցի, թե բողոքում եմ, բայց տեսա, որ իմ մտածածը անօգուտ է եւ խղճմտանքի դեմ եւ իմ հոգուն՝ վնաս, այս պատճառով ես իմ կամքով եւ հոժարությամբ համաձայնեցի իմ քեռի Պաղենի արած կտակին, որ վերաբերում է Ս. Խաչ հայոց եկեղեցուն եւ Ս. Ղազար Հայոց վանքին, նաեւ իր կողակցին՝ Անեզին: Եվ ես վերստին հաստատեցի նրա կտակում ասվածը, եւ ես իմ 600 դուկատը վերցրի Ս. Խաչ եկեղեցուց եւ Ս. Ղազարի վանքից եւ ինչքան ինձ պետք էր՝ գնալ գալու ծախսն էլ վերցրի՝ 260 դուկատ եւ միասին եղավ 860 դուկատ: Եվ ինձ ամեն կողմից շահեցին, ու ես իմ կամքով եւ հոժարությամբ այս գրությունը գրեցի եւ տվի ատյանին, որ այսուհետեւ՝ ոչ ես եւ ոչ իմ որդին եւ ոչ էլ իմ քեռի Պաղին ապրանքի եւ դրամի վերաբերյալ պահանջ չունենք ոչ այստեղ եւ ոչ էլ այլ երկրում... եւ եթե վեճ հարուցեմ՝ նախ ամենակալ Հորից եւ 318 սուրբ հայրապետներից նզովվելով բռնադատվեմ եւ երկրորդ բողոքի դեպքում 1500 ղուրուշ հատուցում լինի: Եվ տեսնողների համար թող ընդունելի լինի: Ես իմ ձեռքով գրեցի ստորեւ, եւ վերոգրյալը ինձ ընդունելի է:

Ես Մովսեսի որդի Սողոմոնիս համար վերոգրյալը ընդունելի է:

Ես Մինաս Փերվազյան արքեպիսկոպոս Զմյուռնիայի այս գրի մեջ եղած խոսքը յուրովի հոգացի, եւ ստորագրությունը Մովսեսի [որդի] Սողոմոնինն է, որի համար ես վկայում եմ, գրեցի եւ կնքեցի, տեսնողներին ընդունելի լինի:

Ես Ստեփան որդի Վարդանի Շահումս վերոգրյալ բանին վկա եմ <...>:

Ստորագրող վկաներից առաջինը (Մինաս արքեպիսկոպոսից հետո) նշանավոր անձ է. նա զինակիցն ու սիրելին է Դավիթ Բեկի, որ հիշված է մատյանի մեջ եւ հատուկ հիշելի քիչ անց:

74. Ռաֆֆին ասում է, թե գտնվում է Գեղվածոր եւ Հալիձոր գետերի կցման անկյունին մոտիկ՝ շրջապատված նեղ ձորակի կամ փողոցի լեռներով, որի մի ծայրին հանդիպակաց կանգնած են Հալիձորի եւ Աչաղուի բերդերը, մյուս [ծայրին] են Բաղակա-քարն ու Շլորուտը: Իսկ նոր ուղեգրության մեջ ասվում է. թե գտնվում է Կապան գետի կամրջի եզրին կից, որի երկու կողմերում բարձրանում են բերդի կիսաշեն կառույցները, ուր կան պարիսպների, գերեզմանների ու եկեղեցու ավերակներ:

75. [Մինչդեռ, ինչպես հայտնի է, «Բաղաբերդը եւ Բաղակի քարը (բերդը) նույնական չեն: Գտնվում են միմյանցից 700-800 մետր հեռավորության վրա, Ողջի գետի կիրճի հակադիր ափերի բարձր ժայռերի կատարներին, Ա.Աբրահամյանի ծնթ. տե՛ս «Սյունիքի պատմություն», էջ 414, ծնթ. 35]:

76. Օրբելյան, Թ:

77. Հովհաննես կաթողիկոս [Դրասխանակերտցի, «Պատմութիւն հայոց», ԻԶ, տե՛ս «Մատենագիրք հայոց», հտ. ԺԱ, Անթիլիաս, 2010, էջ 435 (2)]:

78. [Օրբելյան, ԾԲ]:

79. Վարդանը (ԾԹ) եւ Մխիթար Այրիվանեցին Գրիգորի փոխարեն ասում են Գրիգոր Մագիստրոսի որդի Վասակ:

70. [Օրբելյան, ԾԲ]:

81. [«Եվ իջին ընդ մեծաւարի»] բառերի վերաբերյալ Ալիշանը ծանուցում է]. Այսպես է գրված գրքի օրինակներից մեկում. ինչը քննելի է, բայց, թվում է, մատնացույց է անում հեղեղատի հունը կամ ձորը եւ կամ ակնարկում է վարարուն եւ շատաջուր լինելը:

82. [Կկոց քարը կամ Կկվո քարը Բաղք (Ձորք) գավառի ամրոցներից մեկն էր: Այն գտնվում էր Բաղաբերդի մոտ, բարձր լեռան գլխին, Գիրաթաղ գետակի ձախակողմում. Կապանի շրջանում. տես Ս.Օրբելյանի «Սյունիքի պատմության» Ա.Աբրահամյանի ծնթ. 982, էջ 488-489]:

83. [Սա Շամսադդին Ելտկուզ աթաբեկն է, որն Իրաքի սելջուկյան սուլթանության աթաբեկներից էր: Ատրպատականում եւ այլ նահանգներում 1147թ. հիմնադրել էր Ելտկուզյան ամիրայությունը: Իշխել է 1147-75թթ.: Հայտնի է իր ասպատակություններով. տես Ա.Աբրահամյանի ծնթ. «Սյունիքի պատմություն», էջ 489, ծնթ. 985]:

84. [Օրբելյան, ԿԲ]:

85. [Այսինքն՝ 18-րդ դարասկզբին]:

86. [Աչաղու գյուղը նույն անունով պահպանվել է մինչեւ մեր օրերը: Այն մտնում է Կապանի շրջանի մեջ, եւ գտնվում է Վահանավանքից մի քանի կիլոմետր հեռավորության վրա]:

87. [Ենթադրվում է, որ Շեկք գյուղի տեղը Կապանի շրջանում գտնվող Շհարջիկ գյուղն է, Աչաղուի մոտ]:

88. [Վահանավանքը Կապանի շրջանում է, Կապան քաղաքից 6-7կմ հյուսիս-արեւմուտք, Շղարշիկ գյուղի դիմաց: Վանքի պեղումների վերաբերյալ. տե՛ս Գ. Գրիգորյան, Վահանավանքի վերածնունդը (հնագետի օրագրից), Եր., 2009]:

89. Անվանապես այստեղ թաղված են հիշվում Սյունյաց Սմբատ Բ թագավորը եւ Սենեքերիմ թագավորը. Օրբելյան, ԾԹ:

90. [Օրբելյան, ԽԵ]:

91. «Նոր դար», Ը, 159 «Շուշուց դեպի հին Նախիջեւան» ուղեգրության հեղինակն ասում է, թե Վահանավանքը մեկ ժամ հեռու է Դավթի բերդից, որ Հալիձորում է եւ սա մոտիկ է Բեխին, բայց «Սյունյաց պատմությունը» տարբեր վայրերում է զետեղում այս գավառը, այսինքն՝ իբրեւ Հալե կամ Հալիձոր՝ Հաբանդի մեջ, Բեխ՝ Կովսականում, Վահանավանք՝ Ձորքում:

92. [Օրբելյան, ԿԱ]:

**Գրական հայերենի փոխադրումը՝ բանասիրական գիտությունների թեկնածու Հակոբ Քյոսեյանի**
**Հրապարակման խմբագրումը՝ Ռոբերտ Գրիգորյանի (Էջանանցու)**
**Գրական հայերենի փոխադրման հովանավորումը՝ Նարինե Մովսիսյանի (Երեւանի գյուղատնտեսական համալսարանի Կապանի ուսումնական կենտրոնի տնօրեն)**
**Հրապարակման սրբագրումը՝ Վահրամ Օրբելյանի եւ Սլավիկ Նավասարդյանի**
**Գրական հայերենի փոխադրման նախաձեռնությունը՝ «Սյունյաց երկիր» թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանի**

# ՋԱՆԳԵԶՈՒՐԻ ԳԱՒԱՌ

## Կապան կամ Ղափան

### Պատմական համառօտ տեսութիւն

ԵՐՎԱՆԴ ԼԱԼԱՅԱՆ

**Երկու խօսք**

Սկսելով Զանգեզուրի գաւառի երրորդ՝ Ղափանի, ոստիկանական շրջանի նկարագրութիւնը, ես ցանկացայ նախ յիշել այստեղ պատահած քաղաքական անցքերը, այս պատճառով եւ սկսեցի թերթել հայ մատենագիրները, սակայն յետոյ նկատեցի, որ գրեթէ ոչինչ չի վրիպել հայր Ալիշանի շրջանկատ աչքից, հետեւապէս եւ ես ոչինչ չպիտի կարողանայի աւելացնել այն պատմական տեսութեան, որ նա արել է իւր «Սիսական»-ի մէջ, ուստի եւ որոշեցի չկրկնել այդ միեւնոյնը, այլ աւելի մանրամասն նկարագրել մելիքների գործունէութիւնը, քաղելով բացառապէս բանաւոր աղբիւրներից: Յայտնի է, թէ ո՞րքան սակաւաթիւ են XVIII դարի առաջին քառորդում գործող հայ մելիքների եւ մասնաւորապէս Դաւիթ-բէկի պատմութեան գրաւոր աղբիւրները, հետեւապէս եւ ներկայ գործը ո՛չ միայն նիւթ կարող է ծառայել վերաստուգելու անյայտ «վարդապետի» (1) հաղորդած փաստերը, այլ եւ որոշեալ չափով կարող է լուսաբանել եւ լրացնել նրանց. դեռ մի կողմը թողնենք այն, որ սա բաւականաչափ կը պարզե, թէ որքան վառ են մնացել ժողովրդի յիշողութեան մէջ տեղական հայ մելիքներն ու ազատութեան հերոս Դաւիթ-բէկը:

Կարեւոր եմ համարում յիշել ինձ տեղեկութիւններ տուող ծերունիներից գոնէ մի քանիսին: Նախ Վ.Ագուլիսի ծխատէր քահանայ Տէր-Մովսէս Մելիք-Ստեփանեանին, մի ուրսուանամեայ, առոյգ, խելացի եւ վառ յիշողութեան տէր մարդ: Պատկանելով մելիքների ցեղին, նա պատանեկական հասակից շարունակ լսել է իւր եւ իրեն ազգակից մելիքական տոհմերի պատմութիւնը եւ նոյնիսկ 1882թ. փորձել է գրի անցկացնել այդ լսածները: Այս աշխատութիւնից մի փոքրիկ հատուած տպուեց «Բանասեր»-ի 1902 թուի դեկտեմբերի համարում. իսկ ամբողջը Տեր հօր խնդրով խմբագրութիւնն ինձ ուղարկեց, որպեսզի համեմատեմ, թե քսան տարուց յետոյ ո՞չինչ չէր մոռացել եւ բոլո՛րն էր պատմել ինձ: Հինգ թերթի վրայ արժանապատիւ հայրը ուրուագծել էր այն, ինչ երեք օրուայ ընթացքում կարողացաւ պատմել ինձ:

Երկրորդ ծերունին Մեղրեցի Մատթէոս Շահեանն է, մի անձնաւորութիւն, որ շատ լաւ ծանոթ է Զանգեզուրի ամբողջ գաւառին, որովհետեւ երկար տարիներ վարել է ուսուցչի, գիւղական գրագրի, ծաղկահատի եւ փաստաբանի պաշտոն: Պարոնը սիրով ուղեկցեց ինձ Մեղրիի շրջանը ճանապարհորդելիս եւ իմ խնդրով գնաց Առաջածոր՝ եւ յատկապէս ինձ համար հաւաքեց մելիք Քարամեանների եւ Թորոս իշխանի մասին տեղեկութիւններ՝ աւելացնելով սրանց վրայ իւր զանազան ժամանակներում լսածները:

Երրորդը՝ Բեխ գիւղի Մելիք-Փարսադանեան բոլոր ծերունիների մէջ իւր խելացիութեամբ աչքի ընկնող Յարութիւն բէկն է, որ հաճեց նաեւ ուղեկցել ինձ Վահանայ վանքն ու Հալիձորի բերդը:

Չորրորդը՝ Արծվանիկ գիւղի քահանան է՝ Տեր Մեսրոպ Տեր Յարութիւնեան, որ տարաւ, ցոյց տուեց ինձ Երիցվանքը, Մելիք-Փրանգիւլի գերեզմանը եւ այլն:

Հինգերորդը՝ Կալեր գիւղի Մելիք Հովհաննէսեանը, վեցերորդը՝ Տաշտօնի քահանան եւ այլ շատ շատեր:

Ի վերջոյ այս հատուածի սրբագրութեան թերթերը աչքէ անցկացրին պ.պ. Մանուչար-բէկ. Մելիք-Ստեփանեան (Գանձակում) եւ Սողոմոն-բէկ Մելիք-Փարսադանեան, որոնց նկատողութիւնները ես նշանակեցի առանձին ծանոթութիւններով:

Յայտնում եմ իմ խորին շնորհակալութիւնս վերոյիշեալ բոլոր անձերին:

Շատ ցանկալի էր, որ կարող անձինք գրի առնէին ինձ չպատահած ավանդութիւններն էլ, որպէսզի ապագային հնարաւորութիւն լինէր մելիքների վերաբերութեամբ մի ամբողջացած տեսութիւն հրատարակել:

**ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Այժմեան Ղափանի ոստիկանական շրջանում նախանցեալ դարում իշխել են երկու նշանաւոր մելիքական սերունդներ. մինը՝ Մելիք-Փարսադանի, միւսը՝ Թորոս իշխանի: Մելիք-Փարսադանեան սերունդը բաժանուել է երկու տան՝ բուն Մելիք-Փարսադանեան եւ Մելիք-Ստեփանեան: Բացի սրանից, Մելիք-Փարսադանի մի դստեր սերունդը կազմել է մի ուրիշ, փոքրիկ մելիքութիւն՝ Մելիք Նուբարեան անունով:

Թորոս իշխանի սերունդը համարւում է այժմեան Մելիք-Քարամեանները, որոնք, ոմանց կարծիքով, սերել են Թորոս իշխանի Ծաղիկ դստեր եւ վրացի Քարամ իշխանից, իսկ իրենց՝ Մելիք Քարամեանների ասելով, Թորոս իշխանի թոռ՝ Հեթումի որդի Քարամից, որ քաջ մարդ է եղել եւ լեզգիների դէմ վարած պատերազմների ժամանակ ցոյց տուած արտակարգ քաջութիւնների շնորհիւ Մուստաֆա-փաշից Քիւփարա գաւառակի (2) վրայ մելիք կարգուել:

Բացի այս երկու տոհմից, այստեղ եղել է նաեւ մի ուրիշ մելիքական տուն, Մելիք-Փրանգիւլի, որ թուրքացել է:

Մելիք Փարսադանեանները բնակուել են գլխաւորապէս Հալիձոր եւ Բեխ գիւղերում, Մելիք-Ստեփանեաններն՝ Առաջածորում, իսկ Մելիք-Նուբարեանները՝ Շիկահողում. Թորոս իշխանը՝ Եղուարտում, Մելիք Քարամեանները՝ Ագարակում, իսկ այժմ՝ Տանձթափա կամ Ղարաբաբա գիւղում, Մելիք-Փրանգիւլն էլ՝ Արծուանիկում:

Այս մելիքական տոհմերից ամենանշանաւորը Մելիք-Փարսադանեանն է, որ սերել է, ոմանց ասելով, Սիւնեաց Ջագիկ իշխանից, իսկ Բեխի ծերունիների ասելով՝ Ծատիկ (Աստուածատուր) իշխանից, որ Վրաստանի կողմերից եկել, վերաբնակուել է Ղափանում: Այս տոհմի առաջին, պատմական անձնավորութիւնը համարւում է Մելիք Փարսադան Ա., որի անունով եւ կոչւում է այս տոհմի աւագ ճիւղը եւ որի ճիւղագրութիւնը հետեւեալն է:

*Մելիք-Փարսադան Ա.*

*Մելիք-Պալի*

*Մ. Փարսադան Բ., Աստուածատուր իշխան, Շահում կամ Շիկօ*

*Սաֆրազ եւ Պալի, Դաւիթ-բէկ, Ստեփան իշխան*

*Էյվազ-բէկ, Օհան իւզբաշի*

*Մելիք-Փարսադան Գ., Մելիք-Ղուկաս*

*Մելիք-Յովհաննէս, Մելիք-Յովհաննէս*

*Մելիք-Գալուստ, Մելիք-Ստեփան*

*Յովհաննէս-բեկ, Մելիք-Սողոմոն, Տէր-Մովսէս (3)*

Ինչպէս երեւում է այս ճիւղագրութիւնից, Մելիք Փարսադան Ա. ունեցել է մի որդի՝ Պալի, իսկ սա երեքը՝ Մելիք Փարսադան երկրորդ, Աստուածատուր իշխան եւ Շահում կամ Շիկօ: Մելիք Փարսադանը ունեցել է երկու ուստր՝ Սաֆրազ եւ Պալի, եւ մի դուստր, որի անունը յայտնի չէ: Աստուածատուր իշխանը ունեցել է միայն մի որդի, Դաւիթ-բէկ, Ղարաբաղի ազատութեան հերոսը, որով եւ վերջացել է սրա սերունդը, որովհետեւ Դաւիթ-բէկը չէր ամուսնացել: Շահում կամ Շիկօն էլ ունեցել է մի որդի՝ Ստեփան իշխանը, Դաւիթ-բէկի պատանեկական ընկերը եւ յետոյ նրա զօրավարը: Սրա սերունդը մինչեւ այժմ էլ շարունակւում է եւ նրա անունով կոչւում Մելիք-Ստեփանեան:

Մելիք-Փարսադան Բ. իւր դուստրը կնութեան է տուել Շիկահողցի Վարդիկի որդի Նուբարին: Վերջինս թէպէտ ծագմամբ ռամիկ, բայց վիթխարի եւ ըստ երեւութին, քաջ մարդ է եղել, ուստի եւ Մելիք-Փարսադան Բ. տալով նրան իւր դուստրը՝ ստանձնել է նրան իւր երկրի հիւսիսային սահմանի պաշտպանութիւնը եւ նուիրել նրան Բերդաքար ու Կռնասու-բերդ ամրոցները: Սակայն Մելիք-Փարսադան Բ-ի աւագ որդի Սափրազը սաստիկ բողոքել է հօր դէմ, կամենալով արգիլել, որ իւր քրոջը մի այդպիսի ռամկի տայ եւ երկու նշանաւոր բերդեր Նուբարի պէս մի թուլամորթի յանձնի: Եւ երբ հայրը նշանակութիւն չտալով սրա խօսքերին, յանձնել է աղջիկն ու բերդերը Նուբարին, Սաֆրազը կամեցել է զէնքի զօրութեամբ յետ խլել գոնէ բերդերը, ուստի եւ իւր զօրքերն առած յարձակուել է Մելիք-Նուբարի վրայ: Մելիք-Փարսադանը սաստիկ զայրացել է իւր որդու այսպիսի յանդգնութեան վրայ եւ օգնական զօրք է ուղարկել Նուբարին, որ մի լաւ դաս տայ նրան: Սափրազը չտանելով այս անպատուութիւնը՝ թողել հեռացել է Կ.Պոլիս եւ այնտեղ պալատական ծառայութեան մէջ մտել (4):

Այս անցքը չափազանց ծանր տպաւորութիւն է գործել նաեւ Դաւիթ բէկի վրայ, որ իւր հայր Աստուածատրի մահից յետոյ մնացել էր Մելիք-Փարսադանի անմիջական իշխանութեան ներքոյ: Ուստի եւ սա եւս թողնում, հեռանում է Վրաստան եւ այնտեղ վրաց թագաւորի մօտ ծառայութեան մտնում:

Մելիք Փարսադանը այս երկուսի հեռանալու պատճառով կանչում է Խնձորեսկ գիւղից Մխիթարին եւ զօրքի սպարապետ կարգում:

Այսպէս անցնում են մի քանի տարի. Մելիք Փարսադանը Մխիթարի եւ մելիք Նուբարի հետ պահպանում է իւր երկիրը, սակայն յանկարծ Չալար-եալլու թուրքերը յարձակւում են մելիք Նուբարի վրայ եւ պաշարում Կռնասու բերդը: Մելիք Նուբարն այս անակնկալ պաշարումից յուսահատուած՝ վերցնում է իւր երեխաներին, կնոջը եւ գիշերով փախչում դէպի Թիֆլիս, բերդի պաշտպանութիւնը գիւղացիներին թողնելով: Անտէր բերդը շուտով առնում է, եւ շատ կանայք չկամենալով թուրքերի ձեռքն ընկնել, բերդի գագաթից վայր են գլորւում եւ իրենց արիւնով ներկում քարերը, որի պատճառով եւ բերդը վերակոչւում է Կարմրաքար:

Այս աղետալի անցքի լուրը երբ հասնում է Մելիք-Փարսադանին, սա «ծեծում է ծնկները» ասելով. «Սաֆրազի խօսքերը ճշմարտացան, Մելիք Նուբարը, յիրաւի, բերդ պահող չէ եղել, ափսոս որ չլսեցի որդուս»:

Մի առ ժամանակից յետոյ, երբ Չալար-եալլուի թուրքերը թալանելով Կռնասու բերդի բնակիչներին, հեռանում են, Մելիք Նուբարը վերադառնում է իւր երկիրը եւ սկսում է աւեր բերդը նորից շինել, շինացնել: Սակայն թուրքերի հետ ընդհարումը դարձեալ շարունակւում է. թուրքերը ամենաչնչին պատճառով անգամ սպանում, կողոպտում են խաղաղասէր հայերին: Այսպէս մի օր Մելիք-Նուբարի կրտսեր եղբայր Յովհաննէս բէկը երկու ձիաւորով գնում է Ծովեր գիւղը (Շիկահողի մօտ) իւր նշանածին տեսութեան: Սէիտլար (այժմ՝ Չինարլըզ) թրքաբնակ գիւղից անցնելիս Յովհաննէս բէկը չի բարեւում մի թուրքի, եւ սա առանց այլեւայլութեան նրա հետեւից արձակում է հրացանը եւ գետին գլորում:

Երկու ձիաւորները փախչում են, գալիս Շիկահող եւ այս մասին յայտնում Մխիթար սպարապետին, որ այդ ժամանակ իւր զօրքով այդտեղ էր գտնւում. սա իսկոյն մի հարիւր զինուոր Շահումի որդի Ստեփան իշխանի առաջնորդութեամբ ուղարկում է Ռանջդարու ձորը՝ գիւղի ճանապարհը կտրելու, իսկ ինքը մնացած զօրքով յարձակւում է Սէիտլար գիւղի վրայ, մօտ երեք հարիւր տուն բնակիչներին կոտորում, գիւղը կրակ տալիս եւ մեծ աւարով վերադառնում իւր բանակը, որ գտնւում էր Պըռըլբաղ գիւղի մօտ:

Պարզ է, որ Մխիթար սպարապետի այսպիսի խիստ վրէժխնդրութիւնը գրգռում է թուրքերին, որոնք առանց այս էլ շարունակ հալածում, կոտորում, կողոպտում էին հայերին: Այս բոլորի վրայ աւելանում է նաեւ այն, որ լեզգիներն սկսում են ահագին խմբերով յարձակուել Ղարաբաղի վրայ, աւերել ու կողոպտել: Այսքան թշնամիներին ընդդիմադրելու համար Ստեփաննոս իշխանը խորհուրդ է տալիս մելիք-Փարսադանին, որ յետ կանչէ Վրաստանից Դաւիթ-բէկին: Սակայն Մխիթար սպարապետը ընդդիմանում է, ասելով. «Լազգիները գալիս են՝ թող գան, ով տղամարդ է՝ թող անուն հանէ: Կարիք չկայ Դաւիթ-բէկին կանչելու»: Մելիք-Փարսադանը ենթարկւում է Մխիթար սպարապետի ազդեցութեան եւ չի համաձայնում կանչելու: Ստեփաննոս իշխանը տեսնելով, որ Մխիթար սպարապետը հետամուտ է միայն իւր բազկի զօրութիւնը ցոյց տալու, եւ նրա պէտքը չէ, որ երկիրն աւերւում է, քանի որ չեն միաբանում եւ ընդհանուր ուժով ընդդիմադրում թշնամուն, բազմաթիւ կեղծ կնիքներ է շինել տալիս Ղարաբաղի տանուտէրների անուններով եւ դրանցով կնքելով մի խնդիր՝ ուղարկում է վրաց վալիին, որով խնդրում է, որ Դաւիթ-բէկին ուղարկէ՝ լեզգիների յարձակման առաջն առնելու:

Այս նամակը տանում է Եղիա-բէկ Մելիք-Փարսադանեանը Եկդաստա (այժմ՝ Թխկուտ) գիւղացի Շահումի հետ:

Վրաց վալին ստանալով խնդիրը՝ հարցնում է Դաւիթ-բէկին, թէ կը կամենար արդեօք գնալ: Սա ուրախութեամբ յանձն է առնում, միայն խնդրում է, որ բացի իւր վեց հայ զինուորից, թոյլ տայ իւր հետ տանելու նաեւ վրացի Գէորգի իշխանին ու 34 հայ ու վրացի զինուորներ: Վալին թոյլ է տալիս, եւ Դաւիթ-բէկը Գէորգի իշխանի հետ քառասուն զինուորով գալիս է դէպի Ղափան: Ուչթափի մօտ տեսնում է, որ Ղարաչօրլու թուրքերն իրենց վրանները խփել են այս դաշտավայրում եւ անասուններն արածեցնում են Շնհէրի եւ Խոտի արտերում: Երեկոյեան դէմ Դաւիթ-բէկը իւր քառասուն զինուորներով յարձակվում է սրանց վրայ, շատերին կոտորում, եւ բոլոր աւարն առնում տանում Շնհէր գիւղը: Այս յաղթութեան լուրն իսկոյն տարածւում է շրջակայքում եւ Ստեփանոս իշխանը Պըռըլաթումբում լսելով այս մասին՝ առաջարկում է Մխիթար սպարապետին գնալ միանալ Դաւիթ-բէկի հետ: Բայց սա չի համաձայնում, ասելով, թէ առանց Մելիք-Փարսադանի խորհրդի այդպիսի քայլ չի կարող անել: Հետեւեալ օրը Մխիթար սպարապետը ուղեւորւում է Հալիձոր՝ խորհրդակցելու Մելիք-Փարսադանի հետ, իսկ Ստեփանոս իշխանը 700 զինուորներից չորս հարիւրին իւր հետ առած գալիս է Դաւիթ-բէկի մօտ:

Սա շատ սիրով ընդունում է նրան, որպէս իւր պատանեկութեան ընկերի, որի հետ միասին սովորել էին Տաթեւի վանքում: Եւ երբ Ստեփանոսը յայտնում է, թէ ինքն է կանչել նրան, տանուտէրերի կեղծ կնիքներ շինել տալով, Գէորգի իշխանը սաստիկ նեղանում է, թէ ինչի այդպիսի կեղծիք է գործել, իսկ Դաւիթ-բէկը հանդարտացնում է, թէ ինչ անենք, արդէն կատարուած է, «գուցէ բարին այս էր»:

Մի քանի օր յետոյ թուրքաց Ջիվանշիր կոչուած ցեղն ահագին բազմութեամբ գալիս է Դաւիթ-բէկի վրայ: Սա մօտ հինգ հարիւր զինուորներով յարձակւում է նրանց վրայ եւ սաստիկ կոտորելով յաղթում ու ահագին աւար առած՝ կրկին իջնում Շնհէր:

Դաւիթ-բէկի յաղթութիւնից քաջալերուած Տաթեւ գիւղի բնակիչները գալիս են սրա մոտ եւ գանգատւում իրենց մելիքի դեմ, ասելով, որ նա սկզբներում շատ նեղել է իրենց, եւ երբ իրենք ապստամբել են նրանից, նա փախել է Թավրիզ, ուր ընդունել է մահմեդական կրոնը, իւր Դաւիթ անունը փոխել Բաղրի, եւ վերահաստատուելով մելիքական կոչման մէջ, վերադարձել է եւ այժմ իրենց այն աստիճան նեղում է, որ պատրաստ են վառելու իրենց տները եւ կենդանի այրուելու:

Անմիջապէս Դաւիթ բէկը զօրք է ուղարկում Տաթեւ եւ սա ջարդում է Բաղր-բէկի սակաւաթիւ զօրքը, նրան գերի է բռնում ու բերում Շնհէր՝ բէկի մօտ: Դաւիթ-բէկը նրան երեք օր ժամանակ է տալիս, որ ապաշխարէ եւ ապա Շնհէրի անապատի դռան առջեւ կախել է տալիս: Ահագին բազմութիւնը շրջապատելով այդ ուրացողին՝ շարունակ բղաւում է.

- Լուսը Լուսաւորչի հաւա-

շ

### 1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

# ԿԱՊԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Վահանավանք

տին, վա՜յ ուրացող մարդին:

Այս դէպքից յետոյ Շնհէր, Խոտ, Եայճի, Սուարանց, Տանձատափ եւ Տաթեւ գիւղերն ենթարկւում են Դաւիթ-բէկին:

Սակայն այսքան գիւղերի հպատակութիւնը բաւական չհամարելով՝ Դաւիթ-բէկը մարդիկ է ուղարկում Մելիք-Փարսադանի եւ Մխիթար սպարապետի մօտ եւ խնդրում է, որ գան իրեն միանան, ընդհանուր թշնամուն երկրից դուրս հանելու համար: Բայց Մելիք-Փարսադանը պատասխանում է, թէ ես ինչի՞ պիտի գամ իմ եղբօր որդու մօտ, քանի որ երկիրն էլ, զօրքն էլ իմն են: Դաւիթ-բէկը լսելով այս պատասխանը՝ անմիջապէս հաւաքում է Խոտի եւ Շնհէրի բնակիչներից հարիւր յիսուն հոգի, եւ պատուիրում, որ մի պատրուակով գնան Հալիձոր եւ Մելիք-Փարսադանին ու Մխիթար սպարապետին բռնեն, բերեն իւր մօտ: Սրանք գնում են եւ ձեւացնելով իբր թէ գանգատւում են Դաւիթ-բէկից, բռնում են Մելիք-Փարսադանին, նրա փեսայ Տէր Աւետիքին, ու Մխիթար սպարապետին եւ բերում Տաթեւի վանքը: Այստեղ է գալիս նաեւ Դաւիթ-բէկը, որ սրանց վրայ սաստիկ բարկացած լինելով՝ առանց հետները մի բառ խօսելու՝ հրամայում է բանտարկել բոլորին:

Ապա իւր զօրքերն առած անցնում է դէպի Քիւրտլար գիւղը, որի պարսիկ բնակիչները նեղում էին տաթեւացիներին: Դավիթ-բէկը սրից անց է կացնում սրանց մի մասին, իսկ միւս մասը գաղթեցնում է դէպի Պարսկաստան: Յետոյ իւր բոլոր ուժերն հաւաքելով գնում պաշարում է Որոտնայ բերդը:

Այս միջոցին Մելիք-Փարսադանը իւր բանտարկութեան տեղից ծածկարար մի նամակ է գրում իւր խնամի Օհան-Իւզբաշուն (5), որ Նուխու Վարդաշէն գիւղի իշխան էր, եւ խնդրում է, որ գայ իրեն ազատէ բանտից: Սա էլ 300 զինուորներով գալիս է Տաթեւի վանքը, տեսնւում Մելիք-Փարսադանի հետ եւ երբ իմանում է բանտարկութեան պատճառը, նախատում է մելիքին, թէ ինչի՞ չի միանում մի այդպիսի քաջ պաշտպանի հետ, ինչպիսին է Դաւիթ-բէկը: Ապա վեց զինուոր է դնում մելիքի հետ եւ ուղարկում նրան Որոտնայ վանքը, ուր այդ ժամանակ գտնւում էր Դաւիթ-բէկը, համոզելով, որ հաշտուի նրա հետ եւ միացած ուժերով վանէ թշնամուն: Իսկ ինքը, Օհան-Իւզբաշին, վանքի տաւարը աւարելով՝ վերադառնում է Վարդաշէն:

Մելիք-Փարսադանը վեց զինուորներով շրջապատուած մտնում է Որոտնայ վանքը: Դաւիթ-բէկն այս անգամ էլ չի խօսում հետը եւ հրամայում է, որ տանեն մի սենեակի մէջ պահեն նրան: Նոյն գիշերը յորդ անձրեւ է գալիս եւ Որոտնայ բերդի պարսպի մի մասը քանդում: Դաւիթ-բէկն այստեղից ներս է մտնում, սպանում փաշին ու ջարդում օսմանցիների զորքը: Դաւիթ-բէկը մտնում է Մելիք-Փարսադանի սենեակը եւ ասում. «Հօրեղբայր, տեսնո՞ւմ ես, որքան օգտավէտ է մեր հաշտութիւնը. ինչի՞ աւելի շուտ չեկար. շնորհակալ եմ Օհան-Իւզբաշուց, որ թէպէտ տաւարս տարաւ, բայց ձեզ այստեղ ուղարկեց, ձեր ոտը մեզ վրայ եկաւ եւ մենք յաղթեցինք»:

Մելիք-Փարսադանը փաթաթւում է նրա վզովը, համբուրում նրա ճակատը եւ օրհնում: Այսպիսով հաշտութիւն է կայանում հօրեղբօր՝ եւ եղբօր որդու մէջ, որոնք այնուհետեւ միասին եւ համերաշխ գործում են: Անմիջապէս վերադառնում են Տաթեւի վանքը եւ երեք օր շարունակ ուրախութեան հանդէս կատարում: Ամէն կողմից հայ զինուորներ գալիս են եւ մտնում սրանց դրօշակի տակ:

Դաւիթ-բէկը աւար առած զէնքերը բաժանում է հայ կամաւորներին եւ սրանցից երեք հարիւրը յանձնում Մելիք-Փարսադանին, երեք հարիւրը Մխիթար սպարապետին, երեք հարիւր էլ Տէր Աւետիքին, իսկ Ստեփանոսին թողնում է նրա արդէն ունեցած չորս հարիւր զինուորը: Ապա սրանց բոլորի հետ արշաւում է Զէյվի բերդի վրայ, ուր իշխում էր Ասլամազ-ղուլի խանը եւ որին պատկանում էին նաեւ Բաղաբերդը (Բաղակու-քար) եւ Ղալաարասին:

Մխիթար սպարապետը գնում է Գեղուայ գետի ուղղութեամբ, Ստեփան իշխանը Օխչա չայի ուղղութեամբ, Տէր Աւետիքը Ղուրչուլու կողմից, իսկ ինքը, Դաւիթ-բէկը, գնում նստում է Թամաքէշու եկեղեցու դռանը:

Պաշարումը տեւում է երկու օր. խանի հարեմում լինում է մի հայ կին, որ գողանում է պարսպի դարպասի բանալին եւ մի հաւատարիմ հայի ձեռքով պարսպից դուրս ձգում: Այս ժամանակ Մխիթար սպարապետը յարձակւում է վերին աշտարակի վրայ եւ այն տիրում. հայ զինուորներն էլ բաց են անում դարպասը եւ ներս խուժում, սկսում կոտորել պարսիկներին: Խանը ձի է նստում եւ սկսում է փախչել, սակայն Տէր-Աւետիքը նկատում է նրան եւ յետեւից ընկնում, Բուղաճղում բռնում է եւ յետ դարձնում: Ճանապարհին Ասլամազ-ղուլի խանը հարցնում է Տեր-Աւետիքին, թէ ուր է տանում իրեն, եւ երբ իմանում է, որ Դաւիթ-բէկի մօտ է տանելու, ասում է. «Գնանք, Դաւիթ-բէկը ողորմած մարդ է. ինձ չի սպանիլ»: Այս որ լսում է Տէր-Աւետիքը՝ այնպիսի ուժգնութեամբ խփում է սուրը խանին, որ ձախ ուսից աջ կողքն է անցնում:

«Խան, քշիր ձիդ, Դաւիթ-բէկը ողորմած է», հեգնում է Տէր-Աւետիքը:

Խանը, որ հարուածի սաստկութիւնից դեռեւս ոչինչ չէր զգացել, քշում է ձին եւ «իսկոյն նրա կէսը թրըմբալով վայր է գլորւում, ձին խրտնում է եւ միւս կէսն վերան փախչում, քարէ քար տալիս»:

Տէր-Աւետիքը վերադառնում է Դաւիթ-բէկի մօտ եւ յայտնում նրան, որ խանին սպանել է:

-Ինչի՞ կենդանի չբերիր ինձ մօտ, - հարցնում է Դաւիթ-բէկը:

-Նրա համար, որ բնաւորութիւնդ գիտէի, - պատասխանում է Տէր-Աւետիքը, - կընէրէիր, կերթար նորից զօրք կը հաւաքեր եւ կը գար մեզ վրայ:

Այս ժամանակ բերդից վեց պատուաւոր թուրքեր ներկայանում են Դաւիթ-բէկին եւ յայտնելով հպատակութիւն՝ խնդրում են չկոտորել իրենց: Դաւիթ-բէկն իսկոյն ձի է նստում, գնում նայում է բերդը, եւ հրամայում, որ դադարեցնեն կոտորածը: Միեւնոյն ժամանակ խստիւ պատուիրում է թուրքերին, որ երեք օրուայ ընթացքում գաղթեն, ապա թէ ոչ՝ բոլորին էլ կը կոտորեն:

Այս փառաւոր յաղթութիւնից յետոյ Դաւիթ-բէկը գնում է Մեղրի, անցնում Օրդուբադ եւ ապա Ագուլիս: Ամէն տէղ հայերը ուրախութեամբ սրա առաջն են դուրս գալիս եւ յայտնում իրենց հպատակութիւնը: Նոյնիսկ Ագուլիսի բնակիչները, որ երկու կուսակցութեան էին բաժանուած՝ պարսկական եւ տաճկական՝ դարձեալ հպատակում են Դաւիթ-բէկին: Բայց եւ այնպէս՝ Դաւիթ-բէկը ցանկանում է գլխատել տալ տաճկական կուսակցութեան պարագլուխ Մելիք-Մուսուն, սակայն Մելիք-Փարսադանը միջնորդում է, թէ հայ է, մեղք է, կարելի է խրատել նրան ու միշտ կուսակից պահել: Դաւիթ-բէկը յարգում է մելիքի խնդիրը:

Հէնց այս ժամանակներում Տաճիկ երեք փաշաներ միացեալ զօրքով գալիս են Դաւիթ-բէկի վրայ եւ Վանանդ գիւղի դաշտում ճակատում: Դաւիթ-բէկը յանկարծակի յարձակւում է սրանց վերայ, երկու փաշային սպանում, իսկ երրորդին փախցնում: Այս յաղթութեան լուրը որ հասնում է Թահմազ շահին, սա մի հրովարտակով Դաւիթ-բէկին այս կողմերի վրայ թագաւոր է հաստատում եւ դրամ կտրելու իրաւունք տալիս: Դաւիթը սիրով ընդունում է շահի հրովարտակը, հաստատւում Հալիձորի ամրոցում, եւ սկսում դրամ կտրել, որի մի երեսին դրոշմում է Թահմազ շահի անունը, իսկ միւսում՝ իւրը՝ այսպէս՝ «Քրիստոսի ծառայ Դաւիթ»:

Մի տարուց յետոյ մի քանի փաշաներ նորից գալիս են Դաւթի վրայ: Սա անմիջապէս իմաց է տալիս Թահմազ շահին եւ վերջինս երեք խաների հրամայում է գնալ օգնելու Դաւթին: Պատերազմը տեղի է ունենում դարձեալ Վանանդի ընդարձակ դաշտում: Օսմանցիների զօրքը 8000 աւելի է լինում, սակայն Դաւիթը յաղթում է սրանց եւ փախցնում: Պատերազմը յաջողութեամբ վերջացնելուց յետոյ Դաւիթ-բէկը հրամայում է բռնել խաներին եւ սպանել, որովհետեւ նկատած է լինում, որ սրանք ուզում էին իրեն դաւաճանել եւ օսմանցիներին օգնել: Խաներից երկուսին սպանում են, սակայն երրորդը փախչում է Պարսկաստան: Դաւիթը գրում է Թահմազ շահին այս խաների դաւաճանութեան մասին եւ յայտնում, որ ինքը երկուսին սպանել է տուել, իսկ մէկը փախել է: Շահն այդ իմանալով, անմիջապէս բռնել է տալիս փախչող խանին եւ հրամայում գլխատել:

Դաւիթը վերադառնում է Հալիձոր եւ մի առ ժամանակ պատրաստութիւն տեսնելուց յետոյ յարձակւում է Նախիջեւանի խանի վրայ, որովհետեւ վերջինս իմաց չէր տուել իրեն օսմանցիների արշաւանքի մասին եւ թոյլ էր տուել նրանց անցնելու իւր երկրով: Պատերազմը բաւական երկար է տեւում եւ հայերից բաւականաչափ մարդիկ կոտորւում են: Դաւիթն ստիպուած է լինում յետ քաշուել, նորից պատրաստուելու, սակայն երբ կամենում է վերանորոգել պատերազմը, մի քանի մարդիկ միջնորդում են եւ հաշտեցնում նրան խանի հետ այն պայմանով, որ Ապրակունիսի ս.Կարապետ վանքից արեւմուտք ընկնող երկիրն ենթարկուի խանին, իսկ արեւելեան կողմը տարածուողը՝ Դաւթին: Ապրակունիսի սեռը ձգւում է դէպի Նորաշէնի գլխի Սմբատաբերդը եւ այնտեղից բարձրանում Նախիջեւանի հիւսիսային կողմի սարը, այնպէս որ Դարալագեազն ընկնում էր Դաւթին: Այստեղից սահմանն անցնում էր մինչեւ Ղարաղշլաղի հիւսիսային կողմը բարձրացող լեառը, անցնում Սաղսաղանի սարը եւ Դիզափայտը:

Երբ Դաւթին հարցրել են, թէ ինչի՞ Ղարաբաղին էլ չի տիրում, ասել է, թէ ի՞նչ կարիք կայ, չէ՞ որ նա հայ մելիքների իշխանութեան ներքոյ է գտնւում:

Այսպէս Դաւիթը մաքրելով երկիրն օսմանցիներից եւ մասամբ պարսիկներից՝ սկսում է խաղաղութեամբ կառավարել, սակայն այս խաղաղութիւնն երկար չի տեւում, որովհետեւ Դաւթի վերադարձի վեցերորդ տարին օսմանցիների մի ահագին բանակ միացած Նախիջեւանի խանի զօրքերի հետ՝ գալիս են Դաւթի վրայ: Այս ահագին բանակին, որ 200.000 զինուորներից աւելի է եղել, միացած է լինում նաեւ մի ահագին խաժամուժ՝ աւարառութիւնից օգտուելու յուսով: Երբ այս ահռելի բանակը հասնում է Ուղուրչայի մօտ, Դաւիթը նոր է իմանում այդ մասին եւ անմիջապէս խորհուրդ է կազմում: Խորհրդի ժամանակ Տէր Աւետիքն այն միտքն է յայտնում, թէ եթէ նոյն իսկ խոնարհուին ու հպատակութիւն յայտնելով հաշտութիւն խնդրեն, դարձեալ օսմանցիք գալու, կոտորելու ու աւերելու են, ուստի լաւ է կռուել, կամ յաղթել եւ կամ պատուով մեռնել: Բոլորը համաձայնում են նրա հետ: Առաւօտեան վաղ Տէր Աւետիքը պատարագ է մատուցանում, բոլոր զինուորներին հաղորդում, իսկ կոյսերն անընդհատ աղօթում են եւ եկեղեցու զանգակները շարունակ խփելով՝ Աստծուց օգնութիւն հայցում: Ապա մի քանի կտրիճներ գնում են եւ Հալիձորի առաջ, Ուղուրչայի վրայ ձգուած կամուրջը քանդում, որպէսզի թշնամիները չկարողանան անցնել: Սակայն օսմանցիների բանակի մէջ եղող նախիջեւանցի հայերը գտնում են գետից անցնելու ծանծաղ տեղ ու ցոյց տալիս զօրքին, որ անցնում է եւ պաշարում բերդը:

Օսմանցիների զօրքը երեք մասի բաժանուած, բաբաններով աշխատում էր քանդել բերդի ամուր պարիսպները, իսկ հայ քաջերը, որոնք թուով միմիայն 300 էին, ներսից հրացան արձակելով՝ վայր էին գլորում մօտեցողներին: Կռուի ամենատաք ժամանակը Մխիթարը դուրս է գալիս բերդի գաղտնի անցքից, յարձակւում առաջին խմբի վրայ, շփոթութիւն ձգում նրա մէջ եւ սաստիկ կոտորած տալով՝ փախցնում, ապա յարձակվում է երկրորդ խմբի վրայ: Այս ժամանակ Տէր-Աւետիքը, Ստեփան իշխանը եւ Մելիք-Փարսադանը եւս իրանց 300 զինուորներով դուրս են գալիս բերդից եւ յարձակւում օսմանցիների վրայ, շատերին կոտորում, շատերին էլ փախցնելով Օխչի-չայը ձգում, խեղդում: Զօրքի մնացորդն

Շարունակությունը՝ էջ 78

Շնո՛րհ ձեզ եւ խաղաղութի՛ւն մեր Հայր Աստծուց եւ Տէր Յիսուս Քրիստոսից: ● ՊՈՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ
www.syuniacyerkir.am
1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ
ԿԱՊԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

# ՋԱՆԳԵԶՈՒՐԻ ԳԱՒԱՌ

## Կապան կամ Ղափան

### Պատմական համառօտ տեսութիւն

Սկիզբը՝ էջ 77

ահագին խաժամուժի հետ սկսում է փախչել: Գիշերը վրայ է հասնում, եւ Դաւթի զինուորները վերադառնում են Հալիձոր հանգստանալու: Դաւիթն ասում է Մխիթարին, թէ բաւական չէ, որ յաղթեցինք ու փախցրինք թշնամուն, պէտք է նաեւ հետեւել եւ կոտորել, որ չզօրանան եւ նորից գան մեզ վրայ: Մխիթարը պատասխանում է, թէ բաւական է, յոգնած եմ: Դու յոգնած ես, ես կերթամ, ասում է Տէր-Աւետիքը: Բայց երբ առաւօտեան դուրս է գալիս գնալու, տեսնում է, որ Մխիթար սպարապետն ու Ստեփան իշխանն էլ հետեւում են իրեն, չկամենալով մենակ թողնել իրեն այս վտանգալից արշաւանքում: Սրանք գնում, տեսնում են, որ օսմանցոց զօրքերը ցրուած Մեղրի գետի ափերին՝ հանգստանում են: Իսկոյն Մխիթարի խորհրդով մի քանի տասնեակ հոգի գնում են Մեղրի, մեղրեցիների հագուստ հագնում եւ գալիս ճանապարհի մօտերքն սպասում: Օսմանցիք փոքրիկ խմբերով գալիս են Մեղրի, սրանք յարձակւում են նրանց վրայ ու կոտորում: Վերջը մի քանի զինուոր կարողանում են փախչել եւ այդ մասին լուր տանել օսմանցոց զօրքին, եւ սա փոխանակ մասմաս, բոլորը միասին գալիս անցնում են Մեղրու Փոքր-թաղը: Այս ժամանակ Տէր-Աւետիքը Կարճուան գիւղի մօտով գալիս կտրում է Ուզունբանտ կիրճը, իսկ մնացած հայերը Արաքսի ափերով գալիս, շրջապատում են օսմանցիներին: Սկսւում է մի սոսկալի կոտորած, օսմանցիներից շատերը կոտորւում են, շատերն էլ՝ Արաքսն ընկնում, խեղդւում: Սրանց առաջնորդ փաշաներից մինը փախչում, մի թփի տակ թաք է կենում: Տէր-Աւետիքը յարձակվում է վերան՝ ասելով. «Քո՞լը քեզ պիտի պաշտպանի» ու խփում, սպանում է: Սակայն պատերազմը սրանով չի աւարտւում, որովհետեւ փաշան հաւաքում է իւր զօրքերի մնացորդը եւ կրկին գալիս, պաշարում Հալիձորի բերդը: Դաւիթը հրամայում է կէս գիշերին մատակ ձիերի մի ահագին երամակ քշել դէպի օսմանցիների ձիերի կանգնած տեղը: Մի ահագին աղմուկ է բարձրանում, օսմանցիները կարծում են, թէ հայերը յարձակուել են իրենց վրայ՝ սկսում են մթութեան մէջ միմեանց կոտորել, շատերն էլ զոհ են գնում կատաղած ձիերի աքացիներին, եւ փաշան ստիպուած է լինում հեռանալու:

Այնուհետեւ Դաւիթն սկսում է խաղաղ կերպով կառավարել իւր երկիրը: Երկու տարի յետոյ նա վեց ձիաւորով շրջում է իւր երկիրը, մտնում Մեղրի, Օրդուբատ, Ագուլիս եւ մի քանի օր մնում ս.Թովմայի վանում: Այստեղ մի առաւօտ Մելիք-Փարսադանը, որ Դաւթի հետ է լինում, նկատում է, որ ագուլեցի մելիք Մուսին, նա, որի կեանքը ինքը ազատել էր բարեխօսութեամբ, դարան է մտել եւ հրացանը ձեռին աշխատում է սպանել Դաւթին: Մելիքն այս նկատելով՝ բղաւում է, թէ «Մուսի, չե՞ս ամաչում, միտդ չի՞ որ մենք կեանքդ բաշխեցինք, այդ ի՞նչ ես ուզում անել»: Սակայն Մուսին, փոխանակ պատասխանելու, հրացանն արձակում եւ գետին տապալում Մելիք-Փարսադանին. ինքը անմիջապէս փախչում: Դաւիթն ընկնում է նրա հետեւից, բայց չի կարողանում գտնել. Արմնի ձորում (6) տեսնում է Մուսու ահագին հօտն ու նախիրը, եւ քշել է տալիս դէպի Հալիձոր: Ապա վերադառնում Ագուլիս, եւ մեծ պատուով թաղում է Մելիք-Փարսադանին Ս.Թովմայի վանքից արեւմուտք, Վերին-գետի գերեզմանատնում, ու մինչեւ այժմ մնում է գերեզմանաքարը, կրելով հետեւյալ տապանագիրը. Այս է տապան Հալիձորեցի մելիք Փարսադանին որ է որդի Պալասանի: Թվին ՌԵՀԴ (7):

Այս տխուր անցքից յետոյ Դաւիթը վերադառնում է Հալիձոր: Կարճ ժամանակից իմացուում է, որ Մուսին փախել է Վարդաշէն, Օհան-Իւզբաշու մօտ. իսկոյն Դաւթի պատուէրով Ստեփան իշխանը նամակ է գրում Օհան-Իւզբաշուն, որ կամ սպանի այս դաւաճանին եւ գլուխը ուղարկի իրեն եւ կամ կենդանի բռնէ ու իրեն յանձնէ, թէ չէ, սպառնում է Դաւիթը, «այնքան զօրքով կըգամ քո վերայ, որ երկրիդ հողը ձիերիս ոտների տակ կերթայ, մի կարծիր, թէ խնամի լինելով կը խնայեմ»: Օհան Իւզբաշին էլ պատասխանում է, թէ բռնեցի, ձգեցի Վարդաշենի լճակի մէջ: Այսպիսի վախճան է ունենում այդ դաւաճանը, որ, նոյն իսկ ժառանգների ասելով, չափազանց խիստ եւ դաժան մարդ է եղել, այնպէս, որ եթէ մինը նրա տան մօտով անցնելիս փոքր ինչ աղմուկ բարձրացնէր, նոյն իսկ եթէ փոքր ինչ բարձր ձայնով հազար, նա դուրս էր գալիս եւ սաստիկ գանակոծում դրան: Նա թողել է միայն մի աղջիկ. Անթառամ անունով, որ ամուսնացել է Ագուլիսի իշխաններից մինի՝ Մելիք-Ադամի որդի Ստեփանի հետ, որից մնացել են ժառանգներ (8):

Մի այսպիսի դաւաճանի տխուր յիշատակը նոյնպէս պահպանուել է ղարաբաղի հայերի մէջ. դա՝ Մելիք-Փրանգիլն է, Քիւփարա վիճակի մելիքը, որ իշխում էր Արծուանիկ, Չափնի, Ըրկենանց, Սեւաքար գիւղերի վրայ: Սա սաստիկ վաւաշոտ մարդ է եղել, եւ չնայելով, որ հակառակ քրիստոնէական միակնութեան՝ արդէն երկու կին առած է եղել, կնութեան է խնդրել նաեւ Բարկուշատի մելիք՝ Թորոս իշխանի Ծաղիկ անունով միակ աղջկան: Սակայն մերժումն եւ նոյն իսկ յանդիմանութիւն է ստացել, թէ մի՞թէ թուրք է, որ բազմակնութեան է դիմում:

Թորոս իշխանը գաղթած է եղել Սողանլուից եւ նախ հաստատուել է Թորոսայ-ձոր ասուած տեղում, որ գտնւում է Եմազլու գիւղի հանդէպ, եւ ձգւում է Խդրանձից մինչեւ Բարկուշատի գետը: Ապա կռուելով եմազլուեցի Մամատ-աղայի հետ՝ սպանել է նրան ու տեղափոխուել Չաւունդուրի Խոր-ձոր կոչուած տեղը, եւ յետոյ այստեղից Եղուարդ գիւղը, որտեղից իշխում էր Ագարակ, Խտրանց, Վժանիս, Զէյվա եւ այժմ աւերակ՝ Գեղարքունի, Ղարաբաբա, Գըշըրխանա եւ այլ գիւղերի վրայ:

Թորոս իշխանը բարեկամական յարաբերութիւն ունէր Մելիք-Փարսադան Բ. հետ: Մի օր այս վերջինս ուղարկում է Թորոս իշխանին Քարամ անունով մի վրացի իշխան, որը փախել էր վրաց թագաւորից եւ եկել ապաւինել իրեն: Մելիք-Փարսադանը երկիւղ կրելով, թէ մի գուցէ վրաց թագաւորը լսէ, թէ ինքը ապաստան է տուել նրանից փախած մի իշխանի եւ վրէժ լուծէ՝ հալածելով իւր մօտ ծառայութեան մտած Դաւիթ-բէկին (Մելիք-Փարսադանի եղբօր որդուն), չի կամենում իւր մօտ պահել այս փախստական վրացուն եւ ուղարկում է Թորոս իշխանի մօտ: Սա դրան հարկահանի պաշտօն է տալիս, եւ երբ վերջինս իւր հաւատարմութեամբ ու քաջութեամբ սիրելի է դառնում՝ իւր միակ դուստր Ծաղիկը տալիս է նրան կնութեան:

Այս պատճառով մելիք Ֆրանգիւլը սաստիկ ոխակալում է, որ Թորոս իշխանը իրեն, հայ իշխանին, թողած, մի վրացի փախստականի տուեց իւր աղջկան, ուստի եւ հրամայում է իւր չորս գիւղերի բնակիչներին, որ Կապից (Քիւփարայի եւ Բարկուշատի սահմանը) ներքեւ աղջիկ չտան կամ առնեն: Միեւնոյն ժամանակ գրգռում է Բարկուշատի Խանլըխլար գիւղում նստող Ֆաթալի խանին, որ յարձակուի Թորոս իշխանի վրայ, խոստանալով, որ ինքը սկզբում կը միանայ Թորոսի հետ, բայց յետոյ կը դաւաճանի նրան եւ կսպանի: Ֆաթալի խանը համաձայնում է, սակայն սրա ժողովուրդը երկիւղ կրելով, որ սա կարող է յաղթուել, պատրաստւում է գաղթելու Պարսկաստան, որպէսզի ապահովուած լինի Թորոս իշխանի սրից:

Սակայն Ֆաթալի խանը կարողանում է համոզել ժողովրդին, որ գնան սպասեն Խուդափերինի կամուրջի մօտ, եթէ յաղթութիւնը ինքը տանի, այն ժամանակ կայրէ Եղուարդի յարդով լի մարագները, նրանք կարող են տեսնել երկինք բարձրացող բոցերը եւ յետ դառնալ, իսկ եթէ պարտութիւն կրէ՝ ժամանակ կունենան մինչեւ Թորոս իշխանի յարձակուելը՝ սահմանն անցնելու:

Ապա Ֆաթալի խանը ահագին զօրքով գալիս է Թորոս իշխանի վրայ եւ բանակ դնում Եղուարդից ներքեւ Թորոսայ ձորում:

Մելիք-Ֆրանգիւլը մարդ է ուղարկում Թորոս իշխանի մօտ եւ ասում թէ, թէպէտ դու աղջիկդ չտուիր ինձ, սակայն եւ այնպէս՝ ես միանում են քեզ հետ մեր ընդհանուր թշնամուն վանելու, որպէսզի աղջկանիցդ զրկուելուցս յետոյ՝ երկրիցս էլ չզրկուիմ: Թորոս իշխանը սիրով ընդունում է նրա օգնութիւնը, միայն պահանջում է, որ նա առանձին կանգնած կռուի:

Թորոսի եղբայր Փանին աստղաբաշխ լինելով, նայում է աստղերին եւ գուշակում, որ այդ օրը չար է, ուստի եւ խորհուրդ է տալիս եղբօրը, որ դուրս չգայ պատերազմի, սպասի մի քանի օր, սակայն Թորոս իշխանը չի լսում եւ գնում է:

Սկսւում է մի կատաղի կռիւ: Թորոս իշխանն իւր փեսայ մելիք Քարամի հետ յարձակւում է Ֆաթալի խանի վրայ, սաստիկ ջարդ տալիս եւ փախցնում, շարունակ հետեւելով: Այս ժամանակ մելիք Ֆրանգիւլը մարդ է ուղարկում Ֆաթալի խանի մօտ, թէ յետ դարձիր, շրջապատենք Թորոսին եւ կոտորենք: Խանը յետ է դառնում, եւ սա առաջից, մելիք Ֆրանգիւլը յետեւից, սկսում են կոտորել Թորոս իշխանի զօրքը: Թորոսը երկու կրակի մէջ ընկնելով գլուխը կորցնում է: Այս ժամանակ Ֆաթալի խանը սրի մի հարուած է տալիս նրա բերանին, որովհետեւ մելիք Ֆրանգիւլը նրան ասել էր, թէ Թորոս իշխանը զրահ է հագնում, հետեւապէս եւ միայն բերանից կարելի է վիրաւորել նրան (9):

Թորոսը ձիուց վայր է գլորւում, եւ նրա դիակի շուրջը տեղի է ունենում մի կատաղի, արիւնահեղ կռիւ: Թորոսի զինուորները վրէժխնդրութեան ոգով լցուած քաջաբար կռւում են, վիրաւորում Ֆաթալի խանին ու սպանում նրա եղբայր Աղասի խանին: Ի վերջոյ՝ վերահաս գիշերը վերջ է դնում կռուին: Երկու կողմն էլ սկսում են հաւաքել վիրաւորներին ու մեռածներին այդ կռուի վայրից, որ վերակոչւում է Նարգէսների-դաշտ (Նարգիզլու-զամի), որովհետեւ հայ քաջերի այդտեղ թափուած արեան կաթիլներից սկսում են նարգէսներ ծլիլ ու ծաղկիլ (10):

Նոյն գիշերը Ֆաթալի խանի զինուորներից մի խումբ յարձակւում է Եղուարդ գիւղի վրայ եւ մարագները կրակ տալիս, որպէսզի Խուդափերինի կամուրջի մօտ պատերազմի ելքին սպասող Ֆաթալի խանի թուրքերը կրակի բոցերը տեսնին եւ սրանով իմանան վերջինիս յաղթութիւնն ու վերադառնան իրենց տեղերը: Մի քանի զինուորներ էլ յարձակւում են Թորոս իշխանի տան վերայ, սպանում մեծ որդուն եւ գերում կրտսերին (11): Թշուառ հօր, Թորոս իշխանի, մարմինը գիւղացիները բերում են Եղուարդ եւ եկեղեցու մօտ թաղում:

Դաւաճան Ֆրանգիւլը (12) գրեթէ գրկած բերում է Ֆաթալի խանին Արծուանիկ, ամէն կերպ խնամում նրան եւ միանգամայն դիւր գալու համար ընդունում է մահմեդականութիւն եւ ստիպում իւր որդիներին նոյնն անելու: Աւագ որդի Ռուստամը հետեւում է հօրը, բայց կրտսերը՝ ոչ: Մելիք Ֆրանգիւլը ասում է Ֆաթալի խանին, թէ քանի որ ես մահմեդական եմ, պէտք է, որ իմ որդիս էլ մահմեդական լինի, այլապէս նա իմ ժառանգը չի կարող համարուել: Ֆաթալի խանը ինքն էլ սկսում է համոզել այդ կրտսեր որդի Դաւթին, որ ընդունէ մահմեդականութիւն, եւ մեծ պարգեւներ է խոստանում: Բայց երբ վերջինս, այդ 18-19 տարեկան երիտասարդը, հաստատապէս մերժում է նրա առաջարկը, Ֆաթալի խանը սաստիկ բարկանում է վերան եւ հրամայում է բանտարկել եւ ամենայն կերպ ստիպել ուրացութեան, եւ եթէ նա դարձեալ յամառի՝ ձգել կրակի մէջ եւ կենդանի-կենդանի այրել:

Խանի կանանցից մինը՝ Տաթեւի Մելիք Բաղրու (Դաւթի) դուստր Սիրուն նանը (Սորուն), լսելով այս որոշումը, իւր երեսանց մահմեդականութիւն ընդունած հայ ներքինու ձեռքով հանել է տալիս Դաւթին բանտից եւ 8 ռիալ (13) տալով նրան, ասում է, թէ վաղը քեզ կրակի մէջ այրելու են, վեր կաց, փախիր, ուր քրիստոնէութիւն կայ: Սա էլ թողնում, փախչում է Ղարաբաղ:

Հետեւյալ օրը Ֆաթալի խանը իմանում է, որ Սիրուն նանն է փախցրել Դաւթին, հարցնում է նրան, թէ ի՞նչ է արել: Սա էլ պատասխանում է, թէ ուղարկել է այնտեղ, ուր ուրացութեան ստիպունք չկան: Ֆաթալի խանը սաստիկ բարկանում է եւ ասում.

«Այդպէս յանդուգն խօսում ես, որպէսզի ես քեզ սպանեմ, սակայն քո հայրը քեզ ինձ կին է տուել. պէտք է ապրես, եթէ սրտով թուրք լինիս՝ կինս էս, եթէ ոչ՝ գերիս»:

Սիրուն նանը պատասխանում է, թէ «դու էլ որ ուզենաս, որ ես թուրք դառնամ, հայի գիւղում չես պահիլ ինձ, որ առաւօտ երեկոյ կոչնակի ձայնը լսեմ»:

Խանը մտածում է, որ իրաւացի է Սիրուն նանի ասածը. բարձրանում է Կարմիր վանքի մօտ, վրան խփում, բնակւում, յետոյ էլ վանքը քանդում եւ նրա սրբատաշ քարերով իւր համար ապարանք պատրաստում: Սակայն Սիրուն նանը այդ ասելով՝ ցանկացել էր միայն Ֆաթալի խանին հանել Արծուանիկ գիւղից, որպէսզի հայ գիւղացիներին շատ նեղութիւն չտայ:

Թորոս իշխանի մահուան լուրը երբ հասնում է Դաւիթ-բէկին, սա հրամայում է Մխիթար սպարապետին եւ Պալի զօրաւարին, որ գնան յարձակուեն Ֆաթալի խանի վրայ եւ Թորոս իշխանի արեան վրէժը լուծեն: Սրանք մօտենում են Կարմիր վանքին եւ այստեղ գտնելով Ֆաթալի խանի բազմաթիւ հօտերն ու նախիրները, քշում են դէպի Հալիձոր, սակայն Ֆաթալի խանը ընկնում է նրանց հետեւից եւ Խոտանան գիւղի մօտ կռուի բռնւում: Պալի զօրաւարը քաջութեամբ կռւում է եւ վզի վերայ սրի մի հարուած ընդունելով՝ ձիուց վայր գլորւում: Ստեփան իշխանն էլ գերի է ընկնում: Մխիթարը փոքրաթիւ գնտով վերադառնում է Հալիձոր: Դաւիթը սաստիկ բարկանում է սրա վրայ եւ կամենում է գլխատել տալ նրան, որովհետեւ նա իրենից նեղացած լինելով անսիրտ է պատերազմել, սակայն միւս իշխանները միջնորդում են եւ փոխել տալիս որոշումը: Բայց եւ այնպէս՝ Դաւիթը հրամայում է մի լաւ թակել Մխիթար-սպարապետին:

Պալի զօրապետը կռուի դաշտում ստացած վէրքից չի մեռնում, այլ երբ տեսնում է, որ գիշերը բոլորը հեռացան, հանում է թաշկինակը՝ կապում վզին, որ երկու մատ խորութեամբ կտրուած էր եւ երկու ձեռքով գլուխը բռնած՝ գալիս հասնում է Հալիձոր երեք օրից յետոյ (14): Բոլորը սաստիկ ուրախանում են եւ խնամք տանելով բժշկում: Սակայն կտրուած տեղում փոս է մնում, ուր փոշին նստելով նեղութիւն էր պատճառում. ուստի եւ յաճախ Պալին, երբ եկեղեցու մօտ կամ շինամիջում նստած զրոյց էր անում, կանչում էր երեխաներին, որ հաւի փետուրներով մաքրեն այդ կտրուած տեղի փոշին:

Ստեփաննոս իշխանը, գերի տարուելով Բարկուշատ, մի թուրքի միջոցով ազատւում է եւ ծպտուած, վեց հոգով գալիս Արծուանիկ, իջնում մի գիւղացու տուն: Մի քանի գիւղացիներ իմանում են նրա ով լինելը, հաւաքւում են մօտը եւ մի լաւ հիւրասիրում: Ստեփան իշխանը հարցնում է, թէ ուր է Մելիք-Ֆրանգիւլը, ասում են՝ Կարմիր վանքումն է, խանի մօտ: Յետոյ հարցնում է, թէ այս երեկոյ վերադառնալո՞ւ է, պատասխանում են, թէ այո: Յետոյ դուրս է գալիս գիւղից եւ բարձրանում դէպի Կարմիր վանքը, եւ նստում այն ծառի տակ, որ հէնց հիմայ էլ միայնակ կանգնած է ճանապարհի կողքին: Երախտագէտ ժողովուրդը խնամքով պահպանում է դրան, որ իւր հովանու տակ հանգիստ է տուել Ստեփան իշխանին:

Մի քիչ յետոյ Մելիք-Ֆրանգիւլը ջորին նստած իջնում է վանքից. Ստեփան իշխանը արձակում է հրացանը եւ սպանում դաւաճան մելիքին: Ձորին խրտնում է եւ փախչում, բաւական տեղ քաշ տալով վայր ընկած մելիքին, որի ոտը մնացել էր ասպանդակի մէջ: Յետոյ Ստեփան իշխանը հրամայում է իւր ծառաներին, որ քաշ տան ձգեն մելիքի մարմինը ներքին ձորը եւ գնան ասեն գիւղացիներին, թէ եկէք տարէք ձեր մելիքին, ձեր դատաստանը անէ: Միեւնոյն ժամանակ Ստեփան իշխանի ծառաները բռնել էին Մելիք-Ֆրանգիւլին հետեւող գզրին, պարկեցրել, գլուխը դրել մի քարի վրայ եւ մի ահագին քար ձգելով վերան ջախջախել էին:

Նոյն գիշերը Մելիք-Ֆրանգիւլի Ռուստամ որդին տեսնելով, որ հայրը չի վերադառնում՝ ասում է մօրը. «Գիւղացիներից մինն ասաց, թէ այսօրուայ եկողը Ստեփան

№ 30(271) Սյունյաց երկիր 79
15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2012թ.

### 1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

# ԿԱՊԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Լուսանկարը՝ Մելիք Բաղդասարյանի

**Վահանավանքի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու գավիթը**

Իշխանն է, մի գուցէ նա եկած լինի հօրս սպանելու, նա առանց նպատակի չէր գայ այստեղ:

Մայրը պատասխանում է, թէ ինչ լաւ արած կը լինի, այս ի՞նչ է նրա արածը: Այս խօսքի վրայ տեսնում են, որ ջորին միայնակ վերադարձաւ: Առաւօտեան վաղ գիւղացիները գնում, որոնում են Մելիք-Ֆրանգիւլի մարմինը եւ գտնում, բերում են գիւղ: Սրա ազգականներից մի քանիսը կամենում են հայոց գերեզմանատանը թաղել հայկական ծիսակատարութեամբ, պատճառաբանելով թէ նա ծածուկ քրիստոնեայ է մնացել, խնձորի մէջ գրած սրբութիւն է առել, սակայն նրա աւագ որդի Ռուստամը ընդդիմադրում է՝ ասելով, թէ սուտ է, նա կատարելապէս ուրացել է հայի հաւատը, մօրս մի ամսից աւելի բանտարկել է, որպէսզի ստիպի ուրացութեան, եղբօրս կորստեան պատճառ է եղել, իմ մօտ էլ միշտ եասաղուլ էր դնում, որ հսկէ վերաս՝ երեսս դէպի հարաւ դարձրած աղօթեմ, չէ, նա հայ քրիստոնեայ չէ մնացել, նա խաչուած գերեզմանի արժանի չէ: Ուստի եւ նրան թաղում են ընդհանուր գերեզմանատնից 1/2 վերստ հեռու, ճանապարհի կողքին: Եվ այնուհետեւ մինչեւ այժմ ամէն մի անցորդ մօտենում է այդ անարգ շիրմին եւ թքում վերան:

Մի առ ժամանակից յետոյ մելիք Քարամը գալիս է Արծուանիկ գիւղը եւ կամենում է հանել Մելիք-Ֆրանգիւլի ոսկորները եւ շների առաջը ձգել, սակայն գիւղացիներն ասում են, թէ գերեզմանատնից հեռու ենք գոռել, մէկ էլ շան հոտը վեր մի՛ հանիր:

Ստեփան իշխանը Մելիք-Ֆրանգիւլին սպանելուց յետոյ վերադառնում է Հալիձոր, ուր շատ սիրով ընդունւում է Դաւիթ-բէկից: Կարճ միջոցից գուժկան է հասնում, թէ Օրդուբադի կողմից թուրքերը ահագին խմբով յարձակուել են Կալերեցի Պապ զօրավարի վրայ եւ սա փոխանակ կռուելու, նրանց բազմութիւնից վախեցած՝ փախել է: Դաւիթ-բէկն իսկոյն Ստեփան իշխանի հետ բաւական մեծ զօրքով գնում է Տաշտուն, մինչեւ ուր եկել, հասել էին թուրքերի հրոսակախմբերը: Սրանք լսելով Դաւիթ-բէկի գալը՝ անկանոն կերպով փախչում են այս ու այն կողմ: Դաւիթն այստեղ սպասում է, որ Պապ զօրաւարը գայ իւր մօտ, սակայն սա չի համարձակւում ներկայանալու եւ մնում է Կալեր գիւղում: Դաւիթն ինքն է գալիս Կալեր, հրամայում բռնել Պապին եւ գլխատել, որ փոխանակ քաջաբար կռուելու եւ նոյն իսկ մեռնելու, կանացիաբար փախել էր եւ գլուխն ազատել: Ապա Պապի փոխարէն կարգում է Ստեփան իշխանին եւ ինքը վերադառնում Հալիձոր:

Մի առ ժամանակից յետոյ Դաւիթ-բէկը Հալիձորում հիւանդանում է եւ մեռնում, ընդամէնը ինն տարի երկիրը կառավարելուց յետոյ: Նրա մահը շատ մեծ վիշտ է պատճառում բոլոր ղարաբաղցիներին: Տաթեւի վանքից Յովակիմ ծերունի եպիսկոպոսը, որ ժողովրդից պապ էր կոչւում, գալիս է եւ մեծ հանդիսով թաղում է Դաւիթ-բէկին Հալիձորի եկեղեցու գաւթում: Գերեզմանաքարի վրայ էլ միմիայն մի ծաղիկ են քանդակում, եւ այդ երեսն էլ հողի մէջ թաղում, որպէսզի ապագային թուրքերը չկարողանան ճանաչել եւ ոսկորները հանել:

Դաւիթ-բէկի մահից յետոյ իշխաններն ու Տաթեւի եպիսկոպոսները հաւաքւում են Հալիձոր խորհրդի եւ Մխիթար սպարապետին ընտրում Դաւթին յաջորդ, որովհետեւ վերջինս չէր ամուսնացել եւ ժառանգ չունէր: Հալիձորցի Եղին, նա, որ Ստեփան իշխանի կեղծած նամակը տարել էր վրաց թագաւորին եւ Դաւիթ-բէկին առաջնորդել էր վերադառնալու Ղարաբաղ, շատ աշխատում է ինքն ընտրուել, եւ երբ չի կարողանում յաջողացնել, սաստիկ ոխակալում է, եւ որոշում է վրէժ լուծել: Այս նպատակով մարդիկ է ուղարկում Ֆաթալի խանի մօտ եւ համոզում նրան յարձակուելու Հալիձորի վրայ, խոստանալով ամէն կերպ օգնել նրան: Ֆաթալի խանն էլ փորձով գիտենալով, որ երբ գողը տանիցն է, եզը հերթիկից կարելի է հանել, միանում է Չալար-եանլուի խանի հետ եւ յարձակւում Հալիձորի վրայ: Եղին անմիջապէս միանում է թուրքերի հետ, պաշարում բերդը եւ կտրել տալիս բերդի միակ աղբիւրի գաղտնի պահուած ակը: Մխիթար-սպարապետը տեսնելով, որ Եղին է թուրքերին առաջնորդում, եւ որ աղբիւրի ակը արդէն կտրուած է, եւ ժողովուրդը յուսահատութեան մէջ է ընկել, ծածուկ փախչում է Խնձորեսկ: Ժողովուրդը իմանալով սրա փախուստը՝ պատարագ է մատուցանել տալիս, հաղորդւում եւ անձնատուր լինում: Թուրքերը տիրում են բերդին, շատ շատերին կոտորում եւ Մխիթարի երկու որդոցն էլ գերում: Սակայն կարճ միջոցից Մխիթարը 1500 մարդ վարձելով՝ օգնութեան է հասնում, թուրքերից շատ շատերին ջարդում, Չալար-եանլուի խանին սպանում եւ իւր որդիներին էլ գերութիւնից ազատում: Եղին փախչում է Շնաձէն գիւղը, սակայն ճանապարհին Մխիթարի զինուորները բռնում են նրան, բերում Հալիձոր: Ժողովուրդը թափւում է սրա վրայ եւ ասելով, թէ դու սուրբ մարդ ես, պէտք է քո առաջդ մոմ վառենք, մերկացնում են, եւ ուսերին, կրծքին, ոտներին մոմեր կպցնում ու վառում, սատկեցնում նրան (15):

Այս փառաւոր յաղթութիւնից յետոյ Մխիթարն սպասում էր, որ իրեն կընհանձանդեն հայերը եւ կը յարգեն, ինչպէս յարգում էին Դաւիթ-բէկին, սակայն տեսնելով, որ հալիձորցիներն իրեն չեն լսում, թողնում, հեռանում է Խնձորեսկ գիւղը: Սակայն այստեղ եւս ժողովուրդը սիրով չի ընդունում նրան, որովհետեւ պէտք է պաշտպանէր նրան պարսից հալածանքից: Պարսիկները շարունակ հետեւում էին նրան, նոյն իսկ Պարսից շահը մեծ գումար է խոստանում այն մարդին, որ կը ներկայացնէր իրեն Մխիթարի գլուխը:

Եւ յիրաւի, հէնց որ Մխիթարը գալիս է Խնձորեսկ, Պարսից մի գունտ հետեւում է նրան եւ պաշարում է այս գիւղը: Գիւղացիներն ապաստանում են քարատակերում, որ քերծի մէջ շինուած փոքրիկ սենեակներ են, նախկին, անապահով ժամանակների բնակարաններ: Այս քարատակերի մէջ բարձրանալու կամ այդտեղից իջնելու համար հաստ թոկեր էին կապում մէջքին, եւ կամաց-կամաց վեր էին քաշում կամ ներքեւ թողնում: Ահա այս քարատակերի մէջ ամրացած Մխիթար-սպարապետը գիւղացիների հետ կռւում է թուրքերի դէմ: Մի գնդակ դիպչում է Սէյրանանց Մարգարիտի որդու կրծքին, որ հրացանը ձեռքին կռւում էր թշնամու դէմ: Խեղճը վայր է գլորւում, սակայն նրա արի մայր Մարգարիտը վերցնում է նրա հրացանը եւ ինքն է շարունակում արձակել: Ի վերջոյ Մխիթարը յաղթում է պարսիկներին եւ դուրս քշում Խնձորեսկից:

Սակայն վեց անպիտան հայեր գրաւուած Մխիթարի գլխի համար խոստացուած վարձատրութիւնից, դաւադրութիւն են կազմում, սպանում Մխիթարին եւ գլուխը կտրում, տանում մատուցանում են շահին: Սակայն սա, տեսնելով այդ վիթխարի, գեղեցիկ գլուխը՝ զայրանում է սրանց վերայ, թէ ինչպէս համարձակուեցան ձեռք բարձրացնել մի այսպիսի քաջ մարդու վրայ եւ փոխանակ խոստացած գլխագինը տալու, հրամայում է բոլորին էլ գլխատել: Ապա Մխիթարի գլուխը յետ է ուղարկում Խնձորեսկ, որ մարմնի հետ միասին պատուով թաղեն:

Նրա անշուք գերեզմանն այժմ էլ գտնւում է գիւղի հարաւ արեւելեան կողմում գտնուած աւերակ անապատում, եկեղեցու հիւսիսային կողմում եւ կրում է հետեւեալ տապանագիրը.

*Այս է տապան ի հանգստեան.*
*Իջեալ մարմնով ի գերեզման,*
*Սայ Մխիթար մեծ անուանեալ,*
*Որոա օնէր իշխանութիւն,*
*Սա բեմուրատ գնաց ջիվան,*
*Որ է երկրէն սայ կեանճուվ էր*
*Նահատակուեցաւ ՌՃՀԹ. (16)*

Մխիթարի մահից յետոյ Հալիձորի պաշտպանութիւնը իրենց վրայ վերցրին Մելիք Փարսադանի թոռ (Սաֆրազի որդի) Այվազ-բէկը եւ Ստեփան իշխանի որդի մելիք Ղուկասը:

Սրանց ժամանակ օսմանցիները, միանալով Դիւդալուի (17) խանի եւ այլ պարսիկների հետ, յարձակւում են Հալիձորի վրայ, որպէսզի Դաւիթ-բէկի երկրները տիրապետեն: Մելիք-Ղուկասն ու Այվազ-բէկը տեսնելով, որ սրանց զօրքը չափազանց շատ է, մարդիկ են ուղարկում շրջակայ Քաջարանց, Փուխրուտ, Փիր-Մազրա, Քրդիկանց ու Հանդ գիւղերը եւ հրաւիրում բնակիչներին իրենց հետ միանալու եւ յետ մղելու թշամիներին: Սրանք էլ ի նկատ առնելով, որ իրենք էլ թուրքերին աւար են դառնալու, լաւ են համարում ընդունել հրաւէրը եւ բոլորը, կին, տղայ, աղջիկ զինուելով ինչով կարողանում են, նոյն իսկ բահով ու կացնով, գալիս խմբւում են Դեսլճուկի դաշտը, Կալեր գիւղի գլուխը: Այստեղ տեղի է ունենում մի արիւնահեղ կռիւ, հայերը յաղթում են եւ քշում մահմեդականներին մինչեւ Խանագեահի դաշտը, որ գտնւում է Վարդանաձորի մօտ եւ այստեղ Ալիդարու խան Միրզա Սայիլին սպանում, իսկ մնացածներին փախցնում: Այս փառաւոր յաղթութիւնից յետոյ երկրի մէջ մի առ ժամանակ խաղաղութիւն է ընկնում, եւ Մելիք-Ղուկասն ու Այվազ-բէկը խաղաղութեամբ կառավարում են հայ ժողովրդին, որը շարունակում է ամէն կերպ աշխատել կամ կոտորել եւ կամ երկրից հեռացնել թուրքերին:

Հետաքրքրական եւ շատ բնորոշ է Կարճեւանցի Բաբայի պատմութիւնը, որի փառաւոր թաղումը կատարել են մեր այս Մելիք Ղուկասն ու Այվազ-բէկը:

Բաբան Կարճուանում տանուտէր է եղել: Սա տեսնելով, որ իրենց գիւղի նախրապան թուրքը բազմացել, չորս տուն է կազմել, վախեցել է՝ թէ մի գուցե սրանք էլ արագութեամբ բազմանալով՝ թուրքաստան դարձնեն Կարճուան գիւղն էլ, մի քանի անգամ պահանջել է, որ գաղթեն գիւղից, սակայն նրանք չեն համաձայնել: Այս պատճառով տանուտէր Բաբան որոշել է ուրիշ միջոցի դիմել. նա պատուիրել է գիւղացիներին, որ մեծ քանակութեամբ ցախ բերեն եւ դարսեն իւր տան մօտ: Երբ ցախը բերւում է, մի աշնանային գիշեր, երբ բոլոր թուրքերն իրենց տներում քնած են եղել, տանեւտէր Բաբան ցախը լցնել է տուել դրանց տների վերայ եւ կրակ տուել, տներն էլ, նրանց էլ վառել, մոխիր դարձրել: Հետեւեալ առաւօտն էլ հրամայել է, որ դրանց տան տեղերն էլ վարեն, պարտէզ դարձնեն: Գարնանը սրանց բարեկամ թուրքերը գալիս են սրանց տեսութեան: Նայում, տեսնում են, որ սրանց տների տեղում պարտէզ է ձգած. հարց ու փորձ են անում, սրանց ասում են, թէ գաղթել են: Սակայն սրանք մի կերպ իմանում են եղելութիւնը եւ գնում, գանգատւում Դիւզալուի խանին: Սա անմիջապէս կանչում է Բաբային եւ այս մասին հարց ու փորձ անում: Բաբան ուրանում է արածը, բայց Մանլէվ գիւղացի Խոճա-Սարգիսը մատնում է, թէ յիրաւի, նա վառել է թուրքերին: Խանը անմիջապէս երկու պայման է դնում՝ կամ թուրքանալ, կամ զրկուիլ գլխից: Տանուտէր Բաբան ընդունում է առաջին պայմանը եւ թուրքանում: Սակայն խանը չհաւատալով նրա անկեղծութեան, երկու տարի պահում է նրան իւր մօտ: Սա էլ այնպիսի հաւատարմութեամբ եւ եռանդով է ծառայում խանին, որ վերջինս երկու անգամ պատգամաւոր է ուղարկում նրան շահի մօտ: Վերջապէս խանը կամենալով վարձատրել նրան՝ հաւատարիմ ծառայութեան համար՝

**Շարունակությունը՝ էջ 80**

1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ
ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ
ԿԱՊԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

# ՋԱՆԳԵԶՈՒՐԻ ԳԱՒԱՌ

## Կապան կամ Ղափան

### Պատմական համառօտ տեսութիւն

**Սկիզբը՝ էջ 79**

Մեղրու եւ նրա շրջակայքի վրայ մինպաշի է կարգում: Մի առ ժամանակից յետոյ Բաբան գալիս է Լէիվազ, բռնում այդտեղի տասն եւ երկու պարսիկ իշխաններին եւ մեղադրելով նրանց՝ իբր թէ կամենում են դաւաճանել պարսիկներին եւ անցնել օսմանցիների կողմը՝ բոլորին կախել է տալիս, գիւղը կրակում, եւ տաւարն ու գոյքը ուղարկում խանին:

Այս անցքից երկու տարի յետոյ էլ Բաբան գնում է Թաղամիր թրքաբնակ գիւղը, եւ սրանց եւս մեղադրելով դաւաճանութեան մէջ, այրում եւ տաւարն ու գոյքը ուղարկում խանին: Մի տարուց յետոյ էլ գնում է Մանլէվ, բռնում Խոճա-Սարգսին, որ իրեն մատնել էր, եւ գլխատել է տալիս: Նա կամենում էր նրա սերունդն էլ սրից անցկացնել, սակայն նրա կինը սրա ոտներն ընկած սաստիկ պաղատում է, եւ այսպիսով ազատում սերունդը կոտորածից:

Կեանքի վերջին օրերում Բաբան վերադառնում է Կարճեւան, խոստովանում քահանային, թէ թէպէտ ընդունել է մահմեդականութիւն, սակայն սրտով հայ քրիստոնեայ է մնացել. ապա պատարագ է մատուցանել տալիս եւ հաղորդւում: Մի շաբաթից յետոյ զգալով մահուան մօտենալը, կրկին պատարագ է մատուցանել տալիս, կրկին հաղորդւում եւ խնդրելով իրեն թաղել քրիստոնէական ծեսով՝ մեռնում: Հայերն երկիւղ կրելով խանից, չեն համարձակւում կատարել ննջեցեալի վերջին խնդիրը, ուստի եւ այդ մասին իմացնում են խանին, միանգամայն մարմինը տանելով եկեղեցի: Խանը գալիս է Կարճուան, տեսնում դիակը եւ ասում, թէ ինչի՞ էք ձեռքերը խաչել եւ դէպի արեւելք դրել, սա մահմեդական է: Յետոյ ուղղում է ձեռքերը եւ դէպի հարաւ դնում: Հետեւյալ առաւօտ տեսնում են, որ ձեռքերը կրկին խաչուել են եւ ինքը կրկին դէպի արեւելք է դարձած: Խանը սաստիկ բարկանում է, կարծելով, թէ հայերն են արել, եւ երբ սրանք սկսում են արդարանալ, նա կրկին ուղղում է նրա ձեռքերը, փոխում դիրքը դէպի հարաւ, եւ եկեղեցու դուռը կնքում ու պահապաններ դնում: Առաւօտեան խանը անձամբ գալիս է բաց անում կնքուած դուռը, տեսնում դիակը դարձեալ դէպի արեւելք դարձած եւ ձեռքերը կրծքի վրայ խաչուած, ասում է. «Սա միայն երեսանց է թուրք եղել, իսկ սրտանց հայ. տարէք, թաղեցէք ձեր ծէսով, միայն այսուհետեւ սրան այլեւս մի կոչէք Բաբա քեատտահ (տանուտէր), այլ Բաբա-դաղլու» (այրող): Ժողովուրդը ուրախացած հրաւիրում է Մելիք-Ղուկասին եւ Այվազ-բէկին եւ սրանց ներկայութեամբ մեծ հանդիսով թաղում նրան:

Մի առ ժամանակից յետոյ Պարսից Նադիր շահը եկել է Գէազանու դաշտը (Երասխի ափին): Մելիք Ղուկասը, Այվազ-բէկը, մելիք-Քարամը իրենց զօրքերով ընդառաջ են գնացել նրան: Շահը սրանց շատ լաւ է ընդունել, եւ վերահաստատել իրենց երկրների վրայ, ճանաչելով նրանց մելիքական իրաւունքները: Ապա շահը անցել է Մուղանու դաշտը, ուր գնացել է նաեւ Հայոց Աբրահամ կաթողիկոսը: Երեք ամիս այստեղ մնալուց յետոյ երբ Նադիր-շահը վերադառնում է, վերոյիշեալ մելիքները կրկին ընդառաջ են գնում նրան եւ խնդրում են գալ իրենց մօտ հիւրասիրուելու: Շահն ընդունում է սրանց հրաւէրը, գալիս բանակում Ուղուր դաշտում, այնտեղ, ուր այժմ գտնւում են պ.Մելիք-Ազարեանի պղինձ հալելու գործարանը: Ամբողջ գիշերն ուրախութիւն են անում, հրացան, հրթիռ (ֆշանկ) արձակում: Մի խեղճ մարդ էլ ծառի վրայ դարսուած խոտն է վառում: Առաւօտեան շահը կանչում է այդ բաղաւերճեցի հային եւ հարցնում, թէ ինչի՞ խոտը վառեց: Սա էլ պատասխանում է. «Ես աղքատ մարդ եմ, ոչ հրացան, ոչ էլ հրթիռ ունէի, որոնցով կարողանայի իմ ուրախութիւնս արտայայտել, իմ ունեցած չունեցածս մի քանի խուրձ խոտն էր, որ շահին մատաղ արի»: Շահին շատ դիւր է գալիս սրա այս պատճառաբանութիւնը, ուստի եւ հրամայում է մի լաւ խալաթ տալ:

Շահը մնում է այս դաշտում երեք օր շարունակ եւ յաճախ ձի նստած զբօսնում է շրջակայքում: Այս դաշտը նրան շատ դիւր է գալիս եւ նա որոշում է այստեղ մի քաղաք հիմնել: Եվ երբ վերադառնում է՝ 400 պարսիկ ընտանիքներ մի քուրդ սուլթանի (իշխանի) առաջնորդութեամբ ուղարկում է այստեղ քաղաք հիմնելու:

Քուրդ սուլթանը հրաւիրում է իւր մօտ հայ մելիքներին եւ խնդրում, որ իրեն օգնեն շահի հրամանը կատարելու. հիմնելու Ուղուր քաղաքը:

Մելիքներից միայն մինը՝ մելիք-Ղուկասը չի գնում նրա մօտ, մտածելով, որ Դաւիթ-բէկն այնքան աշխատեց թուրքերին հեռացնելու մեր երկրից, հիմա դա եկել է եւ կամենում է այստեղները թուրքանոց դարձնել: Յետոյ տեսնելով, որ առանց իւր ձեռնտութեան էլ քաղաքի շինութիւնը արագութեամբ առաջ է գնում, երեսուն կտրիճներով ամրանում է այդ քաղաքի մօտ բարձրացող Ղըռղալայի բերդում եւ այդտեղից գիշերները յարձակւում Ուղուր քաղաքի վրայ, աւերում, կողոպտում եւ կրկին ապաստանում բերդում: Քուրդ սուլթանն ամեն միջոց գործ է դնում նրան բռնելու, բայց չի կարողանում յաջողացնել: Վերջապէս երկու տարուց յետոյ դիմում է մելիք Այվազի եւ մելիք Քարամի միջնորդութեան եւ սրանց հետ միասին գնում է Ղըռղալայի բերդի դուռը, երդումն տալիս, որ մելիք Ղուկասին ոչ մի վնաս չի հասուցանիլ, եւ նախկին տարիներից մնացած հարկերն էլ չի պահանջիլ. միայն թէ նա անցնի գնա Էճանանու թուրք վիճակի Առաջածոր գիւղը, այնտեղ հանգիստ ապրի, կառավարելով այդ վիճակը:

Մելիք-Ղուկասն ընդունում է նրա պայմանը, դուրս է գալիս Ղըռղալից եւ գնում Առաջածոր, միայն իւր երեսուն կտրիճներին թողնում է բերդում, որ յամենայն դէպս պատրաստ մնան:

Հազիւ անցնում է երեք օր, Մելիք Ղուկասի որդի մելիք Յովհանջանն ու մելիք-Ոսկանը գիշերը նկատում են, որ երկու թուրք են եկել, մտել իրենց տունը: Իսկոյն վրայ են հասնում, բռնում նրանց, կապկապում եւ ձգում մի սենեակ: Մելիք Ղուկասը հարց ու փորձ է անում սրանց եւ յաջողացնում է խոստովանեցնել, որ ուղարկուած էին քուրդ սուլթանից իրեն, մելիք Ղուկասին, սպանելու:

Այս բանի վրայ մելիք Ղուկասը սաստիկ զայրանում է եւ իւր քսան եւ չորս գիւղերից հինգ հարիւր հոգի հաւաքում ու յարձակւում Ուղուր քաղաքի վրայ, քուրդ սուլթանին իւր կնոջ եւ որդիների հետ գերի բռնում, քաղաքը կողոպտում, քանդում եւ կրակ տալիս:

Երբ քուրդ սուլթանին բերում են մելիք Ղուկասի առաջը, մելիքն ասում է. «Տեսա՞ր»:

«Տեսայ, - պատասխանում է քուրդ սուլթանը, - իմ սուտ երդմանս հատուցումն է այս»:

Սրա վրայ մելիք Յովհանջանը բարկանում է, թէ դեռ խօսացնում էլ ես այդ շանը, եւ սրի հարուածով կոտորում քուրդ սուլթանին, կնոջը եւ երեխաներին: Այսպիսով քանդւում, աւերւում է այդ նորաշէն քաղաքը:

Սպասելի էր, որ Նադիր շահը զօրք ուղարկէր եւ պատժէր մելիք Ղուկասին, սակայն նա սպանւում է, եւ Պարսկաստանում յառաջացած խռովութիւնները մոռացնել են տալիս այս դէպքերը:

Մելիք Ղուկասից յետոյ Հալիձորում մելիքութիւն է անում մելիք Բալու որդի մելիք Փարսադան Գ.-ն:

Սրա ժամանակ Չաւնդուրի Աբիլբատ խանը կամենում է Բեխ գիւղի այժմեան հանգստարանի «Վերին-հարթ» բարձրութեան վրայ մի բերդ կառուցանել, սակայն Մելիք-Փարսադան Գ. արգելում է՝ ասելով. «Եթէ կարող ես մարդկանց դիակներով պարիսպ քաշել, փորձիր շինել, թէ չէ քարով ու կրով թոյլ չեմ տալ շինելու»:

Խանը վախենում է նրանից եւ չէ իրագործում իւր մտադրութիւնը:

Այս միեւնոյն ժամանակներում Շուշու Իբրահիմ-խանի սարվազները գալիս են Բաղաւուրճ գիւղը եւ բռնութեամբ տանում են Թումանենց աղջիկը՝ խանի հարեմի համար:

Մելիք Փարսադանը այս որ լսում է՝ անմիջապէս յարձակւում է այդ սարվազների վրայ եւ Բաղաւուրճ գիւղից ներքեւ, Ուղուր գետի ափին, Սուլթան բաղի մօտ սպանում երեք սարվազներին եւ խլում Թումանենց աղջկան, ասելով որ քանի ինքը կենդանի է, թող ոչ մի խան չհամարձակուի իւր հպատակներից մինին տանելու: Երբ լուրը հասնում է Իբրահիմ խանին, սա անմիջապէս հրամայում է պատրաստութիւն տեսնել՝ Մելիք-Փարսադանի վրայ արշաւելու: Սակայն նրա մտերիմները խորհուրդ են տալիս, որ այդպիսի վտանգաւոր քայլ չանի, քանի որ սրա երկիրը սաստիկ լեռնոտ է եւ անմատչելի, զօրքը իզուր կը կոտորուի:

Միեւնոյն ժամանակ Մելիք-Փարսադանի հպատակներն էլ լսելով, որ Իբրահիմ խանն արշաւելու է իրանց վրայ, տասն մարդ են ընտրում եւ Տաթեւի առաջնորդի հետ ուղարկում Իբրահիմ-խանի մօտ, որպէսզի միջնորդեն եւ մելիքի հետ հաշտեցնեն, այլ եւս իզուր արիւն չթափուի:

Եվ որովհետեւ Պարսից մէջ սովորութիւն է, որ արեան վրէժը չեն լուծում, երբ մարդասպանը գնայ սպանուածի տիրոջ դուռը, ուստի եւ Իբրահիմ-խանը պահանջում է, որ Մելիք-Փարսադան Գ. գայ իրեն մօտ՝ որպէսզի այսպիսով լուծուած համարուի նրա սպանած երեք սարվազների արեան վրէժը: Միեւնոյն ժամանակ ինքն էլ կրկին ու կրկին երդւում է, որ ոչ մի վնաս չի հասուցանիլ մելիքին: Այս ինքնակոչ միջնորդները վերադառնում են Մելիք-Փարսադան Գ.-ի մօտ եւ այնքան թախանձում վերջինիս, որ սա, հակառակ իւր ցանկութեան, վեր է կենում գնում Իբրահիմ-խանի մօտ: Սակայն վերջինս արհամարհելով իւր տուած խոստումներն ու երդումը՝ կուրացնել է տալիս Փարսադան Գ.-ին, խլում է նրանից նրա բոլոր գիւղերը, բացի Հալիձորից ու Բեխից, եւ արձակում:

Մելիք-Փարսադան Գ.-ն վերադառնում է Հալիձոր, հրաժարւում է մելիքութիւնից, նշանակելով մելիք իւր որդի Օվանէսին եւ ապա առանձնանում է Բեխում, ուր բաւական երկար ապրում է:

Մելիք-Օվանէսի ժամանակ Ղափանն էլ ընկնում է Ռուսաց տիրապետութեան ներքոյ եւ սա, ինչպէս եւ սրա որդի մելիք Գալուստը, կառավարում են իրենց ժողովուրդներին իբրեւ ռուսաց պաշտօնեայ:

### Ծանոթագրություններ

1. Հ.Ղուկաս Ստեփանեան Սեբաստացու, ըստ Ղ.Ալիշանի (Սիսական եր. 301):

2. Քիւփարա գաւառակը բաղկացած է Սեւաքար, Չափնի, Ըրկենանց, Արծուանիկ, Զէյվա, Խդրանց եւ Ագարակ գիւղերից:

3. Մելիք-Փարսադանեաններից ոմանք ասում են, թէ Մելիք Ստեփանեանների նախահայր Շահումը իրենց նախահայր Մելիք-Պալու որդին չէ, այլ Եկեսաստան գիւղի մելիք: Գուցէ այս աւելի ճիշտ լինի, թէպէտ եւ իրենց, Մելիք-Ստեփանեանների ճիւղագրութիւնն այդպէս է դուրս բերուած, մանաւանդ որ «Դաւիթ բէկի պատմութեան» մէջ Ստեփան իշխանը կոչւում է Վարդանիսեան, ի տանէն Շահումեան: (Դաւիթ-բէգ. հրատ. Գուլամիրեանի. եր.30):

4. Պատմում են նաեւ, որ Սաֆրազ-բէկը Կ.Պոլսից անցել է Հնդկաստան, ուր ահագին կարողութիւն դիզելով կտակել է իւր ազգականներին:

5. Օհան-իւզբաշու մայրը մելիք Փարսադան Բ.-ի հօրաքոյրն է եղել:

6. Գտնւում է Ս.Աստուածածին սրբավայրից մի երկու վերստ դէպի հիւսիս-արեւելք:

7. 1724 թուին:

8. Մելիք-Մուսու դաւաճանութեան մասին պատմում են նաեւ այս կերպ. Մելիք-Մուսին լսելով, որ Դաւիթ-բէկը գալիս է Ագուլիսին էլ տիրելու, ապաստանում է ս.Թովմայի վանքի պարսպի մէջ՝ նրան ընդդիմադրելու: Դաւիթ-բէկի յանձնարարութեամբ Մելիք-Փարսադանը բարձրանում է պարսպի վրայ եւ այստեղից սկսում համոզել Մելիք-Մուսին՝ անձնատուր լինելու: Սակայն Մելիք-Մուսան նրան պատասխանում է հրացանի մի գնտակով, որ վայր է գլորում Մելիքին: Այս տեսնելով Դաւիթ-բէկը՝ հրամայում է իւր զօրքին իսկոյն քանդել վանքի պարիսպը եւ ներս մտնել: Պարիսպը քանդում են, բայց Մելիք-Մուսան իւրայիններով փակւում է Ս.Թովմայի վանքում: Դաւիթ-բէկը սաստիկ բարկացած լինելով՝ հրամայում է վանքի պատը եւս քանդել եւ սպանել Մելիք-Մուսուն: Իսկոյն քանդում են հարաւային պատի մի մասը, բռնում Մելիք-Մուսուն եւ դուրս հանում սպանում:

9. Մի ուրիշ աւանդութիւն ասում է, թէ կռուի խառնակ ժամանակ Թորոսը լսում է մի ձայն, որ թուրքերէն ասում էր. «Թորոսին մի խփէք, Թորոսին մի խփէք»: Եվ երբ Թորոսը հետաքրքրուելով դարձրել է գլուխը դէպի այդ ձայնը՝ սրի մի ծանր հարուած են տուել նրա վզին, եւ յետոյ յարձակուել վերան՝ սպանել:

10. Ռաֆֆի. Դաւիթ-բէկ. Գ գիրք. եր 536:

11. Թորոս իշխանի կրտսեր որդի Հեթումին իւր խնամքի տակ է առնում Սօֆուլար գիւղացի սէյիդ Մահմէդը: Հեթումը մեծանում է եւ սէյիդի ջրաղացպանը դառնում: Նրան թուրքերը խնձրի, այսինքն, վարազի որդի էին կոչում, եւ նա կարծում էր, թէ այդ անունը տալիս են իւր քաջութեան համար, սակայն երբ մի անգամ նա մի թուրք է սպանում, այն ժամանակ միւս թուրքերը պահանջում են, որ դրան սպանեն, որովհետեւ նա գեաւուրի որդի լինելով՝ համարձակուել էր թուրքի վրայ ձեռք բարձրացնել: Այս դէպքն առիթ է տալիս Հեթումին իւր ծագմամբ հետաքրքրուելու, եւ իմանալով որ Թորոս իշխանի որդին է, փախչում գալիս է Ագարակ գիւղը, ուր ամուսնանում է Դատի դստեր Մարջանի հետ եւ նոյն գիւղի տանուտէր ընտրւում: Նա ունենում է հինգ որդի, որոնցից երկրորդը՝ Քարամը անսովոր ուժի տէր է լինում, այնպէս որ կարողանում է երկու ձեռով պայտը երկու կտոր անել: Աւելի սարսափելի է լինում նրա ձայնը, որ «եօթ սարից այն կողմը» լսւում է: Նա նաեւ չափազանց հմուտ որսորդ է լինում: Նրա մասին պատմում են, թէ հարիւրից աւելի մարդ եւ 96 հատ գայլ է սպանել: Այս գայլերից մինը յարձակւում է սրա վրայ, երբ սա անպատրաստ է լինում եւ հրացանը ձեռին չէ ունենում: Քարամը իսկոյն ձեռքը կոխում է նրա երախը, բռնում լեզուն եւ սկսում ոլորել, միեւնոյն ժամանակ միւս ձեռքով հանում է դաշոյնը եւ խրում կողքը՝ սատկեցնում:

Քարամը Մուստաֆա-փաշի մօտ ծառայութեան է մտնում եւ իբր հետեւակ զօրքի գլխաւոր՝ գնում է Գանձակ եւ լեզգիների դէմ մղած կռիւներում մեծ քաջութիւններ անում: Մի անգամ հանդիպելով ինը լեզգիների, սկսում է կռուել նրանց հետ եւ իններին էլ սպանում, գլխները կտրում, բերում տալիս է Մուստաֆա-փաշին, եւ սա հիանալով նրա ուժի վրայ եւ իմանալով որ մելիքի թոռ է, Քիւփարա գաւառամասի վրայ մելիք է կարգում: Վերադառնալով իւր վիճակը՝ մելիք Քարամը երկար պատերազմներ է վարում Բարկուշատի բէկերի դէմ, որոնք շատ նեղում էին Քիւփարայի բնակիչներին: Մի անգամ էլ գտնուելով Շուշի բերդում, ճաշկերոյթի ժամանակ մելիք Քարամը ընդհարում է ունենում Մելիք-Շահնազարի հետ եւ նրան կաւատ է անուանում, ակնարկելով այն, թէ նա իւր աղջիկը տուել է Փանահ-խանին կնութեան եւ իւր գոյութիւնը նրանով պահպանում: Խանը լսելով այդ մասին՝ մեծ տուգանքի է ենթարկում մելիք Քարամին: Սրա անուամբ կոչւում է եւ այժմ այն մելիքական տոհմը, որ բնակւում է Տանձթափա կամ Ղարաբաբա գիւղում: Այս տոհմից նշանաւոր է նաեւ իւր քաջութեամբ մելիք Քարամի թոռ մելիք Հայրումը:

12. Մելիք-Ֆրանգիւլին շատերը Շուն-Ֆրանգիւլ են կոչում:

13. Իւրաքանչիւր ռէալը արժէ 35 կ.

14. Պալի զօրաւարին Հալիձոր է բերում Ինժիվար գիւղացի Ռուստամ-բէկն, որ թէպէտ թուրքերի հետ էր միացած, սակայն Պալի զօրաւարից երբեմն բարիք ստացած լինելով՝ երախտահատոյց է լինում:

15. Մինչեւ հիմայ էլ այս կողմերում մատնիչներին Եղի են անուանում:

16. 1729

17. Կարճեւան գիւղի հանդէպ, Արաքսի աջ ափին, մի քաղաք էր, Քիւրդաշա քաղաքի մօտ:

**«Ազգագրական պատկերազարդ հանդես», 9-րդ տարի, XII գիրք, 1904 թ, Թիֆլիս, Արագատիպ Մ. Մարտիրոսեանցի, 1905թ**



**1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ**

**ԹԵՐԻՆ ԼՐԵԼՈՒ ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ**

# Տեր կանգնենք մեր սրբավայրերին

**ԱՍՏՂԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ**
**Պատմական միջավայրի պահպանության Սյունիքի մարզային ծառայության պետ**

Սյունիքի մարզպետարանի ՀՀԵՄ-ի նկարը

**Սյունիքի պատմամշակութային ժառանգության արժեւորման հարցում չափազանց մեծ դերակատարում ունեն այն վանական համալիրները, որոնք հավատի ջահը դարեր ի վեր վառ պահելու հետ մեկտեղ մնայուն ներդրում են ունեցել նաեւ կրթական ու մշակութային ասպարեզներում: Սյունյաց աշխարհում այդ վանքերից գլխավորների թիվը հասել է մինչեւ երեսունի:**

Ներկայիս Կապանի տարածաշրջանում են գտնվել Երիցավանքը, Տանձափարախը, Վահանավանքը, Շատանյա եւ Գողորյա վանքերը: Վերջին երկուսի տեղորոշման մասին որոշակի բան ասել չենք կարող: Դեռեւս 13-րդ դարում՝ Ստ.Օրբելյանի կողմից նահանգի պատմությունը շարադրելու ժամանակ, այդ վանքերի մեծ մասն արդեն ամայի էր: Կապանի տարածաշրջանում գտնվող վանական համալիրներից հանգամանալից ուսումնասիրության ենթարկվել է միայն Վահանավանքը: Հայ մանուկներ կրթած, հայեցի դաստիարակություն տված քրիստոնեական հավատի մի շարք օջախներ դեռ կարոտ են լուրջ գիտական ուսումնասիրման, նորովի բացահայտման ու վերականգնման: Մինչ օրս պահպանված եւ Սյունիքի հոգեւոր, մշակութային կյանքում մնայուն դերակատարում ունեցած՝ Կապանի տարածաշրջանի վանքերից են Երիցավանքը եւ Տանձափարախը: Այդ վանքերին անդրադառնալուց առաջ, կուզեի մի հարցի մասին էլ խոսել՝ իմաստ ունի՞ դրանց ուսումնասիրումը, վերականգնումն ու վերաբացումը, երբ այսչափ անտարբեր ու անհաղորդ ենք դրանց ունեցած դերակատարությանը, ականջի ծայրով գուցե ինչ-որ բան լսել ենք դրանց մասին, հաջորդ որպեսզի էլ մտահաս արել: Սյունյաց աշխարհի քանքարաշատ պատմիչը՝ մինչ պատմության շարադրանքին անցնելը, գրում է. «Բոլոր գոյացությունների սկիզբն աստված է, բոլոր բարիքների սկիզբը՝ սերը, բոլոր շնորհների սկիզբը՝ խոհականությունը»: Ցավալի է, բայց իրողություն, որ հանճարի այս խոսքերին այսօր ուշադրություն դարձնող չկա: Պետք չէ շատ ջանք գործադրել հասկանալու համար, որ ամեն մի լավ բան, ամեն մի լավ արարք խոհականությունից է սկիզբ առնում: Անընդհատ՝ պատեհ ու ահպատեհ առիթներով, խոսում ենք մեր պատմամշակութային ժառանգությունից, մինչդեռ այդ ժառանգության բուն տերերին կրթելու, նրանց մեջ այդ ամենին տեր լինելու գիտակցություն ձեւավորելու հարցին մատնելի արանքով ենք նայում: Մարդ արարածի մեջ մարդկային վեհ գաղափարներն ու արժեքները մանկուց պետք է սերմանել, որպեսզի, հասակ առնելու հետ մեկտեղ, դրած հունդն էլ աճի ու զորանա: Ինչ իրավիճակ է այսօր մեր դպրոցներում: Հայոց պատմության դասաժամերն են կրճատվում, չկան հայրենագիտական խմբակներ: Սյունեցի երեխան անտեղյակ է իր երկրամասի պատմությանը, հեռացել, խորթացել է իր արմատներից, անտեղյակ է իր հերոսական ապուպապերի հանճարից ծնված բան ու գործին: Ասելիքս այն է, որ ինչքան էլ ուսումնասիրենք, ջանք ու եռանդ ներդնենք ու հուշարձաններ վերականգնենք, եթե մեծացող երեխան անհաղորդ է դրանց բուն արժեքներին, չի պատկերացնում, որ այդ ամենն ստեղծվել ու մեզ է ավանդվել հենց իրենց պապերի ջանքերով, դրանք ստեղծողների ու իրենց երակներում նույն արյունն է հոսում, այս երկրամասի բուն ժառանգներն ու լիիրավ տերերն իրենք են, որ կան, եթե չկա այս ամենի գիտակցումը, արած գործն էլ իմաստ չունի:

Խոհականություն դնենք մեր մատաղ սերնդի մեջ, խոհեմաբար մեծացնենք նրանց, որ ապագայում՝ իշխանության ղեկը ստանձնելիս, արժեւորեն իրենց սյունեցի լինելը, գնահատեն պապերի թողած գործերը, իրենց հարգանքի տուրքը մատուցեն նրանց հիշատակին, որ մի օր էլ Կապան մարզկենտրոնը Սյունիների, Ջագիկյանների, Օրբելյանների անունը հավերժացնող փողոց կամ կրթամշակութային օջախ ունենա: Սա միայն իմ մտահոգությունը չէ: Կարծում եմ՝ բոլորի համար էլ անվիճելի է, որ ինչ քաղաքական գործիչներ էլ ստանձնեն երկրի ղեկը, Սասունցի Դավթի արձանը միշտ իր տեղում կմնա:

Անցնենք մեր վանքերին: Կապանցիների համար մեծ ուրախություն է վերականգնված տեսնել Վահանավանքը, նամանավանդ, որ լրացել է համալիրի հիմնադրման 1100-ամյակը: Վահանավանքում էլ կան իրենց լուծմանն սպասող բազմաթիվ խնդիրներ, որոնցից, թերեւս, ամենակարեւորը վանքը Հայաստանյայց առաքելական եկեղեցուն վերադարձնելու հարցն է: Վահանավանքին առնչվող հարցերի լուսաբանման ուղղությամբ մինչ օրս բավականաչափ աշխատանք տարվել է եւ դեռ կտարվի: Մենք ուզում ենք անդրադառնալ Կապանի տարածաշրջանի այն երկու խոշոր վանական համալիրին, որոնք կուզենայինք տեսնել շենացված ու նորոգ՝ կենդանի հավատքի մշտավառ օջախներ: Խոսքը Երիցավանք եւ Տանձափարախ վանական համալիրների մասին է:

Երիցավանքը գտնվում է Արծվանիկ գյուղից 3կմ հարավ-արեւելք տարածվող բարձրավանդակի վրա: Վանքի շինության մասին Սյունիքի պատմիչ Ստ.Օրբելյանը գրում է, որ Երիցակ կրոնավորը երկար տարիներ ապրել է Բաղք գավառում գտնվող մի քարանձավում, այնուհետեւ գնացել է երանելի Գյուտի վանքը /այս վանքը գտնվում էր Արաքս գետի ափին/ եւ այնտեղ անտանելի ճգնությամբ անցկացրել շատ օրեր: Այնուհետեւ Տեր Գյուտի օժանդակությամբ ու հրամանով՝ տասներկու կրոնավորների հետ, գալիս է այս տեղը եւ Հայր Գյուտի պարգեւած բազմաթիվ ունեցվածքներով կառուցում եկեղեցի ու կոչում Նոր Երուսաղեմ: Անմարդաբնակ տարածքում կառուցված վանքի շրջակայքում ապրող բորոտները դիմադրում էին Երիցակի շինարարությանը: Հայր Գյուտը, լսելով այդ, գալիս եւ խաղաղեցնում է նրանց ու վանքից նրանց կարիքները հոգալու համար հնարավորություն ընձեռում: Տարիներ անց Երիցակ վանահայրը ձեռնադրվում է Սյունիքի մետրոպոլիտ:

Երիցավանքի ներկա դրությամբ գտնվող եկեղեցին կրում է Սուրբ Ստեփանոս Նախավկայի անունը: Իսկ թե որն է Նոր Երուսաղեմը եւ ինչ առնչություն ունի ներկայիս եկեղեցու հետ, ասել չենք կարող: Համալիրի կիսավեր վիճակում գտնվող շինություններից ոչ մեկի վրա չկա պահպանված որեւէ արձանագրություն, որով հնարավոր լինի ճշտել նրա կառուցման ստույգ թվականը: Սակայն, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ Մուշե կաթողիկոսի կողմից Երիցակին Սյունիքի մետրոպոլիտ ձեռնադրելը պետք է տեղի ունեցած լինի 6-րդ դարի սկզբներին, եւ Երիցակն էլ, ամենայն հավանականությամբ, տարիքն առած լինելու պատճառով է, որ ընդամենը մեկ տարի է զբաղեցնում մետրոպոլիտության աթոռն ու վախճանվում, պետք է եզրահանգել, որ Երիցավանքը կառուցվել է 5-րդ դարի 2-րդ կեսերին:

Երիցավանքի Սբ Ստեփանոս Նախավկայի անունը կրող եկեղեցին եզակի ճարտարապետական հորինվածքով թաղածածկ դահլիճ է, գտնվում է կիսավեր վիճակում: Նույն վիճակով պահպանվել են նաեւ զանգակատունը, գավիթը, սրահը: Վանքի հյուսիս-արեւմտյան կողմում կա քարայրների համալիր, որոնցից մեկին տեղացիները ճգնավորի խուց են անվանում: Չի բացառվում, որ մինչ վանքի կառուցումը, հենց այս քարայրում էլ ճգնած լինի Հայր Երիցակը:

Թե մինչեւ երբ է գործել Երիցավանքը, ստույգ ասել չենք կարող: Իսկ որպեսզի պատկերացում ունենանք նրա ունեցած դերի վերաբերյալ, բավական է հիշատակել, որ Ստ.Օրբելյանը՝ Սյունյաց աշխարհի գլխավոր վանական համալիրների շարքը թվարկելիս, յոթերորդը նշում է Երիցավանքը:

Մինչ օրս պատմագիտությանն անհայտ է, թե որտեղ է գտնվել Մաթուսաղայի դպրոցը, որին Սյունիքի պատմիչը համարում է գլուխ եւ երեց մյուս դպրոցների: Չի բացառվում, որ հենց այս վանքն էլ հանդիսացած լինի ուսումնառության այդ հռչակված կաճառը:

Տանձափարախը գտնվում է Կապան քաղաքի Բեխ թաղամասից 4կմ հարավ-արեւմուտք, բարձր լեռան արեւելյան լանջին, անտառի մեջ: Անվանում են նաեւ Բեխի կամ Արիստակես անապատ: Կա նաեւ կարծիք, որ այն պատմության մեջ հիշատակվող Փառավարտո վանքն է: Համալիրի հիմնադրման մասին պատմագրության մեջ որոշակի բան չկա պահպանված: Տանձափարախի մասին առաջին հիշատակությունը Ստ.Օրբելյանի երկում է, որտեղ ասվում է, որ Սյունյաց Ջագիկ իշխանի որդին՝ Վահանը, հանկարծակի չար դեւից զարնվելով, տանջվում էր: Այդ պատճառով հրաժարվում է աշխարհական կարգից, կրոնավորի տարազ հագնում ու երկար ժամանակ ճգնում Տանձափարախի սուրբ վկայարանում: Մաքրվելով պիղծ ոգուց, Վահանը վանք է կառուցում եւ իր անունով կոչում Վահանավանք: Վահանավանքի նավակատիքը տեղի է ունեցել 911թ: Կնշանակի Տանձափարախը 10-րդ դարի սկզբին արդեն հայտնի միաբանական ուխտ է եղել:

Սյունյաց աշխարհի գլխավոր վանքերի շարքում Ստ.Օրբելյանը Տանձափարախը նշում է տասնմեկերորդը՝ Վահանավանքից հետո, հավելելով, որ Վահանավանքի եւ Տանձափարախի կրոնավորները խարազնազգեստ ու սակավապետ էին:

Համալիրի կենտրոնում գտնվող եկեղեցու ներսում պահպանված հեթանոսական պաշտամունքային դեկորների առկայությունը հիմք է տալիս ենթադրելու, որ այս տարածքում հնարավոր է հեթանոսական տաճար եղած լինի: Հնագույն պաշտամունքային կենտրոն լինելու օգտին է խոսում նաեւ մոտակա բնակավայրի Բեխ անվանումը: Ստ.Լիսիցյանը «Ջանգեզուրի հայերը» գրքում գրում է, որ բեխ ուդիերեն նշանակում է արեւ: Բեխ գյուղի մասին Ստ.Օրբելյանը հիշատակում է Սյունյաց տեր Սահակի որդի Ջեւանշեր իշխանի ու Սյունյաց եպիսկոպոս Տեր Սողոմոնի միջեւ 871թ. կնքված մի պայմանագրի մեջ: Շուրջ տասներկու դար պատմության մեջ իր անունն անփոփոխ պահած բնակավայրը կարող է շատ ավելի հին լինել:

Տանձափարախի վանական համալիրի մեջ մտնող եկեղեցին միանավ, բազիլիկ շինություն է, մինչ վերջերս ամբողջովին կանգուն էր: 2011թ. մայիսի 4-ին՝ մեր վերջին այցելության ժամանակ, ականատես եղանք, որ եկեղեցու հարավային պատի տանիքին հարող մի հատվածը փլվել է: Տանիքն ամբողջովին խոտածածկ է, աճել են նաեւ ծառեր: Եկեղեցու ներսում՝ խորանի կամարների ու բեմի պատի մեջ ագուցված տարբեր դարաշրջաններին պատկանող ճարտարապետական դեկորները փաստում են, որ այն մի քանի վերակառուցումների է ենթարկվել: Պատմության մեջ հիշատակվող վերակառուցումը վերաբերում է 17-րդ դարի 20-ական թվականներին: Վերակառուցումն իրականացրել է Արիստակես վարդապետը: Արիստակեսի կատարած շինարարական աշխատանքներն այնպիսի հիմնավոր բնույթ են կրել, որ համալիրը սկսել են անվանել նաեւ Արիստակես անապատ:

Համալիրը հին ժամանակներում հաղորդակցության ճանապարհ է ունեցել Հալիձորի բերդի, այնտեղից էլ Վահանավանքի հետ: Տեղ-տեղ աղոտ կերպով դեռ նշմարվում են այդ ճանապարհի մնացորդները: Այժմ այնտեղ կարելի է հասնել միայն անտառի միջով անցնող մի քանի կածաններով:

Եթե սա իրոք Փառավարտո վանքն է, ու ժողովրդական ստուգաբանությամբ էլ փառավարտո՝ նշանակում է փառավոր ավարտ ունեցող, տա Աստված, որ նրա ավարտն իրոք փառավոր լինի:

■

**Հ.Գ.** 2012թ. «Երկիր եւ մշակույթ» կազմակերպության կողմից Տանձափարախում կատարվել են մաքրման աշխատանքներ:

# Շենացրո՛ւ մեռած մայրաքաղաքի վանական համալիրը...

## Նախարդակ բաց նամակի

Գրեթե 200 տարի Հին Կապանը Սյունիքի թագավորության մայրաքաղաքն էր, եւ ցայժմ նրա ավերակները ցանուցիր պահպանվել են Բաղաց լեռներում: Պատմության անզուգական սկզբնաղբյուրը Ստ.Օրբելյանի «Հիշատակաց մատյանն» է, որի ուղղորդմամբ գիտունները դեռ ճշտում են Արեւելյան Հայաստանի վերջին թագավորության մեռած մայրաքաղաքի համապատկերը: Երկբայելի չէ, որ մայրաքաղաքի միջնադարյան ընկալումն ընդհանուր քիչ եզրեր ուներ արդի պատկերացման հետ. Կապան էր՝ անվանը հարիր դժվարամատչ լեռնանցք, բերդ էր՝ միայն Տերը կարող էր մատչելի դարձնել, դղյակ էր՝ բարձունքում երեւելի թագավորական տուն: Երբ Անանիա կաթողիկոսը մեր կողմերը եկավ, «նրան տարան, իջեցրին Կապան քաղաքի արքունական գահույքի վրա» (Օրբ., ԾԲ):

Դարերի հոլովույթում քաղաքը փախեփախ եղավ, չհեռանալով ստնտու ծնողից՝ Վահանավանքից: Նորօրյա Ղափան-Կապանը հառնեց Հին Կապանից գետն ի վար 10-15կմ հեռու, իր շրջագծում առնելով արբանյակ մի շարք գյուղեր ու նաեւ՝ Վահանածորը, որտեղ Հին Կապանի գլխավոր սրբատեղին է:

Համայնավար իշխանության հաճությամբ 1966-ից սկսվեցին պեղումները ոսկեմատ Գրիգոր Մեսրոպազունի գլխավորությամբ, ով վանքի զորությամբ հետագայում պրոֆեսորի եւ այլ պատվական կոչումներ առավ:

Բայց վերականգնումն ի ցույց դրեց նաեւ կասկածելի ու անխոհեմ լուծումներ: Չկարեւորվեց համալիրից գլորքով հեռացած խոյակների ու սրբատաշերի փնտրտուքը: Կապանա քարաշխարհին շթաքարի համալրում եկավ Արարատից: Շրջանառվեցին լուրեր ծպտի գանձախույզների վերաբերյալ, եղան գտածոների անհարկի օտարման դեպքեր:

Աշխատանքների մեքենայացումն ավելի բարեհարմար դարձրեց վանքատար ճանապարհը, եւ Ջագիկյանների բանուկ մայրուղով այցելուների հոսքը դարձել է մշտական: Արքաների, հոգեւոր պետերի եւ այլ երեւելիների դամբարանաքաղաքը տակավին չի զորացնում ուխտավորներին: Այցելուն տեսնում է անավարտ վերականգնումները, խաչքարերի եւ սրբատաշերի անփույթ կուտակումները, անվանական մրոտում-ներկագրությունները. կարծես, լենկթեմուրյանները նոր են հեռացել…

Քաղաքում, գյուղում եւ ամենուր ոմանք աղբը նետում են՝ ուր պատահի: Վահանածորում էլ նույնն է: Երբեմնի «հարյուր մաքրակրոն վանականների» տարածքում սերունդներս հույժ անվայելուչ պահվածք ենք դրսեւորում, եւ մտահոգները տակավին լուծումը չեն գտել: Թեմի եւ քաղաքապետարանի ղեկավարների հոգածությունը տկար եւ առեւրեւույթ է. համալիրում չի երեւում գոնե թաղի լիազորի կարգավիճակով մեկը, չկան քահանայական կանոնավոր այցելություններ:

Հոգեւորի նորօրյա ըմբռնումն ու զարթոնքն աքցանել են շատերին եւ, ըստ այդմ, Կապանա տան առաքելությունն է՝ դարձ դեպի մեր արմատները, դարձ դեպի Վահանավանք: Լինենք արժանի մեր նախնյաց փառքին:

Երկնքի արքայությունը, թերեւս, գործարար կապանցիներինն է, ընդերքի գանձերով երկիրը շենացնող սյունեցիներինը, ովքեր, հայրենի եզերաց սիրույն, պիտի լծվեն Վահանավանքի թերին լրելու առաքելությանն ու գործին:

**Այնտեղ ճգնավոր լինելու երազանքով՝**
**ՌՈԲԵՐՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ (ԷՋԱՆԱՆՑԻ)**

1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ՆՈՐ ՎԱՐԿԱԾ

# Դիվան Բաղաբերդի

**Քանի որ Բաղաբերդի տեղորոշման վերաբերյալ պատմագրության մեջ կան իրարամերժ եւ ոչ համոզիչ տեղեկություններ, զգուշավոր քննության եմ հրավիրում գիտակներին, հայրենի երկրամասի պատմության սիրահարներին, պատանի հայրենագետներին:**
**Այդ նպատակով ի մի բերեցի եւ թերթին եմ տրամադրում սկզբնաղբյուրների, հետազոտողների հիմնական փաստարկներն ու եզրահանգումները:**
**Թերթի սիրույն՝ շահագրգիռ ընթերցողը կարող է օգտվել մեր դպրոցի հայրենագիտական աշխատարանի հնարավորություններից եւ կապի մեջ լինել 091-513-514 հեռախոսահամարով:**
**Հուսամ, որ այս լրագրային «նորահնար ժանրը» ի հայտ կբերի թերթի նոր բարեկամներ: Քննարկման արդյունքները կընդհանրացնենք մի հրապարակմամբ:**

**Մովսես Կաղանկատվացի, 7-րդ դար**

Իսկ երբ Շապուհ թագավորը պատերազմը վերջացնելուց հետո եկավ ու տեսավ պատահած աղետը, ցասումնալից հրաման տվեց, որ իր բոլոր զորքերը մտնեն Սյունիք եւ գերեն ասուն ու անասուն… Ճակատամարտ են տալիս Բաղաբերդի դեմ, որտեղից քարեր էին գլորում զառիվայրով եւ բոլորին ոչնչացնում: Կրկին, երրորդ անգամ ավելի ուժեղ ճակատամարտ տվեցին, բայց ոչինչ չկարողացան անել. ընդհակառակը, շատերը կոտորվեցին: Թագավորը զայրանալով կամեցավ մարտը էլ ավելի սաստկացնել: Այդ ժամանակ բոլոր մեծամեծներն ընկան նրա ոտքերն ու աղաչեցին, որ այլեւս ճակատամարտ չտան, այլ ամրոցի շուրջը քանդեն:

Այդ ժամանակ Անդոկը, հարմար պահ ընտրելով, թողնում է բերդը ու մեծ հարստությամբ անցնում Բյուզանդիա:

**Ստեփանոս Օրբելյան, 1297թ.**

1. Տասներորդը՝ Չորք գավառը, որ ունի Բաղաբերդ անմատչելի ամրոցը, եւ այժմ կոչվում է Կապան:

2. Սյունիքի անառիկ ամրոցն է, որ անհասանելի է մարդկանց մուտքին, եւ միայն տերը կարող է մատչելի դարձնել՝ Բաղաբերդ. դա այն է, որ Սիսակի սերունդներից մի մարդ՝ Բաղակ անունով, այս գավառը ստանալով ժառանգության բաժին, Բաղակի ապառաժը շինում է ամրոց, որը կոչվում է Բաղակի քար, բերդն ամրացնում է եւ անվանում Բաղաբերդ. գավառն էլ իր անունով կոչվեց Բաղաց գավառ:

3. Եվ բերելով անհաշիվ ավարը՝ ամբողջը հավաքեցին Բաղաբերդում: Եվ բոլոր գավառների հացի, խոտի, հարդի պաշարները, ամբողջ գինին, յուղը, մսացուները, մեղրը, տեսակ-տեսակ մրգերը՝ անհամար կենսապաշար, ինչպես նաեւ հեծելազորի սարքերն ու զենքերը կենտրոնացրին բերդում:

4. Ապա Շապուհ արքան հրամայեց, որ դրանից ավելի շատ, կրկնապատիկ զորքեր գան Պարսկաստանից: … Եվ ինչպես առաջին, նույնպես եւ այս երկրորդ անգամ պարսաքարերով ու վեմերի գլորումով պարսկական զորքի անհամար բազմությանն ամբողջովին դիաթավալ արեցին: Շապուհը նորից ուրիշ զորք գումարեց՝ դրանից եռապատիկ ավելի ու հրամայեց սաստկացնել պատերազմը: Կարգադրեց վերջապահներ թողնել եւ ասաց. «Եթե մեկը ետ դառնա, սպանեցեք»: Սրանք էլ նույն ձեւով, ինչպես առաջին, երկրորդ, այնպես եւ այս երրորդ անգամ, վեմերով ու պարսաքարերով ջախջախվելով առհասարակ ոչնչացան:

5. Ոմն Վահան՝ Չագիկ իշխանի որդին եւ Ջեւանշերի եղբայրը… շատ ու խիստ ճգնություններից հետո գալով այն բարձր լեռան ստորոտը, որի վրա է Բաղաբերդի անառիկ ամրոցը, Աճանանի դիմաց՝ գտնում է մի հարթ տեղ, շատ հարմար…, սկսում է եկեղեցու շինարարությունը: … Վահանն իր անունով վանքը կոչում է Վահանավանք:

6. 1103 թվականին, մի օր, երբ քաղաքացիներն անհոգ դրության մեջ էին…, անիծյալ Չորթմանն իր վրեժը լուծելու համար անսպասելիորեն հարձակվեց Կապան քաղաքի վրա: Նախ՝ բազմաթիվ հետեւակ ծերպամուտ ու քարագնաց զորականներ բարձրացան ապառաժոտ լեռան գլուխը եւ հեղեղատի մեծ հունով իջան քաղաք, քանի որ այդ տեղը պարսպափակված չէր… Սկսեցին կոտորել Ջիտաթաղի կողմից: Նրանք բացեցին քաղաքի դարպասը, որ նայում էր Խնձորոգլխին: Բոլոր զորքերը մտան ու ջարդեցին, կոտորեցին ամբողջ բնակչությանն առհասարակ: Սակայն բերդի նկատմամբ ոչինչ չկարողացան ձեռնարկել եւ ետ դարձան իրենց տեղը:

7. Չորք գավառի՝ Տաթեւի վանքին հարկատու գյուղերը.

Բաղաբերդ-12, Տինիք-12, Ծաղքանու-6, Գեղովանք-20, Բեխորոտ-8 եւ այլն:

8. 1126թ. եկավ ամիր Հարոնը եւ բնաջնջեց Կապանի տունն ու Արեւիք գավառը, գրավեց Կաքավաբերդն ու Բաղակաքարը:

9. Իսկ երբ լրացավ 1151 թվականը, եւ սկսվեց առաջին տարին, Շլորուտ բերդը կողոպտեց թուրքերի ճարպիկ ցեղը, 1157 թվականին էլ Մեղրին հափշտակեցին:

10. 1170թ. … բազմաքանակ զորքերով եկավ, բայց չկարողացավ ոչինչ անել: Այնուհետեւ խաբեական խոսքերով խաբեց աչաղվացի պարզամիտ քրիստոնյա մարդկանց ու նրանց միջոցով նախ գրավեց Կկոց քարը, ապա գիշերը նույն մարդկանց միջոցով հափշտակեց եւ Բաղաբերդը, որը գրավելով սաստիկ կոտորած արեց: Եվ քանի որ այն անհաղթահարելի ամրություն ուներ, բոլոր վանքերից այնտեղ էին կուտակել սրբությունները, գրքերը, եկեղեցական սպասքները, առավելապես Տաթեւի փարթամ ու հարուստ աթոռի անհամար եւ աննման սրբություններն ու եկեղեցական սպասքները, ոսկե եւ արծաթե խաչերը, հիշատակային իրերը՝ զարդարված անգին ակնեղեններով, անհամար մարգարիտներով: Այնտեղ ամբարված էին շատ Կտակարաններ՝ թվով ավելի քան 10 հազար: Դրանք բոլորն էլ գերի տարվեցին եւ ցիրուցան եղան երկրի երեսին:

**Վարդան Արեւելցի, 13-րդ դար**

1166-1169թթ. Ելտկուզի զորքերը գրավեցին թագավորության նշանավոր բերդերից Գրհամը, Գեղին եւ Կաքավաբերդը:

**Հայ ժողովրդի պատմություն, հ.3, 1976**

1170թ. սելջուկները պաշարեցին թագավորության վերջին հենակետը՝ Բաղաբերդը, որտեղ գտնվում էր Հասան թագավորը: Որոշ ժամանակ անց Բաղաբերդի վիճակը դարձավ օրհասական: Հասան Գեռաքարեցին բերդապահներ կարգելուց հետո իր ընտանիքի հետ գիշերով հեռանում է Խաչեն՝ դեպի իր հայրենական կալվածքը:

**Հ.Ութմազյան, Սյունիքը 9-10-րդ դարերում, 1958**

Վահանը… Բաղաբերդի հանդեպ մի հարթության վրա կառուցում է մի վանք եւ իր անունով կոչում Վահանավանք:

**Ղեւոնդ Ալիշան, 1893**

… ուրանօր յահեկէ գետոյն Կապանայ խնդրելի են երկոքին գլխաւոր տեղիք սորին, որք ըստ ոչ բաղդի ոչ նշանակին ի տեղացոյց տախտակի. յայտ է զի աւերակք իցեն, այսինքն Բաղաբերդն կամ Բերդն Բաղայ եւ Կապան քաղաք, երկոքին եւս անուանատուք ողջոյն գաւառաց…

**Ռաֆֆի, Դավիթ Բեկ, 1980**

Նա տեսավ Հալիձորի բերդը, իսկ նրա հանդեպ՝ Աչաղու բերդը: … Հիշյալ երկու բերդերի միջով անցնելով, նա մտավ Բաղաբերդ քաղաքի ավերակների մեջ:

… Բաղաբերդը իսկապես դրած էր մի քարեղեն սնդուկի մեջ:

**Ստեփան Լիսիցյան, Զանգեզուրի հայերը, 1969**

Բաղաբերդը, որին այժմ տեղացիք Դավիթ Բեկի բերդ անունն են տալիս… գտնվում է գրեթե Ջրախորի հանդեպ, հազիվ մի կես-երեք քառորդ կիլոմետր հեռավորության վրա, գետի հոսանքով վեր, դեռ չհասած Գեղվա գետի բերանին… Այստեղ երկրակեղեւի հուժկու նստվածքների շերտերը շրջված են եւ կանգնեցրած են գրեթե ուղղաձիգ հյուսիսից հարավ ուղղությամբ Ներքին Գիրաթաղ գյուղի արեւմուտքով… Այս ժայռերն է, որ պատմագիրը հիշում է որպես Բաղակի քար:

**ՀՍՀ, հ. 2, 1976**

Բաղաբերդը գտնվում է Ղափան քաղաքից դեպի արեւմուտք՝ Քաջարան տանող մայրուղու վրա, Ողջի գետի ձախ ափին, Դավիթ-բեկ բանավանի մոտ: … Բաղաբերդի հյուսիսարեւելյան միակ մուտքին թշնամին կարող էր մոտենալ միայն անկյան տակ:

… 1126-ին սելջուկները Ամիր-Հասանի առաջնորդությամբ գրավել են Բաղակու քարը:

**Տեղանունների բառարան, հ.1, 1986**

Բաղաբերդի ավերակներն այժմ կարելի է տեսնել Ողջի գետի եւ նրա ձախակողմյան Գիրաթաղ վտակի անկյունում, Դավիթ Բեկ բանավանի մոտ…, Ողջի գետի հունից 200մ բարձրություն ունեցող ձախափնյա լեռան վրա:

**Պրոֆ. Թ.Հակոբյան, Սյունիքի թագավորությունը, 1966**

1. Ալիշանի աշխատությանը կցված քարտեզում Բաղաբերդը, Բաղակի քարը եւ Կապան քաղաքը ընկնում են ոչ թե Չորքի կամ Կապան գավառի մեջ, ինչպես իրականում կար, այլ՝ Բաղքի:

2. Բաղակի քարը գտնվում է Բաղաբերդի մոտ (700-800 մետր հեռու), այժմյան Վերին Ջրախոր գյուղի տեղում, Ողջագետի աջ ափին:

**ՌՈԲԵՐՏ ԷՋԱՆԱՆՑԻ**



## 1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

# ՆՈՐ ՎԱՐԿԱԾ

# Հնավայրը Բաղաբե՞րդն է

Լուսանկարները՝ ՉՅԵ Կայզերսլաուտերնի համալսարանի պրոֆ. Հ.Հարթմուտի, 18 օգոստոսի 2003թ.

Մետրոպոլիտ-պրոտոֆրոնտես Ստ.Օրբելյանի «Հիշատակաց մատյանից» կարելի է մակաբերել, որ վաղմիջնադարյան համբավանուն Բաղաբերդը գտնվել է Բաղաց լեռների (հետագայում վերանվանված են Արեւիքի լեռներ) բարձունքներում: Դյուրավ մերժելի է Ռաֆֆու ցուցումն առ այն, որ Բաղաբերդը Ողջի գետի եւ ձախակողմ վտակ Գիրաթաղջրի կցվանքատեղի ավերակն է, որը եւ շրջանառվել է ետինների կողմից:

Հետաքրքրվողներին կոչում եմ քննարկում-դիտարկում կազմակերպել առինքնող մի հնավայրի վերաբերյալ (հատակագիծը եւ լուսանկարները՝ առդիր): Այն գտնվում է Բաղացսար գագաթից 11կմ դեպի հյուսիս, Ջրախորջուր (Ջղախոռ) անդնդախոր ձորի ձախակողմ բարձունքում, ծ.մ. գրեթե 2500մ բարձրության վրա: Տարածքը հարթ ու մեղմաթեք է, մոտ 3 հազար քառակուսի մետր: Շրջափակված է նշմարելի պարսպով: Հարավային, արեւմտյան եւ արեւելյան կողմերից անմատչելի է՝ բոլորված վեհանիստ ժայռերով: Հյուսիսային կողմում պահպանված է վիմաշար մուտքը, եւ ելքը հին ճանապարհի աղուրով միանում է լեռնապարին, որտեղից կորուսյալ սայլուղիները ձգվում են դեպի Հին Կապան ու Վահանավանք:

**ՌՈԲԵՐՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ**
**(ԷՋԱՆԱՆՑԻ)**

ԲԱՐՁՈՒՆՔԻՑ ԵՐԵՎՈՒՄ Է ԴԱՎԻԹԲԵԿ-ԱՆԴՈԿԱՎԱՆԸ

ՀԻՆԱՎՈՒՐՑ ՊԱՐՍՊԻ ՀԱՏՎԱԾ



ԿԱՐԾԵՑՅԱԼ ԲԱՂԱԲԵՐԴԻ (ԸՍՏ ՆՈՐ ՎԱՐԿԱԾԻ) ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

**1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ**

**ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՍՅՈՒՆԻՔ**

## Սյունյաց եպիսկոպոսները

ԱՌ 1886թ.

Ըստ Ղեւոնդ Ալիշանի «Սիսականի», էջ 20-21

302 ..... Մովսես Տարոնացի, թվում է՝ Ասորին
320 ..... Գրիգորիս, 46 տարի՞
366 ..... Մաշտոց, կարգված Ներսես Մեծից
…..... Տիրոտ
…..... Հովակիմ
..... *Քսանհինգ տարի թափուր*
415 ..... Անանիա, կարգված Վասակից, 42
458 ..... Նուն, 8
466 ..... Գաղատ, 17
483 ..... Մուշե, 36
519 ..... Երիցակ, 1
520 ..... Մակար, 20
547 ..... Պետրոս, 10
556 ..... Գիգան, 3
558 ..... Վրթանես, 23
580 ..... Գրիգոր, 15
595 ..... Քրիստափոր, 10
605 ..... Դավիթ, 27
631 ..... Մաթուսաղա, 18՞
645-52 . թափուր 8 տարի
652 ..... Աբրահամ, 30
681 ..... Հովսեփ, 19
700 ..... Հովհան, 12՞
…..... Մովսես, 7
720 ..... Անանիա, 7
726 ..... Հովհան, 9
736 ..... Ստեփանոս Մեծ, 1
736 ..... Հովսեփ, 13՞
749 ..... Հովակիմ, 17
764 ..... Սադովկ, 38
801 ..... Հովհաննես, 2
803 ..... Սողոմոն, 7
808 ..... Եղիա, 8
815 ..... Թեոդորոս, 18
832 ..... Գեւորգ, 8
839 ..... Դավիթ, 17
856 ..... Հովհաննես, 10
866 ..... Սողոմոն, 17
882+918 - Հովհաննես, 38
918 ..... Հակոբ, 41
958 ..... Վահան, 6
963+992 - Աշոտ, 17՞
985 ..... Հովհաննես, որդի Աշոտի, 8
993 ..... Սամվել, 5
999 ..... Հակոբ
…..... Գրիգոր
1006 .... Հովհաննես, 50
1057 .... Գրիգոր, 58
1117+1143 Ստեփանոս, 27
1143 .... Բարսեղ, 5
1149+1168 Գրիգոր, 20
1170+1216 Ստեփանոս, 46
1216+1251 Հովհաննես, 36

*Նորավանքում*
1216 .... Հովհաննես Կապանցի
..... Սարգիս, 20
..... Ստեփանոս, 12
..... Գրիգոր, 1
..... Սարգիս (1285), 24
1251+1290 - Հայրապետ, 40
1271 .... Սողոմոն Հայրապետի հետ., 20
..... Հովհաննես, 3
1286+1309 – Ստեփանոս Օրբելյան
..... Շմավոն
1310 .... Հովհաննես Օրբել
1329 .... Ստեփանոս Օրբել, որդի Ջալալի
1337 .... Սարգիս եւ Ներսես
1407 .... Առաքել, քրոջորդի
*Գր.Տաթեւացու*
1422 .... Ստեփանոս, որդի Օրբելյան Սմբատի
1464 .... Ստեփանոս մյուս, որդի Իվանեի՞ Որոտնեցու
…..... Շմավոն ազատ տնից
1478 .... Հովհաննես
1483 .... Ստեփանոս, եղբորորդի Շմավոնի
1495-1522 Եղիշե Օրբելյան
1571 .... Առաքել
1576 .... Ստեփանոս
1611 .... Ավետիք
1620-42 Մեսրոպ
..... + 1651 Զաքարիա
..... + 1652 Ներսես
1653 .... Ստեփանոս
..... + 1673 Մեսրոպ

# Բեխի անապատ (Տանձափարախ)

Ըստ Մուրադ Հասրաթյանի «Սյունիքի XVII-XVIII դարերի ճարտարապետական համալիրները» գրքի

Դամանակակից Ղափանի շրջանում գտնվում է Սյունիքի մի այլ անապատ եւս, որը հայտնի է «Բեխի անապատ» անունով: Այն տեղադրված է Բեխ գյուղից հարավարեւմուտք՝ մի բարձրադիր վայրում՝ լեռնաշղթայի գագաթներին մոտ՝ խիտ անտառում:

Անապատը կազմված է եկեղեցուց, որը թաղածածկ դահլիճի հորինվածք ունի եւ նրա հյուսիսային կողմում կանգուն ուղղանկյուն՝ թաղածածկ սեղանատնից: Մնացած կառուցվածքներից՝ պարիսպների, միաբանության բնակելի սենյակների միայն հետքերն են պահպանվել: Քանդված է նաեւ եկեղեցու արեւմտյան ճակատին կից կառուցված գավիթ-սրահը:

Անապատի շենքերն ամբողջովին ծածկված են ծառերով եւ թփերով, որոնք լրիվ քողարկում են նրանց, եւ միայն մոտիկից է հնարավոր նկատել խիտ անտառի թավուտում ճարտարապետական կառուցվածքների առկայությունը: Իսկ պարսպապատերի, խցերի եւ այլ շինությունների փլատակներն ուղղակի կուլ են գնացել բուսականությանը, եւ այժմ անհնար է տալ համալիրի գլխավոր հատակագծի ամբողջական տեսքը: Բեխի անապատը, սակայն, ունի մի շարք հետաքրքիր առանձնահատկություններ, որոնք արժեքավոր են ուշ միջնադարի Սյունիքի ճարտարապետության համար: Առաջինը եկեղեցու հորինվածքն է, այն միջանկյալ տեղ է գրավում եռանավ բազիլիկայի եւ որմնամույթերով եւ որմնախորշերով դահլիճի միջեւ: Երկրորդը սեղանատան տեղադրությունն է. եթե մյուս անսամբլներում սեղանատունն առանձնացված է եկեղեցուց, ապա այստեղ նրանք ոչ միայն կից են, այլեւ երկու կառուցվածքների գլխավոր մուտքերը արեւմտյան ճակատներից են, որոնք միեւնույն հարթության մեջ են գտնվում: Ճիշտ է, եկեղեցին այս կողմում ունի կից կառուցված գավիթ-սրահ, որը շեշտում է նրա մուտքը եւ առանձնացնում այն սեղանատնից, սակայն վերջինս նույնպես այս կողմից ունի սրահանման մի կառուցվածք (սրա միայն հետքերն են մնացել):

Համալիրի մուտքը չի պահպանվել, սակայն մոտեցումը Անապատին հարմար է արեւմուտքից, եւ, մեր կարծիքով, դարբասը տեղադրված է եղել այս կողմում:

Բայց ամենահետաքրքրականը եկեղեցու եւ սեղանատան պատերի շարվածքում օգտագործված մի այլ շատ ավելի հին կառուցվածքի բեկորների առկայությունն է, որը լույս է սփռում Բեխի անապատի իսկական անվան եւ Սյունիքի հնագույն վանքերից մեկի տեղադրությունը ճշտելու հարցի վրա:

Անապատի սեղանատունը եւ եկեղեցին կառուցված են կիսամշակ բազալտից եւ որձաքարից, XVII դարին բնորոշ շինարարական տեխնիկայով, իսկ շարվածքում օգտագործված բեկորները բոլորովին ուրիշ քարից են՝ դեղնակարմրավուն տուֆաքարից: Բեկորներում հանդիպում են ատամնավոր քիվի, քանդակազարդ զարդագոտու հատվածներ: Եկեղեցու արեւմտյան ճակատին արտաքուստ ագուցված քարի վրա պահպանվել է ուռուցիկ դրված արձանագրության մի կտոր: Փորագրության ձեւը հատուկ է XII-XIV դարերին: Ակնհայտ է, որ Անապատի տեղում եղել է մի ուրիշ՝ ավելի հին հուշարձան, որը լրիվ քանդվել է, եւ քարերը մասամբ օգտագործվել են նոր կառուցվածքի համար: Նման օրինակներ շատ կան Հայաստանի XVII դարի ճարտարապետության մեջ, երբ XV-XVI դարի արհավիրքներից վնասված՝ կիսաքանդ տաճարները եւ եկեղեցիները լրիվ քանդում էին եւ նույն տեղում շինում նոր պաշտամունքային կառուցվածքներ: Քանդակազարդ բեկորների եւ արձանագրության ոճական առանձնահատկություններից պետք է ենթադրել, որ Անապատի նախնական հուշարձանը կառուցված է եղել VII դարից ոչ ուշ եւ կանգուն է եղել մոտավորապես մինչեւ XIV դարը, որից հետո քանդվել է կա՛մ երկրաշարժից, կա՛մ թշնամիների կողմից: Իսկ Սյունիքի միջնադարյան վանքերից որն է, որ յոթ դար եւ գուցե ավելի կյանք է ունեցել եւ անհայտ չքացել՝ չթողնելով նույնիսկ իր անունը: Այդ վանքը կանգուն է եղել Ստ.Օրբելյանի ժամանակ եւս, իսկ պատմիչը ամենայն բարեխղճությամբ տվել է վաղ միջնադարից մինչեւ իր ժամանակաշրջանը Սյունիքում կառուցված համարյա բոլոր վանքերի եւ մենաստանների անունները, տվել նրանց հիմնադրման ժամանակը, կամ բերել նրանց հետ կապված այս կամ այն պատմական անցքի նկարագրությունը: Եվ, իսկապես, Օրբելյանի երկում մենք գտնում ենք այն, ինչ փնտրում ենք՝ այս հուշարձանի հին անունը, որը, պարզվում է, շնորհիվ նրա տեղադրության եւ հարեւանության Վահանավանքին: Բեխի անապատը կառուցված է Վահանավանքից մոտ 5 կմ արեւելք՝ լեռնաշղթայի գագաթներից սկսվող մի խոր ձորի սկզբնավորման մոտ: Ձորով հոսող գետակը միախառնվում է Ողջի գետի հետ: Ըստ Օրբելյանի՝ այդ տեղում է գտնվում Սյունիքի հնագույն եւ հռչակավոր մենաստաններից մեկը՝ Տանձափարախը:

Ստ. Օրբելյանը՝ գրելով Վահանավանքի կառուցման մասին, նշում է նրա տեղադրությունը, վանքապատկան հողատարածության սահմանները. «....զձորն գետովն յայս դեհս եւ յայն յանդաստանս եւ յայգեստանս վանիցն, եւ զլեռնակողմն մինչ ի վեր ի ծայր բարձրաւանդակին ուր հօրանք հօտիցն լինէին. եւ բնակետղ խաշանց եւ ի քաղաքին կողմանէ մինչ ի պատուար պարսպի արտաքին որմոյն որ ի լեռնէն սկսանի եւ ի Տանձափարախոյ կողմանեն մեծ բնածորն որ ի լեռնէն սկսանի եւ իջանէ ի գետն, եւ զգեղանն որ ի հանդեպ վանացն՝ զԱչաղու եւ զԱչախուայ, զԳետարավայր եւ զՇէկք...»: Ստ.Օրբելյանը գրում է, որ Սիսական տոհմի Ջագիկ մեծ իշխանի որդի Վահանը մինչեւ իր անունը կրող Վահանավանքի հիմնադրումը (911թ.) երկար ժամանակ անց է կացրել այդ նշանավոր մենաստանում: Նա «....բազում ժամանակօք ճգնեալ ի սուրբ առաքինարենին Տանձափարախու....» : Վահանը այնտեղից անցել է Շատանեա վանքը եւ ապա որոշ ժամանակ անց կառուցել Վահանավանքը: Հետեւաբար նա պետք է Տանձափարախում եղած լիներ IX դ. վերջերին: Իսկ այդ դարում Տանձափարախն արդեն հռչակավոր եւ հայտնի վանք է եղել: Ստ.Օրբելյանը Սյունիքի վանքերի ցուցակում նշում է 11-րդ տեղում՝ Վահանավանքից հետո՝ միա-

**Բեխի անապատը (Տանձափարախի անապատ), գտնվում է Կապան քաղաքի Բեխ թաղամասից 4կմ հարավ-արեւմուտք, բարձր լեռան արեւելյան լանջին, անտառի մեջ:**

## 1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

# ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՍՅՈՒՆԻՔ

.....Սիմեոն Անգեղակոթցի
.....Հովհան Շաբանօղլի
Զաքարիա
Մարտիրոս Մեղրեցի
Հովասափ Աղուերծեցի
Առաքել Սադաղ-օղլի
Կիրակոս Աղուերծեցի
Թոմաս
Ներսես
Աստվածատուր Մզմզգ-օղլի
Հովհաննես Տաթեւացի
Մինաս Շինաթաղեցի
Ղազար Բեխցի
Աբրահամ Աստապատցի+1777
Հովակիմ
1820+1830 Մարտիրոս Սյունեցի
1837+... Սիմեոն Ուստաթյոլյան Տաթեւացի
.....Թադեւոս Տեր-Դանիելյան
.....Հովհաննես Ասլանյանց
1886 .... Հովհաննես Վ.Ղալամյան

**Լրացուցիչ տեղեկություններ**
**Ըստ Ռոբերտ էջանանցու**

1. 1652 Ներսէս: ԺԷ դարի հիշատակարանների Գ հատորի էջ 608-ում այս Ներսեսը հիշված է նաեւ 1654 թվականին:
2. ԺԷ դարի հիշատակարանների Գ հատորի էջ 949-ում 1660 թվականին Տաթեւի առաջնորդ է հիշված Յովհաննէսը, որն Ալիշանի ցանկում չկա:
3. «Բանբեր Մատենադարանի» - 12 հատորի 261 էջում 1684 թվականին Տաթեւի առաջնորդ է հիշված Հովհաննեսը: Նույնն է՞ Հովհան Շաբանօղլու հետ...
4. Հ.Ալիշանը թվական չի դրել Հովհան Շաբանօղլի գահակալին: «Հայ ժող. մտավոր մշակ. զար. պատմ.» աշխատության 2-րդ հատորի էջ 479-ում Հովհան Շաբանօղլին 1668 թվականին գահակալ էր:
...Հետաքրքիր է, որ Աղվանի (Խողվանի) գյուղում Շաբանյան տոհմ կա:
5. Առաքէլ Սատախ-օղլի գահակալին Հ.Ալիշանը թվական չի հղել, սակայն դրել է 1673-1777թթ. միջակայքում: Ըստ Ս.Բարխուդարյանի՝ Ղափանի Հալիձորում 1711 թվակիր արձանագրություն է եղել՝ ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱՌԱՔԷԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՍՏԱԹԷԻ ՎԱՆՈՒՑ: ՌՃԿ:(Դիվան, պրակ 2, էջ 141): Ենթադրում եմ, որ այս Առաքելը Սատախ-օղլին է: Սատախ հոր մականունն է, որ թարգմանաբար նշանակում է հավատարիմ: Անշուշտ, անվանի այր էր: Թերեւս նրա անվամբ է կոչվում Գորիսի մերձակա Սըդըխի լիճը:
6. Հ.Ալիշանի առբերած՝ Կիրակոս Աղուերծեցին հավաստված է Դավիթբեկյան Տեր-Ավետիքի պատումի մեջ, թերեւս 1722 թվականը գահակալման հավաստի թվական է:
7. Յովակիմ եպիսկոպոսը 1793թ. գահակալ էր, ըստ ՄԱՅՐ ՑՈՒՑԱԿ ՁԵՌԱԳՐԱՑ Ա հատորի էջ 54-ի հիշատակարանի: Հ.Ալիշանը նրան էլ անթվական է թողել: Արդ, ո՞ր եպիսկոպոսն է հուղարկավորել Դավիթ Բեկին ըստ Ե.Լալայանի:
8. Նույնի էջ 287-ում առկա է Ղազար Բեխցին:
9. 1820-1830 Մարտիրոս Սյունեցի: Գերեցին ի Թավրիզ ըստ հիշատակարանի:

■

**Տաթեւի վանք, ճոճվող գավազանը**

# Սուրբ Մովսես Տաթեւացի

ժամանակ շեշտելով, որ նրա միաբանությունը «....խարազանազգեստք եւ սահմանաւորք....» են եղել: Նման բնորոշումը, ինչպես եւ այն փաստը, որ այդտեղ ճգնել են, ցույց են տալիս, որ Տանձափարախը եղել է անապատ, որոնցով հայտնի է եղել Սյունիքը դեռ վաղ միջնադարից սկսած: Հետաքրքրական է, որ տալով Սյունիքի բոլոր նշանավոր մենաստանների կառուցման ժամանակը՝ Ստ.Օրբելյանը ոչինչ չի խոսում Տանձափարախի հիմնադրման ժամանակաշրջանի մասին: Դա, մեր կարծիքով, բացատրվում է նրանով, որ Տանձափարախը կառուցվել է շատ ավելի վաղ եւ նրա հիմնադրման պատմությունը Ստ.Օրբելյանի ժամանակ արդեն մոռացված էր:

Տանձափարախի եւ Բեխի անապատի նույնությունը մեկ անգամ եւս հաստատվում է Առաքել Դավրիժեցու վկայությամբ: Պատմիչը նշում է, որ XVII դարի 20-ական թվականներին Տաթեւի Մեծ անապատից տեր Արիստակեսը գնաց «....Տանձափարախ եւ շինեաց անապատ՝ եւ անդ եկաց մինչ ցվախճան կենաց՝ իւրոց՝ եւ անդէն թաղեցաւ եւ տեղին անապատ կայ հաստատուն մինչեւ ցայսօր»: Սյունիքի XVII դարի բոլոր անապատները հասել են մինչեւ մեր օրերը եւ հայտնի են նրանց տեղերը: Տանձափարախ կոչված վայրում կանգուն է միմիայն մեկը՝ վերոհիշյալ Բեխի անապատը: Այս փաստը ոչ մի կասկած չի թողնում, որ նշված կոմպլեքսը պատկանում է Սյունիքի հինավուրց անապատներից մեկին՝ Տանձափարախին, որը հիմնվին վերակառուցվել է Արիստակեսի կողմից XVII դարում: Եվ պատահական չէ, որ Բեխ գյուղի բնակիչները մինչեւ վերջերս այն կոչել են Արիստակես անապատ: Տանձափարախի անապատը միջնադարում եղել է նաեւ հայտնի մշակութային կենտրոն: Այնտեղ գրվել են ձեռագրեր, աշխատել է Գրիգոր Տաթեւացու աշակերտ Մաթեւոս վարդապետը, որ 1393թ. «....գրէր զքաղուածոյ Քարոզագիրս իւր, ընդ գրոց Եւագրի եւ Նեղոսի. որպես ասէն, ի ներքնագոյն անապատիս Տանձափարախոյ....»: Հայտնի է մի ձեռագիր եւս, որը գրվել է «....ընդ հովանեաւ սուրբ Անապատիս՝ որ կոչի Տանձափարախ....»: Հետեւաբար, դեռ XIV դարում Տանձափարախը որոշակիորեն անապատ է անվանվել: Տանձափարախի անապատը, XVII դարում վերականգնվելով, գործել է հավանաբար մինչեւ XVIII դարի վերջերը՝ եկեղեցում գտնվող մի խաչքարի վրա կա 1751թ. արձանագրություն: Սակայն հետո այն լքվում է, եւ նրա անունը չի հիշատակվում՝ ոչ ազգագիրների, ոչ ճանապարհորդների ու պատմիչների կողմից:

■

**Հայ եկեղեցու կողմից կանոնացված վերջին սուրբն է, որն այդ պատվին է արժանացել իր բեղուն հոգեւոր գործունեության ու մի շարք բարենորոգությունների համար, որովհետեւ դրանք իրագործվել են մեր եկեղեցու անկումային, կարելի է ասել, ամլացած տարիներին: Այդ ժամանակվա միջնադարյան խավարում, հոգու լույսի ոչ մի առկայծում չէր նշմարվում, քանզի եկեղեցու բոլոր աթոռները, լիներ դա Կիլիկիայում, Աղթամարում, թե Երուսաղեմում, մնացել էին անմխիթար վիճակում:**

Մովսես Տաթեւացին ծնվել է 1578 թվին, Սյունյաց նահանգում, աշակերտել է Սրապիոն Եդեսացի մեծ վարդապետին: Արդեն տասնհինգ տարեկանից իր վարդապետի կողմից ձեռնադրվում է որպես կուսակրոն քահանա, իսկ նրա մահից հետո մեկնում է նախ Երուսաղեմ, ապա Եգիպտոս, ուսումնասիրելով տեղի կրոնավորների կյանքը, այնուհետեւ վերադառնալով հետ՝ դառնում է Երուսաղեմի միաբան, որտեղ հոգեւոր ուսուցումից բացի, սովորում է նաեւ մոմ ճերմակացնելու արհեստը, որը հետագայում պիտի խիստ օգտակար լիներ իրեն:

Այնտեղից նա կարճ ժամանակով այցելելում է Ստամբուլ, եւ Գրիգոր Կեսարացի պատրիարքի կողմից ստանում է վարդապետական աստիճան: Եվ շուտով նրա հետ էլ, 1610 թվին, դուրս է գալիս երկրորդ շրջագայության դեպի Երուսաղեմ, որտեղից նա մենակ վերադառնում է հայրենիք եւ հաստատվում Տաթեւի վանքում, ջանալով այնտեղ արթնացնել արդեն մարած վանական կյանքը: Այնուհետեւ, հայ ժողովրդի անհավատությամբ խավարած սրտերը Քրիստոսի լույս հավատով լուսավորելու համար, քարոզչական արշավներ է կազմակերպում: Այդ նպատակի համար նախ հիմնում է դպրատներ, կարգում ուսուցիչներ, ապա Ներսես Մոկացի վարդապետի հետ իրեն նվիրում է վաղուց երազած քարոզչական գործունեությանը:

Շահ Աբասը, լսելով նրանց գործունեության մասին, հրամայում է ձերբակալել նրանց ու մահապատժի ենթարկել, բայց հետո, Աստծո նախախնամությամբ, որոշում է նրանց տուգանքի ենթարկել 300 թուման գումարով: Ու քանի որ չքավոր վարդապետները այդքանն էլ չէին կարող վճարել, նրանց արտոնվում է հանգանակության համար շրջագայության ելնել: Աստծո ողորմությամբ տուգանքի գումարը հավաքվեց, եւ նույնիսկ դրա մնացորդով ուրիշ արգելափակվածների եւս ազատման հնարավորություն տրվեց:

Միաժամանակ ուրիշ նախանձախնդիր Աստծո ծառաներ եւս ի հայտ եկան, որոնցից առավել արդյունավետ ու հռչակավոր էր Սաղմոսավանքի եպիսկոպոս Սարգիս Պարոնտերը, որը հասկացավ, որ առանց անապատական ճգնակենցաղ կյանքի, անկարող է հոգով զորանալու եւ Աստծո խոսքը անաղարտությամբ ապրելու, առավել եւս քարոզելու, ու նորից մեկնելով Երուսաղեմ, այնտեղ հանդիպում է նույն նպատակի համար եկած տրապիզոնցի այրի քահանա Կիրակոս Պոնտացուն: Ձեռք բերելով կրոնավորական անապատական կյանքի անհրաժեշտ գիտելիքներ, նրանք միասին վերադառնում են Սյունիք: Այնտեղ որոշում են իրենց նպատակները իրագործել Տաթեւի հին անապատում, որը կոչվում էր նաեւ Հարանց անապատ: 1608 թվին, նորոգելով ու բարեկարգելով այն, լծվում են այդ շնորհընկալ գործին, եւ շատ շուտով մեղվի նման այդտեղ են մղվում հոգու ծարավ անձինք, այդ թվում Մովսես Տաթեւացի ու Պողոս Մոկացի վարդապետները, որոնք եւ դարձան Սարգիսի եւ Կիրակոսի ընտիր օգնականները: Բայց սատանան նույնպես իր ծառաները ուներ, որոնց միջոցով աշխատում էր խափանել Աստծո լույսի տարածումը Հայաստանում: Ինչքան էլ ցավալի թվա, բայց դրանց թվում էր այդ ժամանակվա հայոց Մելիքսեդեկ կաթողիկոսը, որը հալածանքի էր ենթարկում Աստծո նվիրյալ վարդապետներին: Այդ նպատակով նա որոշում է Մովսես Տաթեւացուց մեծ գումար շորթել, իբրեւ տուգանք: Նա էլ որպես պատասխան, ուղարկելով իր փիլոնը, գավազանը ու մի խալի, ասելով. «Մենք կլռենք ու կդադարենք խոսելուց, ու եթե այդ անելով մեղք գործած լինենք, դու պիտի պատասխան տաս Աստծո առջեւ»: Կաթողիկոսը ամաչելով, թե վախենալով Աստծո դատաստանից, նորից արտոնում է շարունակել քարոզությունները:

Շուտով Երեւանի կառավարիչ են նշանակում մի բարեմիտ պարսիկ իշխանավորի, որը լսելով Մովսեսի համբավի մասին, կանչում է Երեւան եւ նրան հանձնում Ս. Անանիայի եկեղեցին: Աստծո այդ լքված տունը շենացնելուց հետո, անխոնջ վարդապետը այնտեղ նույնպես կրոնական միաբանություն է հիմնում:

1623 թվին Մելիքսեդեկ կաթողիկոսը, Մովսես վարդապետի ժողովրդականությունը օգտագործելու նպատակով, նրան եպիսկոպոս է ձեռնադրում, որպեսզի միասին կատարեն մյուռոնօրհնությունը:

Շուտով այնքան է տարածվում Մովսես եպիսկոպոսի համբավը, որ ջուղայեցիները պատգամավոր են ուղարկում նրա մոտ եւ հրավիրում Իսպահան, որտեղ նա Աստծո խոսքով ու Սուրբ հոգու զորությամբ քարոզում, հորդորում եւ սրտապնդում էր իր ժողովրդին;

Վերադառնալով Երեւան, Ամիրգունա կուսակալի մոտ, հանդիպում է Շահ Աբասի ներկայացուցչին: Նրանց որպես նվեր է տալիս յոթական սպիտակ մոմեր, որոնք ինքն էր պատրաստել: Նրանք հիանալով մոմի անսովոր ճերմակությամբ, քանզի նույնիսկ պալատում չկար այդպիսի բան, որոշում են դրանք ուղարկել Շահ Աբասին: Նա տեղեկանալով, թե ով է դրանց հեղինակը, հրամայում է Երեւանի կառավարչին, որ Մովսեսին Պարսկաստան ուղարկի մոմի սպիտակեցման գաղտնիքն իր պաշտոնյաներին սովորեցնելու համար:

Նա էլ մեծ գոհունակությամբ ու պատրաստակամությամբ կատարում է շահի հրամանը, ու երբ վերջինս իմանում է, որ իրենց քաղաքում, 1627 թվականի Հիսուսի ծննդյան տոնի պատարագը պետք է կատարի Մովսես եպիսկոպոսը, ցանկություն է հայտնում ներկա գտնվել այդ արարողությանը: Դրանից մեծ տպավորություն ստանալով, նա որոշում է Մովսեսին վարձատրել խոշոր գումարով ու կալվածքով: Բայց Նոր Ջուղայի Խոջա Նազարը միջամտելով, շահից խնդրում է, որ Մովսեսին ավելի նպատակահարմար է նշանակել որպես էջմիածնի տաճարի լուսարար, քանզի նա աշխարհիկ հարստության ու կալվածքների կարիք չունի, եւ անպայման կհրաժարվի նման ընծայաբերությունից:

Շահը ուրախությամբ կատարում է այդ խնդրանքը, եւ 1627 թվականի հունիսի 25-ին, Մովսես եպիսկոպոսը ստանալով իր նոր պաշտոնը, վերադառնում է Երեւան:

Այդ փոփոխությունը կատարվեց ճիշտ ժամանակին, որովհետեւ Ս.Էջմիածինը գտնվում էր չափազանց անմխիթար վիճակում: Եվ նա առաջին հերթին նորոգում է տաճարի գմբեթն ու տանիքը, հետո կառուցում է նոր խուցեր, սեղանատուն, հյուրատուն եւ այլն: Հաստատում է նաեւ վանական կենցաղավարություն, իսկ Հովհանավանքում բացել է տալիս դպրատուն, որտեղ կրթություն են ստանում ապագա վարդապետներն ու քահանաները:

Փաստորեն ինքն անպաշտոն կաթողիկոս էր, քանզի 90-ամյա Մելիքսեդեկ հայրապետը, զառամյալ ու անօգնական վիճակում, գտնվում է Իսպահանում, իսկ նրա պաշտոնակիցները ծանր տուրքերից ձանձրացած, այս ու այն կողմ էին փախել:

1628 թվին մեռնում է Շահ Աբասը: Մեծագին ընծաներով նրա հետնորդի մոտ մտնելով, հայորդի Խոջա Նազարը խնդրում է թեթեւացնել էջմիածնի տուրքերը, եւ մի հրովարտակ տալ, որպեսզի Մովսես եպիսկոպոսը դառնա հայոց կաթողիկոս:

Ու վերջապես կատարվում է ժողովրդի այդ վաղեմի փափագը, եւ նա 1629 թվին օծվում է որպես հայոց կաթողիկոս: Բայց ավաղ, այդ բեղուն ծառայի տարիներն արդեն հաշվված էին, քանզի դրանից ընդամենը երեք ու կես տարի հետո նա վախճանվում է:

Թաղում են նրան Երեւանում 1632 թվականի մայիս ամսին:

Եվ հայոց եկեղեցին սուրբ պատարագի ժամանակ, մեծամեծ սրբերի ու նահատակների հետ մեկտեղ, հիշում է նրա խնկելի անունը եւս:

■

1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

## ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՍՅՈՒՆԻՔ

Երիցավանքի Սբ Ստեփանոս Նախավկա եկեղեցին

# Երիցավանք

**ՀՐԱՆՏ ՍԱՀԱԿՅԱՆ**
Պատմության ուսուցիչ



**Արծվանիկ գյուղի մերձակայքում կան փլված, կիսավեր եւ կանգուն եկեղեցիներ, մատուռներ, կամուրջներ, ձիթհաններ, ջրաղացներ, գերեզմանոցներ, բազմաթիվ այլ հուշարձաններ, ինչպես նաեւ Ագռավի փապան միջնադարյան կառույցի՝ ամրոցի ավերակները, որոնք վկայում են անցյալում տեղի ունեցած շատ դեպքերի, պատմական իրադարձությունների ու կենցաղի մասին:**

Այդ հուշարձաններից է Երիցավանքը, որը չունի Տաթեւի կամ Որոտնավանքի շուքն ու մեծությունը, բայց ավելի հին է: Հուշարձանն անվանվում է նաեւ Կարմիր վանք, որը կառուցվել է լեռան կարմրավուն քարից: Այդ վանքը 6-րդ դարում կառուցել է Երիցակ անունով մի ճգնավոր եւ կոչել Երիցավանք: (Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարանը Երիցավանքի հիմնարկեքը դնում է 5-րդ դարում. էջ 214):

Վանքը գտնվում է Արծվանիկ գյուղից 5կմ հեռավորության վրա, մի բարձրադիր տեղում՝ քարաժայռի պռնկին:

**«Այնտեղի վանքը գեղեցիկ էր, զարմանալի տեսքով. եկեղեցին մի բարձրադիր տեղում էր՝ կառուցված նույն Երիցակի ձեռքով, պատրաստված մեծամեծ քարերով, պարսպից ներս կար շուրջ 40 խցիկ՝ քուրձ հագնող լռակյաց մշտական ճգնավորներով, որոնք, ինչպես մշտավառ ու անշեջ կանթեղներ՝ յուրաքանչյուրն իր հյուղի մեջ, անընդհատ տքնությամբ վառվում էին հոգու շնորհների բոցերով»** (Ս.Օրբելյան «Սյունիքի պատմություն», էջ 111): Ստ.Օրբելյանի «Սյունյաց պատմության» մեջ կարդում ենք, որ Երիցակը, նախ երկար տարիներ ապրել էր Բաղք գավառում, մի քարանձավ տեղում, ապա գնացել էր Գյուտի վանք եւ այնտեղ անտանելի ճգնությամբ անցկացրել շատ օրեր:

Այնուհետեւ սուրբ տեր Գյուտի օժանդակությամբ ու հրամանով գալով այդ տեղը՝ տասներկու կրոնավորով ու հայր Գյուտի պարգեւած բազմաթիվ ունեցվածքներով, կառուցեց եկեղեցին, որը կոչվեց նոր Երուսաղեմ: Բայց բորոտները, որ ժամանակին քշվում էին անբնակ վայրեր, դիմադրում էին Երիցակի շինարարությանը: **«Սուրբ հայրը այդ լսելով՝ եկավ, նրանց համոզեց, որ խաղաղվեն եւ սահմանեց համապատասխան չափով վանքից նրանց կարիքները հոգալու հնարավորություն ընձեռել: Ինքն էլ օրըստօրե մասնակցում էր շինարարությանը եւ կառուցողներին ճաշ էր ուղարկում: Եվ Երիցակն այսպես կառուցելով Աստծո տուն եւ կանգնեցնելով փառաբանության տեղ՝ այն հարմարեցնում է հրեշտակակրոն մարդկանց բնակության համար»** (Ս.Օրբելյան, էջ 111):

Հետագայում հավանաբար հաշվի առնելով Երուսաղեմի արեւադարձային կլիմային չհամապատասխանող սյունյաց ձմեռը, մոտավորապես 10-11-րդ դարերում տաճարի մուտքերը փակվել են դրսի կողմից:

Երիցավանքը հայկական ճարտարապետության սքանչելի գործերից է: Գլխավոր եկեղեցին կոչվում է Նախավկա (քրիստոնեության համար առաջինը նահատակված): Ստեփանոս նախավկային քարկոծեցին (Աստվածաշնչի հանրագիտարան, էջ 214): Մի խոշոր, եզակի հորինվածքով, թաղածածկ երկարավուն դահլիճով, երեք բաց կամարաշարքով շինություն է, դահլիճի երկարությունն է 15մ, լայնությունը 7մ, բարձրությունը՝ 11մ: Տանիքը տեղ-տեղ խարխլված է, հատակը՝ հողից, սուրբ սեղանն ու տանիքը՝ քանդված: Ճարտարապետ Ս.Մնացականյանը գտնում է, որ նման ճարտարապետական շինությունները, ինչպիսին Երիցավանքն է, կառուցվել են 5-7-րդ դարերում, իսկ 9-րդ դարի վերջին նրանք ձեւափոխություն են կրել:

Վանքից ոչ հեռու կա մի խարխլված մատուռ, որին արծվանիկցիները Ջանգակատուն են անվանում, այն գտնվում է կիսավեր վիճակում: Ներսից եւ դրսից քարերը թափված են, չկա արձանագրություն: Վանքի շուրջ մենակյաց միաբանների համար կառուցվել էին գեղեցիկ խցեր, ընդարձակ սեղանատուն, ամբարներ՝ լի ամեն տեսակ պաշարներով, եւ ախոռներ՝ բազմաթիվ անասուններով: Այստեղ բնակվում էին հալածական մարդիկ, որոնց նկատմամբ միաբանությունն առանձին խնամք էր տանում եւ բժշկում էր նրանց:

Երիցավանքից մոտ 50մ հեռավորության վրա կան տապանաքարեր: Տապանաքարերից մեկի վրա արված արձանագրությունը դժվար ընթեռնելի է, իսկ քանդակները հողմնահարված են: Հավանաբար տապանաքարը նվիրված է Դավիթ Բեկի նահատակ զինվորներից մեկի հիշատակին: Ստ.Օրբելյանը նկարագրում է, թե ինչպես Մուշե կաթողիկոսը «հեծած ոսկեզօծ թամբով սպիտակ ջորի՝ եպիսկոպոսներով, բազմախումբ սպասավորներով, առջեւում բռնած աստվածընկալ ոսկեփայլ, արեւակերպ ցոլքերով խաչը, սաղմոսներով ու քառաձայն երգերով Դվին մայրաքաղաքից հասավ Երիցավանք, որպեսզի Երիցավանքի սուրբ վանահայր, մեծ տնտեսվար, խարազնազգեստ ու խստակրոն ճգնավոր Երիցակին համոզեն, որ ընդունի Սյունիքի մետրոպոլիտի աթոռը: Այնտեղ հավաքված պատվիրակությունները չեն կարողանում համոզել Երիցակին: Այնուհետեւ կաթողիկոսն ինքն է գնում Երիցակի մոտ եւ ասում. «Ինչու ես այդպես համառած մնում, քո մեջ դեւ կա, Աստված թող սաստի ու հալածի չարին»:

Այն ժամանակ սրբի խորքից ծուխ բարձրացավ որպես փոթորիկ եւ շենքից վերացավ: Ապա եկան սպիտակ աղավնիների երամներ, իջան սրահի տանիքին: Եվ աղավնիներից մեկը սլանալով եկավ, իջավ կաթողիկոսի վրա, նրա վրայից էլ բարձրանալով՝ իջավ Երիցակի վրա ու շրջում էր նրա խոշոր կնգուղի վրա, բարակ ձայնով, մարդու պես ասում. «Արժանի՛ է, արժանի՛ է»: Սուրբ հայրն այս տեսնելով էլ չհամարձակվեց հակաճառել, այլ ծնկի գալով կաթողիկոսի առջեւ՝ արտասվաթոր աղերսանքով ասաց. «Թող լինի քո՛ տիրոջդ կամքը եւ ոչ թե իմը»:

Ապա կաթողիկոսը, նրա ձեռքից բռնած տանում է եկեղեցի եւ հանելով բեմի վրա՝ օծում Սյունիքի մետրոպոլիտ ու բերում, նստեցնում է աթոռին: Իսկ ինքը մեծարանքներով ու անսահման շքեղությամբ հրաժեշտ է տալիս բոլորին, գնում հայրապետական աթոռը, Դվին, կենտրոնական քաղաք՝ բազում փառք ու շնորհակալություն հղելով ամենատիրոջը: Երանելի Երիցակն էլ մետրոպոլիտի աթոռին մնալով մեկ տարի, փոխադրվում է Վերին Երուսաղեմ, որտեղ սրբերի բազմությունն է, որոնց քաղաքապետը բոլորի աստված Հիսուս Քրիստոսն է (Ստ.Օրբելյան «Սյունիքի պատմություն», էջ 111-112):

1102թ. Վահանավանքի ուխտի առաջնորդ է եղել Երիցավանքի հայր Գրիգորը (Գր.Գրիգորյան «Վահանավանք», էջ 66): Նաեւ ավանդաբար զրույց է պատմվում Երիցակի մասին, թե գալով Երուսաղեմ սուրբ քաղաք եւ այնտեղ մնալով մինչեւ սուրբ հայտնության մեծ ճրագալույսի օրը, Բեթղեհեմում գտնվող սուրբ քարայրի դռանը մտաբերում է իր սուրբ մենաստանն ու կրոնավոր եղբայրներին, սաստիկ կարոտից դառնապես լալիս է եւ ցանկանում է նույն ժամին լինել իր կրոնակից եղբայրների մոտ, մի կախարդ կին դա լսելով, թերեւս սուրբ հոգու ազդմամբ, հարցնում է այդ հորն ու ասում. «Ինձ ասա՝ ինչի՞ համար ես դառնագին արտասվում»: Եվ նա հայտնում է պատճառը: Ապա կինը խնդրում է նրան. «Ո՛վ Աստծու սուրբ, Քրիստոսից ներում խնդրիր իմ անչափելի հանցանքների համար, եւ հենց այդ պահին քեզ ցույց կտամ քո փափագածը»: Հայրն այս լսում է եւ, Աստծու գթառատությունից համարձակություն առած ու կարոտից հարկադրված է կատարել նրա խնդրանքը: Եվ կինը մի ինչ-որ անոթ է պատրաստում ջրով լի, իր կախարդանքով այն հարմարեցնում է ու սրբին նստեցնում վրան, որը եւ իսկույն հայտնվում է Երիցավանքում (Ստ.Օրբելյան, «Սյունիքի պատմություն», էջ 112):

Խոսում են այն մասին, որ Դավիթ Բեկի հայտնվելուց մի քանի տարի առաջ վանքը, որ ավելի քան տասնմեկ դար գոյություն ուներ, բոլորովին քայքայվեց, զրկվեց իր վայելչությունից: Հետո երիցս անիծյալ Ֆրանգյուլի աջակցությամբ Ֆաթալի խանն իր համար ամառանոցի շենք կառուցեց հենց վանքի մոտ, մի քանի քայլ հեռավորության վրա: Անողորմ թուրքը չխնայեց մինչեւ անգամ եպիսկոպոսների շիրիմները, աբեղաների գերեզմանները, նրանց տապանաքարերը գործածեց բաղնիքներ ու ախոռներ կառուցելու համար:

Ավանդույթը պատմում է, որ արյունարբու Ֆաթալի խանն այստեղից մեկնելու առաջ որոշում է ավերել վանքը: Շղթաներով գոմեշներ է կապկպում սյուներից ու փորձում փլեցնել այն, սակայն շղթաները կտրվում են, իսկ գոմեշները ծորն են գլորվում:

Հիանալի տեղանքը, որտեղ կառուցված է վանքը, գեղեցիկ է, սակայն շինության ներկա վիճակը վկայում է, թե ինչպիսի հողմեր են անցել նրա գլխով ու ավերիչ հետքեր թողել դարերի ընթացքում:

Այժմ Երիցավանքի թաղակապ ծածկը կիսով չափ փլված է, կամարները կանգուն են, երեսապատման սրբատաշ քարերը մնացել են փլվածքի տակ: Կիսավեր վիճակում են նաեւ բակում առանձին կանգնած մատուռը եւ շուրջը եղած մյուս շենքերը:

Գյուղի շրջակայքի որոշ հատվածներում կան սրբավայրեր, որոնց խաչքարերը 6-րդ դարի դրոշմն են կրում: Ժողովրդական ավանդույթները, պատմիչի վկայությունը հաստատում են, որ Երիցավանքը (Արծվանիկ բնակատեղին) գոյություն ունի 6-րդ դարից: Հետագայում Երիցվանիկ անունը փոփոխվելով դարձել է Արծվանիկ: Երիցավանքի տարածքը բնակեցված է եղել նախաքրիստոնեական ժամանակներում, որի մասին վկայում են հնագիտական գտածոները: ՀՍՀ-ում տեղադրված է, որ Երիցավանքից (Արծվանիկ) հնագիտական իրեր կան մոսկվյան թանգարաններում: Օրինակ՝ հնագույն ամրոցի ավերակներում գտել են IV-Ի. (մ.թ.ա.) ձայնարկու գուսանների բրոնզե արձանիկներ, որ այժմ գտնվում են Մոսկվայում՝ պատմության պետական թանգարանում (Հայկական սովետական հանրագիտարան, հատ. 2-րդ, Երեւան, 1976թ., էջ 72):

Իսկ թե ինչու է այս հինավուրց հուշարձանը դուրս մնացել պետական հոգածությունից՝ անհասկանալի է:

■

1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ԳԻՏԱԺՈՂՈՎ

# Վահանավանքի հիմնադրման 1100-ամյակը

ԱՂԱՎՆԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

**2011թ. դեկտեմբերի 8-9-ին ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի դահլիճում տեղի ունեցավ գիտաժողով՝ նվիրված Կապանի գլխավոր սրբավայրի՝ Վահանավանքի հիմնադրման 1100-ամյակին:**

Գիտաժողովը կազմակերպել էր ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ը: Բացման խոսքով հանդես եկավ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի տնօրեն Վլադիմիր Պողոսյանը: Նա կարեւորեց Վահանավանքի պատմամշակութային եւ ճարտարապետական արժեքը, ինչպես նաեւ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գրիգոր Գրիգորյանի ավանդը Վահանավանքի վերականգնման գործում: Գիտաժողովը վարեց նույն ՊՈԱԿ-ի փոխտնօրեն Աշոտ Փիլիպոսյանը: **«Մշակութային ժառանգությունն այն կարեւոր բաղադրիչն է, որով տվյալ ժողովուրդը գոյություն ունի: Եվ մշակութային ամեն մի արժեքի պահպանումը, ուսումնասիրումը, ճանաչումը եւ հանրահռչակումն այն կարեւորագույն ավանդներից են, որ պետք է թողնենք մեր սերունդներին: Այդ առումով Վահանավանքը Սյունյաց աշխարհի նշանավոր ճարտարապետական կոթողներից մեկն է, եւ նրա հիմնադրման 1100-ամյակը ցույց է տալիս այն տեւական ժամանակը, որ գործել է վանքը, որտեղ ապրել են ժամանակի նշանավոր հոգեւորականներ, մտավորականներ»** - ասաց Աշոտ Փիլիպոսյանը: Ելույթով հանդես եկան նաեւ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի տնօրեն Վլադիմիր Պողոսյանը, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գրիգոր Գրիգորյանը, ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների թեկնածու Պավել Ավետիսյանը: Գիտաժողովի կազմակերպիչների կողմից նախօրոք հրատարակվել էր «Վահանավանքի վանական համալիրը» վերտառությամբ նկարազարդ, ճանաչողական-զբոսաշրջային ուղեցույց: Չնայած որ գիտաժողովը նվիրված էր Վահանավանքի հիմնադրման 1100-ամյակին, զեկուցումները մեծամասամբ վերաբերում էին ամբողջ Սյունիքին: Առաջին նիստի ժամանակ զեկուցումներ կարդացին պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գրիգոր Գրիգորյանը՝ (ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ) «Հայկական վիմական արձանագրությունների պատմագիտական արժեքը», պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Աշոտ Մանուչարյանը՝ «Վահանավանքի վիմագրերը հայ եկեղեցու պատմության սկզբնաղբյուրներ», պատմական գիտությունների թեկնածու, ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի տնօրեն Պավել Ավետիսյանը՝ «Գոդեձորի պեղումների հիմնական աղբյուրները», ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի աշխատակից Բորիս Գասպարյանը՝ «Աղիտու 3-ի պեղումները», պատմական գիտությունների թեկնածու Մկրտիչ Զարդարյանը՝ «Կենտրոնական Սյունիքը մ.թ.ա. II-I հազարամյակներում (Արփիի հնագիտական հետազոտությունների արդյունքներից)», պատմական գիտությունների թեկնածու, Հայաստանի պատմության թանգարանի աշխատակից Արմինե Զոհրաբյանը՝ «Սիսիանի արաբական դրամների գանձը»: Գիտաժողովի երկրորդ օրը զեկուցումներով հանդես եկան պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող Գեւորգ Ստեփանյանը՝ «Զանգեզուրի առաջին գավառապետի հարցի շուրջ», Սարդարապատի հայոց ազգագրության եւ ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի աշխատակից Սվետլանա Պողոսյանը՝ «Ուտեստի առօրյա տոնածիսական համալիրները Սյունիքում. ընդհանրություններ եւ առանձնահատկություններ», Խորեն Գրիգորյանը՝ «Ազգագրական ակնարկներ Շաղաթից», պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն Աշոտ Փիլիպոսյանը՝ «Սյունիքից հայտնաբերված կոշկաձեւ անոթներն ու դրանց հիմներձավորարեւելյան զուգահեռները»: Նախօրոք հայտագրված զեկուցումներից մի քանիսը չընթերցվեցին, քանի որ զեկուցողներն ինչ-ինչ պատճառներով չէին ներկայացել: Այդ թվում՝ Գորիսի պետական համալսարանի դասախոսներ Մարտին Ջիլֆուղարյանը (թեմա՝ «Տաթեւի համալսարանը»), Սերգեյ Հախվերդյանը (թեմա՝ «Սիրանես վարդապետը Հալիձոր գյուղից»), Գայանե Շաբունցը (թեմա՝ «Դրվագներ Սյունյաց ազնվազարմ տիկնանց նվիրատվական եւ շինարարական գործունեությունից»), ինչպես նաեւ՝ Դավիթ Պողոսյանը («Հին Խնձորեսկի թանգարանացման շուրջ»), Արմենուհի Ստեփանյանը՝ «Հյուսկեն զարդանախշ իրերը հայոց ավանդական կենցաղում»: Միջոցառման ավարտին մասնակիցները շնորհավորեցին միմյանց եւ կազմակերպիչներին՝ գիտաժողովը հավուր պատշաճի կազմակերպելու եւ անցկացնելու համար: Ըստ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի տնօրեն Պավել Ավետիսյանի՝ Վահանավանքի 1100-ամյակին նվիրված գիտաժողովն անցավ մտերմիկ մթնոլորտում, ներկայացվեցին բավականին լուրջ աշխատանքներ, որոնք արժանի են ուշադրության:

Ահա այսպիսի գնահատական տրվեց գիտաժողովին, չնայած այն բանին, որ երկրորդ նիստի ժամանակ՝ դեկտեմբերի 9-ին, դահլիճում մնացած ունկնդիրների թիվը չէր գերազանցում 15-ը:

■

# Հայկական վիմական արձանագրությունների պատմագիտական արժեքը

ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

**Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ**

Դեռեւս վաղնջական ժամանակներից սովորություն է եղել իմաստավորված նշաններ փորագրել ժայռերին, ժայռաբեկորներին կամ մելանով գրել պապիրուսների, ինչպես նաեւ այլազան իրերի ու առարկաների վրա: Դրանց մասնագիտական ուսումնասիրությամբ զբաղվում են աղբյուրագետները, վիմագրագետները, պապիրուսագետները եւ գիտության տարբեր բնագավառների նեղ մասնագետները:

Հնագույն վիմական բնագրեր կարելի է համարել ժայռապատկերները՝ հայոց քարակերտ հանրագիտարանները, որոնցով այնքան հարուստ են հատկապես Գեղարքունիքի եւ Սյունիքի (մասնավորապես՝ Սիսիանի, լեռնազանգվածները: Դրանք թվագրվում են մ.թ.ա. 7-1 հազարամյակներով: Բազմաթիվ ժայռապատկերներ խնամքով ընդօրինակվել, գրչագրվել եւ ակադեմիական հրատարակությամբ տպագրվել են պրոֆ. Հ.Ա.Մարտիրոսյանի, Հ.Ռ.Իսրայելյանի, Գր.Հ.Կարախանյանի եւ Պ.Գ.Սաֆյանի եւ այլոց ջանքերով: Հայտնաբերվել են ավելի քան 300 մեհենագրեր եւ խմբաքանդակներ, որոնց զգալի մասը հետագայում իրենց արտացոլումն են գտել նաեւ միջնադարյան ձեռագիր մատյաններում: Թերեւս նաեւ ժայռապատկերները նկատի ուներ ֆրանսիացի գիտնական, մեծանուն հայագետ Անտուան Սեն-Մարտենը, երբ գրում էր. «Նրանց (հայերի) պատմությունը քարերի եւ իրենց երկրի ժայռերի վրա գրված արձանագրություն է»:

Մ.թ.ա. 9-6-րդ դարերում Հայաստանում սկսեցին կիրառվել սեպագրերը կամ բեւեռագրերը՝ իրենց գրային տարբեր համակարգերով (միջագետքյան սեպագիր՝ ասուրերեն, տեղական ոճի սեպագիր՝ բիայնական՝ բուն հայկական, ինչպես նաեւ մեհենագրերն ու հիերոգլիֆները): Դրանք շարունակում են ուսումնասիրվել մասնագետ այրերի կողմից նաեւ մեր օրերում:

Մ.թ.ա. 2-րդ դարից իբրեւ պաշտոնական գրագրության լեզու Հայաստանում սկսեց կիրառվել արամեերենը կամ արամեական լեզուն, որը ծագումով պատկանում էր լեզուների սեմական ընտանիքին: (Մեր հանրապետությունում արամեերենի մի բարբառով խոսում են ասորիները): Արամեերեն արձանագրություններ են հայտնաբերվել հատկապես Սեւանա լիճը եզերող բնակավայրերում եւ Սիսիան-Գորիս մայրուղու ավազուտներում: Զանգեզուրյան սահմանաքարի արամեերեն արձանագրությունն, ի տարբերություն մյուսների, համեմատաբար ծավալուն է եւ ունի 9 տող, ուր հիշատակվում է Արտաշես արքայի անունից շնորհվող տիրույթի մասին: Արամեական մյուս կոթողները հիմնականում սապատաձեւ քարեր են՝ դարձյալ նվիրատվական հակիրճ բովանդակությամբ: Այս արձանագրությունների մասին՝ կապված Արտաշես արքայի անվան հետ, հատուկ նշում է պատմահայր Մովսես Խորենացին:

Մաշտոցյան հայերեն գրերով վիմագրությունն առաջացել է 5-րդ դարում՝ գրերի գյուտից անմիջապես հետո: Պատմագիր Եղիշեն իր «Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին» կոթողային երկում հատուկ նշում է, որ Ավարայրի ճակատամարտում զոհված հայորդիների ճյունների վրա հետագայում մահարձաններ էին կանգնեցվում, որոնց վրա փորագրում էին պատերազմում նահատակվածների անունները. «Բազում արձանք էին կանգնեալ յանուն նոցա եւ անուանք իւրաքանչիւր նշանակեալ ի նոսա»: Ավանդություն է պահպանվել այն մասին, թե ինչպես Աշոտ Ողորմած թագավորի վաղամեռիկ դուստր Հռիփսիմեն մահվանից առաջ հորը թախանձում է իր մասին հիշատակագրություն փորագրել քարի վրա «քանզի թուղթքն եղծանիցին ի հրոյ կամ ի ջրոյ, սակայն քարեայ արձանն անջինջ մնասցէ յաւիտեան»: Հայր Ղեւոնդ Ալիշանն այն համոզված կարծիքն է հայտնել, որ հայոց վիմագրերը «անխաբ հայելիք են հանճարոյ եւ ոգւոյ նախնեաց մերոց»: Նա առաջարկում է անհապաղ հավաքել եւ գիտական պատշաճ մակարդակով հրատարակել այդ բնագրերը, որովհետեւ վիմագրերի մեծագույն մասը գտնվում է բաց երկնքի տակ՝ ենթակա տարերքի կործանարար ազդեցությանը, եւ տարիների ընթացքում քայքայվում, եղծվում եւ իսպառ ոչնչանում են՝ գիտության համար դառնալով ոչ պիտանի:

Հայկական վիմագրերի՝ իբրեւ պատմական կարեւոր սկզբնաղբյուրների, կարեւորությունը հատուկ շեշտել են, ինչպես նշեցինք, պատմահայր Մովսես Խորենացին, Եղիշեն, Հովհան Մամիկոնյանը, ապա նաեւ Ստեփանոս Օրբելյանն |13-րդ դար| ու Զաքարիա Քանաքեռցին (17-րդ դար):

Միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հիմնահարցերով զբաղվող մասնագետները (Ն.Մառ, Հ.Օրբելի, Հ.Մանանդյան եւ ուրիշներ) իրավացիորեն գտնում են, որ առանց վիմագրերի հնարավոր չէ հստակ պատկերացում կազմել Հայաստանի ներքին կյանքի, մասնավորապես սոցիալական ոլորտի՝ հարկերի ու տուրքերի, ապահարկության, եկեղեցական տասանորդի, հավատացյալների հոգու փրկության համար կատարվող պատարագների ու նրանց գների մասին, աշխատավոր զանգվածների արտատնտեսական աշխատանքների բնույթի, սեփականության տարբեր ձեւերի ու եղանակների վերաբերյալ:

Վիմական արձանագրություններն իրենց բովանդակությամբ լինում են՝

*Ա. Հիշատակագրային,*
*Բ. Շինարարական,*
*Գ. Նվիրատվական,*
*Դ. Իրավա-կանոնական,*
*Ե. Կրոնա-բարոյախոսական,*
*Զ. Խառն:*

Հայկական գաղթօջախների արձանագրություններում, հատկապես հիշատակագրային բնագրերում (Լվովում, Կամենեց-Պոդոլսկում եւ այլուր) հետաքրքրություն են ներկայացնում հայկական տոհմանշանները, որոնցում երբեմն հանդիպում են նաեւ մեսրոպյան տառեր (տե՛ս Գր.Գրիգորյան, Հայկական վիմագրություն, Երեւան, 2000, էջ 70-71):

Հայկական վիմագրերում կան բազմաթիվ գաղտնագրեր (թվագիր, գումարագիր, սյունակետագիր եւ այլն), առկա են լեզվաբանական իրակություններ («աւ» երկբարբառը օ-ի վերածվելու կանոնի անտեսումը-զօակ-զաւակ, գօաթ-գաւաթ, օետարան-աւետարան), բառերի հապավման տարբեր եղանակներ ու ձեւեր, որոնցում առավել ընդհանրական կիրառություն ունեն տերունական բառերը՝ ԱԾ-Աստուած, ՏՐ-Տէր, ՅՍ, ՔՍ-Յիսուս, Քրիստոս, ՍԲ-սուրբ եւ այլն, որոնք բառաբարդեցման կամ բառաթեքման դեպքերում մնում են նույն կերպ (օրինակ՝ Աստուածատուր-Աստատուր-Աստատուր-Ծատուր): Հապավված կամ համառոտագրված բառ-եզրույթների վրա, իբրեւ կանոն, դրվում է հորիզոնական գծիկ, որն ընդունված է կոչել պատիվ, դուր կամ քաշ: Հետաքրքրություն են ներկայացնում անձնանունների, տոհմանունների՝ ըստ երկրի ու բնակավայրի նրանց կրած փոփոխությունները, օտարամուտ եզրերի առկայության ձեւերն ու եղանակները: Նկատելի է, որ եթե մինչեւ 17-րդ դարը, այսինքն՝ մինչեւ զանգվածային կաթոլիկացումը, հայերը կրում էին իրենց ազգին բնորոշ անուն-ազգանուններ. ապա այդ ժամանակից սկսած, աստիճանաբար ենթարկվելով ուծացան, սկսեցին իրենց ազգանուններին կցել ԿՈ |ՔՈ| կամ ՍԿԻ եւ կամ ՈՎԻՉ վերջավորությունները (Խաչքո, Կրեսքո, Չայկովսկի, Ժուլինսկի, Թորոսովիչ, Թումանովիչ, Վարդերեսովիչ, Մանուկեիչ եւ այլն): Յազլովեցում ապրող Ավագյան գերդաստանի ժառանգները սկսեցին կոչվել Ավագովիչ, ապա նաեւ Ավագովսկի, իսկ կոմսությունն ընդունելուց հետո՝ Վակովսկի: Շատերը, հատկապես մտավորականները, վանական միաբանությունների անդամները, քահանաները (քսյոնզները), մեծահարուստ ազնվականներն սկսեցին գրվել հայերենին մինչ

**Շարունակությունը՝ էջ 88**



**1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ**

**ԳԻՏԱԺՈՂՈՎ**

# Հայկական վիմական արձանագրությունների պատմագիտական արժեքը

**Սկիզբը՝ էջ 87**

այդ խորթ Սադոկ Բարոնչ, Կայտան Կայտանովիչ, Խրիստոֆոր Բեռնատովիչ, Ռոշքա, Ռոմաշքան, Մարմարոշ եւ այլն: Լեհական բանակի հայազգի գեներալ-լեյտենանտ Յան-Դավիդի ժառանգները հետագայում գրվեցին Յան դը Վիտտե, Դը Վիտտե, Վիտտե, Վիտ: Կարծում ենք, այս տոհմից էր ռուսական կայսրության սոցիալ-տնտեսական վերափոխումների մեծանուն ռեֆորմատոր, կոմս Սերգեյ Յուլեւիչ Վիտտեն, որի գործունեությունը շատ բարձր է գնահատել ականավոր պատմաբան, ակադեմիկոս Եվգենի Վիկտորովիչ Տառլեն: Վիմական արձանագրությունների տվյալներով՝ մոլդովահայերից ոմանք սկսեցին գրվել Կահնա, Բալիոզ, Նեգրուշ եւ այլ ազգանուններով, իսկ ռուսական միջավայրում Աստվածատուրը դառնում է Բոգդան (Արեւելյան Եվրոպայի հայկական վիմագրերում՝ Թեոդոր), Մկրտիչը՝ Նիկիտա, Կարապետը՝ Կարպ, Հովհաննեսը՝ Իվան, Լուսեղենը՝ Լուկիան եւ այլն: Զորավար Ա.Սուվորովի զինակից հայազգի գեներալ Եկիմ (Ակիմ) Վասիլեւիչ Խաստատովի՝ Ս.Պետերբուրգում գտնվող հուշակոթողի հայերեն վիմագրում գրված է «Յովակիմ Բարսեղի Խաստատյան»: Գեներալ Խաստատյանի հոր՝ Վասիլի անունը հիմք հանդիսացավ, որ 1990թ. մենք հրավիրվեցինք Չեչնիա՝ Շելկովսկայա (Շելկոզավոդսկայա) ստանիցայի մոտակայքում գտնվող Սարապանովկա («Զեմնոյ Ռայ») կոչվող տարածքի համար չեչենների եւ ռուսների |կազակների| միջեւ ծագած ընդհարումը կանխելու համար: Երկու կողմերն էլ իրենց երախտագիտությունը հայտնեցին Երեւանից եկած հայ մասնագետին: Փակագծերում նշենք, որ գեներալ Հովակիմ Խաստատյանի կինը՝ Կատերինա Ստոլիպինան, բանաստեղծ Լերմոնտովի տատիկի քույրն էր: Շարունակենք, առանց հայերեն ուղեկցող նյութերի շատ դժվար է կռահել, որ Ռուսաստանի խոշոր կապիտալի ներկայացուցիչներ Իվան եւ Վասիլի Մակարովները, Դավիդ Գրիգորեւը, Բոգդան Բոգդանովը, Սերգեյ Իվանովը, Մաքսիմ Ֆիլիպովը, Պյոտր Իվանովն ազգությամբ եղել են հայեր: Ղրիմահայ արձանագրություններում թուրք-թաթարական տիրապետության ներքո գտնված ժամանակ մի շարք անձնանուններում առավելապես 17-րդ դարից յան վերջածանցը երբեմն փոխվում է օղլուի՝ Խալաճեան-Խալաճօղլու, Արաբեան-Արաբօղլու, ճերմակյան՝ ճերմակ օղլու եւ այլն: Ղրիմի թերակղզում ապրող հայ ազգաբնակչությունը զանգվածորեն ընդունում է Խըտըրշահ, Խուտլուբեյ, Սովինչպեկ եւ այլ՝ արական, Անապիքե, Խանիպիքե, Խանմելիք, Պիաթա եւ այլ՝ իգական անձնանունները:

Հայոց վիմագրերում անձնանունների խայտաբղետ պատկեր ենք տեսնում հատկապես օտարազգի տիրապետողների՝ պարսիկների, արաբների, սելջուկ թուրքերի եւ մոնղոլների ներխուժումների շրջանում: Նույնը կրկնվում է նաեւ Սովետական Միության տարիներին՝ Ռադիկ, Սլավիկ, Մելսիկ, Լենդրոշ (Լենդրուշ) եւ այլն:

Իրենց կերտման առումով վիմագրերը լինում են՝ փորագիր, ուռուցիկ կամ ելնդավոր եւ մելանագիր:

Հայաստանի Հանրապետության ներկա տարածքում հայտնաբերվել են հայերենից բացի՝ հունարեն, լատիներեն, արաբերեն, արաբատառ պարսկերեն, մասամբ նաեւ վրացերեն, իսկ հայկական գաղթավայրերում՝ (օրինակ՝ Լվովում) նաեւ հայատառ ղփչաղերեն արձանագրություններ:

14-15-րդ դարերում հանդես են գալիս վիմագիր բանաստեղծությունները, որոնցով հարուստ են հատկապես հայ գաղթավայրերի վիմական բնագրերը: Ահա Ղրիմի Հրեշտակապետաց եկեղեցու հանգավոր վիմագրերից մեկը.

*ՍԱ Է ՏԱՃԱՐ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ*
*ՇԻՆԵԱԼ ՅԱՆՈՒՆ ԶՕՐԱՅ ՎԵՐԻՆ*
*ԳԱԲՐԻԷԼԻՆ ԵՒ ՄԻՔԱՅԵԼԻՆ*
*ՄՊԱՍՕՈՐՔ ԱՍՏՈՒԱԾ ԲԱՆԻՆ*
*ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱՄԲՔ ԱՍՏՈՒԱԾԱՏՐԻՆ*
*ԿՈՂԱԿՅԻՆ ԱՂՈՒԹ ԽԱԹՆԻՆ*
*ԵՒ ԾՆՈՂԱԾ ՍԱՏԱԹԻՆ» ՄԱՐԵՄ ԽԱԹՆԻՆ*
*ԵՒ ԶՕԱԿԱՅՆ ԽԱՉԱՏՐԻՆ ՄԻՄԷՈՆԻՆ*
*ՅՈՀԱՆԻՄԻՆ, ՄԱՐԻ ՄԵԼԻՔԻՆ. :ՊԾԷ: /1408/:.*

**(Դիվան հայ վիմագրության, պրակ 7, Երեւան, 1996, էջ 25):**

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում վիմագրերի թվագրման եղանակները: Ի դեպ, այն բնագրերը, որոնցում չկան թվագրություն ցույց տվող տառեր, փորագրության ժամանակը որոշվում է տառանիշերի պալեոգրաֆիկ-հնագրական առանձնահատկությունների, ինչպես նաեւ պատմական դեմքերի եւ իրադարձությունների վկայությունների առկայության միջոցով:

Մեր վիմագրական մատենաշարի հատորներում բազմաթիվ նյութեր ունենք ամբարած հայոց թագավորների, ազնվական-իշխանական տների, պատերազմների ժամանակ զոհված հայորդիների, գերեվարվածներին փրկագնով ազատելու նպատակով հանգանակություններ կազմակերպելու (Վայոց ձոր), բնական աղետների (երկրաշարժեր, համաճարակ հիվանդություններ եւ այլն) մասին:

Այժմ ի մոտո հակիրճ ծանոթանանք, թե ինչ վիմագրեր են հայտնաբերվել Վահանավանքի 40-ամյա պեղումների ընթացքում: Նախապես հակիրճ նշենք, որ ավելի քան 70 նորահայտ վիմագրերից առավել կարեւոր արժեք են ներկայացնում արքունական դամբարանատան եւ վանահայրերի հիշատակագրությունները: Վահանավանքում են իրենց հանգիստը գտել

1. Սմբատ Բ, որդի Աշոտո (Աշոտկայ), Սյունիքի այս հզոր արքան գահակալել է Վասակ թագավորից անմիջապես հետո: Սա այն Վասակն է, որի դուստր հայոց թագուհի Կատրանիդեն (Կատրամիդեն) ավարտին հասցրեց Անիի մայր տաճարի կառուցումը: Սմբատ Բ-ն գահակալել է Սյունիքում 1040-1051 թվականներին: 1040թ. Դվինի Աբուլ Սուար ամիրան հարձակվեց Հյուսիսային Հայաստանի՝ այսինքն՝ Լոռու Կյուրիկյան թագավորության վրա՝ ցանկանալով իրեն ենթարկել Դավիթ Անհողին թագավորին: Սմբատ Բ Սյունյաց թագավորը Հովհաննես-Սմբատ Բագրատունի թագավորի միջնորդությամբ 2000-անոց այրուձիով մասնակցեց Աբուլ Սուարի զորքերի ջախջախմանը եւ արտաքսմանը Լոռուց: Կարծում ենք հենց այստեղ էլ Սմբատն ամուսնանում է Դավիթ Անհողինի դուստր, Սյունյաց ապագա թագուհի Հրանույշի հետ, որը նույնպես թաղված է Վահանավանքի մեծ տաճարի սյունասրահում՝ Սմբատի կողքին: Նրա տապանաքարին փորագրված է ՀՐԱՆՈՇ: Ստեփանոս Օրբելյանը հպարտությամբ է ներկայացնում Սմբատ Բ Սյունյաց թագավորին: Նա, գրում է պատմիչը, ահարկու էր «շրջակա ազգերի (իմա սելջուկ-թուրքերի) նկատմամբ (Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն տանն Սիսական, Մոսկվա, 1861,էջ 233): Սմբատ Բ-ի կողքին է հանգչում նրա կրտսեր եղբայր Գրիգոր Ա թագավորը, որն ամուսնացած էր Սահակ Սեւադա իշխանազունի դուստր Շահանդուխտի հետ: Ըստ տապանագրի՝ Գրիգոր Ա-ն մահացել է հայոց ՇԻԱ (1072) թվականին: Ցավոք, ոչ Սմբատը եւ ոչ էլ Գրիգորը զավակներ չեն ունեցել: Սյունիքի իշխանների որոշմամբ թագավոր է հռչակվում Սահակ Սեւադա Կրտսերի որդի Սենեքերիմ «հանճարեղ եւ իմաստուն» պատանին (Ստ.Օրբելյան, նույն տեղում): Նկատենք, որ եթե Սյունիքի նախորդ թագավորները երկիրը պաշպանում էին հատկապես զորական ուժով, ապա իրավիճակի թելադրմամբ Սենեքերիմը դիմում է նաեւ դիվանագիտական քայլերի: Նա մտերիմ հարաբերություններ է հաստատում սուլթան Մելիք Շահի հետ եւ կարողանում է ոչնչացնել իր բոլոր համեմատաբար թույլ, սակայն Սյունիքի համար առավել վտանգավոր մերձակա սուլթանիկներին: Սենեքերիմը ճկուն դիվանագիտության շնորհիվ ընդարձակում է Սյունյաց թագավորության սահմանները: Մելիք Շահի մահվանից հետո՝ 1092թ. Սենեքերիմն անհավասար պայքար է մղում սելջուկ-թուրքական միացյալ զորքերի դեմ: Բաղաբերդում ճակատամարտին պատրաստվող Սյունյաց արքան իզուր է լսում Անիի Գրիգոր Ապիրատյան իշխանին՝ իբրեւ թե թուրք ամիրան ցանկանում է խաղաղ բանակցություններ վարել Սյունյաց տիրակալի հետ, սակայն առաջին իսկ հանդիպման ժամանակ Սյունյաց արքան նենգաբար սպանվում է: Նրա դիակը հարազատները տեղափոխում են Վահանավանք եւ հողին են հանձնում «ընդ այլ թագաւորսն»: «Ահա այսպես շիջաւ ճրագն քրիստոնէից, որ կայր մնացեալ յամուրսն Բաղաց», - գրում է Սյունյաց պատմիչը (Ստ.Օրբելյան, էջ 235): Շրջակա ավարառու ցեղախմբերը խանդով էին նայում օրավուր հզորացած Բաղաց թագավորությանը, «զոր խոչ մեծ համարէին ինքեանց» (որքան արդիական են հնչում այս բառերը,( /Ստ. Օրբելյան, էջ 234):

Սենեքերիմ արքայի մահվանից հետո գահակալում է նրա ավագ որդի Գրիգորը /Գրիգոր Բ Սյունյաց քագավոր (+1166), «Նվաղ եւ ընդ աղօտ թագաւորեալ» (Նույն տեղում):

Վահանավանքում շինարարական ծավալուն աշխատանքներ է կատարել Սյունյաց թագուհի Շահանդուխտ Բ-ն իր քույր Կատայի հետ միասին, որին Ստ.Օրբելյանը կոչում է «սրբասնունդ օրիորդ», կառուցել են Վահանավանքի երկհարկանի դամբարան-եկեղեցին, որն այսօր վերականգնվել է մեծանուն ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի որդի Յուլի Թամանյանի ջանքերով: Շահանդուխտի մայրը՝ Սոփի թագուհին նույնպես թաղված է Վահանավանքի գլխավոր եկեղեցու սյունասրահում: Նրա տապանաքարին կարդում ենք՝

*ՍՈՓԻ ԿՂՎԱՆԻՑ ԹԱ/*
*ԳՈՒՀԻ, ԶՈՔԱՆՉ ԳՐԻԳՈՐ/*
*ԹԱԳԱՒՈՐԻ՝ ՈՐԴՈ ԱՇՈՏԿԱ, ՄԱՅՐ ՇԱ/*
*ՀԱՆԴԽՏՈ. ԹՎ/*
*ՇԼ /1081/*

1046թ. Վահանավանքում կատարվում են մեծ ծավալի վերականգնման աշխատանքներ: Կազմակերպիչը եղել է Գրիգոր Ա Սյունյաց ապագա թագակիրը, որն այդ ժամանակ զբաղեցնում էր Սյունյաց իշխանաց իշխանի պաշտոնը: Սյունասրահի հարավային պատին՝ արտաքուստ երկու մեծ սալաքարերի վրա կարդում ենք.

*ԹՎ. ՆՂԵ/1046/*
*ՈՂՈՐՄԵԱ ՔՍ ԱԾ ՍՄՊԱՏԱ ԹԱԳԱՒՈՐԻ/*
*ԵՒ ԻՒՐ ԵՂԲԱՒՐՆ ԳՐԻԳՈՐՈ՝ ՇԻՆՈՂԻ ՍԲ ԵԿ/*
*ԵՂԵՑԻՈ, ՍՐԱՀԻՍ ԵՒ ԺԱՄԱՏԱՆՆ.ՈՐՔ ՄՏ/*
*ԱՆԷՔ ՅԱՐԿՍ ՍՐԲՈՒԹԵԱՆ ՔՍՈՅԱ ՅԱ-*
*ՂԱՒԹՍ ՅԻ/*
*ՇԵՅԷՔ*

Վահանավանքում են հանգչում Սյունիքի ականավոր գործիչներից եւ կրոնավորներից շատերը՝ իշխանաց իշխան Աշոտը (Աշոտիկը)՝ Վասակ քագավորի քեռայրը, Սմբատ Բ եւ Գրիգոր Ա թագավորների հայրը, Դինար թագուհին, գահակալ իշխան Զեւանշերը՝ Վահանավանքի հիմնադիր Վահանի եղբայրը եւ կաթողիկոս Վահան Առաջին Սյունեցու հայրը, մի շարք վանահայրեր եւ իշխանազուններ: Ափսոս մինչեւ օրս չեն հայտնաբերվել Սենեքերիմ թագավորի, Շահանդուխտ թագուհու եւ շատ շատերի գերեզմանները: Սակայն մենք հավատացած ենք, որ նյութական միջոցների առկայության պայմաններում մենք կհամալրենք Սյունյաց մեծերի վահանավանքյան պատկերասրահը:

Հայկական վիմական արձանագրությունները նույն պատմամշակութային արժեքն ունեն, ինչ մատենագրական սկզբնաղբյուրները, սակայն եթե ձեռագիր մատյանները գտնվում են պետության հոգածության ներքո, ապահով շենքում եւ ցուցասրահներում, ապա քարակերտ մատյանները, ցավոք, անմխիթար վիճակում են եւ օրեցօր ոչնչանում են մեր աչքից հեռու, մեր աչքի առաջ: Եկեք միասին փրկենք մեր սրբազան մասունքները: Ես կհավատամ դահլիճներում հնչող ցավակցական այն խոստումներին ու հորդորներին, «ՅՈՐԺԱՄ ԲԱՆՔՆ ՍՊԱՌԻՆ ԵՒ ԳՈՐԾՔՆ ԹԱԳԱՒՈՐԵՆ (Հայկական վիմագրերից),

կամ՝

*ԸՍՏ ԳՈՐԾՈՅ ՁԵՐՈՅ ԵՂԻՑԻՆ ՁԵՋ»,*

կամ՝

*«ՄԱՏԱՆԻ ԷՐ ԱՆԱԿՆ ՎԱՅՈՅ ՁՈՐ» ՇԻՆԵՑԻ ՁՍԱ ԵՒ ԵՂԻ ԱԿՆ Ի ՎԵՐԱՅ:*

Եվ կամ՝

*«ՄԱՀԿԱՆԱՅՈՒ ԾՆԵԱԼ ԱՆՄԱՀ ՁԻՒՐՆ ՅԻՇԱՏԱԿ ԵՄՈՂ»:*
*ՀԱՅԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԵՆՑ ԼԵՌՆԵՐԻ ՎՐԱ ՓՈՐԱԳՐՎԱԾ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ է (Մեն Մարտեն):*
*ԳՐԵՑԵՔ ՎԱՄՆ ՅԻՇԱՏԱԿԻ Ի ՎԵՐԱՅ ՔԱՐԱՆՑ «ՔԱՆԶԻ ԹՈՒՂԹՔՆ ԵՂԾԱՆԻՑԻՆ Ի ՀՐՈՑ ԿԱՄ Ի ՁՐՈՑ, ՄԱԿԱՅՆ ՔԱՐԵԱՅ ԱՐՁԱՆՆ ԱՆՁԻՆՁ ՄՆԱՄՅԷ ՅԱՒԻՏԵԱՆ»*

**Հռիփսիմե արքայադուստր:** ■

**ՎԱՀԱՆԱՎԱՆՔԻ ՎԻՄԱԳՐԵՐԸ**

# ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

**ԱՇՈՏ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ**
**ԵՊՀ, պ.գ.թ., դոցենտ, ՀԱԻ ավագ գիտաշխատող**

Լուսանկարը՝ Ա. Նավասարդյանի

Սյունյաց թագավորության փառքի ու հոգեւոր վեհության խորհրդանիշ Վահանավանքը հարուստ է վիմագրություններով:

Վահանավանքի վիմագրերի նկատմամբ առաջինը հետաքրքրություն դրսեւորել է հետագայի արքեպիսկոպոս, Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ, ազգային-հասարակական գործիչ, հայ եկեղեցական իրավունքի մասնագետ Ներսես Մելիք-Թանգյանը՝ Շուշիից Նախիջեւան ուղեւորվելիս: Նա Թիֆլիսում լույս տեսնող «Նոր-Դար» օրաթերթում հրապարակել է Վահանավանքի 1086թ. շինարարական վկայագիրը, նաեւ ակնարկել Աղվանից Ստեփանոս կաթողիկոսի արձանագրության առկայության մասին(1):

Երիտասարդ Ն.Մելիք-Թանգյանի ընդօրինակությունը՝ նույն սխալներով ու թերություններով, իրենց աշխատություններում են զետեղել Ղեւոնդ Ալիշանն(2) ու Կարապետ Կոստանյանը(3):

Վահանավանքի վիմագրերը գիտական պահանջներին համապատասխան հավաքել ու հրատարակել է անխոնջ վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանը: Նա «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի II պրակում Վահանավանքից զետեղել է հինգ արձանագրություն(4), որոնք ընդօրինակել է, ինչպես ինքն է գրում. «Այն բոլոր շինություններից, որոնցից այժմ կիսափուլ վիճակում մնում են մի եկեղեցի ու գավիթ, որոնց կտուրներն ամբողջովին եւ հարավային պատերի էլ մեծ մասը փլել են. գավթի առաստաղից մնացել են բաց տարածության մեջ մեծամեծ քարերով շարված երկու հիանալի կամարներ: Սրանցից արեւմուտք մոտ հարյուր մետր հեռու, նույնպես կիսափուլ վիճակում մնացել են Շահանդուխտի շինած եկեղեցին, ժայռին կից, կամարների վրա, որպես երկրորդ հարկ, սրա էլ կտուրն ամբողջովին եւ արեւելյան պատը կիսովին փլել են: Շրջապատի փլատակները ծածկված են խիտ անտառով»(5):

Այսպիսի ավերակ ու անմխիթար վիճակում էր գտնվում Սյունյաց թագավորության փառքի տաճար Վահանավանքը, երբ 1966 թվականից տեղում իր հնագիտական գործունեությունն սկսեց երիտասարդ գիտնական Գրիգոր Գրիգորյանը: Ավելի քան չորս տասնամյակ տեւած պեղումների ընթացքում հայտնաբերվեցին բազմաթիվ արձանագրություններ, որոնք էապես հարստացրին Վահանավանքի վիմագրական ժառանգությունը՝ քարակերտ բնագրերի թիվը հինգից հասցնելով 77-ի: Նորահայտ վիմագրերը գիտական շրջանառության մեջ են դրվել Գ.Գրիգորյանի մի շարք աշխատությունների միջոցով(6):

Դրանք կարեւորագույն սկզբնաղբյուրներ են հանդիսանում ոչ միայն հայ ժողովրդի միջնադարյան անցյալի, Բաղաց թագավորության, Հայաղվանքի, Սյունիք-Արցախ առնչությունների, այդ երկու հզոր նահանգների միջեւ ձեւավորված ռազմաքաղաքական դաշինքի ուսումնասիրության, այլեւ Հայաստանյայց առաքելական եկեղեցու պատմության համար:

Այդ արձանագրություններից նախեւառաջ ակնբախ է Սյունյաց աստվածասեր արքաների ու բարեպաշտ թագուհիների եկեղեցաշեն գործունեությունը:

Վահանավանքի Սբ Գրիգոր Լուսավորիչ կաթողիկեի «սյունապատից դեպի գավիթ տանող հարավ-արեւմտյան մուտքի աջակողմյան պատին, ներքուստ»(7) վեց տողով փորագիր արձանագրությունից իմանում ենք, որ 1046թ. Սյունյաց Սմբատ Բ թագավորի (1040-1051) եւ նրա եղբայր Գրիգորի ջանքերով շինվել են եկեղեցին, սրահն ու ժամատունը(8): Գ.Գրիգորյանն իրավացիորեն նկատել է, որ բնագրում օգտագործված «շինողի» բառը պետք է հասկանալ վերանորոգել իմաստով, քանի որ պատմիչ Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ՝ եկեղեցին՝ Սբ Գրիգոր Լուսավորիչ անունով, հայոց 360 թվականին (+551= 911թ.՝ Ա.Մ.) հիմնարկել է Բաղաց Ջագիկ իշխանի որդի Վահանը, իսկ մեծ աղոթարան-սրահն ու գեղեցիկ հորինվածքով գավիթ-ժամատունը՝ նրա եղբորորդի Վահան վանահայրը՝ նախքան (958թ.՝ Ա.Մ.) Տաթեւի եպիսկոպոս դառնալը(9), նույն ինքը՝ հետա-

## 1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

# ԳԻՏԱԺՈՂՈՎ

գայի հայոց կաթողիկոս Վահան Ա Սյունիի՝ 968-969(10):

Հետեւապես 1046 թվականը պետք է համարել Վահանավանքի երկրորդ փուլը՝ ծաղկման շրջանը, երբ ընդլայնվում ու հզորանում էր վանական համալիրը: Դրա վկայությունը 1086թ. շինարարական արձանագրությունն է, որով Սյունյաց Շահանդուխտ Բ թագուհին (1051-1116) հայտնում է, որ ինքն ու իր քույր Կատան շինեցին Սբ Աստվածածին եկեղեցին(11): Բացի այս կրկնահարկ աղոթարանից Սյունյաց բարեպաշտ տիրուհիները, համաձայն ենթադրյալ սեղանատան արձանագրության, կառուցել են եւս երեք եկեղեցի՝ Սբ Հարություն, Սբ Սիոն, Սբ Նախավկա(12): Աղբյուրներում տեղեկությունների բացակայության պատճառով դժվար է որոշել այդ եկեղեցիների տեղադրության հարցը, բայց պետք է ենթադրել, որ դրանք եղել են եւ Վահանավանքի տարածքում, եւ նրանից դուրս:

Սյունյաց աշխարհում եկեղեցաշեն գործունեությունը խաթարվում է հայոց արեւելյան կողմեր սելջուկյան արշավանքների պատճառով: Այս ընթացքում է, որ Աղվանից կաթողիկոս Ստեփանոսը, համաձայն Վահանավանքի Սբ Աստվածածին կրկնահարկ եկեղեցու հուշակոթողի արձանագրության, «նեղեալ ի տաճկաց» եկավ ու հանգչեց «Աստուածասէր թագուհեայ Շահանդխտոյ եւ Կատահն շինած եկեղեցոյս գաւթիս»(13): Նույնն է հիշատակում նաեւ Ստեփանոս Օրբելյանը(14), ինչը խոսում է այն տեսակետի օգտին, որ Սյունյաց պատմիչը եղել է Վահանավանքում եւ տեղում ծանոթացել արձանագրությանը:

Ղ.Ալիշանն այս տարեթիվ չունեցող արձանագրության ժամանակը համարում է 1091 թվականը(15): Բ.Ուլուբաբյանը Աղվանից Ստեփանոս կաթողիկոսի Կապան տեղափոխվելը կարծում է կատարված 1086-1096 թվականների միջեւ(16): Ըստ Վ.Աբրահամյանի՝ Ստեփանոս Ա-ն գահակալել է 1077-1103 թթ.(17):

Դժվար չէ ենթադրել, որ Աղվանից կաթողիկոսը հետապնդվում էր Գանձակում հաստատվող սելջուկ-թուրքերից, որոնք XI դ. վերջին քառորդում նեղելով Փառիսոս-Աղվանքի իշխանությանը՝ աստիճանաբար բռնազավթում էին Արցախ աշխարհը:

Ստեփանոսն այն բարձրաստիճան հոգեւորականն է, որը 1081թ. Հաղպատի վանքում Տաշիր-Զորագետի թագավոր Կյուրիկե Ա Բագրատունու (1050-1089) գլխավորությամբ հրավիրված տեղական ազգային եկեղեցական ժողովում բուն Հայաստանի կաթողիկոս է օծել Շիրակի եպիսկոպոս Բարսեղ Ապիրատյանին (հետագայի հայոց հզորագույն կաթողիկոս Բարսեղ Ա Անեցի՝ 1105-1113):

Վահանավանքի Սբ Գրիգոր եկեղեցու գավթում գտնվում է սրածայր գլխամասով տապանաքար՝ հարթ մակերեսին՝ «Հասան» մակագրությամբ: Գ.Գրիգորյանի քննությամբ՝ Հասանը Բաղաց Սենեքերիմ թագավորի (1072-1096) զորապետն է, Սյունյաց մեծ իշխանը(18), որը Գանձակի Ֆադլուն (Փատլուն) ամիրայից իր արյամբ ազատագրել է «զԿովսական գաւառն» ու Տաթեւի վանքին վերադարձրել Նորաշինիկ եւ Ջեռատիվան գյուղերը, որոնք «վաղ ժամանակօք տուեալ էին ժառանգութիւն սուրբ եկեղեցւոյն Տաթեւոյ»(19): Սենեքերիմն իր հերթին հաստատել է զորապետի վճիռը՝ Տաթեւի վանքին վերադարձնելու այն գյուղերը, որ Հասանն ազատագրել էր «ի Տաճկաց... իւր արեամբն»(20):

Սյունաստանում գտնված կարմրավուն մի քարի վրա արձանագրված է «Դինար»: Մեզ ծանոթ հայկական աղբյուրներից Դինար հայտնի չէ: Ըստ վրաց մատենագիրների՝ Դինարը Սամցխե-Մեսխեթի իշխանաց իշխան Գուրգենի քույրն էր (X-XI դդ.), որը «փոխադրեց Հերեթը հայոց հերձվածից դեպի ուղղափառություն»(21), ասել է թե Հերեթի հայերին դավանափոխ արեց՝ նրանց քաղկեդոնական դարձնելով:

Գ.Գրիգորյանի կարծիքով՝ Դինարը «ամուսնացած էր Սյունիքի ականավոր իշխան Ատրներսեհի հետ եւ վախճանվելուց հետո թաղվել է Վահանավանքի մեծ տաճարի սյունասրահում»(22):

Քաղկեդոնականությանը հարելու մեջ է մեղադրվել նաեւ Վահան Ա Սյունի կաթողիկոսը (968-969), որը հոգեւոր կոչումն ստացել էր Վահանավանքում, եւ ինչպես վերն ենք ասել, իր վանահայրության տարիներին նպաստել վանքի հզորացմանը:

Նա, մասնավորապես, մեղադրվում էր պատկերապաշտությանը հովանավորելու մեջ այն աստիճան, որ նրա աթոռակալության տարիներին ս.Սեղանից մի կողմ էր մղվել ս.Խաչի նշանը՝ տեղը զիջելով ս. Աստվածածնի պատկերին, իսկ բյուզանդական ու վրացական եկեղեցիների նմանակմամբ՝ ս. Պատարագի խորհուրդը մատուցվում էր սրբապատկերների օգտագործմամբ:

Վահանավանքի արձանագրությունները մեզ հնարավորություն են ընձեռում՝ կազմելու տեղի սուրբ ուխտի վանահայրերի մոտավոր ժամանակագրությունը.

*Տէր Վահան Նախաշինող՝ 911-930-ական թթ.-,*
*Վահան Սյունի՝ 930-ական – 958թթ.,*
*Հայր Խիկար՝ 959 – 970թթ.,*
*Հայր Յովանէս՝ 970-997թթ.,*
*Ստեփանոս եկեղեցպան՝(23)*
*1000 -ական –1033թթ.,*
*Հայր Ստեփաննո՞ս՝*
*1040-ական – 1060-ական թթ.,*
*Գէորգ եկեղեցպան՝ 1060-ական – 1091թթ.,*
*Հայր Եղուտ՝ 1091 – 1094թթ.,*
*Հայր Գրիգոր Երիցուվանցի՝(24)*
*1094 - 1102թթ.:*

Վանքի վիմագրերում հիշատակվում են նաեւ կրոնավորներ(25), երեցներ, քահանաներ:

**Ծանոթագրություն**

1. «Նոր-Դար», 1891, №159, էջ 2:
2. Ղ.Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893: Վերահրատարակությունը՝ նախաձեռնությամբ եւ հովանավորությամբ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի, Երեւան, 2009, էջ 296:
3. Վիմական տարեգիր: Ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց, կազմեաց Կ.Կոստանեանց, Ս.Պետերբուրգ, 1913, էջ 25:
4. Դիվան հայ վիմագրության, պրակ II, Գորիսի, Սիսիանի, Ղափանի շրջաններ, կազմեց Ս.Գ.Բարխուդարյան, Երեւան, 1960, էջ 138-139:
5. Նույն տեղում, էջ 137:
6. Գ.Գրիգորյան, Վահանավանքի պեղումների նախնական արդյունքները, Լրաբեր ՀԳ, 1970, №2: Նույնի՝ Новонайденные надписи Ваанаванка, ՊԲՀ, 1972, №1: Նույնի՝ Ստեփանոս Օրբելյան, ՊԲՀ, 1976, №4: Նույնի՝ Վիմագրություններ Վահանավանքի 1970-1978թթ. պեղումներից, ՊԲՀ, 1980, №2: Նույնի՝ Վահանավանք, Երեւան, 2007:
7. Գ.Գրիգորյան, Վահանավանք, էջ 47:
8. Նույն տեղում:
9. Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի, Թիֆլիս, 1910, էջ 238-240:
10. Ըստ Ասողիկի, Մատթեոս Ուռհայեցու ու Ստեփանոս Օրբելյանի՝ Վահան Ա Սյունեցին գահակալել է 5 տարի (տե՛ս Քրիստոնյա Հայաստան: Հանրագիտարան, Երեւան, 2002, էջ 949): Կարծում ենք, որ պատմիչները նրա գահակալության տարիները հաշվել են կաթողիկոս դառնալուց՝ 968 թվից մինչեւ մահը՝ 972թ.՝ ներառյալ:
11. «Նոր-Դար», 1891, № 159: Ղ.Ալիշան, Սիսական, 296, Դիվան II, էջ 138: Վիմական տարեգիր, էջ 28: Գ.Գրիգորյան, Վահանավանք, էջ 71: Նախնական հրատարակիչները սխալ են կատարել «Աշոտկա վասն» բառանջատումը՝ այն վերծանելով «Աշոտ կավասն», ինչը հանգեցրել է շփոթ մեկնաբանությունների: Մասնավորապես, մեծավաստակ լեզվաբան Հր.Աճառյանը «կաւաս» կարծել է Սյունյաց Աշոտ իշխանաց իշխանի տիտղոս (Տե՛ս Հր.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. Բ, Երեւան, 1973, էջ 561):
12. Գ.Գրիգորյան, Վահանավանք, էջ 63:
13. Դիվան, II, էջ 139: Գ.Գրիգորյան, Վահանավանք, էջ 72:
14. Ստեփանոս Օրբէլեան, էջ 241:
15. Ղ.Ալիշան, Սիսական, 296:
16. Բ.Ա.Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երեւան, 1975, էջ 97:
17. Տես՝ Հայ եկեղեցու պատմություն, մասն Ա, աշխատասիրությամբ Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանի, ս. էջմիածին, 2002, էջ 185:
18. Գ.Գրիգորյան, Վահանավանք, էջ 45:
19. Ստեփաննոս Օրբէլեան, էջ 326:
20. Նույն տեղում, էջ 327:
21. Լ.Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին, հատ. Ա, Երեւան, 1934, էջ 98:
22. Գ.Գրիգորյան, Վահանավանք, էջ 50:
23. «Եկեղեցպան» նշանակում է եկեղեցու առաջնորդ, վանահայր: Այդպես է կոչվել Կոմիտաս Ա Աղցեցի կաթողիկոսը (613-628) Վաղարշապատի Սբ Հռիփսիմե եկեղեցու վիմագրում (տե՛ս И.Орбели, Избранные труды, Ереван, 1963, стр. 406-408.
24. Երիցուվանքն այժմյան Սյունիքի մարզի Կապանի ենթատարածքի Արծվանիկ գյուղն է (տե՛ս Գ.Գրիգորյան, Վահանավանք, էջ 66):
25. Պատմիչը Վահանավանքի հիմնադրման ժամանակ շեշտում է տեղում ավելի քան 100 սրբակրոն եղբայրների գոյության փաստը (տե՛ս Ստեփաննոս Օրբէլեան, էջ 239):

**ԱՄՓՈՓՈՒՄ**

## ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Սյունյաց թագավորության հոգեւոր կենտրոն Վահանավանքը հարուստ է վիմագրերով, որոնց թիվը պրոֆեսոր Գրիգոր Գրիգորյանն ավելի քան չորս տասնամյակների ընթացքում կատարված պեղումների արդյունքում 5-ից հասցրել է 77-ի: Դրանք ոչ միայն քաղաքական, այլեւ հայ եկեղեցու պատմության կարեւորագույն սկզբնաղբյուրներ են: Դրանցում արտացոլված են Սյունյաց թագավորների ու թագուհիների եկեղեցաշեն գործունեությունը, սելջուկյան արշավանքների ժամանակ հայ բարձրաստիճան հոգեւորականության հալածական վիճակը, ժողովրդի զինված պայքարը եկեղեցու հողատիրական իրավունքների վերականգնման համար եւ այլն:

Վահանավանքի վիմագրերով կարելի է կազմել տեղի հոգեւոր առաջնորդների մոտավոր ժամանակագրության ցանկը՝ X-XIIդդ.:

**SUMMARY**

## THE EPIGRAPHIC INSCRIPTIONS OF VAHANAVANK AS SOURCES OF ARMENIAN CHURCH HISTORY

Vahanavank, the glorious spiritual centre of the kingdom of Syunik, is rich in inscriptions. Prof. Grigor Grigoryan has unearthed many such inscriptions in excavations spanning four decades, raising the total of deciphered inscriptions from 5 to 77.

The inscriptions constitute an important primary source for both political and ecclesiastical history. They provide evidence of the persecution of high-ranking clergy during the Seljuk invasions, the Armenian peoples armed struggle to restore land ownership rights cue.

The inscriptions of Vahanavank makes it posited to reconstruct the chronological tables of local religious leaders during the X-XII cc.

## Վահանավանքյան ապոկրիֆ

**ՌՈԲԵՐՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ը լույս է ընծայել տասը թերթանոց գունագեղ պատկերամատյան (ալբոմ)՝ նվիրված Վահանավանքի հիմնադրման 1100-ամյակին: Տպագրատունը, տպաքանակը, հրատարակման տարեթիվը չեն նշված: ԱՍԱԼԼԱ-ն (կազմողների անունների առաջին տառերն են), թերեւս, ազնիվ նպատակադրում է ունեցել՝ հաճելի նվեր մատուցել: Ու Վահանավանքի փառքն իրենցով անելու համար կազմի վրա առինքնող գրիֆ են դրել. գիտական խորհրդատու՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գրիգոր Գրիգորյան:

Անհնար է հավատալ, որ մեծարգո պրոֆեսորը, ով Վահանավանքի անգերազանցելի հանրագետն է, կհանդուրժեր ապոկրիֆ-սոփերի անհեթեթությունները: Այսպես, Գրիգոր Ա թագավորի գահակալությունը դրել են երկու տարի, Սենեքերիմ թագավորի համար նշել միայն մահվան թիվը, Շահանդուխտ թագուհուն վերագրել գահակալություն, շրջանցելով պրոֆեսորական ճշգրտումները՝ Գրիգոր Ա, 1051-1072թթ.: Սենեքերիմ Սեւադյան, 1072-1094թ.: Գրիգոր Բ Սենեքերիմյան, 1094-1166թթ.:

Պրոֆեսորի գրքերից մեկում առբերված է պատմիչ Օրբելյանի տապանագիրը՝ մահվան 1303 թվականով: Իսկ նորընծա հեղինակները Ստ.Օրբելյանին հավաստել են որպես 12-րդ դարի պատմիչ: Դեռ ավելին. կեղծել են պատմիչի հաղորդածները: «…հավաքում է ավելի քան հարյուր մաքրակրոն վանականների» (Օրբ., ԽԵ) տեղեկությունն «ուղղել են» այսպես՝ «Ավելի քան 100 վարդապետ…»: Գրել են. «Վահանը եպիսկոպոսական պաշտոնին մնում է ութ տարի»: Մինչդեռ պատմիչը (Օրբ., ՀԲ), պրոֆեսորը (ՍՊ, էջ 114) գիտեն 6 տարի: Ի դեպ, «ութը տարի»-ն հատուկ է երեւանյան ժարգոնին եւ ըստ այդմ կռահելու է, որ հեղինակները մայրաքաղաքից են: Գրիչը ո՞ր մեկն է բռնել. ա՛ խոխա, գրական հայերենում թվանուններից միայն 9 եւ 10թվերը վերջում ունեն ը հնչյունը, Սյունիքի խոսվածքում՝ նաեւ 7 թիվը՝ օխտը:

Վանական համալիրի տարածքում կողմնորոշվելու խնդրում հեղինակները հույժ անփույթ են գտնվել՝ իրար են խառնել արլ, արմ, հր, հս ուղղությունները: Այսպես, իբր սյունասրահի «Հարավային 2 մուտքերից մեկը տանում է եկեղեցի, իսկ մյուսը՝ դեպի գավիթ»: Պրոֆեսորի նկարագրությունն այլ է. «Հարավային կողմից ունի երկու մուտք, որոնցից մեկը հաղորդակցվում է այժմ փլուզված սեղանատան հետ, իսկ մյուսը դուրս է գալիս դեպի հարավային բակ» (Վահանավանք, էջ 27):

Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու անունն առբերել են երեք տարբերակով՝ մեծատառ, փոքրատառ եւ Սբ Գրիգոր՝ առանց Լուսավորիչ պատվանվան: Ահավասիկ մի դիտարկում այդ եկեղեցու վերաբերյալ. «Շենքը նախապես կառուցված է եղել չեչաքարից, որի մնացորդները պահպանվել են հարավարեւելյան պատի վրա»: Մտորե՞նք, որ շենքը վերակառուցվել է այլ քարով: Այլ մի էջում էլ գրել են «Շինաքարը նույն կարմրավուն կրաքարն է, որով կառուցված է ամբողջ հուշարձանախումբը»: Տարակուսելի է եկեղեցու «հարավարեւելյան պատ» հասկացությունը: Չէ՞ որ, ավանդաբար, եկեղեցու խորան-բեմն ուղղված է դեպի արեւելք, ինչպիսի ճշգրտություն առկա է նաեւ Վահանավանքում:

Պատկերամատյանը, բնականաբար, առլեցուն պետք է լիներ հավաստի տեղեկություններով եւ շրջանցեր թեականն ու ոչ հավաստին: Այս սկզբունքն էլ քամահրված է: Այսպես, ըստ հեղինակների՝ Խուշուշն իշխանուհի էր, Խաղբակը՝ իշխան, Գեւորգ Պահլավունին՝ զորավար, Վահան Սյունեցի կաթողիկոսը՝ Վահան Ա Սյունի: Պրոֆեսորը կամ այլ ոք դրանք չեն հիմնավորել: Պրոֆեսորի կոչած՝ ենթադրյալ սեղանատունը (սյունասրահի հարավարեւմտյան կողմում) թաշկինակներով զարդարված ծառի լուսանկարով հղել են տաճարի հյուսիսակողմին: Տեղեկագրել են անտառապատ սարալանջն ու հանրահայտ աղբյուրը, սակայն ձեւավորումը տվել տաճարի լուսանկարներով:

Խմբագրման կարիք ունի «Համալիրի տարածքում 1966թ. սկսած պարբերական պեղումներ է իրականացրել ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի արշավախումբը՝ պրոֆեսոր Գրիգոր Գրիգորյանի գլխավորությամբ» նախադասությունը: Նշված թվականին ՀՀ ԳԱԱ, պրոֆեսոր Գր. եղե՞լ են:

Հարկ է խմբագրել նաեւ վանական համալիրի տեղանքի նկարագրությունը: Ցույց է տրված, թե համալիրը Կապան քաղաքից 5կմ հր-արմ է, Բաղք գավառում: Ներկայումս Կապան քաղաքն իր շրջագծի մեջ ունի վանքի մերձակա Շհարջիկ, Աչաղու գյուղերը: Արդ, որտեղի՞ց է սկսում այդ 5կմ հր-արմ-ը: Տեղորոշումը լավ է անել բնաձորերի, գետերի, լեռների, բերդավերակների, գյուղերի հղումներով:

Բաղք գավառը վաղ անցյալում ավելի ընդարձակ էր: Պրոֆեսորը գրել է, որ Վահանավանքը Ձորք գավառի հոգեւոր կենտրոնն էր (ՍՊ, էջ 17):

Սոփերում խնդուկներ էլ կան, մեկը՝ «Գավթի ծածկի թաղն իր վրա կրել է… պայտաձեւ 3 հզոր կամարները»: Թե՞ կամարներն են իրենց վրա կրել թաղը…

…Դե ինչ, բաբե~, բաբե~: Ով կկամենա, թող Վահանավանքում աղոթք անի, որ ՀՀ մշակույթի նախարարությունը կարեւորի գրաքննությունը, հատկապես՝ «ճանաչենք, պահպանենք, ժառանգենք» բնաբանով «բուկլետ»-ների նկատմամբ:



1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ՎԱՀԱՆԱՎԱՆՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԻՑ

# Կյանք՝ նվիրաբերված «քարակերտ մատյանների» վերծանմանը

Պատմությունը մեր ստեղծած գործերի գանձարանն է, անցյալի վկան, ներկայի համար՝ օրինակ եւ խրատ, ապագայի համար՝ նախազգուշացում:

**Սերվանտես**



**2010թ. մարտի 2-ին լրանում է Կապանի հնագիտական արշավախմբի ղեկավար, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի վիմագրության ամբիոնի վարիչ, դոկտոր, պրոֆեսոր, Կապանի պատվավոր քաղաքացի Գրիգոր Գրիգորյանի ծննդյան ութսուն-ամյակը: Դժվար է մտաբերել երեւանաբնակ մի մտավորականի, ով այդքան կապված լիներ Կապան աշխարհի հետ, մարդ, որի վաղեմի երազանքը Վահանավանքը վերանորոգված տեսնելն էր:**

Ծննդավայրը Հյուսիս-Օսեթական Հանրապետության Վլադիկավկազ քաղաքն է: 1937-ին Գրիգորյանների ընտանիքը տեղափոխվում է Երեւան, որտեղ նա հաճախել է մայրաքաղաքի Օրջոնիկիձեի անվան №11 դպրոցը: 1950-1954 թվականներին սովորել եւ ավարտել է Երեւանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական ֆակուլտետը, ապա մեկնել Եղեգնաձորի շրջան եւ որպես տնօրեն աշխատել Հորս գյուղի դպրոցում: 1962 թվականից ցայսօր աշխատում է Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի հնագիտության եւ ազգագրության ինստիտուտում, նախ՝ որպես ավագ լաբորանտ, ապա՝ կրտսեր, ավագ, առաջատար գիտաշխատող, վիմագրության ամբիոնի վարիչն է մինչեւ այսօր:

Առաջին «ծանոթությունը» Վահանավանքի հետ եղել է 1964-ի ապրիլին, երբ առաջին անգամ գնացքով եկավ Կապան՝ թեկնածուական ատենախոսության համար նյութեր հավաքելու: Թեման էր՝ «Սյունիքի վանական կալվածատիրությունը 9-13-րդ դարերում» (առանձին գրքով տպագրվել է 1973 թվականին): **«Իմ առջեւ բացվեցին Վահանավանքի տխուր ավերակները»,** – Վահանավանքից ստացած առաջին տպավորության մասին հետագայում գրել է նա:

1966-ին ՀՀ գիտությունների ակադեմիայի հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի վիմագրության բաժնի վարիչ Սեդրակ Բարխուդարյանի հետ կրկին եկավ Վահանավանք, այս անգամ նրա գործն էր լինելու պեղել եւ մաքրել Վահանավանքը փլատակներից: Մի շաբաթ հետո Ս.Բարխուդարյանի երկտողով Կապան եկան Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետության ֆակուլտետի երկու ուսանողներ՝ Արթուր Մեսչյանը (այժմ՝ ճանաչված երգահան եւ ճարտարապետ) ու Լեւոն Մելիքյանը, ովքեր պիտի կատարեին չափագրական աշխատանքներ: Եվ սկիզբ դրվեց Վահանավանքի պեղումներին, հետո՝ վերաշինմանը:

1967-ին պաշտպանեց թեկնածուական, իսկ 1985-ին՝ «Սյունիքի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական պատմությունը 13-15-րդ դարերում» թեմայով դոկտորական ատենախոսությունը: Վերջինս պաշտպանելուց առաջ 1981-ին արդեն հրատարակել էր «Սյունիքը Օրբելյանների օրոք 13-15-րդ դարերում» աշխատությունը: Սյունիքի միջնադարին նվիրված մյուս գործը՝ «Դրվագներ Սյունիքի պատմության», 1999-ին ռուսերեն լույս ընծայվեց ԳԱԱ հրատարակչությունում: Ի դեպ, ոչ միայն հայ, այլեւ ռուսալեզու ընթերցողն այս գրքից հարուստ նյութ կարող է քաղել Սյունիքի իշխանության սոցիալ-տնտեսական, քաղաքական վիճակի մասին: Հեղինակի եզրահանգմամբ՝ Սյունյաց թագավորության կործանման եւ ապա Օրբելյան իշխանապետության վերացման պատճառ հանդիսացան օտար նվաճողների ներխուժումները, ինչպես նաեւ երկրի մասնատվածությունը եւ Հայաստանի ֆեոդալական տների միջեւ եղած հակամարտություններն ու կետրոնախույս ուժերը:

Ի դեպ, շատ ավելի ուշ՝ 2004-ին, Մոսկվայում՝ “Культурная революция” հրատարակչությունում, հրատարակվեց պրոֆեսորի “Род Орбелянов и история Сюника в 9-15вв.” գիրքը, այսպիսով ոչ միայն Սյունիքի, այլեւ Օրբելյան իշխանական տան պատմությունն այս անգամ հասանելի դարձավ ռուսալեզու ընթերցողի ավելի լայն շրջանակներին:

2000 թվականին լույս տեսավ միջնադարագետ-պատմաբանի «Հայկական վիմագրություն» համառոտ ձեռնարկը՝ բուհերի պատմության եւ բանասիրության ֆակուլտետների համար: Հեղինակը տարիներ շարունակ այդ առարկան դասավանդել է Երեւանի պետական համալսարանում, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտում, «Հրաչյա Աճառյան» համալսարանում եւ հանրապետության այլ բուհերում: Ձեռնարկը բաղկացած է երեք հիմնական բաժիններից՝ տեսական մաս, բնագրեր եւ վերծանություններ, ներկայացված են վիմագրության զարգացման փուլերը, պատմիչների, տեղագիրների եւ գիտնականների վիմագրագիտական գործունեությունը, վիմագրերի ընդօրինակման եւ վերծանության տարբեր եղանակներն ու ձեւերը, լեզվական իրողությունները, բովանդակային տարբերակները: Ըստ էության, այս դասագիրքը բանալի է հայոց «քարակերտ մատյանները» վերծանելու, ընդօրինակելու եւ ուսումնասիրելու համար:

Իսկ ամեն ինչ սկսվեց նրանից, որ անցյալ դարի 60-ական թվականներից կազմվեց վիմագրական արշավախումբ՝ արտերկրի հայկական գաղթօջախներում հայերեն եւ հայերին վերաբերող վիմագրերը ժողովելու եւ գիտական հիմունքներով տպագրելու նպատակով: Գիտական որոնումների ուղիները տարան Ուկրաինա, Լեհաստան, Մոլդովա, Ռուսաստանի տարբեր քաղաքներ: Որոշ արձանագրությունների համար գիտարշավները վերածնման առիթ դարձան: Այսպես՝ Թեոդոսիայում ծովանկարչության արքա Հովհաննես Այվազովսկու տուն-թանգարանի ծովահայաց պատին կային սվաղով պատված հայերեն արձանագրություններ: Շնորհիվ արշավախմբի ղեկավար, հայ վիմագրության անխոնջ մշակ Գրիգոր Գրիգորյանի համառ ջանքերի՝ հնարավոր եղավ սվաղը մաքրել եւ երկրորդ կյանք տալ մեսրոպատառ արձանագրությանը: Ընդհանուր առմամբ արեւելաեվրոպական երկրներից ժողովված գիտական հունձքը կազմեց 776 վիմագրական եւ թանգարանային առարկաների արձանագրություններ:

Գրիգորյանի մասին երախտագիտությամբ եւ հիացմունքով են խոսում Մոսկվայի Կրեմլի Ձիհնապալատի, Պատմության Կենտրոնական թանգարանի, Ղրիմի Թեոդոսիա քաղաքի Հայկական քարեդարանի գիտաշխատողները, որոնց խնդրանքով պրոֆեսորը բնագրերից ռուսերեն է թարգմանել բազմաթիվ գրաբարյան տեքստեր, հիմնադրել թանգարանային առանձին բաժիններ: Հիշատակելի է, թե ինչպես Կրեմլի Ձիհնապալատի թանգարանային բաժնի վարիչ, պատմագիտության դոկտոր Մ.Պոստնիկովայի խնդրանքով նա ուսումնասիրեց վրացական ֆոնդը եւ գտավ, որ այն պետք է համարել հայկական, քանի որ պահպանության վերցված 26 նմուշներից միայն երկուսն էին վրացերեն, մյուսները՝ հայերեն: Թանգարանի ղեկավարությունն ընդառաջեց հայ գիտնականին: 1971թ. Թեոդոսիա քաղաքի Ս.Սարգիս եկեղեցու սրահներում հիմնադրվեց Խորհրդային Միության մեջ առաջին Հայկական քարեդարանը, որի բոլոր արձանագրությունների ռուսերեն թարգմանությունները վստահվեց Գր.Գրիգորյանին: Գիտական բերքահավաքը Ռուսիո տարածքից կազմեց 815 արձանագրություն:

Հավաքված հարուստ նյութի մշակումը տեւեց մոտ երեք տարի: Ուկրաինայի եւ Մոլդովայի տարածքների արձանագրություններն ընդգրկող «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի յոթերորդ պրակը լույս տեսավ 1996 թվականին: Ռուսաստանի Դաշնության հայ գաղթավայրերի արձանագրություններն ամփոփող ութերորդ պրակը (դարձյալ Գր.Գրիգորյանի աշխատասիրությամբ) լույս ընծայվեց երեք տարի անց՝ 1999 թվականին: Դրանք հարուստ փաստական նյութ են պարունակում հայկական գաղթօջախների հասարակական-քաղաքական, սոցիալական, մշակութային կյանքի մասին:

Վերջին այս տասնամյակը՝ 2000-2010թթ., գրքեր լույս ընծայելու առումով բեղուն էին պատմաբանի համար: Ընթերցողի սեղանին դրվեց «Սյունիքի պատմություն» ձեռնարկը, իսկ 2005-ին՝ «Ղարաբաղյան օրագիր» (1988-1992) գիրքը, որն իր բովանդակությամբ տարբերվում է մյուսներից: Արցախյան պատերազմի օրերին երեւան եկավ մտավորականի ակտիվ դիրքորոշումը: Ադրբեջանական քարոզչամեքենայի ստահոդ տեղեկատվությունը չէր կարող անտարբեր թողնել ազգի հոգսերով ապրող անհատին: Գրքում առաջին անգամ ռուսերեն բնագրով եւ հայերեն թարգմանությամբ տպագրված են հեղինակի՝ արցախյան թեմային առնչվող նամակներն ու հեռագրերը՝ հասցեագրված Խորհրդային Միության ղեկավարներին, ԽՍՀՄ ՆԳ նախարարության բարձրաստիճան պաշտոնյաներին, Գերագույն խորհրդի պատգամավորներին, կենտրոնական մամուլի եւ հեռուստատեսության պատասխանատուներին: **«Հայ մտավորական այրը, եթե ոչ զենքով, գոնե գրչով պարտավոր է լինել իր ժողովրդի հետ, արցախցիների կողքին»,** – սա էր գիտնականի հավատամքը:

Այնուամենայնիվ, ինչպես արդեն նշեցինք, նրա կյանքի գործը Վահանավանքն էր, եւ Հայաստանի միջնադարյան ճարտարապետության Սյունիքի դպրոցի առավել հայտնի հուշարձանախմբերից մեկի քառասնամյա պեղումների արդյունքների ամփոփման եւ նորահայտ վիմագրերի վերծանության անհրաժեշտությունից ծնվեց «Վահանավանք (Պատմագիտական ուսումնասիրություն)» աշխատությունը, որտեղ տրված է 77 արձանագրության վերծանություն: Առաջին անգամ մենագրությամբ ներկայացվում են Սյունիքի թագավորների, թագուհիների, իշխանների, զորապետերի եւ հոգեւորականության ներկայացուցիչների հուշակոթողների վկայագրերը՝ մատենագրական սկզբնաղբյուրների համեմատական վերլուծությամբ: Այս գրքին մեր թերթը մանրամասն անդրադարձել է («Սյունյաց երկիր», 15-ը փետրվարի, 2009թ.,) «Չորս տասնամյակի պրպտումների արգասիքը» հրապարակման մեջ:

Վահանավանքի վերաբերյալ Գր.Գրիգորյանն իր խոհերն ամբողջացրել է «Վահանավանքի վերածնունդը (հնագետի օրագրից)» գրքում, որը շարադրված է հեղինակի՝ չորս տասնամյակի ընթացքում գրառած դաշտային օրագրերի հիման վրա: Պեղումների ժամանակ տեղի ունեցած հիշարժան դեպքերն ու իրադարձությունները նա փրկել է մոռացության մշուշից: Դրանք եւ՛ տխուր են, եւ՛ զվարճալի՝ համեմված Սյունյաց լեռնաշխարհի բարբառային նրբերանգներով: **«Գործող անձանցից շատերը մեզ հետ չեն. նրանց երբեք չի կարելի մոռանալ, այս գիրքը մի կերոն է նրանց հիշատակը հավերժացնելու ճանապարհին»,** – սա է գրքի լեյտմոտիվը: Այստեղ շարունակել է հրապարակել Կապանի հնագիտական արշավախմբի աշակիցների, արշավախմբի անդամների անունները: Նրա համակրանքն ուսանողական ջոկատներում ընդգրկված երիտասարդների կողմն է, որոնց նվիրումով նաեւ վեր հառնեց Վահանավանքը: **«Նրանք օրեր ու ամիսներ շարունակ ապրել են ընկերովի, նույն վրանի տակ, քնապարկերում, հաճախ կիսաքաղց են եղել: Եվ կարեւորն այն է, որ ոչ մի տարի, ոչ մեկից տրտունջի խոսք չեմ լսել, ոչ մեկը չի լքել արշավախումբը, ոչ մեկը չի շպրտել աշխատանքային գործիքները եւ հեռացել»,** – գրում է «Վահանավանք» գրքում: Ասենք նաեւ, որ ինքն էլ մշտապես ուսանողների սիրելին է, նրանց կողմից անվերապահորեն հարգված դասախոս եւ բարի խորհրդատու: Նրա ուսանողներից ոմանք գիտությունների թեկնածու են, դասավանդում են հանրապետության տարբեր բուհերում: Գրիգորյանը, չնայած առաջացած տարիքին, հաճույքով է աշխատում պատմագիտության ասպարեզն ընտրած ասպիրանտների եւ հայցորդների հետ: Իսկ Վահանավանք այցելած յուրաքանչյուրին որպիսի համբերատարությամբ պատմում է տաճարի կառուցման մանրամասները, այնտեղ հանգչող թագավորների, թագուհիների, իշխանների մասին:

Շնորհավորելով մեր թերթի բարեկամին հոբելյանի առթիվ՝ ցանկացանք իմանալ, թե ինչի վրա է աշխատում այս օրերին, թեպետ մեծավ մասամբ գիտեինք հարցի պատասխանը: **«Ինձ Սյունիքից դուրս չեմ պատկերացնում, նպատակ ունեմ առանձին պրակով ներկայացնել Սեւանի ավազանից մինչեւ Նախիջեւան ընկած պատմական Սյունիքի վիմագրերը՝ իրենց մեկնաբանություններով»,** – ասաց պրոֆեսորը: 1960-ին տպագրված «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի երկրորդ պրակում զետեղված են Սյունիքի Ծղուկ, Հաբանդ, Բաղք, Կովսական եւ Աղահեջք գավառներից հավաքված 421 արձանագրություն, ինչը նրա կարծիքով ամբողջական չէ: Դրանց թիվը հասնում է 1000-ի, որոնցից 360-ը վիմագրագետի ջանքերով արդեն պատրաստ են տպագրության, կասկած չկա, որ իր ձեռնարկած գործն ավարտին կհասցնի:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

**«ՍԵ», 20.02.2010թ.**

1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

# Վահանավանք. աղբյուրագիտական հենք

## I. ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 1981:
2. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, «Սովետական գրող», Երեւան, 1986:
3. Ստեփանոս Օրբելյան, Ժամանակագրութիւն (Ա.Աբրահամյանի հրատարակությամբ), Երեւան, 1942թ.:
4. Ստեփանոս Օրբելյան, Ողբք եւ հառաչանք ի դիմաց կաթողիկէին, Կալկաթա, 1848:
5. Ղեւոնդ Ալիշան, Սիսական. տեղագրութիւն Սիւնեաց Աշխարհի, Վենետիկ, 1893 (վերահրատարակվել է՝ «Հայագիտակ», Երեւան, 2009):
6. Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն (թարգմանությունը, ներածությունը եւ ծանոթագրությունները՝ Հրաչ Բարթիկյանի), «Հայաստան», Երեւան, 1973:
7. Հովհաննես Դրասխանակերտցի, Հայոց պատմություն (աշխարհաբար թարգմանությունը եւ ծանոթագրությունները՝ Գ.Թոսունյանի), Երեւան, 1996:
8. Փափազեանց, Հնութիւնք վանորէից Հայոց, Գիրք V, Սիւնեաց աշխարհ, Վաղարշապատ, 1895:
9. Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, (թարգմանությունը, առաջաբանը եւ ծանոթագրությունները՝ Վարագ Առաքելյանի), «Հայաստան», Երեւան, 1969:
10. Վարդան Արեւելցի, Տիեզերական պատմություն (ներածությունը, առաջաբանը եւ աստղանիշով ծանոթագրությունները՝ Գ.Թոսունյանի), Երեւան, 2001:
11. Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, «Սովետական գրող», Երեւան, 1982:
12. Ներսես Լամբրոնացի, Ատենաբանություն:
13. «Յայսմաւուրք», մայիսի 27, Վենետիկ, 1769:
14. Անանիա Մոկացի, «Թուղթ» («Արարատ», 1896-97):
15. «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901 (Դավանաբանական թղթերի ժողովածու, ընդգրկում է 5-13-րդ դարերի գրություններ, որոնք ուղղված են դավանական շեղումների դեմ պայքարելու եւ եկեղեցու միասնությունը պահպանելու նպատակին):
16. Սամուել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրքաղ արարեալ, Վաղարշապատ, 1893թ:
17. Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Ս.Պետերբուրգ, 1885:
18. Մխիթար Այրիվանեցի (Մխիթար Երեւանցի), Նոր պատմություն (կոչվել է նաեւ Պատմություն հայոց, Պատմություն ժամանակագրական):
19. Մխիթար Անեցի (Երեց), Պատմություն, Ս.Պետերբուրգ, 1879:
20. Վահան Սյունեցու, Սյունիքի իշխանաց իշխան Վասակի եւ Զվանշեր իշխանի հնազանդության խոստումնագրերը՝ գրված 958թ., տրված Անանիա հայոց կաթողիկոսին (աշխարհաբարով առաջին անգամ տպագրվում է թերթի սույն համարում):

## II. ՎԻՄԱԳՐԵՐ

1. Վիմական տարեգիրք: Ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց, կազմեաց Կ.Կոստանեանց, Ս.Պետերբուրգ, 1913, էջ 25:
2. Դիվան հայ վիմագրության, պրակ II, Գորիսի, Սիսիանի, Ղափանի շրջաններ, կազմեց Ս.Գ. Բարխուդարյան, Երեւան, 1960, էջ 138-139:
3. Թվով 77 քարակերտ բնագրեր (Վահանավանքում գտնված):
4. Ավագյան Սուրեն, Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն (X-XIVդդ.), ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1973:
5. Մանուչարյան Աշոտ, պատմ. գիտ. թեկնածու, ՀԱԻ ավագ գիտաշխատող, Վահանավանքի վիմագրերը: Տպագրվում է թերթի սույն համարում:

## III. ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ

1. Վահրամ Օրբելյան, Վահանավանքի վերականգնման ավարտը՝ 2008թ., «Սյունյաց երկիր», 10 նոյեմբերի 2007: Նույնի՝ Չորս տասնամյակի պրպտումների արդյունքը, «Սյունյաց երկիր», 15 փետրվարի 2009: Նույնի՝ Կյանք՝ նվիրված քարակերտ մատյանների վերծանմանը, «Սյունյաց երկիր», 20 փետրվարի 2009: Նույնի՝ Մեծարեցին վաստակաշատ գիտնականին, «Սյունյաց երկիր», 12 մարտի 2010թ.:
2. Ռոբերտ Գրիգորյան (Էջանանցի), Հին Կապանի վերջին աշունը, ավանդավեպ, լրագրային տարբերակ, «Սյունյաց աշխարհ», 2002թ., №№ 8,9,10,11,14: Նույնի՝ Սյունիքը եւ ռուսական ֆեոմենը, «Սյունյաց երկիր», 20 նոյեմբերի 2008թ., №32: Նույնի՝ Դաս Բաղաց լեռներում, Հայագիտությունը դպրոցում, 2007թ., №1: Նույնի՝ Армянские народные задачи, Квант, 1972г., №6: Նույնի՝ Քարը քաշեցին բակը, «Պիոներ կանչ», 1970թ., հունիսի 10, №46: Նույնի՝ Վահանավանքում, «Պղնձի համար», 1979թ. մարտի 27, №37:
3. Ներսես Մելիք-Թանգյանի հողվածը «Նոր դար» թերթում, 1891թ., №№159, 160, 161:
4. Արմեն Շեկոյան, «Հայկական ժամանակ» վեպ, Գիրք 8-րդ, գլուխ 6-րդ, «Առավոտ» օրաթերթ, 2009թ.:
5. Աշոտ Հովսեփյան, Իմացեք, նոր խոսեք, «Առավոտ» օրաթերթ, 2009թ.:
6. Սերգեյ Մանուկյան, Սյունյաց նախարարական տան տոհմածառը, «Սյունյաց երկիր», 30 նոյեմբերի 2010, էջ 12-15:
7. «Սյունյաց երկիր», 18 հոկտեմբերի 2011, №17 (նվիրված է Ն.Ադոնցի 140-ամյակին):
8. «Սյունյաց երկիր» թերթի սույն համարը:
9. Հարցազրույց Վահանավանքում (հեղինակը՝ անհայտ), «Պղնձի համար», 8 օգոստոսի 1974թ.:
10. «Սյունյաց երկիր», 1 սեպտեմբերի 2010թ., էջ 2:
11. Գրիգոր Գրիգորյան, Վահանավանք, «Տաթեւ» ամսագիր, 1998թ., №2(4):
12. Աննեերելի անտարբերություն (Օնիկ Փարսադանյան), «Պղնձի համար», 11 հունիսի 1965թ.:
13. Պատշաճ ուշադրություն պատմական հուշարձաններին, «Պղնձի համար», 5 նոյեմբերի 1970թ.:
14. Պրակտիկա՝ փորձությունների շրջանում, Վ.Ավետյան, «Մանկավարժ» շաբաթաթերթ, №21-22, 4 նոյեմբերի 1989թ.:
15. Դասի թեման է «Հայրենի երկրամաս», Ռոբերտ Գրիգորյան, «Ղափան» թերթ, 25 նոյեմբերի 1982թ.:
16. Վահանավանք, Արծրուն Ալեքսանյան, «Մանկավարժ» (Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պաշտոնաթերթ), 17 հոկտեմբերի 1974թ.:

## IV. ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

1. Աճառյան Հրաչյա, Հայերեն արմատական բառարան, չորս հատորով, Երեւանի համալսարանի հրատ. (Ա հատոր՝ Երեւան, 1971, Բ հատոր՝ Երեւան, 1973, Գ հատոր՝ Երեւան, 1977, Դ հատոր՝ Երեւան, 1979):
2. Աճառյան Հրաչյա, Հայոց անձնանուններին բառարան, հինգ հատորով, Երեւանի պետական համալսարանի հրատ. (Ա հատոր, Երեւան, 1942, Բ հատոր՝ Երեւան, 1944, Գ հատոր, Երեւան, 1946, Դ հատոր՝ Երեւան, 1948, Ե հատոր՝ Երեւան, 1962):
3. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հատոր առաջին, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 1979: Նույն բառգրքի երկրորդ հատորը՝ Երեւան, 1981:
4. Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հինգ հատոր, հեղինակներ՝ Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Երեւանի համալսարանի հրատ. (1-ին հատոր՝ Երեւան,1986, 2-րդ հատոր՝ Երեւան, 1988, 3-րդ հատոր՝ Երեւան, 1991, 4-րդ հատոր՝ Երեւան, 1998, 5-րդ հատոր՝ Երեւան, 2001):
5. Արդի հայերենի բացատրական բառարան, երկու հատոր, Էդուարդ Աղայան, «Հայաստան», Երեւան, 1976:
6. Հայերեն բացատրական բառարան, չորս հատոր, Ստեփան Մալխասյան (Ա, Բ, Գ հատորներ՝ Երեւան, 1944, Դ հատոր՝ Երեւան, 1945):
7. Էփրիկյան Սուքիաս, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, Վենետիկի Ս. Ղազար (1-ին հատոր՝ 1906, 2-րդ հատոր՝ 1907): Շարունակությունը լույսի չի տեսել:
8. Ստեփանյան Գառնիկ, Կենսագրական բառարան. հայ մշակույթի գործիչները (երեք հատորով): Հատոր Ա՝ «Հայաստան», Երեւան, 1978, հատոր Բ՝ Երեւան, 1981, հատոր Գ:
9. ՀՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, չորս հատոր (հատոր 1-ին՝ Երեւան, 1969, հատոր 2-րդ՝ Երեւան, 1972, հատոր 3-րդ՝ Երեւան, 1974, հատոր 4-րդ՝ Երեւան, 1980):

## V. ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆՆԵՐ

1. Հայկական սովետական հանրագիտարան, 13 հատոր, ՀՍՍՀ ԳԱ (1-ին հատոր՝ Երեւան, 1974, 2-րդ հատոր՝ Երեւան, 1976, 3-րդ հատոր՝ Երեւան, 1977, 4-րդ հատոր՝ Երեւան, 1978, 5-րդ հատոր՝ Երեւան,1979, 6-րդ հատոր՝ Երեւան, 1980, 7-րդ հատոր՝ Երեւան, 1981, 8-րդ հատոր՝ Երեւան, 1982, 9-րդ հատոր՝ Երեւան, 1983, 10-րդ հատոր՝ Երեւան, 1984, 11-րդ հատոր՝ Երեւան, 1985, 12-րդ հատոր՝ Երեւան, 1986, 13-րդ հատոր՝ Երեւան, 1987.):
2. «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երեւան, 2002:
3. «Ամենայն հայոց կաթողիկոսները», տեղեկատու պատկերագիրք, Երեւան, 2001:
4. «Հայ եկեղեցու հանրագիտարան», պրակ Ա (Ամենայն հայոց կաթողիկոսները), Ս. Էջմիածին, 2008:
5. «Վիքիփեդիա» ազատ հանրագիտարան (համացանց), wikipedia.org

## VI. ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՆՇԱՆԱՎՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սերգեյ Ումառյան, «Բաղաբերդ» վեպ, «Սովետական գրող», Երեւան, 1980:
2. Մուշեղ Գալշոյան, «Ծաղկած քարեր», «Հայաստան», Երեւան, 1973:
3. Ռաֆֆին ժամանակակիցների հուշերում, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1986:
4. Սերո Խանզադյան, «Հայրենապատում», Գիրք Ա, «Հայաստան», Երեւան, 1980:
5. Սերգեյ Ռոսյան, Կապանատան լեռների մեջ…, Տրիոլետե ապարանջան, բանաստեղծություններ, Երեւան, 2002, էջ 93:
6. Թադեւոսյան Արա, Վահանավանքի գունավոր երազ, անտիպ, առաջին անգամ տպագրվում է «Սյունյաց երկրի» սույն համարում:
7. Դավթյան Գագիկ, Վահանավանք, Զանգվածային տոնահանդեսի սցենար, Կապան, 1980-ական թթ.:
8. Համբարձումյան Դիանա, Նոյի թվի դարդ ու ցավ, Երեւան, 2008, էջ 72-76:
9. Ռաֆֆի, «Երկու ամիս Աղուանից եւ Սիւնեաց աշխարհներում», «Լումա» գրական հանդես, 1896թ., յունուար:
10. Ռաֆֆի, Դավիթ Բեկ, պատմական վեպ, «Սովետական գրող», Երեւան, 1980:
11. Սերո Խանզադյան, Մխիթար Սպարապետ, «Սովետական գրող», Երեւան, 1988:

## VII. ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ադոնց Նիկողայոս, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երեւան, 1987: Նույնի՝ Պատկերների խնդիրը, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 2003: Նույնի՝ Քննություն Մովսես Կաղանկատվացու: Երկեր հինգ հատորով, Բ հատոր, էջ 360, Երեւան, 2006: Նույնի՝ Բագրատունյաց փառքը: Երկեր հինգ հատորով, Ա հատոր, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 2006:
2. Գրիգորյան Գրիգոր, Դրվագներ Սյունիքի պատմության, Երեւան, 1990 (ռուս.): Նույնի՝ Օրբելյանների տոհմը եւ Սյունիքի պատմությունը 9-15-րդ դարերում, Մոսկվա, 2004 (ռուս.): Նույնի՝ Ստեփանոս Օրբելյան, ՊԲՀ, 1976, №4: Նույնի՝ Վահանավանքի պեղումների նախնական արդյունքները, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1970, №10: Նույնի՝ Սյունիքի վանական կալվածատիրությունը IX-XIIIդդ., Երեւան, 1973: Նույնի՝ Սյունիքը Օրբելյանների օրոք, Երեւան, 1981: Նույնի՝ Новонайденные надписи Ваанаванка. Историко-филологический журнал, 1972, №1. Նույնի՝ Очерки истории Сюника, Ереван, 1990. Նույնի՝ Род Орбелянов и история Сюника в IX-XVвв. Москва, 2004. Նույնի՝ Վիմագրություններ Վահանավանքի 1970-78թթ. պեղումներից, ՊԲՀ, 1980, №2: Նույնի՝ Վահանավանք, Երեւան, 2007:
3. Բանբեր Մատենադարանի, 4, Երեւան, 1958, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
4. Հարությունյան Վարազդատ, Հայկական ճարտարապետության պատմություն, «Լույս», Երեւան, 1992: Նույնի՝ Սյունիքի ճարտարապետական դպրոցը, Հայ ժողովրդի պատմություն (բազմահատորյակ), հատոր III, Երեւան 1976, էջ 378-381:
5. Մանուչարյան Ալեքսանդր, Քննություն Հայաստանի IV-XI դարերի շինարարական վկայագրերի, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1977:
6. Հասրաթյան Մուրադ, Սյունիքի XVII-XVIII դարերի ճարտարապետական համալիրները, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1973:
7. Վարք սրբոց կամ հայազգի տոների սրբերի համառոտ վարքը ըստ հայաստանյայց սուրբ եկեղեցու ժամանակագրության (շարադրեց Մեհրուժան Բաբաջանյանը), Երեւան, 1998:
8. Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները, IX-XIII դարերի խաչքարերը, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1984:
9. Թամանյան Յուլի, Քարե տարեգրության վերականգնումը, «Հայաստան», Երեւան, 1981: Նույնի՝ Հուշարձաններին նոր կյանք, Երեւան, 1988:
10. Մնացականյան Ստեփան, Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1960:
11. Լիսիցյան Ստեփան, Զանգեզուրի հայերը, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1969:
12. Օրմանյան Մաղաքիա, Ազգապատում, Ա հատոր, էջմիածին, 2001թ.:
13. Ուլմազյան Հայկարամ, Սյունիքը IX-X դարերում, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 1958.:
14. Լալայան Երվանդ, Զանգեզուրի գաւառ, հ.2, «Զանգեզուր», Թիֆլիս, 1899: Նույնի՝ հ.1, «Սիսական», Թիֆլիս, 1898:
15. Մաթեւոսյան Կարեն, Սամուել Անեցու ժամանակագրությունը, ձեռագրերը եւ նորահայտ լրացումները:
16. Մանանդյան Հակոբ, Երկերի ժողովածու, Զ հատոր, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1985:
17. Ումառյան Սերգեյ, Սյունիքը դիցարան,

Շարունակությունը՝ էջ 92

1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

**ԽՈՐԱԳԻՐ**

# Վահանավանք. աղբյուրագիտական հենք

**Սկիզբը՝ էջ 91**

«Հայաստան», Երեւան, 1981:
18. Առաքելյան Բաբկեն, Քաղաքները եւ արհեստները Հայաստանում IX-XIIIդդ., ՀՍՍՌ ԳԱ հրատ., հ.1, Երեւան, 1958: Նույնի՝ Սոցիալական շարժումները Հայաստանում X-XI դարերում, Հայ ժողովրդի պատմություն (բազմահատորյակ), հ.III, էջ 279-289: Նույնի՝ Մեծ Հայքի Սյունիք աշխարհն ըստ «Աշխարհացույցի» (պատմաաշխարհագրական դիտարկումով), ՊԲՀ, 2003թ., №1:
19. Խաչատրյան Հայկ, Պետրոսյան Տիգրան, Հայկազունք, Երեւան, 2002:
20. Տեր-Մկրտչյան Գալուստ, Հայագիտական ուսումնասիրություններ, Գիրք Բ, աշխատասիրությամբ պրոֆեսոր Պ.Հ.Հակոբյանի:
21. Հայ ժողովրդի պատմություն, բազմահատորյակ, հ.III, Երեւան, 1976:
22. Սեդրակյան Արիստակես (Մելիք-Առաքելյան), Հայաստանեայց եկեղեցու պատկերայարգութիւնը, մասն 1-ին, Ս.Պետերբուրգ, 1904 (շարունակությունը լույս չի տեսել), էջ 117-123:
23. Գրիգորյան Գ., Հախվերդյան Ս., Սյունիքի պատմություն, «Հրազդան», Երեւան, 2001:
24. Мирзоян Гамлет, Весь Сюник, том 2, стр. 343, Москва, Издательство «1989.ру», 2005.
25. Худуд аль-Алам, географический трактат 982 года неизвестного персоязычного автора. «Книга о пределах мира от востока к западу» (Сочинение было написано в 372 году по мусульманскому календарю, то есть 982-83 году). В 1896 году А.Г.Туманский опубликовал перевод на русский язык.
26. Яакут аль-Хамави, (1178/1180-1229) Словарь стран.
27. Известия Академии наук Армянской ССР, 1952г., №5, հաղորդում, Հ.Փափազյան, «Անանուն տաջիկ աշխարհագիրը Հայաստանի, Ադրբեջանի եւ Արեւելյան Վրաստանի աշխարհագրության եւ տնտեսական հարաբերությունների մասին (10-րդ դար)»:
28. Արաբական աղբյուրները Հայաստանի եւ հարեւան երկրների մասին, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1965:
29. Սմբատյան Գրիշա, Երկաթե վարագույրից այս կողմ, Երեւան, 2009, «Զանգակ-97», էջ 203:
30. Հակոբյան Թադեւոս, Հայաստանի պատմական աշխարհագրություն (ուրվագծեր), «Միտք», Երեւան, 1968: Նույնի՝ Ջորք կամ Կապան, Առանձնատիպ ՀՍՍՌ ԳԱ, 1950թ. №4 տեղեկագրից: Նույնի՝ Սյունիքի թագավորությունը պատմաաշխարհագրական առումով, «Միտք», Երեւան, 1966: Նույնի՝ Սովետական Հայաստանի քաղաքները, «Հայաստան», Երեւան, 1977: Նույնի՝ Հայ ժողովրդի պատմության հիշարժան վայրերը, «Լույս», 1990:
31. Հարությունյան Բաբկեն, Սյունիքը IX-XI դարերում, Հայ ժողովրդի պատմություն, բազմահատորյակ, հ.III, Երեւան 1976, էջ 114-127: Նույնի՝ Սյունյաց թագավորության գոյամարտը, Հայ ժողովրդի պատմություն, բազմահատորյակ, հ.III, Երեւան 1976, էջ 474-478: Նույնի՝ Սյունյաց թագավորության հիմնադրման տարեթիվը, Բանբեր Երեւանի համալսարանի, 1969, №1, էջ 146-149: Նույնի՝ Крестьянские волнения в Сюнике в X веке («Ученые записки Ереванского государственного русского педагогического института», №2, 1950г., стр. 161-182).
32. Ուլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1975:
33. Պապուխյան Ն.Ծ, Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երեւան 1972:
34. Հովսեփ Օրբելի, Հասան-Джалал, княз Хаченский, «Избранные труды», Ереван, 1963.
35. Չամչյանց Միքայել, Հայոց պատմություն (սկզբից մինչեւ 1784 թվականը), Բ հատոր, Երեւան, 1984:
36. Հայ ժողովրդի պատմություն, բազմահատորյակ, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1976:
37. Պատմութիւն եկեղեցական (աշխատասիրութեամբ տեառն Իգնատիոսի Վ.Փափազեանց Տարօնոյ Արքեպիսկոպոսի), Վենետիկ, 1848:
38. Ջավախիշվիլի Ի.Վ., Նյութեր Հայաստանի սոցիալական շարժումների պատմության համար, Երեւան, 1937:
39. Абрагамян Աշոտ, Крестьянское движение в Сисакане в X веке («Исторические записки Академии наук СССР», №3,стр. 54-71):
40. Առաքելյան Ա.Գ., Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, եռահատոր՝ 1959թ., 1964թ., 1975թ.:

## VIII. ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՍՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. 73 հատ տարանուն հնագիտական ցուցանմուշ Կապանի երկրագիտական թանգարանում:
2. Ավետյան Վարշամ, Բրոնզեդարյան հուշարձանները Վահանավանքի տարածքում, ՀԽՍՀ 1985-86թթ. դաշտային հնագիտական աշխատանքներին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումներ, Երեւան, 1987:
3. Մելքոնյան Հուսիկ, Վահանավանքի մետաղածուլական հնոցները: Երիտասարդ գիտնականների կոնֆերանսի զեկուցումների թեզիսներ, Երեւան, 1980:
4. Караханян Г., Азизбекян Ов., Древняя литейная форма из Сюника. ԳԱ «Լրաբեր», 1981, №1:
5. Զոհրաբյան Արմինե, պատմ.գիտ. թեկնածու, դրամագետ, Հայաստանի պատմության պետական թանգարանի էքսկուրսիոն բաժնի վարիչ, Վահանավանքի դրամները, տպագրվում է թերթի սույն համարում:
6. Մ.թ.ա. 2-րդ հազարամյակին թվագրվող դաշույնի կաղապար (պահվում է ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի ֆոնդում):
7. 15 արծաթյա դրամ, որոնց վերաբերյալ ուսումնասիրություն է կատարել Արմինե Զոհրաբյանը (պահվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում):
8. 60 տարանուն ցուցանմուշ, որ նախկինում գտնվում էր Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում, ներկայումս պահվում է Գավառի պետական համալսարանի պատմության թանգարանում:
9. Հուլավույան շրջանի 15 գտածո, որոնք 2010թ. օգոստոսի 8-ին պրոֆեսոր Գրիգոր Գրիգորյանը հանձնել է Հայաստանի պատմության պետական թանգարանի նումիզմատիկայի (դրամագիտության) բաժին:
10. Լեռնաձորի դպրոցի թանգարան, զարդախաչի բեկոր՝ Վահանավանքից երբեւէ տեղափոխված Շահարջիկ:
11. Խաչքարային արվեստի բազմաթիվ նմուշներ (թվաքանակը հայտնի չէ), որ գտնվում են Վահանավանքի վանական համալիրի տարածքում՝ չհամարակալված:

## IX. ՔԱՐՏԵԶՆԵՐ, ԳԾԱԳՐԵՐ, ՆԱԽԱԳԾԵՐ

1. Սյունիքի մարզի քարտեզը (մասշտաբը՝ 1: 150000), պատվիրատու՝ Սյունիքի մարզպետ Ռոման Նավասարդյան, 1999, «Նահապետ» հրատ.:
2. Մեսչյան Արթուր, Գծանկարներ (9 հատ)՝ վերականգնողական աշխատանքները նախանշող: Պահվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի հնագիտական բաժնում:
3. Վահանավանքի վանական համալիրի վերականգնողական նախագծերը (հեղինակներ՝ Յու.Թամանյան, Ա.Հովսեփյան, Լ.Մելիքյան): Պահվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտում:
4. Վահանավանքի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հատակագիծը: Հեղինակ՝ Համլետ Մարտիրոսյան: Պահվում է Կապանի երկրագիտական թանգարանում:

## X. ԴԱՍԱԳՐՔԵՐ

1. Հայոց եկեղեցու պատմություն, հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի դասագիրք, Երեւան, 2004թ.:

## XI. ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ (մինչվերականգնողական եւ վերականգնողական շրջան)

1. Կապանի երկրագիտական թանգարան, մոտ 200 լուսանկար:
2. Կապանի Շմավոն Մովսիսյանի անվան պատմության թանգարան, 3 լուսանկար:

## XII. ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ

1. Հայրումյան Աշոտ, Կապան քաղաքի բնակիչ, Վահանավանքի մերձակայքում գտնված՝ պղնձե զանգ՝ 1 հատ, պղնձե միջնադարյան մանրադրամ՝ 2 հատ, խարամի բեկոր՝ ծուլարանի փաստը հիմնավորող, կավե կենցաղային իրեր:
2. Ջալալյան Լեւոն, Կապան քաղաքի բնակիչ, 10 լուսանկար:

## XIII. ՏԵՍԱՆՅՈՒԹԵՐ (մինչվերականգնողական եւ վերականգնողական շրջան)

1. Վահանավանք: Շմավոն Մովսիսյան, 32 րոպե տեւողությամբ, 1970-ական թվականներ: Պահվում է Կապանի Շմավոն Մովսիսյանի անվան պատմության թանգարանում:
2. «Վահանավանք» գեղարվեստավավերագրական ֆիլմ 20 րոպե տեւողությամբ, ռեժիսոր Քրիստինե Սլոյան, 2012թ.:
3. Яндекс-Vahanavank
   ա) nver-альбом «Vahanavank Monastery», yandex.ru
   բ) Vahanavank-enotes.com:

## XIV. ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐ

1. Վահանավանքի 1100-ամյակին նվիրված գիտաժողով, 8-9 դեկտեմբերի 2011թ.: Գիտաժողովի մասին հաղորդումը եւ Աշոտ Մանուչարյանի «Վահանավանքի վիմագրերը, Հայ եկեղեցու պատմության սկզբնաղբյուրներ», Գրիգոր Գրիգորյանի «Հայկական վիմական արձանագրությունների պատմագիտական արժեքը» զեկուցումները եւ գիտաժողովի առիթով թողարկված բուկլետի մասին Ռոբերտ Գրիգորյանի հոդվածը՝ «Վահանավանքյան ապոկրիֆ» վերտառությամբ:

## XV. ԲՈՒԿԼԵՏՆԵՐ

1. Ուղեցույց «Ваанаванк, Обшество охраны памятников истории и культуры Армянской ССР, Ереван, 1984».
2. Վահանավանքի վանական համալիրը (գիտական խորհրդատու՝ պատմ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ.Գրիգորյան)՝ նվիրվում է Վահանավանքի հիմնադրման 1100-ամյակին, ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ:
3. Զանգեզուրի տուրիստական երթուղիներով (По туристским маршрутам Зангезура), Издательство «Айастан», Ереван, 1985.

## XVI. ՎԱՀԱՆԱՎԱՆՔԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՐՇԱՎԱԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մելքոնյան Հուսիկ, պատմ.գիտ. թեկնածու, ԳԱԱ Հնագիտության ու ազգագրության ինստիտուտի ամբիոնի վարիչ (առաջին անգամ՝ թերթի սույն համարում):
2. Մելիքյան Վահան, պատմ.գիտ. թեկնածու, դոցենտ, ԳԱԱ նորագույն պատմության բաժնի առաջատար գիտաշխատող (առաջին անգամ՝ թերթի սույն համարում):
3. Մեսչյան Արթուր, ճարտարապետ, երգիչ, երգահան (առաջին անգամ՝ թերթի սույն համարում):
4. Գրիգորյան Գրիգոր, Վահանավանքի վերածնունդը. հնագետի օրագրից, Երեւան, «Զանգակ-97», 2009թ.:

## XVII. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ

1. ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի ֆոնդային հավաքածուներ:
2. ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի ֆոնդային հավաքածուներ:
3. Հայաստանի պատմության պետական թանգարանի ֆոնդային հավաքածուներ:

## XVIII. ԱՎԱՆԴԱՔՐՈՒՅՑՆԵՐ

1. Ռոբերտ Գրիգորյան, Ասքապատում. Արքան Հին Կապանի ավերակներում է, «Սյունյաց երկիր», №12, 30 հունիսի 2011թ...

## XIX. ԳԵՂԱՆԿԱՐՆԵՐ

1. Ռոբերտ Կամոյան, Վահանավանքի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու նավակատիքը 1100 տարի առաջ: 2011թ., կտավ, յուղաներկ, 200x140 (ներկայացվում է թերթի սույն համարում):

**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Սյունյաց երկիր
ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ
Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

**Հասցե՝** Կապան, Շահումյան 20/32:
**Հեռախոս՝** (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 06 28 02:
**Էլ.փոստ՝** syuniacyerkir@mail.ru
**Ինտերնետ՝** www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել:
Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

**«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՅՈՒՄ»** բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ՎԻՄԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Շահանդուխտ թագուհու 1086թ. շինարարական արձանագրությունը կրկնահարկ եկեղեցու հարավային պատին՝ ներքուստ:



1046թ. շինարարական արձանագրություն

Սենեքերիմ թագավորի մանկահասակ որդու՝ Կյուրիկեի տապանաքարը մեծ տաճարի գավթում:



Սոփի թագուհու տապանաքարը (1081թ.):



1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ՎԱՀԱՆԱՎԱՆՔԻ ՎԻՄԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐՉԱԳՐԵՐ

Ներկայացվում է ըստ Գ.Գրիգորյանի «Վահանավանքի վերածնունդը. հնագետի օրագրից» գրքի



ՏԷՐ Վ ԱՀԱՆ ՆԱԽԱԾԻՆՈՂ ՏԷՂԱՅՍ

ԵԱՒՐԻ ՆՎԻՑԿԻՆ ՄՈՒՌ

ՎԱՄԲԱ ԱՄԲՍՈՒ

1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ՀՈԳԱԿԱՆՈՒՆ ՆՆՋԵՑՅԱԼՆԵՐԻ ՀԱՆԳՍՏԱՐԱՆԸ

# Մեծ փաճարի գավթում եւ սյունասրահում է գտնվում Սյունյաց եւ Աղվանից իշխանազունների գերեզմանոցը

Վահան նախաշինող Զագիկյանի տապանաքարը մեծ փաճարի գավթում (X դարի առաջին կես)



Գրիգոր եպիսկոպոսի տապանաքարը, 1116թ.

Դինար թագուհու տապանաքարը

Զեւանշեր իշխանի տապանաքարը մեծ փաճարի սյունասրահում

Սյունիքի Գրիգոր Ա թագավորի տապանաքարը (1072թ.)

1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ, ՀԻՄՆԱԴՐՎԵՑ
ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ԱՐՎԵՍՏ

# Նախշաքանդակներ՝ անկրկնելի եւ իրար չնմանվող

Քանդակազարդ քիվ (բեկոր)

Մեծ փաճարի գավթի որմնասյուներից

Զրհորդան՝ Մեծ փաճարի փանիքից ներքեւ

Մեծ փաճարի գավթի կամարներից



Մեծ փաճարի գավթի քանդակազարդ քիվերից (կենտրոնում)

1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

# ՄԱՅՐ ՏԱՃԱՐԸ ԴՐՎԱԳ

ՊՈԵԶԻԱ

## Կապանատան լեռների մեջ

*Կապանատան լեռների մեջ՝ խոժոռ,*
*խրոխտ, վեհանիստ,*
*Կա մի հրաշք՝ Վահանավանք՝*
*թռչունների երգին գերի,*
*Նվիրումով կյանքին կառչած՝*
*մարդիկ կյանքի երգ են*
*հյուսում՝*
*Կապանա տան լեռների մեջ՝*
*խոժոռ, խրոխտ, վեհանիստ...*
*Հազար հրաշք կյանքին նեղած՝*
*աղբյուր, ջրվեժ,*
*պար են գալիս,*
*Ու արեւը, քամու հետ հաշտ,*
*բնության հետ*
*վալս է դալիս.*
*Կապանատան լեռների մեջ՝ խոժոռ,*
*խրոխտ, վեհանիստ,*
*Այդ հրաշքը՝ Վահանավանք,*
*թռչունների դայլայլի մեջ*
*լուռ նայում է մեռնող դարին....*

**ՍԵՐԳԵՅ ՐՈՍՅԱՆԻ**
**«Տրիոլետե ապարանջան» գրքից**
**Երկիր... Կապան.... ուշ գիշեր**
**18.04.02թ.**

## Վահանավանքի գունավոր երազ

*Թախծոտ անտառներ*
*Վահանավանքի...*
*Ինձ գուրգուրող քամի*
*Եվ իմ թախծոտ գիշեր,*
*Ես ո՞ւմ համար երգեմ*
*Գուրգուրանքներ ու սեր:*
*Իմ աչքերի առջեւ*
*Միշտ նույն շղարշը սեւ,*
*Դեղին հեքիաթն աշնան*
*Ու ցուրտ մարմինը քո:*
*Աշնան մի երեկո*
*Խոնավ մի անտառում*
*Պիտի հոգնի հոգիդ*
*Խաչամների վրա:*
*Թող անձրեւը թափվի,*
*Քամին հեռվից թող գա,*
*Խոնավ բույրեր բերի...*
*Վահանավանքի գունավոր երազ*
*Թախծոտ անտառներ*
*Վահանավանքի....*

**ԱՐԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**
**1974թ. աշուն, Վահանավանք**

Լուսանկար՝ Դիդիեր Ֆլամարիոնի



1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ԱՐՎԵՍՏ

# Վահանավանքի խաչքարերը

Արֆայաձեւ խաչը (բեկորներ, 1046թ.), որ ներկայումս գտնվում է Կապանի երկրագիտական թանգարանում

Քանդակազարդ խաչքարերի բեկորներ

ՉՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՀԱՐՑ

## Վահանավանքի խաչքարերը

Վահանավանք երեւույթն ամբողջապես ու բազմակողմանի հասկանալու համար կարեւոր է նաեւ խաչքարերի ուսումնասիրումը եւ գնահատումը: Դրանք, հիրավի, ունեն պատմագիտական, աղբյուրագիտական, սոցիալ-տնտեսական, արվեստագիտական, գաղափարախոսական, ազգագրական ու կենցաղային նշանակություն:

Չնայած կես դար շարունակ Վահանավանքի թեման գտնվում էր հնագիտության եւ պատմագիտության հայաստանյան օրակարգում, բայց խաչքարերի հարցն այդպես էլ չհայտնվեց վանքն ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում: Դա է պատճառը, որ Վահանավանքի խաչքարերին նվիրված որեւէ ուսումնասիրություն առայժմ չունենք: Հայտնի չէ անգամ, թե պեղումների եւ վերականգնողական աշխատանքների ավարտից հետո քանի խաչքար ենք ունեցել եւ ունենք վանքի տարածքում: Պրոֆեսոր Գրիգորյանը շատ թե քիչ անդրադարձել է խաչքարերի վիմագրական տվյալներին:

Վահանավանքում, միևչդեռ, հանդիպում ենք ամենատարբեր տեսակի ու ձեւի խաչքարեր: Դրանցից յուրաքանչյուրը, կարելի է ասել, մշակույթի մեծարժեք հուշարձան է եւ իր վրա է կրում հայկական մշակույթի յուրահատուկ գծեր: Եղած խաչքարերը, խաչքարերի բեկորները (թվակիր եւ անթվակիր) վկայում են, որ Վահանավանքում բարձր աստիճանի էր հասել խաչքարային արվեստը: Դրանք ունեցել են ոչ միայն կրոնապաշտամունքային, այլեւ ուրիշ նշանակություն եւ կիրառություն (եւ կանգնեցվել են տարբեր առիթներով):

Խաչքարերի առանձին նմուշներ՝ վանքի տարածքում հանդիպող, մեզ հիշեցնում են վաղ քրիստոնեական շրջանի (IV-VII դդ.) հուշարձանների ամենատարածված տիպը՝ թեւավոր խաչը՝ նորաստեղծ մշակույթի կամ ոճի անդրանիկ դրսեւորումը: Իսկ դա նշանակում է, որ Վահանավանքը 10-րդ դարում կառուցվել է քրիստոնեական հին սրբատեղիում: Խաչքարերի զարդամոտիվները, հորինվածքի ձեւերը, գեղարվեստական ոճը, կառուցվածքն արտացոլում են խաչքարային արվեստի՝ դարերի ընթացքում կրած որոշ փոփոխություններ, ցույց տալիս դրանց ստեղծման շարժառիթների, նշանակության բազմազանությունը:

Վահանավանքի խաչքարերի ուսումնասիրությունը, կարծում ենք, առաջնահերթ խնդիր է բոլոր նրանց համար, ում հետաքրքրում է Վահանավանքը: Մինչ այդ, սակայն, եղած խաչքարերը համապատասխան պետական կառույցների կողմից գույքագրման կարիք ունեն. դրանք առայսօր թափված են վանքի տարածքի տարբեր տեղերում:

Այսօր բավարարվում ենք խաչքարերից մի քանիսի լուսանկարները, ինչպես եւ Գրիգոր Գրիգորյանի «Խաչքարերի զարդաքանդակները» փոքրիկ դիտարկումը ներկայացնելով:

**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

ԽԱՉՔԱՐԵՐԻ ԶԱՐԴԱՔԱՆԴԱԿՆԵՐԸ

Վահանավանքում հայտնաբերված խաչքարերից առավել նշանավորները երկուսն են՝ Շահանդուխտ թագուհու մոր՝ Սոփիի հիշատակին 1081թ. կանգնեցրած խաչքարը եւ 1046թ. կերտված եզակի կոթողը՝ արֆայաձեւ խաչը, որը ժամանակին ամրացված է եղել սյունասրահից դեպի եկեղեցի տանող մուտքի ճակատակալ քարին (ինչպես նշել ենք, կոթողն այժմ գտնվում է Կապանի երկրագիտական թանգարանում): Դեկորատիվ արվեստի տեսակետից առանձնանում է հատկապես «Շահանդուխտի խաչքարը», որն ամբողջապես պատված է հյուսկեն զարդանախշերով. հորիզոնական խաչթեւերից վեր՝ աջ եւ ձախ կողմերից նռան քանդակներ են, ստորեւ՝ հավերժության նշանն է երկրաչափական զույգ գծազարդերով, որոնց միջեւ քանդակված են ուռուցիկ գնդիկներ, իսկ հյուսկեն զարդանախշերի վրա կան շաղափով կատարված ավելի քան վեց տասնյակ փոսիկներ: Ստորին խաչթեւը եզերող բուսական պատկերաքանդակի վերնամասի կենտրոնում կանգնեցման թվականն է՝ :ՇԼ: (1081): Խաչքարի եզրերին շրջանաձեւ փորագրված է Սոփիի եւ նրա երեք զավակների՝ Շահանդուխտ Սյունյաց թագուհու, նրա քույր օրիորդ Կատայի եւ Սենեքերիմ թագավորի անունների հիշատակմամբ արձանագրություն:

Դեկորատիվ արվեստն առավել ցուցադրական է հատկապես սպիտակ կրաքարե խաչքարերի բեկորների վրա: Այստեղ տեսնում ենք հիասքանչ վարդյակներ՝ բացված առէջքներով, երկրաչափական հյուսածո գծազարդեր, որոնք հիշեցնում են մեծ տաճարի գավթի քիվերի զարդաքանդակները: Առանձնապես տպավորիչ են նրբագեղ տերեւների, հասկի ցողունների փնջերի, խաղողի ողկույզների, ինչպես նաեւ նռան նախշաքանդակները: Դրանք բոլորը հմտորեն եւ համբերությամբ կատարված են բարձր ճաշակի տեր քարագործ վարպետների ձեռքով:

**ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ**
**«Վահանավանք»**

Շահանդուխտ թագուհու խաչքարը (1081թ.)

Վաղ քրիստոնեական շրջանի խաչքար

Նորահայտ խաչքարերից մեկը (X դար)

1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌ-ՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ



*«Ողջու կիրճով ո՛չ Պոմպեոսի բանակն է կարողացել անցնել, ո՛չ էլ Շապուհ արքայինը...»*

ՍԵՐՈ ԽԱՆԶԱԴՅԱՆ, ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄ, ԳԻՐՔ Ա, ԷՋ 47

# Զորք կամ Կապան

ԸՍՏ ՊՐՈՖ. Թ.ՀԱԿՈԲՅԱՆԻ

Զորք գավառը տարածվում էր Ողջի գետի եւ նրա ձախակողմյան վտակ Գեղի գետի ու դրանց բազմաթիվ օժանդակների ավազաններում:

Գավառը հյուսիսից սահմանափակված էր Ծղուկքով, որի հետ բնական սահմանը կազմում էին Բարգուշատ լեռնաշղթայի բարձրադիր կատարները, արեւելքից՝ Բաղք եւ Կովսական գավառներով: Կովսականի հետ նրա սահմանը կազմում էր այն լեռնաճյուղը, որի արեւելյան կողմում գտնվում է Բեխ գյուղը. նրանից արեւմուտք մոտ 6կմ վրա, Զորքի մեջ մտնող Վահանավանքն է:

Հարավից Զորքին հարեւան էր Արեւիք (Մեղրի) գավառը՝ բնագիծ ունենալով Արեւիքի կամ Կապանի (այժմ՝ Մեղրու) լեռները: Արեւմուտքում Գողթն գավառից սահմանագծվում էր Սյունյաց լեռնաշղթայով: Զորք գավառը Սյունյաց աշխարհի ամենալեռնոտ շրջանն է եւ թագավորության շրջանում նրա ոստանն էր: Պատմիչ Օրբելյանի օրոք մայրաքաղաքի անվամբ կոչվում էր Կապան գավառ. «Տասներորդ՝ Զորք գաւառ, որ ունի զանմատոյց ամուրն Բաղաբերդ, եւ այժմ կոչի Կապան»:

**Սյունիքի թագավորությունը, 1966, էջ 108:**



Կոմսոմոլսկոյ ճվիր, Քամիցոտոս

ք. Կապան



1100 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 911 (ՀԱՅՈՑ 360) ԹՎԱԿԱՆԻՆ ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԱՍՏԾՈ ՓԱՌՔԻ ԱՅՍ ՏԱՃԱՐԸ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# ՎԱՀԱՆԱՎԱՆՔ

## ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Գլոբուսի վրա Վահանավանքը գտնվում է արեւելյան երկայնության 46˚ 19՛ 55՛՛-ի եւ հյուսիսային լայնության 39˚ 21՛ 04՛՛-ի հանգուցակետում, ծովի մակարդակից մոտ 1100մ բարձրության վրա, Սյունիքի (Զանգեզուրի) լեռնաշղթայի հարավային վերջույթից դեպի արեւելք ձգվող Արեւիքի լեռնաշթղայի (նաեւ՝ Բաղաց լեռներ, Բաղացսար՝ 3256մ) հյուսիսակողմյան ստորոտում, Ողջի գետի (վաղ անցյալում՝ Բաղաց գետ կամ Կապանա գետ, միջին հոսանքում՝ Հղորա գետ) աջ մասում՝ վերջինիս աջակողմյան Վանքիջուր վտակի ձախակողմյան տարածքում: 10-րդ դարում Վահան Ջեւանշերազունը «կառուցեց եւ մի մեծ սեղանատուն ու խողովակով ջուր բերեց նրա դուռը» (Օրբ., ԽԵ): Աղբյուրը կամ գուցե նրա մի ճյուղավորումն առ այսօր բխում է որպես մեր նախնյաց մեծագործությունների առհավատչյա:

Վահան նախաշինողին մեծարելով՝ սյունեցիներիս տոհմական պատմիչ հայր Ստ.Օրբելյանը հստակ տեղորոշում է տվել Վահանավանքին. «Եվ շատ ու խիստ ճգնություններից հետո գալով այն բարձր լեռան ստորոտը, որի վրա է Բաղաբերդի անառիկ ամրոցը, Աճանանի դիմաց՝ գտնում է մի հարթ տեղ, շատ հարմար..., սկսում է եկեղեցու շինարարությունը» (Օրբ. ԽԵ): Ի դեպ, համալիրի հարավակողմում մարմարացված կարմրավուն կրաքարի բաց հանքավայրն է:

Պատմիչը Սյունիքի 12 գավառները թվարկելիս մատնանշել է. «Տասներորդը՝ Չորք գավառը, որ ունի Բաղաբերդ անմատչելի ամրոցը, եւ այժմ կոչվում է Կապան» (Օրբ., Գ):

Արդ ըմբռնելու է, որ Վահանավանքը գտնվել է երբեմնի Չորք գավառում, որը բռնում էր Կապանա գետի վերնագավառի եւ ձախակողմյան Գեղի վտակի ավազանները եւ մաս էր կազմում Բաղաց աշխարհի (չշփոթել Բաղք գավառի հետ): Ալիշանը ենթադրել է, թե Աճանան (Եճանան) գյուղի տեղում հետագայում ձեւավորվել է թուրքաբնակ Շհարջիկը (Սիսական, էջ 276):

Պատմության հոլովույթում Վահանավանքի տեղորոշվածությունը Կապանա տանը երբեւէ անորոշ չի եղել: Վանական համալիրը, որ ըստ պատմիչի. «ճոխացել էր որպես բազմամարդ քաղաք», մերձակա հնավայրերի, այդ թվում՝ Հին Կապան մայրաքաղաքի, ցայժմ չճշտված տեղորոշումների տեղացույց բանալին է: Այժմ ակներեւ է, որ վայրը նախաքրիստոս ժամանակաշրջանի դամբարանադաշտ էր: Վահանավանքի մի կողմում, ըստ պատմիչի, Տանձափարախի անապատն էր (ըստ Մ.Հասրաթյանի, դա Բեխի անապատն էր, ըստ իս՝ գուցե՞ Հալիձորի դավիթբեկյան հնավայրը), մյուս կողմում՝ քաղաքի արտաքին որմնապարիսպն էր: Կասկածելու չէ, որ խոսքը Հին Կապան քաղաքի մասին է, որի հոգեւոր պետքերի սնուցողն էր Վահանավանքը: Առ այսօր նշմարվում է վանական համալիրից դեպի Տանձունլենջ ու Զրախորջուր (Զղախոռ) ձգվող սայլուղու աղուրը՝ հարակից պարսպապատերով: Վանքի հյուսիսակողմ տափարակում, այդ ճանապարհի վանքամերձ հատվածում, թերեւս, մուտքի շքեղ կառույցի ավերակ է: «Լեռնակողմը՝ դեպի վեր, մինչեւ բարձրավանդակի ծայրը, որտեղ մակաղում էին մանր եղջերավոր անասունների հոտերը» (Օրբ., ԽԵ), թաքցրած ունի չուսումնասիրված քարանձավ, մատռան ավերակ:

Վահանավանքին մերձ էին Շտատուք, Իցան (Բեխի Ծնածուքար հանդո՞ւմ), Հուսկոր, Աչաղու, Արավայր, Շեկք գյուղերը, որոնք տակավին տեղորոշված չեն:

Տարածաշրջանը երկրաշարժային է: Արձանագրված է Սյունիքի 1319թ. երկրաշարժը:

Մի ճգնավորի տառապանքները նկարագրելով, մեր պատմիչն Արաքսից այս կողմ ընկած երկիրը դրախտային է համարում. «Նրա կերակուրն էին ընդեղենն ու ծառապտուղները, որովհետեւ երկիրն ամառ ու ձմեռ Եգիպտոսի պես էր» (Օրբ., ԻԱ): Հիրավի, Կապանում ո՞ւմ կզարմացնես վահանավանքյան ծառատեսակները թվարկելով՝ ընկուզենի, տխլենի, հոնի, տանձենի, խնձորենի, ցախկեռասի, սալորենի, ալոճենի, զկեռենի, պռշնի... Իսկ բնաշխարհը դեղատուն է ոտքի տակ՝ եղինջ, թուրինջ, եզան լեզու, կատվալեզու, օճառախոտ, սինձ, կրմնձուկ, իշառվույտ, կառ, երեքնուկ, անձխոտ, վայրի ցորեն ու գարի...

Նոր Կապանը, կարծես, դիմակայում է Վահանավանքին, որովհետեւ դիմացի՝ գետի ձախակողմյան բնակավայրերը ներառված են քաղաքի շրջագծում: Վանական համալիրի տարածքից գետի ձախակողմ բարձունքում՝ Բարգուշատի լեռնաբազկի վրա երեւում է Աճանանի Հղորա բերդի ավերակը:

**ՌՈԲԵՐՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ (ԷՋԱՆԱՆՅԻ)**